Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format
Adapt — remix, transform, and build upon the material

2424

243
9-89

2010

2003

1865թ. սեպտեմբեր 20-ին

Պետք է ասել այս գործը

Գաղթ – ոչ սպիտակ հետքեր

թեթև

ԳՐԻԳՈՐԻ

ՆԱՐԵԿԱՑՒ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ

ՄԱՏԵԱՆ ՈՂՔԵՐԳՈՒԹԵԱՆ

200
2344-Գ

ՍՐԲՈՑ ՀՕՐՆ ՄԵՐՈՑ

ԳՐԻԳՈՐԻ

ՆԱՐԵԿԱՑՒ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

2243
7-89
աչ.

ՏՊԱԳՐԵԱԼ

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ Տ. Տ. ՄԱՏԹԷՈՍԻ

ԱՋԳԱՍԵՐ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԸՆՏԻՐ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՑՆ ՀԱՑՈՑ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՑ ԵՐՈՒՍԱՂԷՄԻ Տ. ՅՈՎՀԱՆՆՈՒ

ՎԵՀԱՓԱՌ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

ԵՒ

Ի ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹԵԱՆ ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՕԼՍՈՑ Տ. ԳԷՈՐԳԱՑ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

Ի ՊԱՏԱՐԱԳԱԹ Կ. ՊՕԼՍՈՑ

Ի ՏՊԱՐԱՆԻ ՅՈՎՀԱՆՆԱՒ ՄԻՒՀԻԹԱՐԵԱՆ

1858—ՌՅԳ

Հ.Ս.Խ.Հ. ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
C.C.P.A. Публичная Библиотека
7/XI. 1922
Инвент. №
Մ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

29745-4.h.

13409-58

891.99
Գ-89

200
Հ34Է6Գր

ԴՐՈՒԹԻՒՆ, Ք

ՅՈԳՆԱԹԱԽԱՆՁ ԲԱՆԻՑ ՕԳՏԱԿԱՐԱՑ

ԸՊԱՀԱՒՈՒԱՑ ՀՈԳԵՀԱՀ ԽՐԱՏՈՒՑ

ԱՆՁԻՆ ՍՏԳՏԱՆԱՑ ԶՂՋԱԿԱՆԱՑ ԿԱՆՈՆԱՑ ԿԵՆԱՑ

ԿԱՄԱՒՈՐՈՒԹԵԱՄԲ ՅԱՆՁՆԱՒՈՒԹԵԱՆՑ

ԱՆԵՐԵՒՈՒԹԻՑ ՅԱՑՏՆՈՒԹԵԱՆՑ

ՄԵՂԱՆԱՑ ԽՈՍՏՈՎԱՆՈՒԹԵԱՆՑ ՅՈՒՅՄՈՒՆՔ ԳԱՂՏՆԵԱՑ

ԹԱԳՈՒՑԵԼՈՑ

ՄԳՆՂԱՆՔ ԶՕՐԱՒՈՐՔ ՎՐՐՑ ԱՆԲԱՀԿԱԿԱՆԱՑ

ԴԵՂՔ ԱԶԴՈՂԱԿԱՆՔ ՅԱՒՈՑ ԱՆՏԵՍԱԿԱՆԱՑ ՀՆԱՐԱՒՈՐՈՒԹԻՆՔ ԲԱԶՄԱՄԱՄՆԵԱՑ

ԵՐԿԱՆՑ ՎՏԱՆԳԻՑ

Ի ԴԻՄԱՑ ԿԱՐԵԱՑ

ԱՄԵՆԻՑ ՌՆՈՒԹԵԱՆՑ ԱՒՒԹՔ ԱՐՏԱՍՈՒԱՑ

ՊԱՏՃԱՒՔ ԱՂՕԹԻՑ

Ի ԽՆԴՐՈՑ ՀԱՑՑՄԱՆՑ ՀԱՐՑ

ՄԻԱՆՁԱՆՑ ԵՒ ԲԱԶՄԱՑ ԱՆԱՊԱՏԱԿԱՆԱՑ

ԱԱՑԵԱԼ

ՄԱՏԵԱՆ ՈՂՐԵՐԳՈՒԹԵԱՆ

ԳՐԻԳՈՐԻ

ՆԱՐԵԿԱՑ ՎԱՆԻՑ ՎԱՆԱԿԱՆԻ

ԳՐԻԳՈՐԻ

ՆԱՐԵԿԱՑՒ ՎԱՆԻՑ ՎԱՆԵԿԱՆԻ

ՄԱՏԵԱՆ ՈՂԲԵՐԳՈՒԹԵԱՆ

ԲԱՆ ԱՌԱՋԻՆ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. ԶԱՅՆ հառաչանաց հեծութեան սրտի՛ ողբոց աղաղակի քեզ վերընծայեմ, տե՛ր սողդ գաղտնեաց. և մատուցեալ եդեալ ՚ի հուր թախծութեան անձին տոչորման՝ զատուղ ըղձից ձեռձերոյ սասանեալ մտացս, բուրվառաւ կամացս առաքել առ քեզ: Ալ հոտոտեցից հայեացիս, գթած, քան ՚ի պատարագն բոլորապտուղ մատուցեալ ծխոյն բարդութեան: Ինկալ զսակաւամանեայ բանիցս յօդուած քեզ ՚ի հաճութիւն, և մի ՚ի բարկութիւն, ելցէ ՚ի խորոց աստի զգայութեանց խորհրդակիցը սենեկիս՝ վաղվաղակի ժամանել առ քեզ՝ կամաւորական նուէրը բանական զոհիս, ողջակիզեալ զօրութեամբ ճարպոյ՝ որ չիան է պարարտութիւն: Ւր ՚ի դնելը իմ ընդ քեզ դատ խառնեալ աղերսիս, հզօր, մի երբեք զհամբարձումն ձեռացդ ամբարշտեաւն Յակոբու, ըստ բողոքելոյն Նոյեայ, և զանիրաւութիւնն Բաբելոնի՝ տապակալի քեզ երեւեցցի. զոր առակ եօթանասներորդի երկրորդի սաղմոսին ազդէ. այլ երբ զբուրեալ խունկին հաճոյա-

կան ՚ի խորանին Աբելայ, զոր Դաւիթ կանգնեալ նո-
րոգեաց տապանակին հանգստեան ՚ի գերուԹենէն
դարձելոյ, որ ՚ի վերասին գիւտ կորուսեալս հոգւոյ
առակի, ընդունելի կամաց քոց լեցի։

Բ. Բայց քանզի ձայնդ ահաւոր դատաստանիդ հա-
ւատացման՝ ուժգնիս հնչեցեալ ՚ի ձորն վըԹիԹանդրու-
Թեան, կրկինս ինձ երկնէ մարտից յարուցմունս, այժ-
մէն գուշակեալ չարժմունս յուզմանց ներհակականաց,
որ յիմումս անձին ցուցանի, խառնուրԹիւնս ամբոխից,
հարեալք ընդ միմեանս զէն առ սուսեր՝ խորհրդոյն
հոյլք, չարեացն ընդ բարիսն, և գերեալ գիս ՚ի մահ
ըստ հին դիպուածոյն՝ որ նախ քան զնաւորհին ժամա-
նել առ իս. զոր ընտրեալն առաքելականացն դասուց
Պօղոս՝ առօրինակեալ զՄովսէս, զԲրիատոսի փրկու-
Թիւնն յաղԹող ցուցանէ։ Վասն զի ԹԷ մերձ է օր
սեառն, որպէս գիր ասէ, ՚ի հովիտն անձուկ ասպա-
րիսին ՅոսափաԹու և հեղեղատին Կեդրոնի, փոքր
հանդիսարանացն իրաւանց ժամադրուԹեանց, որ կեն-
ցաղականաւ այսր յաւիտենիս զհանդերձելոցն ինձ
կերպարանեն, ապա և յաւէտ մերձեցաւ ՚ի վերայ իմ
աբքայուԹիւնն աստուծոյ մարմին եղելոյ, մեծապէս
գտեալ զիս առիԹ միտուց՝ բազմայ տոկոսեաց՝ զա-
նազան մասանց յանդիմանողաց ճշմարտապատմիչ, քան
զձեռին նորին վերակացուին անդ ուրեմն երբեմն ՚ի
հարուածս եղովմայեցւոց և փղշտացւոց, և այլոց
բարբարոս ազգաց։ ՚Ռանզի այն ընտրուԹիւն ամօք
չափեցաւ, իսկ պատուհաս իմումս պարտուց առանց
աւարտման ունի զսահման։ Ա՛հ, գուբ և որոգայԹ
անճողոպրելի, ըստ մարգարէին և առակողին. տագնա-
պաւ մեծաւ առ դուրս ինձ հասեալ՝ զամօԹն մշտնջ-
ենաւոր աստէն գծագրել։ Օ՛ր միայն քո է հրաշա-
գործել պատուղ գեղոյ ՚ի հնարս կենաց ամենաւարան
տարակուսանաց հոգւոց վտանգիս, քաւիչ ամենայնի՝
գովեալ ՚ի փառս անճառս անսահմանելի բարձրուԹեան,
յաւիտեանս յաւիտենից։

ԲԱՆ Բ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. ԵՒ ապդ քանզի առ բարձրեալն աստուած յօդա-
ւորական շրթամբք կարդաս, որ գործովք միայն գրաւի
և ոչ սահմանաւորեամբ կաշառի, որ Աբդիսպատոս
միշտ ունիս զսրտիդ զդարձն, զի՞նչ օրինակ առ այս
քեզ նմանագոյն և յարմարական առաքեաց եդից՝ անձն
իմ պարտաւոր, պատմակիցս կործանեցելոյն Սոդոմայ,
ըմբերանեալ դատաւորաց Աբիմելէք, անարի բարբարոս
քան զսիկիւին հարաւային, վատթարագոյնս քան զԲա-
նան, յամառեցեալս քան զՆմաղէկ, անբժշկականս քա-
զաք դրօշելոց, նշմար մնացեալ ապստամբութեան հիւն
Իսրայելի, յիշատակարան պահեալ՝ ուխտազանցու-
թեանն Յուդայ, կչտամբեալս գեր քան զՕսէ, տա-
րամերժեալս քան զՕսդան, խորդաբարոյս քան զգ
Դաւիթեա, անհնազանդեալս քան զանհաւանն Կափառնաում,
պարտաւեցեալս երբ զԲորգին, բամբասեցեալս ընդ
Ներթասիթայ, անպարկեշտ ծաղկեցեալ ալիքս Եփրե-
մի, աղուս աղաւնիս միշտ յիմարութեամբ՝ այլ ոչ հան-
դարտութեամբ, ի կորեանց աւխտծուց անձնական օձս
եղեռնային, կերպս ձուոց քարբից լսեալ ժանտու-
թեամբ, պատկերս վերջին հարուածոցն Երուսաղէմի,
ըստ բանին տէրունի՝ և տեսանողացն ձայնիւ, տաղա-
ւարս մերժեալ՝ հասեալ ի կործանումն, խորտակեալ
դրացս վստահարան, և կրկին ծրդեալ շինուածս խօսուն,
Թողեալ ժառանգութիւնս յարմարական, մուսացեալ
տունս աստուածակերպ, ըստ բանից նախագրեցելոցն՝
Մովսէսի, Դաւթայ և Երեմիայի, յարկս բանական՝

ունողս բորոտութեան, հարուածեալ խրատու քերմանն, օրինիւ կազդուրեալ, օծեալ կաւոնին՝ ողջական հեզութեամբն, անձարակ գտեալ յերս հնարից, քահանեալ վերստին ձեռամբ չինողին, արտաքս ընկեցեալ իրաւացի հատուցմամբ հրամանաւ հզօրին ՚ի տեղւ անտուրբ, հերքեալ տարագրեալ խորոցաւ մեծաւ՝ ա մենայնիւ առանց խնայելոյ, ծածկեալ դրամս յերկրի չարեօք, ըստ աւանդակորոյս մեռողին՝ որ յաւետարա նին ցուցանի:

Բ. Ալ դու աստուած, աստուածդ հոգւոց և ա մենայն մարմնոց՝ ըստ դաւանելոյ աստուածաշնորհին, երկայնամիտ և բազումողորմ՝ ըստ սրբոյն Յովհաննու ձայնին, չնորհեա կատարել ՚ի քոյդ հաճութիւն օրհ նեալդ կամայ՝ զսկզբնաւորեալ մատեան մաղթանաց՝ այսր ողբերգութեան: Յո ընդ լալով սերմանել բանիս ՚ի նախնեաց չուս աստիճանաց օթեւանացս պատրաս տութեան, ՚ի կատարածն ժամանելոյ հաւաքման հընձոյն, դարձայց բերկրեցեալ լուութեամբ քաւու թեան՝ պտղոյն երանութեան որայիցն բարութեան: Այլ տացես ինձ արգանդ սրտի անորդի՝ իբր Խորայելի, և սահնս աչաց ցամաքեալս՝ ով ամենազութ: Ո ուր բանական մաղթողիս՝ հզօր և ողորմած, նախ քան երկ նի, և երկին երկրի, և նա ցորենոյ և գինւոյ և ձի թոյ, և նոքա Խորայելի: Յո երկնաւորացն աղերս որ առ քեզ՝ հոգւոյս ազդեսցէ, քան թէ տարերաց ա պականացուսյ: Դու ստեղծիչ և ես կաս, բայց տա րակուսելոյս ՚ի մուտս մաղթանաց այսր հեծութեան՝ կամս քաղցրութեան՝ զօրանալ աստէն. զի մի ՚ի բանալ վերնայինն երկնի՝ անբնաւիր գտեալ կրթութեան վա յելման լուսոյ, իբր զնիւթ մոմոյ սպառեցայց չնչեալ ՚ի միջոյ: Ոգի զսկելոյս, ըստ մաղթանաց գոչման աստ ղին, և այժ թաւկացելոյս, և կեանք մաշելոյս՝ մտացս խղճիւ, այլ ոչ տաժանմամբ կրից՝ աշխատութեամբ գքեզ խնդրելոյ, առ զաւանդ մաղթանացս, և տուր զողորմութիւն քո չնորհացդ. ընկալ զփոքրս ՚ի տակ

բես, և չնորհեա զմեծդ առ ի հզօրէդ. զօրացս զբանս
զղջման, առաքեալ ի մեզ հոգի ի բարձանց՝ աստուա-
ծաշունչ պատգամօքս ի սմա եդելոցս: Պարգևեա, քա-
բերաբ՝ զառաքին Յակոբեայ, լուսաւորեալ առ ճշմար-
տութիւնն, մատուցանելով մահու արժանոյս՝ ընդ
պղնձոյս գոյի անարգս ձայնի՝ զոսկի քո չնորհի, ընդ
անզարդութեան երկաթոյս սեւութեան գունոյս՝ պըճ-
ղինձ պճնելի, ցոյցք առաքինութեան, հրաշեկ լ՝ի
բանանու: Ընդէ՞ր կարծրացուցանես զսիրտ եղկելոյս՝
չերկինչել ի քէն, անճառ և ահաւոր: Ա՛ր եղէց ան-
պատուշ ի փոքր վաստակոյս՝ իբր ապաշան սերմանող
անբերբի երկրի: Ա՛ր լեցի ինձ երկնել և ոչ ծնանել,
ողբալ և ոչ արտասուել, խորհել և ոչ հառաչել, ամ
պել և ոչ անձրեւել, ընթանալ և ոչ հասանել, ինձ
ձայնել և քեզ ոչ լսել, պաղատիլ և անտես մնալ, կոչ
կողել և ոչ ողբումել, ազաչել և ոչ ինչ օգտել, զոհել
և ոչ ձենձերել, զքեզ տեսանել և դատարկ ելանել:
Լ՚ուր ինձ՝ նախ քան զկարդալս իմ առ քեզ՝ միայնդ
հզօր. մի զանվճար տանջանացն տոչժս՝ ընդ Թուով ա-
ւուրց մեղօք կեցելոցս չարագործիս ինձ հատուցաներ:
Կեցո զիս գթած, լուր ինձ ողորմած, մարդասիրեա
ներող, ինայեա եղկայնամիտ, պաշտպանեա ապաւէն,
բարերարեա հզօր, աղատեա ամենակալ, կենագոր-
ծեա նորոգող, վերականգնեա ահաւոր, լուսաւորեա
երկնային, բժշկեա հնարաւոր, քաւեա անքնին,
պարգեւատրեա սուտ, չնորհազարդեա անհատանձ,
հաշտեա անախտակիր, ընկալ անոխակալ, սրբեա ի
պարտուց օրհնեալ: Նէթէ յառեցից զաչս իմ, նայե-
ցեալ ի հայեցուածս երկուց վտանգից յաւուր Թըշ-
նառութեան, զքոյդ տեսից փրկութիւն՝ յոյս և խրա-
նամակալ. եթէ նկատեալ դիտեցից ի վեր յամենա-
գթաւ ուղին սոսկալի, հրեշտակ քո խաղաղութեան
քաղցրութեամբ ինձ պատահեսցէ: Ցոյց ինձ տէր ի
յելից աւուր չնչոյս արձակման՝ մաքրութեան ոգի
լուսով ամբարձեալ ի յերկնաւորացն երջանկաց՝ պար-

գեւօք սիրոյ քոյ եկեալ հասեալ : Ի յարդարոցն կատարելոց՝ կարեաց լինէ կցորդ ժամանեցուսցես. զանակընկալն կալն բարի՝ չարիս ’ի յուսահատութեանն աւուր շնորհեսցես : Քաւ լեզի քեզ, բարեբանեալ, որ փրկութիւնդ ես ամենայնի, եթէ ախտացեալս քո ոչխարի՝ գազան դժնդակ ատցես ուղեկից, մեղօք մեռելոյս՝ անախտ կեանք, կործանելոյս պարտեօք՝ փրկութիւն :

Գ. Ընդէօք մոռացիս զբարերարելդ՝ ակնկալութիւն, անտեսեսցես զքաւիրելդ՝ խնամող. այլայլեսցես ըղմարդասիրելդ՝ անփոփոխ. նհանջեսցես զկենագործելդ՝ անվախճան. թողուցուս զաղօրմութիւնդ՝ երջանիկ պտուղ : Աշաւաղեսցես զքաղցրութեանդ բարեհնորհ ծաղիկդ. անպատուեսցես զնիւթ պանծանացդ քումդ ճոխութեան. յեղանակեսցես զփառս հեթանոս քումդ բարձրութեան. ոչ պահեսցես զվայելչականն զարդ պայծառութեան քումդ պսակի : Եթէ ո՞ղորմածացն է երանութիւն, իսկ դու քնաւ իսկ արքայութիւն լցեալ փափաքմամբ, ոչ զբոլորն պարգեւեսցես փրկութիւն. ոչ մատուցանիցես դեղ վիրացս, ոչ սպեղանիս խոցուածոյս, ոչ դարման տկարութեանս. ոչ ծագեսցես լոյս ’ի խաւարի՝ յուսացելոյս ’ի քո զօրութիւնդ՝ կենաց պարգեւդ սիեղերաց, որ միայնդ ունիս փառս ինքնութեամբ իսկութեամբ և յարակայ մշտնջենաւորութեամբ, վկայեալ ’ի քնաւից, օրհնեալ և փառաւորեալ յերից յաւիտեանս, և անդր քան զպայման սահմանի խմանալեացն յաւիտենից. ամէն :

ԲԱՆ Գ·

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՅՏՈՒԾՈՑ

Ա· Տէր իմ տէր տուիչ պարգեւաց, ինքնաբուն բարի, ամենից տիրող հաւասարապէս, միայն սրարիչ ջննաւս յոչէից, փառաւորեալ, անքննին, ահեղ, ա հարկու, սոսկալի, հզօր, սաստիկ, անտանելի, անմերձենալի, անմբռնելի, անիմանալի, անճառելի, անտեսանելի, անղննելի, անչօշափելի, անորոնելի, անըսկիզբն, անժամանակ, անչամանդաղ գիտութիւն, աներկեւեան տեսութիւն, ճշմարիտ էականութիւն, բարձր և խնարհ, օրհնաբանեալ գոյութիւն, անբաւ տուեր ծագումն, ամենափայլ ճառագայթ, խոստովանեալ լոյս, անտարակոյս վստահութիւն, անտարտամ հանգիստ, անյեղլի կնիք, անսահմանելի տեսիլ, վկայեալ անուն, ճաշակ քաղցրութեան, բաժակ բերկրութեան, հաստիչ հոգւոց հայց, օտար միտութեանց սէր, աներկբայ խոստումն, ծածկյայտ ցանկալի, զգեստ անկապուտ, օթոց բաղձալի, զարդ փառաց, ձեռընկալու մեծ, ապաւէն գովեալ, աննուազելի շնորհ, անպակասելի գանձ, անապական, անձրեւ, արփիաձիգաղջ ցօղ, ամենատեղայց դեղ, ձրի բժշկութիւն, կրկնաձիր առողջութիւն, վերհագոյն իրախոյս, անպատիր կոչումն, համօրէն աւետիս, ստրկամեծար թագաւոր, աղբատասէր պաշտպան, մշտահարուստ տուիչ, անխափան դիմեցումն, աննահանջելի հրաման, անհամառօտ յոյս, երկար տեսողութիւն, անզգեստական տուր, ամենաբաշխ աչք, արդարակշիռ ձեռն, անաչառատես ակն· միխիթարութեան ձայն, սփոփանաց

լուր, բերկրութեան բերութիւն, անուն կենդանի, նա-
խանձմամոզ մատն, անգայթակղելի ելք, անխարդախ
ընթացք, կենդանարար կամք, աննենգելի խրատ, ան-
նախանձ պատիւ, լայնական հնարք, անձկական պայ-
ման, անգտանելի հետք, աներեւոյթ շաւիղ, անչափա-
գիր պատկեր, որքանութիւն անտահման, աննմանական
տիպ, անզուգական գուէթ, ողորմութիւն բազմազեղ,
խոնարհութիւն ոճնելի, համբոյր փրկական: Այլ եւս
քան զայս ազդմունք վայելչականք՝ աստուածութեանդ
նուիրելիք. օրհնեալ, գովեալ, բարեբանեալ, քարո-
զեալ, աւետարանեալ, հռչակեալ, հնչեցեալ, պատ-
մեալ, անխոսելի կամօք աղաչեալ, և որ ինչ առ մեզ
բերին առ ի քէն հոսմունք քաղցրութեան, զոր հան-
դերձելոյն ճառից լուսաբանեն կերպաւորութիւնք.
որով զուարթ ցուցանիս ի փրկութիւնն իմ, երանու-
թիւն, իբր ի պարարտութենէ իմեքե ախորժ սեղ-
ջանօք լցեալ, զի ոչ իմովս ինչ անոտիապատուաստ
փառատրիս երգով, այլ զի պատճառ իմն առցես ըզ
փոքրս աղերս՝ մեծիդ փրկանաց:

Բ. Այլ քանզի առ ամենայն հասակ անկեցեալ յերկ-
րի ազգ բանականաց՝ այս պատուէր նկարագրական նո-
րոգ մատենի ողբոց նուագի, որ զամենեցունց ունի ըզ
կրից պատահմանց նշուաւկեալ յիւրում պատկերի,
իբր կցորդ մեծդիտակական կարեաց համայնից, առ
բոլոր գումարս բազմահոլով սիեղերակոյտ քրիստոնէ-
ից, առ նախնի ժամն ժամանողաց, և առ երկրորդ
կոչեցեալ չափու արքունն, առ որ ի կատարած ա-
ւուրն կալեալ՝ սակաւաձեռն ծերութեամբն, առ
պարտաւորս և արդարս, առ ինքնարդոյ բարձրայօնն
և սխալեալ անձնադատ գտեալն, առ բարիան և ե-
ղեռնագործս, առ նկուն և առ արիս, առ սորուկս
և ներքոյանկեալս, առ սեպուհս և գերաշխարհիկս,
միջակայնոց և պայազատաց, շինականաց և տոհմա-
կանաց, արուեստ և իգաց, հրամայողաց և հնազան-
դելոց, գեր ելոց և նուաստից, վերից և փոքունց,

պատուականաց և ռամկաց, ձիավարժից և սոսկակա-
նաց, քաղաքականաց և գեղջկաց, արքայից գոռո-
զութեանց ՚ի սանձս ահաւորին ըմբռնեցելոց, միայ-
նացելոց՝ վերնականացն խօսակցաց, մաքրականաց ան-
բանութեր զգաստութեանց, քահանայական երջանկա-
կրօն ընտրութեանց, այցելութեանց բարեզգեստից
դիտողութեանց, աթոռակալութեանց նախագահից
արբանութեր տեսողութեանց. որոց ոմանց աղերս ա-
ղաչանաց, և ոմանց խրատ բարեաց առ դէմս աղօթից
այսու մատենիս մատակարարեցի, ձեռնարկեալ հոգ-
ւոյդ զօրութեամբ՝ կարգել ինձ մաղթանս բազմադիւ
միս, և ամենեցուն սոցին խնդրուածս՝ գթութեան
մեծիդ յանդիման լինել սովաւ հանապազ։

Գ· Նա արասցես զսոյն ընթերցողացն ՚ի սիրոս յըս-
տակ՝ բժշկութիւն հոգւոց և մարքրութիւն յանցա-
նաց, թողութիւն պարտուց և արձակուրդ մեղաց
կապանաց։ Նղկցի բղխումն արտասուաց սովաւ վար-
ժելոցն, և պարգեւեալ տացի ՚ի ձեռն սորին ապա-
շաւ ըղձից։ Շնորհեսցի տէր և ինձ ընդ նոսին առ
՚ի քէն զղջումն կամաց, և նոցա խմսիս ձայնիւ շուխչս
բարեհամբոյրս. նաւիրեսցի վասն իմ այսու մատենիս
պաղատանք նոցին, և բանիւս այսու հեծութիւնք
նոցին ընդ իմ խնկեսցին։ Ընդ համբոյր ճաշակման այսր
ողբերգութեան, շնորհ լուսոյ քոյ մուեալ բնակեսցէ։
Նթէ ելցեն ինձ բարեպարիշտք ընծայիլ սովաւ, ընկալ
կենդանեօքն վասն քո, գթած, և զիս ընդ նոսին.
եթէ ախտս ինչ սրբանուէրս կաթուածոց աչաց սո-
վիմբ բերիցի, եղիցի ՚ի քէն խնամակալ՝ և յիս անձ-
րեւեալ. եթէ գրեսցի և ՚ի վրկութիւն կարգեսցի
հաղորդելոցն յայս կիրս կենաց, արասցես կամաւ քո
օրհնեալ՝ և ինձ համարեալ։ Նթէ հեծութիւնս աս-
տուածահաճոյս ՚ի ձեռն այսր բանիւ ՚ի գալստեաց ու-
րուք յառաջ եկեսցէ, օգտեցայց քեւ բարձրեալ՝ և
ես ընդ նմին. եթէ ձեռն մաքուր՝ խնկով հանդերձ
ձեալ առ քեզ համբարձցի, հասցէ միասցի ընդ իմս

ձայնի և տղաչողացն աղերս յառաջ մատուցեալ։ Նրեք պաղատանս բազմադիմիս ընդ իմս երկնեացն, լսեալ և ինձ քեւ և վասն սորին կրկին նուիրեալ. եթէ յարգեացն այս անձին բանի պատարագ՝ քեզ՝ ի հաճութիւն, նախայլոցն ընդ իս քեւ ընծայեացն։ Նրեք՝ ի տիրանալ ինչ ձանձրութենէ ոք նուաղեացն, կանգնեացն վերատին հաստատանաւ այս հառաչանաց՝ ի քեզ յուսացեալ. եթէ համբարտակն վատահութեան մեղօք յատակի, այսու արձանօք պատկանեցելովք աջով քո պաշտպան՝ դարձեալ կառուցի։ Նրեք յուսոյն ձգտան սուսերըն յանցանաց հատեալ կտրեացն, կրցեցի դարձեալ միւսանգամ կամօք ամենակալիդ բարւոք պատուաստեալ. եթէ վտանգ մահու անձնական ցաւոյ ոք պաշարեացէ, գոցէ փրկութիւն սուաւ առ ի յոյս կենաց՝ յաղօթելն առ քեզ կեցուցիչ. եթէ տագնապաւ ոք տարակուսի ի սիրտ խոցիցի, քաղցրութեամբ քո՝ սուաւ սպրեալ ողջասցի։ Նրեք անքաւելի կորստեամբ պարտեաց՝ յանդունդս ոք խորոց իցէ ընկլուզեալ, եկեացէ ի լոյս կարեաւ այս հնարիւ՝ քեւ պատսպարեալ. եթէ թմբրութեամբ խաբէից խաւարին գործոց իցէ ոք ընաւեալ, զօրասցի անդրէն վասն քո՝ միայն ապաւէն՝ ի քեզ ապաստան եղեալ։ Նրեք պահպանակն վատահութեան զանձն ուրուք լքեցէ, ընկալցի այսու միջնորդիս ձեռն քո զնա՝ ամփոփեալ ի նոյն հաստատութեան. եթէ ամայի ի զգուշութենէ պահոցն ոք դեգերեսցի, սպասեացէ սուվիմբ առ ի նոյն գարձ նորոգողիդ։ Նրեք սարսուռ դիւային ջերման՝ դողութեամբ ինչ զոք խռովեացէ, սթափեսցի ի սոյն յայս նշան խոստովանեալ և երկրը պագեալ խաչիդ խորհրդոյ. եթէ անօրէնութեան մրրրիկ խորտակիչ հողմոյ յանկարծ բախեսցէ զհաստատաձըս մարմնոյ շինուածոյ մարդոյ յերկրային ծովուս, հանդարտեսցի անդրէն ղեկաւ այս թեւոց ի քեզ պատկանեալ։

Գ. Նր արասցես լինել դեզ կենաց առ հնարս ցաւ

ւոյ հոգւոյ և մարմնոյ քոյ ստեղծուածոյ՝ զայս կարգեալ սահման ողջոյ մատենի սկզբնեցելոյ յանուն քո՝ բարձրեալ։ Օ՛ սկսեալս իմ դու կատարեա. եղիցի հոգի քո խառնեալ ի սա. շունչ զօրութեան մեծիդ միասին ի քո լինձ շնորհեալ ստեղծաբանութիւնս. զի դու տաս զօրութիւն վհատեալ սրտից, և ընդունիս փառս յամենեցունց. ամէն։

ԲԱՆ Դ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՅՏՈՒԾՈՑ

Ա. Ես քանզի սկիզբն կալայ խօսել ընդ քեզ՝ որ ի ձեռին ունիս զշունչ կենդանութեան հոգւոյս բազմամեզի, յիրաւի սարսեալ դողայեալ տագնապաւ մեծաւ յաւէտ երկնչիմ. վասն զի ահաւոր և անտանելի և ի սահմանէ բանի փախչելի յիշատակ անճողոպրելի անաչառդ քո ատենի՝ ի կշռամբուծն իմ պարտաւորի՝ արարիչ երկնի և երկրի։ Նա զի և չիք խակ բժշկութիւն բազմամեղանդ սաստկութեան վիրացս անողջանալի, խայթմանց խածուածոց մահաբերին բեբանոյ ժանեաց՝ որոզին զանձն իմ ի կորուստ։ Մա նաւանդ զի ոչ գոյ պատասխանի, ըստ առակողին, յաւուր պատերազմի, և ոչ բանիւ իրաւանալի, և ոչ վերարկուաւ պատապարելի, և ոչ դիմակօք կեղծաւորելի. ոչ առ երեսս բանիւք մատչելի, և ոչ կերպարանօք երբէք խաբելի, ոչ յօդուածովք բանից սըտելի, ոչ արագմամբ ոտից փախչելի, ոչ թիկանց դարձուցանելի, ոչ դիմաց ընդ երկիր մածուցանելի, ոչ բերանով ընդ հող հաստելի, ոչ ի խորս երկրի ղօղելի։ Քանզի մերկ են քեզ ծածկեալքն, և հրապարա-

կեալ են աներեւոյթքն. արդարութիւն իմ նուաղեալ և խոտոր ունայնացեալ. մեղանքն յայտնեցեալ և յաւէտ առաւելեալ. չարիքն իմ ծնացական, և ես կոչուստական. իրաւանցն կշիռ պակասեալ և անիրաւութիւնն իսկոյն զօրացեալ. բարեացն բերք հալեալ, և սխալմունքն արձանացեալ. աւանդն կորուսեալ, և դատակնիքն այժմէն գտեալ. մահուն մուրհակ գրծեալ, և աւետեացն կտակ եղծեալ: Խարերարն տրիւրեցեալ, և բանսարկուն ուրախացեալ. հրեշտակաց գունդն թաղծեալ, և սատանայ խնճղուք պարեալ. վերնական զօրքն ողբացեալ, և սուրնայինքն բերկրեցեալ. սպանողին միթերք լցեալ, և պահողին գանձն կապտեալ. օտարին կողմն կանգնեալ, և ատացողին պարգեւ մատնեալ. հաստողին ձիր մուսացեալ, և կորուսչին հաղքն պահեալ. երախտիք փրկչին հենգնեալ, և բելիար զուարթացեալ. կենացն աղբիւր փակեալ, և գուռոզին ժանգ ժանդիս ժամանեալ:

Բ. Այլ արդ ո՞չ ապաքէն ըղձալի էր, ըստ գրոյն կանխութեան նախաձայնելոյ, ոչ ստեղծանիլն երբէք յարգանդի և ոչ ներարկիլն ի յորովայնի, ոչ ի ծնունդ յառաջագալ և ոչ ի լոյս կենաց հասանիլ, ոչ ի թիւս մարդկան դրիլ և ոչ ի հասակ աճման ամբառնալ, ոչ ի պատկեր գեղոյ զարդարիլ և ոչ բանիւ հանդերձաւորիլ, քան ընդ այսպիսեացս սատակագունիլ և սարսափելեաց ըմբռնիլ պարտուց, զոր և ոչ վճմաց կարծրութիւն բեկե, թող թէ մարմնոց լուծականութիւն:

Գ. Այլ արդ տուր բարեգութ աղաչեմ զքեզ, տուր ինձ ողորմութիւն, որ զայսոսիկ դու ինքնին քեզէն քոյովդ բանիւ մեզ սահմանեցեր ասելով, թէ տուք զայդ նուէր յանուն փրկութեան ձերոյ աստուածոյ, և սուրբ եղերուք. զի ղողորմութիւն կամիմ, և ոչ զպատարագ: Ահա բարձրացիր վերստին խնկեալ այսր Հիշատակաւ, որ ունիս զամենայն, և ի քէն է ամենայն, և քեզ փառք յաւիտեանց. ամէն:

ԲԱՆ Ե·

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա· Եւ արդ ես երկրածինս մարդ՝ կենցաղականաւ անկայունն գոյիւ զբաղեալ, և յիմարութեամբ պատրողականաւ գինեաւս յիմարեալ, որ ամենայնիւ սըխեմ, և ոչ միով իւրք ճշմարտեմ։ Ջանդի որպիսք դիմօք վերապրեցելովք նշանակօք աղաւտեցելովք՝ յանդըգնեցայց լինել յանդիման քումդ պատաստանիդ, ով իրաւադատ ահաւոր, անճառ, անպատում, հզօր աստուած բոլորից։ Ջանզի դասեալ աստասին ի սոյն զապերախտութիւն մեղուցեալ անձինս առ քումդ ե՛ բախտիս, ցուցիչ զերաւունս քո միշտ զօրացեալ և զանիրաւութիւնս իմ յաւէտ պարտաւորեալ։ Որ ա՛ րարեր զիս ի քո պատկեր պանծալի՝ ի ձեռն վերինդ տպաւորութեան, զսկարս օժանդակելով։

Բ· Ոչ արդարեցեր բանիւ, փայլեցուցեր փչմամբ, մտօք ճոխացուցեր, իմաստիւք աճեցուցեր, հանճարով հաստատեցեր, ի շնչականացն որոշեցեր, հոգւով իմանալեաւ խառնեցեր, իշխանականին գոյիւ պճնեցեր, ճնար հայրաբար, մնուցեր դայեկապէս, տածեր ստացողապէս, տնկեցեր զամբարիշտս ի քումդ դաւթի, ջրովն կենաց ոռոգեցեր, աւազանին ցօղով մաքրեցեր, կենացն վտակաւ արմատացուցեր, հացիւդ երկնայնով զամբեցեր, աստուածային արեամբդ արբուցեր, անհպիցն և անհասանելեացն ընտանեցուցեր, զաչս երկրեղէն ի քեզ համարձակեցեր, լուսով փառացդ վերածածկեցեր, զհողանիւթ մատուռնս անմաքուր ձեռացս ի քեզ մատուցեր, զմոխիրս անարգ

մահացու՝ իբր զնշոյլ լուսոյ յարփեցեր, զհայր քո հզօր ահաւոր օրհնեալ՝ մարդասիրապէս և անարժանիս ինձ անձին կինքեցեր։ Ող կիզեր զբերանս լեալ նանրութեամբ՝ ի ժառանգակիցն կարդալ զքեզ, ոչ կշտամբեցեր զյանդգնեալս ի քո կտրդուԹիւն, ոչ սուրբ ըացուցեր զտեսիլ աչացս ի քումդ ակնարկուԹիւն, ոչ արգելանաւ կապանաց ընդ մահապարտացն տագնապեցեր, ոչ խորտակեցեր զդաստակ բազկիս՝ որ անմաքրապէս առ քեզ համբառնայր, ոչ մանրեցեր զոտս իմոյ մատանցս ի չօշափելն զբանդ կենաց, ոչ պատեցեր զլեզու մառախուղք ի ձօնելն զքեզ՝ ահաւոր, ոչ փշրեցեր զպարս ատամանցս յըմբռչնելն զքեզ՝ անսահմանելի, ոչ գնացեր բարկուԹեամբ խոտորնակ՝ խոտորնակի ընդ քեզ հետեւողս, իբր ընդ վըխլեալ տունն Իսրայէլի, ոչ խայտառակեցեր ի հարսնարանիդ զանարժանս քումդ պարերգուԹեան, ոչ ի գձուձ հանդերձին տեսիլ զանօրինեալս յանդիմանեցեր, ոչ կապանօք ձեռացս և ոտիցս յարտաքին խաւարն հալածեցեր։

Գ. Ո՛չյս ամենայն մատունս բարեաց և զներելոյդ երկայնմտուԹիւն ընկալեալ ի քէն՝ բարերար, օրհնեալ և յամենայնի մշտ երկայնամիտ, փոխադրեցի զքաոսակարս պարտեաց՝ անԹիւս և բազմօրինակ անօրէնուԹիւնս, մարմնականաց և անձնականաց՝ ամենակիր բազմածուփ խորհրդոց յուզմանց երկրաքարշուԹեանց։ Ո՛չյսոսիկ քեզ, աստուած իմ և տէր, ընդ այսքանեաց բարեաց փոխաբերեցի. զայս քեզ ինձէն հատուցի չարիս, ըստ մովսիսեան յանդիմանուԹեանն առակի, մոռացեալ զնմաստուԹիւն և սիրոյս յիմարուԹեան։ Ո՛չյսց բարեաց երախտեաց կաճառս՝ ընդունայնուԹեան գնացիւք՝ չարաչար ուռնայնացուցի. զայս լուսաւորուԹիւն հնորհաց անճառից ի բարձրեալդ խնամոց բարդեցեալ՝ մըրկաւն խելագարուԹեան ցնդեցի։ Եւ Թէպէտ բազում անգամ ծանուցար կարկառմամբ ձեռին քո այցելուԹեան ձգել զիս առ քեզ,

ոչ հաւանեցայ ըստ մարգարէին որ զՆորայէլէ ամբաս-
տանութեան. և թէպէտ խոստացայ դաշնաւորեցի
քեզ հաճոյանալ, և ոչ ընդ այսմ սահմանաւ ուխտիւ
փակեցայ, այլ դարձեալ զնոյն նիւթեցի չարիս, ան-
զըսոյն յոճն առաջին մատեայ, փշոյն մեղայ հերկեցի
զանդաստան սրտիս՝ յորմանէն արդիւնաւորութիւն
Ահ ինչ ելանեն առածք աստուածարեալ սուրբ մար-
գարէիցն. քանզի մնացեր չինէն խաղողոյ, և ես ընդ
այնորիկ փուշ շառաւիղեցի. դարձայ յանախորժ դառ-
նութիւն պտղոյ՝ այդիս օտարացեալ. բուռն հարի
զանհատատա հողմոյ, որովք միշտ տատանեալ այսր
անդր տարաբերիմ. ըստ ձայնի երանելւոյն Յոբայ ընդ
ճանապարհ լիմն անդարձ գնացի. ի վերայ աւազոյ
շինուածս յիմարութեան կառուցի։ Այնատարը հե-
տովք խաբեցայ կենացն անձկալեալ հասանել. փա-
կեցի ինձէն զելոյն ուղեւորութիւն. բայց կամաւ
զկորստեան խորխորատն։ Ոչ զպատուհան լսելեացս
իմոյ առ բանիւ կենաց ընդունելութիւն. կափուցի
զաչսդ հոգւոյս հայեցուած առ ի զկենացն դեղ նկա-
տել։ Ոչ ընդոստեայ ի թմբրութեանց լքմանէ մտացս
ի պատգամ փողոյդ ահաւորութեան. ոչ զգաստացայ
ի բողոք գուժի հրափորձական աւուրն ընտրութեան.
ոչ երբէք զարթեայ ի նիրհմանէ քնոյն մահացուէ, որ
ի կորուստն կատարեաւ։ Ոչ եւս հանգիստ քոյ հոգ-
ւոյդ ի մարմնեղէնս տաղաւարի. ոչ ընդ քնութիւն
ընչից խառնեցի զմտն ընտրեալ քումդ պարգեւի. և
մոյս ձեռօք կոչեցի կորուստ, ըստ առակողին, զհոգիս
կենդանի մահացուցանել։

Դ. Ահ զի՞նչ է ինձ սակաւս և նուազագոյնս յօդել
սահմանս կանգնելոյս չափաբերականս, մինչ անցեալ է
ըստ քանակութիւն և վերպեալ ըստ բժշկութիւն։
Արդ քո է ընձեռել կեանս հոգւով մեռելոյս, և ա-
նոխակալութեամբ մատչել առ այցելութիւն դատաւ-
պարտելոյս որդի աստուածոյ կենդանւոյ. քեզ փառք
յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ Ը.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՐՏԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՌ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱԱՏՈՒԾՈՑ

Ա. Իսկ արդ զի՞նչ բարւոք գոյ առ այս, կամ ո՞ր օգուտ լինի առ սոյն սահման ընթացից ձայնիս հեծուԹեան՝ լքանել, և ոչ զամբարեալ շարաւ մահացու վերից՝ խարանաւ բանիս արտաքս հերքել, և կամ զծանրուԹիւն սրտիս մԹերեալ ցաւոյս Հոգեկան խիԹոյս, իբր տաղտկացուցանողական հնարաւորուԹեամբ, մանաւանդ զղուանօք փսխել։

Բ. Իւ քանզի ոչ գոյ արժանի պարծելոյ ՚ի փառս ընդ սրբոյն դաս, որոց լի են բերանք նոցա ծաղուց, և շրԹունք խրեանց ցնծուԹեամբ, ըստ առակողին և սաղմոսողին, ՚ի կարգն երկրորդ դիմեցից՝ զնմանիսն իմ յիշատակել համայն աստանօր. ԹէպԷտ առ իմոմ ԹերուԹեան բարուց անբարեաց՝ և նոքա յաղԹականք եցեն, իբր ապաշաւեալն քան զանապաշխարն։ Տօնելի եղեւ Ա՚անասէ առ իմոյ պարտուցս առաւելուԹիւն. պատուեցաւ և փարիսեցին առ դժնեխս ամբարշտուԹիւն. գովեցաւ անառակ որդին առ անդարձիս ուխտադանցուԹիւն. յիշատակեցաւ կեղծաւորուԹիւն որդւոյն Ա՚մասեայ առ անշնորհուԹիւն ապախտաւորիս. օրհնաբանեալ եղեւ աւազակն, որ դատախազն է անհաւատից. պատուեցաւ և կինն պոռնիկ՝ սկզբնամայրն ապաշաւողաց։ Ա՚յ պակաս քան զփարաւոն զըսեռեղծուած սրտիս իմ խաւարուցեալ. ըստ օրինակի խոտովուԹեան մըրկայ ծովու ծփեցայ. ոչ այնքան սարսեցեալ և պատկառեցեալ ՚ի սաստկուԹենէ քուէդ հրամանի, որքան ալիք ծովուն յեղերացն։ Ընդ Թիւս չափուց

կշռութեան առ իմն գործոց՝ և աւազին կոյտ սահմանեցաւ. պակասեաց անբաւին չիղջ առ համբարս իմոյս անօրէնութեանց:

Գ. Ո՛չ թէպէտ և յոյժ բազում են մանուկքն՝ ի յաւիտեան ջոյն համահաւաքեալք, այլ ուրոյնք և առանձնականք՝ ի ծնողաց ածելութենէ. իսկ մեղանք իմոյս յանցանաց՝ անթիւք. զորս անհնար է առնուլ՝ ի միտս: Որմն և ծնունդք իւր, որմն և շառաւիղք իւր, որմն և բիծք իւր, որմն և արկածք իւր, որմն և փուշք իւր, որմն և արմատք իւր, որմն և հաստատածք իւր, որմն և պատուղք իւր, որմն և նշխարք իւր, որմն և ճիւղք իւր, որմն և ոստք իւր, որմն և արմտիւնք իւր, որմն և ճիւրանք իւր, որմն և մատունք իւր, որմն և խլրտմունք իւր, որմն և զօրութիւնք իւր, որմն և ազդմունք իւր, որմն և նրբմարանք իւր, որմն և տիպք իւր, որմն և մնացուածք իւր, որմն և սոուերք իւր, որմն և մթութիւնք իւր, որմն և յարձակմունք իւր, որմն և հնարք իւր, որմն և պատիրք իւր, որմն և դիտմունք իւր, որմն և դիմեցմունք իւր, որմն և չափք իւր, որմն և խորք իւր, որմն և գարշութիւնք իւր, որմն և կայծակումունք իւր, որմն և կիրք իւր, որմն և մթերք իւր, որմն և գանձք իւր, որմն և ցնցուղք իւր, որմն և աղբերք իւր, որմն և գիւաք իւր, որմն և շանթք իւր, որմն և հրդեհմունք իւր, որմն և պատահանք իւր, որմն և վիհք իւր, որմն և անդունդք իւր, որմն և քորքոքմունք իւր, որմն և աղջութիւնք իւր, որմն և ամպրոպք իւր, որմն և կայլակք իւր, որմն և հոսմունք իւր, որմն և հեղեղք իւր, որմն և սառնամանիք իւր, որմն և գրունք իւր, որմն և շաւիղք իւր: Ընոյն և տապ իւր, հրան և գոլորշիք իւր, հալոցն ձարպին և ճենճերմունք իւր, օշինդրն և գառնութիւն իւր, կործանիչն և հնազանդեալք իւր, բռնաւորն և յեղուզակք իւր, գոռոզն և սպառազէնք իւր, աւազակապետն և գումարտակք իւր, գաղանն և կորիւնք իւր, խածանողն և ծակոտուածք իւր, ապականագործն և նմանիք իւր:

Դ. Ընդ այսոքիկ պետք են գիտակաւորութեանց ապա-

13409-18 19103

Z.U.h.Z ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
S.S.S.R. Публичная Библиотека
7/XI 1922
ИМЕНИ А. МАСН
Ա. ՄԱՏՈՒՆ

կանուղայ ոգւոյ համայնից, դասեալք ընդ ինքեամբք
ՅուաՃուԹիւնք մասանց՝ իւրաքանչիւրոք ՚ի սոցանէ
բիւրք բիւրուց և հազարք հազարաց. իսկ զհամայնից
Թիւ նա միայն գօրէ իմանալ, որ զառ ՚ի մինչ չէու-
Թիւնն գրեալ՝ իբր զէուԹիւն դործոց տեսանէ: Նա
արդ եԹէ ոք զանձն ոչ խաբեսցէ, և առ երեսս ոչ
կեղծաւորեսցի, և կեղծաւորաբար ոչ անհաւատեսցէ,
և մարդ զինքն ծանիցէ, և հաստատակաց բնուԹեամբ
վարեսցի, և երկրածին զանձն դիտեսցէ. և ՚ի չափու
իւրում՝ կանոնին կացցէ, իմացցի ծանիցէ զնախաԹիւ
մասունս արկածիցդ վերագրելոց, ԹէՃ ոչ ընդունայն
ինչ գրեցի և կամ զբնաւ իսկուԹիւնն սահմանեցի, որ
՚ի մերս բնուԹեան պտուտակի ազգի ազգի վրիպակա-
նուԹիւն. այլ ՚ի բիւրուցն արդասեաց չարեաց չափ
մի երեւեցուսցի, զի նոքօք և զայլսն իմաստասիրեսջիք,
Թէպէտա և ոչ բաւանդակապէս:

ԲԱՆ Ի.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՅՏՈՒԾՈՑ

Ա. ԶԻ զի մի զվերկուԹեանն վատահուԹիւն ՚ի ըս-
պառ կորեսցիք, և ապաշէն եղեալ մատնեցայց այս-
քանեաց աներեւուԹից ընդդիմամարտից, որք ոչ այլ
ինչ են՝ քան ԹէՃ ընտանիք Թշնամիք ինքնածին բու-
սեալք զոր վերագրեալդ սահմանեցին՝ զորքանուԹիւն
պատկերին ձեւոյ եդեալ ահարկուս, յորմէ առ ամին
բաղմաքոյլ բանուԹեան մարտակոդ՝ զօրեղ ախոյեանս
աստուածականս՝ ամենայաղԹողս և անպարտելիս, ԹէՃ
և կանխելիս կիցս և դժուարակուԹ պտուղս ծառոյ
անհասանելեաց, և անկոխ ճանապարհայ երկիր և տա-

ժանմունք ։ Քանզի զայն ամենայն գուշակս չարութեան բանասիրութիւն զօրաց՝ սակաւ մի արտօսր կաթուածոց աչաց, իբր զճճիս զեռունս բազմատանիս խիստ թիկն երկրի սակաւ խլրտմանց՝ անկեալ ՚ի վերայ ծորումն ձիթոյ կամ գոյն դեղ ինչ սատակչական, ցամաքեցուցանէ . և գոյն մի հատաչումն սրտի հեծութեան եղեալ ՚ի յոգւոյ, իբր ընդումն հարաւային ջերմութեան խառնեալ յարեւուտ, զառնամանեաց սատակութիւն հալէ · քանզի ըստ միտս նմանութեան հեշտածինք են, և ըստ միտս դիմադրութեան դիւրամեռք ։

Ը· Այլ ես ոչ երբէք կասեցից գասել զպատապարտեալն՝ քանից կսկծմամբ, պարսել զպարտաւորեալն՝ իբր զինասակս անիրկանաւոր անհամոզելի · վասն զի զամանս սատակեալ ՚ի չիմոյ նեղչացն, ամանց զօրութիւն տամ կենդանանալ առ հոգւոյս կորուստ ։ Տանն կրս գառնոտեան, որ զգաստութիւն անառակ վարուց ծաղկեցի · բարեկնակս ապականաբեր և մահաղձ կուզեան, որ զկորտեան գինին երկնեցի · Քանանուզաւակ՝ և ոչ Յուդայի, ըստ ասից մեծին Դանիէլի · որդիս գեհենին, և ոչ ազքայութեան · ժառանգս դիւ ժոխոց, և ոչ փառացն փախաքելեաց · նիւթս տանջանացն, և ոչ հանգստեան ։ Ախերսխոտս առ երախտաւորդ, ապաշնորհս առ բազմապարգեւդ, միշտ մեղսգեալս առ երկայնամիտդ, դառնացուցիչս քաղցրութեան բարերարիդ, ծառայս չար և վատ, ըստ տէրունեան յանդիմանութեանն, խնաստուն զչարիս գործել ըստ Նայեայ նախատացութեանն, ժիրս առ ժանդագործս թիւնս զազրութեան ։ Փոյթս առ ՚ի բարկացուցանել զտէրն, մըշտաշարժս առ գիւտս սատանայականս, հանապազորդեան վիշտս ստացողին, Թոյլս առ բարեացն Թռիչս, ծոյլս առ երանութիւնն ընտրութեան, դանդաղս առ դիտմունս խոստացեալցն, անարիս առ կարիս պիտանեացն և օգտակարացն, պաշտօնեայս սիրադրուժ երախտամոռաց ։

Գ· Վայ անձինս մեղաւորի, զի՞ զարարիչն իմ բար-

կացուցի. վայ որդւոյս կորստեան, որ զկենդանութեան ձիր մոռացայ. վայ պարտապանիս անհամար բիւրուց քանքարաց՝ որ ոչ դոյ հատուցանել. վայ բեռնակրիս ծանրութեան մեղաց դժնէից, որ չունիմ դառնալ առ հանգստարարն. վայ վնասակարիս տէրունեան պարտուցն, որ չիք հնար յանդիման լինել հզօրին. վայ եղէգնահարիս կիսանոզականս նիւթոյ, որ տոչորելոց եմ ի գեհենին. վայ ինձ առ այս յիշատակ, զի նեռք բարկութեանն ատուածոյ պրեցելովք են գործեալ. վայ յիմարութեանս, որ ոչ մտաւեցի զգ ծածկեցելոցն յայտնութեան հանդէս. վայ ամբարիշտս, զի միշտ անդադար ոտանիս չարեաց կկեցի. վայ զմարմինս պարարտոզի կերակուր որդանցն անմահից, կտտողացն Թուննաւորաց վիճդ համբերեցից. վայ ինձ առ արբւսմն մահուն բաժակի, որպէս զյաւիտենականն տուժեցայց. վայ ինձ առ երս անարժան հոգւոյս յեղկելի մարմնոյս, ինքը դատաւորին ճշմարիտ յանդիմանեցայց. վայ ինձ առ նուաղութիւն իւղոյն լապտերաց, զի անարծարծելի է աղօտանալն. վայ ինձ առ ձեռ տագնապի ահին պակուցման, յորժամ առագաստին մուտն վակեսցի. վայ ինձ առ ձայնին ահաւորութիւն դողացուցչաց և սարսափելեացն բանից՝ երկնաւոր Թագաւորին վճռաւ կնքելոյն, ԹԷ ոչ գիտեմ զքեզ։

ԲԱՆ Բ.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ արդ զինչ գործեացես անձն իմ կորուսեալ, կամ ո՞ր թաքիցես, կամ զնաւրդ ապրեացիս, կամ որպես ելցես ի մեղայ բանդէ։ Վանզի բազում են պարտիքդ և անթիւ հատուցմունքն, սաստիկ կշռամբանքն և անվախճան նախատինքն. անողորմ են հրեշտակքն և անկաշառ դատաւորն, հզօր ատեանն և անաչառ բեմն, քաւմնելի սպառնալիքն և անողորմ հատուցմունքն, ահարկու հրամանն և մերկապարանոց յանդիմանութիւնքն. հրեղէն են գետքն և անանցանելի վտակքն, թանձրամած խաւարն և արտաքոյ այցելութեան մառախուղն. ապականութեան է գուբն և մշանջենաւոր է տագնապն, ամենագրաւ տարտարոսն և անվերջ սառնամանիքն։ Եւ արդ արդարեւ քեզ են գանձեալ դառնութքս այսոքիկ գժնդակք և տարժանելի օթեւանք անըմբեռնելեացդ պատուհասից, ով ապերժան անձն իմ մեղաւոր, չարագործ, պոռնիկ, բազմաթիծ, և սահման անդաստանի բնաւին անմաքրութեան։ Ահա զարդիւնս գործոց ձեռաց քոց ժառանգեացես՝ թիւրեալդ ի յուղղութենէ և զառածեալդ ի մաքրութենէ, տարագրեալդ յարդարութենէ և ի կարգաց պարկեշտութենէ, ունայնդ ի լուսոյ հոգեպարգեւ հարստութենէ, նախանձարկու բարերարին և ամենակալ Թագաւորին։

Բ. Եւ քանզի կառուցեր քեզ անել արգելան և անփախչելի որոգայթ, խոստովանեալ քեզէն զանբժշկական քո վէրս և զանօրինակդ հարուած, վկայելով

զանձինդ զպարտականդ մահու զանբուժելիդ բեկու-
թիւն, ով չարդ ՚ի բարեաց, ով դառնութիւնդ ՚ի
քաղցրութեանց, ով խաւարդ ՚ի լուսազարմից, ով
կապտեալդ ՚ի պճնելոց, ով դժոխեալդ ՚ի գովելոց,
ով անքաւիչդ ՚ի բարեպաշտից, ով չնչականդ ՚ի բա-
նականաց, ով անմիտդ ՚ի մտաւորաց, ով անհանճարդ
յիմաստնոց, ով անմաքուրդ յընտրելոց, ով մահա-
ցուդ ՚ի կենդանեաց, ով խոհերականդ ՚ի սրբոց, ով
արբշիռդ ՚ի պարկեշտից, ով կեղծաւորդ յարդարոց,
ով անպիտանդ ՚ի պիտանեաց, ով անարգդ ՚ի փառա-
ւորաց, ով նուազդ յառաւելութեանց, ով գերիդ
՚ի գերապանից, ով նուաստապէնդ ՚ի վեհից, ով աղ-
քատդ յընչեղաց, ով անարժանդ ՚ի փրկութեանց, ով
տնանկդ ՚ի բարձրութեանց և ՚ի հոգեւոր հարստու-
թեանց, և հաւատաձեալդ յօրհնելոց։

ԲԱՆ Թ.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱԻԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱԱՏՈՒԾՈՅ

Ա. Ե՛ւ արդ զինչ արժանաւոր ըստ քեզ բանբասա-
նըս չարագրեցից ՚ի կտակ մաղթանաց մատենի այսր
ողբերգութեան, ով անձն իմ թշուառ, ամենապատ-
կառ և առ պատասխանիս բանից անբարբառ, անսիւ-
տան աստուծոյ և սրբոցն մանակցութեան։ Օ՛ի եթէ
զլեզ ու ծալուց ՚ի յորակութիւն դեղոյ յեղեղեցից,
և զաչս աստպարիսօք բազմօք սահմանեալ ՚ի տարա-
ծումն լայնութեան քարտեղի չափեցից, և զսրտիդ
կըս յոքունց անատուց չամբից եղէգանց ՚ի հատուա-
ծըս գոյութեան գըչաց կազմեցից, և ոչ զինիւ ու ՚ի
բարդելոցն անօրէնութեանց զօրեցից ընդ գրով սահ-

մանի գրաւել։ Նա՝ զի Թէ զմայրս | լքանանու՝ ի մի լուծ կշռոց զօդեցից, և կամ զնեառն արարատեան՝ ի կէտ ամբարձման նժարի միոյ արդարութեան միջնորդ կացուցից, ոչ հաւասարէ այնը հարթութեամբ հաւ մաղուգակցել։

Բ. Օրաւս ամբարձուցէջ՝ ստուգապատեղն՝ տերեւ ալից՝ ունայն ի պաղոց, նմանակից յաւէտ հարա զատ այնը Թզենւոյ՝ զոր տէրն գօսացոյց. քանզի սա զարթօք վարսից, այս է՝ արտաքին դիմօք բարեշուք կերպիւ՝ իբր պսակաւ խիւք պաճուճեալ, բացականա ցըն գոս բաղձալի. իսկ եթէ մերձեցի անկողն խու զել զինդրելին, գացէ զքեզ ունայն ի բարեաց և դարշելի ի դեղեցկութենէ, ծաղը տեսողաց և նշա ւակութիւնք նախատողաց։ Օ՛ի եթէ ապաժաման յանզգոյշ ժամուն հերապանծ տունկն պաղակորոյս անկենդան, որ գոյն պատկերն է անպատրաստից, և կըն ընդ անիծիւք, և կամ երկիր ոռոգեալ ցօղով, և ոչ բազմապատիկ զաւանդս արդասեաց երկրագործու Թեան առաջողն մատուցանէ՝ լքեալ մոռանի, իսկ դու՝ ով անձն իմ եղկելի, սահման բանաւոր և տունկ կենդանի՝ և ոչ ի ժամու իւրում պաղաւոր, իբր ոչ գնոյն կրեացես պատիժ նախանձ առակիդ։ Վ՛ասն զի զհամայնն ընկալար ի քեզ անպակաս յառաւելու Թեանց, սկզբնաւորեալ ի մարդն առաջին և մինչեւ ի սպառումն ծննդոց նորին, զբերս գործոց նախրու Թեանց և զիւրաս նորոգս՝ առեւս և անախորժելիս հաստոցին զքեզ աստուածոյ։

Գ. Նա՛ վասն զի եղի զքեզ նպատակ հանդէպ երե սաց տեսու Թեան մատցս՝ անձն իմ անպիտան, վիմօք ձգելոց արձանաց բանից, իբր զանընդել գաղան վայ բենի՝ անողորմաբար զքեզ քարկոծել։ Ա՛յր Թէպէտ և ոչ պատահիմ անուանիլ արդար, սակայն յառաջնու մըն պատասխանւոյ՝ իբր ընդ ոսոխ ուժմին՝ ընդ անձին յօժարամիտ կամօք ոգորիմ, ըստ իմաստու Թեանն քանի. և զոյգս մատց խորհրդոցս գաղանեաց իբր

զգլխաւորեալ յանգաւորութիւն չարութեան գործոց խոստովանեալ, քեզ տարածեցից՝ աստուած իմ և տէր: Օ՛ի որով չափով չափեցից զանձինս ստգտանք, ՚ի քոյդ աննուազ դթութեանց այսբէն չափեցայց՝ ընկալեալ զշնորհդ յաճախագոյնս ընդ մեծագործեից պարտեաց: Այլ որքան վերացն հարուածք անբժշկականք և անհնարաւորք ճարակեսցին, այնքանեօք չափվք կրկին առ սմին և խմասաք արուեստից բարձրեալ բժշկիդ բարեհոգեակեալ լուսաւորեսցին. և ՚ի պարտուցն առաւելութիւն, նոյնքան փոխատուիդ ա ռատաստրութիւն բարեբանեալ միշտ պահեսցի, ըստ խնկաւորդ քումդ առակի: Օ՛ի քո է փրկութիւն, և ՚ի քէն է քաւութիւն, և աջով քո նորոգութիւն, և մատամբ քո զօրեղութիւն, և ՚ի հրամանաց քոց արդարութիւն, և յողորմութեանց քոց ազատութիւն, և յերեսաց քոց լուսաւորութիւն, և ՚ի դիմաց քոց զուարճութիւն, և հոգւոյդ քո բարութիւն, և օծմամբ իւղոյ քոյ սփոփութիւն, և յօղով հնորհի քոյ՝ զուարթութիւն. և դու տաս մխիթարութիւն, և մուսայուցանես զվհատութիւն, և բառնաս զխաւար վշտաց, և զհեծութիւն ողբոց ՚ի ծաղը փոխես: Այլ քեզ վայել է օրհնութիւն գովութեամբ հանդերձ յերկինս, և յաղագս հարցն և ՚ի ծնունդս նոցա, և յաւիտենից յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ Ժ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՌ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԱԾՈՑ

Ա. Լ՚Ի արդ քանզի միապէս մասնէ կորստեան և պղծումն ուժգնապէս և մեզանչելն մոլեգնաբար. զի թէ և օտարացեղ լինի են՚ի միմեանց պլպլուլթիւնք նմանուլթեանցն, սակայն զկերպարանս երկաքանչիւրոցն առ միմեանս եդեալ, զմի և զնոյն վհատուլթեան ծնունդս արտադրեն: Ո՚չ միոյն զհոգւոյն ձեռն իբր ապիկար թերահաւատ, իսկ միւսն ըստ նմանուլթեան քառոտանեաց պաճարելինաց յանդգնագոյս եղեալ, զոչ յուսոյն առասան խղէ. վասն որոյ ընդ առաջնումն միշտ փաղաքչեալ՝ հանապազ խնդայ սատանայ, իսկ երկրորդումն՝ ըստ նմանուլթեան լափլիզող դժոխոցն վայն գաղանի՝ իբր կերակրով արեամբ պարարի:

Բ. Լ՚Ե արդ իբր զգանեալ բազմահարուածեան հեծանաւ և յափն մահու ժամանեալ, դպղն լինչ դաշձաւին շնչոյ ընկալեալ և յոգի կենդանի եկեալ կաղպուրեցայց, պատսպարեցայց, կանգնեցայց, յարեայց յանկենդանականս կորստենէ, ոժանդակեալ Քրիստոսի ձեռամբն՝ որ գԹածն է յամենայնի. ՚ի բարերար յերկինսառոր հօրէն՝ փրկուլթեան և բժշկուլթեան պըտուղ ընձեռեալ ինձ մեղուցելոյս, ախտացելոյս և մահացելոյս: Լ՚Ե սկզբնաւորը ողբերգուլթեան այսր աղերսանաց՝ զհաւատոցն շինուած կառուցից. քանզի և ոմն ՚ի նախնեացն սոքիմբք զինեալ, փոխեցաւ ևս կոյն յանմահականն վհՃակ վերին. զապաշխարուլթեանն դեղ ընկալեալ, ապաշաւանաց Թոշակաւն՝ զգրաւականն անեղծուլթեան աստէն ժառանգեաց, ՚ի վեր

քան զարոյ առաքեալ ընդ նմին ցուցանէ, որք զհանդէան մրցանակին յերկրի կատարեալ, ապագայիցն և երկնաւորացն յուսոյ հաւատացին, և անտեսիցն ճոխութեամբ փարթամացան։ Իսկ զևսրաևոյս տերունի պաշտելի բանին յիշեալ առ սմին, զի ամենայն ինչ հնարաւոր է այնմ որ հաւատայն, է զի և զչափն ընտրականացն բարեմասնութեան աստուածոյ հաճելեացն գնեալ աստանօր, զայս պատկեր բանի ընկալաք նախ նի գահերից առ 'ի սրբութեանցն մուտ սովիմբ հանդերձել. առանց որոյ և ոչ տէրն փառաց գիւրան առ մեզ հրաշագործեաց զօրութիւնս, եթէ ոչ նախ լըծակից խնդրեաց բարերարութեան իւրոյ գհաւատան մեր. ուստի և կեանս ընձեռել զօրէ ինքնիշխան բառականութեամբ առընթեր գոլով աստուածոյ. քանզի հաւատք քո կեցուցին զքեզ, օրհնաբանեալն աստուածոյ բերան վկայեաց։ Քանզի արդարեւ սեռն տեսութիւն և կատարեալ իմաստութիւն և առ աստուած ընտանութիւն և բարձրելոյն ծանօթութիւն՝ հաւատոյ մտան՝ երջանիկ և ընտրեալ անուն, որ յարաձգեալ ճնոյ անվթար և անփակելի, պատուակից գոլով սիրոյ և յուսոյ։ Օ՛ի եթէ փոքու սերմանի գոյ հատի մանանխոյ չափոյ նուաստի հաւատք զլերանց մեծութիւն փոխէ զօրեղապէս 'ի սիրոս ծովու, ապա յիրաւի ընկալաք զսոյն սկզբնաշաւիղ առաջնորդ կենաց՝ աներկմիտ պաշտօն առ աստուած, որ զապառնիսն և զծածկեալսն առանց երկբայութեան 'ի հոգւոյն աչս տեսանէ. Նշդրտդութեանն փառատրելի անուամբն պատուեալս հաւատք՝ ընդ սիրոյն գասեալ և յուսոյ։ Օ՛ի թէ և զերիսն հաստատածս առանձնաւորականս 'ի մի և 'ի նոյն խորհուրդ գիտեացես, յաւէտ մեծասցիս նոքօք 'ի յաստուած. քանզի թէ հաւատաս 'ինս, և սիրես. որով և յուսաս աներեւութիցդ պարգեւաց նորին։ Նմա փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ Ա.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԱԾՈՅ

Ա. Ել արդ ես յետինս դաւանողացդ՝ ունայն ի քա-
րեաց, նայեցեալ խորհրդով մտացս ի սկզբնաւորն իմ
եղելութիւն ի ձեռն ձեռին ստացողին իմոյ յանէից
յաւուց հաւատամ Յիսուսի Քրիստոսի առնել զոր
կամի։ Քանզի հաւատացի, վասն որոյ և խօսեցայ իբ-
րառեալ Պօղոսիւ, ուսեալ ի Դաւթայ, թէ և արդ
կենդանի մաղթանք նոցա այդ լինէ արասցէ. որպէս
հաւատովք ճանաչել զնա, և զղօրութիւն յարու-
թեան նորա, զսո աւաքելոյ, և զհաղորդութիւն չար-
չարանաց նորա, և որ զինի բերին ասացեալքն։ Կցորդ
է ամին և յայժ նմանատիպ՝ հաւատացն խակապէս և ի
նորոգս այս փոխադրութիւն, որ ի մեղացն ի քաւու-
թիւն, և ի չարագործութենէ յարդարութիւն, և
յանմաքրութենէ ի սրբութիւն, և յանքաւելեացս
պարտեաց մահու յանցանաց՝ յանդաստապարան երա-
նութիւն, և ի ծառայական կապանացս յերկնաւորն
ազատութիւն։ Քանզի զնաւդ ոչ արդեօք չքնաղ քան
զբան՝ և ի մթութենէ երկեւանութեան խաւարի
զտեալ՝ և աստուածով օժանդակեալ և օգնեալ սիրտ
մեղաւորի, որ ընդ մարմնապէս ծիծաղելն՝ առ նմին
հեծէ հոգեպէս։ Որ թէպէտ և յամբարձմանէ բարձ-
րութեան գերագունիցն կայից՝ ստորասուզեալ ծանր
բութեամբ յանդնդային վէմին խորխորատ գբոյն կոր-
ծանման, նորագիւտ մեղաւքն անջրելեօք, ունի և նըշ-
խար նշուլից՝ փրկութեան կենաց հպատոր, եթէ կայ
ծանին լուսոյ պահեցեալ ի միտս և յոգի, որպէս զհու-

զրն նշանաւոր և զարմանաւոր Թանձրամած՝ հրաշիւք մակարդեալ վեհին հրամանի՝ ի յատակս նեղբինս նիւհեալ ջրհորոյն։ Աւսաի և մեղուցելոյն խոպան Թաղծելոյ, և ակնկալութիւն բարւոյն բարձելոյ, և համաձակութիւն շնորհին լքելոյ, յուսալ վերատին անդրէն միւսանգամ նախապարգեւիցն փառաղարդութեանց զարձեալ հասանել. քանզի և յատուածոսա անդուստ հանդերձի և այս՝ ներգործիլ առ սոյնս. վասն զի սա զտուողին զօրութիւն ամենահնար աւետարանէ։ Որ խունկ հաճութեան մեծապէս հոտոյի աստուած, քան յամենայն բուրումն անուշից, և քան ի խառնեալն երբեմն աղացմամբ ի սպաս խորանին, որ է կերպարան անձանց խնարհից զկնի՝ բեկութեամբ առ ի միութիւն նոյն նմանութեան։ Այս որում հարցեալ փրկչին ամենից՝ ցոմանս ախտացեալս տեսանել զօր, հաւատաց՝ ասելով առ այդ թէ կարող եմ առնել ձեզ զայդ, ոչ պարգեւեաց աչաց նոցա լոյս, եթէ ոչ նախ զհաւատոցն գրաւ ընկալաւ։ Քանզի զինչ քան զմեռելութիւն քառօրեայն դիպ առ կենդանութիւն մեզ անյուսապոյն, առ որ կանանցն ժամանելոց ի յոտս արարչին հաւատոցն հանդերձանօք, անյապաղաբար զիւառացն աստուծոյ տեսին զհանդէս՝ ի յերջ բօրն կենդանութիւն։

Բ. Իսկ աստուածն անկապուտ շնորհին մեացելոյ զինի մեղանացն՝ հղօրագոյն են վկայք։ Նախ Աբովք, զինի Ահարոն, յետ նոցա Դաւիթ, զարձեալ և Պետրոս. ընդ որս և փոքրն Յղիւազար, որ ի մեծէն աստուածոյ ողորմեալ՝ մեծագունիցն վկայեցաւ։ Աչելորդ է առ այս և բանն առակի անառակ որդւոյն. Թողութ զպատնիկն՝ որ ի տեառնէ գովեցաւ, և զմաքսաւորն՝ որ ի բարեգործէն յիշատակեցաւ, և զաւազակին երջանիկ՝ որ յարձակումն վերջին շնչոյն հաւատովքն պսակեցաւ և զոր անքաւելին են պարտիք՝ զհաղորդեալքն սպանման մահու արարչին. առ որս և գլխաւորն ընտրելոյ Պօղոս, որ երբեմն նախանձն էր անօրինաց։ Որոց ո

մանք ծանօթութեամբ օրինին գլուխք անդրէն կանգնեցան բիւրատարածեան գերազանցութեամբ քան զնա խակրօնին առաւելութիւն: Իսկ որ նախ քան զօրիս նակին տուչութիւն՝ զառանդն պահեալ հայրենի մերձ ձաւորագոյն գոլ պատուիրանի սկզբնահօրն դաւանութեան, որ և զնախնեացն պարտիս ինքեան վարկուցեալ, զնորայն իւրովքն տուժեաց կրից տաժանմամբ, ոչ քաւեցաւ միայն ծածկեալ ի յերկրի, այլ չարչարելեաւն մարմնով՝ բանականացս բնութեան կենացս կապատ՝ յանթող զօրագոյս բռնութեան մահու փոխեցաւ: Իսկ ոմանք ի բուսոյ ահաս հասակին չարութեամբն յերկարաձգեալ, ի կատարեալ սիս ժամանակին ոչ ի բարձրութեանն կայից հոսեցան, քան թէ ի սորունականաց թշուառութեանց դժնէից կենացս ի կամարն երկնից համբարձան: Այլ թէ այն ժամանեակ կանխաւ՝ զօրացեալ ի չարեացն դարձ, որ միւնչեւ յոյս կեղծն նիւթ յեղանակեալ հողոյս գոյութեան, և պատկերն աղքունի ի պատիւ կերպիս մերոյ նկարեալ արքունականն քանդակուածով, անկորուստ և անփոխադիր և յաղթող դատաճանութեան զմերս ենթադրեալ բնութիւն, ապա առաւել յուսալի է այժմ մեր կապարանոց լուսաւորութիւն անքօղ և անվերարկու՝ տերամբ Քրիստոսիս ուխտեալ. որով և միշտ հաստատեալ պահի ի մեզ բանն տերունի, ըստ մարգարէին ձայնի, ուխտ խաղաղութեան և կնիք հաստատութեան առ հաշտարարն միջնորդ՝ երկնային անմահ կենդանի և մշանջենաւոր բարեխօս: Ապա ուրեմն ըստ այսու կանոնի ճշմարտագունի, և անփոխադրելի սահմանի, և արարչաւանդ պայմանի, համբուրեմ հաւատոց ընթամբք զպատկեր բանիս, և ակն ունիմ փառացն ընորհի. քանզի արդարեւ յարդարացուցանելն զմեզ աստուծոյ՝ ոչ ոք զօրե դատապարտս առնել, ըստ առաքելական բանին սահմանի:

Գ. Այլ յայս անաստուերագիրս վստահութիւն ապաստան, կամ՝ կործանեալս՝ կանգուն, թշուառացեալս՝

յաղթող, վսեմեալ՝ ի գործն կենդանական, ամենա-
թիշտատ չարագործս՝ ի յոյն, մահու մատնեցեալ՝
ի կեանն, ընդ ապականութեամբ վաճառեալ՝ ի ձխ-
ըըն, զժոխային գործովք գրաւեալ՝ ի լոյն, ոտոր-
նատէր անանականեցաղ՝ յերկինս, կրկին գայթագ-
ղեալ՝ ի վերատին փրկութիւն, մեղօք կապեցեալ՝ ի
հանգատեանն խոստումն, անբժշկական վիրօք վարան-
եալ՝ ի դեղն անմահացուցիչ, ստամբակեալս վայրա-
գութեամբ՝ ի սանձան հանդարտութեան, սրացեալս
վարատական՝ ի կոչումն, ապատումն գժնդակ՝ ի հե-
զութիւնն, ընդդիմաբան լուսացողս՝ ի ներումն: Ի
Բրիատոս Յիսուս և ի Հայր նորին հզօր և ահաւոր,
յանուն և ի կամս բարերարութեան Հոգւոյն Ճշմար-
տի. օրհնաբանեալ խոկութեանն և մի աստուածու-
թեանն՝ զօրութիւն և արքայութիւն, մեծութիւն և
փառք յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ Ա.Բ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱԱՏՈՒԾՈՑ

Ա. Եւ արդ քանզի յաւէտ յառաջնում՝ զղջմանն
յուսահատութեանն բանիւ լքայ, և տարակուսանաց
հեծանաւն ի մահ ձախկեցայ, աստանօր ի յուսոյն
կեցուցարան փոխեալ՝ յարդահատել համարձակեցայց,
վերադրութիւնն սուրբ կարդալով յօդնականութիւնն
ինձ մեղաւորիս: Որ և անդատին իսկ յօրհնաբանելն
և ի գաւանելն զկենդանարարն բնաւից աստուած,
խոկայն և կոչումն ընտանի ձայնի ահաւորութեան ան-
ուան շնորհաձիրն բարերարի՝ մահացելոյս ի կենդա-
նութիւն, ըստ մարգարէին նախաձառութեան, թէ

որ կարդայ զանուն տեառն, նա կեցցէ։ Իսկ ես ոչ միայն կարդամ, այլ նախ հաւատամ մեծութեան նորին. ոչ եթէ վասն պարգեւաց նորա մատուցեալ յողոք գերիմ, այլ իբր զկենդանութիւն իսկապէս, և զինչ տուբեւառութիւն հաւատոյ, առանց որոյ ոչ է շարժողութիւն կամ ընթացութիւն. զի ոչ այնքան յուսոյն հանգուցիւ, որքան սիրոյն կապանօք բերիմ։ Ոչ 'ի տուբան, այլ 'ի տուողն յաւէտ կաթօտիմ. ոչ փառքն են ինձ անձկալի, այլ փառաւորեալն է համբուրելի. ոչ կենացն փափագանօք, այլ կենարարին յիշատակաւն միշտ ճենճերիմ. ոչ վայելչին տարփանօք հեծեմ, այլ հանդերձողին տենչանօք յերիկամանց աստի կականիմ. ոչ զհանգիստն խնդրեմ, այլ զհանգուցչին զերեսս աղաչեմ. ոչ հարսնարանին խնճոյիւք, այլ փեսային անձկութեամբ մաշիմ։ Ի ձեռն որոյ զօրութեան վստահապէս ակնկալութեամբ վերապրեցեալդ յանցանօք բեռանց՝ աներկիւղ յուսով հաւատամ 'ի կարողին ձեռն ապաստանեալ, ոչ քաւութեան միայն հասանելի, այլ զնոյն ինքն տեսանել՝ յողորմութիւն և 'ի գթութիւն և յերկնային ժառանգութիւն, թէպէտ և յոյժ եմ տապարտելի։

Բ. Նա արդ բաղում պատճառանօք ամաչեցելոց դիմայ կորացեալ, զմիջնորդ ազդման կախուցմանց երկայկի շրթանցս՝ արժանաւոր աղխս կարկելոց՝ առ անհամարձակ լեզուս շարժութիւն, նորոգեցից 'ի յերդ հաւաչման պաղատանաց յեղանակութեանց աղիողորմ հեծեծանաց՝ 'ի բարձունս աղաղակելոց։

Աղաչանք զօրաւոր սրհաւրայ գիշերայնոց։

Գ. Ընկալ քաղցրութեամբ, տէր աստուած հզօր, զդառնացողիս զաղաչանս. մատիր գթութեամբ առ պատճառեալս դիմօք. փարատեա, ամենապարգեւ, զամբարձական սիրտս քոյին. բարձ լինիմ, ողորմած, զամբերելի ծանրութիւնս. անչըքեսեա, հնարաւոր, ըզ

մահացու կրթուԹիւնս. աւարեա, միշտ յաղԹող, ըղ
խաբողին հաճուԹիւնս. բացադրեա, վերնային, զմե
լեցոյն մառախուղ. կնքեա, կեցուցիչ, զկորուսչին ըն
Թացմունս. ցրուեա, ծածկատես, զըմբռնողին չար
դամունս. խորտակեա. անքնին, զմարտողին դիմեց
մունս: Տեառնագրեա քո անուամբդ զըսանցոյց երդ
յարկիս. պարփակեա քո ձեռամբդ զառաստաղ տա
ճարիս. գծագրեա քո արեամբդ զմուտ սեմոց սենե
կիս. կերպացո զքո նշանդ 'ի հետս ելից մաղԹողիս.
ամրացո քո աջովդ զհանգստեանս խշոլ. մաքրեացես
'ի հալչից զծածկարան անկողնոյս. պահեացես քո կա
մօքդ զոտառապեալ անձն ոգւոյս. անխարդախ սրտա
ցես զքո շնորհեալ շունչ մարմնոյս. կացուցցես շրջա
փակ զպար զօրուդ երկնայնոյ. կարգեացես 'ի դիմի
ընդդէմ դիւացն դասուս: Տուր հանգիստ բերկրու
Թեան մահահանգոյնս նիրհման 'ի խորուԹեան գիշե
րիս, բարեխօսուԹեամբ հայցուածոց սրբոց աստուա
ծածնիդ և ամենայն ընտրելոց: Ամփոփեալ պարուրեա
զպատուհան տեսուԹեանց զգայարանացս իմաստից
անզարհուրելի զեռեղմամբ 'ի ծփական խոռովուԹեանց
կենցաղական զբաղմանց, անրջական երազոց, խօսա
կանաց ցնորից, յիշատակաւ քո յուսոյդ անշիտաբելի
պաշտպանեալ: Ան սԹափեալ վերսին 'ի ննջմանէ
ծանրուԹեան ամենազգաստ արԹնուԹեամբ, հոգե
նորոգ զուարԹուԹեամբ 'ի քեզ արձանացեալ, զայս
ձայն մաղԹանաց բուրմամբ հաւատոյ քեզ, ամենօրհ
նեալ Թագաւոր փառաց անճառից, փառաբանողաց
երկնագումար խմբից երգակցեալ, յերկինս առաքել:
Օ՛ի դու փառաւորեալ ես յամենայն արարածոց յա
ւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ Ժ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀԱՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ա՛ՍՏՈՒԱԾ բարեբար հզօր ահաւոր, հայրդ քաջ րի ողորմութեանդ չնորհի, որոյ անուանդ իսկ մեծիդ զդիմութիւն և զընտանութիւնն աւետարանէ, քաջդ դժնէից և անպահպանից։ Ընդ քեզ և ոդիդ քո իբրեւ զքեզ, զօրաւոր ձեռն իբրեւ զքոյդ, անժամանակ տէրութեամբ ահեղ, ընդ արարչութեանդ քում բարձրացեալ։ Նա հոգիդ սուրբ ճշմարտութեան՝ բղխեալ առ ի քէն անապատութեամբ, կատարեալ իսկութիւն պսպ, էութիւն մշտնջենաւոր, հաւասար քո ամենայնիւ, փառակից որդւոյ քոյ տէրութեամբ։ Երրեակ անձնաւորութիւն՝ համայն անքնին, տրտհեալ՝ ի գիմսոյ՝ ուրոյն զատուցմամբ. իսկ միաւորեալ համազօրութեամբ, նոյնադոյ բնութեամբ տիրապէս, անշըփոթ և անանջրպետ՝ միով կամօք և կարդութեամբ. ոչ երկայնութիւն ումեմն ի յաւմեմն և ոչ քթթել մի ական առ նուազութիւն միոյն ժամանեալ, քան թէ պատճառ սիրոյ երկնայնոյ անտուեր լուսոյ՝ որ առ մերն է ծանօթութիւն, միով սրտակաւ սրբասացութեան անակղենաբար աստուածաբանեալ։ Քանզի արդարեւ վերաճայնեալս այս խոստովանութիւն երեքփառատրեանդ դաւանութեան գլխին հաւատոյ Պետրոս երանելոյ. իսկ զդաստպարտելոցս անձն մեղօք՝ բարեհրամանն քո ակնարկութեամբ, ով խնդրողդ դերելոյս, հրաշանորոգ արդարացուցեր։ Քանզի թէպէտ և քո իցեն պարգեւք, և քո ողորմութիւնք, այլ ոչ ի պարգեւան ես այնքան հոչակեալ, որքան յոգւոյ մութեանն. զի երկ

ըորդն զքոյդ յաճախէ զփառս , իսկ առաջինն զճգնաւորացն յայտնէ զդործս . զի պարգեւք՝ վաստակոցն են փոխատրութիւնք , իսկ ողորմութիւնք՝ մեղսց եկելոցս բարերարութիւնք ։

Բ. Նա արդ մի զբռասցին մարդկայինս գործք առաջի քոյոցդ չնորհաց , ասասցած զթութեանց , թէ և անդր իսկ լցեն քան զբռինս հասարակաց բնաւորականս հոգմանց . այլ յաղթող եղեալ քոյդ երկայնմտութեան , նուաղ եղիցի առ քումդ մասին ընթացք երկրածնաց ։ Քանզի և որ մաքրութեամբն պերճանային օրինակաւնացն վաստհութիւնք , ՚ի լուսաւորել քոյդ արդարութեան գուշակ ներկայիս , ամենանուաղ անձկութեամբ լքեալ հրէութիւնն յեռանեալ , և յաւէտ ընդ տարաբդրական ողորմելոցն , առաւել նոքա գտան կարօտեալ մարդասիրութեան ։ Նա քանզի ամենայն ինչ հնարաւոր է քեզ , բարերար , լուր պաղատանաց գոչման հեծութեանն՝ որ կարդամն առ քեզ . ողորմեա , կեցո և մարդասիրեա ։ Ո՛վ քո է երկայնմտութիւն , քաղցրութիւն , փրկութիւն , քաւութիւն , և փառք յամենեցունց յաւիտեանց ապդաց . ամէն ։

ԲԱՆ ԺԴ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Պաղատիմ առ քեզ լուսոյ Ճառագայթ , ապքոյ երկնաւոր , գովեալ անպատում , որդի անձառ մեծիդ աստուծոյ . խոնարհեցո զուշնին քո՝ բարձրեալ բարեգութ , կենաց ապաւէն , նորոգ մերձեցեալ կրկին առ ատնօր ՚ի հառաչումն նուաղս ձայնի վերաւորելոյս ։

Բ. Ող ցուցեալ է երբեք , եթէ աղաչեաց զքեզ ՚ի

ձեռն առաքելոյն սրոյ Խոլիողեաին, քանզի կարկաւ
մեալ էր. ոչ ձայն պաղատանաց զինի արձակեաց, քան
զի անկուինչ էր. ոչ մատամբքն տատանելոյ զաղէտ վը
ասնդին յայտնեաց տեսողիդ, քանզի խորտակեալ էր.
ոչ աչս կողկողադինս ապտաստօաք ողոց՝ բարեբարիդ
յանդիման կացոյց, քանզի ինաստապատա էր. ոչ՝ի պատ
գամ բանից միջնորդի զոզորմածիդ կամս հաճեցոյց,
զի անպցելոս էր. ոչ հայթայթմամբ խորտակեալ
մարմնոյն արիւնեբանդ ներկուածով ձորձոյ զգեցիդ
զսիրտ ճմլեցոյց, վասն զի անջոյս էր. նա և ոչ ծնդովքն
հաստատուԹեամբ իբր դարշապարաս ոսին վարեցաս,
այն զի անյարիր էր. քանզի կիսամեռն ասել կենդան
ոյն՝ սակաս լինչ նուազ է՝ի մեռելուԹենէ: Այնպա
ոանդ զի՝ի քոյոդ խորտակեալ բանից, և բարեբարեալ
քոյդ ողորմուԹեամբ, և փառօք քո լուսազարդեալ,
ոչ միայն զի ոչ վերջացաս՝ի հակառակն քո ընԹացից,
այլ ստահակեալ ապստամբուԹեամբ չիւր Թշնամեացն
Թիւ չաւելաս, ընդ նոսին դաշնաւորեցաս, միաբա
նեաց առելեացն քոց:

Գ. Իսկ դու բազմապարգեւ, բարեբար, անոխակալ,
ամենակեցոյց, ոչ միայն զի ոչ պահեցեր զչարագործին
մեզոյ չիշատակ, այլ և ոչ բանիւ չանդիմանեցեր. ոչ
ոան հարեր անկեցոյն, այլ կարեկցաբար մատուցեալ
զնայրագոյն չուացեր զվնասն: Այլ քահանայապէս ըստ
ահարոնեան սակս օրինին՝ զօրաւոր առ մահուն պաշ
տօն՝ դատապարտիչն անկնճիռ և բռնաւոր քարանցն
ձգմամբ՝ի խորտակումն խոցելոյն արադեալ մատեար.
և ոչ որպէս զեւտաւանն կարապետացին անկատարա
գործ՝ի յերկուցն միջև բաժանեալ խորոց, հնոյն լուծն
և նորոյս ակիզն, ուշնայն՝ի հոգւոյ չապաշխարանն
հանդիսացեալ՝ զվերաւորելոյն տեսեր զվտանգ, զի մի
սատակիչն օրինակուԹեամբ տապարաւն արմատակոչ
բաւ՝ զմահուն պաշտօն՝ի քեզ նկատեալ, չառաջ քան
զիտոյն առակայիցն սատակեցոյն. այլ հնԹանոսացն պահ
պան անուն սարեսատանեայցն, որք՝ի հրէիցն ընկալեալ

զօրէնս ամբողջ պահեցին, զոր նոքա մուսացան, նոցին կտրդեալ մարմնոյդ վերարկուաւ մերակերպարան խառնուեցան, զաղաւտաբարն գծագրեցեր զաւետս առ օտարազգին. և առաւածաբարդ ներդործութեամբ անապականաւ ձեռն կարկառեալ, յարուցեր զմարդն նախնի մեղուցեալ ի մահ խրտվքն ծննդովք: Օրըրաս մեցեցին սիրա բերկրեցուցեր, և զվհատեալն հաստատեցեր, և զիշատասացեալն միանգամ՝ կրկին զարթուցեր: Ազազանին կենարար օծմամբն և բաժակաւն լուսոյ լցեր. հայիւդ երկնայնով արարչականդ քոյին մարմնով նոր յեզանակեցեր: Ի երեսակցութեամբ երջանկացն ազանց ընարելոց յանձանձեցեր, դրդեցեր և խնամարկեցեր: Հանդարտընթաց գրաստուն տածողութեամբ անպզտելի պահեցեր, մինչեւ յարկն լուսոյ ածեր: Ի ձեռն երկաքանչիւրոց միջնորդաց՝ նախնեաց և երկրորդաց տուչութեան կատակաց կենդանականաց, մարդասիրատես դարմանատրեցեր: Նոյ որպէս երբեմն ընդ Ադամեմ՝ թեւս տարածեալ արծուոյն օրինակաւ ընկալար զնա, և ի հանգիստն հանդարտութեան երկրին բարութեան առաջնորդեցեր, և զառնին կերակուր ջամբել հրամանատրեցեր վարդապետութեանց:

Դ. Նոյ արդ որ զենաւն ծայրագունին բարութեան լուսոյ յամենայնի բովանդակապէս հրաշագործեցեր, զօրաւորին զդանձ քեզ սեպհականեալ՝ զքո ստացուածն առ քեզ դարձուցեր, կեցո և զնս մաքրեալ ի մեղաց պարտեաց, որ ձրի պարգեւես և անդադարապէս. ընդ որոյ և ինձ տացես քաւութիւն և բժշկութիւն, բարեգութ, զօրեղ, անքնին, անեղջ, ահաւոր, օրհնեալ միշտ յաւիտենից յաւիտեան. ամէն:

ԲԱՆ Ա՛Ե.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Խոսկ զարձեալ առառաստ վերստին առ նոյն հեծուԹիւն սրտիս վտանգի ինձէն մատուցեալ, առվին նուագաս՝ ի նոյն ոճ բանի՝ զամենապարգեւդ արդա հատեցից, տագնապեալ ոգւոյս վտանգիս՝ ի սպառ. իբր մեռեալ կենդանւոյ անմահիդ մաղԹեմ առառածոյ խոստովանեալ ընդ փառացդ քո զիմս անարդուԹիւն, և առ չարեօքս խմելք զքոյդ բարուԹիւն. որովք յաղԹեալ գոյց քան ԹԷ բժշկեալ, և ամաչեցեալ քան ԹԷ համարձակեալ, ուխտակորոյս առանդամոյց:

Բ. Իսկ կրկին առակն որ առ իս, որ ոչնարին տրուն առարացուցիս, որ յետին անզգայուԹեանն էր մատնեցեալ՝ մոլորեալ, և՝ ի լերինս ուր ոչ է պղելուԹիւն՝ ընդ գազանականացն դիւոյ և կուռն վայրենուԹեան Թափառեալ, ոչ մերձաւոր գոլ սակաւ մի հօտին, ոչ բան ունէին, որով և զքաւոյն աղէտ պատմէին, ոչ ձեռն ձգողական, որ համերջն է ազդողական: Իսկ գուս միայն գոլիազդ յոկըբանցն յաւխտանոց և յարդի ճնեղոցս, գտեալ ըստ մաղԹանաց գոչման երգոցին՝ զիս զմեղուցեալս յանձնշոյն մոլորուԹեան, խնամոզօրէն առաչուԹեամբ կամաց հովիւս կոչեցար. և ոչ միայն հոգացար, այլ և խնդրեցեր. և ոչ գտեր միայն, հրաշագործ, այլ անձառելիզ բարերարուԹեամբ սիրոյ՝ ի կենդանարարդ քո յուս բարձեր, և ընդ երկնային զօրսն գասեցեր՝ ի հայրենիզ քո ժառանգուԹիւն: Նա արդ գուս հոգւոյ կենարար օրհնեալ պղելս գԹածդ յոչորմուԹեան, եԹէ գնոսա ընկալար զապաքանելոյն աղերսանաց, որ

միոն ՚ի միջոց մահու սահմանի էր չարչարեցեալ, իսկ միւսն ըստ անբանիցն անզգայութեան վտարանդի բա-
ցամերժութեամբ յանբնական վայրի վարանեալ, ՚ի բառաչ ձայնի բարբառոյ, որ անկերպաւոր աննշանա-
կան, աստուածային բարեխնամութեամբդ անտեսեցեր զսիեզերահրաշն խնամոզութիւն առ կորուսելոյն մեծ
թշուառութիւն, յայտնեաց վերսին և արդ գթու-
թեանցդ խորք և բարերարութեանցդ հոսանք՝ առ
անօրինեալս առաւելութեամբ վերագրելոցդ օրինա-
կութեամբ, առ բազմօրինակ մահու պարտականս, առ
որ ՚ի բարութեանց խառնից քաղցրութեանց յատուկ
համ չար, առ անպատմ մարմնոյ արժանաւորս հատ-
ման, առ համաճարակ ամենաբոլոր ախտացեալ հոգիս
վերաւոր, առ հաւատարեալս անզգայութեանց անաս-
նոց, առ օտարացեալս յընտանեութենէ խմաստնոց, առ
աննմանս հանգուռնակից բանաւորութեանց: Որ եթէ
տարացոյց գոյր, ես ասէի. Թէ նմանակից գոյր իմ,
պատմէի. Թէ հանգուռնակից գոյր, ես ճառէի. Թէ հա-
ւասար գոյր, ես գրէի. Թէ զուգագործ գոյր, ցու-
ցանէի. Թէ օրինակ գոյր, ես ազդէի. Թէ յանցեալսն,
հայթայթէի. Թէ ՚ի ներկայումս ատ, ես յուսայի:
Բայց քանզի անցեալ է ըստ օրինակ, և հրաժարեալ
ըստ նմանութիւն, զոր միայն քս է քաւել, բժշկել և
կենագործել, կենդանարար համայն մեռելոց, նորա
գութիւնդ աւելորդ:

Գ. Ոլ եթէ սրբոյն սրտի տեսութեամբ երջանկին Դաւթայ անօրէնութիւն չարեաց բարձրացեալ ասի
քան զգլուխ, և ըստ ծանրութեանց բեռանց գժուա-
բարկելոց յանցմունք մեզաց, իսկ որ առնս կրկին սը-
խալմունք գերազանցէ քան զհեղեղն ջրակուսակ տի-
եզերասոյզ ամենատարած ծովուն յորդութիւն, և գըլ-
խոց լերանց վերադրէ: Այլ շնչեացէ օդ քո քաղցրու-
թեան իւր առ նայիւն, և որ զերկինս հալէ զօրու-
թիւն, յամաքեցուցանել զշիջս ջրակոյսս բազմակո-
հակ՝ և երկրակործան խմոցս պարտեաց և լեռնակոփ

կառ բարձրութեան մեղայս ամբարձելոց։ Յս համառօտեալ զբան քո հզօր՝ ամենակալ հնարաւորութեամբ հակիրճ հատուցմամբ, արասցես ահա եկս քաւութեան, ըստ մարգարէին, առ երկարաձիգս անօրէնութիւն. և ներելով իմս յամառութեան, ով երկայնամիտ ողորմած օրհնեալ, Թողցես միանդամայն, բազ բեզ օրծեացես խակապէս, հատցես բոլորովին զանվճարելի պարտուցս զարժանահատոյց տոկոսեացս տոյժս տարժանակիրս։ Նա զի և չիք իակ առ քեզ յաստուածս արտի, և կամ բորբոքումն բարկութեան, որպէս ոչ կրեն նեղութիւնք և կամ նշմարանք մեռութեան. քանզի կեանք են ի կամսդ քոյ և լոյս, և ոչ արարեր զմահ և ոչ խնդաս ընդ կորուստ մարդոյ ըստ Դաւթի և Սողոմոնի։

Դ. Նթէ մարդկան կարգեցեր զայս կէտ սահմանի մեծի պայմանի՝ ի բարեվճակդ քո կանոնաց՝ ոչ վտխատրել անդրէն չարի չար, այլ եօթանասնիցս եօթն Թողուլ անդադար ի յաւուր պիւրաքանչիւր մեղանաց ղպարտս. և այդ բան առ մեզ, որ միշտ ի բնութեան ունիմք բնաւորաբար ուղերձեալ զբիծս չարեաց անհամար բիւրուց նորոգ յայտնելոց, որք օրինաւորին երեւին յանդաստան սահմանի ամենաբոյս փշածին բնութեանս, ըստ անտուտ քո վիպութեան, որ թէ միսք մարդոյ ի բնոմն չարի են արձանացեալ ի մանկութենէ։ Օ՛ի որ զկատարեալ մաքրութիւն ունէր աւետարանիչն կենացդ բանի Յովհաննէս, և զինքն ընդ հատարակաց բնութեան ընկալեալ, հատատեաց զչմարտութիւն քո առ իմս ատութիւն յայժ արդա բացեալ. թէ ասեմք, ասէ, մեղս ինչ մեք չունել, ասա առնեմք զնա։ Նս արդ կատարեալ է բան քո խնկեալ, և ի գլուխս եղեալ անպակաս ի ատուգութենէ առ իմս մոլորութիւն և դժնդակ անիրաւութիւն։ Վ ան որոյ խնայեա յիս ողորմութեամբ, քաղցրութեան ձաշակաց աղբիւր, միայն օրհնեալդ յաւիտեան յաւիտենից. ամէն։

ԲԱՆ Ժ.Օ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱԱՏՈՒԾՈՑ

Ա. Ելի արդ դու միայն աստուած երկնաւոր՝ բարձրեալ, բարեգործ, քո է զօրութիւն, քո ներողութիւն, քո բժշկութիւն, քո առաստութիւն, քո են պարգեւք, քո միայնոյ են ձիրք ձրի, քո քաւութիւն, քո պաշտպանութիւն, քո հնազք անխմանալիք, քո արուեստք անպատմելիք, քո չափք անչափելիք, դու սկիզբն եւ դու կատարած։ Քանզի ոչ երբէք ստուերացուցանէ զլոյս ողորմութեան քո՝ խաւար սրտմտութեան. վասն զի ոչ ես գրաւեալ ընդ մասամբք ախտից՝ ի վերդ քան զքան։ Պատկեր անպարապիր անդր քան զըղձանութիւն կշռութեան, անչափ լայնութիւն փառաց, անտարբառիակ ընդարձակութիւն հաստատութեան, անամփոփելի առաւելութիւն բացարձակութեան, անսկսականալի բարերարութիւն գթութեան։ Դու գարձուցանես, ըստ մարգարէին, յայգ գաստուերս մահու. որ ինքեր կամաւ ի տարտարոսն ներքին արգելականացն բանակ, յորում եւ մաղթանացն դուռն էր աղետալ, եւ գերեալ անսի զմիթերիցն կապսա վտարանդելոցն հոգւոց, առաջերք հրամանիւ յաղթական բանիդ պիսպ սատակման մահուն խղեցեր, եւ զնեզայն կարծիս ցրուեցեր։ Դարձ առ իս՝ որ զքեզ գամ ընդունաւ վհիս տղմասիպ գբոյս յերկաթս մեղաց, վերատրեալ խոցմամբ սլաքաց բանասիրութին նետից։

Բ. Այլ դու յամենայնի տէրդ բարերար, լսող ի մէջ խաւարի, օրհնութեանդ գանձ, ողորմած, գթած, մարգասէր, կարող, զօրաւոր, անպատում, անքնին,

անձառ, բառական լսա սրբոյն Յակոբայ, անհնարելոյդ ամենից դիւբատպատրաստ հնարաւորութիւն, հաւր ծախիչ զնուխս մեղայ, ճաճանչ կիզանող ընդհանրական Թափանցանցութեան խորհրդոյ մեծի, յիշեա զիս յաղերմութեան քո, օրհնեալ, և մի յիրաւունս քո. ի ներողութեան քո, և մի ի հատուցման, յերկայնմտութեան քո ի հաւատոյման։ Լեթէ կշռեա ցես զմեղանայ խնդ ծանրութիւն, ընդ քաղցրութեան քո և մի ընդ արդարութեան. զի առ սակ նախանձին յոյժ է նուաղեալ, խակ ի ներհակ վերջնոյս՝ յաւէտ ծանրակիր։

Գ. Արդ մասիր առ խ, բարութիւն, որպէս յանկան բժշկութիւն հակառակ քո համբարձելոյն. բարձ ի մեղուցելոյս զհոգմ մահու խռովութեանս, զի հանդիսէ յիս ամենակալ հոգիդ խաղաղութեան։ Եւ քեզ փառք յամենայնի, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ Ժ.Ի.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Արդ աղաչեմ զինամակալդ վամնդաւորսդ տա ժանելեաց կրկին Թախծութեանդ հոգւոյ վշտացելոյ, մի յաւելցուր հեծութեանս ցաւ, մի խոցեր զվերաւորեալս, մի դառապարսեր զպատժեալս, մի տանջեր զչարչարեալս, մի գաներ զհարուածեալս, մի գլցեր զանկեալս, մի կոծաներ զդայթագղեալս, մի մերժեր զհեռացեալս, մի տարագրեր զխլածեալս, մի ամաչեցուցաներ զպատկառեալս, մի կշտամբեր զհարթուցեալս, մի խորտակեր զբեկեալս, մի խռովեցուցաներ զամբոխեալս, մի ալեկոծեր զքքացեալս, մի սասաներ

ցուցաներ զդզդեալս, մի չփոթեր զմրրկեալս, մի կե-
ղեքեր զդիշատեալս, մի ջաղջախեր զբեկեալս, մի գո-
չեր զմռմռքեալս, մի կուբացուցաներ զնսաւաքեալս,
մի զարհուրեցուցաներ զապշեալս, մի խորովեր զնաո-
շատեալս, մի մահացուցաներ զհիւանդս, մի բեւանց
ծանրութեան մատներ զտկարս։ Ա՛մ անուր յաւելուր
կարիամեալ թիկանցս, մի կրկնակի ողջոյն դառն հե-
ծութեանս, մի ուժգնապէս վարեցեալս առ հողս, մի
սաստկապէս առ մռնիրս, մի անաչառապէս առ ստեղ
ծուածս, մի ահարկութեամբ առ փոշիս։ Ա՛մ ընդ-
հարիանիր խաոսութեամբ մեծդ ընդ փոքուս, լսող ընդ
ստորնականիս, բնութեամբ բարիդ ընդ՝ի բնէ չարիս,
ողկոյզդ օրհնութեան ընդ պաղոյս անիծից, քաղցրու-
թիւնդ խակապէս ընդ համայն դառնութեանս, փա-
ռաւորեալդ անհոգիս ընդ ամենեւին անարդիս, կե-
նացդ նշմար ընդ կաւոյս զանգուածդ, տէրդ տերանց
ընդ տղմիս երկրայնոյ, աննուաղ լուսիւնդ ընդ չքա-
ւոր սարկիս, անկապուտ ճոխութիւնդ ընդ անպատա-
պար տառապելոյս, անկարօտ բարութիւնդ ընդ ամե-
նահշուառ աղքատիս։ Քանզի՞ ոմ՛ ոք հասեալ յաւա-
ւօտ՝ և՛ ի ծագման լուսոյն խիթոյ մթանալ, և կամ
ընթերակոյց կենաց՝ մահանալ, կամ աղատութեան՝ և
պարտաւորիլ, կամ շնորհաց՝ և դառապարտիլ, կամ
փրկութեան՝ և մատնիլ, կամ նորոգման՝ և եղծանիլ,
կամ օրհնութեան՝ և տարագրիլ, կամ բժշկութեան՝
և վիրաւորիլ, կամ լուսիւնեան՝ և նուաղիլ, կամ յա-
ճախութեան հացի՝ և քաղցնուլ, կամ գեստոց հոտա-
նաց՝ և պաղիլ, կամ մայրենի գթոց՝ և նեղիլ, կամ
խնամոց աստուածեան աջոյդ՝ և զզուիլ։

Բ. Լ՛ս արդ ընդ ախտացելոյն սաստկապէս մարմնոյն
բորոտութեամբ հոգւոյս վտանգաւ և ես պաղատիմ,
տէր եթէ կամիս, կարող ես զիս սրբել։ Ընդ աչա-
ցուացն նեղելոց մշտագիւղերն խարխափանօք՝ մեծակա-
կան ձայնիւս հառաչեմ. ոչ արդի անուանեմ Դաւ-
թի, այլ ծնունդ էիդ աստուածոյ դաւանեմ. ոչ միայն

առաքի կոչեմ, որ վարդապետացն է պատիւ կարծո-
ղական վիճին գիտելոց, այլ առաք երկնի և երկրի հա-
ւատամ: Ես ձեռնդիր միայն ձգմամբ հպատուրութեան,
ով բարեգութ աստուած մերձաւոր, այլ ի բացեայ
գոլով միջոցաւ մեծաւ ակն ունիմ զօրել քո բանիդ առ իմ
բժշկութիւն: Ես թէ ինչ խորոց կասկածանաց միջոցի
բանի, որ երկմտութեանն կարծի նշանակ, ի մէջ ար-
կանեմ կամելոյն և ողորմութեանն, այլ կամիս որպէս
բարեգութ, և կարես որպէս զարարիչ. ասա բանիդ,
և բժշկեցայց: Ի՝նդ Հարիւրապետին հաւատոց և ես
ծանեայեմ. ոչ միոջ անձուկ միայն բացակայութեամբ
հեռի լինելով խորան ի խորանէ հաւատամ ազդել քոյ
կարողութեանդ առ յարութիւն և բժշկութիւն, այլ
ի վերինն երկնի բազմելով և ի սաստիկս երկրի բամ-
դակ, առ հրաշիցն աքանչելութիւն ոչ ունիմ հաւատս
ցանել:

Գ. Ընդհեա լինէ, որպէս դատաւորիդ բանին քո վըճ-
ռեաց առ պառնկին ընդունելութիւն, հնոյց հարիւ-
րոց դենարաց պարտուց ընդհաքաշխութիւն՝ աս-
տուած բարութեանց և տէր երանութեանց, որ յա-
ճախն ընձեռել՝ բազում փառաւորիս, և ի շատն մա-
տուցանել՝ նուիրն չափ սիրիս, և յառաւելն ողորմել՝
կրկին բարգաւաճիս, և յայսքան բարիս երաւամբք
գովիս, և ամենայնի տէր գոլով հաւատարդ ճանա-
չիս, և որ զբոլորն ունիս՝ ընդ մերում կշռիս, և ան-
ճառելեաւդ ձրիս մերայնովքս վճարիս, և ընդ երկ-
րաւորիս զանվախճանն պարտ վարկանիս, և մեծագըր-
եալ քո զմերն՝ վեհս գոհաքանիս, և ի սակաւուն
տուչութիւն դոյզն փառաւորիլ ոչ ամբարտաւանիս:
Ընդ և ինձ զնայն գթութիւն ունողիս զգործս ան-
համար պարտուց. զի և ի ճառս երախտեաց քումդ
պարգեւաց՝ նորին իսկ սակով սիրելն կարգեսցի. և
քեզ փառք յամենայնի. ամէն:

ԲԱՆ Ժ.Ը.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀԱՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ա՛ՐԴ ես ծնունդս մեղայ, որպէս մահացու երկանց, արդարեւ անսահման բիւրուց քանքարաց տուժ ելոյ դալ հատուցանող ի միում աւուր։ Ա՛յլ ոչ թէ առ փոքրկութիւն մարդկային մնաց հայցեմ ներումն թիւն, այլ առ աննուազ լուութիւն փրկչիդ Յիսուսի Քրիստոսի պաշտամ մարդասիրութիւն, որ չէի երբեմն՝ և առեղծեր, չմաղթեցի՝ և դու արարեր, չեւս եկեալ ի լոյս՝ և տեսեր, ոչ յայտնեցեալ իմ՝ և դիտացար, ոչ կարդացեալ՝ և ինամարկեցեր, ոչ համբաձեալ ձեռն՝ և նայեցար, ոչ պաղատեալ՝ և ողորմեցար, ոչ կերպացեալ ձայնիս՝ և լուար, ոչ հեծեծեալ՝ և ունկնդրեցեր, զիաեալ զարդեան դիպուածոյ՝ և չանուանեցեր, նախահայեացդ աչօք նկատեալ զպատժապարտիս չարագործութիւնն՝ և յօրինեցեր։ Ես արդ զքո արարեալս և զքեւ փրկեալս և զայսքանեաց ինամոյ յանձանձեալս մի խափան կորուսցէ մեղացն հարուած զիւոք բանասիրութիւն, մի յաղթեսցէ ինչ յամառութեանս խնդ մառախուղ՝ ներողութեան քո լուսոյ, մի սրտիս կարծրութիւն՝ երկայնամիտ բարութեանդ, մի մահացու մնեղիս՝ ամենակատարդ լրութեան, մի տկարութիւնս նիւթոյ՝ անպատեհիդ բարձրութեան։

Բ. Ա՛հա կարկառեմ զկարիամեալ բազուկս հոգւոյս յանուն քո, Տէր, արասցես ողջ իբրեւ զառաջինն մինչ ի դրախտին փափկութեան զպատուն կենաց կիթէ։ Աշխանդեալ գօսացեալ ի կոր կործանմամբ ընդ հնոյն

տաղնապելոյ՝ կայ անուղղելի հոգւոյս թշուառութիւն, ընդ երկիր պչրեցեալ մեղայն կքմամբ՝ սատանայական բուռն կապանօք, զի մի զերկնային ընկալցի զողջոյն. խոնարհեաց առիս, միայն ողբմած, զի բարձրացուսցես զիայտս խոնարհ բանաւոր անկեալ, և զչորս ցեալս ծաղկեցուսցես ՚ի բարի կրօնս վայելչութեան, ըստ սատուածաբանութեան սուրբ մարդարէին: Որպէս գ՚ի ծնե կոյրն անլուսաւոր՝ չունիմ տեսարան, որ լոյ զսահեղձչիդ նկատեալ զկերպ մաղթեցից, հզօր բարեգութ, միայն դու պաշտպան անհարկեալ խնամովք անճառ քոյ սիրոյ՝ ՚ի չնչական խօսուն քո անօթս, յայնէից գոյատևութիւնն լուսոյ հաստատեցես: Ընդ երկնատաճարեայ չարչարեալ վշտագին կնոջն տանջեցեալ՝ գեաղվք մեզանաց արեան հեղեղիմ. հայեաց ՚ի բարձանց անմատոյց լուսովդ պարածածկեալ, ուր ոչ է քզանց ձեռաստեղծական վերարկուի ձորձոյ, այլ տարածուին հրաշից ամենայն ուրեք զօրացեալ: Ոչ օծութեամբ իւղով՝ պատժատարաս ընդ մեզաւորին մատուցեալ առ կենդանաձիր ոտից գարշապարդ՝ զիաթիկս աչացս վարսիւք հերացս ընծայեցուցանեմ, այլ զամբիծ հաւատս ամբարձմամբ բազկաց առագ գաւանմամբ հոգւոյ ողջունիւ շրթանց կախուցմամբ զերկիր համբուրեմ, խոստնեալ հեծութիւն աղերսից արտասուաց՝ բժշկութիւն հոգւոյս աղերսեմ: Ի առնեալ մեզանօք հոգւոյս գոյութիւն լուծեալ մեղկութեամբ, և յերկուց կայից միայնակոչմամբ անհատատ հեռուիք, զընթացից գործին՝ նահանջմամբ չարին՝ զհետեւականն բարձողութիւն շինուածոյ մարմնոյ՝ առ երս ծառայն կենսատիպ պաղպն խափանեցեալ, պատապարեացես անպբէն վերատին, միայն հնազբաւորդ առ ՚ի փրկութիւն: Ո՛փառաբանարան հաստուածոյ կերպիս ՚ի քէն եղելոյ՝ ամրափակ խցմամբ համբացոյց արդել հոգմ բանաարկուին. հոգիդ քո աղեալ մեծդ ողբմութեամբ, ըստ յաւետարարանին բժշկեցելոյ, հրաշափառապէս բարեգործեացես բանդ

կենդանի՝ ինձ խօսողութիւն անսայթաքելի։ Ինկեալ կամ չարեօք ի մահիճս ախտից ընկողնոց մեղաց՝ դի կենդանի և խօսուն մեռեալ, կարեկցեալ իմոմն Թըզուառութեան՝ ողբականօք քքուանաց ձայնիւ, ով բարերար որդի աստուծոյ, օրհնաբանեալ աչացդ յօղով վերականգնեացես ի կենդանութիւն, իբր զսիրելին ի յանշնչական մեռելութենէ։ Սոյպէ դառնացուզըս ի գբի մեղաց կամ տարակուսեալ, ձեռն մատուցեալ՝ արեւ անաստուեր որդի բարձրելոյ, հանցես զիս ի լոյս քումդ նշուլից։ Ինդ աղիողորմ Թշուառութեան կականման ձայնի այրսոյն ի Նային մօր միամօրին, տառապանմամբ մատանցն, կսծմամբ կրծիցն, հոսմամբ արտասուացն, տուայտանօք տխրութեան դիմացն, և ես պաղատիմ վերջին հեծութեամբս, տուր յուսահատեալս զքաջալերութիւն միխիթարութեան գթած քո բանիդ, ասելով և ինձ գովեալդ բարի ստեղծիչ աշխարհի, թէ մի լար գերի բազմոց ողբալի. որով ընդ պատանութեն կենդանացելոյ ի վշտացելոյ ծնողին տխրութեան՝ զամենապարտ ոգիս ընկալայդ ի քէն ընդ նմին կրկին նորոգեալ։ Ինդ այսակիր անզգայելոյն դիւաղուկ և քարակոշտ հեղձամղձուկ եղկելի անձանցըն, քաւութեալ գիսախութ հերոյն, վայրենութես բանդագուշելոյն, ի քէն ողբմեալ փրկիչ բոլորից, իբրեւ զնոսին առ քեզ դիմեցից. հերքեալ մերժեացես զդունդս չարացն ապականողաց ի քո խորանէս, զի ժամանեալ հոգիդ քո բարի այսրէն հանգիցէ, լեալ զմարմինս մաքրութեամբ շնչոյս՝ զգեցմամբ անդամոյս, զգաստ արասցես զնեալ արեալս ամենաթշուառ։ Ինդ գերեցեալ դժոխաբնակաց վտարանդելոյն հոգւոց արգելեալ կամ՝ ի վտանգի. զձառագայթ ողորմութեան փառաց քոց ծագեալ՝ լոյդ իմ անձկութեան, ի կապանաց օյսոցին զերծեալ զիս ապրեցուցես։ Գտալաղատիմ աներեւութեբակ վերկակ ապահեա գարշելութեամբ մեղաց ջոգոզեցեալ ոգւոյս կերպարան կոյ ի սագնապէ. զծածկեցեալն ի տեսողութենէդ

զարագործին Թիւնիին այսուհետև, քո ինքնաւորդ զօրեղութեամբ որդի աստուծոյ, գիմածաբար առողջացուսցես։ Օ բազմազան տարազ ցեղիցդ զանազանից ախտաւորութեանդ մահացուցանողաց իւրաքանչիւր կարտեան բերիւք, դժնդակարմատն շառաւեղօք հատուցելովք ի յանդատանի անօրէն մարմնոյս, տաբակրեացես ի ձեռն ձեռնիդ ամենակալի, որ արօրադրեալ միշտ՝ և մշակես զահմանս հոգւոց առ բանիդ կենաց արդիւնաւորութիւն։

Գ. Ընդ քանզի անցաւ բան նմանութիւն օրինակութեանդ յանցուածոցս վերը, ըստ ճարակողն քաղցկեղի, առ բնաւ անգամ մանաւորեալ զախտին տարաձուածն, չիք սպեղանի երբ Իսրայէլի առ անչափութիւն խարանացն մատուցանել. ի խարխափ բարձիցս միչեւ ցաին կատուցման լրութեան անգամոցս չէ առողջութիւն, այլ ամենեւին անբժշկութիւն։ Իսկ դու՝ ողորմած բարեբար օրհնեալ և երկայնամիտ Թագաւոր անմահ, լուր պաղատանացս արգահատութեան սրտիս վանդիդ, որ կարդամն առ քեզ աչք ի նեղութեան։

ԲԱՆ Ի Թ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱՅ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Վ ԱՅԵԱՑ ամենահայեաց սեռութիւն կենաց բարութեան յուսոյ ի մեծաբարբառ ազաղակ ցաւագնեալ անձինս հեծեծանաց։ Ընհատ մեծութիւն, անուն ահաւոր, բարբառ կենդանի, լուր ցանկալի, ճաշակ ախորժելի, կոչումն պաշտելի, բարութիւն խոստովանելի, ազդումն խնկելի, խակութիւն դաւանելի, էութիւն փառաւորելի, գոյութիւն օրհնաբանելի, ակն

Յիսուս ընդ հօր քում գովեալ և երկրպագեալ, և ընդ հոգւոյդ սրբոյ բարձրացեալ և վերաճայնեալ, որ միայն մարմնացար վասն մեր ըստ մեզ, զի սրատես զմեզ վասն քոյ ըստ քեզ, լայս ամենայնի, յամենայնի ողորմած, հզօր, երկնային, և այժմ զլուծեալ և զխորտակեալ հողանիւթ անօթիս՝ աստուածօրէն հրաշակերտուածեամբ, ազաչեմ զքեզ, նորոգ հաստատեա: Օ քոյին պատկերս մեղօք հնացեալս՝ ի քոյս հալոցոյ կայծակամբ բանիդ, պաղատիմ առ քեզ, վերստին ձուլեա: Օ խախտեալ շինուածս քումդ հանդստեան խորանի մարմնոյս՝ պահպանեալ հոգւոյս, մաղթեմ բարերար, ի բնակութիւնդ քեզ մաքրագործեա: Ա՛ի հաստուցաներ չարեացն իմ գործոց զնոյն փոխատրութիւնն: Ընդեալ եմ ըստ մարգարէին բանի՝ և ոչ ի գինւոյ. Թափեա զմրուրս անօրէնութեան թմբրութեան մահու քոյ ժակի՝ ազատարար հրամանաւդ ամենակեցոյց, զի մի զքոյդ քամեցից ի վերջին աւուր յեռանուտ հատուցմանն:

Բ. Ընդար ես յիրաւունս քո, և յաղթող ի դատաստանի. եթէ մահու մատնես, ճշմարիտ են գործք քո. եթէ դատապարտես՝ աստուածս սկսեալ զտանջողականն կշտամբութիւն, ստոյգ են հատուցմունք քո. եթէ յանդունդս խորոց սուզեցուս, թէ զկենդանութիւն շարժմանս բարձցես, թէ զբանիս զօրութիւն ունայնացուսցես, թէ զաչացս պատուհանս ստուերացուսցես, թէ զկենացն ճաշակ ի քեզ ինքն ամփոփեսցես, թէ զհատարակաց կերակրոյս դարմանս բարձցես, թէ զաւուրցս հարստութիւն համառօտեսցես, թէ ընդ լճման քաղցրութեան ցօղոյ՝ և հուր տեղացես, թէ ի լուութենէ բանի քոյ սովեցուսցես, թէ զականջացս դրունս խցցես, թէ զընտրհիդ ձիր կտրեսցես, թէ ըզ գեամին յատակի ոտիցս ստանեցուսցես, թէ յանձկալն երեսաց լուսոյդ քոյ հանցես, թէ ի համօրէն աշխարհէ ատեն հերքեսցես, թէ փայլատակմամբք հրոյ պակուսցես, թէ անբժշկական ցաւօք դատեսցես, թէ գիւոյ

չարսոյ մատնեսցես, թէ գազանաց ժանեաք մանրեա-
ցես, թէ հողմով ցամաքն հոսեսցես, և թէ այլ ինչ
նորոգ արարած տանջանարանաց կազմեսցես՝ չար քան
զառաքեալսն և սատիկ քան զդեհհէնն, Թուխանա-
բագոյն քան զորդւոնան, տարակուսելի քան զվասաւարն,
երկիւղալին քան զիսոլխոլտան, ողջմելի քան զմեր-
կութիւնն, վկայեմ անձամբ անձին՝ յայժ պարտապան
գոլ սոցա։

Գ. Նա քանզի յաւէտ տպաւորագոյն են նմանու-
թիւնք փոխառութեանցն առ ազգակցութիւն մեզա-
նացս՝ եթէ պատկերակիցք միասեռակք զնգաշաւիղք՝
նշանակիչք այսր խորհրդոյ, արդ կարեւոր է խոստո-
վանել և յանդիմանել զերեսացն ծածկոյթս առ ծանո-
թութիւն խնդրողին։ Ասպէս՝ զի ոչ ջերմն սիրով առ
ընկերսն կարիս մատուցցես, յիրաւի՝ ի նախնումն վտան-
գին տապնապեալ սառնումք։ Նա զի ոչ զգանկանսն
խրախտականութիւն սանձեցի, յարժանի կրեմ եղկելիս
զանզգամանալի զկիզումն։ Նա քանզի ոչ սիրեցի զլուսոյդ
աւետիս, արդարոյ հատուցմամբ՝ ի մթութիւն ըմբռ-
նողական միգին կորսեան վերպատել դանդաչեմ։ Նա
զի ոչ խորեցի զմանուանս փոքունցն յանցանաց, եթէ
անվնասակսզք վարկանելով, պատկանապէս, ի խածա-
նողականացն զազիւրն զեռնոց խթեալ խոցոտիմ։ Նա
զի ոչ ձեռն կարկառի առ կիրս վտանգաւորին՝ այց առ-
նել նմին, ի դէպ իսկ ըստ գծագրութեան այսր օրի-
նակի տպականութեանն գբոց նուիրեալ մատնիմ։

Դ. Նա արդ՝ ոչ յատուածոյ ամենաբարի գան-
ձուցդ չարիս, և ոչ ի լուսոյդ նշուղից խաւար, և ոչ
յապաւինութենէդ գայթագղութիւն, այլ ես ինձէն
կորսեան որդիս գոի զայսոսիկ. մեզանք անօրէնու-
թեան իմոյ գանձեցին նիւթեցին զայսքանեաց բար-
կութեան մխեալս. հոգւոյ իշխանին մոլորութեան հը-
նազանդեալ, Թողի զաեղի քո նորա, ըստ գրոյն իրա-
ւու յանդիմանութեան։ Նա քանզի յայտնեցաւ յե-
ւաստ գազանեաց առականաց մարմնոյս անգամոց, և

արկաւ զերեսաք կերպիս անվայելուչ սատեր ամօթոյս, ըստ մարգարէին առակի, տգեղս ցուցեալ զիս ամենեւին իբր մերկացեալ խայտառակեցելոյ պսուռնկի. ծագեա յիս զլոյս քաւութեան՝ արքայ երկնաւոր. զի Թօթափեալ զմեղսոյ փոշիս, ըստ աւետեաց ձայնին դարձելոցն ի Բաբելոնէ, նստայց վերստին կանգնեալ ի հողոյ, և ի հաստատութիւն յուսոյդ հիմնացեալ անսասանելի, ըստ եսայեան բանին, զգեցեալ զզօրութիւն բազկի կարութեան նախնւոյ մաքրութեանն, վասն մեծութեան փառաց քաղցրութեան ամենապարգեւ քոյ ստուածութեանդ. օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ Ի.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱԻԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Տէր սէր անոխակալ և երկայնամիտ, ներող, բարեգութ, հզօր, ողորմած. ահա ճշմարտութեամբ են գործք քո, և խոստովանեալ դատաստանք քո. վկայեալ են ընտրութիւնք քո՝ սեռսդ ծածկութիւց։ Ընդ երից երջանկայ մանկանցն՝ որք կիզանոցական բոց յոմն փորձեցան և ոչ վնասեցան ի Բաբելոնի, գնոցա Թախծութեան զերդն հառաչեմ, մեղայ, անօրինեցայ, յանցեայ, ապստամբեցայ, և պատուիրանաց քոց ոչ անսացի։ Եւ քանզի մաքուր գոլով ի վնասուց նոքա, և զայս խոստովանութիւն գոչէին, իսկ ես ընդ նոցայն՝ նովին աղերսիւ ձայնակցեալ սմին ողբոց երգութեան, և այլ յաւելից՝ ամենապարտս մահու։ Ընդ Դանիէլի երանեալ և սուրբ մեծ մարգարէի, որ ի քում հարաւ զատութեան ազգականութենէ տանն Յուդայի՝ շառաւ

ւիղ ընտրեալ, զնորայն առեալ ընդունական և նուի-
րական բանից պաղատանս, իմովս պատժականու-
թեան գոչմամբ հեծութեանս և այլ կրկնեցից։ Ի մէջ գիտու-
թեանն՝ անպատշաճականս գնացի, զարտուղի սխալեալ
դժնդակափէս. այս է ամենայնիւ ամենայն իրօք մեղանչե-
լըն։ Ոստ սահման կշռութեան կամայ քոց արտաքս վազե-
ցի. որ է հաւատոյ կերպարան բառիւ անօրինութեան։
Ընդհանից չափոց չարութեան գործոց լուծին յաճա-
խութեան նիւթեցի. որ է ճշգրիտ պատկեր յանցա-
ւորութեան։ Սպառնացար, և ոչ զարհուրեցայ. ար-
գահատեցեր, և ոչ երբէք լուայ. որ է ապստամբու-
թեան յայտնի նշանակ։ Ընդ արդարութիւն հան-
դերձեցեր, բարերար, և ինձ ամօթ և պատկառանս
պատրաստեցեր. քեզ փառս վայելչականս, և ինձ նա-
խատինս յարմարաւորս. քեզ քաղցրութեան յիշատակ,
և ինձ մաղձ քացախեալ ի կատարածի. քեզ բարե-
բանութիւն անընդելի, և ինձ ձայնս ողբոց աղաղակի.
քեզ օրհնութիւնս երգոց խնկելի, և ինձ մերժումն
տարագրութեան անյուսալի. քեզ իրաւունս բազմաշ-
ժանիս, և ինձ պատասխանատուութիւնս ամենավա-
րանս. քեզ բարձրութիւնս անճառ գովեստից, և ինձ
զանձիւն լինելոյ պատիժ ձաղանաց։

Ը. Այլ արդ ընկալար դու բարեաց ընտրութեանց
անկշռիւռ սահման՝ զքոյդ ախորժականաց կնդրկաց
պտղոց վերառեալ ըստ քեզ, և ես պնդացս առաջին
ամին պարտաւանս յոգունս կրկնակի բարդեալ ինձ
ըստ իս։ Իսկ եթէ անարատիցն մաղթանաց այս էր
յանձնառութիւն, իսկ ինձ զնոս հիւսեցից շարս և
տողս բանից գոտեվականաց, որ քան զամենայն գըժ-
նեաց յաւէտ վերպեցայ։ Ոլորեցայ անառակ ընթա-
ցիւք ի միտս վայրենիս. յանդգնեցայ շրթամբք խօսից
ի բանս երկրաւորս. զակառեցայ անկասելի ի պատ-
կառելեացն գործոց։ Փքացայ, վերացայ, որ յետ սա-
կաւ մի ժամանակի ի հող մահու եմ իջանելոց. գոռ-
զացայ, բարձրացայ, որ և ոչ զգրաւական հոգւոյս

սուրբ առաքելութեան հնչեաց ունիմ ի ձեռին: Ամբար տաւանեցայ փոշիս հնչաւոր, ամպարհաւաճիեցայ կաւս ձայնաւոր, հպարտացայ հոգս անարդութեան, ի վեր ամբարձայ մխիթս մերժելի, բազուկ կառուցի բա ժակս մանրելի: Տարածեցայ առաւել քան վեհ, և դարձեալ քան զհերքեալ առ իս ինքն ամփոփեցայ: Խարխութեանն բացով ցոլացայ տիղմս բանաւոր, քան զանմեռս աք մեծամտեցի, որ ընդ քաւուտանեաց մահս եմ փակեալ: Վիրկս արկի կենցաղոյս սիրոյ, և ի քեզ Թիկունս փախանակ դիմաց դարձուցի. ի Թուիչս մտայ ընդ խաւար խորհրդոց սըտցայ. զանարատ հոգիս մարմ նոյս փափկութեամբ յաւէտ վատեցի. զզօրութիւն աչեկան կողմանս ակար արարի, ահեկանացս կայից ուժգնութիւն տալով յաղթեցի: Օ քեզ խակ տեսի հոգացեալ վասն իմ, զոր չէ ասա գրելի, և ոչ պատ կառեցի. իբրեւ զհաւ վայրենի սրացայ, ըստ սովեան բանին առ Եփրեմ, ի նախանին իմ սովորութիւն: Յա զօթարանն վայրի ընդ պատաղմունս այսր կենցաղոյս չըջանակեցայ. ոչ կացուցի յոտին զերիվար մտացս երասանաւ բանին: Ընդ հին չարութեանցն նորոգ ինքնատեղծութիւնս գտի. անուրս ըստ Յոբայ ծա նուն և անտանելիս ինձէն ինձ սատակացուցի. առ գած անկարկատելի, ըստ Երեմիայի, զանձն իմ արարի. իբր զվիժած անգրելի կոչման, ըստ առակարկուին, ի մարդկանէ համարայ եղծայ. իբր զհանդերձս ինչ ապահարիչ, ըստ Եսայեան բանին, զաղբացայ. որպէս զԹրծեալ աման խեցեղէն փշրեցայ անարժարժելի. ըստ բանբասանացն Դաւթայ ի մարգարէէն զչորրորդ չափն անօրէնութեան սատակման ինձ պատրաստեցի: Եւ զինչ սատութիւն առ այս՝ և զայս յաւելուլ ընդ այս. քանզի զերանն խակ դիւանուէր Սողոքայ առի ինձ այս րէն՝ առ դժոխոցն ժառանգութիւն, լքեալ զերկնայինն յերջանկաւ իմն օրինակի նմանակիր ձեւակերպութեան, որպէս առակ պատկերի աստեղն Լեփանայ բա բելականի՝ Լուցեալ պատուհասեալ յուշաս ի Վենայ:

Գ. Իսկ արդ զի՝ նախնի հնարհին համարձակու-
թենէ դարձեալ փոխեցայ, զկնի եցայ, ելայ, հեռա-
ցայ, բաժանեցայ և անպատուաստելի կորեցայ, արդ
ընկալ զիս ահեր վերստին կերպարանեալ՝ ի պատկեր
հոգւոյ, զանարժանս կենաց իբր զմահապարտս, իբր
զչարագործս, իբր զպատկառեալ, իբր զկնոհան եղեալ
բանսարկուին, որպէս զանբժշկելի մանրեցեալ, որպէս
զհատեալ յատակս մահու, որպէս զդատեցեալ, որ-
պէս զկռտան գտեալ քո կոչմանդ, որպէս միանգա-
մայն՝ ի կորուստ վարեալ, որպէս դեգերեալ, որպէս
վանեցեալ, որպէս տարակուսեալ, որպէս թշուառա-
ցեալ, որպէս վհատեալ, որպէս կործանեալ, որպէս
խորտակեալ, որպէս բեկեալ, որպէս զթախծեալ, որ-
պէս յոգւի տրտմեցեալ, որպէս թշնամանեալ: Իսկ
դարձեալ ակնարկելով քո՝ զԹագ, մարդասէր, հզօր,
՝ի յաղերս բանիս՝ որպէս զղջացեալ, որպէս խոստովա-
նեալ, որպէս՝ ի յոտս քո դիմեցեալ, որպէս զատեան
խարեալ: Որ կշռես, դրես և մեծ համարիս զհառաչ
հոգւոյ և զաղդուժին շնչոյց հեծութեան, զկսկիծ շըր-
թանց, զպատաքել լեզուի և զսոխրահանուքիւն երե-
սաց, զկամս խորհրդոց և զյօժարութիւն խորութեան
սրտից: Որ փրկութիւնդ ես անճառիդ, և տեսող ոչ
գործեցեալց, և ստեղծիչ բոլորից, և բժիշկ վերայ անե-
ծեալ թշուառից, պաշտպան յուսացելոց, և բարեխնամող
ահեր ամենեցուն: Նո՛ւ քեզ փառք յաւիտեանի, յաւի-
տեան. ամէն:

ԲԱՆ ԻԲ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Եւ քանզի ես ինձէն անձամբ իմով ինքնագրաւ ի մահ՝ ոչ կացի երբէք ի յոտս մարդոյ, և ոչ սիրտ բանականի ստացայ, ըստ գրոյն, և քանզի ոչ փոփոխեցայ ի նախակարգելոցդ, և ոչ ընդ բարւոք ուղին ընթացայ, ընդ՚որ ոչ գնստորնական հետոցն խաւարայնոց զդեմս ցուցից ի սահման կարգի այսր ընթերցուածոյ: Եւ որս ածեալ յարմարեալ առ սոյն զկերպարան տեսակի բանիդ երեսայ, ըստ վերագոյնդ նշանակելոյ անփոխադրելի պահելով, խոստովանեցայց վերստին դարձեալ առանօր զմեացեալ չարուրթեանցն զբիծս, զոր յաջորդաւդ ի իմանալն:

Բ. Օտար ժանտագործս արժանապատիժս՝ աճեցուն արարչի գնացիւք անսատուրթեան զգուշդն Ելիսարայ: Աքաւս կայթից և ցոյցս վաղից խաղալկացն դիւաց դարչելեցայ Ճարտար խաբողացծուլուրթեամբս իմով ընտրեցի: Զանս գաղանիս և խոցուածս անյայտս ի կործանեցելոցն գահճայ ընկալայ: Ոչ հերքեցի զվանեալսն խաչիւն Քրիստոսի, քան թէ անգրէն առաւել կրկին խակ զօրացուցի: Վասն իմոյ հիքոյս անօրէնուրթեան անուանդ Յիսուսի հայհոյի ի մէջ այսականաց, որպէս վասն Իսրայէլի ի մէջ հեթանոսաց: Չարուածս հարուածոց վհատակարս ապականուրթեանց ժանգոյ և թրթրոյ և այլոց կերշոյ վատնողաց զծաղիկ հոգւոյս, ըստ սրբոյն Յովհաննէսի հրաշական ողբոցն, որ ի ցոյցս երկրի վասն Իսրայէլի՝ յառակս հինից և չարաց հոգւոց, յիս ինքն անկեցի. ստեղծանել զնոսա պատ-

բասեցայ, քան թէ սատակել: Ի՞ւրս կուտեալ հա-
սաքեցի անձին իմում մարտիկս մահաբեր-
ս. կշտամբի-
չըս ինձ գոյացուցի անիրաւս և անպատկառելիս. ներ-
հակս ինձ զօրացուցի ապառումն և անկուռելիս. դա-
ռինս ինձ առի մասունս ընդ քաղցրաւեներացն Ճաշա-
կաց, առ սուգովղն միշտ նենգաւորս. և առ բանսար-
կուն յաւէտ հաւատարիմս: Ընդ աղէտիս, վիշտ
վտանգիս, խաւար ամօթոյս, մուրթ պատկառանացս.
զիա՞րդ և առ բանիս յանդիմանուԹիւն համարձակե-
ցայց. մեծ է ձայնս գուժի, և անբերելի բողոքս ա-
ղաղակի: Ո՞անդի Թէ զհոգիս էր զիմ տեսանել, տը-
գեղս և նուաղս և ամենեւին ներքեւեալս, ցաւովք
հեծուԹեանս ի վերջինս վարեալ վարանումն, և մըր-
ճոտեալ աղտեղեալ գունով զազրուԹեան իբր զպաշ-
տօնատար մեհենի. վասն զի նոյն է սպաս տանել ձու-
լեալ պատկերի, և մեզայ ախտի: Ընդ ես գնացի ընդ
այս ճանապարհ կորստեան հետոց խաւարի. եւտա-
զաժինն քո ցանկալի յանապատ անկոխ, ըստ մարգա-
բէին որ առ քահանայն Խորայելի ամբաստանուԹեան:

Գ. Ո՞ւր զիա՞րդ ասացից անձին իմում մարդ՝ գրեալս
ընդ անմարդիս, և իբր անուանեցայց բանական՝ ան-
բանիցն չիմարուԹեան կցորդեալ. և ո՞րպէս կոչեցայց
տեսանողական՝ մի՛ացուցեալ զլոյս որ չիս. և ընդէ՞ր
համբաւեցայց զգայական՝ զիմաստիս դրուն փակեալ.
կամ որո՞վք ցուցայց տպաւորուԹիւն նկարագրուԹեան
անեզծին ընտրի՝ անձամբ ինձէն յոդի մահացեալ. նա
և ոչ շարժողական և կամ շնչական ունիմ անուանել,
Թող Թէ հոգեկան կամ մտաց ընդունական. անպի-
տանս ի Թիւս անօթոց, անարգս ի քարինս որմոց,
արհամարհեալս ի կարգս կոչեցելոց, վատԹարս ի
յաղգս հրաւիրելոց, արհաւրօք մահու պակուցեալս,
անխրախուսելի ի բոլորեցուննոյ՝ ցաւովք և տանջանօքն
Երուսաղեմի ըստ Երեմիայի բանին խրատեցեալ, պա-
կասեալ աւուրցս ի հեծուԹենէ, և ընԹացք ամացս
ի հառաչմանէ, ըստ նուագարանաց երգողին: Իբր

ասուի ՚ի ցեցոյ և փայտ ՚ի յորդանէ, ըստ իմաստնոյն բանի, ՚ի խրթմանէ սրտիս հալեցայ. իբր զոստայն սարդից մաշեցայ, ըստ սաղմոսողին, և խոտան գտայ. իբր զամպ առաւօտեայ և զցօղ վաղորդայնի, ըստ մարգարէութեանն ձայնի, սպառեցայ: Այլ ոչ ՚ի մարդ ոք ուշիմ գյոյս, եթէ անիծեալ ՚ի տեսանողէն անյուսադրելի վհատիմ, այլ ՚ի քեզ՝ տէր իմ ոգեսէր, որ ընկղմեալ ՚ի քայդ գթութեանց բարեաց անքաւից, և ՚ի բեւեռելոյն ժամու ՚ի խաչին մաղթեցեր մեծագ ողորմութեան առ հայր քո բարձրեալ՝ քո չարչարս զայն: Արդ ընդհանրեա ինձ յոյս քաւութեան, կեանք և ապաւէն, և ՚ի տուր ընդյս թշուառի՝ առից զոգիդ քո բարի: Այս քեզ ընդ հօր հոգւովդ սրբով՝ զօրութիւն, յաղթութիւն, մեծութիւն և փառք յաւիտեան. ամէն:

ԲԱՆ ԻԲ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱԻԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. ԶԱՐՁԵԱԼ այլաբանեցեալ ՚ի նայն չարաւնակ բարձեալ զկշտամբանացս եղանակ դսրսփեալ անձինս, աճեալ մաւսուցեալ կրկին կացուցեալ նովին պատկերաւ ՚ի նայն պայմանի. Թերեւս գրեսցէ ինձ ամենագէտն զայս յանդիմանութեան գառաքինիք կսկծեցուցանող զականս բանի ճշմարիտս խոստովանութիւն համայնից գործոց գաղանութեանց չարեաց:

Բ. Այլ ոմն ձիս խօսնական կարծրերակս առնձակոտոր արձակերաստան, յսլանակս անհամբոյր վայրենական և անկրթական, երկինքս աւդական անուղղական և անվարժական: Արդս մոլեգնական տարագրական

և կորստական, մահուկս մեղանչական անիրաւական և վարաւական, անառեսս մահապարտական տարտամական և անգործական, բանականս անասնական գազանական և անմաքրական։ Չիմեննիս ամայական անպըտղական և կործանական, մարմինս հոգւոյս իմ թախծողական դառաղական և տանջողական, խոցեալս անբժշկական անխնամական և անկանդնական։ Ակի չարս կայսերական՝ արդվաստական և անգտական, ծառայս սնալական փախստական և թշուառական։

Գ. Ահա ես ինքն ինձէն համառօտապէս անձնամատն և մարմնակործան, հոգեկորոյս և միշտ մոռնալաք, կամակոր իսկ և սրտաբեկ, ուշամոռաց և հանճարապատ, զգայազուրկ և խմաստասպառ, յայրաստաւես և եղեռնալըւը։ Այս աստուստ և անգուստ բնաւիւք բորբոքմամբք մահաբեր երկամբք ճնասեալ, ոչ միով իւիք տեսուԹեամբ՝ ի գործ ընտրուԹեան քեզ պիտանացուս, տէրդ բոլորից. ողջամ զորովչին, որ երկնեայն վա. աշխարեմ զասինան. որ դիեցուցին, ընդ դէր ոչ մազձ մակարդեալ ընդ կաԹինն ձգեցի, և զիւրդ ոչ դառնուԹիւն ինձ ընդ քաղցրուԹեան ջամբեալ մատուցաւ։ Օ՛ի եԹէ ես ինձէն անձին իմում գժնեայ դառաքաղ համբարձայ այսքանեօք բանիւք, և ունիմ տակաւին զսուբ բարկուԹեանս անհանգիստելի, ոմ որ՝ ի յերկրածնայ ասոի զիս ողբեսցէ. զանմեռնայն խայտառակեցից, զբնաւ էուԹիւնս դառեալ տուժեցից, զհամօրէն զվնասակարացն զդուռնդ գանեցից, զնոցօղացն զինուորուԹեանց դառնախաղեցից, զգայականացն գլխաւորուԹիւնս կշտամբեցից։ Անզայ ամենայնիւ յամենայնի, ողբմամբ գԹած. ոչ նոր ինչ գտեր յիս զյանցանացս պարտեայ մառախուղ, այլ նոյն եմ յաւէտ նովին պատահմամբ պարտաւորուԹեան, անկցելի ձորձով սնալեալ առաջի քոյ՝ անփոփոխելի, և դու միայն լսկապէս գԹած օրհնեալ մարդասէր, ընդ աջմէ խմոյս վրկուԹեան կանխեալ ներուԹեամբ անայլայլելի։

Դ. Ընդ մատո, խնամակալ, հզօր, երկնաւոր, բա-
րի, ամենից հաստիչ յոչէից, զքանիդ զօրութեան ի
մատից կայծակն ի գործի ազգման լեզուիս շարժու-
թեան, առիթ մաքրութեան յամենուստ զգայակա-
նաց գայաւորութեանց յիս մանաւորելոց՝ քո ձեռա-
կերտից, սաքօք առ ի քէն եղելովք և բժշկելովք կրօ-
կին հանդերձանօք, անպակաս ձայնիւ, անհատ բար-
բառով, քեզ վերընծայել գոհաբանութիւն ի փառս
մեծութեան հօրդ քոյ ասուածոյ մերոյ, յաւիտեանս.
ամէն։

ԲԱՆ ԻԳ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Տէր ասուած ամենայնի, զօրաւոր յամենայ-
նի, անպարագիր և անվայրափակ տեղի ամենեցուն.
բոլոր իսկութեամբ հուպ յամենեսին, անուրեք վայ-
րից, և չիք սահման առանց քոյ։ Ոչ երեւեալ երբեք,
և ոչ տեսականութիւն առանց քո ծագման լուսաւոր։
Փառք ահաւորութեան, անուն անհասութեան, կո-
չումն մեծութեան, ձայն անքաւութեան, իսկու-
թիւն անքննութեան, անմատչելի հեռաւոր, և ան-
ընդմիջելի մերձաւոր, տեսող հեծութեան, նկատիչ
թշուառութեան, մօտակայ թախծութեան, ամենա-
զուժ հնար անճարութեան, հայր գթութեանց, ծա-
գող ողորմութեան, ասուած մխիթարութեան։

Բ. Յայեաց տէր ողորմութեամբ ի պատկեր վշտաց
դառնութեան բազմավանգ կրից կարեաց, զոր հան-
դէպ քո տարածանեմ. կցորդակից լեր բժշկապէս, և
մի ի խայտ ընտրութեան կոչեր դատաւորաբար։ Ընդ

դարեւ մեծ է վտանգ տարակուսանաց ցաւոց այսր վարանման, յորժամ իցէ մարմինն մեղաւք գրաւեալ, և անձն ի գործոց չարեաց ոչ մեկուսացեալ, գործնա- կանացն գործի սովորութեամբն կարեաց կապեալ, զանգուածն հանդերձանաց մահացու կրկնք շաղա- խեալ, զգայութիւն սրտին խմաստից խեթիւ խոցո- տեալ. ակնկալութիւն բարեացն ընաւին բարձեալ, և ի բանականութեանն ընդ անաստուածս դատակար- գեալ, և զաղէր գարշութիւն ընդ գոյութեանն շարա- մանեալ, և տեսականացն ողջ երկիւղ իմանալիքն վերա- ւորեալ, և ի սաստկութենէ յանցանացն յիշատակի յաւէտ յուսահատեալ, և տագնապաւ նախագործե- լոցն միշտ տարակուսեալ, և յոտակութիւն աղերսին ի սպառ պղտորեալ, և խղճիւ մտացն յուզմանց կրկին ձենձերեալ, և ձեռն ի մաճի գործոյն դէտանոյն հետաւ զօտեալ, և կերպ ի յաւաղ դիմեալ՝ ոսք ի վերջ կոյս յետահարեալ, և գիտութեամբ էիցն՝ ի չէիցն միշտ խաբեպեալ, և ի մտացն մարս՝ ի փոքունցն յաղթա- հարեալ, և ի թառանչ սրտին հագագին դուռն հրը- դեհեալ, և խոնաւ զօրութիւն քմային ամենայն ուրեք տոչորեալ, և անարեւ միգով յամենայն մասանց պար- փակեալ, և լսելութիւն ակնկալութեանն ամենեւին ի սպառ ամխոփեալ, և անբերելեացն տոյժ ի զգա- լիսն տպաւորեալ, և եղկութիւն կորսեանն ի յուշ անդ եկեալ, և դատակնիք հատուցմանն ի դիւանի մտացն գրեցեալ, և բարեբարին աչն ի ցասումն իմն երեւեցեալ, և լոյսն բնութեամբ՝ զանկուածոյ հողոյս զայրացեալ, և ահաւորութիւն էին ընդ փոքրկութիւն բնութեանս ընդհարեալ, և միշտ որոտմամբ բանիւ բանաւոր մխրոյս բարկացեալ, և իրաւանցն վիճաք զարժանիս մահու կոչմամբ, և որ իմն է տագանդ՝ յանառակս աստէն կորուսեալ, և պատուական իրին ստացուած իբրեւ անարդ յերկրի թաղեալ, և տա- ժանմանցն արգասիք ծուլութեանն մթով ծածկեալ, և իբրեւ զի բաց բարձեալ նշմարան ճրագի չերե-

ւեալ, և պատասխանեսցեն լեզուիս՝ յիրաւանցն օտար՝ կարկեցեալ, և անհամբոյր չղթանցս դրութիւն օրինաւոր դատմամբ պատանձեալ, և յուզմունք մտացս՝ ի զանազան մասունս ցնդեալ, և զկեալն ի վերայ օգտին ոչ ինչ գիտացեալ, և ի կշռութիւն բարւոյն ընտրութեան չիմար երեւեալ, և ընթացք ելիցն նհանգմամբ չարին խափանեալ, և վատարան իւղոյն աճիւնովն հնոցի լցեալ, և անուանս գիր ի կենաց մատենէն եղծեալ, և կշռամբանք ընդ երանութեան անդ արձանացեալ:

Գ. Եթէ զինաւոր աւազանեմ, մահու ակն ունիմ. եթէ պատգամաւոր, խաոսութեան. եթէ մատենագէտ, մաբհակի կորսեան. եթէ օրինաւոր, անիծից. եթէ աւետարանական, փոշւոյ ոտիցն Թօթափման. եթէ բարեկրօն, յանդիմանութեան. եթէ ապաւաւմ, կակըծման: Եթէ ջրոյն ընտրութեան փորձիմ, խորտակիմ. եթէ դեղ ինչ դատման ձգեմ, սատակիմ: Եթէ բերս նկատեմ բարութեան, ի կարծեաց չարեացս փախուցմ. եթէ ձեռն համբարձեալ, կորանամ. եթէ փոքր ինչ խրատիլ, սարսեմ. եթէ սակաւ մի Թնդիւն, ընդոսմիմ. եթէ ի խրախճանս ըմպելեաց հրաւիրիմ, դողամ. եթէ մեծիդ յանդիման լինիմ, սարսափեմ. եթէ ի հարցումն բանի կոչիմ, կարկիմ. եթէ խրաւամբք քննիմ, համբառամ: Արդ այսքան ամենաթշուառ և ողորմագին տարակուսանացս ի վերայ միմեանց բարդելոց, որք զսորեւ զգայականաց սրտիս գոյութեան ի ներքուստ անտուստ անբժշկական ցաւոք՝ անեղեւակի նեափեք խոցոտեալ, անարտաբերելի մշտակիր յարամբ նաց հանապազամուխ բեւեռեալ աստուստ ընդ հոգւոյս, լցեալ շարաւով կրկին հարուածով, վտանգ սատակման մահու գուշակեն: Թարախ մեծերից պատեալ ջերկաթով գաղտնեացս ծածուկք ապրեն ինձ տագնապս՝ վերս պահեալս անխնամարկելիս ընդ ելս ընչից տուրեւառութեան. յորոց նեղութեանց չարաչար ճնշեալ աղաղակ ձայնիս, խառնեալ արտասուաք՝

կոչկոշափին Թախծանօք հոգւոյ, բարեպարծիկ հընազ բաւորութեան յերկրաստեղծիցս նահատակաց ընդ իմ մաղթողաց, վերջին հեծութեամբս և ես ընդ նոսին արտասուօք ողբոց ամենեքումբք նուիրեալք՝ զաղերս սանս ըղձից՝ ի սաղմնացոյս սասի յերկինս առաքեմ։ Շնորհեա տէր անդորրութիւն կենաց հանգստեան պղծմանէ վաստակեցելոցս՝ ի յընդունայն երկրապարծութիւնս, համայնդ յամենայնում, ամենայնիւ սասցեալ քեզ փառս։

ԲԱՆ ԻԴ.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱԻԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՅՏՈՒԾՈՑ

Ա. Յի արդ որմ՝ ընդրոյց արժանաւոր վարկանելով զնս մատչիմ աղերսել, արքայութեանն յորմէ վերին ցայ, եթէ փառաւդ վայելչութեան յորմէ զրկեցայ, թէ կենաւդ անմահականաց յորմէ հեռացեցայ, թէ ընդ հրեշտակսն պարակցութեան յորմէ արհեցայ, թէ ընդ արդարսն մանկակցութեան յորոց ձեղքեցայ, թէ ձեռ որթոյն կենդանւոյ յորմէ քանցեցայ, թէ ոտս անկոյն բերկրութեան յորմէ զօսացայ, թէ ծաղիկ փառացն շնորհի յորմէ թափեցայ, թէ պանձանացն ժառանգաւորս յորմէ կորացայ, թէ հայբենի ծոցոյն հարազատ յորմէ ընկեցայ, եթէ զգեստսն լուսոյ պարծիմ յորմէ մերկացայ, եթէ ի սասցող զարձին յուսացեցայ յորմէ խորթացայ, եթէ ի լուսոյն իղձս դիմեցից յորմէ մնկնեցայ, եթէ Յիսուսի յսկերսն յօդիմ յորմէ մերժեցայ, եթէ ի թեւս նորա մերձիմ յորմէ օտարացայ, եթէ յսպասէն ապասսանեցայց յորմէ խեթացայ, եթէ ի փրկութեանն նորոգութիւն յորմէ

մահացայ, եթէ ՚ի պատուհասէն զուարթութիւն յորմէ ես լքայ, եթէ ՚ի կանոնն կենացն ուխտի յորմէ փոխեցայ, եթէ ՚ի սահմանն հաստատական յորմէ սահեցայ, եթէ յանչարժ վիմին պնդութիւն յորմէ սասանեցայ, եթէ ՚ի շաւիղս գումարտակին յորմէ հասեցայ, եթէ ՚ի քաղաքն անդրանկաց շինիմ յորմէ գերեցայ, եթէ հանապազորդեան հացին աղօթիմ զոր ոչ վաստակեցայ, եթէ փոխադրութիւն երկանցն խընդրեմ յոր ոչ բրանեցայ, թէ պարգեւօքն պսակեցայց յոր չհանդիսացայ, թէ արձանն ինձ կենաց գրեցից յորմէ ջնջեցայ, թէ զերախտեաց գիր յիշեցից զոր մոռացայ։

Բ. Այս հատուած և կամ խոշեցաւ զոր կենաց յուսայն, սիրեցայ ՚ի բորոտութեանցն գարշութենէ հանգայն ախտացեալ, ամենայնիւ սպառեալ մարմինս ապականութիւնն շրջապատեալ՝ մեռայց աստուծոյ։ Դէպն պալար փայլատնակ տգեղ ընացեալ, մնացուած ինչ պահեալ նախատնակ երկդիմի կերպին, որ զկրկին անմաքրութիւնն նշանակէ, պարծանացն նշոյլ ամենեւին ինձ չիջաւ, փրկութիւնն մատնեցաւ, բարին ըստուերացաւ, եղք կենացն բնաւին փակեցաւ, մխիթարութիւնն բարձաւ, դատաստանին առեան մերձեցաւ, թոյնք մահուն ինձ արծարծեցաւ, սպանեալն կրկին ինձ կենդանացաւ, լաստին դատաւորք վիմօք խցաւ, շաւիղն յուսոյն կուրացաւ, շնորհին ծածկոյթ յինէն մերկացաւ, փառացն վայելչութիւն ստուերացաւ, հանճարն առաքինորդական խափանեցաւ, կշռամբանաց ըլն փուշ բազմացաւ, անօրէնութեանն ուղէշ ծաղկեցաւ, բոց գեհենին ինձ բորբոքեցաւ, ծառայութեանն լուծ սաստկացաւ, սարկութեանն կապ զօրացաւ, ունողն յարկին կառուցման ահա անկաւ, բարձրութեանն վտահարան կործանեցաւ, ընտանութեանն միաւորութիւն անջրպետեցաւ, սրբութեանն սիրող հոգին աստուծոյ տրամեցաւ։

Գ. Այս քանզի զվերջինն համբուրեցի դառնութիւն,

տանջանս՝ խէթս՝ սխրութիւնս, վիշտս հոգեկանս, ցաւս անխնամարկելիս, տարակոյս անյուսադրելիս, ամօթանս անպարուրելիս, խայտառականս անվերքաքելիս, պատկառանս անհամարձակելիս, փախուստս անդառնալիս, հալածանս անմարդասիրելիս, երկայն ուղեւորութեան ապաձեռն անխոչակութիւնս, իսկ դու փրկութիւն զօրութիւն և օգնութիւն, ողորմութիւն լուսաւորութիւն քաւութիւն և անմահութիւն աէր Յիսուս Քրիստոս, որդի աստուծոյ կենդանւոյ, արարիչ երկնի և երկրի, որ ընձեռես ջուր պաքելոցն ի ծարաւուտ վայրս անապատի, օրհնեալ, բարեգութ, հզօր, մարդասէր, երկայնամիտ, խնամակալ, հնարաւոր, պյցելու, պաշտպան աննախանձ, պահապան յաղթող, կեանք անկորուստ, միջնորդ երկնային, լուսութիւն աննուաղ, երանութիւն ածնելի, ձեռն ձգեալ սիրոյ ողորմութեան քոյ աջոյ՝ ընկալ և մատո քաւեալ և սրբեալ զիս զամենապարտս՝ բանդ կենդանի՝ առ հաւատարմատիս քո հոգի, զի քեզ վերստին հաշտեալ յիս գարձցի։ Նո՛ւ ի ձեռն քո խրոմն կամաք մաքուր նուիրեալ, զօրեղն ինքնութեամբ զիս հօր ընծայեալ, անդէն առ նմին նովիմբ միշտ ի քեզ շնչոյս ողջունիս կապեալ ընդ հնորհիդ՝ ի քեզ միանալ անբաժանելի։ Ա՛ման որպ քեզ ընդ հօր քոմ հոգեսուզ սրբով՝ երրեակ անձնաւորութեանդ ի միութ՛ քնութեան և ի մի աստուածութեան փառք, և ի սահմանականաց էից գոհաբանութիւն յաւիտեանս յաւիտենից, ամէն։

ԲԱՆ ԻԶ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԲԱՑՑ քանզի՝ ի վերայ այսքանեսայ գերութեանդ ամենաթշուառ վտանգաւորիս մի զմիավ եղ և եղա առնելոյ, զոր զկերպարանս անցկին՝ ի մտանէ վերաճառելքդ նախատրեցին, ուսաի և փախեալ զեղանակ բանիս՝ այլ ոչ զեղկութիւն ազէտիս։

Բ. Ա՛յն պէս ծուլ է հնձ ծփանեայ կենցաղոյս բերմունք յայժ նմանապոյն. յորում՝ կոհակօք բազմօք անթիւ դիմեմանց տատանեալ հոգիս՝ ի յայսմ աշխարհի մարմնոյս վինուածուլ եղէ՝ ի նաւակի։ Որ Նայիաս մարգարէ դյանկարծադէպ կառարածն որ՝ ի պարակականն հինից՝ Երուսաղէմի և Սամարիայ կործանմանն, նմանեալ եմ ամբ օրինակի կերպաւորեցայց. որ և առ մեզ հոգեւորական խորհուրդս զուգաձայնել՝ ոչ է սխալական։ Քանզի մինչդեռ չուէի ես յանհոգութեան անտարակոյս վստահութեամբ, դպղն կասկած արկածից՝ ի միա բերելով առ խորոց փոքր միջոցին, որ՝ ի մէջ հանգստեանն և աշխատութեանն, իբր այն թէ հասեալ եղէ ձմեռն յամարայնի, եքաւեր հողմով ժամանեալ երեքեանն դիմակուսութեամբ ամբոխեալ գհանդարտութիւնն։ Ուստի նաւն՝ ի բախմանէ վայրենի ալեացն խորտակեցաւ։ Թեւոցն ձեռնարկութիւն քայքայեցաւ, կայմն ամբարձման՝ ի կայից իւրոց խլեցաւ, առագաստին Թռչարան յանկարկատելի ծուէնս պատառեցաւ, վինուածոյն շուք անզարդ եցաւ, առաջանք ձգողականացն խզեցաւ, տեսարան գվնասն գիմակի խանարհեցաւ, ապաւանգակին պարան կոր-

ցաւ, ապաւինութիւն խարսխին լուծաւ, լուծք ըստուարք ամրոցին կցորդութեան բաժանեցան, սամիք ուղղացան հետոց գալարեցան, լաստ հիմանն հաստատանի ընկղմեցաւ, ղեկացն կառուցմունք անդրէն սուզան, չուոցն յարմարութիւնք պակասեցան, ոչնա փայտին պատապարան խոկոյն բեկաւ, կապարանք զրահին հաստուածոյ յօշատեցաւ, գոգք ամփոփման ծոցոյն կազմածոյ անարգեցան, խելք շրթանցն եղերայ խախտեալ ոստեաւ, պաղպաջունք բազմականացն անկեալ բարձաւ, վանդակապատին վայելչութիւն յաստակեցաւ, գահաւորակին հանգստարանն չփոթեցաւ, մածմունք ախտակաշարք ի միաբանութեանց միմեանց անջատեցան, հեղոյսք պնդման բեւեռացն քարշեցան։ Աղբասիք իրին չիշատակարան ողոց ինձ նըմանեցաւ։ Նաւուղին հանդէպ նաւին դեգերեալ ողբայ, ձեռն ի ծնօտի եդեալ՝ արտասուաց գետս իջուցանէ։ Նշմարք սակաւ միացուածոյն՝ ի ծայրից ծփմանց ազդելոյ ծովուն, իբր խոշնոջեալ բանաւոր, ողբմագին թախծանօք հեծէ։ Ոչ ան զի թէ զբարի նաւապետն երկնաւորքն զօրք յաշխարհիս ծովուառ ի զնորոտակեալս իմ տապան իմանալի գոյութեանս առցէ աշխարել բանիս յարմարութիւն, ոչ ինչ վըխպեսցէ ի ստուգութենէ։ Կանգնի արդարեւ ելոյց բարեգութեն տէր յառակ մարդկութեանս զթաղեալ ազգակիցն, ելոյց առ նմին և զհրաւաղէմ մոլեալ և զՅուդաս մնեգնեալ, յորոց երկուցն կորեաւ վաստհութիւն յօրինակ նմանութեան աղաւորեալ նաւի. իսկ միւսն հասեալ յատակս անդնդոց՝ առասան յուսոյն ձեռամբ ուռնոզին յանքոյթն արտաբերեաց խաղաղութիւն։

Գ· Աղբ ինչ թէ յաւելից հայել զբազմախորտակելի տապանակ մարմնոյս իմոյ նորոգեալ։ Ինչ արդեօք տեսանել զիշխեալս նաւ ողբալի հոգւոյս ողջացեալ։ Ինչ արդեօք տեսանել զբաժանեցեալս միջոցաւ միմեանս՝ վերստին կցեալ։ Ինչ արդեօք տեսանել զյոքնա-

թախիծ սիրտ վշտացելոյս բերկրեցեալ: Աբդ ինչ ա-
կըն ունել նայել գլուխ խաթարեալ կերպարան բը-
նութեանս կրկին հանդերձեալ: Ինչ արդեօք թէ տե-
սից զբակտեալ տաղտար թշուառացելումն միւսան-
գամ կանդնեցեալ: Ինչ արդեօք յուսալի նայել զտա-
ժանելժեալ դերիս ազատեալ: Ապաքէն գուցէ ակն
ունել զանկեալս ի շնորհէդ լուսոյ դարձեալ կազ-
դուրեալ: Աբդեօք տեսից զվայելչութիւն ընտանիդ
քո պայծառութեան յողորմութիւն ինձ երեւեցեալ:
Ընթէ տեսից երբէք զամենատխուր կերպարան հոգւոյս
իմոյ ժպտեցեալ: Աբդեօք լուայց ընդ ձայնի գուժիս
աւետեաց համբաւ ինձ առաքեցեալ: Աբդեօք տե-
սից զբիւրաւործան վիրաւեցեալս անօթ կազմեցեալ:
Ինչ ընթէ տեսցեն պատուհանք աչացս իմոսից զմուրհակ
պարտուցս իմոց պատառեալ: Ընթէ յայտնեսցի օրն
իմ անձկութեան շնորհին քաւութեան բարւոք ինձ
ծագեալ: Աբդեօք մանից ի խրախճանութիւն խորանին
լուսոյ քեւ առաջնորդեալ: Ինչ թէ կենդանի լինիցին
ոսկերքս, ըստ Ենեկիէլի, ցամաքեալքս ի կենդանու-
թեանց եկաւորութեամբ ազգդողական շնչոյս զօրա-
ցեալ: Ինչ թէ յաւելից հայիլ ի տաճար սուրբ քո,
աղաղակաւն մարգարէին ի պորոյ կիսին, հեղքեալս
ի լուսոյ՝ որ կամ առաջի քո ամաչեցեալ: Ընթէ լինիցի
խաւարատնուն մթացելոյ ծագման առաւօտ: Ընթէ
հասցէ տեսանել զտագնապեալս միտասաւոյց յերանե-
լըս գարնանն մօտ: Ընթէ տեսից զցօղ անձրեւոյն կա-
նաչացուցանողն հոգւոց ինձ պօտ: Ընթէ ինչ ար-
դեօք նկատել զպաղանաբեկ հեղքելի ոչխարս վերատին
կամոյ գթութեան քո հօտ:

Դ. Այս քանզի ըստ բանին Յոբայ չուրջ պատեալ են
չարեացն հնարք ընդ որ ոչ կարացից անցանել. իսկ
ընթէ լոյս ողորմութեան բարեբար կամոյ քոյ ցուցցի,
գթութեան քո դաւն բացցի, ճառագայթ փառաց
քոց ծաւալեսցի, խնամք ձեռին քո յայտնեսցի, արե-
գականդ կենդանոյ օր տարածեսցի, առաւօտիդ ըղձալի

տեսիլ մերկացի, առատութիւն քաղցրութեան քոյ աղբերացի, վտակ արարչիդ կողից հոսեցի, ծորումն անապակ սիրոյ քո հեղի, ծագումն աւետեաց հնորհի քո երեւեցի, պարգեւիդ քո ծառ ծաղկեցի, մանուկք օրհնեալ մարմնոյդ քաշխեցի, համառօտեալն ակնկալութիւն հանդիպեցի, հատուածեալ ձայն ողջունի քոյ առը լուիցի, հեռացեալդ խաղաղութիւն մերձեցի. յայսոսիկ յաւէտ սովին սահմանաւ երանելոցն հաւատս ընկալեալ յուսոյ հաստատանոյ, ապաւինեալ'ի հոգիդ քո սուրբ, որ ընդ հօր քում պաշտի ձայնիւ քաղցրութեան ընդ քեզ փառաւորեալ'ի լոյս անմատոյց, որով կեանք և երանութիւն քաւութեամբ հանդերձ ընծայեալ ինձ մեղապարտիս. յաւիտեան անկրուստ ընդխս պահելով առհաւատչեայ ճշմարիտ յիշատակի, 'ի ձիր անեղծութեան անուամբդ անճառելեաւ ահաւորութեան հզօրի սրբոյ միայնոյ և անքննելի տէրութեան երրեակ անձնաւորութեանդ՝ որ եսք յիսկութեան յէութեան և յատակայութիւն բարձրութեան քաղցրութեամբ ողորմութեամբ և մարդասիրութեամբ պահեալ հանդերձեալ և թագաւորեալ։ Այո առ ամենեսին ամենայնիւ յամենայնի կարող ես, դիմած. և քեզ վայել է փառք յայսմ յաւիտեան և'ի հանդերձեալ մշանջենաւորութիւն յայտնութեան աւուրն մեծի, յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ Ի.Զ.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. ԶԻ արդ ատուգասէս և իրաւաբար, ընդ որս որք ըստ ձայնից կողկողանացն և զբանից յարմարու- Թիւն հանդերձեն, ՚ի նոյն գիր բերել զաւարտմունս տանցն, որովք առաւել ասասիկ մորմոքեալ ճմլեցու- ցանեն զաղէտս կաբեացն սրտին ըղձից առ արտա- սուացն բղխմունս. ուստի և բազմեալ իմ ՚ի գլուխս պարու ակնբից դաստս այնր երախանաց՝ որք զլալեացն յեղանակին բանաստեղծութիւն, և ես ընդ նոսին նոյնի հեծութեամբ աւազական ձայնարկութեամբ զանձինս տարածանեմ զչքտակրութիւն, որ ոչ բնաւին մեռեալ աչխարհի, և ոչ իսկապէս կենդանի ատուս- ծոյ, ոչ ջերմ սուկ և ոչ ցուրտ յատուկ, ըստ առակի աւետարանչին գրեալ ՚ի յայտնութեանն. երիցս ատե- լի երբեակ տէրութեանն և ամենատես արարչութեանն: Զի այս են պատկանեալ Թախծականացն կերպագրու- Թիւնք, կրկին ողբմելի այսու երեւեցեալ՝ որ ՚ի մի գիծ սահմանեալ կացուցանեն զիշատուութեանցն զօրինակ, այսպիսի կցորդութեամբ չաղկապեալ:

Բ, Պարտուցն ժխտեալ տաղանդացն՝ ձեռով մեծաս ՚ի տուժի, ես ապիկար մնասնեալ անարժան գործովքս յերուսի, վասնիչ արքունի գանձուց կրկնադատ և ան- Թափելի, պատասխանատու մեծին ըմբռնեալ անհրա- ժարելի, բիւր քանքարոց խնդիր՝ ես չունիմ կշիռ մի ունկի: Ընդարձակ կապեալ ՚ի պահեստ դառն արդե- լանի հեծութեան և վաստակ ցաւոց ճաշակեալ յաննշալ բանի, անապատէն տանջեալ անթոշակ կամ ողբմե-

լե. այլ յեղանակ ինձ ողբականաց ասուստա կնքեցի, փոխատրեցի սովին բարբառով կոծ կսկծելի, կարգադրեցի չքնաքերութեամբ ի նոյն պայմանի, անհատական թիւ խորհրդական երկեակ տասնեկի: Աղքատութեանն հնոց յամենուստա մատանց մրրկի, անպատասպար թշուառ վտանգեալ սրտիւ ի գրաւի, տարակուսեալ հոգւով ապաշնորհ այր ի վերպակի, անխնամելի հայցմամբ դատաստանն յինէն պահանջի: Աղեղց և մահու զինուք զգայարան գազանեացս խոցի, անփրկելի մատնեալ բռնութեան չարեացս գերի, սուր սուսերաբաստակ գոյութիւն բնութեանս յօշատի: Ցիշատակ բեմին աստանի ի դատաստանի, անճագելի մռայլ չարատես աչաց երեւի, անձեռնկալ կապեալ եղկելիս ի տարակուսի, ահարկութիւն դիմաց պատկերի վերնոյն տեսանի: Ցայժ անարեւ և անվերարկու ի տարտարոսի, անապաւէն մոլար մորմոքեալ ի հուր գեհենի, անյայտանելի կորուստ կրծանեալ ի մեզաց վճի: Ահա զոր ունիմ արծաթի անպիտան ոչ երբէք յարդի, և ոչ ընդունի և կամ համբարի ի գանձ տեղւոյն, հայցուած պղտոր և ձեռն անմաքուր անուխ բելի: Այլ բեկեալ սրտիւ մատանց տատանմամբ յոյս առեալ գարձի, զեմն ի յերկիր եդեալ պաղատիմ մօրդ Յիսուսի, բարեխօսեա մաղթեա քաւութիւն ինձ մեզաւորի՝ դու զօրաւոր փրկանակ կենաց խսկութի երկնի, քեզ օրհնութիւնք ձայնից և բուրմունք խնկոց ի յերկրի, և անուշից խղոյց մատուցումն յամենայնի:

Գ. Աչդ յատացեալ ողբոցս հիւսուած այլ մատն յաւելի, բարեբարին շնորհաց արտատուաց պտուղ մատուցի. զկորսեան խորս չափելով զողբքանն երբէք ոչ գտի, մանաւանդ բանիւք ի հանդէս նորին չանացի, զմտացս արագեալ զթեւս յերեւոյթ երին ոչ հասի, զաչին պարտութիւն յանվթարելեացն բաժակ բարկութեան ի ձեռն իմ առի, զտարտամութիւն տարակուսանացս իբր ճաշակումն մահու արբի. և այժմ զյանցեցին յաճախութիւն ողբմելի ձայնիւ յերգ արկի: Ա-

ներեւոյթ կրակարան տապոյ բորբոքմամբ մեծաւ անզուշանալի, անտեսական իմն քրայս հալոցաց սաստիկ եռացմամբ անչէջանելի, սլաքս նետից պատկանեալ դեղովք ի չտեմարան խորութեան սրտի, խիթք ցաւոց խոցոտման մահու ի գնացս երակաց գոյութեան լերդի, կիրք երկանց անճարակ ճեպոյ ի պատուաճ աղեացս անելանելի. անզօրելի դեղոց չերմութիւն ի յերիկամանց մաստնա երկակի, անհնարաւոր դառնութիւն մաղձի ի նախադուռն իմոյ կոկորդի: Ահա զքս ձայնից լքուցանողաց ի փոզս շնչոյս խոշորս հնչի, բազմահատուած էութիւն բնութեանս ներհակք միմեանց ի պատերազմի, երկչոտութեամբ կարծեաց վարանեալ ամենայնիւ կայ ի վտանգի. հարազատաց դաւաճանութիւն անհաչանելի ի կոտորուածի, ոչ մեռեալ և ոչ կենդանի թաղեալ ի մեղաց գարշութեան տղմի, կասկածաւոր պատժապարտութեամբ վերակ նարկելով քեզ բարեբարի, յանհնկալս կենաց վէհ արտաբերել ի լոյս անձկալի:

Դ. Նոյն ինքն որ զայս բան տպաւորեաց՝ ընդ երջանկացն պահեսցի, ակնարկելով քո ողորմութեան անարատիցն հաղորդեսցի, վասն զենման ատուածոյ բանիդ՝ բարեգործեալ քեւ կենդանասցի. օրհնութիւն գովեալ քո չրթանց ի գլուխ բաշխողի այսր մատենի, հաստատեսցի ըղձականութիւն սողոմոնեան բանիս առակի, նկարագրեա հոգւով քո բարձրեալ ի նորոգումն անեղծանելի. զի դու միայն ես երկայնամիտ ներող քեզ փառք յամենայնի. ամէն:

ԲԱՆ ԻԲ.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ քանզի ընդ ողբաձայնիցն բանաստեղծու-թեանց վերընծայելոց զդրուժիւն Թուոցս յարմարեցի կաան և հեծուելիւն, հառաչանք կողկողագինք, դառնութեան լալումն և արտասուաց երդ, դարձեալ սկսայց զՃառ պաղատանացս խոստովանօրէն զըղջ-կանալոյ զգաղտնածածուկն յայտնաբարբառ. զի անդրադարձութեամբ սկզբմամբն և վերջաւորօքն բա-ռիւք, զնոյն համաձեւութիւն ի մի թախանձ նմին մաղթանաց հոգեկեցոյցն խոնարհութեան աստանօր եդից։

Բ. Աեղայ մեծիդ բարերարութեան՝ անարդս մե-ղայ, մեղայ ծագմանդ ճառագայթիդ՝ խաւարս մեղայ, մեղայ չնորհայդ անբաւ երախտեաց՝ արդարեւ մե-ղայ, մեղայ սիրոյդ վերնաւմ գթութեան՝ յայնապէս մեղայ, մեղայ ստացողիդ յոչէութենէ՝ ստուգապէս մեղայ, մեղայ գերբունակ գոգոյդ գրկանաց՝ անբաւս մեղայ, մեղայ աննուազ լուսոյդ վայելման՝ նենգոցս մեղայ, մեղայ ճաշակման անճառդ կենաց՝ բաղումս մեղայ, մեղայ անհաս պարգեւացդ ձրիոյ՝ հանապազ մեղայ, մեղայ գովեալ մարմնոյդ աստուածոյ՝ մահու չափ մեղայ, մեղայ պաշտելի արեան արարչիդ՝ իսկա-պէս մեղայ։ Այս արդարեւ օրհնեալ է հաստուած բանի յուսադրական սրտի այսր մեղայի, այն սա պատուելի աւանդ, անմոռաց պատուէր, հայրենեա-ցըն տուր, նախահարցն օրէն, համայնից Թոշակ, ան-հերքելի բան, ջրաւոր պատասխանի, կենդանու-

Թեան կամուրջ, ախորժելի վերնոյն, սիրելի սրբոց, անխոնելի կապ, հրաշալի բարբառ, անչքնելի պատճառ բաղձալի աղերս, փափաքելի սեղան, սրտաբեկ հնչուածն, անհնարիւ ճարակ, կարծրութեան վանիչ, աստուածապաշտից սահման, հեթանոսաց դիրք, վաղընջուց կանոն, քրիստոնէից հարազատ, արարչութեանն յաղթող, անքնքնելի հզօր, խորոց ահաւոր, արուեստ բարձրութեան, խորութիւն անչափ, հիացման տեսիլ, խորհուրդ կնքեալ. ընդ որ չիք ումեք անցանել, եթէ ոչ անմբռնելի մտայ արագման զատ ծանիցէ: Զայն բարեպատեհ հրաշատրական, որ ոչ յիշատակեցաւ ի վերջին դատաւկնիք դատուն լքելոյ. դուցէ առ նմին խնդալ համառօտ զվիժական երանոյ մասնն հասելոյ, յորմէ ընտրութիւնն ապագործ եղեալ, զահմանն յաւիտենական քակտեցէ: Օ՛արդ փառաց մեծութեան, որով նոյն ինքն աստուածութիւնն պսակեալ բարգաւաճի: Քանզի ոչ որ դիմեալ կալաւ զերջոյց սեղանոյ այսր սրբութեան, և ոչ առժամայն պրծեալ ի պատժոյ անարատ գտաւ: Իսկ եթէ Աբար զարմեան, և Աւուդ կիսեան, և Յուդայ սիմնեան, աստղով զոյն ոչ արդարացան, և ես վկայ յեմ երաւամբք խոստովանեալ զայս պայման բանի, զի ահամայիցն բռնադատելոյ ոչ է կատարեալ սէր, ուսի և ոչ բովանդակապէս փրկութիւն: Իսկ ես կամաւ համբուրեմ դարձեալ կրկնելով զերջանիկ բանիդ զմբ կրթութեան հարազատս:

Գ. Սեղայ երախտեացդ մուռացութեան՝ վերատին մեղայ, մեղայ մարմնոյ ձեռն յոգի հարեալ՝ յիմարս մեղայ, մեղայ առ կեանադ դրժողութեան՝ իսկ և իսկ մեղայ, մեղայ բանիդ ապախտ առնելոյ՝ չարաչար մեղայ. մեղայ ի յօր սատակման ինձէն ասիպեալ՝ վատթարս մեղայ, մեղայ պարտականս անկենդան մահուն՝ ձաղելիս մեղայ, մեղայ անպատկառս քո բարձրութեան՝ տաղտկալիս մեղայ: Վերջին ինձ կրկին աչխար հոգեւոր՝ զի ի կորուստ և ի կործանումն ինձ երե-

ւեցաւ, զի անդարձս վարատեցայ, զի որդիս Թշնամի գրեցայ, զի ի բարձանցն երկնից ընկեցայ, զի փուշս վարուց դիպի: Նոյ եւս առ սմին ողբաց աղաղակի, զի անձամբ զանձն անարգեցի, զի բագին կորուսչին գըլ տայ: Ալ իմն կակիծ դժնդակ սրտի, զի զիս ունկն առ որ չեմ, զարտաքնայարդար բաժակս անմաքուր, զբռեալ որմն գարշելնակ, զսին պարծանօք պաճուճ եալս, զլոյս ի մռայլ շրջեալ, զգերանակիր ակնս՝ Թշուառացեալ, զջահս փառաց՝ շիջեալ, զամենայնի ւրս յամենայնի ամենայն իրօք զիաոակարս, առ անօրինականն սէրունականս, առ յայտնուԹիւնն առ տուածայինս, առ երեւմունն արարչագիրս, առ խոնարհուԹիւնն սարսափելիս, առ այն զոր տեսի աչօք իսկ իմովք, առ որ մեծ է պատասխանատուուԹիւնս քան առ համօրէն աւետարանին զարմանս, հիացմունքս, հոգս հաշողականս, անդաճմունս անհնարաւորս, ԹուականուԹիւնս մոաց անքարդելիս, ելմունս անկատարս, իջմունս անհատատաս, յոսահատուԹիւնս յարմարականս, յանդիմանուԹիւնս պատշաճականս, ձաղանս պատեհագոյնս, նղովս իրաւացիս, անէծս արժանահատոյցս: Արդ այսոքիկ են մեղաւորիս իմ կըշտամբուԹիւնք, և ինքնահարուած տանջանաւորուԹիւն:

Դ. Նոյ քանզի կարող ես զայս ամենայն զպարտս Թողուլ, և զնայԹուածս մահու բժշկել, տէր ողորմած Թեանց, աստուած բոլորից, Քրիստոս Թագաւոր բարձրեալ հօր որդի, ստեղծիչ գԹած բարեբար, օրհնեալ առատ հարուստ, ահաւոր հզօր ողորմած, տէր սուչ ձեռնկալ հաստիչ, ապրեցուցիչ դարմանիչ կեցուցիչ, երկայնամիտ անոխակալ ապաւէն, բժիշկ գովեալ երկնաւոր, անձառ լոյս կեանք, յարուԹիւն նորոգուԹիւն քաւուԹիւն. եԹէ հայեսցես մարդասիրուԹեամբ, ըստ որում քոյդ են սովորուԹիւնք, նայեցեալ ի քեզ կողկողիմ և ես. եԹէ լուիցես, հաւաչեմ. եԹէ ունկն մատուցանիցես, պաղատիմ. ե-

թէ անասցես, աղերսեմ. եթէ ներեսցես, աղաչեմ. եթէ առիս դառնասցես, գոչեմ: Ապա եթէ անտես առնիցես, կործանիմ. իսկ եթէ առ ոսն հարկանիցես, լամ. եթէ զոգեպահն ոչ ընծայեսցես, մեռանիմ. ապա եթէ ահարկու դէմս ցուցանիցես, սատակիմ. իսկ եթէ սատեսցես, դողամ, եթէ խեթիւ տեսանես, սոսկամ. ապա եթէ սաստկանաս, սարսափեմ. եթէ հալածես, հեծեմ. իսկ եթէ ընդվայր հարկանիցես, հեղքիմ. եթէ զողոց վհատութիւնս ոչ առցես, տագնապիմ. եթէ խստանաս, փախնուիմ. ապա եթէ սպառնաս, ընկճիմ: Իսկ եթէ քննես, քարկոծիմ. ապա եթէ ուժգինս ակնարկես, սուզանիմ. եթէ ոչ անխայեսցես, մերժիմ. եթէ կոչեսցես, խիթամ. իսկ եթէ աչս յառեսցես, ամաչեմ. եթէ ձայն ոտցես, երկնչիմ: Ո՛բարեացն պարգեւ մատնեալ, վերանուիթիւնն թողեալ, զնորհն լքեալ, զուխան ցըրեալ, զաւանդն կենաց մոռացեալ, զհամարձակութեանն վատահութիւն կորուսեալ, զստեղծիչդ հէից բարկացուցեալ, զանճառութիւն հնորհին ընդոստնեալ, զպատուոյն պատկեր պղծեալ: Իսկ եթէ առ այս խեղդ մահու հեծութեան ցաւոյ մարգասիրեալ՝ առ իս ժամանեցուսցես, աչեր Յիսուս Քրիստոս զաչ դեալն գիր ընանիլ ի յիս, եթէ բժշկութիւն դադարեցուցանէ զմեղս մեծամեծս, որով ամենառատ քաղցրութեամբ պատուաստեալ ի քեզ, զբոյդ կերպարան լուսոյ նկարեալ յոգի՝ վերատին գտեալ սնդեցայց քաւեալ, և ստեղծեալ կրկին ի փրկութիւն անմահից կենացն անախտականաց. և քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԻԲ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Զի արդ զնոսա յայտնեցից, և յաղագս նոցա նշանակեցից, և վասն պրպտեաց ճառեցից, և զթքան ծածկեալս մերկացուցից, և կամ վասն որոյ խոստովանեցայց. զներկայիցս՝ զոր արդէն ունիմ, թէ զանցեալսն՝ զոր մոռեցայ. զապագայիցն՝ յորոց կասկածեմ, թէ զաղմասահ չարժուածեանցն՝ յորոց գլորեցայ, զի փոքրն ինձ համարեալ՝ որ է աստուածոյ մեծ գրեցեալ, թէ զանկերպագրելին չիշատակելի. զնուաճն՝ որ է առաւել, թէ զմեծագոյնսն՝ որ են ծանուցեալ. զի հոգեկանացն կրից կորուսչաց, թէ զմարմնականաց ախտից սպանողաց. զառ դրունս հեշտականացն, թէ զի ծայրակոտոր վնասակարութեանց. զաներեւութիցն, թէ զտեսականացն. զառձեռն հպատրութիւն, թէ զառ նոյն ինքն շունչ հեռաւորութիւն. զպայնականն դիւրին խածմունս, թէ զերկարաւորն նեռատգութիւն. զխորութեանն զանչափութիւն, թէ զամենածախն յայտնատեսիլ. զյոքնագլուխն պոռնկութիւն, թէ զառողջութեանն անբժշկութիւն. զպարարձուն չարին մարմնովս, թէ զսովլին բարւոյն հոգւովս. զնմամէն հանդիսանալ յոչ ախորժելիսն աստուածոյ, թէ զբռնադատութեանն տուամբ ձգիլն ի նոյն մոլեգնութիւն. զառ ի մահն մեղաց, թէ զընդունայնութեանն կարծեաց։

Բ. Արդարեւ որպէս կամաւ խելագար զերծեալ ի ձորձոյ, զառականացս տեսիլ յանդիմանեցի, զընդդէմ սըն գործեալ իմասանոյն, որ թէ հանճարեղքն վե-

բարկեացեն զամօթս իւրեանց, օստաբացեալս ի կրօնից, հեռացեալս ի կարգաց, ի սրբութեան անսուրբ, ի կուսութեան անմաքուր, յարդարութեան ամբարիշտ, ի բարեպաշտութեան վնասապարտ, բերանովս մերձ առ ատացողն և հեռի երկիամբք, չըթամբքս պատուամատոյց, ըստ մարգարէին, պղ ոչ եթէ սրտիւս: Ես եթէ պարտ է զքաւութենէնն ասել աստանօր, չար քան զտանջանան յանդգնութիւն, իբր զուր իմն պաշտօնատարս աստուծոյ, ի միոս անկայունս երկեակ ճանապարհաւ մահու վարանեալս՝ չանամ և ոչ ինչ օգտիմ, պնդիմ և ոչ հասանեմ, փութամ և ոչ ժամանեմ, անձկամ և ոչ տեսանեմ, փափաքեմ և ոչ հանդիպիմ, կարօտիմ և ոչ պատահիմ, ունիմ զամենայն երկրի, և եմ պատգամաւոր աղօթանուէր ամենայն աշխարհի: Այլ թող զբազումս զայսոսիկ, բարեբար, և մի ունիցիս. դիւրինք են քեզ զսոսին եղծանել, քան ինձ տաժանաւորս աղով նկարել. վասն այնորիկ զրեցի առանց խնայելոյ, զի դու առատապէս ընկերացես, օրհնեալ, որ վասն մեր մեզաւորացս երկայնամիտ անուանեցար, ըստ մաղթանաց բանի հեծութեան սրտի Նզովի երջանկի, յայժ նեղեալ անձն և ձանձրացեալ ոգի բանին յիշատակաւ, որ զսոյն պատմէ. յամենայն կրից մահացուցանողաց վտանգեալ, անկեալ ի վիհ գարշութեան մեղայ անդնդականաց ապականութեանց. քանզի չհաւատամ, թէ լսես իսկ ինձ, ըստ Յոբայ ձայնին: Արդ ես ինձէն ինքնադատով անձնադատ գերի՝ կամաւորապէս մատն եղեալ բնութեանս, արգելի փակեցի ինքեցի առ յինէն յամենայն մատանց զկենացն հնար, զի ի փրկութիւն մեղաց կապելոյս կրկին մեծացիս գովեալ:

Գ. Ես քանզի ի մարգարէէն բարձոք խրատեալ փորձ գացուք, մաղթել ընդ նմին հոգւովքս երգեալ յաւուր հատատանով ի քեզ ապաստանեալ, առէք ընդ ձեզ բանս, ասէ Ովսէէ, և դարձարուք առ տէր աստուած ձեր, և ասացէք ցնա, կարող ես թողուլ զա

մեղս. զի ընդունիցիք զաւրիս, և վայելեսցեն ՚ի բա-
րութեան անձինք ձեր: Ահա ասասած խօսեցաւ, և
ճշմ է որ ոչ լուիցէ. նոյն ինքն վկայեաց, և ճշմ է որ ոչ
հաւատասցէ: Արդ այսոքիկ վճիռ պաշտելի, նուի-
րեալ պայման, սահման նոյնագոյ, կենաց աւետիս,
կեաս աերունի, դուռն բարութեան, սփոփանաց հը-
բաւէր, ճշդիւթ պատկեր, անսպիւտ գանձ, անմոռաց
յիշատակ: Այսու առ այն և ես հաւատս ընկալեալ,
ասասուսա վկայեմ ամին՝ ընդ մարգարէին, կարող ես
յամենայնի Թողուլ զմեզանս բազմաթեղուընս. և եւս
զօրացիս կրկին բարձրացեալ՝ առ ամենաթշուառ կոչ-
ծանեալ հոգիս: Յամենայնի իշխես, ամենայնի բաւես,
ամենայն ուրեք հասանես, ամենից բռնութեանց
յաղթես, զամենայն կարծրութիւն փշրես. զամենայն
ընդդիմահար վանես, զամենայն խոստութիւն վատնես,
զամենայն սրացեալ ընդոստնես, զամենայն դառինս ա-
նուշես, զամենայն դժուարամոքելիս քաղցրացուցանես,
զամենայն զպարոս շնորհես, զամենայն յանցանս Թո-
ղուս: Կարող ես զօրաւոր, հզօր, հնարաւոր, ամենա-
րուեստ, զամենեցուն զմեզս ընկղմել և չքացուցա-
նել բառնալ ՚ի միջոց, իբր զձառանչ փոքու կայծական
սահմանեալ ՚ի չափ ոչէից՝ անկեալ ընկղմեալ կորու-
սեալ ՚ի ափերբատարածն ծովու:

Դ. Արդ բանիւ մաղթանաց վերծանողացն այսմ
մատենի, ողորմեա վասն խաչի և չարչարանաց մահու
որդւոյ քոյ, հայր գթութեան: Ակիզբն առաքողի ող-
բերգութեան ձայնի այսմ արտօսրածին նուագի, որ
զայս գեղ փրկութեան կենաց մեզ յարմարեցոյց, եղիր
յի բժշկեալ յանուն քո հզօր: Որ յեսս ելից խոստ-
վանութեան մեզ նկատեցոյց այսու պայմանաւ պատ-
շաճականաւ, լեցի անարատ յիւրոցն պարտեաց: Որ
զհպարտութեանն թեւս հարթել մեզ վարդապետեաց
՚ի սոյն կանոնի կենաց պատգամի, եղիցի զերծեալ ՚ի
չար կապանաց մահու արկածից սկզբնականաց վերջնոց
և միջնոց, Երկրորդութեամբդ բարեգործեալ, ՚ի նորո-

գուԹիւն լուսաւորուԹեան. ըստ որում և մեք գրեաց-
ցուք երջանիկ գտեալ ընդ ամին։

Ընդդիմամարտ գիւաց այս նուագ աղօԹից. և գիւաստրստուա ջերմեռանդ-
նապ ախտաւորուԹեանց Աստուծով փարատիչ։

Ե. Աղդ այսքանեցուս անբաւից հրաշից հանդերձիչ
հայր ամենասաստղծ՝ անուն ընդ ահաւոր, ձայն սարսափե-
լի, կոչումն ընտանի, բան համբուրելի, աղդումն ըն-
քանչելի, հրաման սոսկալի, էուԹիւն անքննելի, գո-
յուԹիւն անճառելի, խակուԹիւն անբաւելի, զօրու-
Թիւն անչնչելի, կամք ամենաբարի, սէրուԹիւն ան-
սահմանելի, մեծուԹիւն անչափելի, բարձրուԹիւն
անբովանդակելի, ոչքանուԹիւն անհշռելի, առաւե-
լուԹիւն անհասանելի, պատճառ որդւոյ հայրու-
Թեամբ, այլ ոչ նախադրուԹեամբ. քեզ և ի ձեռն
քոյդ անպարագիր զօրուԹեանդ սաստեա տագնապող
և դիւական սենդիս ջերմուԹեան, որ սպրդեալ մու-
ծաւ ընդ մեզաց, զի փախիցէ ի մարդոյս՝ զարհու-
րեալ ի սիրալի և յանբաւելի արեան վառվի գառինդ
երկնաւորի, որով սրակեալ միանգամ ի մշանջենաւորս
համայն մաքրեցաք։

Զ. Նա արդ յայսց պատկառելի խոնարհուԹենէ ա-
բարչակերտս խորհրդոյ, ամաչեացէ սատանայ ի գործս
չարեաց իւրոցն հրեշտակաց, տանջեացի և հալածեացի
հեռացեալ և արտաքս առաքեալ ի չինուածոյ խորանէ
քումդ բնակուԹեան յարտաքին խաւարն։ Նա ջնջեալ
մաքրեա զարտաստուս ողբոցս ի դիմաց մերոց, և զհա-
ռաչումն ձայնիս հեծուԹեան ի սրտից մերոց։ Նա
յիշատակաւ հարման հեղուսիցն քաւծնափուշ տաժա-
նատեսիլ ոգեպահանջից, որով պնդեցաւ միածինդ քո
յաշտարակ խաչին, յաւետից չարին։ Նա ի կողահերձ
սայրատուր սլաքէ ուժգին բախմանէ, որով զվէրն մեծ
ընկալաւ, ի սպառ սատակեացի սկզբնարար մահուն։
Նա զի խոնարհեցոյց զգովեանն գլուխ յաւանդել զոգին

ի ծոց քո բարձրեալ, ապաստամբութիւն անքաւի բա-
րուցին Ելելիտայ ի կոր կործանեսցի, ամենայնիւ հեր-
քեալ ի կորուստ : Եւ զի զօրեալ ծածկեցաւ անմահն
իսկութիւն յօրովայնի երկրի, այսու ամբարձեալն հր-
պարտութիւն կարծեալ գոռոզին ի յատակս մահու
գժոխոց մերին ստուերին յառեալ դիտեսցէ. և յիշեա-
ցէ զառաջին հարուածն անբժշկական, որով մահացաւ
դիմամարտութիւն թիւնից վիշապին կենարարն կրիւք
ամենազօրին : Ալ զի ի փառս քո, հայր ողորմու-
թեան, իբր ի գովեստ որդւոյ քո հոգեւոր սրբով
պայս խոստովանիմ. քանզի ոչ պիտակ ինչ սուրբ
թեանն ունի զմիւսումն առ մի խորհրդականն խորու-
ղեան, այլ զանակնկալն բանդ անձնաւար ընդ անժա-
մանակ հօր փառաւորեմք : Եւ քեզ միայնոյ սուրբ
Երրորդութեանդ, հաւատարապահիս աէրութեանդ,
համաքաւն անբաժին իշխանութեանդ՝ օրհնաբանու-
թիւն, գոհութիւն, զօրեղութիւն և անճառ վայել-
չութիւն մեծութեան, բարեվճակ հարթութեան,
զուգակշիռ հաւատարութեան յաւիտեանս. ամէն :

ՐԱՆ ԻԹ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԱԾՈՅ

Ա. Եւ արդ զոր միայն սկիզբն բարեաց, զթու-
թիւն անճառ, որդի բարձրեալ միոյդ աստուածոյ, որ
զղջալն զօրն Թողութեան ցուցեր փրկարար, և ոչ
կորառեան դառապարտարար, յեղանակեալ ինձ զա-
ւուրըն չար առ մեծ աւետիս ակնկալութեան : Ժիժիկ
ախտացեալս, հովիւ մոլորեալ ոչխարիս, աէր ապա-
ւինեալ ծառայիս, գինի անապակ մեծ տրտմեցեալս,

սպեղանեաց դեղ վիրաւորեցելոյս, աղաւտուԹիւն մեղաց դրաւելոյս, օրհնուԹիւն բարեաց մերժելոյս, կնիք շնորհաց խոտելոյս, օծուածն կոչման կապաելոյս, կանգնուածն վերատին կործանեցելոյս, պատսպարան հզօր զլորեցելոյս, օժանդակ վեհ գայԹակղեցելոյս, դուռն բարձրուԹեան տարակուսելոյս, սանդուխք երանուԹեան եղկելոյս, ճանապարհ չաւղաց մոլորելոյս, Թագաւոր ներող պարտելոյս, քաղցր յուսադրուԹիւն լքելոյս, ձեռնկալ կենաց հեղքելոյս, մեծդ միայն և ամենատես, որ զլինուԹիւն բարեաց սահմանեալ հեղուս անչափ յաճախուԹեամբ քան զոր խնդրեմք և խմանամք, ըստ Պօղոսի գոհաբանուԹեանն։ Քանզի ինձնուց յընկից և Թուոց երից և չորեակ տասանց ՚ի վաղորդայնէ տունջեանն առ մուտս արեւուն, անդուստ առ նմին յաւէտ կարկառմամբ խակ և խակ ՚ի սոյն անարգել սրտիւ, ՚ի վեր է քան զաղերսանաց ակնկալուԹիւն մարդկան, բարեգործել միմեանց շնորհատորուԹիւն. խակ առ խմն ԹշուառուԹեան և անարգուԹեան զքոյդ եղեալ փառս, ամենակարող զօրուԹիւն ահեղ, բազմից աստուած, օրհնեալ աեր Քրիստոս, որովք սահմանեացն կշռուԹեամբ չափոյ հաստողիդ ընդ հողոյս հաւասարուԹիւն կցորդեալ։ Քանզի միաս յայսոսիկ անբաւ և անհետազօտելի, ամենեւեին բարի անման բարիուԹեան խաւարի, ուստի յայժ նուազ են քումմ մեծուԹեան աստեղացն Թիւք, զորս գոյացուցեալ յոչեից յորջորջմամբ անուանց կնքեցեր, և կամ հիւԹ երկրի՝ ՚ի յօգս հեղեալ, զոր ՚ի չգոյից հաստեալ տարածումն յատակի կառուցեր, քան ինձ նախագրեալ համարդ սակաւուԹեան, որովք քեզ նըմանիլ վարդապետեցեր։

Բ. Ընդ ծածկեցաւ և ընկղմեցաւ ՚ի քոյդ լոյս կամայ երկայնմտուԹեան՝ հանուրց չարուԹիւն, իբր գոյն մնալ ՚ի տապ արեւուս, և որպէս աստուստ խակ կիրք բնուԹեանց զհաստարակաց բարուց ցուցանէ։ Քանզի ով ոք ՚ի մարդկանէ մեզաս, և ոչ զղջացաւ,

ով ոք զաղթացաւ, և ոչ ամաչեաց. ով ոք գարշեցաւ, և ոչ պատկառեաց. ով ոք սխալեաց, և ոչ ապաշաւեաց. ով ոք կործանեցաւ, և ոչ հեծեծեաց. ով ոք գայթագղեցաւ, և ոչ սարչացաւ. ով ոք պարտեցաւ, և ոչ ինքեամբ ըմբերանեցաւ. ով ոք պատրեցաւ, և ոչ յոգւոց ելաւ. ով ոք ճաշակեաց լեզի, և ոչ դառնացաւ. ով ոք անկաւ ՚ի բարձրութենէ, և ոչ ընդոստեաւ. ով ոք կորոյս մեծութիւն, և ոչ աչխարեաց. ով ոք զրկեցաւ յերանութենէ, և ոչ ելաց. ով ոք կապտեցաւ ՚ի շնորհէ փառաց, և ոչ ոզբաց. ով ոք գտաւ ինքեան միսսակար, և ոչ սգաստաւ. ով ոք մերժեցաւ յերեսաց աստուծոյ, և ոչ հառաչեաց. ով ոք լսաւ պատուհասն սպառնալեան, և ոչ սոսկացաւ. ով ոք ընդ մի չարեացն՝ հազարս չաւաղեաց. ով ոք մերկացեալ յաւուրս ձմերայնոյ, և ոչ զգեաց. ով ոք անօրինեցաւ, և ոչ քարամբք զինան կոծեաց. ով ոք եաես զաորուկն յիւրում մեծութեան, և ոչ զկնճեցաւ. ով ոք կատաբեաց չարիս, և ոչ զինքն իսկ նզովեաց. ով ոք ախտացաւ, և ոչ զանձն դարմանեաց. ով ոք յամօթալեացն գործեաց, և ոչ զիւրն մարմին ձաղեաց. ով ոք ՚ի պատկառելիսն հպեցաւ, և ոչ զբուն իւր անիծեաց. ով ոք զգործեցեալսն յիշեաց, և ոչ տապացաւ. ով ոք զգաղտնիսն մտաբերեաց, և ոչ խորովեցաւ. ով ոք զծածուկսն նկատեաց, և ոչ մահ կորստեան խնդրեաց. ով ոք զաներեւոյթսն կերպաւորեաց, և ոչ կրկին յերկիր կորացաւ. ով ոք ընդ մեզացն հեշտութեան բոց անշէջ հնոցի ոչ խառնեաց. ով ոք զինաւորեալսն բնութեանն, և ոչ պատակեցաւ. ով ոք ըզկամաւ ներգործեալսն, և ոչ սատակման ինքեան զբեաց. ով ոք զանձաւելիսն, և ոչ խռովեցաւ. ով ոք զանկրելիսն էութեանն, և ոչ թախծեցաւ. ով ոք զմեծամեծսն, և ոչ մաշեցաւ. ով ոք զանքծութեանն ապականարարսն, և ոչ տոչորեցաւ. ով ոք զտարագրութեանն պատճառ յանցմունս, և ոչ տագնապեցաւ. ով ոք զերեսացն աղտեղի տեսիլ, և ոչ բարկութեան

վերնոյն զանձն պարտ վարկաւ. ով որ զմի ի կարեւոր
բոցն մեղաց յաչս կերպացոյց, և ոչ զինուք մահու
խոցեցաւ. ով որ զհոգեառաւականացն, և ոչ վայս վհա-
տութեան ընդ հեծութիւնս ձայնին հիւսեաց. ով որ
յարքայական գահոյիցն անանկացաւ, և ոչ կարկա-
ռել ի վայր գըրեցաւ. ով որ ընդ պսակին պերճու-
թեան հող ի գլուխ եղեալ, և ոչ կրկին չարչարեալ
յոգի մահացաւ. ով որ ընդ պայծառ պատմուճանին
քրձազգած եղեալ, և ոչ տխրեցաւ: Ով որ զկեանս
իւր կորոյս, և ոչ արեան արտասուս երկնեաց. ով որ
ընդ արկանելոյ լուծոյ խաւար ղժեցաւ, և ոչ նուա-
զեցաւ. ով որ ի վերոյ սգոյ սիրելոյ ոչ թառամեցաւ:
Ահա այս կերպարանք ճշդութագոյնք պարտաւորիս յան-
դիմանութեան, տխուր դէմ, քաղեալ ճաճանչ, յա-
մաքեալ խնամատութիւն, երկնացեալ շուրթն, անշը-
քեալ տիպ, տրամեցեալ ոգի, պղպղեալ ձայն, կըրկ-
նեալ պարանոց: Այլ զի թէ որ զկսկութիւնն խակ նը-
շանակեացէ, ոչ անօրինէ, անամբարտաւան միտ, անհը-
պարտ սիրտ, անխնդրող պարգեւի թշուառ, անա-
ղերսալի պատքեալ, ինքնակշտամբելի դէպերեալ, իրա-
ւամբք սուգեալ, արդարալուկ քաղցեալ, պատշաճա-
դատ հարուածեալ, ինքնավկայ մահապարտեալ, ար-
ժանապէս հանեալ, անձնանէծ եղկելի: Այլ զայս
թարգմանեալ յուշանէ արդարագործ վարիսեցին կըշ-
տամբեալ, և մեղապարտ մնքատուրն բարեհամբա-
ւեալ:

Գ. Այլ արդ եթէ զչարիսն՝ հնարաւորութիւն բան-
սարկուին գտողին զմեզ գայթագղեալս, զիւրան ի
մեզ սերմանիս առ օրն համարեսցի, զիա՞րդ ոչ զչարի-
սըն անկեալս ի մեզ հոգւոյ արութիւնս ի խնամակա-
լութենէ կամայ կեցուցչիդ օնեւօն գրեսցես, սէր
բարեգործութ, հզօր և յաղթող, քաւիչ մեղուցելոց, կա-
րող յամենայնի առ ամենայն փրկութիւն: Եթէ զան-
դունդս առ երկինս փոխես, և կամ զիաւար միջու-
թեան ի լոյս հատատես, եթէ զպատնութիւն լեզուդ

ի մանանայի քաղցրութիւն կազմես, և կամ զկոճ սատկութեան վշտաց ի պարս դասս բերկրութեան հարսանեաց կարգես, դիւրինք և հնարաւորք են քեզ այսոքիկ, և եւս քան զսոսին բաւես առ նոսին սիրբեալ համայնից ահաւորապես. և քեզ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ Լ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ՍՈ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱԱՏՈՒԾՈՑ

Ա. Լե՛ւ արդ ճշմարտեացի բան քո, ողորմած բոլորից ատուած, ներող և օրհնեալ, ի բազմագթեղին դարձաւորութիւն աւուրն պատկերի զղջման մեզառորին. թէ և առ յետին իսկ չունչն լոկ բնորութիւն, և կամ ի մէջ չարութեանն փոխադրութիւն։ Ապեռանդ զի դժնեաց կցորդս այս անձնիշխանական՝ միշտ մարսիկ, խաբող շղագրոլթ, յարեալ ի ատութիւն, ըստ առաքելին արածող հողմոց, դժուարաւնելի հաստողին փախչող, գերեալ որսողին մոլեկան մարմնոյս, ներհակ անկակից, յոգնապատճառեան ամենավարան, զոր քո է գիտել զբանեացն յաճախութիւն. Լե՛ւ զկնի մեզաներացն, ողորմագինս լիս ողբարկութիւնս վհատականս տաժանականօս բազմաւաղելիս, քո առաջի սէր գթարկութիւնս գրեալս արտասուօք, թառանչս թշուառութեանց կարգելոց անբաւս չար վտանգիս մեզս ապնապ պատկառեցեալն։

Բ. Լե՛ւ զի մի կրկնաբանութիւնս ի չահսօսութիւն կրթեսցի, առաւել քան զսոյն այսու ողբալն, քանզի ոչ երբէք համարձակի խնդրել իւր զղջայութիւն, այլ զտանջանացն թեթեւութիւն. ոչ ընդ կենդա-

նեացն ’ի լոյս, քան թէ ընդ գերեզմանականացն զգա-
յական շնչովն ’ի խաւար. ոչ ընդ ամբարձեալսն, այլ
ընդ բեկեալսն և ընդ խորտակեալսն: Ի հանգստեան
իւրում վաստակեալ, ’ի խրախուճեան ինքեան սրտա-
մեցեալ. դիմօք ժպտեալ, և մտօք խոցեալ. կէտ ’ի
ծաղը, և աչք ’ի յողբումն. երեսք զափսիանս ձեւա-
ցուցանէ, և արտասուքն զդառնութիւն սրտին ճըշ-
մարտէ: Ի մզտանակք երկու յերկսին ձեռին, մինն ա-
բեամբ և միւսն կաթամբ. երկու բուրանոցք կայ-
ծակնաւորք, մինն խնկով և միւսն ձենձերիւ. սկա-
ւառակք կրկին կրաւորականք համոյ, մինն քաղցու և
միւսն դառնութեամբ. բաժակք զոյգ առ երկուս
բերմունս, մինն արտօսր և միւսն ծծումբ. տաշտք
կրեցեալք ’ի ծայրս մատանց, մինն գինի և միւսն լե-
զի. դրունք տեսանելեաց ներհակաց, մինն ’ի լոյս և
միւսն ’ի վերապումն. խանութք հալածականաց հակա-
ռակութեանց, մինն արծարծէ և միւսն շիջուցանէ.
հայեցուածք դիմաց երկուց, մինն դոյզն ուղղանօք և
միւսն անանխասելի բարկութեամբ. համբարձումն եր-
կակի բաղկաց, ումն ’ի հարուածս և ումն ’ի մերժումն.
դէմք կրկնակի կերպիւ, մինն տխրեալ և միւսն ցա-
սուցեալ. կշտամբանք ընդ միոյ երկու, մինն ատելացս
և միւսն սպառնեացն. սպառնութիւնք կարծողա-
կանք, մինն գոնէ և միւսն թերեւս. ’ի մի բերան
երկակի բարբառ, մինն եղկութիւն և միւսն խռո-
վութիւն. երկուս աղտմունս ’ի միում սրտի, մինն կե-
ղակարծ յուսոյ և միւսն ճշգրիտ կորստեան. ամպ լըր-
թագոյն ահագնատեսիլ կրկին տեղայմանց, մինն նեաս
և միւսն քարինս. որոտումն ահեղ երկոցունց բեր-
մանց, մինն կարկուտ և միւսն հրացան. ցոյգ ցաւա-
գին երկուց վտանգից, մինն լալոյ և միւսն մահու.
առաւօտ սգոյ երկուց բողոքմանց, մինն սաստից և
միւսն սպառնալեաց. արեգակունք երկու ’ի յերկուց
ծայրից, մինն խաւարի և միւսն կիզման:

Գ. ՅԹէ հարուածոց աչ կառուցանի, ինքեան վար-

կանի. և թէ ձեռն պարզեւաձիր, ոչ իւր աչն ունի։ Ի պարծանս ուրուք կրանայ, յամբարձումն գլխոյ ընկճի, ի չարեացն յիշատակ հեծէ, ի ճառս մաքրոց պատկառէ, ի պատմութիւնս հանդերձելոցն երերի։ Եթէ օրհնի յումեքէ յայտնի, ի ծածուկ զանձն անիծանէ. եթէ գովեսս յումեքէ լսէ, պարսաւանօք զինքն կշտամբէ. եթէ դարովեսցի սաստկապէս, ինքեամբ ինքեան վիպէ. եթէ ձաղեսցի ուժգին, սակաւ հատուցումն առաւել պարտուցն գրեսցէ, եթէ ըղձումն մահու ինքեան լսիցէ, այս ասէ, և դարձեալ կրկնէ. և եթէ որոգայթ մահու ճայթեսցէ յերինէ, հաղիւ ըզդէմն համբառնայցէ։ Ո՛չ իւրոց իրաւանցն մատեան խփեալ, զպատասխանութեանն յոյս լքուցեալ, զհամարձակութեանն ընթացս փակեալ։ Այլ եթէ ոչ էր անփրկանաւոր կորուսս գերելոյն, զիւրովին երթալ ոչ ինչ դանգաղէր։ Այդպարեւ վայ մեղաւորին՝ որ առ բակուսեալ կայցէ ի վերայ երկուց ճանապարհաց, ըստ հոգելից բանի իմաստնոյն։

Դ. Այլ արդ զինքդ ոչ ողորմեսցիս, բարեգութ, այսքանեաւցս ձայնարկութեանդ կողկողագին հեծեծանաց, որ անուամբս այսու մեծացար, թէ ողորմած եմ ես տէր։ Այդ առ չարութիւն գերելոյս բարութիւն քո, առ մահապարտիս գառնութիւն քաղցրութիւն քո, առ կորուսելոյս յայտնութիւնս ճառագայթ քո, առ յանգիմանելոյս մոլութիւն ողորմութիւն քո, առ խակութիւն վնասակարիս հեզութիւն քո, առ կործանելոյս այցելութիւն ազ քո, առ ընկղմելոյս վերբերութիւն ձեռն քո, առ բժշկութիւն անողջանալի խոցուածոյս մատն քո, առ պակուցելոյս պաշտպանութիւն ոգի քո, առ ապականաւորիս իմ վառահութիւն երկայնմտութիւն քո, առ օծումն ամենադժնէից զօրութիւն քո, առ մեղաւորիս քաւութիւն հրամանքո, առ վախուցելոյս ապաւինութիւն ոտք քո, առ սրացելոյս պատապարութիւն բազուկ քո, առ վըխակելոյս առաջնորդութիւն լոյս քո, առ տարակուսելոյս

հնարաւորութիւն հանճար քո, առ անիծելոյս կրկին սուգս ու օրհնութիւն քո, առ վհատելոյս քաջալերութիւն իրախոյս քո, առ վշտագնելոյս միխիթարութիւն բաժակ քո, առ նեղելոյս ընդարձակութիւն կամք քո, առ ատելոյս կոչումն սէր քո, առ հաստատմըն սասանեցելոյս բան քո, առ հոգւով վիրաւորելոյս կաթուած արեան քո, առ աներեւոյթ միերս ցաւոց ակնարկութիւն քո, առ յուսահատելոյս անդրէն ընտրութիւն իշխանութիւն քո, առ պատուաստումն կրօնրեցելոյս կարդութիւն քո, առ խաւարաւ մահու ծածկելոյս նշոյլ կենաց քոց, առ խռովեցելոյս իմ հանդարտութիւն խաղաղութիւն քո, առ վայրագութիւն օտարացելոյս ողջոյն քո, առ մոլորելոյս դարձաւորութիւն ձայն քո։ Օ՜ի դու տիրես ամենայնի գթութեամբ, և ընդ ի քեզ մանն ինչ խաւարի. և ոչ է բարութիւն առանց քո, և քեզ վայելէ փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ԼԱ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՒԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՅՏՈՒԾՈՑ

Ա. Եւ արդ քանզի բազմացուցի պայմանաւ բանիս զաղէտ տագնապի հեծութեան ձայնիս մեծ հառաչանացս անսփոփելի խմոյս վառնգի. զի դու ողորմած ակընհայարդ խոստովանութեան անյայտ ծածկութիւդ արդի աստուածոյ կենդանւոյ աչեր Յիսուս Քրիստոս, քաղցրութեամբ նայեցիս քաւել։ Արդարեւ կարող ես, ճշմարտապէս բաւական ես, եթէ կամիս՝ հնազօրութեամբ ես. կամիս առաւելապէս, որպէս և կարես։ Ապրստանաս մեծապէս ընդ տալն քան եթէ ընդ առ-

նուքն, բազմանան քեզ գանձք ի ցրուելն քան ի ժողովելն, յաճախեն առացուածք քո ի սփռելն քան ի ճըշդելն, կուտին քեզ համբարք ի տարածանելն քան ի շտեմարանելն։ Հաւատամ այսմ ամենայնի՝ գտանել քեւ ելք փրկութեան. հաւատամ անարգս ընդ պատուականին, յուսամ ընդ Աբրահամու և ընդ Աննայի. դի միւնն բանիդ քո հաւատոյ և միւսն քահանայապետին բարբառոյ անսաց։ Ոչ ասն որոյ և ոմն ի խորին ծերութեան անհամար որդւոց հայր հաստատեցաւ, զառանցեալն և զամուլն արգանդ Սառայի՝ անդաստան պտղածին արդեան օրհնութեան բաղում ժողովրդոց մարգարէից սրբոց և Թագաւորաց ընտրելոց հայել յուսացաւ։ Իսկ միւսն զանհանդերձելի երկիր որովայնին սենեկի եօթնեակ զաւակօք բարգաւաճեցոյց, որ է թիւ մի անբաւութեան զննան նշանակելոյ զէութիւն, աստուածութեանն յատակայութեան սահման անհետազօտելի, և աւազանին նորածին որդւոց անհատ յորդութիւն։ Այս թիւ պանծալի, որում ոչ է կէտ կորդի և ոչ սպառուած վախճանի, այլ կոյս ոմն է ուրոյն ընտրութեամբ նուիրեալ յաւէտ անձառ վիճակաւ համայն յաւիտենից, դժուարաթարգմանելի մերոց իմաստից։

Բ. Արդ համարեա յարդարութիւն անյուսալի փրկութեան հոգւոյս զամենաւլորան ձայն կողկողանաց սրտիս հեծութեան, ընդ նախադրելոցն երջանկաց եդեալ և դասեալ զայս դաւանութիւն փոքր հաւատոյ իմոյ խնդրուածոց. դի կեցից և ես առ Նոքօք բերկրեալ ընդ նոսին, բուռն հարեալ քան զնմոյ գործոյդ զքոյդ ընտրեալ։ Անաւանդ զի կրկին բարձունք են և փառաւորք և քան զչափ կշռութեան բանի գերագոյնք, իմումս խառնութեան հաշտարանք և հզօրագոյն քաւարանք, և կարծեաց Թերութեան մոտաց սլացեալք. ընդ արեան քո ահաւորի և ըստ մարմնոյ ծնողդ քո խնկելի. պարք առաքելոցն, դասք մարգարէիցն, գունդք մարտիրոսացն՝ ձիաւորեալքն

հետեւակ սպառազէն արիւնթեամբ մերկամարտիւն մրցութեամբ, գումարք միանձանց, բոլք բանակաւնայ ընտրելոց, ժողովք բարեկրօնից, հոլք հոգեղենայ յերկրէ երկնաւորայ, պնուորութիւնք վերնակաւնայ ընդ մեզ կցորդելոյ, աւանդք երախայրեաց, մասունսնք զուարակաց, լուսնսնք զամբարայ, բուրմունք խնկոց իւղոց հանդերձանաւք, յաղթանակք փրկական նշանաց, կառուցմունք խորանաց աստուածաբնակաց, ձեռք քահանայից ընտրհիւ կատարելոց: Որ չարժուին անձին յիշատակ աստուծոյ, առ փոփոխումն գարշապարի, առ կարկառումն աչոյ և ամբարձումն բազկի, առ բարիս գոհութիւն, և առ գթել աղաչանք, առ բանս ընտանիս, առ խօսս հատարակայ, առ ձայնս բնաւորականս, առ գործոց յաջողուածս, առ առաքինութեան ջերմութիւնս, որ 'ի տունկեան և 'ի գիշերի՝ ընթացմունս սպասակարաց հոգեւորայ՝ քեւ առաջնորդեալք. 'ի նկրտել և 'ի զարթնուլ, 'ի պատերազմի ազգաց, 'ի մարտս դիւաց, 'ի հակառակութիւնս հերձուածողաց, առ փոքունս, առ մեծամեծս, առ ձգումն ըմպելեաց և ճաշակումն կերակրոց և որ ինչ միանգամ 'ի կիրս մեր կերպանան, եթէ հեշտականս եթէ տատամնելիս. վասն ոմանց աղօթս՝ մնալ 'ի նոսին, և յաղագս ոմանց՝ զի զերծ արասցես աքանչելապէս հնարիւք անճառիւք. հաւատացեալ յամենեցունց, թէ բաւական ես յամենայնի, կամենալոյ հասանել, ուր պատանեայ, մատչ վայրենեաց, ընդ տամբակաց գոռոզաց. մինչ զի առ թատերս տեսարանաց, և առ կոյս խառնիճաղանձ բազմութեանց, և կամ առ կաքաւս կայթից անախորժականաց կամաց հղծրիդ՝ ոչ ես մոռացեալ:

Գ. Արդ դու տուցեր զամենեսեան, և քո են ամենեքեան, և ողորմեսցիս ամենեցուն՝ միայն բարեգութ. զի թէ և մեղիցեն, քո են. վասն զի 'ի քում համարի են. քանզի գիտեն զչքնութիւն քո, ըստ առաքողին մաղթանաց: Որում և ես կցորդիմ թշուառս բանիս

վկայեալ սորին յանցաւորապէս. յանդգնիմ ասել, թէ որ կարդայ զքեզ գովեսիս, ծանուցեալ զքեզ թէ իցես, թէ և եօթեամբք իցէ վարակեալ կրկնապատիկ պատժաւորութեամբ, առ այս օրինակ կիրթ ձեռնարկութեան, զնոյդ ոչ քո իցէ: Յորս է տեսանել ի մէջ արջնատես ագռաւուց՝ սպիտականիշ երամն աղաւնեաց, ի մէջ խրոխտականաց ձիոց անմաքրից՝ որոյս հանդարտաբարս, ի թիւս շանց գաղանականաց գառնիս նուիրելիս, հեզութիւն ի խստութեան, կատարելութիւն ի թերութեան, խոնարհութիւն յամպարհաւաճութեան, ճշմարտութիւն ի ստութեան, միամտութիւն ի մանկութեան, անբծութիւն յայլամոութեան, բարօրութիւն ի չարութեան, պարկեշտութիւն ի լկտութեան, ողորմութիւն յանգթութեան, ապաշաւանք յանյուսութեան, քաղցրութիւն ի բարկութեան, հաշտութիւն ի թշնամութեան, անոխութիւն ի խածանողութեան, քաջալերութիւն ի լկութեան, օրհնութիւն ի նեռաձգութեան: Յոր ոչ բաւականացայ երբէք ի գատել ճշդրտապէս, թէ ով յերկրածնայ առաւ կանխեսցէ ժառանգել զքեզ, որ միայն անաչառաբար կշռամբեաս իրաւամբք զարդարութիւն՝ առ ամպարիշտ մաքուրն և առ պոռնիկ զղջացեալն. առ ամենեսեան բարեգործ՝ միայն թագաւոր օրհնեալ ի բարձունս և յամենայն յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ Լ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՅ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՅ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՅՏՈՒԾՈՅ

Ա. Ով արդ ես յեանեալս ի նախադրութեանց արժանաւորաց գրեալ լինէին ընդ պարտաւորան պատժոց, հայցեմ զողորմութիւն ընդ ամենեցուն մաղթանաց. ընդ նկուն և անհամարձակս, ընդ ակարան և փոքրոկուն, ընդ ընկճեցիկն և արհամարհեալս, ընդ տապրեալն և առ քեզ դարձեալս, ընդ երկուացեալն և ճչմարտեալս, ընդ կործանեալն և յարուցեալս, ընդ ընկճեալն և հաստատեալս, ընդ գլորեալն և կանգնեցեալս, ընդ մերժեալն և ընկալեալս, ընդ ատեցեալսն և կոչեցեալս, ընդ ապշեալն և զգաստացեալս, ընդ անառակեալն և զսպեալս, ընդ հեռացեալն և մերձեցեալս, ընդ հեղքեալն և սրբեցեալս, ընդ պատկառեալն և զուարթացեալս, ընդ ամաչեցեալն և խնդամտեալս։ Այլ ես պատմեմ աստանօր դարձեալ՝ ոչ զմեզն Երուսաղէմի, ըստ մարգարէին հրամանաւ Աստուծոյ որ առ ժողովուրդն նախնի, և կամ տանն Յակոբու զանօրէնութիւնս նորա, այլ խնայս ժամանեցիկ յայսոսիկ ատեանս. քանզի աւաղ ընդ աղէտս մահու յաբելով ըստ մարգարէին, յանդիմանեցից զիս ինքն ինձէն իմովս ձայնիւս ըստ սաղմոսողին. որպէս զի յանձնառաքան յայսմ համայնապատում խոստովանութենէ ոչ կարօտացեալ կրկնակին, միանգամայն ի սպառ սրբեցայց օրհնեալ հրամանաւ Էից։

Բ. Ով արդ կրկնելով ծունր բարեբարիդ քաղցրութեան, տարածեալ զանձն իմ առաջի, զի մահ գլորմանն ցուցից կերպարան. որ ի հող խոնարհեալ մա-

ծայ ընդ երկրի, և ընդ անցաւորս այս կենցաղ կորըս-
տեան՝ անանական գեհենաքարշութեան սողնոյ սա-
հեցմամբ՝ կամօք բեւեռեցայ։ Ա՛յլ ի քեզ տէր յե-
ցեալ՝ իբր ի հաստատան կենաց գաւազան ի յարմա-
տոյն Դաւթի ընծիւղեալ մարմնով անճառ շաղկապ-
մամբ յանեղ աստուածութիւնդ, կանգնեցայց անդրէն
կիսայարք՝ պատկառեալ ի քոյդ երախտեաց ի վայր կո-
րացեալ դիմօք, աչք ի բարձունս յառեալ ողորմագին
տեսութեամբ ի քեզ մերձդ ի հեծութիւն, բնաւին
ողորմութիւն, բոլորովին քաղցրութիւն, զլիճ լուսոյս
արտասուօք լցեալ՝ պաղատանս յուսոյ առաջի մեծիդ
վերընծայեցից։ Ո՛չ ամենառատ աննուազ երկայնմբ-
տութեամբ՝ քո դառնացուցչիս, միայն դու ի յամե-
նայնի սահման փրկութեան, աստուած բոլորից, ան-
ճառ մեծութիւն, անքովանդակելի բնութիւն, ան-
քննելի խակութիւն, հզօր զօրութիւն, կարող բարե-
բարութիւն, անպակաս լուսութիւն, անճառ ժառանգ-
գութիւն, վայելչական վիճակ, առատ պատրաստու-
թիւն, անստուեր խնամատութիւն, տենչալի տուրք,
անձկալի ձիր, բաղձալի բերկրութիւն, անախտ ու-
հանգիստ, անտարակոյս գիտ, անկասկած կեանք,
անճախելի ստացուած, անփոխանորդելի բարձրու-
թիւն, ամենարուեստ բժիշկ, անսասանելի հաստատու-
թիւն, դարձուցիչ մոլորելոց, գտիչ կորուսելոց, յոյս ապա-
էինելոց, լոյս խաւարելոց, քաւիչ մեղուցելոց, ծած-
կարանդ փախուցելոց, անդորրիչ խռովեցեալց, փրկու-
թիւնդ մահացելոց, արձակիչդ կապելոց, ազատիչդ
մատնելոց. պատսպարանդ սահեցելոց, վերակիցդ գայ-
թագղեցելոց, երկայնմտութիւն տարակուսելոց, լու-
սոյ տեսակ, ցնծութեան ցոյցք, օրհնութեան անձ-
րեւ, հոգի երեսաց, զօրութիւն դիմաց, հովանի
դէմոյ, շարժարան շրթանց, աղդումն բանի, կառա-
վար անձին, բարձումն բազկի, ձգումն ձեռին, երաստ
նակատդ սրտի, ընտանի անուն, մերձաւոր ձայն, կցոր-
դութիւն հարազատ, խնամածութիւն հայրենի, խոս-

տովանեալ անուն, պաշտեցեալ պատկեր, անպարագիր
ախպ, երկրպագեալ տէրութիւն, բարեբանեալ յիշա-
տակ, խնդութեան մուտք, անվհատ շահիլ, փառաց
դուռն, ճշմարտութեան ճանապարհ, երկնաճեմ սանդ
դուղք: Ընդ այլ բազմութիւն բանից գովեստից անդ
համար կարգաց և տանց անբաւից, զոր ոչ բերէ բե-
րան երկրածին, և ոչ տանի գործի մարմնեղէն, և ոչ
կշռեն իղձք հոգեղէնք:

Գ. Ընդ քեզ հայի ամենայն ակն տեսողի, աստուածդ
ամենայնի. նայեա՛ ի պաղատանս հառաչման ձայնի
քոյոց ծառայից, և եթէ յաղաղակեցա՛ ոք աղաչեսցէ:
Ընդ ընկալ զյօղ ողբերգութեան լալոյ արտասուաց ա-
չացս ցանկասիրի՛ յանարատ ոտս մարդեղութեան քո,
Քրիստոս, և օրինակաւ խորհրդոյ հերացդ կնոջն յան-
ցաւորի՛ զառ քեզ դարձն և ղդատաստութիւն, և համ
բուրիս չքմեղացս առ ճաշակ փրկութեան կենացդ հա-
ղորդութեան՝ համաշնչապէս զանքակ միութիւն. և
զնոյն գթութիւն նորին ողորմութեամբ ընկալեալ ի
քէն, բարերար, գրաւականեսցես զմեծդ պարգեւ ընդ
փոքու հաւատոյս. և ի ձեռն գթութեան սիրոյ քոյ
առ քո անձկալի անուննդ խոստովանեալ ծառայիս,
դարձցին ձմերուկք հոգւոյն խոստութեան ի յօդ հան-
դարտութեան, և մրրկին սաստկութիւն ի սիկ ախոր-
ժութեան, և կարծիք երկիւղին ի մեծ վստահութիւն,
և պատուհաս պատժոյն յերանութեան պատահումն,
և վանգք թախծանացն ի հոգեւոր խրախճանութիւն,
և ալեկոծութիւն ծփանացն ի խոր խաղաղութիւն,
և զեկայն թեւարկմունք յանքոյթ նաւահանգիստն,
և բերք բեռանցս մեղաց վտխարկեսցի ի թոշակ շնոր-
հաց: Ընդ յայսքանեսցս ամենից բիւրուց բարութեան
ցըս ի քէն եղելոց՝ մեծասցի անուն հզօրիդ խնկեալ
և խոստովանեալ, ամաչեսցէ բանասարկուն չարեաց՝
հերքեալ և հալածեցեալ, ունայնասցին մուրհակք
մեղացս, խղեսցին հաղբքն, որոշեսցին որոգայթքն,
կապտեսցին կապանքն, վանեսցի վիհն, վերասցին վը-

նապքըն, պարսեսցին պատրանքն, ջրեսցին մեղքն, պատառեսցին պարանքն, խորտակեսցի լուծն, քակեսցին քեղքն: Նա ընդ մեայլ միջոցեան չարեացն յանցանաց և դիւացն բանակաց պաշարողաց՝ արեւ փառաց քոց ժամանեսցէ կեցուցանել փրկել և լուսաւորել, յաջմէ և յահեկէ, ՚ի դիմաց և ՚ի թիկանց. և եղիցի նշոյլ առաւօտու հոգւոյ գարնայնոյ ընդ ակընկալութեան սպասողացն քումդ երեւման: Օ՛ի դու ես բարերար առ ամենեսին, և հնարաւոր են քեզ ամենայնք. և ամենեցուն ղկեանն կամիս և զփրկութիւնն բաղձաս:

Դ. Ով ամենապարգեւ ձեռն Յիսուսի Քրիստոսի, և առ խս դարձեալս կարկառմամբ ընդարմի աջոյդ քոյ սրբոյ բնակեալ միացեալ, և ոչ հեռացեալ յանձկութեան սրտէ սիրոյ սենեկիս. և անեղծական քո նկարագիր՝ նշխար պանծալի լուսոյ քրիստոնէական փրկաւէտ կոչմանն՝ ընդ խս պահեսցի, միջնորդեալ ընդ քեզ ՚ի մատեան յաւիտեան կատարած կենաց հոգւոյդ ա ւետեաց երկնից յօրինողիդ: Նա քեզ միայնոյ պատճառիդ, և միոյդ ՚ի միոյ պատճառէ, և ունողիդ զպատճառ միոյ, երրեակ անճնաւորութեանդ և միոյ աստուածութեանդ վայելեն փառք յերկնաւորացն վեհից, ՚ի սրբոցն դասուց, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ Լ՚Գ.

ՎԵՐՍՏԻՆ ՓԱՌԱՎՈՐԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒՐ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՅՏՈՒԾՈՑ

Ա. Ընդ զյարմարութիւն պաշտաման բանիս ՚ի խայրեաց հոգւոյս քեզ նուիրելոյ, օրհնեալ բարեգութ, կցորդելով ընդ խնկազգեստիցն զուգամանապէս խառ-

նեացես ի յանուշութիւն կազմուածեան իւղոյն Մա-
քրիամու կնոջ բարեպաշտի : Զոր հաւատարեալ նոյնու-
թեամբ ընդ երջանիկ պոռնկացն ի քէն ընկալեցոյն
յաւետահրաշ յարդանօք , պարարեացիս մեծապէս և
մովս բանիւ նուաստիւ , ընկալեալ յանհաս և ի բարե-
բանեալդ գլուխ բարձրելոյդ , անկշտամբելի ի բամ
բասանաց սաղմոսին , մի օծցէ զտերեւ ոստոց գագա-
թան իւղ մեղաւորին : Այլ արասցես զօրանալ կրկին
յաճախութեամբ բուրման խոստովանութեան այսր
մասենի ի բազում ազդեալ , համատիպ ամենա-
տարած և աշխարհալիր սանն տեսակաւ , ըստ օրինակի
համեմատութեան նոցայն յիշատակի : Քանզի դու նոյն
տէր զգաստացուցիչ նախնի չարախորհից կանանց մե-
ղաւորաց , որոց առակեալ զմարգարէին կերպարան՝
քումդ ճշմարտատիպ պատկերի յեղանակեցեր , ան-
տուստ առ սուսին անճառ ներգործութեամբ ի յիս
վերաբերեալ զծայրագոյն հնարիւն կատարուածն : Ընդ
անասնական գարշոյն կերակրոյ զբազմահամբար պտուղ
ցորենոյդ կենացդ հացի , ընդ ապականացու արծա-
թոյն՝ զարքունականդ պատկեր , ընդ յիմարարար թմբ-
րութեան գինւոյն՝ զբաժակդ արեան արարչիդ , ընդ
իւղոյն առելոյ ի յայրատ կնոջէն հնոյ ժողովրդեանն՝
զօծումն հնարիւն առ իս դարձեալ , ընդ զերծման գլե-
խաշուք կատուոյն՝ զանառականութեան վերարկուն ,
ապարանջանին պճնութեամբ՝ զթուիչս բարեմասնու-
թեան , օրինիւն և աւետարանաւն՝ հանդերձ գործ-
նական առաքինութեամբն , ընդ ունկանն գնդի վայել
չականն զարդու՝ զանառուեր յիշատակ տերունականդ
ձայնի , ընդ քայս պերճութեան լանջոյն՝ զյոքնահա-
ւաք աւանդս ուղղութեան քոյինակրօն լծոյդ քաղցրու-
թեան :

Բ . Ոչ զի ես յայսոսիկ ինձ պարծել , և ոչ վերստին
ի սոյն պատկառել : Այլ յայլ օրինակ փոխեալ զմա-
տեան մաղթանաց այսր ողբերգութեան , որ ինչ ինձ
ես յարմարաւոր , ամենայնիւ հատուցից զպատիժ պար-

աուգս իմոյ մեղանաց, ՚ի մարդարէիցն տառիւ բե-
րեալ համառօտս՝ ՚ի սոյն յարկ մուծիլ սաստիկ դատա-
խազ. ընդ ողբոյ նոցին լծակցեալ, քան թէ ընդ բերկ-
րութիւն նոցա պարել՝ յորս հառաչանս, ձայնս հեծու-
թեան, բողոքս բարկութեան, նախատինս խորտակ-
ման, լալումն կարեւոր: Այլ մեծիդ աստուծոյ գթու-
թիւն ամենաժաման՝ կանուխ ազդեցաւ յիմ յուսատ-
րութիւն, առ որս՝ զղջմունս, խոստովանութիւնս,
աւետիս, պարգեւս, լուսոյ երեւմունս, խրախոյս
աստուածայինս, փառաց ժառանգութիւնս, հրաշից
յայտնութիւնս, սքանչելեաց տեսութիւնս. յորոց ո-
մանք յոյս ընձեռուն, և ոմանք վհատութիւնս բազու-
մըս մատուցանեն. յորս ես կամաւ կործանեալ՝ կորըս-
տեան վիճակեցայ: Ո՛վ եթէ զդեստ աստուածոյ զվա-
րագուբին պատրուակ ասաց Չզեկիէլ, յորում արար
ժողովուրդն կուռս կարկատուն, որով պատնէլ աս-
՚ի նոսա, իսկ ո՞րքան պատիժ անմաքրութեանս եղիցի
զաստուած զդեցողիս նեղբոյ և արտաքոյ: Ո՛ւրմանաւ,
թէ զիաւրդ ոչ կիզում. հիանամ, թէ ինքս ոչ այրիմ.
ափշիմ, թէ ո՞րպէս չյափշտակիմ՝ տանջեալ, լքեալ,
չարչարեալ, ջաղխեալ, մանրեալ, խորտակեալ, կտրեալ,
բաժանեալ ՚ի յօրինակէ ժանեաց կորուսչին, ըստ գը-
րոյն: Այլ այս միայն է պահեցեալ ինձ նշոյլ ահշատակի
փրկութեան յուսոյ, զի քրիստոսեան աւետարանն
կեանս է ամենեցուն, ՚ի կերպարանաց պատկերի բանին
ծանուցեալ. որով առ մեղանան դարձն, առ պարտիան
ընդհն, առ եղծումն նորոգութիւնն, առ անօրէնու-
թիւնն քաւութիւնն, առ վէրն բժշկութիւնն, առ
վտանգն անդորրութիւնն, առ պատիժն նեղութիւն,
առ պատերազմն հանդարտանալն, առ հուրն անձրեւն,
առ պատուհասն պարգեւն, առ ակնկալութիւնն սա-
տակմանն՝ ձիրն, առ գործարան մահուն՝ կենացն ա-
զատութիւնն:

Գ. Այլ զի՞նչ է ինձ զայսքանեաց ահշմանց ՚ի թիւ
արկանել, և ոչ զանձառելիսն աստանօր դասել: Զի

չատակաւ հօրն բարձրելոյ՝ յորդին կորդուԹիւն, յաւնուն միածնին՝ առ հայրն ընտանուԹիւն, ոսկին ակնարկուԹեամբ ընդ հոգւոյն հաղորդուԹիւն. խաչին փրկանք, բանին սիսեռուԹիւն, բարւոք վարձ կամացս առ կշռուԹիւն գիտողին, աւազանն կենդանարար՝ հաշտուԹեանն միջնորդուԹիւն, և այլք ամենայնք անԹիւք բարիք՝ ի բարերարէն բարդեցեալք, ազատք՝ ի հարկէ, արձակք՝ ի լծոյ, իշխանականք և ոչ իշխեցեալք: Այսքիկ են, որ ինձ՝ ի մէջ դառնուԹեանս մահու՝ կեանս անտարակոյս աւետարանեն. քանզի եԹէ ոչ զայսոսիկ ունէի, կանխաւ արդեօք կորուսեալ էի իսկ և իսկ ըստ բանի երդողին: Ալ փաթրկուԹեամբ արդւոյ զհայր փառաւորեմ, ոչ նուաստուԹեամբ հոգւոյ զորդի նախատասեմ. համափառ ունիմ զերեսեան՝ և նոյն արարչուԹեամբ: Քանզի և՝ ի դէմս հոգւոյն սրբոյ այս են աղաչանք, նախընծայ սկզբան պատարագին՝ յորում գառնդ երկնաւոր զենանի, զայս աղօԹեցի:

ԱղօԹք, որ նախ քան զպատարագն մատուցանի:

Դ. Ամենակալ բարերար մարդասէր աստուած բոլորից, յօրինող երեւուԹից և աներեւուԹից, փրկող և հաստատող, խնամող և խաղաղարար, հօր հզօր հոգի հայցեմք բաղկատարած մաղԹանաց գոչմամբ հեծուԹեան յանդիման եղեալ քեզ ահաւորիդ: Աուսխմք մեծաւ դողուԹեամբ ասասիկ երկիւղիւ մատուցանել նախ զբանականս զայս պատարագ քում՝ անղնելին զօրուԹեանդ, լըր աԹոռակից փառակից և արարչակից հայրենի անկապուտ պատուոյդ, և քննողի ծածկուԹեան խորոց խորհրդոց ամենակատար կամաց հօրդ Ամմանուէլի՝ զքեզ առաքչի, փրկչի և կենդանատուի և արարչի ամենայնի: Ի ձեռն քո ծանուցաւ մեզ երբեակ անձնաւորուԹիւն միասնական աստուածուԹեանդ, յորոց մի և դու ճանաչիս անհաս: Քեւ և ի ձեռն քո առաջինքն նահապետական տոհմին շառա-

ւիղք՝ տեսանողք անուանակոչեալք, զանցեալն և ղապագոյն, զեղեալն և զչ գոյացեալն անսուտերա քար բարբառով բանի վերապատմեցին։ Ոգի աստուծոյ քարոզեալ զքեզ Ա՝ովսեի, որ ՚ի գնալն քո ՚ի վերայ Ջրոցն, անպարագիր զօրութիւն, ահեղ շքջարկութեամբ սաձողականաւ՝ թեւապարփակ պաշտպանողօքն զթաւիրեալ ՚ի ծնուեդս նորոգս՝ զաւազանին խորհուրդ ծանուցեր։ Յոր կերպարան օրինակութեան՝ նախ քան զկատուցանել զլոյծդ մածուած վերջնում վարագուրիդ՝ յօրինեցեր, կարող ակրապէս, զբովանդակ բնութիւնս ամենից բնաւից բոլորից գոյից ամենայն էից յանէից։ Քեւ սահմանին ՚ի նորոգութիւն յարութեան ամենայն եղելոցս, առ ՚ի քէն յայնմ ժամանակի, որ է օր վերջին այսմ կենցաղի, և օր առաջին երկրին կենդանեաց։ Քեզ հնազանդեցաւ միութեամբ կամացն որպէս հօրն իւրում ազդակիցն քո, Եակիցն հօր անդրանիկն որդի մերոյս կերպիւ. զքեզ աւետարանեաց Ճշմարիտ աստուած հաւատար և հաստատ հօր իւր հոգւոյ, և զառ ՚ի քեզ հայհոյութիւնն անքաւելի քարոզեաց, և իբր զաստուածամարտիսն զքո հեառնեցն չարաբանական բերան կարկեաց, և զնւրն ընդհեաց արդարն և անարատն գոյիչն ամենայնի, որ վասն մեզայ մերոց մահանեցաւ, և յարեաւ վասն զմեզ արդարացուցանելոյ։ Նմա փառք ՚ի ձեռն քո, և քեզ բարեբանութիւն ընդ հօր ամենակալի, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Դարձեալ կրկնեցի ՚ի նոյն կարգ բանի, մինչեւ վաստակութիւնն լուսոյ հոգեբաշխ յայտնեցոյն ազդեալ, աւետարանել վերստին զկրկին խաղաղութիւն։

Ե. Ակնաբեմք և աղերսեմք արտասուալից հառաչմամբ յամենայն անձնէ զփառաւորեալ արարչութիւնդ ա՝ նեղձ և անաւեղձ անժամանակ հոգւոյդ գթածի որ բարեխօսդ ես վասն մեր յանմահութիւնս հեծութիւնս առ ողորմածդ հայր. որ զաւրքեան պահես, և զմեզաս-

ցեալսն մաքրես և տաճարս կազմես կենդանի և կեցուցիչ կամաց բարձրեալդ հօր ։ Արդ ազատեա զմեզ յամենայն անմաքուբ գործոց, որ ոչ է հաճոյ քումդ բնակութեան. և մի՛ չնջեսցես առ՝ ի միջոյ լուսոյդ հնարհայց փայլմունք՝ ի սեւսականացս աչաց խմաստից. վասն զի զքեզ ուսաք միանալ՝ ի մեզ՝ ի ձեռն աղօթից, և ընտիր վարուց խնկելոց ։ Իւ քանզի մինդ Աերբորդութենէդ պատարագի, և միւսդ ընդունի՝ հաճեալ ընդ մեզ հաշտարար արեամբ անդրանկի Իւրոյ, իսկ դու ընկալեալս զմեր պաղատանս, և յարդարեսցես զմեզ օթեւանս պատուականս ամենայն պատրաստութեամբ՝ ի վայելումն ճաշակման երկնաւոր գառինդ, առանց պատժոյ դատապարտութեան ընդունել զայս անմահ հացուցիչ մանանայս կենաց նորոյ փրկութեան ։ Իւ հալեսցի՝ ի հրոյս յայմանէ գայթագղութիւնս մեր, որպէս մարգարէին կենդանախաղոյկ կայծակամբն՝ ի ձեռն ունելեացն մատուցման. զի յամենայնի քոյդ քաջութեացի գթութիւն, որպէս որդւոյդ աստուծոյ՝ հօր քաղցրութիւն. որ զանառակ որդին մերձեցոյց՝ ի հայրենի ժառանգութիւնն, և զպոռնիկան յառաջեցոյց յերկնային աքքայութիւնն արդարոցն երանութեան ։ Այո՛ այո և ես մի եմ՝ ի նոցանէ. և զիս ընկալ ընդ նոսին իբր մարդասիրութեան կարօտեալ մեծի, շնորհօք քո ապրեալ, զարեամբ Քրիստոսի ստացեալս ։ Օ՛ի յայսմ ամենայնի՝ յամենայնի ծանկեցի քո աստուածութիւնդ ընդ հօր փառաւորեալ համապատուաքար՝ ի մի կամս և՝ ի մի իշխանութիւն դովութեան. զի քո է գթութիւն և կարողութիւն և մարդասիրութիւն, զօրութիւն և փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն ։

ԲԱՆ Լ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱՅ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՅ ՄԱՂԹԱՆԱՅ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՅՏՈՒԾՈՑ

Ա. ԱՐԴ առ այսոքիկ Թշուառացեալ Հնչոյս լմոյ իղձք, և առ քեզ դաւանութիւնք յարմարականք, որ բովանդակես բանիւ զամենայն՝ ասասւած, զոր ի նախ ձին ճառեալ՝ և յերկրորդումն ցուցիչ։ Իսկ յանդիման նուիրեալս գրաբանականս՝ ի կոյս բազմութեան աղ գայ, և Թարգմանութիւնս ժողովրդոց, զոյս արգա հատութիւնս մաղթողականս նուիրեցի, զոր ներքնա շարեալքդ սահմանադրեն գոհաբանութիւնք։

Ի հանդիսարանս խօսից ասենի բանս մաղթանաց, որով հոգին աստուածց հաշտեալ հասանիլ յօգնականութիւն։

Բ. Ազաչեմ զանսխոխելի սէրս Թիւն ամենազօր հոգւոյդ հզօրի, առաքեա զջող քաղցրութեան քոյ, և բարեգործեա ի յանձին և յիշխանական ազդման զգայութեան զամենալից շնորհս բազմապարգեւ քո ողորմութեան։ Նոյ հերիւնա զբանական անդաստան մարմնեղէն կարծրացեալ սրտիս յընդունակութիւն արգասեաց հոգեւոր սերմանդ։ Քոմ ամենիմաստ էութեանդ խաստովանիմք զամենայն պարգեւս ի մեզ ծաղկեալ և աճեցեալ. որ ձեռնադրես առաքեալս, լուսցանես մարգարէս, ուսուցանես վարդապետս, բարբառեցուցանես համբս, և բանաս զփակեալ ա կանջս խլից. որպես ազդակիցն քո Էակիցն հօր անդ բանիւն որդի քոյին գործակցութեամբ ներգործելով զայս ամենայն, քարոզեաց զքեզ աստուած հաւատա

բանից խոհութեանդ հօր։ Շնորհեա և ինձ մեղաւոր
քիս խօսել համարձակութեամբ զկենդանարար խոր-
հուրդ աւետեաց աւետարանիդ, հետեւել արագա-
թռիչ ընթացիւք մտաց ընդ անհուն ասպարէզս քոյին
նաշունչ կտակարանաց։ Ես՝ ի մատչել իմ՝ ի գլուխ
հանդիսի մեկնութեան բանի՝ նախաժամանեսցէ առ
իս գթութիւն քո, խօսելով յիս զարժանն և զպիտա-
նին և զհաճոյն քո՝ ի ժամանակի, ի փառս և ի գո-
վեստ աստուածութեանդ քո, և ի լուսաւորիչն շինու-
թեան կաթուղիկէ եկեղեցւոյ։ Ես կարկառեա՝ ի վե-
րոյ իմ զամենամերձ ակ քո, և զօրացո զիս շնորհօք
գթութեանդ քո. փարատեա՝ ի մտաց իմոց զամեգ մը-
թութեան մոռացութեան, ապաքինեալ ընդ նմին ըզ
խաւար մեղաց, ամբառնալ ուշիւ իմաստից՝ ի կեն-
ցաղոյս երկրի՝ ի բարձունս։ Ուսուցո՛ր քեա՝ ի յիս վե-
րըստին զծագումն անստուեր հրաշից գիտութեան
աստուածութեան քոյ, հզօր, արժանի լինել առնել
և ուսուցանել յօրինակ բարեաց աստուածասէր լսո-
ղաց։ Ես քեզ ամենայն փառք յամենայնի, ընդ հօր
ամենակալի և ընդ որդւոյդ միածնի և բարեբարի,
այժմ և յանվախճան յաւիտեանս. ամէն։ Իսկ զնա-
ւասոյ սահման բանի ընտրութեան շնորհի կենաց կա-
նոնի առ համագոյ սուրբ Երրորդութեանն՝ զայս վար-
դապետեցի, զոր շաւիղ կարդիդ վերանկարէ։

Երրորդութիւն անայլայլական նորոգ ստեղծարանութեան ազդեալ յաս-
տուածոյ, յոր ինչ ի նիւթից սահմանեցաւ հաւատս։

Գ. Խոստովանիմք և դաւանեմք, պաշտեմք և երկրը-
պագեմք զղուգափառ միութիւն ամենասուրբ Երրոր-
դութեանն, աստուածութիւն անճառ, միշտ բարի,
նոյնագոյ, հաւասարապատիւ, անհաս իմաստից թե-
ւոց սլացման, ի վեր քան զբնական և անդր քան զնմա-
նութիւն, գերազանց գոլով սահմանի անպարագիր
բացարձակութեամբ, յառաջ քան զհին յաւիտեանս

անտարբաիակ էութեանց ստեղծականացս կարգաց, օրհնաբանութեամբ անվթարգմանելեաւ ամենահաս բուսոյ մեծութեամբ յաւէտ պահակեալ, հաստիչ ժամանակաց և որ ի ժամանակի են կերպաւորեալք, ինքն պատճառ հանդերձիչ և յարմարապես յօրինիչ տեսակ կանաց և աներեւութից։ Ոչ անուամբ չափեալ և ոչ յորջորջմամբ նշանակեալ, ոչ որակութեամբ նմանեալ և ոչ քանակութեամբ կշռեցեալ, ոչ օրինակաւ ձեւացեալ և ոչ որպիսութեամբ ծանուցեալ, ոչ ի թերութենէ տարածեալ և ոչ ի լրմանէ ամփոփեալ, ոչ ուրեք երբէքի գրաւեալ և ոչ ի տեղւոջ վայրի երեւեալ։

Դ. Այր գթութեանց՝ ունող ամենայնի, և աստուած հանուրց որ յերկինի և որ յերկրի, բայց ի քաղէն միայնոյ՝ որով զամենայն ինչ ունի. ստեղծիչ և տուիչ ընդոց ամենից, բայց ի հոգւոյն խակակէ որով զհամայնն կազմեաց։

Ե. Ումին յերջանկափառ համաղօր ահաւորութենէ երկին անձնաւորութեանց խոնարհեալ ի վերուստ՝ անտուստ ի ստորինս, որ էրն խակ ի քնէ անբաժ ի ներքինոցս՝ անկապուտ միալով փառացն աթոռոյ, և անկարօտ դիմացն ճնողին խրոյ, մտեալ ի սենեակ կուսին արգանդի պարզաբար, և ելեալ անտի յօդաւորաբար մարմին էապէս անորոշելի, անթերի մարդկութեամբն և անպակաս աստուածութեամբն։ Ումի որդի հօրն միայնոյ և միածին անդրանիկ աստուածացեալ մայր սիրածին կուսին, արարիչն յեղակարծութեամ մարդ ելով ճշմարիտ սկզբնածին. ահա ոչ զինի եղելոց երկրաստեղծից նմանութեան, այլ նոր և չքնաղ, թաղաւորաց վեհափառ, որ ոչ ցուցաւ ի դարս, և ոչ գոյացաւ ի ժամանակս, անդրանիկ ըստ սաղմոսողին, քան զամենայն թագաւորս երկրի. անապական խառնութեամբ կերպացեալ զմեզ ի մարմնի, ըստ օրինի հոգւոյ ընդ մարմնոյ, և ոգւոյ ընդ հոգւոյ. և կամ՝ յայտնապէս իսկ ասել՝ լուսոյ ընդ օդոյ, ոչ փոփոխեալ և

ոչ անջատեալ։ Նայն ինքն եկեալ կամաւորութեամբ ի խաչն մահու, իբր զգառն անարատ ի սպանդ վարեցաւ, և հանդերձեաց զօրեղ ինքնիշխանութեամբ զաբարածոց իւրոց փրկութիւն. չարչարեալ խոկութեամբ կենդանեօք՝ եդաւ ի հիմի անորոշելի յաստուածութենէն. եռօրեայ թաղմամբն ի դժոխս՝ սանդարամետականացն վհատելոցն բանտարգելեցն քարոզեալ ցուցաւ նորոգութիւն և լոյս։ Նա աւարտեալ զտնօրինականնայն զփրկանաւորն զտնտեսութիւն, աստուածապէս վերակենդաղեաց. և կառավարեալ ի թեւս հողմոյ՝ եղեալ ի Քրովբէս ամպով անքննութեան ծածկեցաւ. համբարձեալ գեր ի վերոյ ամենայն երկնի, նստաւ ձախակողմեան յաթոռն իւրական սկզբնաժառանգ հօրն հաւասարութեան, յորմէ և բնաւ իսկ ոչ մեկուսացաւ, անկորուստ առեղծլոյն և աննուազ սեպհականաւքն։ Որով և եկեսցէ ի դատաստան հաստատման, քննել զծածկեալսն կշռութեամբ ջահոյ արդար իրաւանց. որում սպասեմք և յոր աղօթեմք, հաւատացեալք յամենայնի՝ ամենայնիւ ամենակալ տէրութեան նորա. որ արդարեւ միոնն է միայն ի միայնոյն՝ ի միոյն փառակցութիւն յաւիտեան երկրպագեալ։

Զ. Խարեբանեմք միշտ և օրհնեմք ընդ որդւոյ և ընդ հօր և ընդ հոգւոյ էութեան նոյին, ամենազօր, ճշմարիտ, կատարեալ և սուրբ, որ յանէից գոյացոյց ըզբոլոր եղեալքս ամենայն, ինքնագործ հոմիշխան երկուցն և ընդ նմին անեղծ և անսահման թագաւորութեան. որ ինչ պատճառն առաջին և բանն ահաւոր նորին ինքնութեան, նոյն ինքն և հոգին բարձրացեալ։ Խարի ինքնակալ, ամենից բաշխիչ զհօրն պարգեւս ի գովեստ անուան փառաց միածնին. որ ազդեաց յօրէնսն, չնչեաց ի մարգարէսն, փչմամբ ազգակցին ոտաւորեցաւ յառաքեալսն. կերպիւ ազաւնեայ ցուցաւ ի Յորդանան ի մեծութիւն փառաց և կեցոյց, փայլեաց ի գիրս աւանդականաց, արար հանճարեղս, զօրացոյց խմաստունս, լցոյց վարդապետս,

օծ պրբայութիւնս, օժանդակեայ Թագաւորս, եւ վերակացուս, հրամանատարեայ փրկութիւնս, չնորհ հեայ ձիրս, հանդերձաւորեայ քաւութիւնս, զմկրտեալսս ի մահն Քրիստոսի՝ ի բնակութիւն իւր մտաբաղադրեայ. զոր հայր և որդի, զնոյն և հոգին ներգործեայ, և ինքն է աստուած խնկեալ ակրատես աՀենայն յամենայնի։

Է. Վանզի ոչ նախաթուելովն Աղրորդութեանն որ մեծ ինչ քան զմիւսն, և կամ զինի անուանիքն նուաստագոյն առ նմանն, և կամ ի միոնն ասելով խառնակութիւն գոլ դիմացն, և կամ յերիցն տրտհութիւն ուբոյնութիւն եղ կամացն։ Վանզի անմեծար հայր ամենայնիս, եթէ ոչ զբանն ունիցի ինքեան զօրութիւն. որպէս ոչ գոլով ընդ նմա հոգւոյն՝ անհագագ ոմն և անկենդան և առ ամենայն հրաման նուաղեալ։ Իսկ բանն եթէ ոչ անուամբ հօրն ծանիցի, որք ոմն և կամ լքեալ և կամ ի մահացուէ ումեմնէ ոչեխ։ Որպէս և հոգին եթէ ոչ ի պատճառէն նշանակեացի, ապաշուք ոմն Թափառեալ՝ երբ զնոչ ինչ անդադարելի։ Այլ եթէ որ հակաճառական բանիս յաւակնի կապտել զհայր ի յիւրմէ բանէն, որ թէ էր երբեմն յորժամ և չէր, և անբանութեանն բամբասանօք պատուել վարկանի զվերինն մեծութիւն, և կամ ստրկութիւն տայէ բղխողնի՝ ոչ բնաւորաբար գոլով հոգեւոր, որով այլ իմն գոյութիւն օտար մտածանել և կամ ամբոխումն ինչ այլայլական յանարատ պատիւ միութեան սուրբ Աղրորդութեանն, զայնպիսիան քարամբք պարսից հատատոյ բանից, երբ զդժնդակ դեւս դիմամարտիկս գազանական, հերքեալ ի միջոյ ի բաց հալածեմք, եւ դեալ ի նզովս զնոյնս ընդ նոսին՝ փակեմք ընդդէմ նոցին զկենացն մուտ եկեղեցական գաւթի։ Աւստի զսուրբ Աղրորդութիւնն փառաւորելով ի նոյն աթոռութիւն միակցորդ հաւասարութեան, զսգաճայն սրբաբանութեամբ, հանդուգնաւոխ հարթութեամբ, օրհնեալ և փառաւորեալ յերկինի և յերկրի, ի ժողովս

անդրանկացն, և յապիս երկրածնացս բանականաց, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

Ը. Ալդ զայս գոչումն ծածուկ խորհրդոց կերսպաւորելոց յայսմ մասինէ՝ ամենասքանչացս մեծիդ աստուածոյ ընծայեցուցի. սովիմբ սպառազինեալ, և ապա մնալ ի հանդէան։ Ալլ ոչ եթէ կարօտեալ իմոյս ինչ ձայնի այսու մեծանաս, որ մինչչեւ ստեղծեալ էր զամենայն՝ նախ քան զլինելն երկնի փառաբանչօքն անմահից և երկրաստեղծս բանաւորօք, դու քեզէն ի քումդ լուսթեան փառաւորեալ իսկ էիր. այլ զի զմերժեալս զիս յարդեսցես, անճառ քաղցրութիւն, ճաշակել զքեզ բանիս հաղորդութեամբ։ Իսկ զինչ պարտ իցէ ըստ արքունական հրամանիդ կենայ կանոնիդ ասել Աստեղծի աւեր, և զհրամայեալ պատուէրդ ոչ առնել. որ ինձէն իսկ զիս զսակեղէն տախտակս խոսուն՝ նուիրեալ քումդ պատգամի, զդրեալս մատամբ քով աստուծոյ՝ եղծի, որ և խորտակելն է իրաւացի. և ես տիպատեսակ մրով վերկրորդն նմանուիթիւն առեալ հայթայթեմ։ Ալլ արդ քանզի բաղմօք պատճառեցայ դրուակօք խանդաղատականօք, որ ոչ է գրեալ ի յայս կարգ ձայնի, լուր, բարեգուութ, ըստ ամէն բանի այնմ ամենայնի։ Եղիցի և այս ազերս բարբառոյ հայցման աղօթիկ յօդեալ ընդ նոսին. Թերեւս ի մաքրոց և ի կամարարից այս նուէր հացի պանիկ բաղարջ Քոց խնդրել զանգելոց ի սեղան փառացդ քոց մատիցէ։

Թ. Ալլ դու բարերար և յամենայնի մարդասէր Քրիստոս մի՝ աստուածոյ միոյ, հզօր և ամենակալ, որ յաղթեաս գԹուութեամբ կենամոց քաղցրութեան քո, ոչ հասարակականաց միայն մարդկութեանս իմոց դու յակացայ, առ որս յաւէտ է ամբոխութիւն և բիւրապատնեայ հակառակութիւն, այլ և հրեշտակացն անմահականութեան, նաեւ և եւս քան զայս՝ սրբասնեալոցն անարատութեան. յորոց մի էր և Հեղինաս, որոյ ցոյգք խաւութեանն ի Քորեբ լերինն նշանակեցաւ երիս օրինակս, ի շարժումն մեծ, ի հողմն ուժ-

դին, ՚ի հուրն կիզանողական. իսկ քոյդ հեղուԹիւն երկայնմտուԹեան՝ ՚ի հանդարտուԹիւն մեղմուԹեան օդոյն քաղցրուԹեան. քանզի կամաց ողջմտուԹեանց դու միայն ես, ըստ գրեցելումն: Ոման ոչ ԹԷ և հաճոյք գոան մերասերքս առաքինուԹեամբն յեղաշնակեալ յայլ նմանուԹիւն վերնային, սակայն երկրաձինք են և նոքա, ընտրեալք ՚ի մարդկանէ. իսկ դու ոչ ունիս չարանալ խկուԹեամբ բարիդ, յամենայնի օրհնեալդ, ամենեւեին փրկուԹիւնդ, ամենայնիւ հանգիստդ, համայնից անդորրուԹիւնդ, համօրէն ախտացելոց դեղ առողջուԹեան, աղբիւր ջոյ կենդանի ասլ ըստ Յերմիայ: Վարձ առ իս և ողջմտեա ինձ, որ այնքան ծարաւես պատքիս անկարօտդ ասատուած ի մուտ փրկուԹեան, մինչ ոչ զուարԹնոյն երկնից անմահիկ օրհնաբանողաց բան իմն ընծայեցեր մարդիօրէն փրկական քահանայապէս և քաւչապետաբար՝ առնեղծական յարակայուԹեամբ մշանջենաւոր պաղատանս օրհնեալդ քո գԹուԹեան ՚ի մերոց դիմաց կենցաղականաց վասն իմ լքելոյս հաշտուԹեան մաղթել, ողջմտեա Յերուսաղէմի, որ է լուսաւոր խորհուրդ յայց ելանելոյ մեծիդ յայտնուԹեան առ հրեշտակականն Թափուր տեղի ստորանկելոյ ՚ի ձեռն մարդկան՝ քո կցորդուԹեամբ աւետարանեալ առակաւ այսր օրինակաւ, Յերուսաղէմի:

Ա. Ընդարեւ լուսաւ բարեգուԹ, անսպառ Թագաւոր, ունկնդրեցեր կեանք և յոյս, ՚ի միտ առեր երկնաւոր, յարդեցեր հզօր, նկատեցեր ծածկագէտ, տեսեր խնամակալ, կարեկցեցեր անպատում, խնարհեցար միշտ բարձրեալ, նուաստացար ահաւոր, յայտնեցար անճառ, ամփոփեցար անսահման, քանակեցար անքննին, մածար ճառագայԹ, մարդացար անմարմին, շջշափեցար անքանակ, կերպաւորեցար անորակ, լեր խակապէս զաղաջողացն բաղձանս: Դու իսկ եղեր Թըշուառացելոյս ինձ՝ ձայնիւ զուարԹնոյն՝ բարի բարեխօս, միշնորդ կենդանի, պատարագ անմահ, սպանդ

անվախճան, նուէր մաքրութեան, ողջակէզ անձախ, քաժակ անապատ: Ակն ողորմած, մարդասէր, օրհնեալ, միշտ կատարեսցես առ մեղուցելոյս զբարեբաստութիւն կամաց քոց կենդանատուաց, գովեալ երկայնամիտ. և քեզ վայելէ փառք յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԼԶ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Լի արդ, տէր ողորմութեանց, մեծութիւն ահեղ, անաստակոյս տեսաւորութիւն, կամք ամենից գործակ, առատութիւն անպակաս, ով ոք ողբեսցէ ոսնել հանդիսիս պարերգութեամբ ի միոյ կաթուածոյ ձոյ ցօղոյ քումդ բարութեան, որ ցանկ դեղերիս պատրաստել պատճառս հնարիլ խնամ փրկութեան: Լե զոր մեծն է գրեցիլ պատմել յատկութիւնն, քանզի ոչ անուանեցար հրեշտակաւքը, և որ զպետութիւնս նոցունց հաստատեցեր. այլ և վերկինս զամբարօք նոցին զմատանց քոց գործ, ոչ գրեցեր երբէք սիրել ըզնոսա. այլ առեր ի պատիւ մեծաց գովեստից առաջին դասեալ զմարդասիրութիւնն: Վասն որոյ կրկին մեծացուցեր քեզ անուն անճառ ի խորհուրդս սակաւիս. զերկնայինս լուսակերպիցն կոչեցեր զնոսին սպասաւորս և գլխաւորս յաւտուկ մատակարարութեանց. խակ զլսոտորնայինս ծնունդս մահկանացուաց սիրական և աստուածական պաշտելի անուամբդ պերճացուցեր: Ընդգեալ վերսինն ըստ սահմանն կշռութեան չափոյ, լցեր նեցեր քեզ կտակս գրոյ ճառիցդ անբաւից զանապակ ծորմանն ծայրագունիցն վերնոյ բարութեանն: Լես և ի մարգանալդ քո միդ յեսութենէն, ոմանց վասն

ինքեանց և կիսոց վասն այլոց զերծեր առաստութեամբ զտուրս կենայց, արուեստս բազմօրինակս, աքանչելիս աստուածագործս, նշանս ճշմարտատեսիլս։ Որպէս զի թէ անդամալուծին պակասելոյն ի հաւատոյն՝ հոգա բարձոյն առաջարկութեամբ զոյացս յուսոյն՝ գթած ցեալ ողորմեցար, և ձրիակի զօրեացե առաւել քան զամենայնսր առ ախտալից մարմնոյս մաքրութիւն աղաղակողիս հառաչման. քանզի արդարեւ մեծ են չափք հրաշից, քան զանմաքրեալս հոգի առնել, զգ լուացեալս պատկեր անսխրելի աղտոյ ներդործել. նա զի և երկրորդս առաւելութեամբ յաւազանին շնորհ յաճախեալ՝ զիսաւն հայրենի բարձրացուցանէ։

Բ. Դու ես տէր որ սրբես զմեզ, որպէս ընտրեալն քոյ նախատպաւորեցեր Մովսէսի, դու ես, որ ի մերձ ըս և յանօրէնութիւնս վերակացու եղեր տհմին Յակոբայ, մինչ յեգիպտացւոյն երկրի ընդ խաւարն հեթանոսաց ընտանեցեալին։ Դու ես, որ օրհնագէտ առնես զմեզաւորսն ի ձանապարհի, ըստ բանի երգոզին Դաւթայ. դու ես որ փոխարկես զբարեզէն սրտից կարծրութիւն ի լոյծ կակղութեան մարմնոյ գոյութեան բանի ընդունելութեան։ Դու ես, որ բաւես ընձեռել սիրտ այլ, և ճանապարհ մի՝ երկնչել ի քէն զովանդակ կենացն սահման. դու ես, որ տաս զերկիւղ քո ի միտս խոստութեան առ քեզ ուշ ունել հաւատովք, ըստ մարգարէիցն ձայնի։

Գ. Օրհնեալ քո չըթանդ զաշխարհասաւեղծ բերանդ զաստուածեղէն անձրեւացդ զկեցուցանողդ կաթուած մատս լսելեացս դրանց բացարան, որով զձին խորամանկութիւն բանսարկուին թիւնից բարձցես և բժշկեցես։ Այնուհակառակ ձեռօք զիսնական նացս չարժողական գործի ըմբռնեալ՝ աղբեա զօրութիւն ձայնի, որ տաս բնաւից ընտրութիւն բանի. զի դաստիարակեալ զպատշաճականն՝ մի յանդգնաբար խոսելով իւր զնախնին լքայց ի յուսոյդ, և անքանութեան մատնեցայց վանեալ յորսողէն։ Ուսաւորեա

վերսին զևաւարեցեալ հոգւոյս աչս կենդանաբաշխ
աջոյդ կարկառմամբ, զի մի համարձակութեանն շի-
ջեալ լապտեր հնչմամբ վիշապին՝ ի ներքոյ գրուանին
սատրածածկեցայց: Խարձ զանօրէնութիւնս իմ, աէր,
և ընկեա ի խորս ծովոյս. որ է փոքր առակ մեծու-
թեան քումդ անբաւութեան, ըստ մարգարէին, զիմս
ընկղմել չարութիւն: Կանգնեա կործանեալս անձին
նշան վստահութեան, զի մի յուսահատութեանն կո-
ծող կառուցեալ զծածկելոցն բողոքեսցէ: Նաց, հզօր
և գթած, զբժշկարանիդ կենաց վարդապետարան, զի
զառ ի ներքոյն մշակութեան կորսուչին սերմանդ՝
մանկաղաւս կամացդ հուպ առ արմատ խուզեալ հընձ-
ձեսցես: Դիմ եղեալ հետեւել առ քեզ բողոքիցդ աս-
տուածդ՝ պետրոսեան օրինակութեամբն, ի կենցաղիս
ծովոյս մեղանացս ալեաց ընկղմուցայ. մատոյ ժամանեա
զաջդ կեցուցիչ յօդնականութիւն ինձ ասասանեցելոյս:
Ընդ քանանուհւոյն ձայնի ի խորոց սրտիս պաղատիմ,
սաղեցելոյս ատեականատապաս կաղկանձողական ամենա-
թշուառ վտանգաւորիս, ապրուստ կենդանդ փշրա-
նաց հացի ի բազմագեղդ քո սեղանոյ մատնաւորեցես:
Ընդ փրկութիւն նիւթոյ խորանիս որդւոյս դառնու-
թեան, որ եկիր խնդրել և կեցուցանել զիս զկորու-
սեալս: Օ, ի քո է մեծութիւն, յաղթութիւն և զո-
րութիւն, և դու ես քաւութիւն և բժշկութիւն,
նորոգութիւն և երանութիւն, և քեզ վայելէ փառք
և երկրպագութիւն յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ Լ.Օ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՅ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա Լ՚Ի քանզի անթիւ են յաճախեցեալ և գերա-
զանցութեամբ միշտ առաւելեալ փրկանաւորդ ար-
գասիք ընդհակառակ առ պարտուցս իմոց առաւելութիւն,
չարչարանացդ հանդէս և յանձնառութիւն ։ Ո՚ափդ
ամփոփիչ ամենից հոգւոց գոյից արարիչ՝ ի գործարանի
մահուն նշանի խաչին հեղուսեր, զի զձեռնարկու-
թիւնն իմ ընդդիմութեան կամաց քոց լքցես ։ Ո՚չն-
թացողականդ լծակցութիւն երկոցունց ոսկեղ կեցու-
ցանողացդ՝յանարգելութեանս պատճառ՝՝ի պատժարանի
փայտին մածուցեր, զի զիմախուցեալս վայրագութիւն
թշնաւացելոյս գրաւականեացես գթածաբար ։

Բ. Ո՚չ գօսանալ ձեռացդ կափուցան հրամայեցեր օրհ-
նեալ գագաթանդ, որ զթզենւոյն տունկ առժամայն
ջրացուցեր, զի և զառ իս ներելոյդ օրինակ կանխաւ
աւետարանեացես ։ Ո՚չ գանողացն ապիրատութեան
զնոսատավանեալդ աստուած սպառնացար, որ զարու-
սեակն մթացուցեր, զի մահացելոյս անձին բարու-
թիւն հանդատեամբ հանդերձ գործեացես ։ Ո՚չ զհայ-
հոյեցն հնարաւոր չարաբանութիւն կապտեցեր, որ
զլսանին պատկեր երանգաւ արեան գունեցեր, զի
զանհամարձակ լեզուս՝ի գովեստ քեզ զօրացուսցես ։
Ո՚չ նախատողացն մոլեգնութեան սաստեցեր, որ զդ
սարերս սասանեցեր, զի զթշուառացեալս գլուխ գը-
թութեանդ օծմամբ իւղեսցես ։ Ո՚չ՝ի մոլորեցուցիչն
կարդալ զքեզ աստուածասպանիցն՝ զօդուած ծնօղիցն
բաժանեցեր քակտեալ՝ի միմեանց, որ զկարծրութիւն

վիմացն հերձել, զի զանուշակս բարեաց հոգիս՝ ի քերմանէ ընդունայնութեան ողորմութեամբ հանդարտեցուսցես: Ող զպահապանացն սուրս ընդերայ իւրեանց մատուցեր, որ զորովայն օձին սահեցման հողոյ մատնեցեր, զի զտառապեալս մարմնոյ ոսկերս իբր ի գանձարանի պահեալ, կենաց յարութեան արժանացուսցես: Ող ի կնքելն գվիրմին փականս կենդանակիր քո գերեզմանին՝ անդրէն յորսայսեալս զնոսին յանդունդս երկրի սուզեցեր, զի ի տապանակի անձինս զնշխար լուսոյդ հանգուսցես: Ող ի համբառնելն զքեզ կորուսեալ, և իբր զերկրաւոր մարմին գողացեալ, համայնաջինջ և ամենասպառ զսերմն ծննդոցն կրճատեցեր, զի զնա զանարժանս յիշատակի ընտրութեան բարեաց՝ անկորուստ և անվհատելի ընդ փրկեցելոցն հաղորդեսցես: Ող յարծաթոյն կրկնակապէն կաշառաձգութիւն, որ ի գանձարանէ հօր քումմէ նըւիրեաց քեզ գրաւ մատնութեան և անարգութեան մատնաւորեցին՝ զնըւրացողացն մոլեգնելոց, ըստ հին հարուածոց հանդոյն Ովաբու՝ ի յարձան քարի յեղանակեցեր, զի զնա զվերիպեալս ի հաստատութենէդ և ընդ իշխանութեամբ մահու վաճառեալս՝ արեամբ քո փրկեալ, ի հաստատութիւն վիմիդ կառուսցես: Օրհնեալ կրկին, օրհնեալ վերստին, յաւիտեանի միշտ օրհնաբանեալ՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ Լ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ա՛ՐԴ այդ գումարտակ վերապատեցեալ բարեշնորհութեան քոյդ պարգեւաց առ իմս երախտիս, ով ամենագութ բարերար գովեալ և ամենազօր, թէ և սակաւք շարագրեցան աստանօր եղեալ, այլ աբբայապետք են և իշխանականք ինքնակալութեանց, որդիք զօրութեանց, ծնունդք վեհից, մեծափառք, լուսաշնորոգք և հրաշապատիւք. յաղթողական վերամբարձութեամբ պրծիւք հուչակեալք ըստ գլխոց գլխոց պսակապատճառ գեղազարդելոց, բերեալ ընդ ինքեանս անթիւ պետութիւնս օրհնաբանողաց, համբոյրս հեզս երջանիկս և խաղաղականս աստուածային հարազատութեանց այնոցիկ նահանգաց, զորոց մարգարէն մաղթեաց ասելով, զարթո տէր զզօրութիւնս քո, և եկ կեցուցանել զմեզ. ոչք յոյժ զօրին հալածել զմեզս, և զանցուածութեանն կարկուտ հալել և փախուցանել, քան թէ նախամարտիկն զինուորութիւն երկնային պարսն զգիշերավարն խաւարասեր սկզբնաներհակ բարւոյն աստուծոյ: Վանզի և զնաւն այսքանեացս ձրից որ ի բարձրելոյն ինձ անձրեւեցաւ տկարիս, թշնամւոյս և ապախտաւոր ծառայիս, անճառ է ասել. իսկ եթէ համարձակեսցի ոք զօրել խօսել, զաս կաւս ի բազմացն քան թէ զնակութիւն համանգամայնիցին. առ այսոսիկ զառաջինն նիւթն յիշելով յորմէ հաստեցաւն, ելք զտկար ոք նկուն ի զօրութենէ մեծ ձէ հերքեալ պարտեսցի:

Բ. Ա՛յլ թէպէտ և այսպէս գրեցի, և դարձեալ

զնոյն վկայեմ առ Թերլի խակուԹիւն հողոյս՝ և կատա-
րելուԹիւն հաստոզիդ, և առ բարիան իմ չարժանու-
Թիւն, սակայն ամենալոյս անճախանձ և բազմազեղուն
գովեալ արարչուԹեանդ զօրեղուԹեան վանեալ են
կարծրուԹիւնք արտաքերուԹեան սրտի բանասարկուին
որ քարին առակաւ՝ յուսահատն վհատուԹեան, ըս-
պառմամբ խոպանման աղբերացս երկուց, որ ՚ի զգա-
յական Եդեմայ բղխել պատրաստեաց անկոչն, զի ո-
ռոգեալ ծաղկեացն նոաւա՝ որ ՚ի յիս բարեգործուԹեան
կենաստուն դրախտ, ահա մի ցամաքուԹեամբ ար-
ատուացս՝ աղանդահնար պատրանօք՝ չարաչար խորա-
մանկեացէ վերստին հանել ՚ի փափկուԹենէ նախնում
վիճակին: Իսկ յորժամ կռցցէ աստուած համբարձեալ
հրաշիւք արուեստիւ ՚ի մէջ աստուածոյ հաշտարանա-
յըն խաղաղուԹեամբ, բարձեալ ընդ ինքեան զնոր-
հացըն կոակ, առ որ ամենայն վնասակարուԹիւնք
խարդախուԹեանց և կարճմտուԹիւնք սրտնեղու-
Թեանց լքը ընդ վիմեղէն լերին պնդուԹեան բախե-
ցեալ ցնդին, ջոց օրինակաւ սակաւու հեղեալ, և
կամ հողոյ խորտակմամբ փշրեալ:

Գ. Ընդ չեւ իմ կշռամբանքս՝ ըստ ձայնին Յոբայ՝
՚ի մարդկանէ լսեն, պլ յամենատես աչաց վերին հը-
րամանիդ, մուեալ ընդ խղճիս տագնապ երկիւղիս,
սոսկամ սասանեալ յամենայն կարծեաց. ապաւինիմ և
արդ անձամբ բեկելով ՚ի յոյսդ հաստատուԹեան կեն-
դանի անեղծ. զի ողորմուԹեամբ նայեցեալ ՚ի յիս ի
բըր ՚ի պարտաւոր կորստեան պատժոց, առաջի բարե-
բարուԹեան երկնայնոյդ յանդիման եղեալ ապաձեռն
անԹոշակուԹեամբ, զքոյդ երախտիս անպատում փա-
ռաց բերելով ընդ իս՝ յուշ քեզ արկանեմ. որ ոչ մի
ռացմամբ զքաղեալ նիրհես, և ոչ ԹարԹամխմամբ ա-
ջոց ընդմիջեալ՝ զհեծուԹիւն կրից անտեսես: Ա՛ե-
բացս յինէն, ազաչեմ զքեզ, խաչիդ լուսոյ զհսեղդ
վառնգիս, հոգարկուԹեամբ տրամուԹեանդ՝ զտարա-
կուսելի տխրուԹիւնս, փշանիւԹ պսակաւն՝ զոդոզոչ

մեղայս, զարկուածով գանին՝ զհարուած մահուս, ապտակին յիշմամբ՝ զկարիս ամօթոյս, թշնամանօք թքանց՝ զանգոնելի գարշելութիւնս, լեղւոյն ճաշակմամբ զնոգւոյս գառնութիւն։ Ահա քո են այս ամենայն բարեմիտնք անբռնադատելիք՝ սատուծոյ միոյ միամիտ ծին որդի. առ որովք զարեմիտնս իմ յիշատակեալ՝ զամենօրհնեալ անուն քո կարդամ բարձր ազաղակաւ խնամալեացս պաղատանօք։ Տես ՚ի խոտանելութիւն զղջման պարտութեան ամաչեցելոյս, և տուր ազդրմունելութիւն որպէսզի սատակման մահուն անմահի. զի ՚ի բազմութեան խնդոյս մեղաց՝ վերստին կրկնեալ նովին աձիւնմամբ առաւելութեամբ՝ քո ողորմութիւնդ սաստարանեսցի, հռչակեալ հնչմամբ ահաւորութեան յերկինի և յերկրի։ Եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ Լ.Ր·

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՈ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա· Բաւց արդ որպէս երբեմն յայլ ընթերցուածի որ ՚ի սկզբնաւորականացն կարդի՝ զմեզանացն վաստակեալ ձնունդս գվաւորացն օրինացն մարմնականացն անդամոց գրեցի, յորոց տիրեցեալ ժառանգս մահու, նոյնպէս և յայսմ սահման ընտրութեան բանիւ զլուսաձնելոցն զաղատարարն օրհնս հոգւոյն կենաց որ ՚ի սէր Յիսուս՝ յիշատակեցից նուաղս յոքունց, իբր յանբաւ բազմութեանց ծովու կաթիլ մի առեալ։

Բ· Քանզի են արդարեւ կայսերականք ոմանք ՚ի բարձրութեանն գահի բազմեալք, թշնակաւն շնորհ հայ լսեալք և հաստատեալք։ Թագաւորն և սիրե-

ցեալք իբ, արքայն և պատուաւորք իբ, պսակեալն և իշխանականք իբ, բարեհռչակեալն և հնչմունք իբ, յաղթողականն և փողք իբ, զօրաւորն և մարտիկք իբ, գովեցեալն և փառք իբ, փեսայն և պարաւորք իբ, դշխոյն և օրիորդք իբ, փեսաւէրն և հանդերձանք իբ, աղաւնութիւնն և շնորհք իբ, այցելութիւնն և ձեռն իբ, խոստումն և քաւութիւն իբ, պահպանութիւնն և աջ իբ, պարգեւն և զարդ իբ, նշանն կենաց և ամրութիւն իբ, կնիքն և նկարագիր իբ, ամպն և հովանի իբ, արուեստն և հրաշք իբ, հոգին և անեղծութիւն իբ, բանն և կատարած իբ, ուխտադրութիւնն և լուսն իբ, զօրութիւնն և հրամանք իբ, լուացարանն և աքանչելիք իբ, մանաւանայն և անապականութիւն իբ, վէմն կենդանի և վսեմակք իբ, սիւնն հրոյ և ճառագայթ իբ, որոտումն և աղդմունք իբ, յայն վերին և փրկութիւն իբ, ծառն օրհնութեան և պտուղք իբ, բարեխնամն և բարութիւնք իբ։ Իւ զի մի զքնաւն ասելով յամենայնէն վերիպեցայց, իբր յարեգակնէ պայծառեալ աչաց տկարութիւն, ի շատն ասել լռեցից և ի սակաւն ժամանեցից, բաւականացեալ ամենապիակար կարիս։

Գ. Բայց աւաղ յաւէտ ատամնօր թշուառացելոյմ եղկելի անձինս, քանզի կարգ բանիս բերէ ինձ խառնել ընդ ձայն աւետեացս բողոք դառնից. վասն զի ընդ այսոսիկ առնութեր սորին գայ արդարութիւնն և կըշիռքն, վճիռն և հատուցմունքն, քննութիւնն և լոյսն, յանդիմանութիւնն և զամբաւքն, մերկութիւնն և պատկառանքն, յայտնութիւնն և ամօթն, ամբիծն և վատակքն, թիւրեալն և պատիժքն։

Դ. Վարձեալ վերատին աշխատ կրկին եղկելոյս, քանզի գայ հասանէ առ հասկ հասակիս անհնարին բարկութեամբ մանգաղն առ հունձան, դատաւորն առ աւեանն, հզօրն առ բեմն, սպառնացեալն առ կորուսեալն, բազուկն առ դատաստանն, գաւազան խրատուն առ հարուածն, սպառազինութիւնն առ նախանձն,

հովիւն առ ընտրութիւնն : Քանզի բանն զոր խօսե-
ցար ընդ ես , նա դատի զդատաւորատեալս ի վերջնու-
մըն աւուր հատուցմանն : Այլ կանխեա , բարեգութ ,
նախընծայ քաղցրութեամբ առ նուազ հեծութիւն վա-
բանական երկիւղիս , և զօրութիւն ընձեռեա ձեռամբ
քով օրհնութեան ի յետին տագնապիս առաջինդ քո
օգնութեամբ միխիթարել , բժշկել , քաւել և կենա-
գործել : Եւ քեզ փառք յամենայնի յաւիտեանս յաւի-
տենից . ամէն :

ԲԱՆ Լ.Թ.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱԽԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա . Եւ քանզի զկերպարանն առաջին լքի ի վնասա-
կարին Թելադրութենէ խնամս ծուլութեամբ կորու-
սեալ ի սպառ , ցուցից արդ պժմուս զհնոյն իսկ տե-
սակ , ողորմելի հեծութեամբ թախծեալ ի հոգի , ա-
նաչառ խոյտառականօք հրապարակաւ ի յեկեղեցիս
բազմութեան ազգայ վերապատմեցից բարձր ձայնիւ ,
բարբառով մեծաւ աղաղակելով :

Բ . Մատեանս շնչական բարգեալ ի յինքեան ներքոյ
և արտաքոյ ողջս և վայս և ձայնս , ըստ տուժարի
տեղեանն Եղեկիէլի , քաղաքս անպատուաբար և անմա-
հարձան , յարկս ունայն ի գոնապահապայ ամրութեանց ,
աղս տեսակաւ այլ ոչ համեղութեամբ , ջուրս աղտաղ-
տին անախորժելի ծարաւեալ արբման , գետինս անօ-
գուտ հերկապարծութեան , սահմանս լքեալ հեղեղա-
վայրս կնճռոյ , խոպանացեալ և տատասկաբեր ան-
դաստանս , աստուածախնամ երկիրս անձնասուր՝ որ
բանսարկուին պատրանաց մշակեցայ , իւղընծիւղ փայտս

պղակորոյս, հատանելի ծառս ունայնաբոյս, կրկնաձեռ խօսուն տունկս անպտղս, ամենաշէնջ ճրագարանս անլոյս: Արդ վերստին առ սոյն բերելով զայս նմանուածիւն առաղականաց, բազմաք կրկնեցից. որ ամենայն գառն պատուհաս պահեալ կայ հիքոյս, կրճումն ա տամանց և անկէտ լալումն աչաց եղկելոյս, հայրական ցասումն անապուժելի դառնութեան որդւոյս, ապա կանուխիւնն անննորոգելի մեղուցեալ մարմնոյս, նոր կշտամբութիւն գոռոզիս չարեաց՝ ախտացեալ հոգւոյս, տարտամ տագնապի տարակուսանաց՝ ելից գերելոյս, զոր երկնային զօրքն մատուցանեն թշնամեցելոյս, ի խրճունս որոմանցն վկայելով՝ վտանգեցելոյս, ի ձայն ահարկու զանբժշկութիւնն ազդել լքելոյս:

Գ. Ահա արդարեւ երգս կատակերգութեան ընարաձայ պոռնկի, յածեալ և կոծեալ քաջ հնչեցուցեալ ողբս ողբմելիս և զկծեցուցիչս, ըստ առակաւոր բանին Եսայեայ՝ որ ի պատգամին Տիւրոսի: Ո՛վ թէ նա զդիպուածն փոքր անցից ապառնեացն ի մօտոյ իմն ապաւորեալ, բողոքեր զհնակս զհնակս կերպիւ կերպիւ առաղականաց, ըստ կոծողացն կաքաւելոյ, իսկ առ ի՞րչափս և ո՞րպիսիս ձայնս մրմնջեցից վհատեցուցիչս. որ զալտեռանն տեառն սպասեալ առանց վրիպանաց, մնացի անպատրաստ և անհանդերձելի: Արդ եթէ ըզ դատաստանացն ահաւորութիւն կրկնեցից, բազմացուցից ինձ աշխատ. ապա եթէ զփորձն խիստ թեամբ ցուցից, յաճախէ ինձ երկիւղ, իսկ եթէ զկերպարանացն սիրելի դրեցից, առաւելուն ինձ հատուցմունք, զի կանխաւ նկատեալ զսոյնս և ոչ անագան ապաշաւեցի: Այլ ինայեաս յիս, Աթած, մարդասէր, հզօր, բարերար, ամենապարգեւ Քրիստոս Աստուած, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ Խ.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՈՒՏ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒՐ ՆՈՑՆ ԱՂԵՐՍԻ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՄՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱԱՏՈՒԾՈՑ

Ա. Ամենակալ աստուած բարերար ստեղծիչ բոլորից՝ լուր հառաչանաց ձայնիս վտանգի, և յերկիւղէ տագնապի ապագային կարծեաց փրկեա կարող զօրութեամբ զերծեալ ի պարտեաց. քանզի բաւական ես յամենայնի առ ամենայն հնարս զօրանալ անքաւ մեծութեամբ և խմաստութեամբ անսահմանելեաւ:

Բ. Նա քանզի ուշիւ մտացս տեսեալ ի հեռուստ դիանդերձելոյն հանդէս ահաւորափայլ, նկատեմ ինձէն աստանօր կանխաւ զտիւն լուսոյ արբոյն յուսոյ, զօրն խաւարի պատժապարտիս պատուհասի. ուստի ոչ զօրէ ոք յերկոս առ պատուպարան փախստեան. ոչ անդունդք խորոց, ոչ վիհք վհից, ոչ բարձրութիւնք լերանց, ոչ անձաւք քարանց, ոչ կարծրութիւնք արձանաց, ոչ ծերպք ծակաց, ոչ փապարք փոսից, ոչ սոլք հեղեղաց, ոչ բաւիղք խորշից, ոչ շտեմարանք յարկաց, ոչ ծածկութիւնք սենեկաց, ոչ եմակք հովտաց. ոչ ծործորք գժուարաց, ոչ վերադրութիւնք բլրոց, ոչ արձակմունք ընդոց, ոչ անբաւութիւնք ծովուց, ոչ սահանք յորձանաց, ոչ հեռաւորութիւնք եղերաց, ոչ ողջմունք ձայնից, ոչ հեղհեղք արտասուաց, ոչ տատանմունք մտացն, ոչ համբարձմունք ձեռաց, ոչ պաղատանք շրթանց:

Գ. Այսոցիկ աստիւթեանց մասանց անճողոպրելեաց դու ես, տէր Քրիստոս, հնարք և դադարք դիւրութեան և անդորրութեան փրկութեան ամենամեղս հոգւոյ, արդ հայեա ի յանդերձ վտանգիցս շրջադրու-

Թիւն՝ միայնդ քաղցր առ ամենեսեան : Խզեա սուսե-
րաս յաղթական կենաղէն խաչիդ զքանցս վարմիս , որ
յամենայն կայից պաշարեն ՚ի մահ ղգերիս , և հան ՚ի
յանդորը զոտս սատանեալ Թիւր ընթացողիս : Խժշկեա
պհրատապ ջերմեական տոչորումն մղձկեալ սրտիս , մեր-
ժեա ղդիւային չարահնարութեանս շշուկ քո պարտա-
ւորիս , հալածեա զյուսահատ անձկութեան հոգւոյս
մթութիւն չարի կենակիս , յորւեա զծխամած Թանձ-
րութիւն բռնութեան մեղացս երեւոյթ մտելոյս ՚ի
յիս , կորո զզազիր Թիսատիպ կրից ապականութեանս
կարիս : Նորոգեա զպատկեր լուսոյ պաշտեցեալ փա-
ռաց մեծութեան անուան հզօրիդ յոգիս , զօրացո ըզ
շնորհիդ փայլուն ՚ի գեղ դիմացս և ՚ի կերպարան տե-
սութեան մտացս հողեղինիս , յարմար յերիւրմամբ
կացո յարդարեալ՝ որ զքոյդ բերէ նկատումն՝ նշուլա-
զարդ մաքրութեամբ զտեալ զմայլս մեղաւորիս , աս-
տուածային կենդանի անեղծ երկնաւոր լուսով քո
ծածկեալ յօրինակս երիս : Օ՚ի դու միայն ես օրհ-
նեալ ընդ հօր ՚ի գովեսս հոգւոյդ սրբոյ յաւիտեանս
յաւիտենից . ամէն :

ԲԱՆ ԽԱ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՕԿՈՒԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱԱՏՈՒԾՈՑ

Ա. Ողորմեա աստուածդ կենդանւոյ օրհնեալ յամենայնի , հօրդ ահաւորի անքննին ծնունդ , որ տկարանայ առ ՚ի քէն և ոչինչ . որ ՚ի ծագել անստուեր նշուլից ողորմութեան քոյ վառայ՝ հալիլն մեղք , հալածին դեւք , ջնջին յանցանք , խզին կապանք , խորտակին շղթայք , կենդանանձնին մահացեալք , բժշկին հարուածք ,

ողջանան վէրք, բառնին ապականութիւնք, տեղի տան տխրութիւնք, նահանջին հեծութիւնք, փախուստ խաւարըն, մեկնի մէգն, մերժի մառախուղն, փոթորատն մեայլն, սպառի աղջամուղջն, վերանայ մութն, գնայ գիշերն, տարագրի տագնապն, չքանան չարիքն, հաստատին յուսահատութիւնքն, և թագաւորէ ձեռն քո ամենակալ, քաւիչդ ամենայնի։

Բ. Որ ոչ եկիր կորուսանել զմարդկան ոգիս, այլ կեցուցանել. թող ինձ զանթիւ չարիսն իմ բազում ողորմութեամբդ. զի դու միայն ես յերկինի անճառ, և յերկրի անշնին, ՚ի տարր գոյի, և յեզեր ծագաց աշխարհի, սկիզբն ամենայնի և յամենայնի ամենայն լրմանբ, օրհնեալ ՚ի բարձունս, և քեզ ընդ հօրդ և հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ԽԲ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Տէր աստուած գթութեան, փրկութեան ՚և ողորմութեան, քաւութեան և նորոգութեան, բժշկութեան և առողջութեան, լուսաւորութեան և կենդանութեան, յարութեան և անմահութեան, յիշեա զիս յորժամ գայցես արքայութեամբ քո՝ ահաւոր, հզօր, բարերար և ամենատեղծ, կենդանի, գովեալ, ամենակատար, մերձ ՚ի հեծութիւն համայն եղելոց։ Ընդ խաչեցելոյն ընդ քեզ պաղատիմ, որ ոչ ըմբռնեալ վասն քո և ոչ կապեցեալ, ոչ կախեալ և ոչ բեւեռեալ, ոչ կռփեալ յանուն մեծիդ և ոչ անարգեալ, ոչ լսկեալ և ոչ նշկահեալ, ոչ խորտակեալ և ոչ մահ հայեալ, և արքայութեանն արդարոց մասին անձկա-

լեայ լուսոյ արժանի ցուցեալ, իրաւամբք ուխտի երդմնականաւ ամենիւն աղդեալ զանխոխտութիւն բարեացն տուելոյ, փառաւորեցեր առ յոյս փրկութեան՝ ի սպառ լքելոյս:

Բ. Օրհնեալ օրհնեալ և գարձեալ օրհնեալ, և զիս ընկալեալ նովին հաւատովք կանգնեա՝ ի կործանմանէս, բարերար, բժշկեա՝ ի հիւանդութեանցս ախտից ողբալոյ, յերկերայ մահուս գարձո զիս՝ ի կեանս, կենդանութիւն. քո եմ և ես, կեցո ընդ նմին, ապաւինութիւն. անձամբ մեռելոյս կենդանական շունչ ընծայեցո, յարութիւն, կեանք, անմահութիւն, անպակաս բարութիւն, անսպառ հնարս, անխոտոխ նեղողութիւն, աչ ամենազօր, ձեռն ամենիշխան, մատն ամենամերձ: Կամեաց տէր և փրկեցայց, ակնարկեա միայն գթութեամբ՝ և արդարացայց. ասա բանիւ՝ և վաղվաղակի անարատ գտայց, մտածեսիր զիս՝ և բեացն՝ և անդամին համարձակեցայց, առաւաձեռնեա՝ և արդէն՝ ի քեզ խակ պատուաստեցայց. փառաւորեալդ յամենայնի յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԽԳ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՅ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Բժշկական կրթականութեան ամենափորձ հնարքաւորութեամբ պատճառ կենաց անախտականաց, Թագաւոր զօրաւոր երկնաւոր՝ տէր Յիսուս Քրիստոս. աստուած ամենեցուն, իմանալեաց և տեսականաց. ահա դու՝ ի յիս ըստ մարգարէին՝ որ ընդ ասելն՝ նոր կցորդութեան. առ որ բարեզարդ դաշամբ այս բանի ընդ քեզ միութեան, լուսաւորեցայց կրկին

ողջասեալ ընչով և մարմնով, ամենայնիւ կատող և անվանելի։

Բ. Որ ոչ կարօտանաս սպեղանեաց առ պատրաստութիւն պատանաց հոգեկան վիրաց, ոչ ժամանակի, ոչ միջնորդի, ոչ աւուրց երկարաձգութեան, ոչ փոփոխս մատուցանելոյ, ոչ հատման, ոչ խարման, ոչ սրբադործութեան, զոր երկրաւորս դեղատուութեան, առ որս միշտ է վերիպութիւն և ամենասխալ տարակուսութիւն։ Այլ քեզ արարիչդ հոգւոց և մարմնոց ամենայն ինչ լուսաւորեալ է, ամենայն ինչ առաջի է, ամենայն ինչ գրեալ է, ամենայն ինչ դիւրին է, հայմայնն հնարաւոր է, խմաստն գլխաւորեալ է, խոստումն լցեալ է, կամքն կատարեալ է, քո կամին աշխատան է, քո վճիռն աղաւաւթիւն է, քո մատեանդ նըն չնորհ է։ Ոչ փակեալ ես ընդ օրինօք, ոչ պարտնակեալ ես ընդ կանոնաւ, ոչ արգելեալ ընդ նուաղութեամբ, ոչ խանարհեալ ընդ հնազանդութեամբ, ոչ պարագրեալ ընդ փոքրկութեամբ. ոչ չափեալ ես ընդ սահմանաւ, ոչ վերպեալ 'ի բարկութենէ, ոչ այլայլեալ ինչ 'ի ցասմանէ, ոչ սխալեալ 'ի խաւութենէ ոչ ամբոխեալ 'ի խռովութենէ, ոչ դղրդեալ յանդիմատութենէ, ոչ փոփոխեալ յողորմութենէ, ոչ պակասեալ 'ի բարձրութենէ, ոչ լքեալ յայցելութենէ, ոչ ակարացեալ 'ի փրկութենէ։ Դու սկիզբն և լուսմն ամենայնի, և 'ի քէն է ամենայն. և քեզ փառք և երկրպագութիւն յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ԽԴ.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱԻԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ըստուած անսահման, ճնուն զ աստուծոյ հարա-
զատ անթարգմանելի, արարիչ բնաւին եղելոց, Քրիս-
տոս Թագաւոր, լոյս ի խաւարի սրտից մերոց. ընդ մեզ լսմամբ և ընդ առաքչիդ խոկութեամբ, մե-
րայնովս զքոյինդ ծանուցանող հրաշապէս: Հայր քո
օրհնեալ երկնաւոր անճառ՝ որ առաքեացդ զքեզ ի վերուստ, ուր փառակիցդ ես արարչութեամբ. այն-
քան հոգացաւ փրկութեան իմոյ տարագրեալ գերւոյ, մինչեւ զքեզ իսկ մատնեաց մարդկան: Իսկ դու կա-
րող գոլով ի վեր քան զվիշտս, զանտեսութեանն ա-
ւարտեալ խորհուրդ՝ հաճեցար ընդ պարտեցեալսմ զմահուն ճաշակել բաժակ անթերի մարդկութեամբ և անպակաս աստուածութեամբ: Ւր հոգիդ սուրբ կեն-
դանարար՝ որպէս քո և հօր քոյ իսկակից, և համա-
պատիւ էութեամբ ճնողիդ և ճնեցելդդ: Ամի Աբրոր-
դութիւն կատարեալ ի դիմաց երից անորոշելի հատ-
ուածոց, անսկիզբն և անժամանակ, բնաւին բարե-
բաթ, համայն կենդանարար, բոլորից խաղաղարար, ստեղծիչ գոյից և յօրինիչ ամենից, անքակութեամբ և միով բնութեամբ փառաւորեալ:

Բ. Իսկ եթէ հայրն գթած երկնաւոր հզօր՝ մին յե-
ութենէ՝ վասն մահապարտիս յանցանաց մատոյց զմի-
այնակ ծնունդդ յանքննին ծոցոյն, ոչ անխոցեալ յոր-
դիդ ի համապատիւդ և ի սիրելիդ, այլ կամաւ նուի-
րեաց մահու չարչարողացն զինու, ըստ մարգարէու-
թեանն Օ՛սեայ. վասն զի զարթնուլ սրոյն ի վերայ

հովուին, և հարկանիլ նոյն ինքն հօտապետին, և ցըրուիլ ոչխարացն հօտին, որպէս օրինակն նուբք նահապետին և ուխտադրուժիւնն խորանին և նուիրուածն արեան սպանդին և առակ խորհրդոյ աբրահամեան պատարագին, զիրկուժիւն թշուառացելոցս ՚ի կամաց կեցուցչիդ յառաջագոյն նկարագրէր, և արդ հիմ արտաքս անձն իմ կործանեալ՝ ոչ յաստուածուստ հըն նարաւորուժեանց, այլ ՚ի քումդ ինքնագործ հակաժուժեանց, կամ ընդէր զիս խուովես՝ յուսահատուժեամբ սատանայականաւ զմիտս հարեալ. յուսա յաստուած, խոստովան լեր նմա, և նա հոգա վասն քո, ըստ դաւժեան սաղմոսին, և այլ մարգարէի կենսաստիարակ բանիւ:

Գ. Իսկ յերգանակ ինամարկելոյ հաստողին ՚ի վեր ե քան զսահման կշռուժեան մտաց հրեշտակաց և երկրակացաց. և եթէ բիւրս կրկնեսցի, ոչ լինի չափեալ. քանզի անբովանդակելոյն և բարերարելն է անճառելի: Նա զի ոմն օրհնեալ զոմն օրհնաբանեալ յերրորդական համագոյուժենէն առաքեաց. իսկ նա ՚ի հաճուժիւն կամաց առաքչին մեռաւ. և միւսն ահաւոր՝ ՚ի յերկուցն հաւանուժիւն՝ մեծաշան բաղձանօք մատեաց: Իսկ համաբարեաց միակամուժեանն ցուցակ՝ առ ՚ի զնոյն բարի ներգործել, որպէս հոգին կենդանացոյն և բանն բանականին, պայծառուժիւն փառացն և կերպարան էուժեանն: Ընդ կեանսն փոյթ, առ ողորմուժիւնն սփոփ, առ ձեռնկալուժիւնն պատրաստ, առ փրկուժիւնն կազմ, առ առատուժիւնն յորդ, առ յաճախուժիւնն զեղուն, առ անբաւուժիւնն լի, առ աննուազուժիւնն փարթամ, առ երկայնմտուժիւնն ճոխ, առ անհատուժիւնն բարձրեալ. մի նըրոդուժիւն կատարեալ ՚ի յանձանց երից, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ՐԱՆ ԻԼ.

ՎԵՐՈՒՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՈՒԿՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. ԶԻ արդ յոյս բարեաց անկեալ ՚ի սրտի՝ անձն իմ կործանեալ, և գօտեաւն հաւատոց պնդեալ զերիւ կամանցդ երկակի մասունս՝ զկրկնապղտոր խորհրդոցդ զանկականիդ գործարան, խոստովան լեր բարեբարին աստուածոյ՝ զմոացդ իբրեւ զգործոց, զխորհրդոցդ իբրեւ զլուսաթեանց, զանտեսիցն իբրեւ զյայտնեցեալց, զսրտիդ ծածկութիւց իբրեւ զբարբառումն ձայնիւց, զկինարկութեանցդ իբրեւ զարդիւնականաց մեզաւնաց, զազդել չքնանցդ իբրեւ ՚ի գլուխ ելելոց չարի, զոտիցդ հետոց իբրեւ զպատուիրանաւն աստուածոյ վազողաց, զձեռացդ ձգումն առ ցաստումն իբրեւ ՚ի հեղումն արեան գործողի, զծիծաղելն բնաւին իբրեւ զկամաւորական լքումն ընտրելի, զերգմնականն՝ որ թէ ՚ի հանդէպս թէ ՚ի տարադէպ՝ իբր զգործակցութիւն խաբողին, զամբարտաւանութիւնն իբր զկին կործանիչ նախաստեղծին բարձրութեան, զպարին նեղութիւնն իբրեւ զթերութիւն հաւատոց, զմերկութիւնն իբրեւ զպատուհասն զօրաւորին պնդութեան, զտրտունջն առ վտանգս կրից՝ իբր զուրացութիւնն ուխտին որ առ տէրն, զպատրաստանութիւնն իբր զթոռն իմն անդթութեանն, զամբարհաւաճութիւնն իբր ոչ ելիք առ վեհան գոռոզութիւն, զհպարտութիւնն իբր զկամակոր հարազատ գտողին չարեաց, զակամայիցն ընդ կամաւորացն, զբռնացելոցն ընդ հաւանականացն, զեկամուիցն ընդ բնաւորականացն, զանօրէնութիւնն ընդ ապատուածութեանն, զփաքսունն ընդ սաստկագու-

նիցն, զնուաղուձան ընդ յոլովիցն, զանճառիցն խմոց իբր զճառելեաց գիտողին, զանդրելոց ճկաստուցն իբր զնկարելոց տեսողին ՚ի յարձան մագնեսեայս վիմի, զգ թեթեւագունիցն առ խաւիր մոսայ իբր զստուար ծանրութիւն բեռանց, զինդիր չափոյ ծածկելոցն իբր զգ ճշդով պահանջումն սահեր սակի ՚ի բերանոյ կիսոյն կորնթի չորեքդրամեան կշռութեամբն, զանդնդակա նացն գործոց իբր ՚ի յականջս աստուածոյ արագ ժամանելոց։ Ո՛յսոսիկ յաճախեա կուտեա կրկին յանձնառութեամբ, վերստին պատմեալ աստանօր մեծաւ հեծութեամբ զէդոյն իբր զեղելոց, ընծայեալ աստուծոյ զպարտութիւն վանեցեալ անձինդ. զի ընկալցիս ՚ի փոխառուէն զչնորհօք Թողութիւն պարտուց մեզաւորին, զոր աչքն արդարացոյց և հրաշափառապէս հաչակեաց, ամենապատիկ ներբողիւ կրկնեալ զգուեստ զղջման քան զպարտառանս մեզացն։

Ե. Խարդեա և դիպեա անձինդ մեզապարտի բամբասանս յաքուանս զքոյն խոհերս բազմամանեայս, անձն իմ կշռամբեալ յոքնախթանդ բանիւ. զչարութիւնն, զանօրէնութիւնն, զվնասութիւնն, զառ ՚ի մարսին հանդիսե փախուստ, զպարտութիւնն, զմեղսնութիւնն, զամբարշտութիւնն, զապշութիւնն, զմերթութիւնն, զքուանն արհնական, զառ ՚ի չընթացսն զնիրհուածին, զխորհուրդն օտարոտի, զանիցն նանրութիւն, զղազրութեանն հաճութիւն, զյամենայն ՚ի նմին, զփափագելն աստուածոյ առելեացն, զանեկիսզութիւնն, զանառաստութիւնն, զանհարթութիւնն, զթերութիւնն, զթիւրութիւնն, զլուծութիւնն, զգճշդութիւնն, զանկապ արձակութիւնն, զծիծաղականն, զվինջողականն, զկատակերգականն, զգայթակղականն զպարտրողականն, զանդէպ քաջութիւնն, զանյարմար մարտսն, զառանց օրինի արիութիւնն, զխեղդմանսն հոգւոյն, զառատանողականն զերկչտութիւնս, զգաղմաստեղնեան ճիւղն զրահեռականս, զանպատկառ փարաքմանն, զդժուարութիւնն, զդժգիտու-

թիւնան, զանդատ առելութիւնան, զմարմնաջնջունան ղիւրըմբռնողականս, զխոքունցն զանկշռութիւնս, զհոսոմանցն դժոգութիւնս, զուխտիցն մոռացութիւնս, զնմանեացն այլակերպութիւն, զկեղծեացն քաղարկութիւն, զփառամոլութեանն մորոսութիւն, զյօնիցն յաւակնութիւն, զապիրատութիւնան, զինքնասիրութիւնան, զնախագահիցն տենչութիւն, զհատուցանելն եղեռնականացն, զնոցինան զանշահ աղաճատանան, զվայրապար բերմունան, զընթացակցութիւնան խորամանկութեան բանասարկուին, զբանին սերմնահաթուածիւն, զվաճառումն կենացն ընդ գնոց սատակմանն, զկորուստ աւանդիցն, զհայրենեացն ծախս, զկապարանն ձգողական, զխոկով լծոյ երկնից անխզելի ըմբռնմամբ զանօրէնութիւնս, զյարաթափ թաւ տղմաբնակութիւնս, զլքումն լաւացն, զընթադրութիւնս անկարծիցն, զկնի դարձին առ նոյն դարձ դաժանական, զնորոգ մտացն, զօսար խորհրդոցն, զանկայուն կամացն, զհաչման հագագին, զերութիւն չնչոյն, զերան քան զահման կանոնացն դրութեան՝ զիշխանականին զամենատփիւռ բացարձակութիւն, և զոր չէ ճառելի և կամ գրելի և կամ պատմելի և կամ յերեսս դիմոյ բերելի։

Գ. Նա արդ զիա՞րդ բժշկեսցիս, անձն իմ եղկելի, ՚ի յայսքանեաց սիպացյ խոցոտեալ, բարձեալ թողեալ այր մի տարագիր անողջանալի, ըստ մարգարէին. քանզի մի ՚ի վերագրելոցդ բաւականապէս զօրէ սատակման, թող թէ այսքան դասք սպանողաց դժնէից դահճաց չուրջ պաշարողաց։ Անաւանդ զի ոչ այսու և եթ նմանագրութեամբ կշռի տարացոյց տարժանեցեալոյս, այլ զոր օրինակ անթիւ բազմութիւն կայտառաց կարճաց խայթողականաց՝ ՚ի տորին մասունս ծայրից տանոյն զօրհասական թոյնս բերելոց, և յաման մաշ կեղէն արկեալ ամփոփէ զելեկն շաւիղ կապարանին ընդ ափակութեամբ, ցուցանի արտաքուստ բարիոք, խակ ՚ի ներքուստ համբալք չարի և պահեստ կորուս-

տեան և կայս կանծման և գործնեայք սատակման և մշակք մահու ։ Արդ այսոքիկ են ամբարեալքն քս աՆօրհնութեան տաժանեայց Թշուառաքիրան Թոշակք, անձն իմ պարտական կրկին սատակման. որ կամաւորաբար ընկալայ ՚ի քեզ, զոր Թշնամին սերմանեայ ՚ի վերայ ցորենոյն՝ յագարակի աշխարհիս. ով այր անմաքուր՝ ամբարիշտ և ծոյլ, բնաւին առեցեալ, սիրողդ մատղդ ախորժմամբ զլցեալն առնեայն անառակութեամբ, և զոր առաքեալ ցուցանէ զԹիւս բանիցն սարսափելեացն կշտամբողաց, սատուստ սկսեալ մինչեւ ՚ի կատար կանանի այնր պայմանի, և որ հասեալ են, ասէ, յատուածոյ իրաւանցն վերայ, եթէ ոքը զայսպիսիան գործեն և կամ կամակից են, արժանի են մահու ։ Արդ ես ինձէն զիս ինքն պարտ վարկայ կրկին հատուցման կոչտեան սատակման ՚ի մահ դատապարտութեան. այլ անհայեա յիս ողորմութեամբ՝ բարեգութ, կենդանի, հզօր, կամարար, կարող, հնարաւոր, օրհնեալ յաւիտեանս. ամէն ։

ԲԱՆ Խ.Զ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՅՏՈՒԾՈՑ

Ա. Արդ վըխպեալս ես յաւէտ ամենապատիժ, միշտ գժնեայ վայրենաբարոյ անձամբ անձին մահու կշտամբիչ, արածոյս պերճամակ զաղիրս վայրագասունս խոզից արօտականաց գարշելութեան մեղայ նախատ վարձկանութեանց. հովիւս սատոյական զհօրանս ուսուցն ամպաբնակաց ՚ի վրանս հովուացն, ըստ երգոյն երգոց առիս առակին. որ ոչ իսկ ծանեայ զնս երբեք գիտել, թէ յո՞վ և յո՞ր պատկեր և վասն ո՞ր գոյացայ ։

Բ. Ահա ի յոտս տանուղականս կրողաց երկուց միաց կոյրդ խորհրդականաց, ըստ ձեռաց հրեշտակի կառուցաւ, իբր ի Թուիչս Թեւոց կրկնաբարձ բազկաց վերատանուղաց յաշխարհն հայրենական հայել, ուր յիմար, զնաւդ քեզէն կորացար յերկիր, զաստեացս միշտ հոգացեալ դիպուածս, ընդ ցիւս անապատականս հառմարեցար։ Իբր զձրագ բանմաբերանեան ի յաշտանակի մարմնիդ հաստեցաւ գլխոյդ բոլորաթիւն, զի և այսու ի յօրինակէն հնորհէ մի օտարացիս զաստուած տեսանել, և զմիացականացն իմաստասիրել։ Խանականաւ Թեանն յարգանաք կրկին ճախացար, զի ըզ յաղթանակ բարեմտանաւ Թեանն որ առ քեզ եղեն՝ անարգել լեզուաւ խօսեացիս։ Զեռինդ հաստամբ յարմարոտեան մատանդ չառաւեղաք՝ զգործնականացն արնօրինել զանտեսաւ Թիւն, իբր կոյրդ համացեղաւ Թեամբ ամենաբաշխ աջոյն աստուծոյ՝ աստուած կոչեցար։ Ի ըից հարիւրոց և տասանց վեցից յօդիւք շաղկապեցար, յարեալ ի քեզ ընդ նոսին ի նոյն և պատշաճական մանուն չափոց ազգողականաց հինդ զգայաւ Թեանց, զի մի և երեւելիդ նիւ Թականաւ Թիւն քոմդ տեսաւ Թեան՝ մատդ դիտման անդատ եղիցի. զի ամենք ըստուարք են և զօրաւորք, և այլք փոքունք են և սիւ տանիք, կեաք կարծրակերտք և ազդողականք, են և գողտրականք և պատուականագոյնք, դարձեալ կարեւորք և պատկառելիք։ Իսկ ԹարգմանուԹիւնք սոցին տեսաւ Թեան ի քեզ են նկարեալ իբր յարձանի անչքին Քանանի անձն իմ եղկելի. որպէս զի և տարր ժամանակաց և շարունակ հետեւման աւուրցն առ պատկառանաց, իբր կանոնաւ իւիք սահմանեալ մատամբքդ՝ անսխալ և անայլայլելի պահեացի։

Գ. Դարձեալ այլ օրինակ հոգեւորական, որ զսիրոյն յօդուած շաղկապէ ի մի առ եկեղեցի, քեւ խորհրդածի. իբր զի առանց բնաւից զուգամանաւ Թեան կապակցել լծով հաւանականաւ զվերն ընդ փոքուն, միաւեալ է հաստատածոյն անարատաւ Թիւն յանուն

Քրիստոսի Աստուածութեան, որպէս՝ ի հաւատս և ի նուա-
զութիւն միոյ յանդամոցս անարգացս պատուաստելոցս
՝ի մարմնի, կրճատեալ լիցի է յօրինուած կազմուածոյ
մարմնոյ քումմէ սենեկի զգայականի, և շրջեալ է ընտա-
նութիւն պատկերին յանարդ փոփոխութիւն։ Նոր արդ
այսպիսեօք, և եւս բազմօք անզուգական հրաշակերտ-
ութեամբ եղական պատկեր աստուածոյ՝ կչտամբեալ
՝ի սպառ ոգի իմ գերի. և թէպէտ յառաջին նմանու-
թենէն կողոպտեալ գտար պատուիրանին յանցաւորու-
թեամբ՝ ի դրախտին կենաց, այլ աւազանին լուսազարդ
շնորհիւն զՆոգւոյն փչումն առեալ, և նմանութիւն
ես կերպարանին. և արդ ընդէր կորուսեր զխառն
երկնաւորս, իբր նախասահեղծն երբեմն զվիճակն երկ-
բաւոր Ա՛դին դարաստանի. ընդէր փակեցեր քեզէն
քեզ զերկին, և զվերելոյն դուռն աղխեցեր. ընդէր
խառնեցեր ընդ ջրոյն մաքրութեան զախտ արատաւա-
ցըդ տարժանութեան. ընդէր զլուացեալ զձորձ վե-
րարկուին գարշելի գործովք զազրացուցեր. հիմ դե-
դեալ հանդերձին մեղաց պատմուճան անաւակ վա-
րուք քեզ արկեր. ընդէր զտանողացդ ոտից սրբու-
թիւն ճանապարհաւն ժանդից ազատեղեր. ընդէր կրկ-
նեցեր իրաւագատին զուխտաղանցութիւն հին պա-
տուիրանին. ընդէր մերժեցար՝ ի պաղոյն շնորհաց,
իբր զԱ՛դամ՝ ի ծառոյն կենաց. ընդէր նենգեցեր քեզէն
քո կամաւ զանապատերյուսոյն յարարակայութիւն. ընդէր
պատճառանք անհամարձակելիք քոյին դիմացդ նպաս-
տեցեր. ընդէր զինեցար ընդդէմ քո ներհակ, ով ըն-
դունարան խելագարութեան. ընդէր որպացար՝ ի ծու-
զակ մահու՝ Թողեալ զարահեան վստահութեան. ըն-
դէր կարթիւ պատրանաց ածար հաղորդդ մարմնոյ կեն-
դանարարին։ Ա՛յլ վերստին յուսացեալ՝ ի նա կարդա
նմա ապաւինելոյս քաւիչ նորոգիչ փրկիչ կեցուցիչ և
կենդանարար, ողորմած խնամով մարդասէր և անս-
խալական բարեգութ, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ԽԱ.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. ԶԻ արդ զինչ գոյ ասել ամաչեցեալս յերեսաց մեծիդ ահաւորութենէ, բայց եթէ համրանալ և հոգ ՚ի բերան եղեալ ըմբել ՚ի սրտէ, զոտ մարգարէութեանն խրատու, ահա ՚ի բարւոյն կարկառեալ ՚ի յոյս։ Իսկ եթէ զփականս շարժողութեան չքմեղանցս բացից, բըղ նադատեցից խօսել կամեցեալ, դարձեալ զնոյն ձայն կրկնական եղերերգութեան լալեաց բազմութեան խէթ մոացս յառաջադրէ։

Բ. Զի արդ ողբակից մեծ մեղաւորին անօրինելոյ կամաւ առ ՚ի մահ՝ զնորին գոչեմն երկրորդեցից և ես ընդ նմին. մեղայ տէր մեղայ, և անօրէնութեանց իմոց լինձէն վկայեմ։ Չխնսեալ ընդ նմին զբանս յիս ներորդի սաղմոսին, անթիւս գրեմ զպարտուցս սակ անձինս մեղաց՝ քան զհիւղ երկրի հոգմահաս փաշեալ ընդ օդս ամենայն տարածեցեալ։

Գ. Աղայ յերկինս և առաջի քոյ, ընդ անառակ որդւոյն պատկառեցեալ հայրենի գթոյդ վերստին դարձեալ թախանձ արկանեմ. զողորմելին ձայն աղերս սանոյց արտօսրածին ողոմիք գոչման ՚ի տխուր գէմս մատուցեալ առաջի քո տարածանեմ, հայր գթութեանց, ասուած բոլորից, չեմ արժանի կոչիլ և ոչ բնաւին առ այս անուանիլ, ոչ միայն որդի, այլ և անպիտան ապաքան վարձկան։ Ընկալ զսովեալս տարագրական, պարտական վիճաւոյ. և զքաւ քաղցոյս լկաց նաց նեղոյս նուաղեցելոյս՝ կենաց քո հայեւդ բժշկեացես։ Եւ ընդ առաջ քո ողորմութեամբդ ՚ի սկզբնա

ւորս ապաւինութեան. զգեցս, զքաջ և անվհատ, անօրինեալս մեղապարտի զնախահպատա հանդերձին ծածկեցեր. աւանդակորոյս ձեռացս աղտեղեալ մեղաւք՝ զկնիք մատանւոյն համարձակութեան ամենատաս կամաւք մատուցես. զպարշապարացս թշուառութիւն մերկութեան ոտից՝ պատապարութեամբ աւետարանական ամրաւերարկու օդեցս կօշկաց ի յօձին թիւնից միշտ ամրացուսցես: Ողջատրակդ պարարակի եղիցիդ երկնայնոյ, որ է միածին որդիդ քո օրհնեալ խոհապետ մարդասիրութեամբ, կարօտելոյս բարեաց նուիրեա. որ մատուցեալ միշտ և անպակաս մնայ ի լրութեան յարակայ զենեալ ի սպանդարանի անթիւ սեղանոյ անսպառութեամբ, բոլոր յամենեսեան և բնաւ յամենայնում, էութեամբ յերկինս և իսկութեամբ ի տուրբինս, աննուազ մարդկութեամբ և անթերի աստուածութեամբ. փշրեալ և բաշխի ի մասունս անհատս, զի զհամայնն հաւաքեսցէ առ ի նոյն մարմին իւրում գլխոյ. քեզ փառք ընդ նմին, հայր ողորմութեան, յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԽԲ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Բարձրեալ, հզօր, անակնկիզն, անեղ, անբովանդակելի, աննկրտելի ակնդ նկատող, ծնող անքնին փառաց միածնիդ. իրաւացուսցես զնմա ողորմութիւն հերքեցելոցս ընդունելութեան առ երկնայինս և առ երկրաւորս: Տնեա զկեալս կորուսելոցս վերնականացն պարերգութեամբ, աւետարանեա բանիւդ օրհնութեան զկենդանութիւն իմ մահացելոցս, զբարեբաս

տուԹիւն կամացդ յայտնեա, զովեալ բոլորից գոյից եղելոց, ստացիր անուն քեզ անճառ և ինձ Թշուառիս նորոդ փրկուԹիւն, կորուսցես զդիր մուրհակի մեղուց ելոյս ամբաստանուԹեան, զվճիռ հոգւոյս մահու ընեսցես կայլակօք արեան որդւոյդ սիրելւոյ, վասն հուԹիւն փրկուԹեան բարեաց արեամբ Քրիստոսի քո նկարեսցես, ցոյց զսքանչելիս քո բարեԹուԹեանդ ի ձաշ հարսանեաց քում հարաւատիւ։ Ամի փակեսցես դիմելոյս առ քեզ զառապատ սրտի կենացդ յարկի, մի տրտնեսցես ի բազմականացդ և ի բարեացդ քո զրկեսցես, մի պահեսցես ի գանձարանիդ զնուԹեալ իմ պարտուցս անօրէնուԹիւն, մի կնքեսցես ի քոյակ բարեացդ զշաղուԹեանց իմոց գաղջուԹիւն, մի երբ կարս ինձ զվէր մեղացս ի յախտալից մարմնիս ծածկեացես, մի զփառուԹիւն նեխուԹեան ցաւոցս ինձ արձակից մահու ճեպցուսցես, այլ բարձ բանիւ քոյդ ո զորմուԹեան զժանուԹիւնն ապականարար, որպէս զի զատեալ ի հիւծմանց ախտից՝ առողջուԹեանն պատրաստեցայց. հնարաւորեա, զԹուԹեանդ հայր, մեծ խոցուածոյս զօրեղ ապեղանիս, կարեւոր կործանմանն՝ բարի պայելուԹիւնս։ Օ՜ի քո եմ, տէր ոչ եմ, Թէ և առ մի նուագ բիւրս մեղեցեմ, բայց ոչ գրեցայց համայն մեղուցեալ, տուիչ կենաց իմոց բարերար, ի շնորհ պարգեւաց կենաց քոց ապաւինեալ. զի ճանաչէդ գքեզ բովանդակ արդարուԹիւն ես, և գիտել զզօրուԹիւնդ քո՝ արմատ անմահուԹեան, որպէս և կանխաւ իսկ գրեցայ իմաստունն. և դարձեալ՝ սիրելդ քո, ասէ, ամենեցուն, ինայելոյ քեզ յամենայն. և դարձեալ, մօտ է քեզ յորժամ և կամիս կարող գտանել։

Բ. Այս Սողոմոնի յուսոյ աղերսանք իմոյս առեալ տիպ. քանզի ոչ այլ ոք բազմամեղ որ քան զնա ինձ զուգաշաւիղ. երբեմն որդի, ապա առեւլի. երբեմն միջնորդ խաղաղուԹեան աստուածոյ ժողովրդեանն, և յետոյ խորոյ որոշման բազում խառնուԹեան. երբեմն օրէնք կենացդ կացեալ, և յետոյ մուրհակ մահու հաս-

տատեալ, զերկնաւորին պաշտօն ընդոստնեալ, և զօտա-
րին անուն ծանուցեալ: Ընդատճառ օգտող, անկարօտ
զկող, անսովելի դող, գրգեալ տրանջող, փափկա-
ցեալ փախստական, սեզանանենդ սարսուցեալ, ան-
պատասխանի վնասապարտ, քաղցրանոյց հայհոյիչ,
զաւակ հայրատեաց, կռակարանացն մատնիչ, Մովսե-
սի ջարախօս, մռռացող երախտեացն, խմաստուն սխա-
լական, ամենագէտ յանցաւոր, ամօթապարտ զղջա-
ցեալ, տարակուսեալ աշխատող, աղաչաւոր կռապաշ-
տեալ. յամրոյին դարձաւոր, կաղակարծ ընկալեալ,
կասկածաւոր հաշտութիւն, յապոյս յիշատակ, յերկ-
բայս փրկութիւն, չաւատալի գիւտ, ի մանկէ մեա-
ցած, խարդաւանեալ գերի, կիսակատար պրծեալ,
կամաւոր անձնամատն, տմարդի յղփացեալ, բազմա-
վէպ հանճարեղ: Ի յընթացս բանից երկեակ որոշ
մանց՝ ամենայն ուրեք բանս արկեալ ողջոց և ձաղա-
նաց, մեծ պարսաւ և փոքր գովեստ՝ իբր ի վերայ
ինքնագրաւ կորստականի, երգիծանութիւն խառնեալ
ընդ աշխար. բանն նորա թելադիր բարգաւաճութեան ա-
մենայն հասակի, և խոտորումն նորին ի չքնաւութիւնս
թառանչ թախծութեան ողբմելիս իմն ազդեալ:

Գ. Ո՛ւրմանամ, վհատիմ տարակուսեալ ապշու-
թեամբ. զի թէ նա այնքան գթեաց, ինձ զի՞նչ պա-
տահեսցէ. զիմիդ անկաւ ամբարձեալն, զիմիդ սասա-
նեցաւ հաստատեալն, զիմիդ կործանեցաւ կառու-
ցեալն, իբր օտարացաւ ծանուցեալն, զիմիդ զակա-
տեցաւ զաւակն ընտրութեան, զիմիդ սրացաւ մեր-
ձաւորն, զիմիդ աղօտացաւ փայլեցեալն, զիմիդ պա-
տանդեցաւ աղատեալն, զիմիդ անօրինեցաւ ուսու-
ցիչն, զիմիդ նուաղեցաւ հռչակեալն, զիմիդ անար-
գեցաւ փառաւորն, զիմիդ փոքրկացաւ մեծատունն,
զիմիդ ամբարշտեցաւ բարեպաշտն, զիմիդ ամբար-
հաւաճեցաւ ընտրողն, զիմիդ ունայնացաւ պատա-
րուճն, զիմիդ կորեաց զուխտն որ ընդ բարձրելոյն:
Պատկառեմ ասել, թէ և ընդ սանդարամետականին

կապեցաւ. զի կայր նորա և կռոց, ուստի սէրն ընդ պատկերաց, վասն էր կամքն ընդ խորանաց. զիաւրդ ոչ յիշեցաւ յանդիմանուԹիւն Սամուէլի առ Սաւուղ եղեալ, հմայք, ասէ մեղք են, և ցաւս և աշխատուԹիւն ածէ Թերափՙ ի վերայ. զիսիրդ ոչ հայրենի յանդիմանուԹիւն, կուռք, ասէ, հեԹանոսաց դեւք և անշունչք են, և նման նոցա լինին պաշտօնեայք նոցա։ Ցէր միայն ածեր զնոսա, Սովսէս նախապրեալ յառաջաձայն ձաղանաք սաստիկս լինի ամբաստանէ, ոչ էր ընդ նոսա ասէ աստուածս օտարոտիս, զոր ոչ ճանաչէին հարք նոցա։ Որ է մահամատոյց պղտղնեայ արձանն Փագովրայ, ՚ուր տգէղն և անպանծալին սիդոնացւոց իգական ամենանզով ձուլածոյն, ՚ուր կանացի կերպին անգրեցին խայտառակուԹիւն զալիր տեսակին, որով ամօԹոյ մարդարէքն զանասնօրէն դիմեցուին անխարաբար յանուն չարուԹեան անժուժկալ դիւին անաստուածաբար ձօնեալ մղէին։ Տարաւ պեուԹիւն բարեբաստուԹեանն՝ որ զնախնին որպէս ՚ի կորուստ, յաղԹեաց մեծուԹիւնն խմաստից առաւելուԹեան, գերեաց գոռոզուԹիւնն, յիմարեցոյց փափկուԹիւնն, վանեաց արծաԹն ծառայեցուցիչ, յոգի գաւեցաւ զպրն ոճնելի հին զէնն կործանողին, ՚ի գրկացն աստուծոյ հանեալ՝ ՚ի յոտս ստամբակին գԹեցոյց, մեռոյց մեղկուԹիւնն, Թմբրեցոյց ծուլուԹիւնն, արբեցոյց չուայտուԹիւնն։ Ալ դիւրապատիր մարմին երկրածին, որ՚ոլք ձայնարկուԹեամբք զբեզ աւազեցից. քանզի ոչ սիրապէս առ նա հանդիպի ընդդիմանուԹիւնս, այլ ամենից սխալողաց՝ կամաւ վերսիեցի, վասն զի նուաւս է խմահալ, Թէ անիրաւ է պարծել յիմաստս մարմնոյ, եԹէ ոչ աստուածով գաւեալ ընտրեսցի. որ զի Թէ առ այս պայմանի յիմար ոք իցէ, և ՚ի հաստչին կամս յուսացի, ոչ եւս ՚ի նորայոց անտի ինչ կրեսցէ։

Դ. Այլ քանզի սաստիկս և քաջմենելիս ունի Սողոմոն զդարձին իւրոյ յիշատակարան ինքնապարսաւն կըշ-

տամբուԹեամբ, իբր մեռեալ իսկապէս համայն աշ-
խարհիս անձնասիրուԹեան. զոր եԹէ զնահն ոք նկա-
տեսցէ, Ա՛նձնասիրուԹեամբքն է իմանալի. այլ և ՚ի մա-
տեանս քահանայիցն և ՚ի գիրս Աքիայ ակնեացւոյ, յո-
րում զիսրէլն իւրում ընԹացիցն արտասուելիս ինն յե-
զանակէ. զուր ջան, անօգուտ վաստակ, անմիտ հե-
տեւումն, անշահ արշաւանք, անկայուն երկիք, օտա-
րին խմասաք, աչնչից հոլովք, բամբասելի բերք, ան-
յարմար վարկածք, մեռոի սերմանիք, աւազափուլ շի-
նուածք, ապականացու ստացուածք, քամահանայ
տաժանմունք, ինքնամարտ կռիւ, ընդ ոգւոյ իւրում
գաա, ընդունայնաԹոյզ քիրան, վհատակար վախք,
կորստական շահիլ, վխտակ ճանապարհ, կործանական
կրԹուԹիւնք, մոլորապատիր վարժուԹիւնք, հանա-
պազօրեայ տեսուԹիւն, ակնայայրատ պչրուԹիւն,
պոռնկակերպ կերպարան, ախտաբորբոք նիւԹ, դըժ-
նեաստեսիլ դէմն, յոքնատեսուլ դեղ, յոլովամեղձ ծուխ,
շոգի ցնդելի, վաճառ մերձ ՚ի յատ, տաղտապ քակ
տելի, ընդվայր աղաղակ, անպատճառաւորս ծաղր,
արհամարհելի ասպարէզ, անձնասպանաւ գիր, սատակ
չական եղբ, անասուած մտածմունք, սասյօդ ճառ,
զայրացուցանող զրոյց, եպերանայ խծբիծ, խելա-
գարուԹեան խնդիր, ամօԹանայ ցոյց, խայտառա-
կանայ յայտնուԹիւնք, առակ ապառնեացն, ապաշա-
ւանայ գործ, ըմպահկանայ պատմուԹիւն, հեղգա-
ցելոյ օրինակ, խորխորատ ծածուկ, որս խաւարային
մահագուշակ վիհ, անյատակելի անդունդք, ուղեկ
ցուԹիւն սպանողաց, չիմարուԹեան բարբաջմունք,
գարանակալաց վայր, խարխուլ յարկ, շինուած սա-
սանեալ, կամուրջ խախտեցեալ, երեւոյԹ փախչելի,
խաբող շողքորթ, անօսպ մատնիչ, ընդդէմ բարձ
բերյն հակառակուԹիւն: Ո՛չյս ամենայն մասունս
բանից խոստովանական կանոնադրուԹիւն, ՚ի սիրտս
բնաւից նախասերմանեաց Յողովողս կանոնադիր գործ
ձելոյ զղջման. որպէս զի մի պարծեսցի ոք ՚ի մարդ-

կանէ բամբասաւորօք զինուորեալ նեփիւք՝ զանձն և զընկերն խոցոտելով. քանզի կռապարիչս է քրտիւ ծածկեալն, որ զկերպարանն միայն ունի, և զոչ ախորժելիս ստեղծչին կատարէ։

Ե. Իւ արդ նա՝ որ ոչ այնքան մեղաւ որքան զղջացաւ, մի՛ ի սպառ պախարակեսցի. այլ յիշեսցի այրն՝ի բարի, իբրեւ զհին յուսադրութեան՛ի տէրութենի ոտն դիմելոց, յորժամ հոգւովն էլ յայցելութիւն աստուածութեամբն անբաժանելեաւ՝ կենադործել զանդ խոստովանեալն. զոր մեռեալքն ահա կենդանեացս անտարակոյս բերին աւետիս։ Ընդ որում մաղթեալ իմ պարտաւորի՝ խմաստութեանն ոչ ժամանելոյ, ի մեղանացն մոռն կարգեալ, բարեբանեալ մեծիդ պատմ. լից զինուազդ իմ բանադրութիւն՛ի յերկնից կին հանճարելոցն. նիւթեացին ներկայիս հայցմունք՛ի բարդաւածին յարգաւորութիւն՛ի գերաշխարհն արքային աղերս. այցելութիւն խնդրոցս դիպի քո ընտրեցեալ վեհ արքայորդւոյն, զոր միածնիդ օրհնակեցեր։ Յարեանն կցորդութենէ զքո վսեմակիցդ ճաշակեցաք. տուր փրկութիւն քոյոյ ծառային, ամենահնար, զօրեղ, ահաւոր, ի ստեղծողիդ վսեմս աչեցուցեալ զանկաւեղի մեղացն ջնջումն։ Յիշատակաւ խորհրդոց բարեաց՝ ընդ ողորմեալսն նորոգեսցես. որ ամենահամ ախորժաճաշակ բազմապատկեալ առակադրութեամբ զաստուածութիւնդ քո քարոզեալ՛ի մատեան լուսաղարդ կտակի, եկեղեցւոյ ընծայեալ հետս բարութեան՝ խոստովանութեամբ մատչել առ քեզ, հայր։ Քանզի ոչ հեռի յողորմութենէ առ այս ցոյց բանի է իմանալի, թէ անյուսութեանն կաթուած չէր անկեալ՛ի յեռանդն սրտին ըղձից, որ զձեռս ղղջմանն փոքր ինչ կասեաց։

Զ. Արդ՝ի յուշ բերեալ զոր՛ի քեզ անճառելի բարեմանութիւնք, զթութիւն քո ողջունեսցես. որով զկոչկոճեալն՛ի բաղում դարուց՝ բամբասանաց քարաձգութեամբ, երանութեան վերարժանացո. որ յաքնա-

հոսան արտասուաց եղիցէ զմէջ յատակի յարկին հեզեղեալ ապարանիցն իւր խրախճանութեան՝ սատակիճն տպաշաւանօք, հօրն կրկին գերազանցեաց ողբմելի ոգւոյն հեծութեամբ. զոր ի յաչաց բանիդ քո արուսոյր՝ առ որ մերովս ի յիւրն ախտակրեաց, երկայնամիտ ներողութեամբ միացուցեալ խառնեացես, գթած. և զանչարմարն առ նա կարծեցեալ զաղմսին բարեբանութիւն, ի փառս էակիդ որդւոյդ կնքելով նովաւ կեցուացես զնա քաղցրութեամբ ընդ աղքատս ժողովրդոց: Օյս պաւեփիկոս ոմն բարեշնորհ արքա հատեր ընդ Սողոմոնի, ամենայնիւ վարձս վարկուցեալ համակցորդ զուգաձայնութեամբ՝ իբր կենդանեօք նովաւ ընդ նմին վասն նորին աղերսել առ քեզ, զոր յաւելուած կարգիդ անտես: Քանզի և օտարացն ի նմանէ ստեղծեալն բազմահրաշաւորն մարգարէաձառն պատմագրութիւն աստուածութեանն արդարացուցիչ Սողոմոն ողբմելոյ կարգէ. որ զի անպարտաւ է աղօթելոյն, քան չարաբանելն վասն նորին:

Ե. Օր և ես մաղթեմ մեծ վստահութեամբ՝ նմանակից այսր հեծութեան՝ և զիմս ընդ նմին ընծայել գոչումն. զի թէ կորուացես զմեզ դատել ըստ գործոց, ոչ պակասին փառք քո, զի իրաւամբք քո ճանաչիս. իսկ եթէ գոյես, այնքան բարձրանաս, որքան մեծութեանդ քում վայել է. քանզի յաւէտ օրհնաբանելի ես դու երկրորդաւս ողորմածութեամբ, քան նախահրաման սատակութեամբն: Դարձիր տէր՝ դարձիր քաղցրութեամբ ի խնամս գթութեան ձրի և առատաձեռնաւառ պարգեւօք սիրոյ միսիթարել յաւէտ զտրտմեալքս համաշաւիղ տագնապաւ տապոյ տօչորման անբժշկականի: Զեռն եղեալ փրկութեան նորոգեաց զես վերստին, քաւեալ և պատռպարեալ ի մեղսակործանս խորտակմանէ: Նոյ քեզ միայնոյ սկզբանդ և անսկզբանդ, ընդ սկզբանդ և սկզբնաւորիդ սկզբանցդ՝ սուրբ Նորոգութեանդ և միւսմ աստուածութեանդ փառք և խնամութիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԽԹ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Լի արդ մի սիրեսցեն անօրէնութիւնք քում պատկերիս կայսերականի արքայութեանդ վերնում, աստուած բոլորից լուսոյ, մի կապեսցէ գոռոզն ա պըտամբ զղարդ վիմանդ շնորհի ի քո սահմանեալս կերպէ, մի թագաւորեսցէ մեղքն խափանեալ՝ մարմ նոյս մահացուի առ ի դրաւել զնա ի նոյն։ Զնք իմ թագաւոր առ իշխել շնչոյս բաց ի քէն, Քրիստոս, որ անքննադատ հնազանդեցուցանես լծոյն քաղցրու թեան, որ բառնաս զկարիս մեղաց ամենակարդ բանիւ, որ արեամբդ քո ստացար և մաքրեալդ կերակրեցեր. որ կարգեալ սահմանեցեր ուխտ կենաց անփոխադրելի, որ յոգի քո հնձեալ կցորդ քեզ դրելով, հօր քում մա տուցեր ժառանգակցապէս. որ յանուն զենման միշտ յիշատակաւ քո չարչարանաց առ նոյն բարեբար աղօ թել համարձակեցեր, ստեղծիչ ամենից և կեանք։ Դու ես աստուած ամենայն հոգւոց, որ մեծացուցեր զայս տուրս շնորհաց քան զամենայն գործոց քո հրաշս. ոչ զերկինս խոտրվքն զարդուք և հրեշտակացն պայծա ռութեամբք, ոչ զերկիրս և զմարդկութիւնս և որ առ սոսա են զարմանութիւնք, ոչ զսահման լայնու թեան ծովու և որ ի նմա են եղելութիւնք, ոչ զանդունդս ալեխռնքն հանդերձ և որ ի նմա են անբա ւութիւնք, ոչ բարձրացար յօրինմամբ այսքանեօք վե հիւք՝ որչափ առ լման կարեկցութիւն, յասելն քո սուրբ մարգարէին՝ քաղցրութեանց յուսոյ բարութիւն, ոմն է աստուած եթերեւ զնս կարող Թողուլ միշտ զմեզս

և ջնջել զանօրէնութիւնս։ Ահա արդ խնկեալ են բանք քո, ողորմած, և խաւսեալ բարեբարոյ թիւնք, փառաւորեալ խոքք խորհրդոցդ, և երկրպագեալ զեղմունք շնորհացդ։

Բ. Արդարեւ ոչ ոք բաւէ չէիցս թարգմանել խոսմիք նիւթական լեզուի ի մասանց այսի քումդ զըթութեանց զոր առ իս ցուցեր, յօրինիչ. քանզի և մեծ իսկ է զօրութիւն՝ զհնացեալն անդրէն նորոգել ըստ առաջնումն պայծառութեան, քան չանգոյից ստեղծագործել։ Նոյ զի ոչ է քո տկարութիւն, որ զօրութիւնդ ես ամենայնի, առ որ բան քո միայն ազ դեալ՝ զլըութիւն գործոյն գլխաւորէ, ահա չարիցես փառաւոր լինել, բարեգործ, ի ստացուածս այս կրկին անյուսալի փրկութեանս. զի իրաւամբք ուխտի բարձրացայ՝ հաստատուն եղեալ մեծապէս օրհնաբան առեւտուր քո ձայն ի քաւելոյդ շնորհ ծանուցեալ, ո զղորմութեան լուսոյդ ուղերձեալ, քան ի ճանապարհ ստեղծանելոյն։ Օ՛ի առ միոնն արարիչ միայն ճանաչես, իսկ առ միւսն՝ առաջնով կոչմամբն և երախտաւոր. ընդ կերպացուցանելոյն և քաւիչ, ընդ նորոգելոյն և բարերար, ընդ հաստելոյն և ողորմած, ընդ կազմելոյն և հնարաւոր, ընդ չօրինելոյն և հեղ, ընդ նկարելոյն ամենազօր, ընդ առաջնորդելոյն և լոյս, ընդ տա ճելոյն հովիւ, ընդ դարմանելոյն խնամիչ, ընդ ողջ պահելոյն բժիշկ, ընդ ձեռնկալութեանն զօրաւոր, ընդ անապարտութեանն թագաւոր, ընդ արարչութեանն քաջգոր, ընդ ամենատուր պարգեւացն առատ, ընդ միշտ անսալոյն ներող, ընդ ոչ բարկանալոյն անդադար, ընդ կարեացս վշտակցելոյ ծածկագէտ, ընդ չանձանձելոյ գթոյն ապաւէն, ընդ գերբնակ գործոյն աստուած, ընդ անսպառ բարութեանն՝ օրհնեալ յամենայնի։

Գ. Արդ որպէս ստեղծեր մինչ ոչն իսկ էի, և ծանուցար լինել գոյացուցիչ, և այժմ զհոգի մաղթողիս մարմնոյս տաղտապաւ չարդարեա անդրէն վերստին

յանապատութիւն մաքուր սրբութեան նախնի լինել լութեանն. զի բազմացն առաւել աճեցուն եղեալ յաճախ տուչութիւն անսահմանելի քոյդ սքանչելեաց նորոգ ներկայիս, քան զանցելոց հնոցն ստուերակա նաց: Այլ ընդ ձառելոցս զվիթիս մեղացս՝ որքան մնացս թեւս ընթանալ զանբերելիսն յիշատակել, արդարա ցայց յանուն քո հզօր. և ի պատմելս ինձէն զանձին իմոյ բիծ, և դու Թողցես զամբարշտութիւն բազում մեղանաց խոստովանելոյս, հզօր, ծածկաւես, ամենա փրկիչ. զի մի ծայրագոյն լքութեամբ աւեւտացս, դարձեալ նախնումն կարօտացայց՝ երանելով սաղմո սիւքն զնորհօք փրկեալսն մկրտութեամբն. և փշուք մեղաց յոգի խոցոտեալ, ձեռն քո մխեցի յիս առաւե լապէս պժմէն վերստին, ծանրս առնելով զբեռն պար տեացս քան զքաղցրութիւն պարգեւացդ, այլ ապա տեա զիս օրհնաբանեալ հոգւովդ սրբով, աղաչեմ ըզ քեզ՝ տէր ամենայնի, յօրինաց մեղացն և մահու: Քաւ լիցի, թէ անկցի ընդ ակարութեամբ սահմա նաւ ձչմարտութեանդ ծագումն իբրեւ զբոյն օրինակ. քանզի ուր քաւութիւն է Թագաւորեալ՝ վտարեալ են մեղք, և ի խրախոյս կենդանի բանիդ՝ ոչ է յատա հատութիւն, և ամբարձեալ քոյոդ ընտրեալ՝ հա լածեալ են պարտիքն, և մերձ գոլով ձեռինդ աստու ծոյ՝ ոչ գոյ անհնարութիւն, այլ ամենեւին լուսաւո րութիւն, բովանդակապէս զօրութիւն, անպարտելի կարողութիւն: Քո է փրկութիւն, կենդանութիւն, նորոգութիւն, ողորմութիւն, միանգամայն և քաղց րութիւն, արքայութիւն, անեղծութիւն և վառք յաւիտեանս, ամէն:

ՐԱՆ Ը.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ՊՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԸՍ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱԱՏՈՒԱԾՈՑ

Ա. Ա՜ՅԼ արդ, քանզի որպէս ոչ է առանց Քրիստոսի աստուածոյ ոգւոյ փրկութիւն, և ոչ առանց տեառնական աշխոյ՝ առ լոյս զաւարձութիւն, և կամ առանց արուսեկին նշուլից արեւու երկնից քաղցրութիւն, այսպէս և ոչ առանց խոստովանութեան ծածկութիւց և ըստ գտանող անձին՝ քաւութիւն։ Ո՞վ ղէ՞նչ օգուտ քեզ է մաքրութիւնդ, եթէ ընդ վարիսեցւոյն դատեսցիս, և կամ ղէ՞նչ ինաեսցին զիս պարտիքս, եթէ ընդ մաքսաւորին գովեցայց, և կամ ո՞ր ասի պնդրատեալ մարգարէն Յովել՝ երկից կրկնելով զանձինն եղկութիւն, և կամ ղէ՞ գուցէ սրբոյն դատաստան առ ի չիշատակ աւուրն մեծի, և կամ երբ արդեօք անմաքուր խմացի զերծամբք Նասյի հեռին ի գործոց տանն Իսրայէլի, և զիաիդ աստուած պարտաւոր պաշտի ազատեան մարմ նոյն՝ խմոյս կարեկցեալ յանցաւորապէս առ Հայր աղօթել, և կամ յորս Թագրամանի առած առակին, Թէ սիրա խմաստնոյն ի տան ոգոյ, և սիրա անմտին ի տան ուրախութեան։ Ո՞վ որ զխոսքեն Աստուծոյ անձին խրոմ ոչ գրեսցէ, և զմեզս ամենից ինքեան ոչ համարեսցի, երբ երջանիկն արքայից զՀարցն, կորոյս զիւրն արդարութիւն՝ որպէս անախտակիր գոլ բնութեան, և ոչ բերկրի սիրա առ զաւարթութիւն երեսաց աւետաբեր յուսոյն, ըստ աստուածոյն, եթէ ոչ յառաքելոյն Քրիստոս սի ուսեալ՝ ամենայնիւ ահա ըստ աստուածոյ սրտմտոյն։

Բ. Արդ ըղձալի է ինձ յաւէտ աստանօր խրատն հին՝ նորոգ ընկալեալ՝ հոգեւոր հանճարեղին, զոր ասէն

իսկ երկրորդեաց, երթալ նստել ոչ յառաջին բարձին հպարտից ընդ ամբարշտացն նանրախորհուրդ ժողովելոց, ուստի Դաւիթ և Ընդեմիա ուխտիւ կանանկ սահմանն հաստատեալ հրաժարեցուցին, այլ ընդ զղջացեալսն սրտիւ պատկառեալսն մեղաց՝ և ի դատաստանացն մեծին պակուցեալ ահիւ հատուցմանն, յեռնոցն հաւասարեալ ասէն ի յերկրի կամաւ խոնարհութեան, ուստի բարձրեալն ատուած պարարեալ երկրի. որով ընդ նախադասեալսն ի բազմականան եւ բանութեան համարձակեցայց, թէ ես և թէ նա հեւեալ սովիմբ: Ա՛ր որ զերծեալ ի բամբասանաց բանի մարգարէին, որ ի վէս ոմանս ակնարկի. մի յիս, ասէ, մերձենար. մաքուր եմ, և ոճ զիս տեսանիցէ: Այլ զանկչիւն խոնարհութիւն երջանկին Դաւթի ինձ նպատա առեալ ասել ընդ նմին, ես իբրեւ զանասուն համարեցայ հեզբեալ ի զգայութենէ, և հասին չարիք ինձ շուրջանակի. և նեխեցան և փտեցան վէրք իմ ի յանզգամիս անբժշկութիւն, և զայլոց ոմանց ընտրելոց ի յատուկ ստանի՝ զկամաւորն կշտամբութիւն մեղապարտութեան անձանցն անարատից. ընդ որս և զՆզոյի մեծի քահանայի զասելն՝ ես ինձէն առեալ բարբառիմ, թէ և ոչ զերեսս բառական իցեմ համբառնալ ի վեր առ քեզ աստուած:

Գ. Ընդ ես ճշգրիտ պատկեր ամենայն երկրի՝ զնմն խառնեալ ընդ նոցին պարտիս, և ի նոցայոցն զառ իս դառնութիւն կրկին առաւելեալ, նաքօք հեծեծեցից. թեպետ և չէ ինչ պիտոյ գարշութեան գունոյ՝ դարձեալ ապեղութիւն: Ահա արդ մեղայ, զի անմուռ թեամբ գործեցի զոչ հաճոյսն քո բազմօք սխալեալ յանցաւորութեամբք, նայեա յիս, գթած, որպէս երբեմն յոբացութեանն ըմբռնեալ Պետրոս, զի յոյժ ունայնացայ: Ա՛ուսաւորեա ինձ զաղաղմութեանդ քո ճառագայթ, ամենեւին բարերարութիւն. զի ընկալեալ զջրհնութիւն քո, տէր, արդարացայց կեցից և մաքուր եղէց յանսահմանին քո խոնց լուկասց: Ձու-

նիմ համարձակութիւն զմեզ ապաստան ձեռ ինա հաստուած առ քեզ տարածանել, մինչեւ մատուսցես զօրհնեալդ քո զաջ ի նորոգութիւն դատապարտելոյս: Արդ յաղթեա վերատին իմումս յամառութեան քոյին հեզութեամբդ առ իս ժամանեալ մարդասիրապէս. և զամենայնն յամենայնի ամենայնիս քո կարողութեամբդ՝ զառաջին չարիան միջնովքն և վերջնականօքն թող ինձ, հնազբաւոր անհասիդ Քրիստոս Թագաւոր լուսոյն արդարոց:

Դ. Ձեմ արժանի յիշել զանուն քո օրհնեալ, զի վըճռատակար եմ բարեգործիդ մահու հարուածոց առ կըռնիքըն, առ շնորհն, առ փշուճն, առ պարգեւն, առ աւանդն, առ ձիրն, առ անուշն, առ որդեգրութիւնն, առ պատիւն արքայական, առ պատկերն, առ դրոշմն, առ օծումն, առ ճոխութիւնն, առ համարձակութիւնն, առ ընտանութիւնն, առ կեանն, առ լոյսն, առ երանութիւնն, առ յոյսն, առ փառսն, առ անխոնարհելի բարձրութիւնն, առ պակին անկապտելի, առ խոստմանն ծածկեցեալոյն, որ քեւ տէր Քրիստոս, բաղմօք աւետարանեցաւ ինձ յամառելոյս լիժիս և քարբխան՝ ունկնախիղ և լսելախակ անլսելի ականջաց. որ միշտ յառաւելութեան քումդ բարութեան յոքնապատիկ յաւէտ քան զոյն չարիքն իմ յաճախեալ, ի սպառ կործանեցին, մերժեալ ի կենաց ընդ մահ կապեցին, ծառայ կարգեալ ապականութեան: Այլ արդ դու միայն իրաւակշիռ և ճշմարտադատ բարեբար՝ օրհնեալդ ի գթութեան, մեղայ քեզ անօրինեցայ անիրաւեցայ. վասն որոյ և եղծայ զեղծայ յանցեայ ամբարշտեցայ. և ոչ լուայ խոստովանեալ և երկրպագեալ դովեալ քո բանիդ, որ դու իսկ երեւեցար անճառելեաւ քո սիրովդ, զոր գրեցին իսկ մեծ է, և նշանակեցին սարսափելի: Քեզ արդարութիւն և փառս և միանձնական գովութիւն, և ինձ պատկառելոյս ի քէն, խնամակալ, քաւութիւն և ողորմութիւն և բժշկութիւն, օգնութիւն և պահպանութիւն սրտի և ոգւոյ. բաղբեբանեալդ յամենայնի յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ Ծ.Ը.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱԱՏՈՒԾՈՑ

Ա, ԶԻ արդ առ երկրածիւն ոք պատահեցայց այս մահացու ամենապատիր, եթէ ընդունայն է աղաղակելն. առ մահկանացու բանական, եթէ սուտ լայէ փրկութիւնն առ յուսոյն վատահութիւն. առ մարդ ոք եղծական, եթէ ընդ տկարութեան բանին և նանիր է զօրութիւնն. առ իշխանս երկրաւոր գահից, եթէ անցաւոր է ընդ ինքեանս և իւրեանցն բարութիւն. առ եղբայր ոք հարազատ, եթէ կարօտ է կամելոյն առ անձինն անդորրութիւն. առ հայրն իմ երկրաւոր, եթէ պակասեալ են խնամականքն ընդ աւուրց նուաղութեանն, առ մայրն իմ որ երկնեաց, եթէ կասեցան գթութիւնքն ընդ նահանջել կենդանութեանն. առ թագաւորութիւնս աշխարհի արդեօք, որք զմահացուցանելն միշտ արուեստաւորեն քան զկենդանարարծելն. այլ առ քեզ բարերար աստուած օրհնեալ ՚ի բարձունս, որ կենդանի ես և զկենդանութիւն տաս ամենայնի, որ և յետ վախճանին զօրես անեղծապէս նորոգել։

Բ. Որ եթէ վախնամք ՚ի քէն, դու զկնի ընթանաս. եթէ տկարանամք, զօրացուցանես. եթէ վհատիմք, շաւիղ դիւրութեան ուղղես. եթէ պատկառիմք, քաջ ջաղերես. եթէ ախտանամք յանձն և ՚ի մարմին, բժըշկես. եթէ գարշանամք մեղաց, մաքրես. եթէ տեսմք, քո ճշմարտութեամբդ արդարացուցանես. եթէ յանդգնանդս ներքինս սուգեալ գլուխիմք, յերկինս ցուցանես. եթէ ՚ի կամաց մերոց ոչ գառնամք, դու գաղ-

ձուցանես. եթէ մեղանչեմք, ողբաս. եթէ արդարա-
նամք, ժպտիս. եթէ օտարանամք, ոգաս. եթէ մեր-
ձենամք, ծռնես. եթէ տամք, ընդունիս. եթէ յամ-
բանամք, երկայնամտես. եթէ մեք ժխտեմք, դու ա-
ռատապէս շնորհեալ ընձեռես. եթէ լքանիմք, տըր-
միս. եթէ արիանամք, խնդաս։

Գ. Որպէս հարիւրտրդ երկրորդ ապաման օրհնաբան հրաշալուրական զվհատելոյս զսիրտ սիոխէ, և մեծ յոյս կենաց ապետարանէ առ փրկութեանն հանդէս. որ յաղթականն է գիւտ և տարակոյս բանսարկուին. որ իբր զնաչէն սերբանի նշան բարեբաղդ պանծալի սքան չելտիաց, անխոնարհելի բարձրութեամբ լուսոյ և անպարտելի վերնոյն զօրութեամբ կանգնեալ է սխոյ-
եան անվանական և անշարժական ամենայնիւ յաւի-
տենական ընդդէմ անբարի բարուց բռնութեանն Սա-
տանայ, որ ունի չինքեան գանձս հոգեւոր օգտից գի-
տողաց մտաց ընծայեալս զպարտուցն մահու և զըն-
ծումն մեղաց, և յոյսս կրկինս յերկուս յաւիտեանս, և զնորոգումն խոստման անեղծութեան արդարոյն, կանոնս բարեհրաւէրս և կենդանատուս գրեալս հոգ-
ւովն աստուծոյ. որպէս ամենայն իսկ երջ սաղմոսայն մաքուր սրտից է տեսանելի կամ կենաց մարդկան նկարեալ։

Դ. Օ՜ի թէ՝ ինձանումն տկար կերպարանն զայս ա-
ւետիս և վստահութիւն ընդգոգեալ ունէր՝ կործան-
ման մահու նախաժաման մեծ աւետագիր և կեանս երկնակրօնս վերնակենցաղս միշտ անճառելիս, և այն՝ ընկալեալ գիրն և յեղանակաւոր օրինակն, և պաշտօնն դատապարտիչ վհատութեան յանցաւորացն, և խա-
փանելի կտակին երկրային, և տկար հաշտարարութիւն միջնորդացն, և թերութիւն բանից մաղթողացն։ Որ զի թէ Մանասէի փրկութիւնն խոստովանելի է ան-
տուտ վկայեալ յետ այնքանեայց մեղանաց անբժշկա-
կանաց. որ արեամբն արդարոց ելից գնուիրեալն մեծի թագաւորին հրաշանուն քաղաք հոյրեղէ. ըստ մար-

գարեագիր անառատ պատմութեանն. որ և զմեծն խակ տեսանողացդ բազմերախախտ ձեռնկալութեան խնամոզջրհենն պաշտպանութեան նախնակերտ յարկին տեսչութեան, մանկավարժ ինքեան և նախնի, մեքենայիս մահու սղոցեաց, ի յերկուս մասունս խզեալ զժնդակ տանջանօք մաշեաց, լբը խորհրդով ապաստամբութեան զյուսոյն փրկանակ կարեալ: Ա՛ր որով զչար յաւելուածն մոլեգնական՝ զբրեական վերնամարսութիւնն ի բարձրեան յանդգնութիւն. քանզի ոչ պատկառեաց երբեք զաեղծողին պատիւ և զանուն յիւրաքանչիւր խորանէն մերժել. հալածեալ զաստուածոյ հոգին, Ա՛ելլոարայ զանձն դաւանեաց: Վանզի զնոյն առաքար սիրական խնկարկութեան հաստոցին տահման՝ հաչակաւորն երկրի տեսարան՝ զատրտաւելչին ազանց սրբարան, ուր տեսիլք հրեշտակականք և աստուածոյին հրամանք յաղթութողականք լուսաւորապէս յայտնութեամբ ազդեալ երեւէին, զոյն վայր երկնանման ահաւոր սքանչելատես՝ Վեւանայ ումն քառատխմակի նախանձարկու պատկերի աւերածոյն անապատի պաշտօնատեղ գաղշելի և դիւաճենճեր զոհարան պատրաստեալ կազմեաց: Օ՛րկեալ զարքայն երկնաւոր ի յարքայականն կայից, զամենահարուստան՝ ունայն ի ստացուածոց իւրոց, զբ տանուտէրն՝ անհանգիստ և Թախտաւական տատանեալ, Ի՛հեղղեբուզոյ ձեղուն նկարեալ, և զանունն ահեղ վտարանդի արարեալ. գերի տարեալ զաւանդ գովելոյն, ողբալի զողորմածին մաան նուաղեցուցեալ. ազեհաուն փոքու ապարանք զսրահն լուսոյ կարգեալ, և բնաւից ունողին և ոչ գլխոյն տաղաւար յիւրայոյն եդեալ. հատեալ զանկ հզօրին, բախտից հմայից զբ սեղանն մեծախորհուրդ արեանն սրսկման երեւեցուցեալ: Այնեալ հետս բազում ընթացելոց ի գայԹագղութիւն, հալիւ կոտտեան հօտին տատակման, մոլորութեան բուռն վարդապետ, և այն՝ գիտուԹեամբ կրօնից սրինաց, հայր ունելով զմեծն Ա՛ղեկիա զնմանակից Դաւթի:

ե. Ընչքան ստացեալ գտմունս չարեաց, որ և զաս-տուածոյ պատիւն՝ որ զաղքայութեանն փառս ընծա-յեաց նմա, հպհպեալ և թշնամանեալ, և զաղօթիւ-բացն բազմութիւն սուսերաւ մահու խողխողեալ: Ընտանի դաւաճան, մերձաւոր վատնիչ, հարազատ սատակիչ, կցորդակից սպանող: Ոչ աստուած ոչ գոյր գառնալ, զի ուրացեալ էր զնա. զԱբրահամ ոչ էր յիշել, զի խորհացեալ էր ի նմանէ. Իսահակաւ ոչ էր աղօթել, զի նզովեալ էր ի նմանէ. Իսրայէլիս ոչ էր պարծել, զի տարագիր էր անուան կոչմանն մեծահռո-հութիւն չնորհի. զգաւթեան երգ ոչ էր նուագել, զի կշտամբիչ էր նորին. ի քահանայն ոչ էր մերձենալ, զի պղծեալ էր զնա. ի տապանակին աստուածագիծ ոչ էր տպաւինել, զի ընդ գարշելութեան ձուլածուին էր փոխանակեալ. առ Մովսէս ոչ էր կարդալ, զի անքա-ւելի էր պարտիքն որ առ նա. առ Ահարօն ոչ գոյր ա-ղաչել, զի վհատապարտ էր առ նա. առ մերձաւոր մար-գարէիցն գառնդ ոչ էր դիմել, զի սպանող էր նոցա: Այս նորա քաւութիւն մեղաց, և աղքայութիւն թա-գաւորութեան վերստին պարգեւեալ առաւ. զի քեզ, բարերար, բազմացուսցես կարգեսցես գովեստս անճառս և անլռելիս ի յաղգս սահմից և ի դարս ժա-մանակաց, և զդուռն յուսոյն մտից անխափելի պա-հեսցես ի փառս քոյդ բարձրութեան և ի փրկութիւն դատապարտելոյս, անմահութեանց պարգեւաց տուիչ Աստուած, գովեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ Ծ·Բ·

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա· Որհնեալ սիրաբար ՚ի քումդ հոգեթեան, անդադարելի և անվհատ բերել խնկապէս բարւոյ, պաշտօն խնկելի և երջանկութիւն խոստովանելի ամենայն երկրի, երկայն յուսոյ ամենապատրաստ սեռութիւն, գթած ողորմած, որ ոչ պահես սխալս բազմութեան ամպոյ մեղանաց քոյոց մի ական, որ հրաշալորս զարմանալիս գերդ քան զամենայն ազգին նախնեացն անսահման առաւելութեամբ կրկին ընդ միոյ հաճելեաց հեղուլ զողորմութեան վերնահոս վտակս ամենախնկաւորս ՚ի շնորհաբաշխութեանս նորում։ Այլ զանառատ զմուտս լուսարանի պատուհանին անձկութեան նշուլիցն աղօտականաց, չափով գիտութեանցն ըստ Սողոմոնի, և իւր իսկ նմին և ինձ ընդ նորին բացեր ընդարձակեցեր թշուառացելումն զառագաստան անջրպետարան եղիցն ողորմութեան ձրի պարգեւացն առատաձեռնաց· զոր ընդ մէջ իմն մանաւորք առաւոտ յիշատակաց և ՚ի հնուճն զայսր ապաւորութիւն օրինակաւ նկարագրեր, զգարձարուքն առ իս և ես գառնամ առ ձեզ· և յորժամ դարձցիս և հառաչեացես, յայնժամ կեցցես։ Նա պէ և զաղջամիջին սեռութիւն գունոյն փոխարկել ՚ի ձեան պայծառութիւն, և զարանցն արեամբ ներկելոցն յեզանակել ՚ի պատահումն գեղման, ըստ Եսայեայ և Օսեայ, և ՚ի մէջ բարկութեանն դարձեալ զգթ զողորմութիւն· քանզի անապատանալ քաղաքացն Իսրայէլի և դարձեալ բնակիլ, և ճանապարհացն ամայի լինել ՚ի չգոյե

մարդկան և անդրէն հեռեւիլ, և լքանիլ ի սովին ոչ-
ւով և դարձեալ զօրանալ ձեռամբ, և դնալ աստու-
ծոյ ի տեղի իւր զայրացմամբ և դառնալ ողորմու-
թեամբ, ըստ ներողութեան զելան, և ի միջ սատկին
սպառնալեացն կրկին պաշտպանութիւն, և ի սրտին
խոովութեան յուզումն խնամոյ դթութեան։

Բ. Այս մարգարէիցն ձայն խնկելի, որ զօրհնեալդ
քո գալստեան զաղաւորարդ հրամայն կանխաւ ազդէին,
և զոր չէ բանիւ նիւթեղէն լեզուի ընդ թիւ արկա-
նել վասն անքաւութեան, փոքունք են և նուազունք
օրինակք և նմանութիւնք, հինք և ժամանակաւորք
առ աւետեացդ քո յայտնութիւն և խաչիդ փրկագոր-
ծութիւն։ Որ յամենայն վայրի կառուցեր զխորանն վե-
կայութեան արեան քո ուխտի, որք միծաբարբառ միշտ
աղաղակեն քան զդատաւնիք մահուն Աբելի զյաղ-
թանակ բարեաց քոմիդ հանդիսի, կեանս կրկինս և
անմահականս շնորհաց, մկրտութեան, յարութեան,
նորոգութեան, առ քեզ ընտանութեան, ընդ հոգեպդ
արբոյ միութեան, քաւութեան, աղաւորութեան, լու-
սաւորութեան, մշտնջենաւոր մաքրութեան, իսկա-
պէս երանութեան, ընդ վերնայնոցն կցորդութեան,
անկասկած վառաց. ի շրթունս մեր ձայնիւ բարձրե-
լոյն հաշտեցուցիչ բանից աղաչանք։ Այլ զոր ահաւորն
է ասել, կարգեմ աստանօր չիշատակ եդեալ միծիդ
երախտեաց, աստուած իսկ լինել ընտրութեամբ շնոր-
հին, և ընդ հաստողիդ միանալ տէրունի մարմնոյդ
ճաշակմամբ, և ընդ լուսոյդ կենաց խառնութեամբ
զոր կատարումն երջանիկ խոստմանն, ըստ Պօղոսի բա-
նին, ոչ ունէր օրէնն։ Այլ դու, փրկութիւն, եկիր
հայրենիդ քո հարստութեամբ, արարեր և կատարե-
ցեր զյուսոյն յերկարաձգութիւն, որ առ քեզ պա-
հեալ անհամառօտելի, քաւիչ ամենայնի։ Այս քեզ
փառք ընդ հօր քոմ ի գովեստ բարերարութեան
հոգեպդ քո արբոյ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ Ծ·

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա· Տէր տէր ղօրութեանց, բոլորից գոյից Թագաւոր, օրհնաբանեալ ողորմութիւն, աստուած ամենեցուն, որ յաղթես սահմանի լայնատարած ընդարձակութեան, ամենայն անքաւութեանց դու ես որքանութիւն. մինչ ղի կարծրն քեզ հնազանդ է, և լսծն քեզ պնդակազմ, և չէք քո իր անհնարաւորական, յաղթող ղօրութիւն ահեղ. հուրն ցօղ լիճ է ղովական, և անձրեւն քոց կիզանողական: Ո՛քարն բաւես ցուցանել կերպարան ազդման, և ղանականն դնես անխօս և անշունչ արձան: Ո՛պարտաւորն ողջեալ պատուական առնես, և ղկարծեցեալն մաքուր՝ իրաւամբք քննեալ դատես: Ո՛մատուցեալն ի մահ՝ բերկրութեամբ բարեաց արձակես, և զամաչեցեալն՝ ղքաւարթ տեսութեամբ օծեալ դարձուցանես: Կանգնես զմտանեալն հաղթից գլորման, և զասանեալն՝ ի վըտահութիւն վիմիդ հաստատես: Ո՛ախտացեալն բազմահառաչ՝ երջանիկ կարգես, և զյառաջատեալն դարձեալ անդրէն ի յետս նահանջես: Ես յորժամ սպառին առ ի մէնջ բարիքն, զառաւել զարմանալիսն յայնժամ ներգործես. քանզի վասն քո գիտես Թողուլ զմեզ և ջընջել զանօրէնութիւնս, և քաւիչ լինել անիրաւութեանց և զմեզս մեր ոչ յիշատակել, ըստ Եսայեայ և Երեմիայ:

Բ· Այլ առ չնորհն նորոգ փրկութեանն բազմօք գոհանալ Թեամբ հետեւեալ, ի յաճախութիւն անքաւիցն լուեալ առ սմին խոկոյն կարկեցայ. քանզի կրկնեալ զլուսոյդ անապատ բարիդ, որ ի քէն առ իմ յամառս

թշուառութիւն, քանի աղերսես առ քեզ մաղթեցից յարմարեալ դարձեալ ՚ի նիւթս բանիս զսուտ ողբերդ ութեան այսր մահկանի, լցից թախծութեամբք և հեծեծանօք: Այլ առեալ խառնեցից ՚ի տուողիդ հաճութիւն ընդ ցաւոցն զդեղն, ընդ վհատութեանն զվերածոյան, ընդ յուսահատութեանն զյիշատակդ աՀուան հաստողիդ, ընդ տխրութեանս զփոփանող, ընդ խմուս գառնութեան զքաղցրութիւն կենարարիդ, ընդ պատիժ օրինին զշնորհն, ընդ պարտս անիծիցն զազատարար օրհնութիւնդ, ընդ մարմնոյ մահ հուն զամենայնիւ նորոգութիւնդ:

Գ. Ձաւատամ հոգւոյդ բանի, ուստի վկայեմ. լուր լութեան սրտիս, աեր Յիսուս, որ հնչումն է առ քեզ մեծութեան ձայնի երկար դոչելոյ: Որ մարմնա կից և պատկերակից մեր եղեալ, և քահանայապետա պէս անօրինակդ զօրինակին խորտակեալ ղյուծ, ընդ զենման մահու անատնոցն՝ բարեբանեալ մարմնոյդ նուիրմամբ անմահապէս միշտ մատուցանես, և անդ նուագաբար քաւութիւն շնորհես, ոչ սակաւամեղիցն միայն, այլ և որոց հատեալ է անկեալութիւն առ ելս կենաց: Ո՛վ ողբան զօրէ մարմնոյ անդամոց առ մեղս կենդանութիւն, թէ և բիւրուց ամաց ունկիցի յերկարաձգութիւն, յորժամ առատաձգ բոլորեցուն վան սրին կամաւ և յօժարութեամբ զենումն ընկալեալ, մահու համբերես բաշխեալ ՚ի քաւութիւն: Ո՛վ ոչ եթէ մաքրութեանդ աղբիւր պարտական գոյ մահու յօրըստօրէ կատարին, այլ կամօք քովք՝ հոգւոյդ զօրաձակութեամբ՝ ՚ի հաճութիւն հօր և ՚ի մեր հաշտութիւն ցանկ մատուցանես: Իսկ եթէ ամենիցդ աստուած անքնին՝ խմուս վան իմ առ իմ փրկութիւն, ՚ի դէմս իմ, իբր թէ ընդ քոյդ էութեան ես իցեմ մարմնով պարտնակողիդ կցորդ միացեալ, և դու, բարեբար, յաղագս իմ ՚ի յիմն կերպն փոխանակեալ ընդ խմամ պարտեաց, և մահ ընկալեալ անպարտդ զմահապարտիս վերատուց պատուհաս, և ՚ի յիմ անուն յան

ցաւորապէս, որպէս թէ կամաւ ընդ քեզ ես կրիցեմ, բազում մեռեալ և ինաս կենդանի. ոչ ուրացողացն ձեռաք, այլ դաւանողացն հաւատովք աստուածապէս նուիրեալ և ի մասունս անհատս բաշխեալ։

Դ. Այէր ումն ողբասաւ՝ չաւաղալեացն պաշտօնատար. մեծ ինձ և անկշռելի առ ամէն դատէր անյարմարագիր անձին յուսադիր, Հաւատամ զիտաս և զերջանկութենէն, քան թէ մարսիրոսութեամբ իսկ՝ Թող թէ ուղղութեամբ իմս Թշուառութեան յանցաւոր մարմինս վախճան ընդունել։ Իսկ զանճառութենէն խորհրդոյս այսու զիտեցի. դաւանէր իսկոյն, որ զի և մաքրոցն անձինք առանց նուիրման այսր չիշատակի չեն իսկապէս կատարեալք ի սպաս, եթէ ոչ ընդ այս հրաշակերտութենէն մեծութեան հոգւով խառնեացին։ Այսպէս թէ մեզաւորիս մասին կրկին մաւտուցար բաժին առեալ Յուսայր, իբրեւ այն թէ ես ինքն եղեր ճշմարիտ, գրաւեալ զիմս դաժանութենէն ընդ քում համեղութեան, պատարագեալ քոյինանիւթ զանգուածոյ նշխարաւդ կենաց լուսոյ։ Այսու ամենայնիւ ի վերնատանն նախանուէր բարեշնորհութեան՝ անհնարաւոր ախտիցն ճարակ՝ զմարմին և զարիւն իւր բաշխեաց ի քաւութենէն, ի վեր կարծեցուցանէր քան զնահատակի վկայեցելոյ արեամբ կատարմամբ. յուսոյս օրինակ յարդաւորութեամբ գրել զիս ի փառս, այսմ փրկանօք հաւատալի երեւեցուցանէր, քան թէ քաւելոյ և ողորմելոյ և շնորհելոյ, որչափ աստուածակատնէդ առ մարդ զօրութենէն, և սիրական աստուածատիպառն մարմնոյն կամաւորական նուիրութեամբ առ անասնական ապականին մաւտուցմամբ, և անմահն առ մահկանացուս, լոյսն ահաւոր առ ստուերայինս, յաւիտենականն քան ղանցաւորս, բարձրեալն քան զերկրաւորս, անստեղծն քան զեզականս, բարին իսկութեամբ քան զմիւրեալս բնութեամբ, մանաւանդ զի իւր է կամելն, և իւր կենագործելն, օրհնութեանն աւելի քան զանիծիցս պատճառ։

ե. Ա՛րդ տուր խոցելոյս ՚ի սիրտ և յոգի, ազաչեմ գԹած, զառ ՚ի յերկինս տա ընծայեալ զդեղդ կենաց, մասին քաղցրութեամբ առ ախտացեալս մեղօք, քաւեա ՚ի պարտեաց՝ ամենակատար բաւականութիւն: Իսկ առ ՚ի յինէն այս է ճշմարիտ և անխաբելի կերպարան բան բանի, որ զիւ հատուիցդ ամենից ՚ի տուրըս բնակես. և ըստ տարազոյս սերմանն և հնձելն է իրաւացի, ըստ ճշմարիտ բանին Պօղոսի, և աչացաւացն ՚ի տապ արեւուս ոչ է զօրութիւն: Ա՛յլ դու, բարերար հատուիչ յոչէից, յարդես յաւէտ խակապէս համայն և զդաւանեն զքեզ բաւական առ կենդանութիւն. և ոչ ես ընդ սահմանաւ փակեալ օրինի, այլ յաղթես՝ մանաւանդ թէ խլես զկապ կանանի, և դու միայն միաս պայման աւետեաց համօրէն յանցաւորացդ տարակուսելոց: Ա՛յս քեզ ընդ հօր՝ հոգւովդ սրբով փառք և իշխանութիւն յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ Ծ Գ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒՐ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱԱՏՈՒԾՈՅ

Ա. Ա՛յ արդ յամենայնի առ ամենայն ակնկալութիւն քո է ողորմութիւն, սկզբնալոյսդ աչաց ահեաւնելեացդ և սրտի խմաստից Յիսուս, քո է բարերարութիւն, կեանք և անմահութիւն: Դարձ առ իս գԹուլութեամբ, և հանդերձեացես դառնալ առ քեզ լինձ կրկին բերկրութեամբ. զի առանց քոց կամաց ոչ ունիմ լինել նաւոյդ փոփոխեալ. և եԹէ ոչ կամք քո գԹասցին, ոչ զօրեմ փրկիլ մահու պարտականս. և եԹէ ոչ կառավարդ յարդարեացես պատրաստել լինձ հեաս ճանապարհի՝ որ առ քեզ բերէ, վհո է լինձ խորոց յաջմէ և յահեկէ:

Բ. Ահա ոչ պարծիմ ամենայն իրօք նախատեալս, ոչ պանծամ դարովեալս, ոչ խրոխտանամ լքեալս, ոչ մեծաբանեմ պապանձեալս, ոչ ըմբռստանամ ձաղեալս, ոչ երջանկանամ եղկելիս, ոչ արդարանամ ամբարիշտս։ Զի ոչ երբեք հարթ ընթանայ երիվար առանց սանձակալի, և ոչ նաւ համբառնայ հանդէպ առանց ուղղչի, և ոչ արօր կշիռ ինչ գործէ առանց մաճակալի, և ոչ երկուսրեակք լծոյն ի ձահ ձեմեսցին առանց եզնղի, ոչ ամպ վերաչուէ առանց հողմոյ, ոչ աստեղք ցնդին և կամ գումարին առանց ժամանակին, ոչ ամրեգակն փոխաբերեալ ուր չքնանակի առանց տարրական օդոյ, և ոչ ես նաքօք հանդերձ առանց բարեգործ հրամանաց ակնարկութեան։ Զի դու միայն ես տուիչ կենաց բանականաց և խնամիչ կարգաց հոլովման արարածոց, և ի քէն է ինձ փրկութիւն, ըստ սաղմոսողին. և դու ձայնես բարբառ խնդալից աւետեաց հնչման յականջս լսելութեան ամենայն հասակի, Ակայք ի հանգիստ քո բնաւին աշխատեալք, և ես մաքրեցից զձեզ ի պարտեաց։ Իսկ զինչ օգուտ ի լուացմանէն, եթէ կրկնակի զաղտացայց. և կամ որ օգուտ ի ճաշակմանէն, եթէ գեհենին մատնեցայց։ Ես կամ զիա՞րդ Աբրահամ պարծեցայց խորհացեալս ի գործոց նորին որդիս գարշութեան հօր ամօքհացեալ, և մօր քեռացեալ կամ քանանացեալ, ըստ մարգարէին որ առ իս յանկաւոր ձայնի. Ժառանգս մերժելի եթովպացի և ոչ սենեկին Սառայի, ըստ տեսաղին առ իս առածի, եղբայրս Շամրնի և կամ Գոմորայ, համբակս անլուսոյ և անաղելի խակակութ պորոյն խակութեան Ոզայ և Ոզղիբայ, ըստ Եզեկիելի կրկնանախատն կշռամբութեան։

Գ. Ես քանզի ի ծուխս բազմամեանգս ալէտանէ հողմոյ սաստկապէս զզուեալ ուժգին լկանօք ի սպառ տագնապմամբ ի ծովին, փոխեալ ընկեցեալ ի վտակն վայրենական ողողիչ. առ որս զմատունս ձեռացս այսր անդր տարաբերեալ, իբր ի հոսանաց բռնութեանց

գարնանազայը գետոց, արտաձգեալ յակամայ ընթացս ողորմագին գլորման, ջնակուռ ոգեսպառ պղտորաբուխթեամբ, դաժանահոտ սկսաւն մամռարմատ խառնախուռ մահաբեր երկամբք վանեալ, ըստ որոց յուղխին հեղեղլոյին՝ հեղձուցեալ։ Ա՛յսու առակաւ և ես եղկելիս՝ խօսին և ոչ իմանամ, գոչեն և ոչ ինչ լսեմ, բարբառին և ոչ զարթնանամ, հնչեն և ոչ փոխադրիմ, փողեն և ոչ գումարիմ, վիրաւորիմ և ոչ ևս զգամ, կռոցն գարշուխթեան նմանեալ Թափուր յազգմանէ բարեաց իմասից։ Ա՛րդարեւ չար առաւել յաւէտ իսկապէս քան զօրինակդ՝ ճշմարտուխթիւնս, առնլի և մեղադրելի և առնին Քրիստոսի արժանապէս մատնելի։

Դ. Ա՛ր քանզի անդառնալի ուղւոյն յիշատակ առեացս պարտեաց զայս կատակ Թողն որոց ընթեռնուն, իմովս բանիւ առ աստուած կարդալ հանապազորդուխթեամբ, այս կապցէ սահման յանձնառական խոստովանուխթեամբ մշանջենաւոր ձայնարկու առաջի քո, ամենակալ. զոր գիրդ ընդ մարմնոյս և բանդ ընդ հոգւոյս զանսահմանելիդ միշտ Թախանձեսցէ, իբր յաչնեղձական մաղխոզէ ընկալեալ աղերս՝ ի յիմոյս ձայնէ, բարեգուխթ, մարդասէր, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ Ծ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Եւ վասն զի սկացեալ ոգւոյս Թեւոք ՚ի Թիւս անբաւից ծննդոց մարդկան՝ եդի ՚ի կշիռս խմանալեացս մտաց, ոչ գոյ համեմատ զոք ինձ պարտաւոր. և առ այս զդաւԹեան սաղմոսին զբանն ՚ի յերդ ինձ առի դառն կշտամբուԹեան գաւազանաւոր գործակալ. ոմ յարիցէ ընդ իս ՚ի չարիս հաւատարել յանօրէնուԹիւնս։ Եւ քանզի այս ըստ սմին մասին կնքեցաւ և ճշմարտեցաւ առ այսս մահու, և ես վկայեմ կրկին հաստատեալ. առ այսր իրաւունս գրեմ՝ ինձ միայնոյ զեղծանիլ ՚ի սպառ, քան խմռիս բանիւ բազմոյ տապրիլ. Թերեւս սակաւիւ առ այսու արդեօք և ինձ չնորհեացես, չնորհուիս զպարտիս խմոյն։

Բ. Եւ արդ զինչ քեզ աղերս հաճոյական ՚ի յայսմ և ՚ի սոյն, և ծուխ անուշից ընդունելի խնկոց մատուցիչ, գովեալ Թագաւոր երկնաւոր Քրիստոս, եԹէ ոչ զառ ՚ի յինէն անիծեալսն օրհնել մաղԹեմ, զկապեալսն արձակել, ազատել զդատապարտեալսն, բարեգործել զնզովեալսն, պատկել զԹշնամանեալսն, սփոփել զտրտմեցեալսն, դարմանել զկարտաղեալսն, խնամել զտարտուղեալսն, պատսպարել զնեղեալսն, զվիրաւորեալսն ՚ի մարմին՝ յոգի բժշկել։ ԵԹէ օրհնուԹեան բանիւ առ ոք մատուցայ, լուիցես. իսկ եԹէ անիծիւք, մի հայեսցիս ընդունել, գԹած։ Եւ տատապեալս ամենախաշուառ ՚ի վերջին սպասաւորուԹեան մաղԹանացս այսր մատենի ՚ի բովանդակ մտաց չնորհեցի խմոյն՝ փակեալ առ ՚ի քէն զանիծիցն դժնդակ ըղձիցն չարաչուք

ձայն. և դժնէից նենգապատին խմոյ՝ ընդ բարբառ ի բա-
լոր սրտէ հաշտութեան արգահատեցի, վասն որոյ և
ծուխը պաղատանաց կրկնեցի. որչափ դու ինձ ահա
յայց եղեալ առաւել ողբմեացիս քան քոյդ մեծու-
թեան, գովեալ խնամակալ, կեանքդ՝ մահացուիս,
հզօրդ՝ ակարիս, ամենակարդ՝ վարանելոյս, խմաստու-
թեանդ աղբիւր՝ յիմարիս և թմբրեցելոյս։ Քանզի
յաւէտ սիրելոյ անկայ իբրեւ զաղաղակ մխային ոչ
ընդելական ի հաղիս մահու անզգայապէս, չիմացայ
զկորուստն, չէիտացի զորոգայթն, չտեսի զմբուռնող
որսոյն ծածուկ մեքենայս, չկարծեցի զնաքուճն կեր-
պարանոյ կեղծաւոր վարմին, չնկատեցի զդպիտաց-
ղուխիւնն շուրջանակի, չջօշափեցի զպատանդիչ զգան
յարկ կարծին, ժամանեցին ինձ չարիք, և ես ոչ կա-
րացի ճանաչել, քան սաղմոսողին։

Գ. Քանզի և որպէս խմաստակի ումեմն արասաքնոյ
բարեաք թուեցար, չար ասել զմահ առ չիմանալոյն
պատճառի, և ես վկայեմ խմով բանիւ. քանզի իբր
զանզգայ պաճարս անատնոյ մեռանիմք և ոչ զարհու-
րիմք, կորնչիմք և ոչ հիանամք, թաղեցեալ լինիմք և
ոչ խոնարհիմք, տարագրիմք և ոչ տագնապիմք, եղծա-
նիմք և ոչ զղջանամք, մաշիմք և ոչ մտաւեմք, պակա-
սիմք և ոչ պատրաստիմք, գնամք և ոչ զգուշանամք,
գերիմք և ոչ ևս զգամք։ Իսկ հանգիստ ասել երջան-
կին Յոբայ զվախճան մարդոյ, և ես խոստովանիմ զսոյն
ընդ սրբոյն, եթէ ոչ ունէի զբեռն աշխատութեան
մահացու գործոց ըստահձեալ։ Անանաւանդ զի որպայծն
պաղանի և հնարագիրն աներեւակի, տարր ժամանա-
կիս յանէից, անցեալն անցայտ և ապառնին կարծողա-
կան, ես անհամբեր և բնութիւն թերահաւատ, ոսք
անհաստատաք և միտք ցնդեալք, կիրք հարկաւորք և
բարք անժուժկալք, մարմին մեղսամակարդ և յօժա-
րութիւն երկրասէր, դիմամարտութիւն անկակից և
խառնութիւն ներհակական, բնակութիւն կաւեղէն
և անձրեւք ուժգնակիք, կարիք անհնարելիք և պա-

սահաքք ամենապրաւք, միաք չարախնամք և տենչ
մունք բարիասեացք, կեանք առօրեայք և զբաղք
սահաւաւորք, խաբմունք չիմարութեան և խաղալիք
սպայականք, աշխատութիւնք ընդունայնք և վայել
մունք երազականք, համբաւք ոչնչից և պահեստք հող
մոյ, նմանութիւնք տուեր այ և կերպարանք ծիծա
ղելիք: Քանզի իբրեւ եկն ես հաս պատուիրանն, ըստ
պօղոսեան բանին, անպատրաստ գտեալ զիս ինքեան,
մեղքն կենդանացան յանդիմանեալ յարգարութեանցն,
և ես մահացայ կենացն և կենդանացայ կորստեանն:

Ծ. Պողպատն օտարք, չարին գումարք, զտտացուածս
սրտիս իմասիկ, ըստ գրոյն կանխաբանութեան. ո
րով եկն ես հաս խոչդն աստանօր իմաստութեան ինձ
նուազանալ, ըստ առակողին, և առաւելուլ ոչ բար
ւոյ ցանկութիւն: Ոչ յառեցի զակն ոգւոյս ի գլուխն
իմ կենաց Քրիստոս որով ընդ ուղիղն հետեւեցայց:
Քանզի կամելով ուժգինս ընթանալ՝ ընկալայ սասակա
պես, յանչափն ձգտիլ՝ իմոյն ոչ հասի, ի մեծագոյնն
ամբառնալ՝ աստուստ գլորեցայ, յերկնայինն ուղւոյն
անդնդոց մատնեցայ, ի զգուշանալն առաւել՝ յաւէտ
վնասեցայ, յանարատն պահիլ՝ մանր խորտակեցայ, կար
ծելով ընդ ահեակն մտցել՝ յայլն գթեցի, ի վերկորդն
խուզել՝ զնախնին կորուսի, ի խնդիր սակաւուն՝ ի
կարեւորացն զրկեցայ. ի յուխտին պահել՝ դաշինն
դրժեցի, առ սովորութեանն կորիլ՝ կորուսիչս գտի,
ի փոքունցն փախուցեալ՝ մեծամեծացն մատնեցայ,
զոր ես ինքն ինձէն սատղծեալ՝ չարաչար գատախազ ան
ձին կարգեցի: Յորոց վրկել զմատնեալ գերիս դու
միայն զօրեացես, կենաց մատուցեալ զընծայեալս մահու
զհոգիս, զի դու միայն, տէր Յիսուս, ճանաչիս քա
րերար, անսահման փառօք ընդ հօր և հոգւոյդ սրբոյ
օրհնեալ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ Ծ.Զ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Խսկ զառիթան մահու դիպուածս գժոխարմատ ծառայս դառնութեան պատուղք, ընտանիք թշնամիք, հարազատք հակառակք, և որդիք դաւաճանողք, լա տորագրեցելովք մատամբքդ նշանակեցյիչ՝ գրեալ յա նուանէ, որ են այսոքիկ։

Բ. Սիրտս նանրախորհուրդ, բերանս չարախօս, ակ նըս յայրատատես, ականջս վխտալուր, ձեռնս մա հաձիգ, երիկամունքս անփորձ, ոտնս մոլորաշաւիղ, ընթացք աներկիւղ, հետք խոտորնակ, շունչք ծխա խառն, գնացք խաւարային, գոյութիւն լերդի վիմա կան, խորհուրդ ծորեալ, կամք անկայուն, չար անփո փոխ, բարեմասնութիւն սասանեալ, անձն տարագիր, աւանդ վաճառեալ։ Գաղան վիրաւոր, թռչուն նե տահար, փախստական քարավէժ, ըմբռնեցեալ վնա ստարտ, աւազակ ծովակուր։ Օձնուար նենգաւոր, մարտիկ անպատրաստ, սպառազէն անժուժկալ, մշակ հեղգացեալ։ Աղօթական անխրախոյս, բեմական տուր նաքարշ, քահանայ անկնդրուկ, օրինական աննուէր։ Դպիր կշտամբեալ, խմաստակ խելագար, ճարտասան անճոռնի։ Կերպ անպատկառ, դէմք անամօթ, երեսք ըմբշեալ, գոյն անհամբոյր, ակռ ամարդի, գեղ ծա նակեալ։ Խորհուրդ խանգարեալ, ճաշակ գարշեցեալ, պգի գաղձնաւոր, որթ որդնահար, պարտէզ փշա բեր, հասկ ուռճահալ, մեղր ի մկանց ճարակեալ, անպատասպար անկեալ։ Անապարձ յուսահատ, անհա մողելի նզով, անհաշտական բաժանեալ, ուշնայնաբան

Հաշակրաւս, պաճարամիս գոռոզ, անասնօրէն ապիւրաս, գժոխային ագահ, աներեսան յանդուգն: Անլեզնութիւն անասուածած, ձեռնաձգութիւն սպասնող, տատասկացան երկրագործ, երշանկութիւն եղկելի, մեծութիւն վատաբարեալ, վայելչութիւն անշքեալ, կարողութիւն ակարացեալ, բարձրութիւն խոնարհեալ, փառասրութիւն ընդոստնեալ, պատուիրանազանցութիւն յարակից, սխալանք ինքնակամ: Անտակարար համակոր. խորհրդակից նենգաւոր, բարեկամ հատուածեալ, հաղարապետ գողամիտ, մերձաւոր կծծի, բաշխող ժլատ, վերատեսուչ կարիամ, ոգի անախտակիր, իղձք անսէր, բարք աաեցող, աղիք անդթականք, դնացք անխոհեմ, աներեւոյթք վնասեալք, ծածուկք անիծեալք, դիպուածք թշնամանեալք: Ամաճառական վաճառիչ, շահարար շուայտեալ, պաշտօնեայ արբեցող, գանձուց ասիկան երկմիտ, պատգամաւոր բանսարկու, դռնապան քնեաճ, աղքատ հպարտ, մեծատուն ժլատող: Անիւանապետ անօրէն, պահապան մսանիչ, բնակակից չարախօս, սուրհանդակ անժաման, թղթաբեր պարտաւոր, առաքեալ խռովարար, միջնորդ անխնամ: Աղբոյ արտալած, թագաւոր թարմատոր, կայսր ոչնկործան, իշխան սիրադաւ, զօրավար զրկող, դատաւոր ակնառու, ամենիկ ինքնագործ: Ախտասողն ծագը, սիրելոյ աշխատ, բանագրի դատով, յանդիմանչի դատախազութիւն: Գանդն և ի վերհագուհիդ կոչմանդ էր ուրեք արդեօք զի էի, իսկ ի վատթարականացդ մասանդ եկին երբեմն եհաս զի եղէ: Աղդ այսքան վնասակարութիւնք խարդախութեանդ չամախագունիդ, յորոց չսմանդ խաբեցայ երբեւ զչիմար, և չսմանդ սիրեցայ երբեւ զսիար՝ կամաւ մասնեալ զիս ինքն մահու:

Գ. Աղդ զ՞ինչ ի վերադրելոցդ մասանդ՝ քեզ ասել եայ և իմ կորուսչայ՝ ի սպաս պաշտաման քեզ ընծայեցից, զ՞ինչիսիս ապականութեամբ պարագրեալ՝ ամենասուրդ քո մեծութեան հանդէպ կացուցից, և

կամ ոչքանեւօք երկայնմտութեամբք համբերեցեալ այսքանեայ պարտուց, ոչքան ներեալ, պրպեալ լռեցեալ, պնաշդ իսկ անսայեալ, ինքը ոչ մատնեացեալ հարուածոց զանից զարժանիս սատակման մահու: Արդ այսոցիկ աննշայլ մեծութեանց հոգւոց խաւարի ողորմութեամբ լուսոյ քոյ պատահեացես բժշկել քաւել և կենադոր ձել, զօրեղութիւն անվթարելի. և քեզ փառք յաւիտեանի. ամէն:

ԲԱՆ Ծ.Լ.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՒԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ՎՐՈՒՍՏՈՍ աստուած անուն ահաւոր, մեծութեան աւսակ, անքնին բարձրութեան պատկեր, անսահման զօրութիւն, կերպարան փրկութեան լուսոյ, պաշտպան կենաց, դուռն արքայութեան վերնամ հանգստանն, ճանապարհ հանգստութեան, ապաւինութիւն նորոգ և անսխրական երանութեան, ամենակալ ինքնիշխանութիւն բոլոր էականութեան, օրհնութեան կոչումն, աւետեաց ձայն, բերկրութեան բարբառ, անմահութեան դեղ, որդի անճառ աստուածոյ միոյ. որ ինձ անհնարին է, քեզ դիւրին է. որ ինձ անհաս է, քեզ ահմանեալ է. որ ինձ անանցն է, քեզ հպատուր է. որ եղկելոյս ինձ ծածկեցեալն է, քումդ երանութեան մերձաւոր է. որ ինձ անկարելին է, քեզ կատարեալ է. որ ինձ անկշռելին է, քումդ անճառութեան չափեալ է. որ ինձ յաւիտենական թեանն է, քեզ սփոփանայ է. որ ինձ անբժշկականն է, քեզ անվատանգելի է. որ ինձ հեծութեանն է, քեզ խնդութեան է. որ ինձ ծանուցք են, քեզ թե-

թեւաձոյնք են. որ ինձ եղծեալն է, քումդ զօրեղութեան գրեցեալ է. որ ինձ կորուսեալն է, քեզ ըմբռնեալ է. որ ինձ անճառն է, քեզ համարեալ է. որ ինձ մռայլն է, քեզ ճառագայթ է. որ ինձ անթիւն է, օրհնեալդ քումմ ձեռին բովանդակեալ է. որ ինձ սոսկալին է, քեզ հեշտալի է. որ ինձ փախչելին է, քեզ վանելի է. որ ինձ անմատոյցն է, քեզ դիւրաւ հերքելի է. որ ինձ մահաբերն է, քումդ էակութեան զօրութեան ընդ ոչ գոյն համարեալ է:

Բ. Այլ դու, ողորմած աստուած բոլորից սէր ցնծասուս Քրիստոս, և այժմ զօրես առ ելիցն հնար՝ եթէ գթասցիս. վասն անուան փառաց մեծութեան հօր քոյ օրհնելոյ, վասն կամացդ գթութեան ոգւոյդ քոյ սրբոյ, տես ի տաժանաւորս կրից յանդիմանական յայտնութիւն, և ի խորոց սրտի ինքնամատոյց դատախազութիւն. նայեա ի բնութեանս ամենապատառ խակութիւն, և պարգեւեա բժշկութիւն վերացս և հնարաւորութիւն կորստեանս, զերծումն բազմամանեայ մահուս և շաւիղ կենաց ապականելոյս, նորոգութիւն եղծմանս և մուտք յուսոյ ամբարշտելոյս: Եթէ ես զանմանն ինձ կամ յուշի, պըշալի առաւել դու զընաւորականագ քո զընաւորի բարերարութիւնագ. եթէ ի փշոց պտուղ ընծայեցաւ քաղցրութեան, պըշալի առաւել ի ծառոյդ կենաց՝ ճաշակ անմահութեան. եթէ ես իմոց առելեաց ողորմութիւն մաղթեցի, դու քոյոյս զնաւրդ ոչ կրկին մատուսցես, հզօր, յանհատագդ առատութենէ:

Գ. Արդ տես ի քոյդ մեծութիւն, բարձրեալ, նա յեցեալ ի յիմս փոքրկութիւն. ընկալ զսակաւ խոստովանութիւնս անհամար մեղացս, որ զընաւն հատմայն տեսանես. և որպէս զվ լմին գթել ոչ գրեցեր, և զաւազայս փոքու աստանել մի համարեսցիս. և լբրեւ զվաթին՝ ընդ մեղայն ասել՝ խոկայն անցուցեր զպատիժ պատուցն, և առ իմ ձայնիս հեծութիւն զնոյն գործեսցես, երկայնմտութիւն. որ տաս ամենե-

ցնա՛ն առատապէս անաչառութեամբ որպէս յաղթող բարի բազմիմաստ, և ոչ նախատես զյետնեալ սորուկս որպէս ողորմած և ամենատեղեակ. սատակիր վերատին, և մի կորուսաներ զբուծեալս արեամբ քո, գթած։ Օ՛ի քո է փրկութիւն, և՛ի քէն է քաւութիւն, և քեզ վայելէ փառք յամենայնի յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ԾԲ.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱՆ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒՐ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՅ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՄՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱԱՏՈՒԾՈՑ

Ա. Օրհնեալ աէր Յիսուս ընդ հօր, ՚ի կամ հաճութեան հոգւոյդ քո սրբոյ. և օրհնեալք ամենայն առ ՚ի յօրհնելոյդ օրհնեցան. օրհնեալ միայն որդի օրհնելոյ. չիք իմ Թագաւոր իշխեցող շնջոյս բայ ՚ի քէն, Քրիստոս։ Այս է օրհնութիւն Յակոբայ, ասէ Նահայէլ, յորժամ բարձից զմեզս նորա։

Բ. Արդ ողորմեայ ինձ, աէր բարեգութ, ըստ նախընդիր քո սովորութեան, և օրհնեա զանօթս քո բանականս, ըստ ձայնին Դաւթի և ըստ Պաւղոսի. զի բանընդիր քո փրկութեան ժամանեալ հասից քաւութեան օրհնեալ առ ՚ի քէն։ Այսուհանդերձ ինձ հրաշագործ ձեռս, ողորմած սրբոյ երկնաւոր, որպէս անկեալսդն ՚ի բազմաժամանակեայ մահճացն խշտիս, ժողովեալսդն ՚ի սրահին Բեթհեզդայ։ Յորոց մի էր և կրկին Թերահաւատն՝ երից տասանց և ութից միոյ ամօք ախտացեալ յօդիցն լուծմամբ, որում՝ ոչ անխոյեցեր զբժշկութեանն ձեռնտուութիւն, իբր գիտելով զանքոյժ չարութիւնն՝ որ նիւթեացն քեզ յաւուր մատնութեան դառն գիշերին ախտամարտութեան՝ երախտաւորիդ, մեծիդ և բարեբարիդ։ Որ թէպէտ և կանխաւ

ինն պղտշայուցեր, թէ մի մեղանչեր, զի մի կրկնեա
յին քեզ չարիք, ոչինչ վերջացաւ լինել ձեռներէց
սկզբնաւոր անհամբուրելի դատաղացն զքեզ ի խաչին:
Եւ դու այնպիսւոյ անյարիր չատուկ մահու ծնգե-
ցեալ չարաչուք առն ողբմեցար, անճառ բարու-
թիւն, սիրալի մարդասիրութիւն, ապրատիելի նեղո-
ղութիւն, սուկալի երկայնմտութիւն, անբաւելի
քաղցրութիւն, փառաւորելի հեզութիւն: Որ միշտ
յաղթիս ի զթութենէ և ոչ թշնամանիս, պարտիս
յողորմութենէ և ոչ պարսաւիս, բռնադատիս ի մար-
դասիրութենէ և ոչ անգամանիս, հարկիս ի բարու-
թենէ և ոչ հայհոյիս, ատիպիս ի սիրոյ և ոչ բամ
բասիս: Պաղատիս դարձին իմ առ քեզ և ոչ ձանձրա
նաս, արագես զկնի ապերասանիս և ոչ լքանիս, ձայ
նես չարդիս և ոչ սրամտիս, փութաս մեղկելոյս և ոչ
խափանիս: Այլ չարս ես բարի, առ ամենազարհուս ես
ներող, առ մեղաւորս ես քաւիչ, առ խաւարեալս ես
լոյս, առ մահացեալս ես կեանք:

Գ. Այս են գիրք ամենայն հոգեշունչ օգուտակարու-
թեան, որ յաճախս ծնանին երկիւղաւոր պատուս անճառս
և զարմանալիս: Այսս և ինձ թշուառացելումս, օրհ-
նեալ ամենազարգեւ, արի առ զմահիճս խշտացդ մե-
ղաց ի վայր կործանմանդ, և հեռեւեալ ժամանեա
յանդորր հանգիստ անաշխատ կենացդ: Խղեացես ամե-
նակարող սուսերաւ բանիդ հրամանի զերիզամնդեալ
մահազդեստս պարիսակութիւն զժոխազնեայ կապա-
նացս, և լոյծ ինձ զհանգոյցս խեղդողականս ոգեպա-
հանջ սատակութեանս, առաքեալ զարժանաւորս մա-
հու յաղատութիւնն վերին անանց բերկրութեանն,
կենսաբեր և սատուածային քո բանիդ: Ամէն սակաւ
սակաւ ազդեացես, և մի օր ի յոր յերկապաձգեացես,
զի մի սատաւար ծանրութիւն բեռանցս մեղաց տիրեացէ
թիկանցս ազդերայ, և կործանեալ զնս կորացուսցէ
հայել ի գժոխս, և ուժգնակի գոռալ բռնութեամբ
անպարապ հոգեւորական զինուն արարեալ՝ մահու

ծառայեցուսցէ : Այլ օգնեա ինձ, բարի վշտակից հե-
ծութեան կարեացս մահու երկանց, առեալ յինէն
զիւրայ սատակմանն, որպէս երբեմն յուսոյ պահակին.
որով կառուսցես զվայելչականն յաղթեանակի արի զո-
րութեան, զնդապետս հաւատով յուսոյն կարծրու-
թեան ընդ քեզ բեւեռել անսայթաքելի : Եւ քեզ
ընդ հօր հոգեւոյդ սրբով փառք և իշխանութիւն յա-
ւիտեանս, ամէն :

ԲԱՆ Ծ.Թ.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. ԱՒԱՏԱՄ և վկայեմ մտաց գիտութեամբ՝ ի
քէն աղեղեալ ոգւոյս իմմատիս ուշիւս սեռման, զի
ըղձալի են քեզ, բարերար, ապաշխանք մեղաւորաց քան
զնոցդրուածս արդարոց : Ո՛չ միայն զպարտութիւն ան-
ձինն յայտնեալ՝ հնարհիդ քո սպասէ, առ որ ծանու-
ցեալ զինութեանս չափ, և մեծ կշռաւորիչ աստէն
համբարձեալ ինքնոգոր մարտակից նմին իսկ ինքեան
և գառն գարովիչ և ծածկատես գառաքաղ : Իսկ միւսն
յարդիւնս բարեացն իւրոց նայեալ, յանձին հարեալ
ձեռն վաստահութեան, մատանաց զահման բնութեանն,
և պարզեւաց քան ողորմութեան գիտեալ ակն ունի :
Վասն որոյ առ միւսն անթիւս են սահեղծուածք ձառից,
որ զողորմութեանդ քո փողով բարբառոյ ազգէ. իսկ
առ միւսն լռեալ են քոյդ, անքնին ահաւոր և ամե-
նահնամ, ամաչեմ ասել՝ թէ և երկրաւորիս գործոց
պատմութիւն զքոյդ յառաջեալ : Ընդ արի սէր, և
մի զօրասցի քան զքոյդ աջ հոգեղինի. մի կշռեսցին զ-
զորմութիւնք քո ընդ չանից մարդկան :

Բ. Նա արդ առողջքն անդամոք անկարօտաք են քո ժըշկութեան, և սեսանողականքն աչօք չունին պէտս առաջնորդի, և փարթամքն ընչիւք ոչ դեգերին առ դուրս լեռին, և ամենայնիւ յղիացեալքն ոչ սպասեն փշրանաց սեղանոյ հացի, և սուրբքն վարուք ապէնիաղ են ողորմութեան: Նա արդ ինձ գթասիս ողորմել, բարձեալ երկնաւոր հոգւոյ, ամենատուր վարանեցելոյս: Գանգի թէ էի իբրեւ զՅօբ, ասէի զանձն իմ իբրեւ զնա արդար և անարատ. թէ էի իբրեւ զՄովսէս, աչ սէի վատահութեամբ ընորայն, ծանիցէ աէր զայնոսիկ որ իւրն են. թէ էի իբրեւ զԴաւիթ, ասէի արարի զիրաւունս և զարդարութիւն, և գարձեալ զմեծն քան զքնութիւն մարմնոյ, զմեղս թէ սեսանէի ի սրսի իմում, մի լուիցէ ինձ աէր. թէ էի իբրեւ զՆզիա, ասէի զանձն իմ այր աստուծոյ. թէ էի իբրեւ զՆրեմիայ, զբոյդ ճշմարտութիւն յանձն օրինակէի. թէ էի իբրեւ զՆզեկիա, պարծէի զբարութն և զիրաւացին՝ գնացի առաջի քո արդարութեամբ. թէ էի իբրեւ զՊօղոս, ասէի զիս բնակարան աղքարան և ընդունարան աստուծոյ բանին: Նայլ ես անօրէնս ի մէջ գիտութեան օրինացն. ոչ միայն չունիմ զանձն իմ քեզ ընծայել յարդանօք բանիւ իբրեւ զնոսա, և զքնութիւն չարս որպէս զբարիան զայնոսիկ առաջի քո յիշատակել, այլ և ոչ զամենեսեան գոյից զբարեհոչակեալ անուանդ հոգւոյ ամբարշտեալս լեզուով գովել: Իսկ գուս առ ամենայն հնարս զօրաւոր՝ մատոս ինձ ոգի փրկութեան, աչ պաշտպանութեան, ձեռն այցելութեան, հրամանն բարութեան, լոյս ողորմութեան, բան նորոգութեան, պատճառ քաւութեան, գաւազան կենաց օգնութեան: Օ, ի գուս ես յոյս ապաւինութեան, աէր Յիսուս Քրիստոս, օրհնեալ ընդ հօր հոգւովդ սրբով յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԹՒՆ Կ·

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՈՒԿՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱԱՏՈՒԾՈՑ

Ա· ԼԻ արդ որպէս պէ ոչ վայելէ օրհնաբանութիւն ի բերան մեղաւորի՝ ի ճշմարիտն առակէ կանխաւ իսկ ուսայ, պիտոյ յաւելից կրկնել զնոյն գովութիւն ա՛ղաչաւորս բազմապատիկս, որ հանապազ ընդունիմ անէծս ի սաղմոսս բարեբաստութեան։ Զի ինքն եր գեցից լինել վտանգս և արձանացուցից նախատինս, և ի մերկութեանն գրկի փուշս ընդ շուշանաց ժողովեցից· պիտոյ ընդ Դաւթի համարձակեցայց ասել, թէ զաստմունս մեղաւորաց փշրեսցես· պիտոյ դարձեալ, թէ մի անօրէնք բնակեսցեն առաջի աչաց քոց· պիտոյ, թէ դատ արա ինձ տէր ըստ արդարութեան քո, ըստ ամբծութեան իմոյ որ յիս· պիտոյ, թէ կատարեսցին չարիք ի վերայ մեղաւորաց· պիտոյ, թէ խորտակեսցին բազուկք մեղաւորի և չարի, և զայն որ գինի· պիտոյ, թէ տեղասցէ ի վերայ մեղաւորաց որոգայթ հաւր և ծծումբ· պիտոյ, թէ սաստկէ տէր զչքնաւնս նենգաւորս և պնեզս մեծաբանս· պիտոյ, թէ փորձեցեր զսիրտ իմ և ոչ գտեր անիրաւութիւն· պիտոյ զյաջորդն սմին, թէ ես պահեցի զճանապարհս խիստս· պիտոյ գնացն, թէ ես արդարութեամբ երեւեցայց երեսաց քոց· պիտոյ, թէ և ես եղէց անբիծ ընդ նմա· պիտոյ գլխոյն, թէ հաստատեսցէ ինձ տէր ըստ արդարութեան իմում և ըստ սրբութեան ձեռաց իմոց· պիտոյ անձամբ ինձէն զաստութիւն իմ ծանակեցից՝ ասել ընդ սրբոյն, թէ լուացայց սրբութեամբ զձեռս իմ· պիտոյ ի մէջ նանրութեան զամբարշտացն աթոռս քամբասե-

ցից. զի՞րդ զերջանկին պարծանս Թշուառացեալսն կերպաւորեցից, Թէ դատ արա ինձ տէր՝ զի ես յանբծութեան իմում գնացի. զի՞րդ օտարս՝ ի բարեաց դիտողիդ գալանեաց արգահատեցից, Թէ մի համարիս ընդ ամբարիշտս զանձն իմ. զի՞րդ ես ինքն գոլով զայլս անիծեցից, Թէ տուր նոցա տէր զգործս նոցա, և՝ ի կարդ բանիցն համարձակեցայց։

Բ. Գիտեմ Թէ զյետինս բանիցն առաջնովքն առատանօր եդից, կրկին ծանրանան ինձ ցաւք և յաճախեսցեն դառնութիւնք։ Բայց՝ ի շեղջեցեալսն արտասուաց՝ դոյզն մի չափեալ, բառնալոյ հանապազ զորդեան յանդիմանութեամբ սաղմոսարանին ընտանի ձայնիւն, որ զպարտաւորեալս միշտ կշտամբէ. առ որս և սպառուած քառանեքորդի ինների հատուածի բանի յանդիմանողի զիս գարշեցուցեալ, հանապազ խայտառակէ. խոցեալ զերեսս՝ ի փառաբանութենէ, եղկելի զանձն իմ ցուցանէ, ատոլուածոյին ձայնիւն դատախազեալ, յանիկալութենէ կենաց լքանէ, միանգամայն և վիրաւս մահու ինձ իբր՝ ի պատնէշ առաքէ։ Գիտեմ Թէ չար է անէծս առնուլ յօտարէ, ապա անձամբ զանձն անիծանել կրկին չարաչար. իսկ եթէ չառնուլ նախասինք՝ ի մերձաւորաց օրէնք են, ապա՝ ի սեռողէն հայել զայսոսիկ, կրից արեան սաժանմունք, վիշտք աղետից և խեթք մտաց։ Բայց Թէ առ խոնարհութեան անձին իւրում մատնեսցի, չնեալ և կրճտամբեալ անիծիւք՝ ի լեզուէ իւրմէ, ի խոստովանեալ և յամենիշխան շրթանց բերանոյ վերնոյն օրհնեսցի. զի ճշդրտեալ Թարգմանեաց զգարձն իւր առ նա՝ զհետս կենաց ոչ լքանելով. սահմանաւն սիրոյ զպարտեացն արմատ կրճատեաց, ոչ սիրեալ՝ ի խարդաւանաց չարաբանողաց. ուշիմ հօտին Քրիստոսի գտաւ բժշկեալ՝ դիմելով՝ ի յաղն բուժիչ աղեացն սրկածից։ Բայց և այնպիսեան բարոյից է՝ առնուն կենդանեաց՝ ի մէջ դալորոց ծաղկածին վայրից կենաձիր բանից ԹմբրուԹեամբ մատց՝ ի յատրուս մահու ձարակել։

Գ. Ի՞ւ արդ քանզի իմ է առակս վերջին հշտամբու-
զական, և առ իս ակնարկէ զպիսուածոյն չար պա-
տահմունս, որ ինձէն անձին նիւթեցի միշտ զեղմունս
կիզանողականս հրոյ տոչորման, հոսեալ ՚ի յերկինս ատ
զպիսի գագաթանս իմաստնարանի բազմակիս։ Քանզի
զնաթդ ՚ի յարդիւնս ինձ օգտից սազմոն եկեսցէ, յոր-
ժամ անպտուղ ՚ի բազմերգութենէն լինիցիմ, ոչ նուա-
գել հոգւով, քան թելադրելոյն Պօղոսի. զնաթդ ընդ
մարգարէին ևս զտէրունին խառնեցից մեծս մեղաւոր
բայ՝ նկուանս պիտանեաց, ասել ընդ սրբոյն, թէ ՚ի
բայ կացեք յինէն ամենեքեան որ գործէք զանօրէնու-
թիւն. զնաթդ ոչ ունելով ՚ի բազմոյն պատուիրանաց
կատարեալ՝ չնորհին և օրինին՝ բարբառեցայց զերջան-
կին, որ նախ ինքն արար զոր մեզ կանոնեաց, թէ
քանզի ծառայս քո պահեցի զայս, և որ զհեան գան
ատացեալքն. զնաթդ թաւուս ՚ի լուսնթենէ խմաստից
կենաց ընդ երկիւղածս տեառն օրհնեցից. զնաթդ ընդ
մեծին մաղթանաց զնմն յօդեցից, թէ զմին խնդրեցի
՚ի տեառնէ՝ զտեսիլ վայելչութեան նորա և զհրամանա-
տուութիւն տաճարի նորա. զնաթդ ՚ի հրաժարելին ինձ
ձեռնամխեցից, յորժամ լսեմ, թէ ուղղոց վայելէ օրհ-
նութիւն. զնաթդ չրթամբք խմովք զանձն իմ անիծից՝
տեսով զինի յոլովից առեալն, թէ երեսք տեառն ՚ի վե-
րայ չարագործաց՝ տատակել դիւշտատակս նոցա յերկրէ.
զնաթդ զմիսան դարձեալ, թէ չարք վաղվաղակի տատա-
կեսցին. զնաթդ զկերպարանացն իմ նմանութիւն, թէ
բազուկք ամբարշտաց խորտակեսցին. զնաթդ տատակ-
ման ինձ պաղատեցայց, թէ ահա մեղաւորք կորիցեն.
զնաթդ զբազմայատեան լեզուս ՚ի յօրհնեալն բան մեռ-
ցից, թէ տացի պահել զճանապարհս իմ, զի մի մեղայց
լեզուաւ իմով. զնաթդ փշով մեղայ հեղձեալս զանա-
րատին պարծեցայց, թէ այլ զնս յանբծութեան իմում
ընկալար. զնաթդ ես մեղաւոր և կրկին պատժաւոր ըզ
հանգուանակիցն դատուեցից ապրել ՚ի նոցունց, թէ ՚ի
մարդոյ մեղաւորէ նենգաւորէ փրկեա զնս աստուած։

Դ. Ո՛չիմիդ իբր ոչ կատարաշտեալ անպատկառապէս պերճացայց ունայն պանծանօք ասել ընդ Դաւթի, մի թէ մոռացեալ իցէ մեր զանուն աստուածոյ, կամ ձգել զձեռս ի մաղթանս օտար աստուածոյ. քանզի որ ի մեզս գարշութեան խնարհեսցի, առաջի կայ նորին կատուցեալ առեալ ի պաշտօն յաւանականացն ախտարծարծիցն պատնկապատիր պատկերացն կերպաքան՝ Աստարտայ և Քամոսայ և Աեղբոմայ արուարձանի և Ծարահատայ Թարմատարի, ընդ զաղրատեացն կանացեայ՝ իշանդամիցն պատկառանք անվերարկու ծանակութիւնք: Իբր ոչ պատկառեցից սովիմբ ասել ընդ նահատակին, որ զայս դիմադրաւութիւնն առ բարին ունէր միշտ, թէ վասն քո մեռանիմք զօրհանապազ, և որ ի կարգին է սորին սաղմոս: Իբր յիմարս յարս և վատթարս ասել ժպրհիմ, թէ բերան իմ պատմեսցէ զնիմաստութիւնն և սիրտս զհանճար. Իբր մարդելոյդ կերպարանաւոր՝ զմարդահաճոյիցն ոսկերս ցրուել մաղթեցից. Իբր զկրկին երկրորդեալն մեծանունն բարութիւնս, թէ հաճոյ եղէց առաջի տեառն յերկրին կենդանեաց: Ո՛չիմիդ ունողս անբաւից մեղաց զարդարոյն առեալ կարդացից, թէ ոչ մեղք իմ և ոչ յանցանք, առանց մեղաց ընթացայ և ուղիղ եղէ. զնիմիդ զնս ինքն մատնեցից կորստեան յաւերն զայսբան, թէ մի ողբովիր գործողացն զանօրէնութիւն. զնիմիդ, թէ որպէս հալի մոմ առաջի հրոյ, այնպէս և մեղաւորք յերեսաց աստուածոյ. զնիմիդ գրգեալս ապականացու փափկութեամբ՝ սահմանեցից զանմանն ինձբան, թէ խնարհեցուսցի պահօք զանձն իմ, և զաղգակիցս նորին ընդ նոյն, թէ ես ի նեղել նոցա քուրձ զգենուի, և խրթեւ զգաւոր և զտրտում խնարհառնէի: Որպէս հանդարտեցից զնմանեացն իմ պատիժ միշտ յիշատակել, թէ սակայն մրուր բարկութեանն աստուածոյ ոչ սպառեսցի, և արբցեն ի նմանէ ամենայն մեղաւորք երկրի. Իբրեւ զեւան առ սմին, թէ զամենայն եղջիւրս մեղաւորաց փշրեացես: Ո՛չիմիդ

զապերախտութիւնն Յակոբայ ի ձառ առեալ հեգնե-
ցից, որ ընդ սուրերին զձմարտութիւնն ընկալեալ,
մուտացայ ընդ նասին նոցին թերութեամբ զերախտիսն
Քրիստոսի աստուածայնովքն արուեստիւք խաչին փըր-
կանօք, քան նոքա զզօրավարութիւնն Մովսէսի ցպոյն
պանչելեօք, որ զօրինակին նկարագրէր տէրունական
անեռութեանն: Ոչ իմիրդ զյարուցելոյն ի վերայ դէ-
ւայ զաղէտս ցուցից, իբր նոքա զօսարացեղից խու-
ժադուժ ազգացն ասելով, թէ արկիւն զդիակունս բար-
եացն որ ի մէջ կուր վիսասակարացն Թուխոյն, այս է՝
պատոյն օդոյնոց. պրպէս զանկեալ զսերմն բանին ի ճա-
նապարհին, և զմիաբանեալ զկամս ընդ չարին՝ սուրբ
անուանիցից. Եբրեա զնմանակիցն առ ի նոյն շաւիղ
չարին պատերազմի գուսպար գաղտնամարտս մուտս օդ-
տելոց, զոր ես զօրացուցի գործակցեալ հնարիւք բան-
սարկուին: Նա ոչ ունիմ աղերսել, թէ մի լեր և մի
գադարեր, աստուած. և խորհեցան ի վերայ սրբոց
քոց և ասացին, զոր ի կարգէ սաղմոսիս է աղօթել:
Վանզի յայժ պատեհագոյն է առնուլ զայսոսիկ ի վերայ
բռնութեան մոլեկան դիւաց միշտ ճակատելոց առ
ներկայիս խռովութիւն, և ընդ նասին նոցին մշակաց:

Ե. Յորոց դու, տէր Քրիստոս որդի բարձրեալ մե-
ծիդ աստուածոյ, պահեսցես և ամրացուսցես երկնային
զօրութիւդ շնչաւորութեամբ՝ յամենայն ընթացից խաբո-
ղին հողմոյ խաչիւդ լուսոյ զմեզ պաշտպանեալ. որ զի
թէ և գոյին յիս անօրէնութիւնք բազմօրինակք, այլ
ոչ հայհոյութիւնք: Ար ոչ հանգեաւ ի կորուստ նմա-
նեացն իմոց ամբարշտելոց, այլ ամենագորով թախանձ-
մամբ ընդ եղծման ջրոցդն զազգագործս կրկին վշտա-
ցար, տաղտկալի զմահու նոցա դիպուածն քեզ գրեցեր,
ասելով զզարմանալիսն լսողաց բան, ածեալ զմասս ոչ
և յաւելից անիծանել զերկիր վասն գործոց մարդկան:
Նա միևնոյնիս մեծ իմն պարարեալ ընդ կեանս՝ ան-
մաքրից և պարսաւորեալ սատակման, որ երբեմն առա-
կաւ դիմենալոյն զանկայելն ի կործանելիսն ցուցեր,

ողորմած, և առ այլ ումեմն նեղեցար սաստիկ վտանգեալ
ընդ յամրանալ անձրեւին առ ուրացողացն դարման։
Ընճառելիս ցուցեր բարեւթեան տեսակս յիշատակաց
ոճնելիս՝ ի վերջին աւուրս. քեւ՝ ի ձեռն առաքելոց
քոց՝ ողջոյնս հաստարակաց անհամբուրիցն հեռաւորաց
քաղցրաճաշակս հրամայեցեր։ Ահա և յիս ցօղեա կենդ
դանի զհայրենի գԹուրթեանդ զաւր, զի և ես փրկեցայց
քաւեալ ամենառատ քո պղծուրթեամբդ։ Եւ քեզ
ընդ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ԿԱ.

ՎԵՐՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՌ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Եւ ընդէ՞ր է ինձ բնաւն որ ի սաղմոսին այն
պիսեաց բանիցն ի կիր արկանել, որ ի նախատինս
միանգամայն և ի նզովս ինձ յարակային, հանապազ
երգել խնամս տաւղօք։ Քանզի զիա՞րդ արդեօք զբա
երջանկին ինձ դատապարտելոցս նմանեցուսցից՝ ասելով
ընդ նմին, թէ ոչ մերձեցաւ առ իս Թիւրեաղն սրտիւ։
Զ՞իարդ զկարգադրութիւնս տանցն ի յայտնի զինի
Թուեալսցն զարհաւրեցուցչացդ ընդակից կայից կանոնաց
օրինաւորին՝ զինուորին և Թագաւորին և մարմնական
հրամանաւորին, որք և երկնայնոցն են համբուրելիք
ասելով, ոչ յուսահատ եղեց ի կենաց պատմողս ա
ւետեացս և նորոյս աշակերտ անման յամենուստ բա
րեկարգութեանց։ Զ՞իարդ ըստ իրաւախորհ արդա
րոյն, ընդդէմ մեղաւորացն մահու զինեցայց առակա
առաւօտին ի սկիզբն արիմնութեանն միշտ պատրաս
տական լինելոյ, որ և ոչ զանգամս մարմնոյս գանեալ
խրատեցի. զիա՞րդ մանանեցեալ մեծին արուեթեան՝ սա

ասիեցից ՚ի քաղաքի տեառն զանօրինեալսն, որ և ոչ զբաւսեալ բնիծս հոգւոյս իմոյ մեռուցի։ Օ՚խթիդ սըտեցից զբօղին չեռ յայտնելոցն, Թէ զմեռելս որպէս հաց կերայ. զնա՚իդ, որ ոչ միացուցի յիմոցս կրից կա-Թիլ մի պղտոր ընդ յատակ արտօսր աղբերց երգողին՝ ասեմ ընդ նմին, Թէ զմսիզելս իմ արտասուօք խառնեցի, և արտասուօք իմովք զանկողինս իմ Թացի։ Օ՚ՊՐս ինձ զրեցից մեղօք մահացեալս, յորժամ սկզբոյն առաուծոյ ՚ի բոլոր սրտէ զանցմանս նախնեացն իւր վարկանիցի, Թէ մեղաք մեք ընդ հարս մեր՝ անօրինեցաք և յանցեաք, և որ ՚ի վախճանն յանդի առաքեալս իւրամբք առ իս, քան առ Իսրայէլ։ Արդ՚ովք յարդեցայց դասիլ ընդ բարիան, յորժամ մարդկային հնարիւք այս դեղ պատուեցաւ՝ որ ոչ չիս գոաս, ՚ի գարշուԹենէ կերակրոյ ՚ի մահ սովեցեալք և յաճախուԹենէ ճգանց ՚ի հոգւոց նուաղեալք, ըստ խորուԹեան ինքնօրէն կրծոյիդ հրէից և հեԹանոսաց։ Օ՚խթիդ արդարուԹիւն իմ ՚ի ձեզ յաւիտեան, զոր ոչ բնաւ իսկ կատարեցի։

Բ. Նա զի մի տաղտկացայց յամեալ ՚ի բանիս. ՚ի հա-մառօտել զոյն փուԹացայց։ Օ՚ՆԷ ունիմ ասել ՚ի տեղի բանիցն՝ զոր աստուածաշունչ ձայնն նուագեաց օրհներգուն ԴաւԹի, Թէ բոլորով սրտիւ իմով խնդրեցի զքեզ. զնա՚իդ ընդ ամին զմեծն քան զայս, Թէ յամենայն ճանապարհէ չարեաց արգելլ զոտս իմ. ՚ի՚բր ընդ եղեալս և զայն մատուցից, Թէ ՚ի սրտի իմում Թաքուցի զբանս քո, որպէս զի մի մեղայց քեզ։ Արդ պէս զունայնուԹեանցս իբր զլուԹեանց ճառեցից ընդ պարս մաքրոց, Թէ ՚ի պատուիրանաց քոց իմաչեալ, ասեցի զամենայն ճանապարհս չարաց։ Օ՚խթիդ զհեզսն ճշմարտուԹիւն իմում ատուԹեանս մշանջենական երկնահարուԹիւն կարգեցից՝ ուխտաւոր ընդ հաւատարմին, երդուայ զոր հաստատեցի պահել զդատաստանս արդարուԹեան քոց։ Օ՚խթիդ ինձ հրեշտակ մահագոյժ անհրաժեշտ վճռի՝ զբանին պատգամ կրկնեցից, Թէ հեռի է ՚ի մեզանէ փրկուԹիւն։

Ո՛չիրդ չարս իսկապէս՝ զբարեացն գրեցից՝ որք ՚ի տեառնէ առնուն զնոյն հատուցումն՝ զայս առն յեղ յեղել, թէ բարի առնէ տէր ուղղոց արակց: Ո՛չիրդ զհամառօտն փոխատրութիւնն անաչառութեան՝ վասն պեցելոյս ինձ սահմանեցից, թէ զթիւրեալն յափշտակութեամբ տանի ընդ այնոսիկ, որ գործեն զանօրէնութիւն: Ո՛չիրդ զաստուածպզեաստին պանծանս ամաչեցեալս ինձ պատուաստեցից՝ ասել զնորայն, թէ տէր ոչ բարձրացաւ սիրտ իմ և ոչ զբօսան աչք իմ, և որ յետ սորին պատմին առացեալքն: Ո՛չիրդ զանձառն քան զմարմին բան՝ ՚ի ցոյց առից քաջալերութեան վհատելոց ես գանձ գերհենին, ասել ընդ օձեաւն աստուծոյ հոգւոյն, թէ յառաջադոյն տեսեր, զի ոչ գոյ նենգութիւն ՚ի լեզուի իմում, ՚ի սկզբնաւորն նախաձայնեալ սաղմոսիս մինչեւ ՚ի լրումն աւարտման բանիս: Ո՛չիրդ դասակցութեան դժնէից մարդոց համաբան այս մահու և որդիս առտակման բարբառիմ զբարեշնորհին, ոչ ահա զատելիս քո տէր ասեցի, և զմնացուածն սորին կարդի: Ո՛չիրդ մեծաւն վատահութեամբ տնտեսի վերին, անձն իմ և դու աշխար աշխարհի, զանդատ քո ոգի յառաջ ընծայեալ՝ մեծացուցանես ընդ պատկերն, թէ փորձեա զիս տէր և տես, թէ խցէն անօրէնութիւնք ՚ի ձեռս իմ, և զգ յաւերտուածն որ զհետ սորին: Ո՛չիրդ ես գոլով՝ և յայլոց աղօթեմ ապրել՝ յուսացեալցն յաստուած ձայնակցեալ, պահեա զիս տէր ՚ի ձեռաց մեզաւորի և ՚ի մարդոյ չարէ: Ո՛չիրդ համբարձայց ընդ փառաւորեալն մաղթել աստուծոյ, թէ դու ես յոյս և բաժին իմ յերկրին կենդանեաց: Ո՛չիրդ լքր հանդիսացեալ ընդ ճգնաւորին՝ զմրցանակն յաղթանակի թագաւորին մատուցանելով՝ զառաւելեալն քան զերինակ աղերս աղօթից, թէ ինձ սպասեսցեն արդարք քո մինչեւ հատուսցես ինձ:

Գ. Յարերանեալ է և այս խմաստ հոգեւոր և տերունի գործոյն նմանի, որ զիորձիչն պատկառեցոյց, յորժամ

զամենայն արհամարհիցէ և զսկզբնապատճառն եղելոց միայն ընտրիցէ ասելով, Թէ երանի ժողովրդեան, որոյ տէր աստուած է նորա: Այծ է և այս բարձրու-Թիւն ընտրի և զգուշական համարձակու-Թիւն լսեալ երանու-Թեամբ, Թէ սուրբք քո օրհնեացեն զքեզ: Ո՛չ ձալի է և այս ընտանու-Թիւն մերձաւորական հոգեւոր հաղորդու-Թեան՝ յաստուած յուսալ և՛ ի նոյն արձանաձնալ բանիւ սաղմոսին բերկրեալ, Թէ զկամս երկիւղածաց իւրոց առնէ տէր. և զկարգ բանին կատարէ, մինչ չեւ զողբալին և զգուարձալին ազդեսցէ, Թէ պահէ տէր զամենեսեան որ սիրեն զնա, և զամենայն մեղաւորս սատակէ տէր. ի գլուխս լման գրոց նուագարանաց սաղմոսին՝ իբր Թէ զօրինաւին իսկ եցոյց վերջին հատուցման արդարոց և մեղաւորաց: Օ՛ն զակզորդք են միմեանց և զինի երգեցեալքս. զի Թէ ընդունի զհեզս տէր և խոնարհ առնէ զամբարտաւանս մինչեւ յերկիր, ապա ինձ ծրքան եղկու-Թիւնք կան առաջի. իսկ եԹէ հաճի տէր ընդ ժողովրդ սուրբ, և բարձր առնէ զհեզս՝ ի փրկու-Թեան, ապա հերքեալս՝ ի բարեմասնու-Թեանց ես ոչ հաստատեցայց. իսկ եԹէ օրհնելն է աստուած՝ ի սուրբս նորա սիրելիս, ապա օտարս ես՝ ի մաքրու-Թեանց ընդ ոչս դասեցայց. իսկ եԹէ՝ ի կանխերգիցն մերձ այսր եղից յիշատակարան ինձ կշտամբու-Թեան, Թէ սիրեցէք զտէր սուրբք նորա, զի սատգու-Թիւն խնդրէ տէր՝ և կրկին հատուցանէ ամբարտաւանիցն, ապա յորո՞մ դնդի ես գտայց գերեալս՝ ի գաղտնեաց գտողին չարեաց: Ո՛րանզի զոր օրինակ աստանին տագ-նապս տերեւք անկոց եղեւին ծառոց չարժելք՝ ի հողմոյ ուժգին բախելոյ հասեալք՝ ի խոնարհ, այնպէս Ջանացաւ Ջարդել զընԹացիկ խմոյ վերարձակու-Թեան քաջաբեր ուղիչն՝ զյարմարեալս ձեռամբ անեզ միակիդ: Օ՛ր հաստատեցեալ արմատացուցեալ վերատին դարձեալ նոր պտղաւորու-Թեամբ անապականաւ, յան-դաստան կենաց ինամոյ քոյ կամացդ ամենապարգեւ Թագաւոր Ք՛րիստոս, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԿԲ.

ՎԵՐՍՏԻՒ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ՍՒՆ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ա՜ՅԼ արդ ընդէ՞ր ոչ ՚ի վերադրեցեալն սաղմոս նախաձառական և այլ մարգարէիցն մեան ինչ յօդեցից։ Քանզի զինչ վայելումն իցէ կերակրոյն, եթէ անզգաւ յեալ ցաւովք ուսիցեմ. և կամ զի՞ր շահ սաղմոսն ունիցի, եթէ ոչ ՚ի միտ առնու ցամ։ Քանզի նզովեմ զնա ինքն ՚ի նոսին և ոչ իմանամ, լուացեալ լինիմ և ոչ պայծառանամ, արեւու ծագեալ և ոչ լուսաւորիմ, մեղս ճաշակեմ և ոչ քաղցրանամ, ուեանիս ընանիմ և ոչ բժշկիմ, միշտ կանխեմ ՚ի նոյն և դատարկ երեւիմ, հանապազ ձաղիմ և ոչ երբէք խրատիմ, ոչընդիմ դարձեալ և ոչ զդաստանամ։

Բ. Արդարեւ մեղք և անօրէնութիւնք իմ չիս, և ես մաշիմ ՚ի նոսին, ըստ մարգարէին որ ՚ի դիմաց պարտաւորացն բանի և սէրուհական առակին հին անկոյն և նոր գինւոյն։ Վասն զի թէ առաւակին անօրէնք և մեղաւորք ՚ի միասին, ըստ Նահատակ Ձայնին, ապա և ինձ դժնէիս նոյն բաժին հանդերձեալ պահի։ Քանզի սաեմ զաղմոսն, թէ հատուցանէ այնոցիկ որ առաւել առնեն զամբարտաւանութիւն. և կցորդեմ ամին զընթերցուածն, թէ օր սեառն ՚ի վերայ հպարտից և ամբարտաւանից. սաեմ, թէ օտար եղեն մեղաւորք ՚ի մօրէ, և որ ինչ կարդ սորին ցուցանէ. յարեմ առամին, թէ կործանեացին անօրէնք երկրի, և ամբարիշտն բարձցի յերկրէ, և անիրաւք մերժեացին ՚ի նըմանէ։ Ողորք ինձ կարդացեալք առ ձայնն, թէ զոր օրինակ վառի եղէգն ՚ի կայծականոյ հրոյ, այնպէս այրեա-

յին մեղաւորք ի բորբոքեալ բացոյն. լացէք առ սաղմոն, թէ արկցես ի վերայ նոցա կայծակունս հրոյ. աշխարս պատմեցէք ի բանս աստուածեան վճռին մարգարէիւն աղղեցեալ, թէ ոչ կամիցիք լսել ինձ, սուր կերիցէ զձեզ. կոծեցարուք առ սաղմոն, թէ մահ հոլովեսցէ զնոսա. աղի արտասուս ողորմ հառաչմամբ ընդ հեծու-թիւնս իմ յարմարեցէք, յորժամ բարձրեալն ընդ Խորա-յելի և ինձ ասացէ բանիւ սաղմոսին, թէ ժողովուրդ իմ ոչ լուաւ ձայնի իմում. աւաղ կարդացէք թշուառա-ցելոցս, յորժամ այլ մարգարէ զնոյն դիցէ, վայ նոցա զի վաղեցին զինեւ: Խարբաւ փողեցէք ի սիրտ մղձկեալնոր աղաղակի, յորժամ տեսանողն ասասուածով ամաչեցու-ցեալ զնա կշտամբեսցէ ընդ ապարատան տանն Յակոբայ, տեսէք արհամարհոտք՝ զարմացարուք և եղծարուք:

Գ. Ալ դարձուսցես և ամիծսփեսցես զբարձրացեալ զսուր բարկութեան ահաւորիդ սպառնալեաց ի սար-սուցելոյս յերեսաց մեծիդ, և խնամովք աջոյդ բարե-բաշխութեան առ իս ժամանեալ՝ օծումն կենաց պարգե-ւատրեսցես քո աղաչողիս: Նոյ քեզ փառք յերկինս ի բարձունս, և ի մահացուաց յերկիր ի խնարհ, ի սահ-մանս բոլոր աղանց և յամենայն յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԿԴ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Բարերար և բազմագութ, մարդասէր և երկայ-նամիտ միայն Թագաւոր, ընդ հօր քոմ պատուեալ և օրհնաբանեալ սէր ամենայնի, որդի աստուծոյ կեն-դանւոյ. անպատճառդ միշտ խնամ կորստեան, որ ա-մենեւին անփորձ ես ի չարեաց, որ ոչ կամիս զմահ

մեղաւորի, որ փրկութիւն են՝ի քոյ կամայ ընծայե-
ցեալ, որ դարձուցանես զմերիկ մեղաց՝ի յօդ քաւու-
թեան, որ զհնար բարկութեան յանձրեւ փոխարկես։
Որ զյեանեալ զկինն՝ի բարեաց՝ կրկնակի գոյիւ նա-
հանջեր երկեակ բնութիւն՝ի նոյն արձանի, ոչ խակա-
պէս ընդ անպարտան, և ոչ համայն ընդ պատժաւորն։
Որ զլուծութիւն ծովուն սահանայ լեր զկարկառս
քարանց կառուցեալ յեղանակեցեր. որ զկարծրանիւթ
վէմն անապատին՝ի վիժակ վտակաց հոսեալ բղխեցեր։
Որ զՅորդանանու ջոյն սրաշարժ վայրկենութիւն՝ հը-
րաշաւոր անդրադարձութեամբ՝ի յետնորդս հեթա-
նոսաց լուացումն աւազանին՝ի թիկունս առաքեցեր։
Որ զպատուաստեալ պարիսպն Երիքովն, յօրինակ կոր-
ծանման բռնութեանն սատանայի՝ լեր զմեծութիւնն
յարդի ցնդեցեր. որ զվիճաբակաւ ջուր նորին՝ի յառակ
պղծութեան առ՝ի բարին փոխարկութեան՝ քանանա-
ցւոյն փրկութեան խորհրդական ազիւն համեմեալ ա-
նուշեցեր։ Որ զՄեսային դառնութիւն, լեր զմտաց
անհաւանութիւն, կենացն փայտիւ՝ի քեզ յարմարեալ
պիտանի արարեր։ Որ զառեալն՝ի գետոյն՝ի գծագրու-
թիւն անսահմանդ քո հրամանի անորակիդ գունակու-
թեան՝ի նոր երանդ բոստրային մածեր արիւն՝ի ցամաքի։
Որ զանկենդան ցուպ գաւազանին, ի կերպառութիւն
առ՝ի զքոյդ մերովս նկարագրիլ, այլ և յօտարազնիցն
ընտրութիւն, ի տիպն ապաթոյն կերպիւ վիշապի նմա-
նեալ ցուցեր։ Որ զերջանիկ ձեռն աջոյն Մովսէսի, ի
ցոյցս տեսութեան ապագայիցս հրաշից մարգեղու-
թեանդ քո, բարձրեալ, և քեզ ախտաւոր մարմնոյս մա-
քուր լինելոյ անփոփոխ փոխառութեամբ՝ կրկին գու-
շակեցեր։ Որ յայսքանեացս շրջագրութիւն բարեխնա-
մապէս արուեստիւ սիրոյ զանակնկալն գիւտ մեղաւորաց
կրօտականաց նշանակեցեր, օրհնեալ ամենագութ։

Բ. Որ բուսուցանես յերկրէ գալարի զմեռեալն յան-
շնչականէն, որ զանշարժն լեր ընթացող կառավարես,
որ յանարգ արգանդէ կոչես քեզ պատկերակից, որ

ասաս պատանեկաց աղօրիս ըմբռնելիս, որ յայսմ մաքառս հերս ընծայես, որ զաղաւթս սեւռութեան վարձից ի ձեան կերպարան զարմանագործես, ցուցեալ՝ թէ առ ամենայն ահման հեռաւորական յաղթող ես հզօր, որ փոխոխես զշրթունս բնաւորականս, ըստ բանին Յոբայ, ի կամ հաւատարիմ։ Որ սասանես զերկիր և զսիւնս նորին ի հիմանց, նշանակեալ հաստուածին գոյիւ՝ թէ դու միայն միաս անկորնչելի. որ հոլովես զտարերս իբրեւ զանցաւորս, և դարձեալ ի նոյն կապես իբրեւ զյարակայս, յայտ արարեալ՝ թէ և առ մեզայ բազմութիւն դիւթապէս առնել կամ թողուլ զոյնպէս զօրաւոր իցես։ Որ զարուսեկին անզգայ էութիւն իբր երասանաւ իմն գաստիարակես երեւեցուցեալ այնր իրի կերպիս, թէ զբնութեանս չար դիմեցուածն յորժամ և կամիս հանդարտ առնիցես։ Որ զանբարբառ բոլորակ լուսնին կարգես առնայիս և պատարուն, լուսաւորեալ զպատճառն առ աւետիս տեսողաց՝ թէ ի նուազութենէ քարեաց զպարտաւորս մարմին դու ածես ի լրութիւն առաքինասէրզ հարբուտութեանն։ Որ զպատկերս անխօս աստեղաց իբր ըզդասակս դոյն հօտից տրտհես և ժողովես, յայս իմն կենաց առ այս խորհրդաբերեալ, քաղցրահայեաց տեսութիւն, թէ և անազուշաւորաց լերզուաց կարողապէս բաւես ողորմել։ Որ ի մէջ մահու և կենաց շաւիղ վատահութեան ուղղես ի ծովս, վկայութիւն եդեալ հաւատոյ, թէ և յանկասկածաւորն վայրի քեզ պաշտպանիմք անգայթագղելի. որ իբր զջուր կաթոսից ի հրոյ եռացեալ, որպէս զմեզայ մրրիկ պղտորեալ՝ բանիւ կամաց քոց խաղաղացանես։ Որ հայիս յերկիր և տատանես զսա, զի անբանիւն զմտաւորս զգաստացուցանես. որ իբր զակատ մի անձուկ նաւի ի վերայ շարժուածոյ ալեաց՝ զանբաւ թանձրութիւն դեւոց նայս դղրդես, որով ծանուցեալ լինիս ամենից հաստուածոց՝ թէ իցես անեղբայրելի, որ ի բան քո զբեզ հիմնացեալ ունիս զամենայն։ Որ սերմանես զար-

սաշնչացեալ մարմինս յերկրի, և զնոյն անկորուստս ար-
հեալ կրկին կենդանացնես, որ ապականացուս աւան-
դեալ՝ անեղծս ստանաս, որ ընդ մահացու նիւթոյս՝
զնշխարդ կենաց խառնես, որ հրամանաւ ակնարկու-
թեան ի խուն վայրկենի կազմեցեր՝ պատրաստ կացու-
ցեր զանզարդուքիւն ամենից եղանակաց: Որ է զօ-
րութիւն և կարողութիւն, որ չըլանակես զժամա-
նակս ամաց հոլովման աւուրց յայլ նմանութիւն բա-
րեպատեհ տեսողութեան. որ կարդաս զանմուննչան
իբրեւ զկենդանիս. որ ազդես միայն, և նոքա ընթա-
նան, որ միայն հնչուս անկանիս անճառ արուեստիւ
հնարագիտութեան մէդ և առաւօտ: Որ յետ նախա-
կարգ յօրինուածոյն առաջնատեղծ լինելութեանն,
արարեր զփառաւորեալն մեծամեծս հրաշակերտիցն
հանդիսից, ըստ գոյն երջանկութեան կանխահիւացն
զարմացման, այլ իմն գոյացութիւն ոճնելի տեսակի
անեղծ աշխարհագործութեան և այ քան զոյն ի մար-
դանալդ քո, որոց ոչ գոյ թիւ:

Գ. Որ ահա զվնասն մեր քեզ գրեցեր, որ զարդա-
րութիւնն քո մեզ հնորհեցեր, որ ընդ քեզ կրեցեր զը-
հաշտութեանն մերում վրկանակ, որ ոչ երբէք լքա-
նիս յողորմութենէ, դարձո զամբարշտեալս ի պաշտօն
բարի երկիւղի, զլմբրեալս ի զգաստութիւն արթ-
նութեան սրտի, զանմաքուրս ի սրբութիւն պայծա-
ռութեան կերպարանի, զաղմաբիծս յանբծութիւն
հանդարտական սուրբ պատկերի, զբեկեալս յողջու-
թիւն, որ ի դիպմանէ ոչ խորտակի, զլացեալս ի խնդու-
թիւն զուարթութեան անախրելի, զյուսահատեալս
ի սէր միաւորիչ անքակտելի, զամաչեցեալս ի վստա-
հութիւն հաստատութեան անշարժելի, զխաւարեալս
ի լոյս երանութեան անմեկնելի, զմահու գերեալս ի
կեանս որ ընդ եղծմամբ ոչ անկանի: Ով փառաւորեցեալ
անուն քո, Յիսուս. խոստովանեալ յամենայնի ընդ հօր
և ընդ հոգւոյդ սրբոյ ի բարձունս երկրի և ի ստորեւս
ի բնակիչս նոցա, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԿԴ·

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՅՏՈՒԾՈՑ

Ա· Ես արդ առ ամենայն բան յամենայնի ուղիղ ես, աստուած, իրաւամբք դատիս, արդարութեամբ կշռես, ճշմարտութեամբ չափես, օրհնութեամբ հեծեւիս, բարւոք ընթանաս, առատագութիւն սիրես, յոտակութիւն կամիս, լուսաւորութիւն համբուրես, փորձիս յանդիմանես, երկայնմտութեամբ քննես· ոչ ունիս նենգութիւն և ոչ գոռոզութիւն· այլ ամենեւին հեզութիւն, հանդարտութիւն և ողորմութիւն։

Բ· Արդարացար վերին իմաստութիւն անայլայլական հօրդ հանճարոյ՝ կրկին վկայեալ անղեղջ գովեսիւս յորդեգրեցելոցն ընտրհօք, ըստ բանին սրբոյ թեան՝ որ աւետարանաւն կենաց՝ ի քէն ընկալաք· որ ոչ՝ ի կոծելն ողբացի, և ոչ՝ ի փողելն կաքաւեցի։ Ախտեր անօրինիս՝ թէ մի՛ անօրինիր, և ես՝ ի նոյն չարիս պնդեցայ· մեղաւորիս՝ թէ մի՛ ամբաւնար եղկիւր՝ ի բարձունս, և ես զընդդէմն քեզ գործեցի, և ոչ զգացի երբէք զառածեալս, թէ՝ ի ձեռինքս են եղկիւրք արքայութեան հպարտից ամբարձելոց, խոնարհեցուցանել և բարձրացուցանել, ըստ Ամբակումայ, Դաւթի և Զաքարիայ։ Օրհնութիւն ինձ կամեցար, ողորմած, և ես անիծեալ՝ մեծ տարագրութեամբ խոտորեցայ յարժանին ինձ մտան· սիրեցի բարկութիւն և ոչ բարութիւն, չօշափեցի ըստ գրոյն զխաւար, և ոչ զլոյս, կենդանի ձայնիդ քո գթած, ապաշաւմամ պատասխանեցի։ Զորդւոյն անմահ ատացեր բանիւ Ցայտեայ, և զհուրն անշէջ և զկշտամբութիւնն անվախճան և զտեղին յաւիտենից և զօրինակ նմին ատակալի, և

ես ոչ իմացայ ըստ սաղմոսողին և ոչ մտաւեցի, այլ ի մէջ
ասյլ մտաւորական կուրութեան գնացի : Յուսեր մարգ-
գարէիւն, թէ զօրհնութիւն առասցի որ զօրէնս դնէ,
և ես համառօտել զնոյն վարդապետ : Աբեան հոգեւոր
վիմի գրեալ մատամբ քո, աւր Յիսուս Քրիստոս, ըզ
Դաւիթ իւրովքն բանիւք կանչնեցեր, առեալմի ինքեան
ընտրութեամբն առ սոյն, թէ պահեցի զօրէնս քո յա-
ւիտեան ժամ, յաւիտեան. անդրադարձութեամբ բանին
միջնորդեալ զկրկին հաստատութիւնն, թէ և յաւիտեան
յաւիտենից. ընդ որս և զսորին նմանիս պարծանաց առ
իմն խրախոյս, և ոչ զկծեցայ. ձեպեցայ ի տունս Տա-
ղոյ և ոչ աստուածոյ. ի յերկուս հետս երկմտութեան
կրկին կաղացի կատեալ ի բարեաց, ըստ երգիծանելոյն
Յեղիսու : Ուրեմ զՄովսէս իւրովքն օրինակօք եկեալ
ի մեռելոյ, և զտաւս մարգարէիցն գրեալ ի յոգի, և
զմտաեանս առաքելոցն ընդ մտաց մտան յերեալ. և
զտէրդ հաստարակայ կատակաւն աւետեաց յարուցեալ
ի Թաղմանէ անթիւ ննջեցելովք, և անհատատագոյն
քան զհնգեսին եղբայրակցութիւնս այնր մեծատան,
որ է առակ իմն յարմարական, նմանեալ զդպականացն
մատանց անողորմիցն յղփացելոց, մնացի երբեք զսալ
դարբնոց անոտ՝ յամառեալ քարացեալ սրտիւ, որպէս
օրինակն է Յեզեքիայ, և ոչ ապաշխարեցի :

Գ. Այլ աղեխ վերստին առ սոյն կերպարան լքեալ
կրկին ողորմութիւն բարի, ահաւոր, մարգասէր, խը-
նամակալ, կենդանի, սուրբ, լուսաւոր և անվախճան
Թագաւոր, զօրութեամբ պանծալի խաչիդ խորհրդոյ,
ի կարծրացեալս մեղօք անբեր անդաստան երիկամանցս
յիմարութեան և անպտուղ սրտիս լքութեան զի ա-
ռեալ նպաստ օժանդակութեան ի գթութենէ կամաց
ամենակալիդ, որոտասցէ բղխեսցէ հոգիս, ընծայեալ
աչաց վշտացնեցելոցս վտակս արտասուաց արբուցանու-
ցաց լինձ ի փրկութիւն և ի մաքրութիւն, և քեզ ի
հաճութիւն ընդունելութեան, ամենապարգեւ տէրդ
բոլորից, փառաւորեալդ յաւիտենից. ամէն :

ԲԱՆ ԿԵ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԱԾՈՑ

Ա. ԵՒ արդ ես նախնիս ամբարշտաց, գլուխս մեղաւորաց, պետս անիրաւաց, առաջինս պարտաւորաց, պատկերս յանցաւորաց, առտիկեցիս ըստ վատթարութեան՝ այլ ոչ ըստ բարեբաստութեան, ահա զանճառիցն իմոց ճառեցի, զպատկառելիսն խայտառակեցի, զգաղտնիսն հրապարակեցի, զծածուկսն յայտնեցի, զթաքուցեալսն ցուցի, զամփոփեալսն տարածեցի, զդառնութեանս մաղձ ժայթքեցի, զդրծակցութիւն չարին մատնեցի, զամբարեալ թարախ վերիս քամեցի, զխոցս պարսաւաց իմոց ծանուցի, զպատրուակն կեղծեաց առի, զքող ապերախտութեանն վերացուցի, զամօթալեացն զգեստ մերկացուցի, զգաւրչելիսն յանդիմանեցի, զմրուրն մահու փսխեցի, զպալարս հոգւոյս խածուածոց քահանայապետիդ Պրիստոսի բացի։ Յանձինս վտանգ ոչ անխայեցի, մարմնոյս սիրոյ ոչ աչառեցի, զարմատն հնութեան տեսիլ արարի, բնութեանս կարեաց ոչ ողորմեցայ, զփաբանութեանն կապ խզեցի, զդղեակ պտիս քանդեցի, ընդ կամացս որոց իբր ընդ դարանակալս մահու կռուեցայ, ըզպահեստ անյաղթին արտաքս հանի, զմիթերիցն գանձ՝ մեծին գուշակեցի, զդատախազն դատաւորին հանդէպ կացուցի, զպատկառեացն զխորձ այժմէն խակ գոլ, զդաշն կործանողին կարեցի, զուխան խաբողին ցրուեցի, զկատարած մարտին յաղթութեան Ի քեզ տէր Յիսուս ապաստանեցի, զպատերազմին խուժ դրգռեցի, զդիմադրութիւն դիմեցմանն՝ բանիդ աստուածոյ յուսացայ, զկատարիչսն փաղանգ լուսեղինացն զինուցս սադրեցի։

Բ. Յիւ արդ, սահեղմիզդ ամենայն եղելոց Քրիստոս որդի քարձրեալդ սասուածոյ, զասահն դարուվեալս յայսպիսեաց քանիից և զհարուածեալս յայսքանեաց գանից մի կշտամբեսցես կրկնակի գասել ի մեծի աւուրն։ Ահա, հղօր ինքնին անձամբ բարերար Թագաւոր անմահ, առ այս կերպ պատճառանաց ինքնապարսաւս խոնարհութեան, որ ինձէն զանձն մեծաւ ձաղանօք յոգի գասեցի, լից նուագօք այսր մասենի անարգանօք ամօթոյ ղէմն սասանայի, և զերեսս կերպի պատկառեցեալս նշանաւ խաչիդ զօրացս։ Միասցի կնիքդ լուսոյ ի գեղ սեսակիս, ամրութեանդ նշան հաստատեսցի ի սիպ դիտակիս, երեսակ կենացդ փայտի ձեւասցի ի պատկեր այսիս, արուեստդ հրաշից ի ճակատիս շուք նշանակեսցի։ Մի այլայլեսցի յինէն դրոշմդ լուսապաճոյճ, մի բարձցի ի սեսանելեացս բերայ ճառնչդ օրհնութեան, մի մերժեսցի ի գլխոյս առ հաւատչեայդ վստահութեան, մի սասանեսցի ի բերանոյս ամրութեան սեմոյ՝ փառք սեսութեանդ։ Պահպանակդ երկրպագելի ի զգայարանս սրտիս միասցի, չորիցս նիւթոյ իմոյս գոյութեան քառասնեւիդ նշալ ազդեսցէ, ձեռինս կարիսանան փրկիդ իշխանութիւն օժանդակեսցէ, մասուցման հաստուածոյ մասինս՝ խորհրդարանդ համարձակութեան բարեգործեսցէ։ Ի մէնելը իմում մի հեռասցի սրբութիւնդ, մի լքցի պատիս ի պատկին պարտաւորիս, մի մերժեսցի ի յոգւոյս անդաւաճանելիդ փրկութիւն, մի չնչեսցին գինք կենդանասուիդ ի քո զբեցեալս ընչից, մի եղծցի նկարուածն արեան զօրութեան ի խորհրդական խորանէս, ընդ իս բնակեսցէ յիմում զերեզմանին. ի ծորել մարմնոյս թշուառի՝ օծութեանդ շնորհիդ առ իս պահեսցի, ի նորոգութեանն աւուր սոսկալի հանդիսեցայց փառաց սեսողիդ, ի քոյոց սրբոց ծանուցայց, քոյովքդ վաստակօք պճնեցայց, երանեալ մեծիդ յարուցեալ, աւազանին զգեսուիս պերճացայց՝ քաւեալ ողորմութեամբ։ Ամէն, բարեգութ, զվերարկուդ անապականութեան տաժանեցեալս մեզ զօր մարմնոյս, մի յարիցէ ընդ քոյս՝ բանասարկու

ին, հնացուցիչ հոգւոյս վանեսցի, խաւարաբնակացն պատիւը մի ընդ իս վերերեւեսցին: Օրհնեսցի անուամբ քո, գթած, վիհն իմ հագստեան, ողորմութեամբ քո լցցի գուբն իմ գերութեան, ընդարձակեսցի քեւ ինձ տեղին թշուառութեան, անդորր եղիցի, խնամող, ինձ բանան բարկութեան, մնուսցէ զիս առ յաճուն արդանդն մեթութեան, յուսով քո շտեմարանեսցէ զիս յարին այն անձկութեան, ձեռամբ քո պահեցայց ի խշտին տարտաղութեան, թեւօք քո ընկալայց ի տունն տագնապի, դու, գովեալ, ընդ իս ի սենեակն վտանգի: Աւազս ինձ աստանօր ի թիւս հազարաց, զի երբեմն էի վերնային և այժմ անդնդային, երբեմն ծնեալն և այժմ աշխարհեալն:

Գ. Այլ և արդ կրկին դու օրհնեալ ի բոլորից գոյից յերկինսինոց և ի տորինսինոց և ի սանդարամետականաց մեռելոց, անպարտականդ այս տարագրութեան: Ես վերպեցայ, ես օտարացայ, ես յիմարեցայ, պարտեցայ և խոտան գտայ. ես լքայ, կամեցայ և կործանեցայ. ես մոլորեցայ, ես մատնեցայ, ես մերժեցայ, ես խորթացայ, գերեցայ, և գայթագղեցայ. ես նղովեցայ, ես թշուառացայ, սրբեցայ և վատթարացայ. ես ընկղզեցայ, ես խաբեցայ, ես անօրինեցայ, ես ապականեցայ, մահացայ և ի սպառ եղծայ. չէք քո առ այս ինչ մատն չարի, որ ես միայն անփոփոխ բարի: Արդ կամք քո չիս, և խաւարն ինձ ճառագայթ. ճրագ յուսոյ քո անդ, և գիշերն վաղորդայն. մարմնոյ քո հաղորդեալ, և յամօթոյն կարծեաց ապրեալ: Իսկ ես ոչ գրեմ զանձն իմ կենդանի վատն անփախչելի վախճանին, դարձեալ զի ոչ վարկանիմ կորուսեալ վատն աներկեւեան նորոգմանն: Որ և փակեալ համարիմ ինձ զելս կենացդ վատն անքաւելեացն պարտեաց, դարձեալ՝ բացեալ ինձ ըզդրախտն՝ վատն փրկութեանն աւետեաց. քանզի ոչ այնքան վհատութեանն գոյժ տագնապի, որչափ փրկութեանդ քաջալերեալ ձեռն կարկառէ: Արդ տուր, տէր, տուր ողորմութիւն, առ ամենայն ձայն գոհանալ, օրհնեալ յաւիտեանս, ամէն:

ՒՆԱՆ Կ.Ջ.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Ա՛ՐԴ որ ոք և առցէ զայս դեղ մաղթանաց այսր մաւենի պարկեշտականի պաշատել սովաւ, եթէ՛ ի մեղաւորաց իցէ մատուցեալն, եղէց և ես իմովս բա՛նիւ կցորդեալ նմա. իսկ եթէ յարդարոց գուցէ յա՛ռաջեալն, գասցց և ես սովիմբք ընդ նմին ողորմեալ նովաւ: Այլ թէ երջանկասցն այնպիսին ինքեամբ՝ ինձ միայնոց գրեալ զեղկութիւնն, և ես ինձէն վկայեմ այսմիկ: Նոյց յիշեսցէ նա զՍողոմոն և զբանս նորա գհոգեշահն, թէ ո՞վ ոք վատահասցի սիրտ սուրբ ունել, և կամ՝ ո՞վ պարծեսցի մաքուր լինել՛ ի մեղաց, և ոչ յարեաւ մարդ երկրածին պատեալ՛ ի պատասխանեաց, և ոչ ընտիր՝ ինքնարշաւ վազուքն, և ոչ՝ թէ և՛ ի թռիչս ամբարձման թեւոց բերիցի. սա որ զդաշ լինիցի կրկին երկուցեալ՛ ի վիմին իսկ հատատաւթեան՝ ուսեալ՛ ի Պօղոսէ, գուցէ անկեալ՛ ի յերկիր՝ սահմանողն այսմ կանոնի իրաւադատի կշռեալ նըմանեսցի: Այլ առցէ զայս կշռամբուԹիւն մաքուրն՝ նիւԹ պակաց, առ՛ ի չինանել անընտրողաբար յանձնառնհան բարձրուԹենէ. և պատժապարան՝ առՒԹ պատուԹեան. որով ամբարձեալ՛ ի կործանմանէ հոգեւորական մահուն՝ ապրեսցի յաւսով: Իսկ ինձ եզկցի պատգամն այս բանի արձան փորագրեալ ամենեւին անեղծանելի, որ փոխանակ իմոյ եղկելոյս անձին մահացուի՝ անդադար հնչմամբ հեծութեան լալոյ առանց լռելոյ միշտ աղաղակէ, լսցի և ոսկերացս քակտեցելոց՛ ի հողապատեան շերմիմ վերարկուէն՝ անմե-

ուսնչ ձայնիւ զայս խոստովանեալ. հասցէ և մարմնոյս ի հող լուծելոյ՝ բարբառով իմն անապդելեաւ ծածկաւեսիդ զսոյն պաղատեալ։

Բ. Տէր գթութեանց, աղբիւր ողորմութեանց, պարգեւք բարութեանց, որդի բարձրելոյ տէր Յիսուս Քրիստոս, ողորմեա, խնայեա, մարդասիրեա, նայեա ի վտանգս, ակնարկեա ի բեկուածիւնս, խոնարհեաց ի թշուառութիւնս, տես ի տարակոյս անձեռնհաս տագնապիս, հասիր հաղորդել կորոստակոս կարեաց։ Շօշափեա քժշկապէս զամենաթշուառ ախտաւորութիւնս, ունկն մատուսցես քաղցրութեամբ ողբմապին հեծութեանս, լուր ի խորոյն անդնդոց մահուն գերեզմանի անմունչելի հառաչմանս, մտցէ յականջս ամենալուր լսելեացդ ձայն պաղատանաց վտանեալ անդամոյս։ Իւ վասն զի գրաւական կենդանութեանս անապական է, անփոփոխ լեզի և սիրոյդ քո գթութիւն, կցորդ լեր հեղութեամբ տաժանաւորս սակարութեան։ Առեալ պատկերիս մի ոմն պահեսցես, ընդ անշուշտ կերպարանիս մի ի դասս քննութեան մտցես, մահու սանձեցելոյս մի հարուածս յաւելցես, ընդ բեկեալ խեցեղէն անօթոյս մի ուժգնութեամբ մարախցես, վճռաւ կշռմամբելոյս մի բարկութիւն կրկնեսցես, կարծանեալ չինուածոյս մի պատուհաս մատուսցես, շանս սպանելոյ մի քարինս արձակեսցես, լուսոյս ջահջահելոյ մի սաստիկս պոռտասցես, հողոյս անպատուելոյ մի իբր ամբարհաւաճէն ուժգնիս մունչեսցես։ Ոմնիսիս մերժելի մի ի դասս ընտրութեան կոչեսցես, զխոշիս ցնդելի մի իբր զքո դիմաս մարս գոյացես, զսիզմն սաղտկալի մի իբր զոսկս վարս կանիցիս, զգարշութիւնս անգոանելի մի իբր զբունաս մարտիկ վանեսցես, զկեթս ի բաց ընկենելի մի նիւթ գեհենին պահեսցես, զայսքանեաց բազմապատիկ բանից կշռամբեալս մի վերստին յանդիմանեսցես։

Գ. Այս ամենաթշուառ և խաւարարգել հիմունն են ահա սրտաբեկ և յոչնաթախիծ արգահատութիւնք.

հաստատեսցէ օրհնեալդ քո բան անփոփոխական լինել, ըստ սրտի սրտի հաստելոյս . քանզի և այժմ մինչ կենդանի եմ օրս խօսիմ, մեռեալ եմ անհասիդ . որպէս ի կորուստ մահուն սատակման՝ ամենազօրիդ հրամանի անեղծ եմ հաւատովքս : Արդ աղաչեմ զքեզ, տէր Յիսուս Քրիստոս , հայեցայ յիս ողորմութեամբ , և մի թողացուսցես լինել անակից ինձ Ներքարայ . և զմահաղեկցդ տապալնին ազգումն անկենդանաւորն Թնդման Թշուառն Թաղման՝ աղաղակ ձայնի հառաչման լալեայ քեզ հաշտեցուցչայ՝ յարդեսցես լսել, միայն բարեգործ, հոգեաէր , հոգւոց մարդասէր . և հոգիդ քո բարի բնակեսցէ ընդ իս՝ լոյս առնելով ինձ ի խաւարին : Ընտացեն ընդ իս կենարար քո կրից պաշտեցեալ մաստնիք . զի իբր զանդ գանձու զիս պահեալ ի քեզ, կենայց նորոգման ընծայեցուսցեն . օձառք անվաանելի զինուց ինձ պատկանեացին , ընդ իս յարակայեալ քարինք պարսից հոգեւոր հնարից՝ զչարին հալածել զգուեղ : Ապատն որ առ իս քեւ , տէր , վանեսցի . զի եթէ յարիցէ ի վերայ իմ պատերազմել, տեսեալ զքաղցքն ունայն ի զօրացն և զաղղոզականացն գործի ապաճայն , զքեզ տէր ունիմ մշանջենաւոր և անխորհելի պահապան :

Դ . Օ՛ի եթէ այժմ իսկ կանխաւ արագեալ յառաջ քան զօրն կատարածի, և անշուխիդ արդելան ինձ պատրաստեսցէ , առաքեմ զաղօթսն տէրունականս նմին գան մահու . եթէ ի վայր զիս հնարի կործանել, զծըղբադրութիւն արարչին . եթէ ի մոխիր երկրի թաւալել ձեռն բերիցէ , երեսացն աստուծոյ ի նոյն մածուցումն զնա հերքեսցէ . եթէ վաստակս ինձ ցաւոց նիւթեսցէ , քրտունքն յուրթի արեամբն զանգեալ փրկչին աշխարհի զնա խուեսցէ . եթէ յընթացից բարեաց զշունչս իմ պատանդեսցէ , կապանք ամենատեղծին զիս արձակեսցէ . եթէ յուրացութիւն պարգեւաց լուսոյն բռնադատեսցէ , հայհոյութեանն համբերութիւն յաստուածամարտից՝ զնոսին ընդ նոյն կարկեսցէ . եթէ հարուածս նետից գազանաձիգ զինուց ինձ

արձակեսցէ, կարի հնարիւ աղէղան փառաց հօրն կա-
պարձից նմին պատահեսցէ։ Եթէ քոլով լուսոյ խա-
ւարականի մնանել ընդ աչս անամօթեսցին, կռփումն
գլխոյն ձորձով պատեցեալ լմանն ամենից ինա սան-
ջեսցէ. եթէ մոլեսցի զվատահուիւն ձեռինս կապել,
եղէգն մատուցեալ ի յայլ գոյացուցչին ինա չարչա-
րեալ ըմբերանեսցէ. եթէ ձաղանօք այպանման գլխ
կատակեսցէ, տանելն ծաղու ամենաղօրին ինա հեգ-
նեսցէ։ Եթէ բժժանօք ինչ յուռթից կախարդել խա-
բանկեսցէ, ապտակն գլխոյ հզօրին աստուծոյ ինա
աստակապէս ամաչեցուսցէ. եթէ ի մուտս գիշերային
մթուիւեան խաւարաւ խաբէուիւեան լինեալ մարտիկ
ցէ, ի ճառագայթից լուսոյ երեւման քո, տէր, խայ-
տառակեսցի. եթէ ի միջօրէական աստղոյ փորձու-
թեանցն արեգակնակէզ վառանիչ խորշակին գլխ ի յար-
մատոյ խախտել կարծիցէ, ի զօրուիւենէ նշանիգ լու-
սոյ խլեալ գօսասցի։ Եթէ ի փչմանն հնորհէ ունայն
գլխ առնել հնարաւորեսցի, թուքն զոր ընկալաւ տէրն
քրովբէից ընդ մեզաւորիս ինա պատկառեցուսցէ։
Եթէ ժանիք խածողք ինձ ցուցանիցէ, լուսիւն
երկնաւորին բերանոց գինա պատանձեցուսցէ. եթէ
խածմունս աղուականս հոգւոյս ազդեսցէ, բեւեռացն
հարմունք հաստողին բնաւից գինա կսկծեցուսցէ։ Եթէ
յընթացս անիրաւութեանց խորհրդոց գլխ մոլորեցուս-
ցէ, սեւեռաք ոսկից անհատանելոյն գինա կապեսցէ. ե-
թէ հրապոյրս ինձ դժնեայս արբուսցէ, քաջահան ընդ
լեզուն խառնեալ ի յարբումն քարերարին՝ գինա դառ-
նացուսցէ։ Եթէ առաջին ճաշակմամբ փայտին գլխ
գոյգէ, սոսկալի խորհրդով խաչին ըմբռնեալ ի սպառ
պարտաւորեսցի. եթէ ընդվզել ընդդէմ հնազանդու-
թեան տեառն հրամանի զանձն իմ ուսուսցէ, բերումն
պարանոցի անսահմանելոյն գինա կործանեսցէ. եթէ ի
մահ սատակման գլխ վանեալ վերաւորեսցէ, սուրաք
սէգ գինու մսելոյն ի կող սուղձչին Ադամայ գինա հեր-
ձեսցէ. եթէ երկամբք վշտաց դժոխականաց գլխ պար-

փակեսցէ, պատանացն կոտաւ էից ունողին զնա ըմբռնեսցէ. եթէ յատակս մահու հայել զնա խարդախեսցէ, ընդակել կենդանւոյն ի վէմն մահու զնա մեռուսցէ, եւ թէ խնդասցէ ընդ մարդկօրէնս իմ գայթագղութիւն, կրկին կորացի կարկամեալ կամաւ, յորժամ անմահն աստուած յարուցեալ փառօք ընդ իւր նորոգեաց զնաւ մահացեալս: Եթէ ընդ լուծանել փոքր կապանաց հաղարամէից բերկրեսցի, դողացի կրկնեալ վերատին իւ կայն ընդ վերջին չղթայս անզերծ տագնապին ըմբռնման սատակագունի յանվախճան տանջանարանին: Եթէ ընդ առաջին հարուածն դժուարեսցի, գոյժ կորատեան յետնում սատակմանն անչէջ գեհենին, որ պատրաստեալն է նորա և նորին հրեշտակաց, նմա պատմեսցի, որ յաւուրն մեծի մեծին առեալ:

Ե. Իսկ ինձ ապաւինելոյս ի քեզ տէր Յիսուս, միայն թագաւոր ինքնակալ զօրեղ, արարիչ երկնի և երկրի և ամենայն զարդուն որ ի նմա, որ գալստեանդ քոյ ակն ունիմ և ողորմութեան փրկչիդ սպասեալ յուսամ. ի յոտս քո անկանիմ, և զգարշապարիդ հետս համբուրեմ, զպարտութիւնս խոստովանիմ և զմեղանս հրապարակեմ, կշտամբանաց քարամբք կոծիմ և հառաչանօք սրբոց ախս տապանամ, ի խէթ խղճիս խոցոտիմ և քոյով ընչոյս ճենճերիմ, աղի ցօղով արտասուացս պրիմ և երիկամանցս աղդմամբ կիզանիմ, յուսակտուր օդով ցամաքիմ և դառնաչունչ հոգմով շնչանիմ, թախանձանաց բանիս երերիմ և կոպկոպագին հեծութեամբ դողամ, տաժանելի կրիւք տուայտիմ և տագնապաւ հոգւոյս ապականիմ, ի կոծ մրրկայ ծփիմ և ի բախմանէ ալեաց սանանիմ, ի լուսթենէ համբաւոյն սարսեմ և յիշատակաւ ահին կորնչիմ, կերպարանօք առեղին հալիմ և սպառնալեօք մեծիդ մեռանիմ, լուր բազմագութ, քաւիչ, մարդասէր և երկայնամիտ, քաղցրութիւն անճառ, օր բարի և տիւ տենչալի: Ո՞անդի կարող ես յամենայնի և առ ելս շնչոյս լսոյ՝ փրկութեան մեծի. և քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ԿԱ.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՅՏՈՒԾՈՑ

Ա. ԲԱՑՑ քանզի յայժ արդար է բան իրաւանցն Քրիստոսի աստուածոյ առ իս քան առ սկզբնահայրն չաբեաց սատանայ. զի վասն նորա յայն սակս յայտնեցաւ, զի լուծցէ զգործս նորին. և վասն իմ՝ զի զնոյնացեալ պատկերս նորոգեսցէ. առեալ զկերպարանիս բոլորը էութիւնն կերպին խակութեան մեծին աստուծոյ՝ միացեալ ինքեան անշուշտ խառնութեամբ։ Նորա ոչ են չնորհեալ ի բազմացն, և ինձ զբոլանդակն ե հեզ առատութեամբ. վասն նորա ոչ երբեք չարչարեալ, և վասն իմ հանապազ պատարագի. նա անհագդրդ է կենացն, և ես միշտ վայելեմ ի փրկութեանն. նա վանեալ է խաչիւն, և ես զօրացեալ նշանաւն. նա հեղբեալ ի լուսոյն, և ես միացեալ ընդ փառացն. նորա ոչ խոստացաւ հանգիստ և յերկրի, և ինձ զերկինս սեպհականեաց. զնորայն կարեաց զառհասաւէայ, և զիմն առանց խղելոյ յարակայեաց. զնա յերամակս խոզիցն արգել, և յիս ինքն զօրացաւ. զնա կարճաց օրինակեաց, և զիս ճառագայթ նշանակեաց. զնա սողնոց նմանեցոյց, և զիս իւրովին անեւամբ կնքեաց։

Բ. Իսկ ես զերախտիսն աստուածոյ լքի զայսքանեաց բարեաց արարողի, և չարին զկնի միտեցայ՝ հայել ընդ նմին յատակս դժոխոց. ահա անարժանս բարեաց, անձիրս երախտեաց, անընդունակս սիրոյ, առատաբար մեղաց ձգեալս, յերիկամունս խորոց խոցեալս, քանզեալ ծառս արմատեհուս, զինիս յեղաշրջեալ, ցոր-

եանս հեղեղեալ, մուրհակս ջրեալ, վճիռս պատառոտեալ, կնիքս այլակերպեալ, նմանութիւնս փոխեալ, արկանելոքս կիզեալ, ըմպանակս կորուսեալ, նաւս ընկղմեալ, մարգարիտս մանրեալ, ակնս պատուական ծուղեալ, տունկս գոռացեալ, նեցուկս խորտակեալ, փայտս ամենեւին փտեալ. մանրագոյս աղաւաղեալ, յարկս տապալեալ, խորանս խարխափեալ, բոյսս արմատաքի խլեալ, ձկթս հեղեալ ի գետինս աղբեւսաց, կամինս հոսեալ ի կոյտս մոխրոց, այրս մահու ի յաբեւց դնդից: Քանզի միշտ խրատեալ ընդ Ներսես զէմի առակաւ Բաբելոնի ի մարգարէիցն ձայնիցս անձըն իմ ողբալն, և ոչ ինչ խրատեցեալ. որ ասէին անգոնեալ եմ և անդէն խայտառակեալ, աստ դարուիեալ և անդ կշտամբեալ, աստ ձաղեալ և անդ նախատեալ, աստ թշնամանեալ և անդ յանդիմանեալ, աստուստ ապշեալ և անդանօր լքեալ: Աստ հեծումն և անդ հառաչանք, աստ կարծիս և անդ կատարած, աստ խելթ և անդ հատուցումն, աստ արկածք և անդ հանդիպք դառնասոանի, ուր ոչ է բան իրաւանց և ոչ ձայն պաղատանաց, ոչ թիւք աւուրց և ոչ հիք ժամանակաց, ոչ ուղք յուսոյ և ոչ դրունք ողորմութեանց, ոչ աչ պաշտպանութեան և ոչ ձեռն այցելութեան:

Գ. Այլ դու ապաւինութիւն, դու հնչն փրկութիւն, դու այցելութիւն, դու և քաւութիւն, դու երանութիւն, քեզ բժշկութիւն, քո ողորմութիւն, միայն հզօր, կենդանի, անճառ, տէր Յիսուս Քրիստոս բարերար աստուած, օրհնեալ, օրհնեալ և դարձեալ օրհնեալ, ընդ հոգւոյդ քո սրբոյ յաւէտ բարձրացեալ ի վառս հայրենի խակութեան մեծիդ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ՐԱՆ ԿԲ.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Յի սրդ ի յիշատակ ահարկուԹեան վերադրեցելոցդ՝ ոչ յատուածոսա են սպառնալիք ինձ ժամանեցեալք, զի՞րդ դադարեցայց ի նորոգ ողբերս դուԹեանց, և կամ ո՞րպէս զցամաքումն առցէ հեղեղք արտասուացս։ Օ՛ի եԹէ զչորեքվաթակեան առաջս դեռոցդ յորդահոսան ծաւալմանցդ՝ որ վհդեմ և վերկիր առ հատարակ ուռոգանեն՝ լիապէս բառականուԹեամբ բաշխեալ ամենայնի, և զբղխումն եղից խրեանց առ աչս իմ եղեալ, զանձինս մեղաց սաստկուԹեան զբոց զոլացուցանել ոչ բաւականացին։ Յր կամ մարդաբէին սրբոց ըղձականուԹիւն կրկին ինձ լցցի գլուխս ջուրց բաղմուԹիւն, և Հրագարան տեսուԹեանց կերպիս՝ աղբերց կայլակմունք, զբեկման ոգւոցս չափել զիտանդ ոչ ձեռնարկեացեն. և ոչ եղերականք ջայլից համօրէն բանահիւսից կանանց լալականաց ի սիրտ և յոգի վերաւորելոյ՝ զաղէտ վտանգիս ի յերդ արկանել և կամ ի նուագս ձայնից բերել։

Բ. Իմ է օրն լինելուԹեան նզովեալ, և ոչ Յոբայ կամ Յրեմիայ. քանզի տօնելի է օրն նոցա, զորոյ մի ի նոցանէ ոչ արժէ աշխարհ, և ոչ տարապրելի. ապա ուրեմն զիս նկատեալ եղեալ զոչ արժանիս լուսոյ և կամ միոյ մանուածոյ բարւոյ, զհանդիպումն աւուրն անիծին՝ յորում ես գոյացայ կարաւեան որդիս և մահու դրացիս, մշակս մեղաց և արբանեակս անօրէնուԹեանց։ Որ ոչ կայի յաւխտին կենաց՝ զոր դաս սահմանեցեր, աստուած բարերար. ոչ գնացի ի քո պա-

տուրանն կենդանական անմահացուցիչ, ոչ վատաս
կեցի ի հունձս արմտեացն, որով ի մուտս ձեռանն
աւուրցն խռովութեան կերակրել պատրաստեցայց.
ոչ կառուցի ամրութիւն որմոց և ոչ ձեղուն յարկաց
ձգեցի, որով ի շնչմանէ մրրկաց օդոց պահեցայց. ոչ
համբարեցի նշխարս պաշարաց ի յուղին անեղական,
որով զտապնաց սովոյն իմ բժշկեցից. ոչ հանդերձա
ւորեցի քեզ աղերս աղօթիկ, որով առաջի քո կալ հա
մարձակեցայց. ոչ կազմեցի Թոշակ փրկութեան վա
րուց մաքրութեան, որ զնորոգութիւն ինձ երաշխա
ւորէ. ոչ եւս զընտրութեան հաշիւն ի կենցաղոյս
ձանապարհի՝ իմոյ մատնչին, զի ի գառաւորին ձեռա
նէ առնէն իսկ փրծայց. ոչ լուսեամբ ձեռին օրհ
նութեան մատեայ յանդիման, որով օրէնադրին մատ
նակից գոյացայ սրբեցեալ: Ոչ դիմայ եւս զգուշու
թիւն և ոչ թիկանց պատապարութիւն, ոչ աջոյս
իմ զինուորութիւն և ոչ ահեկիս պարածածկութիւն,
որով ի պատերազմիս վտանգէ զերծայց. զերիվարս ոչ
պգեցուցի զրահիւք, և ոչ զմարտիկս սպառազինու
թեամբ, որով զճակատն յարդարեցից: Օ կանուխն ոչ
կապտեցի պատուղ, և անագանին ոչ ժամանեցի, և
ահա տարակուսիմ ունայն ի բարեաց. մաքրութեան
ծաղիկ ոչ ունիմ և ոչ իւղ ողորմութեան, և դիշերոյն
մայր՝ անընդոյ. ի նիրհումն մահու ննջեալ եմ, և
տագնապ կոչողին փողոյ սոսկէ. զղարդ հարսանեացն
կրկին մերկացայ, և զձեթ վարուցն վերատին լքի, և
դուռն մտնին հարսանեացն աւասիկ փակի:

Գ. Նա արդ զնոքդ առնոյ միսիթարութիւն այսքա
նեաց վշտաց, և կամ ընդ որքանեաց տարակուսանաց
խաւարի՝ լուսաւորութիւն յուսոյ կենաց խառնեցից,
և կամ որ արդեօք զգարշապարս ոտին կառուցից, և
կամ յոր վտահութիւն զաչս իմ յառեցից, և զինչ
անդորրութիւն ծփանացս նկատեցից, և կամ յոր ըղ
ձական դիւրութիւն ձեռն համբարձից: Օ՛ եթէ ի
ձեղուն բարձրութեան երկնի, անտի անձրեւեաց

հուրն Սոդոմայ, որպէս ասացեալ է. իսկ եթէ յա-
տակ խորութեան երկրի, սա եբաց պիտորդն ըմբռնո-
զական և եկուսլ զԱպաստան բանակօքն Աբիմելէխ: Նէթէ
յանդգնեցայց փախչել յուշադէն, գուցէ կալցի զնա
վիշապն ահագին: Նէթէ ընդ գազանս ինչ թափառե-
ցայց, արագունք են խնդրել զվնաս ատացողին առա-
ւել առ իս քան երբեմն զՆղնիեէին առ մատաղ մանկ
կուսնս բեթեղացիս քրմորդիս: Նէթէ յամենատարած
օդոյս պարզութիւն, այն եղեւ եգիպտացւոցն խաւար
ջջամփելի: Նէթէ 'ի թռչնոցս բարձանց, նոքա են կո-
չեցեալք 'ի սպանդն զոհին բոստոյ դիականցն: Նէթէ
'ի տարան խիզախեցիկ, վասնիմ 'ի պիծակացն, և զի
պիտոյ են ինձ առիւծունք: Նէթէ յարջանն պատառու-
ցող սպրեցայց, մժիխքն արեան ծարաւիք ինձ պատա-
հեսցին: Նէթէ յանհոգս ուրեք նստիցիմ, մժղուկքն
անարդապղծիք՝ իբր ցնցուղս հոյլ եռացման զինեւ մա-
զեսցին: Նէթէ յեզջերք միեղջերուց փակնուցում զեր-
ծեալ, նկուն ճիրանք աղիագկաց մնոցն մորմոքոզաց՝
զնս կեղեքեսցեն: Նէթէ 'ի սենեակս շահմարանաց
խորհիլ զօզեալ աւիծմիլիմ, տաղտկատեսակ գարշու-
թիւն գազանացն՝ մեղաց օրինակքն զնս զաղջացուսցեն:
Նէթէ 'ի վայրս ինչ անգաստանաց կացեալ զետեղե-
ցայց, շարք շանճանճոցն տարմից զինեւ պատեսցեն:
Թողում ասել զնատնիճն և զջրեանին զզօրն զօրաւոր
ընդ Թունաւորն Թրթուր և ընդ անկենդանական
երեւելին, հանդերձ ջրակարծ կարկտիւն և ապականա-
գործ եղեմամբն. որ առ աչաց տեսիլ ապաքինք և
նուաստագոյնք, բայց 'ի յահնարկելն ատտուծոյ յաւէտ
գոռոզաբար ուժգնութեամբ հարին հանին վանեցին
զնպարան ամբարհաւանճութիւն Փառաւօնի բռնու-
թեանն բուռն գաւազանին՝ յաղթող վիճակաւ. որ են
կեղծարանք Թաքուցելոցն կրից լկոզաց անճնականացն
աներեւութից եգիպտացւոցն անօրէնութեանց՝ յոգի
տանջողաց՝ գազանի վնասողաց:

Դ. Ա՛յլ գու ամենազօր արարիչ բնաւից տէրդ բոլո-

ըհց, ՚ի յատելիան հանդիսացիր հեղբեղ զնոսա. և ինձ ողորմեա կրկին զթութեամբ ձեռն մատուցեալ փըրկութեան տարակուսեցեալ կոշտձեալ վարանեալ ՚ի մահ պարտեղյս: Օ,ի դու միայն ճանաչիս աստուած փառաւորեալ միշտ ընդ հօր հոգւովդ սրբով յաւիտեան յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ԿԹ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. ԼԻ արդ, վասն զի ՚ի ձեռն մեծից և ամենաշնար արուեստաւորիդ իմս եղանուքեան տեառն և աստուծոյ՝ եղբ ՚ի քրայս ընտրութեան փութայ քոյ սիրոյ հանապազ եռամ և ոչ երբէք պարպիմ, միշտ խառնիմ զուգիլ և ոչ ևս միանամ, ահա զուր արծաթաղործդ երկինաւոր իմ ճարտարապետ, ՚ի սեռոխս վատոտակեալ առ իս աշխատիս, ըստ մարգարէին յայտնի առակի, և չարութիւնս իմ ոչ հալեցաւ. զոր ինձէն մոլեալ չարաչար՝ եղբ զնսեղադար դիւաբախ իմն ողորմելի յանդգնեալ անկարգս խօսիմ՝ զնմն զպարտախաղ աշխուժանել, քան հաշտութեան հնարս ինձ այսու կազմել: Լիւ զի մի՛ անընդել դիպուած և անկիրթ պատահումն և անհատասար հանդիսումն՝ պատրաստութիւնք հանդերձելոց տանջանաբանացն ինձ երեւեցոյն, ամենևին անմոռաց պահեաց աստսուն ՚ի յիմ մտի մարմնի նշխար մնայուածոց նախնւոյն անիծեցն, զոր ՚ի փոքուէ տարրէ անարդէ զնճոն է ուսանել:

Բ. Քանզի խաղալն ինքնաբերական գիւտ որպայնի՝ բոռոնք ձագուկք չարժողականք և ազգի ազգիք, որ դունք ալեայց գաղտնակուռք, խաղաւարտք հրակայ

ծակք և բիծք բոցակիծք և անիծք անկերպաւորք և ե-
բամակք ոմանք քրտնածխնք զաղտաթորմիք կակծեցու-
ցիչք և մարմնաջղականք: Ապատակք այլոց վայրե-
նեաց, ըստ նմանութեան դիւաց դիւերամարտից և
մեկնաղէն բարբարոս գնդից խաւարասիրաց, և գա-
ղանութեամբ քանասար գայլոց սրաբացւոց, կորակոր
գնացիւքն, արջնաթոյր գունոյն, կրկնապարոյր կա-
ճաղ կոցաւն, որ զբրէն ունի խայթոցայ կարճի, իբր
դժնիկ փշովք խոցոտեալ ծծեն ձգեն զարեանն խոնա-
նումթիւն, և յանկողնին մահճայ հանգստեանն վաս-
տակ կրից ցուցանեն: Այս կարկառեալ ուրուք ձեռն՝
հաստուցանել զհաստուցումն նոցա նոցին, վազվազակի
գգան զվնաս վտանգին՝ զոր ազգեն մարդոյն. և անդէն
խակոյն լերկամարմին փոքր հասակաւն՝ իբր թեւօք իմն
թռիչս արձակեն, և ըստ մարախի ձեւոյ ոստոստեալ
այսր անդր տարաբերին. և ըստ բազմապատիկ նեղ-
գումթեան բարոյից գաւոզ աղաւեսուց՝ խորամանկեալ
խուսափեն ի պատուաճօս բազում ելից, զի յերկիւղէ
մահուն ապրեսցին: Այս այնքան չքոտի և անքատ ան-
ձամբքն ոչ միայն զանմիկան և զխառնիճաղանճս, այլ
և զթագաւորս հզօրս և ահագինս փախուցանեն հա-
նեն տարագրեն ի գտիկան յարկի ապարանից բարձ-
րումթեան, և կամ ի բացի բնակեցուցանեն. քաջք
արանց արեաց, որք խշմեցին ամբոխից և սիրեցին ժո-
ղովրդոց և առին զբաղաքս ազգաց, զպարտումթիւն
իւրեանց զօրաւոր ձեռինն ինքեանք վկայեն, թէ քան-
զի ոչ կարացաք ի դիմի հարկանել վեհից բռնու-
թեան, վասն այնորիկ խոյս տուեալ հասաք յայս տեղի:

Գ. Այս զինչ է ինձ զփոքունց և զանկածից ծաղրա-
կանաց ոմանց գայումթեանց ի կիր արկանել, որք զօ-
րեղ և անհեղեղելի ջաւագովք են աստուածումթեանն՝
յիշատակել ինձ զհանդերձեալն, որք ի մարմնոյս ա-
նօրինելոց ընծային պատուղք գառնութեան: Ընդ որս
և եկամուտ սատակչականացն ախոյեց դիւաք, և կեր-
ջայն կոյսք անողոքելիք. յորոց չէ զերծանել, քան

թէ հարկաւ մարմնոյն վտանգի զապաւժիցն սաքօք ի մատաստիրել. և ոչ տեղի է գտանել ապաստանի՝ փախստեամբ անկանել առ նոսա. այլ առանց կամաց քումդ ամենարկուածեան և մարդկային կարգք և հնարք վերպեցան։ Իսկ դու, բարեբար, զամենայն ունիս բաւականապէս զկենացն հնար՝ եթէ կամեսցիս փրկել, նորոգել, քաւել, բժշկել և կենդանարծել. և քեզ փառք յամենայնի յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ Հ.

ՎԵՐՍՏԻՒՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՅՏՈՒԾՈՑ

Ա. Եւ քանզի համբարձեալ զընթացս բանիս՝ ի փառունդ սուրբ երկրայնոց չհամարելոց ընդ գոյս եղելոյ՝ ի մեծագունիցն սեռակս, սասցիս զսօնելի հանդէս իրաւանց ահաւորին անաչառութեան։ Որ զի թէ մերձաւորագոյնք էիցեն սատուծոյ երբեք զնախածա նօթի հայրապետութենան, և կամ մաքրագոյնք որպէս մարդարէիցն, կամ անբծագոյնք երբեք զառաքեալն, կամ ընտրելագոյնք որպէս մարտիրոսացն, եթէ ոչ դու մարդասիրեացդ անսուաղ բարիդ և անփոփոխ խնամ մակալութենդ և անպակաս ողորմութենդ, ընդունայն է ինձ փրկութենն առ ի նոցանէ։

Բ. Օ՛ի եթէ առ նոյն ինքն Աբրահամ ձայն արձակիցեմ, երբ ողորմագին առակ ընչեղին ինձ վարդապետ, ի տապոյ անահ պատակեալ, կաթի միոյ ջրոյ ոչ բաւականանայ. քանզի և նա փակեալ է ընդ կարեօք հասարակաց անհնարութեան։ Իսկ եթէ առ Մովսէս և նա զգածեալ է ակարութեամբ, որ ոչ զօրեաց առնն փրկութեան, որ զՀայթայթմանաց կրկուան ի պահպա

նուէիեանն աւուր ժողովէր. իսկ եթէ առ Ահարն, և նա ինքնին իսկ կարօտացաւ մաղթողի. իսկ եթէ առ Դաւիթ, ի մէջ բարեացն առաւելութեան ըստգըտեալ է և նա. իսկ եթէ առ Նոյ և Յոբ և Դանիէլ, զայս Աղեկիէլ մարգարէ մեկնեաց յանուանէ իսկ չի շատակեալ զնոսա, և զայն ընդ նոսին իբր ի դիմաց աստուածոյ աղեալ, կենդանի եմ ես ասէ տէր, թէ աչ ապրեցուսցեն զուսաերս և զդստերս իւրեանց ի բարկութենէն որ հասանիցէ, բայց եթէ ինքեանք միայն ապրեսցին. իսկ եթէ առ Պետրոս վէմն հաւատոյ, ի քուէդ խնամոյ խուն մի խիթացեալ և նա ընդ կըրիւք իմն դբաւեցաւ: Թողում ասել զազգացն գուսմարութիւն խոնարհեալ առ կարիս կարիս, թէ և յաւէտ երջանիկք էին. ընդ որս և Յովաստու ոմն մարդապետի ի մէջ աստուածառաքն սպասաւորութեան մարդկօրէնն գայթագղութիւն՝ ինայ յոլովից անհարդմանելի, թէ և ի դէմս իմն մեկնութեան ձեւակերպեսցի:

Գ. Ուր քանզի չափեալ սահմանեցաւ զօրութիւն փրկութեան մարդկան, և ցուցան նոքա ողորմեալք բարերարիդ և զօրացեալք ամենակալիդ, կոչեցեալք պաշտպանողիդ և քաւեցեալք հնարաւորիդ, շնորհեալք ազատեցուցչիդ և բժշկեալք անախտականիդ, կենդանարծեալք անապականիդ և լուսաւորեալք նորոգողիդ, այսուհետեւ գիտացեալ զսակն ողբանութեանց հոգածին բնութեանս, որք միսիթարեն օրինակաւն նմանաբար հարազատապէս վատահութեան յուսահատելոց, ահա առ քեզ գիմեցից՝ որպէս աստուածոյ կենդանւոյ Քրիստոս օրհնեալ յամենայնի: Անհաւանդ զառակն աղքատիկ այսմ մաղթանաց աստանօր յիշեալ, զվերապրելոցդ բան վերսին արդարացուցանէ. բարի է, ըստ խմաստնոյ ուսմանն երջանկի, անկանել ի ձեռս տեառն, և մի ի ձեռս մարդկան. զի որպէս մեծութիւն նորա, և ողորմութիւն նորին: Ուր այս բան թէ և վերութիւն իմն գծագրէր, որ վերիբմանեան հարուածն

աստուածեան առաջի եդեալ՝ ընտրեաց ինքնին կամաւորաբար զդատակնիք մահուն սատակման՝ իբր զկենդանի Քրիստոսի հաւատոյն յաճախութեամբ, քան զերկուսնա եւս այլ փոքրկուճան՝ որք տանջեցին և ոչ ողորմին. սակայն և իմն օրինակութիւն բանիս պատկերի ճարակեցելոյ հնարս կենաց կորուսեալս անձին՝ ոչ է այլայլեալ յարմարութենէ. զի ոչ եթէ զփրկեալսն նուաստացուցանեմ՝ ի մատենի այսր ողբերգութեան, առանց որոց ոչ է մատչել առ աեր, այլ զփրկողին ա նուն պատկեմ, և զնորհ նորին առ ամենեսին բարեհաճեմ, և զընաւին բարձուճան՝ ի թռիչս վարուց խոստովանիմ բանիս պայմանաւ յաւէտ կարօտեալ ո զորմութեանն դեղոյ:

Դ. Ահա դու կեանք, դու փրկութիւն, դու բժշկութիւն, դու անմահութիւն, դու երանութիւն, դու լուսաւորութիւն. արա ինձ անպորը՝ ի մեղացս աշխատութենէ, զի և քեզ լինի հանգիստ՝ ի միտս դառս հեծութենէ՝ ձանձրացուցիչս թախանձանաց. որ ոչ այլ իւիք, քան թէ փրկութեամբ մարդկան պատրիս, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ՀԱ.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱԻԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԱԾՈՑ

Ա. Ցի քանզի երջանիկքն և փառաւորեալք սրբոցն պարք, յորոց ամանք դպղն ինչ գթեցեալն և յաճախապղնս հաստատեցան, փոքրունս սասանեցան և մեծապղն վառմամբ նշուլից հոգւոյն մաքրութեամբ լուսաւորեցան. յորոց միոնն զզանգուածոյն յայտնէ զհնասպատասեղծն տկարութիւն, իսկ միւսն զգերազանցն

քան զընուԹեանն օրէնս, վարս և առաքինուԹիւնս հրեշտակականս։ Եւ արդ նոքա որ օրհնեալքն են յաՀնիշեան բերանոյ աստուածուԹեան հօրն Քրիստոսի, ընտրեալքն ածեալքն խնկեալքն և բարեբանեալքն, իբրեւ զանդամս Քրիստոսի պաշտեցեալք, և իբրեւ զօԹեւանս հոգւոյն սրբոյ յարդարեալք, յորս չիք ինչ նշմարանք և կամ գիւտք խաւարի, այլ ամենեւին անկեղծուԹիւն և լուսաւոր արդարուԹիւն, և որքան մարԹ է զմարդն աստուծոյ՝ աստուծոյ նմանեւցուցանել։ Ընթեր պարզք և անպատճառելիք, կրօնք բարձունք և անխոնարհելիք, կեանք զգաստք և անբասգըտանելիք, պաշտօն առ աստուած կարծր և անխոխարկելի, ընԹացք արիականք և անկասելիք, ճշմարտուԹիւն միտասրը և անցնդելի, դիմագրաւուԹիւն զօրեղ և անհեղբելի, տեսաւորուԹիւն պայծառ և անապչելի, խնամատարուԹիւն վերնական և անկոխելի, պատկեր մաքուր և անաղարտելի։ Օ՜րոց կերպարանս և գիշատակս անուանցն ազաչել՝ աստուած խոկ վարդապետեաց, և նոքօք հաճուԹիւն ի մէջ խառնուԹեան արարչիդ բան լուսաւորեաց։

(Բանք պանծալիք հաշտեցուցիչք աստուծոյ)։

Բ· Ա՜յլեւս անպիտանս յամենայնի, և որքան բան զօրէ պարապաւեալս, որ մինչդեռ արԹուն եմ՝ նիրհեմ, մինչդեռ զգաստ երեւիմ՝ Թմբրիմ, ի բարեպաշտելս խնամ գայԹագղիմ, մինչդեռ աղօԹեմս՝ և վխտիմ, ի յընԹանալս խնամ և կասիմ, յարդարանալս իմ և մեզանչեմ, ի խաղաղանալս խնամ ամբոխիմ, մինչդեռ արշաւեմս՝ առ ի յետոյն հակամիտեմ, ի չուելն ի մուտ՝ ընդ կրունկն դառնամ։ Ընդ լուսոյն մասին և խաւար յարեմ, ընդ քաղցրուԹեանն ճաշակ՝ օչինդը խառնեմ, ընդ կուզս բարեացն՝ չարիս հիւսեմ. ընդ կանդնելն և կրկին գլորիմ։ Ծաղկիմ և ոչ պտղաբերիմ, ասեմ և ոչ առնեմ, խոստանամ և ոչ կատարեմ,

ուխտեմ և ոչ վճարեմ, կարկառեմ և անդրէն ամփո-
փեմ, յուցանեմ և ոչ ընծայեմ, մերձենամ և
ոչ մատուցանեմ։ Ի ձարակել խոցուածոյս անդրէն վի-
բասրիմ, ի հաշտեցուցանելն՝ վերատին խաւսեմ, զսբ
հանդիսանամ և իրաւամբք պարտաւորիմ, գրիմ և խա-
կայն եղծանիմ, նաւեմ և ի գիծն Թուլանամ, սկսա-
նիմ և ի հանդիսան ոչ ժամանեմ։ Կարգիմ և գար-
ձեալ սասանիմ, ընանիմ և կրկին հեղուշ, շարունա-
կիմ ասա՝ և անդ ի ստորեւս հասիմ, բարդիմ և անդ-
րէն ստոյրիմ։ Ձինն արկանեմ և ոչ գլխաւորեմ,
սակաւ վաստակիմ և բիւրս վաստեմ, դոյն գանձեմ
և անթիւս սպառեմ, զայլս խրատեմ և ես ինքն ան-
փորձ եմ, միշտ ուսանիմ և երբեք ի ճշմարտութիւն
գիտութեան ոչ հասանեմ։ Ո՛չ ելիչեալ չարիան նոյնչափ
արծարծեմ, սուղ ինչ քաջալերիմ և առաւելապէս լը-
քանիմ, լարիմ և խակ և խակ առնմին մեղկիմ, զայս
կարկատեմ և զայն պատառեմ, խլեմ զեղիճն և տա-
տասկ անկեմ։ Ընդ ամբառնալն և այսրէն բերիմ, մտեմ
ի բոյնն ագռաւին և անտուստ ապուաւ երանեմ, գամ
սակաւ մի սպիտակ և սրանամ գառնամբ ընտրին սեւա-
գեալ, սասեմ զիս քեզ գաւանել և սպանողին նուիրիմ,
ընդ յանդիման լինելն և թիկունս դարձուցանեմ։ Կաք-
րիմ և այլ մրճոտիմ, լուանիմ և նովին զաղջանամ, կեր-
պարանիմ զԱստեղին և գործք զԱստուզային կատարեմ,
ջրթամբք ճշմարտեմ և ստեմ երիկամամբք, աջովս մա-
տակարարեմ և ահեակ կողմամբս աւերեմ։ Ընդ երկ-
րագործութեան ցորենայն՝ որոմն սերմանեմ, ի բարձ
բազոյն իմաստից ի վայր իջեալ, ես ինքն գտանիմ։
Ընչեղականամ յերեսս և ի խորհուրդս դիւանամ,
ի յոտս հաստատիմ և ի միտս տատանիմ, սուտ ձե-
ւանամ և իրօք խոտորիմ, կեղծաւորիմ արդար և ար-
դեամբք ամբարշտեմ։ Դատիմ ի պարս հեզոց և ընդ
այս կաքաւեմ, ի մարդկանէ գովիմ և ի տեսողէդ
պարսաւիմ, ի հոգածնելոցս երանիմ և յորդւոցն լը-
սոյ աւաղիմ, հաճոյանամ յետին ուամկին և թագաւո-

բիզ մեծի յաչաց ելանեմ: Ոչառեանն դառաւորին Թա-
ղեալ, խառնակծնին աղերսեմ. հեղբեալ ի վեհին,
սոսկականացն սպրդիմ. մարմնովս արտաքուստ պճնիմ,
և անձամբս երինիս ճային ճանաչիմ. հպաւորիմ դաշն
հաստատել, և ուխտակորոյս արտաքս մերժիմ: Ա յսօր
մաքուր հոգեկիր և վաղիս մուխ խելագար. զսէրսունի
պատուէրն լքեալ, Թելադրութեան օձին հետեւիմ.
արիանամ զօրագէս, և վատթարագոյնս ընկրկիմ. ըղ
ծանրութիւն աւուրն բառնամ, և ի ժամ վարձուն
անմահն ելանեմ. ի քացուստ ճառոմն խօսիմ, և ի
պատասխանատուութեանն պահու պատանձեալ կարը
կիմ. ի յելս արեւուն հարստատ երեւիմ, և ընդ ե-
րեկս ունայն դեգերիմ: Յաթոռս ծերոց բազմեալ,
և խելացելոյց կցորդիմ. նզովեմ խեթիս, և արհաւրօք
զարհուրեալ զարթնուիմ: Ո չանդաստանս կամացս չա-
րաչարս հերկեմ, փոյթ խնամով ի չարիս, միշտ անա-
ւակ սրդիս, անդադար տարապրեալս, անդղջական զառա-
ծեալս, անմխիթար արտասուալս, ինքնապրաւ գերեալս,
մահու և ապականութեան ծառայեալս, անողքելի
տանջեալս, անփրկելի մատնեցեալս, անպատուաստելի
հատուածեալս, անարծարծելի շիջուցեալս, անկաղ
դուրելի խորտակեալս, անհանդերձելի կործանեալս:
Ա յլ եթէ պարտ է զատաւիղն աստուածօր ասել անօրինեալս
անձին նախատինս, ահա գրեմ, գրեմ և ոչ անխոհեմ
վնասիս նիւթեալ գեհենին: Ա տացուածս նախանձու
նորոյս Ա դամայ երկնային, որպէս և Կայէնն առաջին
հնոյն և հոգեզինին. որ ունիմ զընտաւն աստուստ ի
յանձին ինչանակ ամբաստանութեանս, ոչ զընչոյս
տուրեւառութիւն, այլ զանիկս կշռամբութիւն:

Գ. Ա յլ արդ ո՞ր հայեն փրկութիւնքն, ուր սկզբնա-
հայրն հաւատոյ ի յուսահատութեանն վայրի զանձ-
գիմութեանն իմ չարիս կրկնէ, մեծն մարգարէից քա-
մեքդ բանիկ կոչիձէ, արին բարեփառ աշտեին նիւ-
զակաւ ի մահ ատակէ, պատկերը ճշմարտին ընդ
Ա քարու համայնիւ ջնջէ, աստուածարեալն վհիւոյ՝

յարագողացն վերիժուց մատնէ, մարգարէածին տեսա-
նողն՝ ընդ ամաղէկացւոյն առաջի տեառն սպանանէ,
նախանձաւորն աստուածոյ երկնատեզայ բոցոյվն վառնէ,
սուսերին լուծին և նորոյս սկիզբն՝ հեծանոցին ընտ-
րութեամբ հոսէ, պետն առաքելոյ ընդ Սափիրայի
՝ի կենաց զրաւէ, զարմանալին քննութեամբ հոգւոյն՝
բուրումն ինձ մահու ընդ կենացն քարոզ խառնէ։
Արդ անաչառք և ինձ կամառք երջանկացն, և ուժգըն-
նութեան հրամանի վերնոյն արի սպառազէնք. ընդ
հրեշտակացն և մարդիկ, ընդ տիեզերաց երկրի և
տարերըք, ընդ անզգայիցն և չարժողականք, որովք
դատեալ միշտ լինիմ՝ տուժիւք լկտանաց յօրինակ և յիւ
շատակ սոսկալեացն ապագայից. եթէ հողմով փոթորկի
ալեաց յատէտ մերկեալ կենացս վտահութիւն, միայ
անկայուն՝ ի հաստատութեանց։ Օ՜ որ եթէ ոք իմաս-
տութեամբ ի քնին առեալ խուզեսցէ զըզակացն
բազմատեսիլ զանազանութիւն, զմանուկս փոքունս
ընդ մեծամեծացն դասեալ, որ առանց թուոյ և քանա-
կութեան համարոյ թինդս առեալ անբաւ երամոց եռան
զեռան սլանան՝ի մարմնիս ծովու, վկայեսցէ և հաստա-
տեսցէ ճշմարիտ լինել զասացելոցս բանապրութիւն։

Դ։ Այլ դու ինքն օրհնաբանեալ անմահ թագաւոր
բարի երկնաւոր մարդասէր Քրիստոս, աստուածոյ կեն-
դանւոյ միածին որդի, հզօր բարձրեալ անքնին անճառ
քաւիչ ահաւոր, սաստեա՝ի ձմեռն ամբոխեալ ալեաց
ոգւոյս ծփանաց, արձանացս զծաւալս մղեգին շարժ-
ման սրտիս խռովութեան, ընդոստնեա՝ի սանձս կա-
պոյ երասանաց ըմբռնման զընդեալ մուտս վայրագու-
թիւն։ Ընկեցի խաղաղութիւն հրամանաւ մեծիդ ամե-
նակարան բբոյս սաստման, աստակեա խափանեա
զբազմագլխեան անդամս ուրուականս գաղտնեաց ա-
մօթոյս երկրակենցաղս հինից։ Ցրեսցես աղօթս մշտա-
մատոյցս զայս նորընծայ ատա ողբմամբերս թախծա-
գին ձայնի ողբերգարկութեան այսր մատենի. հան
՝ի խորոց մահուս անդնդոց չքնաղ սպրեցեալ ընդ

մարդարէին փրկելոյ. ընկալ զաստուածանուէիւն անձ նագատ բանից ի հոտ անուշից. շնորհեա մխիթար գառնուէեան վշտաց ուժգին հեծուէեան յուսահատ սերոյս: Այլ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք պատիւ և իշխանուէիւն յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ՀԲ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ակն ահա ձեզ ասեմ, ով եկեղեցիք միանձանց և աշակերտուէիւնք կրօնաստանաց, որք մերկամարմին մատանցդ ձեռաք առ ակնկալուէիւն յուսոյն պարգեւ ասյ բարեացն անբաւից սեառն զինուորեալք, որոց զայս սեղան հանդերձանաց խորհրդոց բանից ընծայեցուցի, ընկալարուք զայս աւանդուէիւն խոստովանուէեան ի շինուած փրկուէեան հոգւոց: Օրանեք բուք սովիմբ զմարմնոյս պարտաւէիւն, յիշեցէք զմարգարէականն ընդ առաքելականին առեալ մեզ ի խրատ, զի մի պարծեսցի ամենայն մարմին առաջի աստուծոյ, և զաչ ոք է արդարն և ոչ մի: Օգեբուռնականն մի մոռանայք, ի կատարածն խակ պատուիրանին գոգջիք ըզ ձեզ ծառայս անպիտանս. մի եղիցի լինել ձեզ որք խաբողին. զգուշացարուք և զբոյն, թէ կեբակուբք նորա ընտիբքն: Գանգի և ես խակ, որ զայս նուաղուէիւն մանաւանդ պղտոյ ձեզ ջամբեցուցի, վկայեալ զանձինք կամաւորական սպասանք բիւր բամբասանաց անբժշկական մեղանաց, ի սկզբնահայրն սկսեալ մինչեւ ի սպառումն ծննդոց նորա՝ կամայականն յանձնառուէեամբ հատեցի եդի զնս ամենայնիդ պարտական չարեաց:

Բ. Լուսոյ յուժեմնէ ոչ պարտաւորէ, և ոչ հաճե-

ցայ, ի յասելն նորա անչարմարապէս առ այն, որոյ առաջի ոչ է արդարանալ մարմնոյ երկրածնի, թէ ոչ երբէք ընացայ, ոչ պառնիկեցայ, և ոչ զաշխարհիս ինչ համբուրեցի ճաշակս մահու: Այլ ոչ ընդհատ ինչ յանօրէնութենէ. Թողջ նմա տէր ասասած զայսոսիկ. Թէ և ճշմարիտ խակ գրեցաւ, ոչ ընթացաւ, որքան Թէ գԹեաց, ի յասել զանչարմարան ի դիմաց Ժողովրդեանն Իսրայելի բանիւ Օ՛աբարիայ, օրհնեալ տէր, և մեծացաք. որ է փարիսեցւոյն ձայնի կերպաւրան: Բայց ես քանզի գիտացին ասասածոյ մանաւանել եմ գասասանի, որ զիիրս աներեւութիցն մտաց ի կշիռս եդեալ՝ համարի գասել զիս նոքօք ամենիրաւ հասուցմամբք, ոչ կերպարանեցայց սեսողին, ոչ կեղծաւորեցայց քննողին, ոչ ասեցից զոչ գործեցեալսն նկասողին, ոչ խաբէութեամբ ընդ միս լինչ մակս մեծին, ոչ ի սեսիլ բարւոյ ցոփութեան զչարս քողարկեցից, ոչ ի պատկեր ընտանի զապիկարս երբէք յարգեցից, ոչ խնդնեչեցայց ի զարդ օտարսոի, ոչ պճնեցայց պլուկ պայծառութեամբ, ոչ պատճուճանս յարմարեցից տգեղութեանս գեղջ: Ոչ զբ մեղաւոր իբրեւ զիս, ոչ զբ անօրէն, ոչ զբ ամբարիշտ, ոչ զբ անիրաւ, ոչ զբ չարագործ, ոչ զբ վրիպակ, ոչ զբ սիսալեալ, ոչ զբ մոլեգնեալ, ոչ զբ խարդախեալ, ոչ զբ շաղախեալ, ոչ զբ ամաչեցեալ, ոչ զբ դասապարտեալ, ես միայն եմ և այլ ոչ զբ, ես ամենայնն և յիս ամենեցունն: Ոչ հեԹանոսք, զի ոչ գիսեին. ոչ հրեայք, քանզի կուրացան. ոչ ագէսք և խառնիճաղանջք, քանզի չիմացք էին իմասից: Պետ վարժից կոչեցայ յանձինս դասասխող. ռաբբի ռաբբի անուանեցայ, և զգոլեսան առ ասասուած եղծի. բարի ասացայ առ եղկութենէն ժառանգութիւն. սուրբ վկայեցայ ի մարդկանէ, որ եմ անմաքուր առաջի ասասուծոյ. արդար դասանեցայ առ մեռնայն իրօք ամբարիշտս. հեշտացայ ի գոլեսս մարդկան, զի ծաղր եղէց յասեղին Բրիսասոսի. յառաջանէ կոչեցայ Ելիաւն, և ես ի քուն մահու ննջեցի. ի

փրկութեանն աւուր Հսկող յորջորջեցայ, բայց զգաստութեան աչս կախուցի: Ահա դատաստան, ահա յանդիմանութիւն, ահա նոր կշռամբանք և հին դատաստարանութիւն, ահա ամօթ դիմաց և ապտնապ հոգւոյ, ահա խնդիրք փոքունց և կշիռք մեծամեծաց:

Գ. Ալ դու միայն սէր աստուած մարդասէր, անոխակալ և երկայնամիտ, համարեայ մեզապարտս անձին ընդ վերջին պարտաւորութեան աւուրն ահաւորի զայս կսկծեցուցանող ինքնաբանական նախատինս: Ա՛լ լաւայ ինքն զայսօրիկ, դիմած, փոխանակ դի ես ինձէն անձինս դրեցի: Արդ բարձրես և վերացուացես զպահ պարտաւորութեան կանոնիս ընդ քեզ կապելոյս սենչանօք հոգւոյս: Հան զնախատինս պատկառանաց խայտառակութեանս, ծածկեա աչքիդ կարողութեան զգեղ սեռակ մարմնոյս մերկութեան, մատս հանդստեան զիմպաթոյս ուժգին մեզայս բեռամբք, կարգեա ինձ սահման հեռոց բարութեան առ եղս կենացդ, պահեա յիշատակ ինձ ողորմութեան և զինի մահու կեանք առնելոյն, օրհնեալ յերկինս և գովեալ յերկրի, բարեբանեալ միշտ յամենայնի՝ յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ՀԳ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ով ադամայր բարձրեալ հզօր ահաւոր, օրհնեալդ միայն սէր Յիսուս Քրիստոս, քո է փոխարկել յանախալս կենաց յաւահատութեան զատակիչ անէծս աւ կեցուցանող օրհնութիւնս, զպարտաւանս վհատութեան աւ զուարթացուցիչ գովութիւն. ընդ ա մօթին՝ համարձակութիւն, ընդ պատկառանացն՝ պա-

սիս, ընդ տարապրութեանն՝ յոյս բարութեան, ընդ բաժանմանն՝ ակնկալութիւն միութեան, ընդ սպառնականացն բանից՝ ողբքական սփոփանս, ընդ միանդամ դատապարտութեանն կրկին ազատութիւն։

Բ. Ողորմեա, տէր, մահու մեղապարտիս յաւուր արձակման հնչոյս կենդանութեան, մինչ աչացս ողորմագին հայեցուածս ի բարձունս կողկողիցի, զբազմարիածեան ուղւոյն զանդերձ ընթացիցն զանփախչելին ճանապարհ յաչս բերելով մտացս սեամամբ ամենայնիւ վտանգեալ. և ի յերդ բնակութեան յարկիս նկատեալ յելիցն շաւիղ, թշուառացեալ կիսամեռութեամբ, դիմօք այլայլութեան, տատանմամբ մատանցս, կարկամ հառաչմամբ, նուաղ հեծութեամբ, երբա՛ կան ձայնիւ, յոգւի թախծութեան յոքնամանեայ տապակուածոյ՝ ի խորոց աներեւութիւց զդործեցելոցս ողբալով հառաչեմ։ Կարող ես, բարեգութ, և անդ հրաշագործել յաւէտ զօրեղութեամբ ասելով, թէ ողջ եղիջիր յոգւոյդ խորտակմանէ, և կամ թողեալ լիցին քեզ մեղանք քո, կամ թէ երթ ի խաղաղութիւն սրբեալ ի մեղաց։ Այլ զոր յայնմ ժամու ոչ ժամանեցիկ պաղատել, այսօր ընկալցիս մարդասիրապէս, ով երկայնամիտ բազմաշնորհ ամենակեցոյց։ Յորժամ, որ այժմ բանապաճոյճ խրոխտաձայն սիպացող բարձրապարանոց, անկեալ դնիմ դէմ անկենդան, կարկեալ ի խօսից, կաշկանդեալ ձեռօք, լքեալ անդամօք, խփեալ չրթամբք, կախուցեալ աչօք, տախտակ անշարժուն, կոճղ կիսապեաց, արձան անզգայ, պատկեր անբարբառ, գոյութիւն անշունչ, ողորմելի տեսիլ, աշխարհելի կերպարան, ողբալի օրինակ, եղկելի դէմք, արտասուելի նմանութիւն, լռեցեալ լեզու, ցամաքեալ խոտ, թօթափեալ ծաղիկ, ծորեալ գետ, չիջեալ ջամբար, դատարկ կոկորդ, խոպանացեալ սիրտ, աղխեալ աղբատան, սպառեալ աղբիւր, թալկացեալ մարմին, ժողեսեալ որովայն, քակտեալ տաղտաւար, կոտրեալ ոսոք, բաժանեալ յօդք, հատեալ ծառ, սղոցեալ աղ-

մատ, Թաղեալ տուն, հնձեալ արտ, ստորախուզեալ բոյս, ստարացեալ բարեկամ, մոռացեալ պահեստ, Թաղեալ գարշուԹիւն, մերժեալ ատելի, բարձեալ խէԹ, անարգեալ կմախք. և իբր զանպիտան առ ոտն կոխեալ: Կարօտեալ այլոց մաղԹանաց, որք չհաւատոց Թշուառս ձայնիւ նուագեալ աղերս հառաչման, ցօղով արտասուաց բարեբարիդ գԹուԹեան ՚ի բարձունս տարածանեն: Ո՛ւառ քեզ դարձն յերզանակէն արգահատելով, զոր օրհնեմ. զնչան խաչիդ փրկուԹեան, զոր երկրպագեմ. զյարուԹեանն ճշմարտուԹիւն, ուրում հաւատամ. զփառացդ քո յայտնուԹիւն, զոր փառաւորեմ. զդատաստանիդ ահաւորուԹիւն, զոր խոստովանիմ. զքանիցդ յանդիմանուԹիւն, յորմէ զարհուրիմ. զհոգւոյդ սրբոյ ինձ ուղեկցուԹիւն, զոր պաշտեմ. զօծմանդ տեառնադրուԹիւն, զոր և համբուրեմ. զԹագաւորելն ընդ քեզ, տէր Յիսուս, որում պաղատիմ: Ընդ լքաւ մերժեցաւ բարձաւ տրտհեցաւ փախեաւ սրացաւ սեղի եւ կցորդուԹիւն զուգուԹեան կենցաղոյս կենդանուԹեան, և յոյսդ որ ՚ի քէն պարգեւ՝ միացական և անբնջական յիշատակարան պահեցաւ:

Գ. Ցեա ողորմուԹեամբ ՚ի տարակուսանս վտանգելոյս. միայն բարեգուԹ փառաբանեալ որդի աստուծոյ, քաւել բժշկել կենագործել պաշտպանել նորոգել նկարել կանգնել հաստատել, վերսին ստեղծագործել յերջանիկն անարատուԹիւն. քո է կարողուԹիւն, քո է փրկուԹիւն, քո ողորմուԹիւն. չէք քո անկասուԹիւն, այլ ամենեւին զօրուԹիւն, բարձրուԹիւն, իշխանուԹիւն, անվախճան ԹագաւորուԹիւն, խաղուԹիւն, ինքնուԹիւն, ամենատեղի բացարձակուԹիւն, բարեբարուԹիւն, լուսաւորուԹիւն. փառաւորեալ սիրասէս, անպակաս և անյաւելուած, խընկեալ խորհրդով անԹափանելիս Հոգւոյդ սրբուԹեանդ սրբուԹ, գոհաբանեալ յաւէտ և եւս առ ամին ՚ի նոյն պաշտօն հաւատարուԹեան միաղաղիս զուգականուԹեան, երէկ և այսօր և յաւիտենից յաւիտեան. ամէն:

ԲԱՆ Ա՛Դ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ա՛ՐՔԱՑ երկնաւոր, տէր բոլորեցուն, առ ամենայն բան յամենայնի միշտ երկայնամիտ, աստուածոյ կենդանւոյ անքնին որդի: Ահա անդ է ողորմելն իւ կապէս, յորում Հաստատ ակնկալութիւն վաստակին. անդ է բարեգործելն, յորում տեսութիւն խնամատին խաւխանեցաւ. յայնմ ժամու է մարդասիրելն, յորում ակարութեանն վառանգ պաշարեալ տիրեաց նեղքոյ և արտաքոյ. անդանօր է բժշկութիւն աստուածային քո ձեռինդ, յորժամ բնաւ անդամոյն տեղի ետ կենդանութիւնն. այն վայր է այցելութեան, յորում եղեք հնարիչ ոչ գոյ: Ա՛յն է քո մեծութիւն, յորժամ պյուսահատութեան վէրն ողջացուցանես. այն է հաստատ քումդ ազգակցութեան, եթէ յանակնկալն ժամու արուեստաւորեացես փրկութիւն. այն է հանդիսարան քում յաղթանակի, եթէ պիսակեալն մուտս կենաց ի սպառումն չեղոյս բացցես. այն են քո շնորհք վայելչականք, եթէ պչարեացս խոց մոռացեալ՝ զաստեղծդ քո չիշեացես: Յայսմ ես անոխակալ, եթէ ապիտաւորիս ընդ երախտաւորացն խնամարկեացես. ի սոսին ծանեալ գիտացից՝ եթէ նայեցար ի նուէրդ բանից նախնի գթութեամբդ, եթէ զսովորութիւն չարեացս բարձցես:

Բ. Յաղագս այսորիկ հիւսին բանք և եղանակին նըւագերգութիւնք, յորժամ տէրն բարի՝ չարն ծառայի պարեգործացն պարգեւեսցէ. որ մինչ իրաւամբք մնացեալ քանաի, նա յաղքայական ապարանս վնա հան-

գուսպէ. մինչ հրաւիրեալ է ի գութ ողմոյ, նա ի բազմահանս ամենապատիկս գահոյց գրգեցուցանիցէ. մինչ բրելոյ զաչան դիտեացէ, նա ի բարձրութիւն բերկրութեան հայեցուցանիցէ. մինչ ծայրատուութեան մատանցն սպասէ, նա մատանի համարձակութեան մատուցանիցէ. մինչ հայի հարուածոց գանից, նա գթոյ գիրկս արկանիցէ. մինչ պատրաստեալ յուսոյ կորստեան, նա երեւելի տեսողաց բազմաց առնիցէ. մինչ ակն ունի սատակման մահու, նա ընդ կենացն և փառս ընծայեցուսցէ. մինչ հատման գլխոյն նայեացի, նա զնոյն պսակաւ պայծառացուցանիցէ։ Այս պտուղք օրհնութեան, գթած, աբանչելարմատ քումդ շառաւիղոց. այս արգասիք կենաց արարչականդ քո հրամանաց. այս իգձք խորհրդոց թոստովանելոյդ քո տենչանաց. այս նշոյլք լուսոյ ամենատիւրդ Ճառագայթից. այս ախորժութիւն Ճաշակաց բարեբանելոյդ քո քաղցրութեան։

Գ. Ոչ միայնոյ են այսոքիկ, տէր. ի քէն ազդեցաւ գրել ինձ զսոսին. ահա զքոյսդ յատուկ աղերս ազատեմ, օրհնեալ, ի քոյոց այսի պարգեւեալ ընտրեա. քաց, տէր, զգանձս քո բարիս, ըստ աղերսանաց առակին։ Մի խառնեացես ի համբարս բարեացդ քոց ի չարեացն իմոց. մի շտեմարանեացես զառելիսն քո՝ որ են ոխութիւնք և յաժմունք, ընդ սիրելիսն քո՝ որ են գթութիւնք և ողորմութիւնք. մի պահեացես ի ստացուածս քո պաշտելիս զանախորժելիսն քո՝ որ են մեծութիւնք և դաժանութիւնք, և զնմ փնասելիքն՝ որ են մեղք և թշուառութիւնք։ Մի գրեացես առ Քրիստոս օրհնութեան ի մատենիդ կենացդ զմոռրհակ պարտուց իմոց անիծից. այլ զանհնարաւորսն ինձ համարեալս՝ մեծացուսցես կրկին առաւել զանուն քո տէր ի նոսին, յուսցանել զդոյն ինձ դիւրինս և հեշտահաճոյս։ Շատ են իմ պարտիքս և անդր քան զիս, այլ ոչ այնքան հրաշալիք խրթին զքո ողորմութիւնդ. բազում են մեղանքս, այլ յաւէտ են նուաղեալ առաջի քոյդ ներողութեան. յաճախ են չարութիւնքս,

այլ յաղթական են համայնից, հզօր ամենակալ, քոյդ մարդասիրութիւն. լինձ են անհամար խմոյս անձին բիծք, այլ քեզ յոյժ գթաւեալ են ընդ սահմանաւ: Ոչ են այնքան զօրաւորք առ կենդանութիւն զէնք մե- ղանաց պատճառեցելոյս պղտաբերութեան, որքան յիւ- շատակ մահու կենդանեցդ առ վանումն կործանողին բանութեան: Ո՞ՀՆ ազդեսցէ փոքր խաւար՝ աւուրդ աստուածոյ, զիաւրդ բաւեսցէ դոյզն ինչ ազքամուղ՝ մեծիդ ճառագայթից. զիաւրդ համբարձցի կշռեսցի ընդ խաչի քո կրից՝ խակութիւն հեշտութեան մարմ նոյս տկարութեան: Ո՞ՀՆ երեւեսցի յաչս ամենա- կալիդ քո առաւութեան՝ կոյաք մեզանաց ամենայն տիեղերաց. ահա կոչտ մի հողոյ զիւրախիրելի ի կարծրութենէ բախման վանեցեալ, իբր զզազակ անձ- բեւոյ բազմազեղ հոսմամբ քո կամացդ չքացեալ պայ- թեալ անդասին: Ո՞ՀՆ պիտոյ են քում զօրութեանդ ամենահնարդ կարողութեան ժամանակաց առաւե- լութիւն առ յանցաւածոց խմոց քաւութիւն. ոչ քրիս- թել մի ական, ոչ խուն մի տեսութիւն ածանցական, ոչ սակաւ մի նայեցուած վայելական, ոչ կիսամանեայ յամրութիւն, ոչ փութացելոց ոսից յերկրաւմն, ոչ յերկից բարձրութենէ միոյ կանգնոյ կաթի անկելոյ, ոչ գիծ մի չափոյ մոտաց հետեւեցելոյ, ոչ նշուղից արա- գութիւն, ոչ ընչոյ տուրեւառութիւն, ոչ ինչ յայսմ յանդոյ և յանտապաւորական նմանութենէ անձեւ օ- րինակաց յաւէտ անկայից՝ այնքան առժամայնք կամ հարեւանցիկք, որքան եղծմունք, ցնդմունք և հալ- մունք մեզայս սառնամանեաց պահեստի՝ քումդ զօ- րութեան, աստուած ամենայնի տէր Յիսուս Քրիս- տոս, որդի անքնին կենդանւոյդ աստուծոյ: Ող տաս պարգեւես արեւ քաղցրութեան՝ չարաց ընդ բարիս, և անձրեւես երկաքանչիւրոցն անաչառապէս. կշռես սահմանես իրաւամբք և զվտանգս կրից հաւատարա- բար, որոց մեծ է հանդիսան առ ակնկալութիւն պարգեւին, փոքր խոհանաւ փորձութեան զսակաւու-

թիւն պարտուցն առաւէն վճարես. իսկ որ վերկիր ընտրեցին, ներես ողորմութեամբ, տալով և սոցա դարման ընդ նոցա՝ միշտ առ քեզ դարձին սպասես: Եւ քեզ փառք ամենազօրիդ առ ամենայն հրաշագործս թիւն բարեխնամող երկայնմտութեան, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ՀԵ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՒԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Եւ արդ ընկզմեալ զմայլեալ և ի սպառ ծածկեալ ի յանճառութենէ առաւելութեան բազմամասն նեայ յաճախութեան մեծիդ երախտեաց, որ ամենառատ լրմամբ անհնարագնեալ յաջմէ և յահեկէ՝ ի դիմաց և ի թիկանց համբարեալ կան անբաւութիւնք:

Դարձեալ առ նմին կրկնապատիկ երկրորդութիւն աստուածային հոգւոյն ապդեցեալ, որ ինչ յառաքելոյն սահմանեցաւ աւանդութիւն՝ առ ամենայն լուսաւորութիւն եկեղեցւոյ դաւանութեան՝ մեկնապէս եգեալ աստանօր: Եւ որ առ անշնչականս նիւթեղէն յուշանի երանաւոր կերպագրութիւն անձառելի:

Բ. Անաուշանամ ընծայեմ դարձեալ աստանօր աւանդ գովեստի դաւանման ճշմարտականի: Օ, ի որպէս երբեմն հերձուածականին չարափառութեամբ ամենապատիրն խաբէութեամբ նենգողին կարթիւն հաստուածեալ ի բաց հեղքեցաւ՝ եղեալ ի դրախտէն, արդ միաւորականաւս այսու ուղիղ ամբծութեամբ՝ ի յաւանդ խակապէս ընտրեալ անդրէն միւսանգամ համբարձեալ սովիմբ՝ ի թռիչս թեւոց լուսոյ ահա յերկինս ժամանեցից հետեւեալ:

Գ. Այլքանգի յարգանդէն՝ յորում յղացայ հոգեւոր

երկամբք ծնեալ, զմեծ և զերջանիկ դշխոյ անարատ ամենից կուսից իսկուհի՝ զպանծալի մայրն իմ գովելի պարտ է կանոնաւ սահմանի բանիւ արձանագրել յայսմ մատենի. զի ծանեցի ցուցցի և այլոց ևս ապագայիցն ազգաց պատմեցի զբանութիւն փառաց իւրոց, արժանապէս պաշտամամբ պատուեալ իբր մաքուր մարմին ընդ գլխոյ մարդեղութեան բանին աստուծոյ, ի յիշատակ ճառիս հաւատոյ Երրորդութեանն դաւանութեան: Ես արդ ի յայս օրինակ հոգևնկար պատկերի բանի, որ վերատնէս լուսոյ յարմարի, ընկալ զիս, զթած օրհնեալ, քաւեցեալ և սրբեալ ի սմին: Ձան սովաւ ի հոգւոյս զնախասիրնս մեղացս, անմեղս և անբիծս ընդ հովանեաւ սորին բազմեցս, յաւել զսակաւս ի տունն Դաւթի, և անուռւսա փոխեալ ի տունդ աստուծոյ, ըստ մարգարէին ձայնի՝ որ ի քեզ Յիսուս ակնարկի: Մի սոսկ զմոյին, և մի անօգուտ զերկոյն հեաեւուածիւն արասցես, մի զհաւատոյս ջերմութիւն ցուրտ համարեսցիս, և մի զհամբոյր ողջունիս անկարգ ինչ վարկանիցիս, մի զպաշտօնն ապաշնորհ գործեսցես, և մի զերկրպագութիւնն անխորհուրդ լքցես. մի անպատուղ լեցի սեռականութիւն պատկերին, և մի աննշոյլ կերպարանին աքանչելութիւն, մի անհուր ոչ ջակիզին սպանդ մուռացի, և մի պատարագ ուխտի այս ճառի՝ արուաքոյ ցրեսցի. մի ճաշակդ լուսոյ ինձ մահու լեցի, և մի բաժակ քո կողիցդ արեան՝ ի դատապարտութիւն եղիցի:

Դ. Ընդունեմ զքեզ, սեր Յիսուս միդ յերութենէդ, որով զգիտութիւն հօր քոյ և հոգւոյդ սրբոյ ճաշակեալ ծանեաք. քանզի ի քէն իսկ վարդապետեալ զամենապարգեւ կարգս եկեղեցւոյ, և ի սմին աղօթաւնութէր լուսատան կենաց փրկութեան բարեաց, տառածեալ զսիրտս ձեռաց համբարձմամբ զայս կնդրուկ բանի բնակողիդ ի սմա տիրողիդ բնաւից երեքսրբեղնիդ մատուցեալ յաւէժ ընծայեցուցանեմք այսու բարբառով բարեշնորհութեան:

ՅԱՔ ՈՐ Ի ՆԻԿԻԱՅ ՍԱՀՄԱՆԵՑԱԼ ԲԱՆ ։ ՊԱՏԻՒ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆ ԱԱՌԱՔԱԾԱՅԻՆ ԱՆԴՐԱՆԻԱՆ ։

Ե. Փառաւորեմք վերաձայնեալ նուագօք օրհնութեան երդոց ի հաւատս պաշտաման բանի զբարեհրամանն պատճառն եղելոց զհերետիկոսութիւնն անսկիզբն՝ անհամեմատ բարձրութեամբ, անհասական խորհրդոց և անըմբռնելի խմաստից, անշնչելի զգայութեանց և անբերելի եղելոց, քանակութիւն վերնականն երկնի և անսահման ներքնային խորոց, լուսութիւն սպառմանց և նախադրութիւն սկզբանց, մի յերից անչափի կերպից, և երիս՝ ի միոյ անհասուածելի խակութեանց, ի վեր քան զմտաց անարգելութիւն յարաձգեալ ամենայն ուրեք բովանդակ։ Անխոտոր բարի, անսասանելի ուղղութիւն, անխառն կերպարան սիրոյ, մեծութիւն անչափարդ, բարձրութիւն անմոնարհելի, անվասնելի տեսականութիւն, բարեբարութիւն աննուազելի, կամք կայուն, հրաման կենդանի, ակնարկութիւն փրկչական, երանութիւն ճշմարիտ, ակնկալութիւն հաւատոյ, խոստումն անսուտելի, աւանդ արգասաւոր, սոսկ աւետիս, վերամբարձութիւն անձեռնարկելի։

Զ. Ան հայր միայնոյ որդւոյ՝ միական հոգւովն պատուեալ, ամենահարուստ բարութեամբ ամենեւին ունայն ի չարէ, օրհնաձայն գոհաբանութեամբ անքնին ներբողիւք գովեալ։

Է. Ան բարձրեալ ահաւոր անուն՝ համապատիւն կյորդութեանց, անպատուհաս ազգականութեանց, եւ ուրացսեանն զուգակցութեանց, անյաւելուածն լրականութեանց, ինքնիշխան համաւորութեամբ պատուասիրեալ առ հայրն հանդուգնատիպ՝ գործակցութեամբ հոգւոյն սրբութեան խոնարհեալ լինել ի յերկինից, աննուազ գոլով յընտանի փառացն, հաճելացաւ մնանել յարգանդ մայրենի աստուածածնին կուսին մաքրութեան. յորում ամենայնի զբոյն օրհնութեան ի լուսաստահման անդաստանին անարատութեան.

ընդ ամենակատարն էութեան համանեալ յանանջրպետ միականութիւն, թափանցական խառնութեամբ յաստուածութեանն ոգի բաղկացոյց զդոյութիւն չքնաջոյս հրաշապէս։ Որով անճառաբակելի երանեալ սանձայ կրթութեան զատահակութիւնս իմ հանդարտեցոյց. և կամաւ ընծայեալ խաչին՝ ամբարձաւ ծաղիկն պաղոյն կենաց ի ծայրս լուսեան անմահականն սրնկոյ. ի մահ վիրաւորեցաւ՝ աստուածութեանն անընդմիջելի ի մերաներն մարմնոյ, որով կենասցոյց զգործին պարտեաց, արարչութեանն իսկութեան ի նմին յաւէտ անբաժանօրէն ընդ նիւթական մարմնոյն վերացեալ։ Ջեալ ի վայրս խաւարային դժոխոց, եհան ըզկապուտան իւրատեղծ ի կապանաց օձաողին. և իբր ի նիբհմանէ քնոյ զարթուցեալ, յինքն նահանջեալ ըզդիմեցուածն մահու, կանդնեցաւ կենդանացաւ աստուածապէս՝ եղեալ ի յերկրէ հայն կենաց և հավիտն հօտից բանաւորականաց։ Յաւատարիմ եղեւ յաշխարհն, և երեւեցեալ նոյնութեամբ ամենեւին անեղաւորելի, որպէս եկն համայն, և համբարձաւ բովանդակ. բազմեցաւ նստաւ ի գերունական գահոյս նախնականին պարզութեան արարչական փառաւորութեամբ։ Որ խոստովանելիք աստուած բարերար և տէր բոլորից, որ գաւոն զամենայն երկիր արդար ընութեամբ յաւուրն մեծի, որ ինքն է սկիզբն և ինքն կատարած, նոյն առաջին և նոյն առյապայ, անպակաս բովանդակութեամբ Թագաւորեալ ի լոյս անմահացոյց։

Ը. Օրհնաբանեմք ընդ հօր և որդւոյ և զանբաժան նեղի բղխումն նոցին փառակից հոգւոյն սերութեան. որ ստեղծ զբնաւս և կենդանածնէ զամենայն, որ անդրտին իսկ ի բնէ համապարփակ մտութեան աշխարհական միպէ ջրջէր նկարէր և կերպարանէր ամենաւնակ ջուրքն անբաւութեան երկրատարածն ծովու՝ ի կատարումն արդեան խորհրդոյս՝ զսուրբ աւազանն լուսոյ։ Նախ արար և այժմ գործէ, գոյացոյց և միշտ կատարէ՝ արուեստս, աքանչելիս, նախաստեղութիւնս

սրբասնելոց, աղաչմունս աստուածօրհնս, զօրութիւնս զարմանասս, մարգարէս, առաքեալս, վարդապետս վարժողս կրթութեան հանճարոյ։ Օ՛սրբարարն մա՛ սուցման արեանն Քրիստոսի յարդարեաց, քաւութիւնս անձանց, առողջութիւնս մարմնոց, ըստ նմա՛ նութեան Քրիստոսի ողորմութեամբ հրամայեաց։ Ակրաեաց և զեր քան զքուր, ինքեան միայն քաւական նութեամբ նորոգեաց լուսաւորեաց. հանապազ նովին բարեգործութեամբ զօրանայ։ Վ կայեաց միածնին աստուածութեանն՝ ի հոսանն Յորդանանս, օրինակաւ սեռութեան ամպոյ ցուցաւ ձայնիւ հօր՝ ի լերինն Թաբփօրական։ Ի նոյն տիպ նմանութեան հովանի եղեւ յակոբեան տոհմին՝ ի յերկն Եգիպտոսի. յուղեգնաց ցութիւն զօրավարութեանն Յ՛ովսէփ՝ հոգմով սաստկութեան զփարաւոն ընկղմեաց։ Ջահանայս կատարագործէ, խմասատնս կազմէ, Թագաւորս զօրացուցանէ, քաւութիւնս ընձեռէ, կեանս շնորհէ մահացելոց՝ ի նորոգութիւն յարութեանն։ Նոյն ինքն է օծումն մարգացելոյն աստուածոյ. մշանջենաւոր հաւատարութեամբ ընդ հօր երկրպագեալ՝ ի պատիւ մեծութեան որդւոյ, անսահման փառաւորութեամբ օրհնեալ յաւիտեանս. ամէն։

[1] Նորին ասացեալ՝ ի խորհուրդ սրբոյ եկեղեցւոյ, ընդդէմ պիղծ աղանդաւորացն Թոնդրակեցւոց, նոր մանիքեցւոց։

Թ. Դաւանեմք՝ ի հաւատս ուղիղ և անխոտորնակ ամբողջութեան՝ համբուրիւ շրթանց ողջունեալ զկատարեալ խորան յանշնչական արձանացն՝ աստուածային բնակութեան եկեղեցւոյս շինուածոյ. որ գերազանց գոտւ և երկնի ամենազարդ բարձրութեամբ, որ՝ ի նոցին խակ յաւաքելականացն դասուց հիմնեցաւ, յաշակերտաց վերնայն խնկեցաւ, ի սպասաւորաց բանին պաշտեցաւ։ Ակիզբն առեալ կենացս այս գանձու՝ ի վերնայարկին սրահէ, խորհրդակատարն վայրէ, զոր հռ

պին աստուծոյ լցոյց, փայլեցուցեալ ի նմա զօրութիւն յաւուր մեծի պենտակոստէին. նախ զտունն բարեխառնեալ՝ յօրինակ սրբութեան կատարման շնորհի այսր եկեղեցւոյ կանխամեծար առաւելութեան, յորում ապա և ի նմին բնակչացն տուաւ լուսանորոգ բարեփառութիւն։ Ապա արիւն հզօրին աստուծոյ բաշխեալ մատուցանի՝ յաւէտ քան զ՚Աբելին մահու դուժարկու, մեծաւ բարբառով ձայնի բերկրութեան կենդանութիւն անմահութեան ի սմա աղղելով։ Քանզի ոչ է կար զօրութեան ուրուք ընդ երկնաւ յանդիման արեգական ի սպասաւորութիւն խորհրդոյ այսր ահաւորութեան ձեռնարկել, եթէ ոչ ընդ թեւօք սորին պահեցի. նա զի ոչ երկնիւք բաւականանայ այս նուէր տէրունի մարմնոյ, եթէ ոչ զայս ձեզուն օրհնութեան ծածկոյթ ունիցի. վասն զի մահու անիծիւք հեղբի այր ըստ օրինին, որ արտաքոյ խորանի այս վկայութեան զաստուածային պատարագն մատուցանէ. մանաւանդ զի պարտաւոր արեան կոչեցի, որ ոչ զանձինն օրինակ արիւն՝ յայս նուիրան ընծայեցուսցէ։ Ան՚ի սմա լուացումն՚ի մահն Քրիստոսի, զի մի յանգէտս անարգեալ աստուածութիւնն՝ ի ծանուցելումն շնախանին կրեսցէ. մի ձեռնադրութիւն՚ի պատիւ օծութեան լուսոյն, զի մի յանիծութիւնն խաբէութիւն խառնեսցի. մի և շնորհօք քան թէ ապաշխարութեամբ քաւութիւն, զի մի ճշմարտութիւնն կեղծաւորութեամբ խորամանկեսցի. մի յընտրութիւնն ապատնի՝ հաւատ, զի մի ապառնալիք հաստուցմանն զղոյցս ինչ օտար համբաւոյ գրեսցի, մի երկաքանչիւրոյ գոյութեանց մերոյ իրաւամբք կշռամբութիւն, զի մի կիսամանեայ առ մարդն նեքին և առ արտաքին՝ չարի և կամ բարւոյ փոխատրութիւնն կարծիցի յանմահ զօրութիւն արքայական որդեգրութեանն, զի ընդ լութեամբ երկրայնովս առաւելութիւն վերնոյին թագաւորութեան յայտնապէս ճշմարտեսցի. մի յայս կենդանութեան առ անեղծութիւնն սրբոց, զի աներ-

կեւանութիւն խոստացելոցն՝ ի միտս ունկնդրացն ծա-
նուցեալ հաւատացի։

Ց. Այս դէմոյ պաշտելի անշնչական եկեղեցի տայ
կեանս և մահու իշխէ, ըստ օրինակի ադամեան պըղ-
ղոյն յարմարապէս Ճաշակելի. գերազանց քան զբա-
նական յանշնչութեանն հրաշագործէ. մինչ զի կա-
տարումն ընձեռէ և նորոգ հաստատէ, վերստին նը-
կարեալ՝ ի մեղ զկերպարանն փառաց լուսոյ։ Կրեալ
եւս է տեսակ մեծութեան վերնումն կամարին սկզբ-
նաւոր յառաջակառոյց քան զբնակիչս հոգեղինացն՝ ի
նմա զօրութեանց։ Նոր իմն ընծայէ Թուիչս մարմնոյ
ընդ թեթեւութիւնս հոգւոց, պատուականին հարըս-
տութեամբ զանարգն յարդաւորեալ։ Ոչ ինքնակիր
մեղօք զաղբանայ, եթէ ոչ՝ ի մարդոյ չարաց և կամ
յանհաւատից կոխիցի։ Տիպ իմն է զարմանաւոր յաղ-
թող իմաստից մերս տեսութեանց. անբաւն՝ ի բանա-
ւորէն կառուցեալ, նմին օժանդակեալ իբր վերադոյին
յաւէտ նուաստի։ Ահագ է քան զմարդ, որքան ընտ-
րելոյն Աւելեսի յուսոյն յաղթողական. աւաւել քան
զբանաւոր, որքան զՀարուածն գաւազանն խորհրդա-
կան ծաղկեցեալ. գերազանց քան զմտաւոր, որչափ
զՀիւսիս և զՀնչեսս գետահերձ մաշկեակին սքանչե-
լահրաշ փայլեալ արուեստիւ։ Օգնութիւն պարգեւէ
կրկին ամենակատար սրբասնեալ ձեռաց մաքրաբար,
քան թէ զինապէս. մարմին նիւթական քարի և հո-
ղոյ, գոյակից հարազատ զգայականաց և սրբոց։ Իբր
զվէմն անմահ կենդանի՝ ի կործանումն է և՝ ի կանգ-
նումն. որպէս զդատաւորն ամենից հոգւոց հանդէ-
սանայ հրաշապէս աղդմամբ յանէծս և յօրհնութիւնս
նըս. իբրեւ տեսող աներեւութից զոմն հրապարակէ
և զոմն սածէ. առ ինքն կոչէ գրեալ յանուանէ իբր
զսիրող հրամանատար էիցս։ Իբր զվեառն յաւիտեան-
կան անհարուածելի է՝ ի դիմամարտից. ըմբռնէ զհո-
գեւորս իբր զհնարագործութիւն մեծին արուեստի. ան-
մեղս և անվնասութիւնս ըստ Կրիստոսի հետոյն ընդ

Թանայ, բարձր ձոխութեամբ անպատկառաբար հա-
մարձակապէս զօրէն գովելոյ գլուխ ամբառնայ։

ԺԱ. Ընկեր մեծ ունի սրբութիւն, մինչ զի զօրս
ըստ պատկերի աստուծոյ եղեն, կանոնաւ խարէ։ Յետ
յոգունոյ ընտրութեանց վարձից՝ թէ համարձակեսցի
մարդ ոք սխալեալ՝ ի գաւթիս նորին մոռանել՝ ոչ պղծի,
այլ ընդ անպատրաստից թերութեանց դժուարի. ոչ
նզովի, այլ տեղի տայ ոչ գիտողացն զննորհին զչափ.
ոչ լքանի ինքեամբ պարտաւոր իւրումն գտեալ, այլ՝ ի
մերոյ գործոյ խրթնանայ. ոչ Թողացուցանէ երկիցս
մատչել Լրմբռնութեան ոտիցն կենդանատուայ, ըստ տի-
րական անճառ խորհրդոյն. ոչ կրկին յաւուր զնոյն ցու-
ցանէ զի մի անընտրաբար նուիրանն խայտառակեսցի։
Վ չտակէտ կարեաց զօրապէս իբր անախտակիր ապակա-
նութեանց որ՝ ի մէջ չարժմանց. առանց բարբառոյ
տիրապէս հրամանաւ դատի։

ԺԲ. Նա զի և տագան լինի է մաքրական, կրկին եր-
ջանկական, ՝ի հեղձմանէ կենցաղոյս ալեաց պահապան.
ոչ բաժնօք անբանիւք գազանաց գաստւք և սակաւ
մարդկամբ, այլ ընդ երկրայնոցս և զվերինսն յինքն հա-
ւաքէ. ոչ յալիս խառնուածութեան բերի, այլ՝ ի բարձրու-
թիւնն երկնի համբառնայ։ Իբր զաշակերտ հրահան-
գեալ հոգւոյն աստուծոյ փախչի՝ ի նենգութենէ. ոչ
՝ի բողոք մահու մարմնոյ հարուածոց, այլ՝ ի կենացն
աւետիս ըմբռնեալ ածէ. ոչ Նշխաւ ձեռնարկեալ գործի,
այլ հաստողին հրամանաւ չինի. ոչ Սոսկաց ընդ Ի-
սելիէլ, այլ միածինն աստուծոյ հոգւովն սրբով զան
հանդերձէ. ոչ յատաչարժ հանապազափոխ, այլ մշտա-
կատոյց հիմամբ անսասանելեաւ զան հաստատէ։ Վարձ
ձեալ իբր զոսպանակին անխօս փայտեղէն մածեալ տախ-
տակօք առանց զգայութեան տեսողականաց մեզ ա-
ռաջնորդէ. որպէս կերպարան անքանակ Նինէն յառաջ
հետեւեալ՝ ի հանդերձանս լուսոյն կենաց տեղի պատ-
րաստէ։ Ընդ Ոգիէլի անտուսատ սատակէ, եթէ ոչ խա-
չապէս յոգի բերիցի. սպանանէ վատնեալ վազվազակի

առժամայն, եթէ անառնայինն լծակցութեամբ երկրաչափաբար գետնակոխ սալիւք՝ իբր զանօթ ինչ ձեռնադրնին բարձեալ տանիցի: Ա՛ լեղուաւ մարմնոյ, այլ բանիւ հրեշտակաց խօսի. ոչ ունկան գոյականութիւն, և արագապէս մոռանալ լսէ. ոչ ձայն կերպաւորականն բարբառոյ, և զպատգամն գործոցն Յիսուսի հաստատէն ազանց պատմեալ հոչակէ. ոչ խաղալեաց չարժականութիւն, և աստուածայնով ինն կենդանութեան հագագաւ ազդէ: Ա՛ ոսկերաց և ջլոց յօդուած, և երկուք հաղարօք կանդնօք լայնութեամբ՝ իբր զգունդն անհամար բարձրեալն աստուծոյ՝ զկենդանական զօրուն գումարտակ հեբրայական վառեալ ամբոխին, և այժմ ընդ նոսին իբր զանմարթս ի սրբութենէ՝ զմանս ախտիւ մեղանաց չերեալս հաստատեալ չինքեանէ հեռի, ուղեկից ապրեցելոցն ի տաժանաւոր աղխասարկութենէն: Նայն իսկ հոգիքն աստուծոյ մարմին եղելոյ՝ անուամբ այս վիմի նշանակեցաւ, պատառմամբ կողին զենաւս արբուցեալ: Ա՛ արեան երակաց ընթացք, այլ լուսոյ վերնոյն շառաւիղք թափանցանց միութեամբ զոյն կենդանացուցեալ նորոգ պաշտպանէ. ոչ Սողոմոն կամ Օ՛օրաբաբէլ մնկհանացուաց ոսոխիկանութիւն, այլ ամենից ունողին իմաստ զսա գծագրէ. ոչ աննուիրական հասարակաճաշակ իւղով առ ի Յաւրայ պարարի, այլ ահաւորին արեամբ և փառօք մեծին օծանի: Ա՛ աստն երկրային նիւթոյ՝ քան թէ մարմին երկնային լուսոյ աստուծոյ զօրին որդիս հնչեալ ձեռնադրէ, ոչ կենդաղոյս յերկրէ յղացմանէս, այլ արքայութեան երկնից ժառանգս կրթէ. զ՛ի ծոց իւր գրկեալն գոգոյն Աբրահամու ընծայեցուցանէ: Փեսայ Հարսնութեան սորա որդին աստուծոյ կենդանւոյ, օրհնութիւք հնձոյից սորին հայրապետացն գումարք: Այն ինքն մուտացումն առնէ այսակիր բարձանցն կամարուցութեան, զի զերկնայնոյն աստուծոյ ունի զծանօթութիւն. օտարութիւն է ամենայնիւ դիցն դրօշելոց, զի ի համօրէն քարինս սորա Քրիստոս երկրագիւ.

քակտուծին է յայտնապէս ուրուական ըղձիցն անտա-
ւաց, զի ի բնաւից մայրից աշխարհի նմանութեամբ
կենացն փայտի ի սմա տէրն նուիրի. խորտակուծին է
համայն դիւապատիր յուղութիցն արձանաց, զի քարն
գովեալ կարկեհան ականքք և վիմօք կենդանեօք այս-
րէն հաստատի:

ԺԹ. Այս յարկ էքինաղ և աստուածընկալ ազատ է
միանգամայն ի յամենուստ ծառայութենէ. ոչ օրինակ
վերնոյն Սիոնի, քան թէ ձշմարտութիւն նմին ճանաչի.
ոչ կուսակրօնութեանն կապաւ բագին և կամ ընծայ օ-
րինին տեղի պատուասիրութեան, այլ տէրունի բարերա-
րութեանն պարգեւարան ի միոջ հանճարի: Ոչ սա
սանիկ երբեք յայլ իմն կերպարան ձեւոյ փոխարկեալ,
այլ ի նոյն շուք փառաց մեծապէս ընդարձակի. սոյն
ինքն և երկին երկնի՝ յերկրի լուսապայծառ կերպիւ
հոչակի: Ոսպես չէ առանց հօրն Քրիստոսի, և ոչ ա-
ռանց այսր մօր արգանդի յոգի կատարիլ: Ընտուն շրջի
անքաւանդակելին, եթէ ոչ ի սմին տան տաղաւարեսցի.
ոչ ունի տեղի գլխոյն հանգստեան տէրն բոլորից, եթէ
ոչ ի յայս կայարան կենաց մտեալ ագանիցի: Քան ի
համար վերնայինն երկնի՝ ի յայս հիւթաւոր բնակու-
թիւն առաւել պարծի, անբաւութիւն աստուածեան
լուսոյն, որպէս զդէմս մարգարէին և զօրինակս սորին
ծածկեցեալն, որպէս փախեան ի փառաց երեսաց նորին,
և նմանութեան սորուն՝ որ ի տաճարին՝ ոչ հանդարտ
տեսին, ի ոտն հանդիսի մեծի գովեսի, և ի բանա-
կանացս գաւսուց խմբեալ նուագի. աստ օրհնի կրկին
բաղձանօք, քան ի դրախտն վայելչական:

ԻԹ. Այս մայր հոգեւոր երկնաւոր լուսաւոր, քան
թէ երկրաւոր չնչաւոր մարմնաւոր, զիս գգուեաց որ-
դի. կամէն ասեանց սորա արիւնն Քրիստոսի: Եթէ
աստուածածնին իսկ պատկեր զսոյն ոք գրեսցէ, ոչ անօրի-
նի: Իբր զնշան խաչին փրկութեան զօրութիւնս զարմա-
նացանս և արուեստս բազմօրինակս կատարեալ հրաշա-
գործէ. քեմ՝ ահաւորին առեղի՝ ի սմա հաստատեալ

տեսանի. սակաւ խորհեաբարոյիցն հերձուածողաց մի-
լեգնաճառ բերանք կարկին: Լուծի և քարինս իմն իմա-
նալիս և բանաւորականս, որով զդաղանամիտս անմա-
քուրս բացուստ ի բաց հալածեալ տարադրէ: Ծնա-
նի և աստուածս ոմանս եղականս՝ պատկերս մաքուրս
միոյն աստուծոյ Բրիստոսի: Լուծի և զդիրն իւր ընդ արե-
ւելս՝ ի տեղի խոստման քնակութեանն մերոյ առաջնոյ.
ձեռամբ իմն ցուցանէ յայտնապէս զդալստեանն աստու-
ծոյ հաւիտ, զիայլականն առակ ախրական ի դէմս բե-
րեալ մեզ վարդապետէ, զփրկութիւնն ի յելից անտի
ծագման արուսեկին քրիստոսեան երեւմանն ի վերջ
նոյմ աւուրն արարածոց երկրի թարգմանէ: Ցաւս
հալածէ, ախտաժէտս բժշկէ, դիւաց բռնութեանց
զօրէ: Ընդանդ որովայնի սորին աւազանն կենդանա-
բար. ի պար հարսանեաց սորա դասք առաքելոցն:
Ընկեան ճոխացաւ բարգաւաճեալ երանութեամբ,
մինչ զի նոյն ինքն փրկչին անուամբ վայելչապէս յոր-
ջորջեցաւ. ախրամօրն լուսոյ կոչմամբ ի մերձաւորաց
միածնին ձայնեալ կնքեցաւ: Ծփելոց մեղաւորաց նա-
ւահանգիստ հանդարտութեան, խրախճանարան վեր-
նոյն դասուց, բժշկարան անախալելի տարակուսեալ
պարտաւորաց: Երրորդութիւնն անպատում ի սմա
փառաւորի օրհնեալ յամենայնի:

ԺԵ. Իսկ եթէ ոք ձեռն չարութեան ի վերինն ար-
քայութիւն յանդգնաբար համբառնայցէ, և զիւա
ինչ մարմնաւոր և կամ հնարք մարդկային և կամ ա-
րուեստ երկրակենցաղ զահմանեալ աւանդութիւնս
առ ձեռակերտս եկեղեցի վարկանիցի, և ոչ պարգե-
առաւել կենաց և ակնկալութիւն աստուածայինն և
հոգւոյն սրբոյ յայտնեալ լուսանորոգ նախադրութիւն
և երախտեաց բարձրելոյն ամենատուր լիականութիւն
և կամաց արարողին խնկաւորեալ խորհրդարան և ա-
ռաքելոց ձեռինն աջոյ բարեհանճար հիմնարկութիւն,
և միանգամայն ասել՝ դուռն երկնից և քաղաք աստու-
ծոյ կենդանւոյ և մայր կենդանեաց ազատ ի պարտեաց

և ձշգրիտ տեսակ կերպի երեւակիս բանականի, իմա՛ նալին՝ խորհուրդ հոգւոյս, և շօշափելին՝ պատկեր մարմնոյս, և սրբութեանցն անդանձառիւ գերազանց եալ նոր սրբութիւն և քրիստոսեանն նշանաւ պայծառապարծ պսակեցեալ, զայնպիսի ոչ խոտովանողն մերժէ յերեսաց իւրոց հայրն ամենակալ՝ ի ձեռն բանին իւրոյ հակի, բարձեալ՝ ի նմանէ և զաւանդ շնորհի հոգւոյն փառակի. փակեսցէ զդուռն կենացս այս առագաստի յանդիման նորին: Իսկ մեք զօրս գրեցաք՝ ամին և վկայեմք, հաւատացեալ սրտմ կարդեցաքս, յանուն և՝ ի փառս ամենակալ Երրորդութեանն և միոմ աստուածութեանն, յաւիտեանս յաւիտենից. ամէն:

Աչն իմ հաւատ Երրորդութիւնն, և այս՝ ի մայն իմ լուսափառ խոստովանեալ դաւանութիւն:

ԲԱՆ ՀԶ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՅՏՈՒԾՈՑ

Ա. Ընտուած ողորմած, բազմագութ, հզօր, ահաւոր, մարդասէր, օրհնեալ, կենդանի, անձառ, որ ոչ ելանէ երբէք ըստ բան քո իր անձեռնարկելի, որ և մնայ է անհնարաւոր. քո է հաստուցանել պատուղ քաղցրութեան ընդ փշոյ խստութեան, սկզբնահայրդ այսմ նորոգ և զարմանաւոր կանոնաց կենաց. քանզի բարի առնել առեալդ և աղօթս՝ ի վերայ հալածչին, և փրկութիւն հայցել խոցողին, և ապանողին ներումն խնդրել՝ ի քէն ընծայեցաւ պատուղս այս հրաշից, որոց քաղցրութիւնն անձառ է քան զօրինակ և բարեբառնեալ կամաց քոց ախորժելիք և գովեալ շրթանց քոց ճաշակելիք. հոգի երեսաց և զօրութիւն գեղոյ մերոյ

տէր Քրիստոս օրհնեալ ՚ի բարձունս : Այլ մարդք երկբանծինք և ամենաւլուկք՝ և բարեմասոյց ձեռաց չարիս դարձուցին . իսկ դու լոյս և տուիչ լուսոյ , ոչ լսես աղնձս , ոչ ախորժես չար , ոչ կամիս կորուստ , ոչ ըղձանաս մահ , ոչ յուզիս ՚ի խռովութենէ , ոչ սիրիս ՚ի ցասմանէ , ոչ հարկիս ՚ի բարկութենէ , ոչ սիթանաս ՚ի սիրոյ , ոչ այլայլիս ՚ի գթութենէն , ոչ փոխոխիս ՚ի բարութենէն , ոչ թիկանայ չքնումն և ոչ երեսաց անդրադարձութիւն , այլ ամենեւին լուսաւորութիւն և նկատումն փրկութեան :

Բ . Եթէ քաւեցուս , կարող ես . եթէ բժշկես , զօրաւոր ես . եթէ կենդանացուցանես , բաւական ես . եթէ շնորհես , առատ ես . եթէ ողջացուցանես , հնարաւոր ես . եթէ պարգեւես , ամենալի ես . եթէ արդարացուցանես , ամենաբուեաստ ես . եթէ միխիթարես , ամենիշխան ես . եթէ նորոգես , ամենակալ ես . եթէ հրաշագործեսցես , ամենաթագաւոր ես . եթէ վերստին հաստատես , արարիչ ես . եթէ կրկին գոյացուցանես , աստուած ես . եթէ հոգաս ընդ մեր , ամենատէր ես . եթէ կորզես ՚ի մեզաց , այցելու ես . եթէ չարժանեացս ընձեռես , օրհնեալ ես . եթէ յորսողէն զերծուսցես , փրկիչ ես . եթէ զեղցես ՚ի քոյոցդ ՚ի մեզ , հարուստ ես . եթէ նախ քան ՚ի մէնջ խնդրելն դու կարկառեսցես , անկարօտ ես . եթէ լայնես ձեզուքեանս , անդորրիչ ես . եթէ զվերջացեալս կոչես , խնամակալ ես . եթէ զսասանեալս հաստատես , վեմ ես . թէ պատքելոյս արբուցանիցես , աղբիւր ես . թէ զծածկեալսն երեւեցուցանես , լոյս ես . թէ զօգտակարսն իմ ծանուցանես , բարի ես . թէ զլիծան անտես առնիցես , երկայնամիտ ես . թէ ընդ փոքուս ՚ի դատ ոչ մտանիցես , բարձրեալ ես . թէ ծառայիս ձեռն մատուսցես , ստացող ես . թէ աջովդ քո պաշտպանեսցես , յանձանձիչ ես . թէ վհատելոյս զարման մատուսցես , կերակրիչ ես . թէ զանգեաս պարարեսցես , վարդապետ ես . թէ զդիմեալս առ քեզ ընկալցիս , ապաւէն ես :

գ. Լը արդ քո են այսոքիկ, տէր ողորմութեան, ոչ միայն գրեալ, այլ կատարեալ և գլխաւորեալ, նախնի նահատակդ համբերութեան վկայից, որ վասն խնդ փրկութեան հանդիսացար զօրապէս յաստպարիսի ճաշ կատուն, զի կակղեսցես զկարծր բռնութիւն մարմնոյս գոռոզութեան վարժմամբ կրթութեան չարչարանացն վտանգի. և յանպարտակիրդ մարմին չափեալ զնուաթեանս մերում զաժանականն տապնապ տուժի, զի զգթութիւնդ որ առ մեզ՝ արդեամբք ցուցցես ի քեզ օրինակեալ, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ՀԱԻ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՒԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. ԼԻ քանզի օր է օրհնաբանեալ և լուսանորոգ կշռութեան երկուց ընտրութեանց արարածոցս սաստանութեանց՝ յեզանակելոյ յայլ իմն էութիւն երկնակենցաղ անփոխադրելի, ամբարձելոյն խոնարհութեան և կործանելոցս վերբերութեան, սարսափելի Լերբաթու մեծի պատեքիս, յորում եկն եհաս ժամ բարեպատեհ գրել ինձ զայս նուագ ձայնի հեծութեան զուարճախառն երկիւղիւ, ահա ըղձալի համարիմ ասել աստանօր ի քոյոց այտի՝ զոր ընդ իմ կրեցեր, աստուածբոլորից։

Բ. Կացեր յատենի քում ստեղծուածոյն իմովս կերպիս, ոչ խօսեցար տուիչդ բանի, ոչ բարբառեցար հատուիչդ լեզուի, ոչ ձայն արձակեցեր սաստանիչդ երկրի. ոչ մռնչեցեր առիւծակերպիկ փոդդ մեծութեան, ոչ երախատեաքն քո յանդիմանեցեր և ոչ չարեաք նոցին ըմբերանեցեր, ոչ մատնեցեր ամօթոյ զմատնիչն ըղ

քեզ տանջանաց մահու, ոչ ի կապեն զքեզ դիմադարձեցեր և ոչ յապտակեն զժուարեցար, ոչ ի թքեն Թշնամանեցեր և ոչ ընդ կափեն երբեք խաչվեցար, ոչ ընդ կատակեն սրամտեցար և ոչ ընդ խաղ արկանեն երեսս փախեցեր։ Սերկացուցին զզգեստս պատմուճանին իբրեւ ի տարբ, և դարձեալ ածուցին իբր անփրկանաւոր ըմբռնեցելոյ։ Լթէ ոչ էր արբեալ կրկնակի քացախ զանգեալ ընդ լեղւոյ, ոչ էր հեղեալ մաղձն իմ մեծերեալ նախնի դառնութեանն. ճաշակեաց վհատութեամբ և արգել անդէն տարակուսանօք, առին մոլեգնաբար և դարձեալ մատուցին անպատկառապէս։ Գանիւ հարուածոց յետին անարգութեան ի մէջ խառնիճաղանջն ամբոխի դատապարտեցին, ծուռն կրկնեցին նախատանաց և պակ եդին արհամարհութեան։

Գ. Ո՛չ եւս ն հանգիստ կենդանարարիդ, եթէ ոչ զգործի մահուն կրել քեզ պատրաստեցին. ընկալար իբր երկայնամիտ, առեր իբրեւ զհեզ, բարձեր որպէս համբերող, ստանձեալ իբր զպարտական զփայտն վըշտաց. որպէս զծաղիկ շուշանաց հովոյց՝ ուսում բերեալ զքէն կենաց, զի յարհատ բաց գիշերայնոց զիւրակերտս գահուսրակս մարմնեղէն գոյութեանս պահպանեսցէ ի դատապարտութենէն վայրի իբր ի խրախճանս խնճոյից։ Ձանկն արտաքս իբր զողջակէզ. կախեցին իբր զնոյն Աբեղայ ձգեալ զեղջերացն, տարածեցին ի սեղան խաչին իբր զպատարագ, բեւեռեցին որպէս չարագործ, սղոցեցին իբր զպատուհամբ, զնաւ զաղուէիւնդ երկնաւոր իբր զաւազակ, զանկապուտ մեծուէիւնդ իբր զտառապեալ, զառ ի քրովբէից պաշտեցեալդ իբր զքամահեալ, զահմանդ կենաց իբր զարժանաւոր սատակման մահու, զաւետարանիս նըկարիչ իբր զհայհոյիչ օրինին, զտէր և զկատարումն մարգարէից իբր զհամառօտիչ գրեցելոցն, զճառագայթդ փառաց և զկնիք անքնին խորհրդոյդ հօր իբր զներհակ ծնողիդ կամաց, զօրհնեալդ իսկապէս իբր

զատարագելոյ, զկապոյ օրինին լուծիչդ եբր զայր ՚ի նը զովս գրեալ, զՏուրդ ծախիչ եբր զհերքեալ նմին կալա նաւոր. զահաւորդ երկնի և երկրի եբր զհաւատոյ պատժաւոր, զ՚ի լոյս անմատոյց ծածկեալդ եբր զՏո զածին ըմբռնեալ։

Դ. Ո՛վ քաղցրութիւնդ և երկայնամիտ բարերարու թիւնդ ողորմածիդ գԹուԹեան, որ վասն ապաիտաւ ուր և անօրինեալ ծառայիս տէրդ բոլորից զայս ամե նայն կամաւորապէս և հաւանողական հաճուԹեամբ՝ կատարեալ մարմնոյդ միուԹեամբ ՚ի քեզ ընկալար, և մինչեւ ՚ի քնարան շիրմին տապանի անպակաս ՚ի լուս Թենէ ամբողջ նոյնուԹեան աստուած անքննին՝ զնոյն կրեալ նախատինս անճառ համբերուԹեան, յարեալ կենդանի ինքնիշխան բարձրուԹեամբ լուսոյ, աննուազ մարմնով և անԹերի աստուածուԹեամբ։ Օրհնեալ փառօք, գովեալ գԹուԹեամբ, բարեբանեալ միշտ ողորմուԹեամբ, յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ ՀՐ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱԱՏՈՒԾՈՑ

Ա. Եւ արդ անկեալ յերեսս հողանիւԹ կերպիւս, ՚ի վայր խոնարհեալ ծնրադրական երկրպագուԹեամբ, զբարեգործիդ ողորմածուԹեան զկենդանարար ոտս համբուրեմ, զայս օրինակ մաղԹանայ մեծիդ ընծայե ցուցեալ։

Բ. Աղաչեմ զքեզ, միայն խնամակալ, մարդասէր, գԹած, կեցուցիչ, հզօր, այցելու, պաշտպան, մի ու նայնասպի վաստակք աշխատուԹեան փրկականդ կրից մարդացելոյդ վասն իմ աստուածոյ, մի սակ եղկոյի քըս-

տանցն կաթուած խառնեցեալ արեամբ ի մանուածեանն աւուր գիշերին. մի լցցի տուեբացեալ լուսոյդ երախտիս, զոր ձրի և առանց փրկանաց Քրիստոս ացելսմն ինձ պարգեւեցեր, մի ընդհատցին շնորհացդ աւետիս, զոր կողից քոց կայլակք նորոգեցին. մի անշահ եղիցին կրկդ պատուդք, զոր կարօտութեանն ի մեմ մատուցեր. մի պարծեցի բանսարկուն վանեալ՝ զքո սուցեալս իւրացուցանել. ահա յաղթեցեալ կամք քո՝ ըղձից չարին, վերստին ապչեցի միանգամ զարհուրեալն, կրկին պարտեցի ի սպառ դատեցեալն. մի անհայերը զաղատարարդ քո բան, որ զատեղծեալս քո քեզ ընծայեալ՝ վերստին առ քեզ դարձուցանէ։ Օ անճառն սրարեր բարերարութիւն յանակնկալ ժամուն յանահատութեան, յորժամ բնաւ իսկ կարեալ և օտարացեալ էր կենդանութեանն շարժողութիւն. մեռալ անմահդ և զմահացեալս նորոգեցեր. եթէ ըղ կանոն համաձեւութեան օրինին փոխեցեր, արդ ըղ դիւրինն և զհեշտականն և զեւս հնարաւորն մի արգելցես, սկզբնաձիր ողորմածութեան բարեգութ օրհնեալ և երկայնամիտ Թագաւոր։ Ընդէս բանիւդ ա մենաշնորհ, որ զդիւցութիւն լուսոյն ստեղծեր ի նախնումն աւուր, և վաղվաղակի փոփոխեալ գոյացդ ի լուսանդր. և փախանակ զի ես ոչ խնդրեցի հետեւել լուսոյդ, դու եղեցս ինձ յայց՝ ճառագայթ ծագման հայրենի կերպիդ, և կոչեցայց առաջի քո ծառայս ճշմարիտ պարտ՝ ողորմեալ շնորհեալ առ ի քէն. ոչ է ժամանակ յերկարաձգութեան առ ի զպարտսն հատուցանել, ահա շնորհեա ինձ տառապելոյս զերեսս քո՝ լցցի ի խաւարի սրտից վհատելոյ։ Ընդել և կնքեա զընծայմունս եղիցին, որ միշտ զեղուն բարիքն հոսեալ ի յուշոյս իմ սեռութենէ. պահեա ինձ զշնորհ ամենապայծառ գանձուդդ միացականաց, որով պատուական գտեալ՝ քո անուանեցայց, պաշտպանեալ ի քէն, անհամման բարի։

Գ. Ընդ ողորմեա ինձ, գթած, ազաչեմ զքեզ ողորմեա ինձ, հզօր, կրկին ողորմեա։ Այ փոխարկեր երբ

կուն ցաւոց ընդ չարեաց իմոց, բարիդ ամենեւին. մի բառնար ի վտանգելոյս զառ ի քէն պարգեւեալդ շնորհ, մի կապաներ զիչխումն ամենօրհնեալդ հոգւոյ, մի լուծաներ զնեկեալ զինեք արքունական պատկերիդ։ Մի յայտնեսցին փուշք մեղանացս ի սրբութիւնս մըտացս. մի խլեր զկապ միութեան ընդ քեզ սիրոյն սնոտութեան, մի մերժեսցես զարուեստ զօրութեան լեզուոյս յարմարութեան, մի պակասեցուցաներ զաջըզաւած աջոյս առ ի գլուսոյդ մասունս բաշխել։ Մի գրեր ի գպրութեան կենաց մատենիդ զմահուն պարտիս, մի պահեր, մի ինձ համարիր, մի յիշեցուցաներ, մի ամաչեցուցաներ, մի նախատեր, մի ոտն հարկաներ, մի արձանացուցաներ զմեղկութեանդն, մի ամբարեր զկորստեանդն, մի իբր գտեալ իմն ամբաստաներ։ Մի յարուսցես ընդ իս զձառն անիծից, մի արձակեր ի յիս զաղաւթ վհատուցն, մի ընծիւղեր զձաղիկ մեղացս, մի բերցես ընդ առաջ զնամակ պարտուցս, մի արտաքերեր զէութիւն պաղտն։ Մի թըլւեսցես ի ճիւղս երկրատեղծ մատանդդ զդիւս գործոցս, մի մատուսցես բան ընդդէմ ահեղ զանօրէնութիւնս իմ յիշատակել, մի մատնեսցես իմոյս կամաց զաւանդս հոգւոյս վարել ի գերութեան, մի ասասէն զիս փառաւորեր՝ զի անառանօր գատապարտեսցես, մի նուաղութեամբ այսր անցաւորի զյաւիտենական բարիսն տուժեր, մի՛ ի սակաւուստ այսմ ժամանակի զանվախճանելի զփառան չափեր, մի ընդ հովտիս վշտաց հեծութեան զանախատական զկեանդ գրաւեր, մի ընդ ստուերի այսր մահութեան զանճառելիդ լոյս փոխանակեր, մի զերասանակ մտացս լքցես՝ քոյ արտուղի հետս հետեւել, մի զկամուրջ կենցաղոյս գրեսցես ինձ հանգստեան բաւականութիւն. մի զհովիտ հանճարոյս ստուերական պահեր ի հանգերձեալն ինձ հրապարակել։ Եթէ ամբարես զառանց համարոյ գործոցս իմ չարիս, մեռայց կենդանւոյն. եթէ չտեմարանես ի սրտի, աստատին կիզեալ անբոց այրեցայց. եթէ

քննեսցես զանօրէնութիւնս, առանց յանդիման քեզ լինելոյ ի սպառ հալեցայց. եթէ անկակից ինձ Թողցես զվեզան, ի նոսին վաստակ մաշեցայց:

Դ. Ակնարկեա, միշտ զօրեղ ամենակարող, փախնուլ չարութեանցս որ յիս, զի բարիդ քո եկեալ փոխանորդեսցէ. հրամայեա, գթած, խնամակալ, գովեալ, լաւս անշէջանելի, զօրութեամբ անսահմանելեաւ, զի նոր հաստատեսցի գոյութիւն բնութեանս մարմնեղէն յարկի անդամոցս. յորում հանգուցեալ անլքանելի բնակեսցես բազմակալ սիրոյ տէնչանօք՝ միութեամբ հոգւոյս իմ ընդ քեզ. զապականութիւն մեզայս մերժեալ ի սպառ՝ յանարատութիւն զիս պատրաստեսցես ամենակեցոյց Թագաւոր անմահ տէր Յիսուս Քրիստոս, օրհնեալ յաւիտեանս, ամէն:

ԲԱՆ ՀԹ.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Յիշեա տէր, տէր գթութեանց, սիրողդ իրաւանց, աստուած ճշմարիտ, նայեա վերատին ի քնութեանս կերպարան միշտ սխալական. զննեա ինձ դարձեալ զամէնընթաց տարածմունս ելից արեանս չարժողութեան. բժշկապէս մատիր աչսանել, զի մարդ եմ հաստատեալ մոռաց խակութեան թերի խորհրդոց յայն ինչ, զոր գուա խակ վիպեցեր աեսողդ ոչէից՝ միայն գու անմահն աստուածեան խաւարի: Ապա իրաւունս է գրել ինձ ընդ մեզուցեալն մարդկօրէն վերիպանաց սխալմամբ պարտեալ կրկին իբր վերկրածին մահացու մարմին, քան բանիդ քումմ սուտ երեւել. քանզի արգարեւ պիտակ խակ ես, թէ չար է արարն և ընդա-

բայս չարութիւնն մեր, և ոչ փոփոխին խորհուրդք մեր յաւիտեան, քան հոգեհանճար իմաստնոյն կանխաղեկայց առակիւ:

Բ. Թերթեւացոյց զաստկութիւն տանջանացն, որ պատրաստեալ և մնայ ինձ՝ արհանել զսրդիս գեհենին զարդ մահուն յաւիտենականի. բարձ զամօթոյս պարտիս, որ պահեալ է յայտնել Քրիստոսական իւրոյն առեներն յանդիմանութեան: Խրատ խաղաղութեան յաւաչապարգեւ ողբմութեամբ քո ընծայեցո. զի մի անտանելիքն ահաւորութեան՝ ի ցոյցս ինձ եկեալ կերպարանեսցին, անյոյս ապշութիւն ընդ կենաց զղջման առաջի կարգեալ, դատաստանն ահաւոր, անկաշառ և անխաբելի դատաւորն, ամօթն սոսկալի, կշտամբանքն սարսափելի, յանդիմանութիւնն անփախչելի, տագնապն անճողոպրելի, պակուցումն անխրախուսելի, դողումն անվճարելի, լալումն անսփոփելի. կրճտումն ատամանցն անբժշկելի, ապականութիւնն անողջանալի, անէծքն սարսափելի աստուածային քո բանիդ, փակումն դժոխոյ և արգելումն ողբմութեանն: Որ ընդ գալաթեն երկնի և ընդ երկրի դղրդեն ընդ կարծրութիւն յաւտակիս, քան կատակելոյ կոհակաց խաւարութեան ծովու իբր փախատեան կերպ ցուցանել, մի զմիոյ հետս խափանեն կասեալ յերկոցունց. և ատամանեալ սատանեալ լայնատարած գետնոյս Թանձրութեան՝ ի հիմանց անտի, ընդ ուժգնակի բախման Թնդելոյ ներքնային խորոց հարթել զերկինս, և հալեալ հրդեհին բնութիւնք վիմաց և ամենայն տարերաց գոյից. պայծառն երկինք յանեղծ փոփոխութիւն, և յեզանակին արարածք տարերօք իւրովք՝ ի նորոգ նմանութիւն: Օ՜ածկութիւնք գործոցս հրապարակին և աներեւոյթք կրկին մեր յայտնին. վարք կրօնից ներդործեցելոց՝ ի մարմինս մեր նկարին. Թագաւորն երկնից յաւուրն նատի, վճիռ հատուցմանն՝ ի ձեռին իւրում: Ահա վայ ինձ եօթնից անգամ կրկին եղկութեամբ, քան չափոյ կշռութեան այսր համարոյ, որ զանբաւու-

Թիւնս Թուոց պարագրէ ։ Օ ինչ գործեցից ողբալիս հոգի յայնմ մեծի աւուր վտանգի. քանզի սաստիկ է յիշատակն իսկ յառաջեալ քան զհանդիպումն. զոր ո մըն մարգարէ զօրինակին նմանուԹիւն ի դէմս բերել լով, զձեռ տագնապի անղերծ փախստեանն նշանակէ ասելովն. զօրօրինակ եԹէ փախուցս ոք ի ձեռաց առիւծու և պատահեսցէ նմա արջ, և փախուցս յերեսաց արջոյն և մոռնիցէ ի տուն և յեցուսցէ զձեռն իւր ի յսրմ, և խածանիցէ զնա օձ. և դարձեալ կըրկին սաստկացուցանէ առ նոյն կերպարան իւրն զտեսիլն քառմեալն. ոչ ապաքէն, ասէ, խաւար է օր տեառն, օր խաւարայ և մԹոյ, օր ամպոյ և մառախղոյ ։

Գ. Յորժամ հրեշտակն պահպանողական կենակիցս հղօր ոսոխիան իրաւամբք ամբաստանեսցէ, և հա տուցանողն ահաւոր արդարուԹեամբ յանդիմանեսցէ. սպասաւորք Թագաւորին առանց խնայելոյ խաւճատեն, զմանս ի կեանս հրաւիրեն և զմանս յամօԹն դատապարտեն. կիսոց դէմս լցեալս ծաղոս ցուցանեն, և ինձ ահարկուս և քառմեալս երեւեցուցանեն, ոմանց պակս լուսապաճոյճս մատուցանեն, և այլոց կորուստ մահու բողոքեն. արդարոցն ձայն աւետեաց, և ինձ գոյժ անվախճան վշտաց ։ Յորժամ առ բարւոյն՝ մահու յաղԹուԹիւն ի սպառ մեռանի, և ինձ չարագործս կրկին յարակայի. ուր գրանն բախել ոչ ինչ ազդիցէ, վճար եղեալ գԹուԹեանն առ նս ։ Յորժամ գպրուԹիւնք հրաշէցն զարմանալեաց, որ են ծածկեալքն յայժմըս հասարակաց վարուցն սեռակք մարդկային բնուԹեանս գործոց. յաղագս որոյ եղեն գոյուԹիւնք ամենայն էից, յիւրաքանչիւր մարմինս անպակաս գլուԹեամբ իսկոյն երեւին. և խորուԹիւնք անճառիցն հնչեցելոց յիմաստից աստեացս առաջի աչաց մերոց կերպարանին ։ Ուր այժմ չահավաճառուԹիւնք ողբոց և արտասուաց զերկինս գրաւեն, և անդ երբ զապաժամն ընդունայնուԹիւնք արհամարհեալք լքանին. հառաչմունք հեծուԹեան ոչ կանխաւ աստի առա-

քեալ, չէ երբէք գտանել անդէն. ողջմտութիւնք ճըշդ դով սերմանեալ, ոչ պայծառ վառմամբ գնան առաջի: Ալր տապանն նախայանգիկն և կտակարանն տիրանալ գիկն և նշանն ահաւոր այժմուցս՝ յանդիման եղեալ մեծաձայնս գտտախազեն. յորում ստկալն վայրկ ոմն զսխան կորդուածեան հայրենի և ոմն զնորանն վկայ յուածեան անտեսիկն և ոմն զարիւն մեծին աստուծոյ ամբաստան իմն իրաւացի առաջի իմ տարածանեն: Ո՛տանջանարանն բազմապատիկս անձամբ անձին առ աէն իսկ պատրաստեցի, զնաւրդ մխիթարեցայց հաւմառօտեալս յուսոյ. զի եթէ զօրքն լուսոյ՝ դասուք արդարոյն, որ փառաւորեալքն են երանուածեամբ, սարսեն դողալով, ոչ բաւեն բերել զահաւոր տեսիլ երեսայ մեծ դատաստանին, ես եղկելիս՝ աւանդակորոյս սատակման որդիս ո՞ր երեւեցայց. որ ոչ միայն չեմ պակեալց, այլ և պատուհասն իմ անտանելի և կոխատան անպատեալ:

Դ. Ալ արագեա, ամենապարգեւ զօրութիւն անճառ, ձեռն փրկութեան ի կորստ գերելոյս. զի օգնեալ ի քէն՝ դարձայց միւսանգամ ի դրանց դժոխոց, ա մենապատրաստ հանդերձեալ ամենեւին անվտանգելի պրծեալ ի պատժոց. սատանօր տեսեալ մտացս խմաորիւ զապագային գխզուածս, բաւականացեալ ի լուր երկիւղն ի տապնապէ տանջանաց՝ ահին համբաւով, կամօք քո բարեաց զերծեալ ապրեցայց. և մի մատնեցայց կորեանցն առիւծուց, որք խնդրեն ի քէն զիս ի կերակուր՝ ծախել ատամբքն գազանութեան. զի զօրովքն մահուն լցուցեալ՝ զատտուստ պարարեալս անդ ձգեալ հալեն, ուր անսպառ պահի ճնացուած մեծերիցն ի ծախումն յաւիտենից: Ո՛չ դու միայն բաւես կորզել ի ժանեաց սատակման ի կեանս և յերանութիւն, բնաւից ապաւէն Թագաւոր լուսոյ տէր Յիսուս Քրիստոս, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ Զ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ՏԻՐՈՒՀԻՈՑՆ

Ա. Եւ արդ՝ ի վերայ այսքանեցայ յուսահատու-թեանց և ահարկու սրտաբեկու-թեանց, պակուցա-նողական սասակու-թեանց աստուածային բարկու-թեանց տագնապել ոգւով Թախծու-թեան՝ ի սպառ, աղա-չեմ զքեզ սուրբ աստուածածին. հրեշտակ՝ ի մարդ-կանէ, մարմնատեսիլ քերովբէ, երկնաւոր արքայու-հի, անխառն կոյսեւ զօդ, մաքուր որպէս լոյս, անշաղախ ըստ նմանու-թեան պատկերի արուսեակին բարձրու-թեան, գերազանց քան զընակու-թիւն անկոխելին սրբ-բու-թեանց, երանաւոր խոստմանն տեղի, Աղեմ շընչ-չական, ծառ կենացն անմահից բացեղէն սրսիկ պարու-նակեալ, ի բարձրեալն հօրէ զօրացեալ և հովանա-գեալ, հանգստեամբ հոգւոյն հանդերձեալ և մաքրա-գործեալ, բնակու-թեամբ որդւոյն յարդարեալ և տա-զաւորեալ. միածինն հօր և քեզ անպրանիկ, որդի քո ծննդեամբ և տէր արարչու-թեամբ. ընդ անապատ մաք-բու-թեանդ և անբիծ բարի, ընդ անարատ սրբու-թեանդ և խնամակալ բարեխօս: Ընկալ զմաղթանս այսր աղերսանացդ քումմ դաւանողիս, և մատոյց ընծայեա ընդ ամին խառնեալ զբանն իմ նախնի մեծիդ ներքոյդ ի քոյդ պաղատանս, հիւսեա միացո զմեղուցելոյս դառն հեծու-թիւն ընդ քումդ երջանիկ և խնկաւորեալ հայ-ցուածոյ, տուն՝կդ կենաց պտղոյն օրհնու-թեան, զի ի քէն միշտ օգնեալ և բարեգործեալ, և ի մաքրական քո ծննդու-թիւնդ ապաւինեալ և լուսաւորեալ, կեցից Քրիստոսի որդւոյ քո և տեառն:

Բ. Ովժանդակեա թեւոյդ աղօթիւք, խոստովանեալ մայրդ կենդանեաց, և ելցին իմ յերկրէս հովտէ, առանց լսականաց հետեւել ՚ի կեանս օթեւանացդ պատրաստութեան. զի թեթեւացայ կատարածն իմ ինձ ծանրացելոյս անօրէնութեամբ: Ընտրեաս ոճն ինձ բերկրութեան զօրն իմ տապնապի, ողջացուցիչ երբ կանչն Ցեսայի, բարեխօսեա խնդրեա աղաչեա, զի ըստ անճառելի մաքրութեանդ և ահա զանիւդ հաւատամ ընդունելութիւն: Ընտրասուք օգնեա վանգեցեալոյս, գովեալդ ՚ի կանայս. ծունր խոնարհեցո առ իմ հաշտութիւն, ծնողդ աստուծոյ. ընդ իմում թշուառիս հոգա, խորան բարձրելոյն. ձեռն առաք անկելոյս, տաճար երկնային. փառաւորեա զորդիդ քո ՚ի քեզ՝ աստուածօրէն ինձ հրաշագործել քաւութիւն և ողորմութիւն, աղախին աստուծոյ և մայր. բարձրացայ պատիւ քո ինեւ և ցուցցի փրկութիւն իմ քեւ:

Գ. Ելէկ զիս գացես՝ սիրամայր, թէ ինձ ողորմես ցիս՝ սրբուհի, թէ զկորուսեալս չահեցցիս՝ անարատ, թէ զհարթուցեալս յանձանձեացես՝ երջանիկ, թէ զամաչեցեալս յառաջ մատուսցես՝ բարեշնորհ, թէ յուսահատելոյս ինձ միջնորդեացես՝ միշտ սուրբ կոյս, թէ զմերժեալս ընտանեցուսցես՝ մեծարեալդ աստուծոյ, թէ յիս ցուցցես զքաջութիւն՝ լուծիչդ անիծիցդ, թէ զծփեալս հաստատեացես՝ հանգիստ, թէ ՚ի խռովութեանցս յուզմանց փոխեացես զիս՝ խաղաղարար, թէ վերիպելոյս ինձ հնարաւորեացես՝ գովեալ, թէ վասն իմ մոցես ՚ի հանդէս՝ մահու նահանջիչ, թէ զդառնութիւնս իմ անուշեացես՝ քաղցրութիւն, թէ զբաժանմանն իմ խորոց քակտեացես՝ հաշտութիւն, թէ զանմաքրութիւնս իմ բարձցես՝ եղծման ընդոստնիչ, թէ զմահանեալս մահու փրկեացես՝ կենդանի լոյս, թէ զլալեացս ձայն հասցես՝ բերկրութիւն, թէ զխորտակեալս կազդուրեացես՝ դեղ կենաց, թէ ՚ի կործանեալս յիս ակնարկեացես՝ հոգելից, թէ ողորմութեամբ ինձ պատահեացես՝ կաթակ նուիրեալ:

Օրհնեալդ միայն ի լսելիս անբիծս լեզուաց երկնից կաց, ահա կամիլ մի կամին քումդ կուսութեան յանձն իմ անձրեւեալ՝ կենաց ինձ զօրէ, մայրդ բարձրելոյ աեառն Յիսուսի արարչին երկնի և բնաւին երկրի, զոր անճառապէս ծնար բովանդակ մարմնովին և համայն աստուածութեամբն, որ փառաւորեալն է ընդ հօր և հոգւոյն սրբոյ էութեամբ և անքննութեամբ մերոյին բնութեամբս միացեալով, ամենայն և յամենայնում, մի Աշրրորդութենէն. նմա փառք յաւիտենից յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ ԶԸ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ընդ աստուածածնէին մաղթանաց՝ ահա և ըզ վերնոյն՝ անմահ հրեշտակացն լուսակերպիկ զաղերս հայցուածոց, որ վասն իմ գոչէն առանց լռելոյ հանապազորդեան արգահատութեամբ մաքուր բերանոց, ընկալ բարեգութ. ողբ են բարիք բարեգործեալք ի բարեբարձ անկիրթք չարեաց, հաստեալք յամէնիւր խան հրամանաց էիդ, զօրութիւնք հզօրք ահեարկութեան բարձրելոյդ, սուրբք, մաքուրք, անարատք, օրհնեալք, վայելչականք, յաղթողք և անպարտելիք, և ըստ ընթացից տեսութեան մատց արագուն։

Բ. Ողբ և պաղակոտոյս անկից թզենւոյն եռամեանն դատարկութեամբ, որ զբնաւ յաւիտեանս պարտուն նակէ ժամանակին՝ զանցեալն ընդ ներկայիս և ընդ ապառնւոյն, յամայր յամրութեամբն յերկարաձգելոյ, յայգի աշխարհիս արմատացելոյ, սին սաղարթիւն պաճուճելոյ՝ զրկեալ ի պտղոյ, որ է ճշգրիտ պատկեր

թշուառ մարդկութեանս, սոքա բարեխօսք, հանդերձ ձիւք, այլ և խնամակալք. որ դեգերին հանապազ առ մեզ՝ ընդ մերում կրկնս կարեկցելով, բարեմասնութեան մեր սպասեն. և յաւիտենականն կենդանութեամբ փրկութեանն մեր աղօթեն՝ զայս բան ասելով, զգործս ձեռաց քոց մի անտես առներ: Ճանզի արդարեւ մեր են այս ազաչանք ի բարեբարեդ աստուածոյ վասն մեր կարգեալ առ նոսա, զի նոքա բանիւ են սահեալ, և մեք ձեռօք ներգործեալ: Որք և գալոց են ընդ միածնիդ վկայք սոսկալի դատաստանին հաստուցման, ճշմարտաբան դատախազք յանցաւորութեան երկրայնոցս, յահաւորին սահնի յայտնիչք իրաւամբք զմատակարարութիւնն որ առ մեզ. որ և անտանօր կարեկցեն աղեալ հառաչմամբ զմշտանուէրն նուագ ձայնի, ողորմեա՝ դու ստեղծեր, մի կորուսաներ:

Գ. Արդ ընդ գոհաբանութեան ձայնիցն խնդրուածոյ անմահականացն վեհից՝ և ի մեր հեծութիւնս հատուսեցիս, բնաւից արարիչ, որ յաղթես գթութեամբդ քո վերնոյն և ստորնայնոցս. քանզի քո է բարերելդ առ մեզ և առ նոսին: Արդ վասն բարեզարդութեան անախտականացն, հրաշատեսիլ հրակերպիցն, անշաղախ մաքրոյն, անմեղիցն, բոցանիւթիցն, հոգեղինացն և անվանելեացն, ամենառաձեցուն առաւելութեամբ ի բարձրն ընտրականութիւն գերափայլ յաճախ գիտութեամբ՝ անցուբա ջերմութեամբ ջերուցանողք ինքնաբուն տապոլն աստուածսիրութեան ըստ ինքեանց զմերս սառնասեր սրտիցս անբորբոք ջնջումն, այրիլ անաղօտ ի մեծախորհուրդ սրբութիւնդ սեզանիս՝ որ ի խորանիս, առանց նիրհելոյ և դանդաղանալ սպասել հրամանաց երանելեանց կեցուցիչ կամացդ ամենատեղծիդ, քրովբէօրէն առաքինութեամբ յաստուածիդ միացեալք անբաժանելի: Որք երկնաւոր պետութիւնք են մեծք, և զինուորութիւնք անբիծք, ահաւորք, երկնաւորիդ աստուածոյ ազատազնեալ պաշտօնեայք, ի յամպոյդ լուսոյ ցօղք նշուղից:

Դ. Որովք և ինձ մեղաւորիս հոգեղինի մարդասէր բեացես ողորմել, Յիսուս, աղաչանօք իմովն հրեշտակի, դարձուցանելով զիս, ոչ ի բարիդ քո հեաս լուսոյ. զի զաւանդ հոգւոյս իմ պահպանութեան, զոր հաւատացեր նմին տեսչութեան, զննկալեալն ի քէն ի կենցաղ աստեացս՝ ուրախութեամբ սրտիւ յիս բերկրեալ, անմեղադրելի առ ի քէն օրհնեալ՝ խնդալից դիմաց զուարճութեամբ քեզ, արքայ բարձրութեան փառաց անհասից, ի խրախճանս կենդանախառնմբս բերկրեցելոցն պարուց մատուցեալ ընծայեցուսցէ, գովեալ ողորմած։ Նէ քեզ անքնին ընդ հօր անհասի՝ Թուակցութեամբ հոգւոյդ անճառի վայելէ փառք պատիւ և երկրպագութիւն, յաւիտեանս յաւիտենից, ամէն։

ԲԱՆ ՁԲ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Տէր աստուած բարերար, բազմապարգեւ Թագաւոր, կենաց պատապարան, լուսոյ կերպարան, լոյս նաստարը հանգստարան. որ յաղագս մեղուցելոյս եւ կեալ մարմնացար, գործեցեր զանպատումն և հանդերձեցեր զհրաշալիսն, մինչեւ կատարեցեր զաւետեացն ընդ ամենայնիւ աստուածութեանդ։

Բ. Արդ վասն առաքելոցն սրբոց յերկնաստեղծ քո ձեռացդ ձեռնադրելոց և հոգւովդ սրբով օծելոց, զոր ոգովեսան արժանաւորութեան ըստ իմումդ կարի՝ առ ի փառս քո տէր ամենայնի, յայլումդ քանի պաշտեցի, և ինձ ողորմեացես յիշատակաւ սիրոյ նոցին ընդ բաւթեան։ Շաւիղ ինձ ելից նաքօք հանդերձեսցես

յերանութիւնն փափաքելի. ձայն բարի հովուութեան նոցին՝ ի յողջոյն ինձ կենաց քաղցր լսելի: Ման կալցայ՝ ի յանեղծութիւն փրկութեան ածնեցեալ յուսոյն ընդ առաջնորդացն կենաց, սկզբնաշնորհիցն պատուոյս, փառաւորեալն դասուց, գեղոյն բանականաց, աւետարանչացն բարձանց, իշխանացն պանծալեաց, լուսապայծառ թագիւ պճնելոցն, ի զարդ անկասուտ զօրութեան շնորհին պայծառացելոց, իւղովն զուարթութեան միրական լուսոյն կառարելոց:

Գ. Ընդ աշակերտաց մեծիդ հրամանի բարձրեալդ աստուածոյ Քրիստոսի՝ և մարախրոցն ընտրելոց նահատակութեամբ, որք մահացու և վշտաչարչարն մարմնով, վանեցաւոր և ամենակիրն անդամօք, երկրաւորական և հոգեզանգուածն բնութեամբ մարտուցեալ ընդ տարր գոյից ամենայն նիւթից՝ պսակեցան բարձրացան և կենդանացան հոգեպէս. արիաբար եւ լեալք՝ ի յերկրէ, ըստ մարգարէին, վկայք. ճշմարիտք ամենափորձն մահու խմանալեացն անահեցին և ծածկելոց աներկբայ բարեացն յուսով տեսելոցն աստէն նկատիչք. աշակերտաք առաքելոցն և չարչարակիցք նոցին. որ հաւատարեալ գործովք ընդ նոսին, կատարեալ լսմամբ անպակասեալ պարեն՝ ի խրախճանս անկեան երանութեան. որոց հաճոյական և ընդունական մաղթանօք, արիւնընծայ վաստականուէր քրտնակընդրուկ աղերսիցն յարգմամբ՝ ընկալ զնս նորոգ ըստ նոցին մասին անեղծ փրկութեամբ՝ ի քեզ արձանացեալ:

Դ. Ընդ խաղացեալսն հուրբ և սուսերբ արեամբ ներկելոցն, և ճգնաւորացն սրբոց հարցն միանձանց և քեզ հետեւելոցն, որդի աստուածոյ, անպարտելի քաջութեամբ և անպատիր զգաստութեամբ, ընդ դրժնեայ գոռոզի մարմնոյս բռնութեան արիապէս մարտուցեալ, սովիմբ վանեցեալն զանմարմինն Խելիար. և մշտամարտ հանդիսիւ յաստպարիսի կենդաղոյս առանց զզջանաց ծանրաբեռնութեան՝ ի լայնածաւալ ծփա-

նաց աշխարհիս ծովու տապանակաւ մարմնոյս Քանաանացւոյն զԼեւեհեւուհիւն հոգւոցն Թուրգեալ՝ ի նաւահանգիստն կենաց հասին. և իբր սիրողք վերնում վճակին առանց յետնոցն մոռացութեան, զԹագն յաղթութեան համարձակապէս պայծառ ճոխութեամբ պճնեալ խոստէս ի գլուխս կապեցին. վասն նոցին արժանաւոր մաղթանաց և նուիրական հայցուածոց և զիս զմեղաւորս ի պատժականաց ընկալ ընդ նոսին:

Ե. Այլ ահա խառնեալ զանմաքուրս քան ընդ նախադրեալ երջանկացն փառատրական աղերսարկութիւն, որ վասն իմ գոչեն քեզ ի հաճութիւն, և ես ընդ նոսին իբր դառնութիւն եդեալ ընդ քաղցու, կամ տապտակ ընդ ոզորկութեան, տգեղութիւն ընդ վայելչութեան և տիղմընդ գեղեցկութեան մարգարտի, կամ հող ընդ յատակութեան ոսկւոյ, և կամ քարինս անարդս ընդ պայծառութեան արծաթոյ, բացասութիւն ընդ ճշմարտութեան, կամ աւազ ինչ առաքինութեան ընդ կակղութեան զանգուածոյ հացի. արդ լուր, հզօր, հնարաւոր, գովեալ, ընդոգին վասն իմ և զիմն ընդ նոսին ի նոցին գովեստ, ի փրկութիւն իմ և ի փառս քո, ամենագութ, բարերար, օրհնեալ, երկայնամիտ, կարող, անքննին, անճառ, անեղծ և անստեղծ: Քո են պարգեւք, քո են շնորհք. դու սկիզբն և պատճառ բարեաց ամենայնի: Ոչ ես դատապարտիչ, այլ ազատիչ. ոչ ես կորուսիչ, այլ գտիչ. ոչ ես մահացուցիչ, այլ կեցուցիչ. ոչ ես տարագրիչ, այլ ժողովիչ. ոչ ես մատնիչ, այլ ապրեցուցիչ. ոչ ես ընկղմիչ, այլ վերածիչ. ոչ ես գլորիչ, այլ կանգնիչ. ոչ ես անիծիչ, այլ օրհնիչ, ոչ ես վրիժառու, այլ շնորհիչ. ոչ ես թշնամացուցիչ, այլ միխիթարիչ: Ոչ եղծանես, այլ գրես. ոչ սատանես, այլ հաստատես. ոչ ոտն հարկանես, այլ սփոփես. ոչ պատճառս յոդես մահու, այլ հնարս խնդրես կենաց. ոչ ես ի կամս շարժեալ սատակման, այլ ի փրկութիւն ողորմութեան: Ոչ մոռանաս զայցելութիւն, ոչ լքանես զբարի, ոչ արգե-

լաս զթիւրթիւն, ոչ բերես վհիւ կորստեան, այլ կատակ ազատութեան: Ոչ թշնամանիս յառաւոյ թեանց, ոչ բամբասս ի շնորհայ, ոչ հայհոյիս ի պարգեւաց, ոչ նախատիս ի ձրի ձրից, ոչ անգոսնիս յերկայնմտութեանց, ոչ եպերիս ի ներողութեանց, ոչ բանսարկիս ի բարութեանց, ոչ անպատուիս ի քաղցրութեանց, ոչ քամահիս ի հեզութեանց, ոչ առաքին այսոցիկ տրանջմունք, այլ անլռելի գոհաբանութիւնք: Խարձ զմեզս իմ, հզօր. լոյծ զանէծս իմ, օրհնեալ. քաւեա զպարտիս իմ, ողորմած. ջնջեա ըզ յանցանս իմ, գթած. մատո մատն այցելութեան, և անդամին իսկ կատարեցայց. զինչ քեզ, աէր, քան զսոսին դիւրագոյն, և կամ զինչ ինձ պարտաւորիս կալ բեւորագոյն: Այլ կենդանագրեա, բարեխնամ, քսիւ նատեղդ պատկերիս փչումն կրկին ի շունչ նորոգման լուսաւորութեան մաքրական շնորհի զամենամեղս ոգի պաշտպանեալ:

Զ. Մի ածեր, ողորմած, ինձ օր տարաժամ ի հա մառօտս երթի անխոչակ ապաձեռնութեամբ ընդ անկատար ուղին հետեւել, մի մատուցաներ բաժակ դառնութեան ի ժամ ծարաւոս. մի փակեր, գթած, իմ հանդէպ զյաջողուած հոգեւոր օգտիս, և մի երբ յանկարծադէպ հինից ասպատակ գիշեր մահուն ինձ պատահեսցէ. մի տապ օդոյն յանպատրաստ պահուն զարմատս հատեալ ցամաքեցուսցէ, և մի լուսնական դիպուածք հասեալ գաղտնեօք վնասեսցեն, մի պահեսցի ինձ սառն մեղացս, և մի հոսանք ուղիւից կենդցաղոյս զիս ողողեսցեն: Մի հանդիսան մահ բերիցէ, և մի նենջումն ի սատակումն յառաջեսցէ. մի քունն ինձ կորուստ լիցի, և մի նիրհումն ապականութիւն գործեսցէ. մի վախճանն անյարմար ի վերայ իմ արշաւեսցէ, և մի հնչոյս վերարձակութիւն ըմբռնեալ ի խոնարհ լըցի:

Է. Դու ես տէր, դու գթած, դու բարերար, դու երկայնամիտ, դու ամենակարող, առ ամենայն բան

անհասուԹեան անձառ զօրաւոր, քաւել փրկել կենաց դործել լուսաւորել, վերստին հաստատել, ի ժանեաց կերչաց գազանաց և կամ յատամանց վիշապաց ի կեանս կոչել, ի խորոց անդնդոց ի լոյս բերկրուԹեան ածել, և ի հեղձմանէ ծփանաց մեղաց ընդ արդարս երջանկաց փառաւք բազմեցուցանել: Ամենայն ոգի քեզ ակնկալեալ յուսով սպասէ, կարօտեալ քումդ շնորհաց, եԹէ երկնայինք և եԹէ երկրաւորք, եԹէ անկածն մեղաւք և եԹէ ամբարձեալն արդարուԹեամբ, եԹէ սէր և եԹէ ծառայ, եԹէ տիկին և եԹէ աղախին. և ի ձեռին քո է շունչ կենդանական բոլորեցուսն: Նա քեզ ընդ հօր և հոգւոյդ սրբոյ փառք յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ՁԳ.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱԻԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ՍՈ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. ԲԱՐՁՐԵԱԼ անքնին, զօրուԹիւն ահեղ, սէր սրտաբաց, Թագաւոր երկնի, ստեղծիչ հրեշտակաց, գոյարան մտաց, հաստիչ հրեղինաց, պեա բարի հոգւոց, աղ ապաւինուԹեան, անդորրուԹիւն հանգըստեան, սեռազան լուսաւորուԹեան, պայծառուԹիւն բերկրուԹեան, ճանապարհ երանուԹեան, պատճառ կենդանուԹեան; առիթ բանաւորուԹեան, փրկուԹիւն առանց չարուԹեան, առաջնորդ խաղաղուԹեան, պարիսպ ամրուԹեան, պատուար պահպանուԹեան, ցանկ բոցոյ մեծի օրհնուԹեան, սահման անդնդոցական, յիշեա յայսմ ողբերգուԹեան մանկանցդ բանիս խոստովանուԹեան և զոր ի մարդկային աչնէ Թշնամիս մեր՝ ի բարւոյ, և արա կատարեա նոցին

քաւութիւն և ողորմութիւն : Մի բարկասցիս նոցա վասն իմ, տէր, իբրեւ զսուրբս բամբասողաց՝ առ յաճախ սիրոյդ որ յիս, այլ որպէս զչարս կշտամբողաց և իրաւամբք նախատողաց՝ ներեա յանցանաց նոցա : Նայ արդ մատուցեալ երկաքանչիւրոցս առաջի քո, արդա- րադատ, ոմանք առ մեզ վշտասկարադոյնք սակաւուք, թերեւս և յիրաւի բամբասելոցս, և ես առ քեզ, ա- մենապարգեւ, անթիւս և անկշռելիս բազմօրինակ ուխտազանցութիւնս :

Բ. Արդ յիշեա զքո մեծութիւնդ, տէր, նայեցեալ ի յիմն անարգութիւն. և ընդ խնդրելս իմ ի քէն բարի իմոցն առելեաց, և դու առ քոյս ըստ քում մե- ծութեանդ անճառելիս հրաշագործեացես : Մի սատա- կեացես զիմն խաճանողն, այլ փոփոխեացես. խլեալ զխոտանս բարս երկրաւորս, զբարիսն արմատացու- ցես և յիս և ի նոսին : Անաւանդ զի դու լոյս ես և յոյս, և ես խաւար և յիմար. դու խնկութեամբ բարի դովելի, և ես համայնիւն չար ապիկար. դու տէր ստորիցս և երկնից, և ես անիշխան շնչոյս և հող- ոյս. դու բարձրեալ ի կարեաց զատեալ, և ես տա- ժանաւոր և վտանգաւոր. դու ի վեր քան զկիրս երկ- րիս, և ես կաւ անարգութեան դարչութեան. դու ըստ մարգարէին մնաս յաւիտեան յանբաւ բարձրու- թեան, և ես միշտ կորնչիմ ըստ նորին բանին. ի քեզ ոչ է մթութիւն կամ նեղութիւն, և ես բաւանդ- դակն իսկ իցեմ՝ որ զաւանդն իմ ոչ պահիցեմ : Հան զիս ի բանտէս, արձակեա ի կապանացս, վերծ ի շղղ- թայիցս, փրկեա ի խեղդմանէս, ազատեա ի տագնա- պէս, քակտեա ի յերկաթիցս, լոյծ ի պաշարմանցս, արտաքսեա յերկմտութեանցս, սփոփեա ի տխրու- թեանցս, հանգո ի նեղութեանցս, փարատեա ի վըշ- տացս, հանդարտեա ի խռովութեանցս, ապաքինեա ի լալոյս, մերժեա ի հեծութեանցս, հեռացո ի յողբ- ոցս, կազդուրեա ի կականմանցս : Աստուած ողոր- մութեան և պարգեւատու քաղցրութեան, մի զգրա-

ւեալս արեամբ հզօրիդ անտես արարեալ ընդ վայր կո-
րուածսն եր. կանգնեա զհատեալս յարին մահու ՚ի բաղ-
մաքանդ հիւանդութենէս։

Գ. Ահա բարդեցան կուտեցան ջլջանակք ամացս ըն-
դունայնութեան, յորմէհետէ յայտնեցեալ ցուցայ
յոչ պէտս երեւեալ, ՚ի յանդատանէ մօրն իմոյ սե-
նեկի փուշս դժնկի մեղայ շառաւիղի. մի լինիր ինձ
խայթող խոցոտիչ՝ որպէս անդ տոհմին Յուդայի, և
կամ զաւակին Ներեմի։ Նոյ քանզի բուսուցեալ անկեցի
յոգիս փոխանակ ցորենոյն բարեսերմութեան խոտս
խայթողականս ինքնաթոյնս ընդարմացուցիչս, ըստ գո-
րոյն բանի՝ որ երէցն է քան զաւետիսն, զիաւրդ ոչ կո-
չեցից զանձն իմ գարշելի անդատան անիծաբեր փո-
շովք մեղայ հեղձեալ։ Ոչ սերմանեցի արդարութիւն
ըստ բանին Ովսեայ. և զիաւրդ հնձեցից և ժողովեցից
զկենաց պտուղն։ Նմանապէս ասինք կուսութեան անձին
մաքրութեան, ըստ մարգարէին բանի՝ որ առ Իսրա-
յէլ, կարող ես տէր ՚ի նոյն հաստատել։ Այնեցի ընդ-
դարձակեցի ըստ մտելական բարուցն Յուդայի զանկո-
ղին կամացս՝ դիւացն հոմանեաց, ՚ի ձեռս քո էամ
փոփել դարձեալ ՚ի նոյն զգաստութիւն։ Նմիկ մարմ
նապէտն կցորդութիւն ընդ տեսանողին անարատ գոր-
ծեաց զպատնիկն, իսկ դու փրկութիւն հոգեպէս միա-
ցեալ ՚ի յիս՝ կրկին մաքրեացես. եթէ արեգակինս այս
անկենդան ստեղծեալ առ ՚ի քէն երկրիս մատակարար,
և զկատարումն մօրից ցամաքէ և զտհաս պտուղս հա-
սուցանէ, իսկ ստացողդ ամենից հոգիդ աստուծոյ պի-
քան զօրեացես զտիւմ չարեաց աղտոյ և զթաթախ սրըղ-
ծութեան մեղայ մթերից իսկոյն սպառել։ Ոչ ման այսր
կանխաւ իսկ ժամանեցի հայցել առ ՚ի քէն բարի՝ ա-
տելեացն իմոյ ՚ի կարգ այս բանի, զի զհեքեալ վընա-
սակարս պարտուց մահու յամենահանամ աչաց հզօրիդ
մի մերժեացես, օրհնեալ գթութիւն. արդ կենագործ
ծեա զիս զամենամեղս անդամոք մարմնոյս ընդ բնու-
թեան հոգւոյս խորհել միշտ զքոյսդ։ Իսկ բարեգոր-

ծայն խնդրել բարիս, բնութեան են օրէնք՝ անքըն-
նադատ կրնայ յարակցապէս առ սոյն բերումն։ Ինդ-
արդարեւ առ միդ այդ պատուէր ամենայն հասակ զօ-
բանայ, իսկ միւսդ երկրորդի առաջնովդ խնամով
հանդիպել՝ աստուածականիդ է նմանութիւն. յաղագս
այսր իրի նախնի դասեցի զքրիստեայն իմոյ աղերսանս
քան զերախտաւորացն բարիս։

Դ. Իբ արդ յիշեա զնոսա կրկին ընդ միոյ, որ ի քո
անուն բարձրացեալ զանարժանս զիս ընկալան, և տուր
նոցա, տէր ամենառատ բարերար և անհատակալ, վարձս
արդարոյ և մարդարէի, թէ և ես յաւէտ թափուր
իցեմ յարժանեաց, ըստ հաւատոյ նոցա և առ յոյս
նոցին ակնկալութեան, որ առ պարտաւոր գերիս ոչ
կամիս կամօք ակնարկեն, որպէս թէ ի մասանդ քո
կեցուցչաց ի պահպանարան հոգւոյս ծածկութիւն
լիով ունիցիմ։ Իբ զպատժաւորս անամփոփելի ի քոյ
տեսութենէդ և յանխաբելի ի յուղիղ կշռութենէդ՝
քաղցր գթութեամբդ անսահմանելեաւ մերձեցեալ
առ իս մաքուր արասցես, անխոյտառակելի պահելով
ի սիեղերական յանդիմանութենէն։ Իբ որպէս շուք
լմն վայելչական դնել ախորժեն ինձ անարժանիս սի-
րելիքն քո վասն քո, նայեցեալ ի կրօնս զգեստուս քա-
րեկերպութեան, չգիտելով զլինս գաղանեացն՝ երջա-
նիկ կարդան եղիցեյս, և դու հնարաւոր ամենապար-
գեւ օրհնեալ մարդասէր՝ առ բնաւս ողորմած, վասն
ամենաթշուառիս հեծութեան հաշտեաց ընդ նոսա
ըստ հաւատոյ նոցա. ընծայեալ նոցին մատո պարգե-
ւա զանեղջ մեծութիւնդ և զանթառամելի զպատակդ
յահաւոր աւուրն յետնում հատուցմանն ամենափորձ
ընտրութեանն։

Ե. Ո՛վ դու ես գրաւ փրկութեան մեծութեան ան-
վաստնելի և անծախ գանձուց սուրբիս և սովեցելոյս, ի
վաճառ վերնային շահու օգտութեան՝ բանիւդ որ ի
քէն՝ յարգեալ ճոխանամք։ Կառո ինձ սահման ջրոյ
հանգստեան. արձանացո, անփոփոխ, պատրաստական

վստահութիւն. կարգեա, օրհնաբանեալ, անկաղա-
կարծ յուսոյ ամրութիւն, տուր, ամենահնամ դու
անհաչառ պաշտպանութիւն, սասանեցելոյս բարեաց
անդորրութիւն, տարակուսելոյս լուսոյ ապաւինու-
թիւն, աչխարհելոյս մեծ երջանկութիւն, վհատելոյս
կենաց օգնութիւն, լքելոյս անգայթագղելի օժան-
դակութիւն, նահանջելոյս անսայթաք վերընթացու-
թիւն: Ո՛վ քո է բնաւդ և ի քէն է ամենայնդ, և ի
ձեռն քո բաշխին հաւատաւոքութիւնք սիտանացուաց
համայնից կենաց. և քեզ վայելէ փառք յաւիտեանս
յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ՁԴ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ո՛րդւոյ երկնաւոր, Թագաւոր բարձրեալ, տէր
բոլորից, ամենից ակնկալութիւն՝ ստեղծող տեսակա-
նաց, հաստիչ իմանալեաց, պատճառ եղանութեանց,
կազմիչ հանդերձելոց, տուիչ լուսոյ, առիթ առաւօ-
տու, պատրաստիչ վաղորդայնի, երեւեցուցիչ երեկո-
րի, տարրիչ խաւարի, արուեստաւոր բարեհնար, խմաս-
տութեան գործօնեայ, քաւարան օրհնեալ, հալիչ մե-
ղանայ, հալածիչ ցաւոց, քակտիչ դառնութեանց,
պահպանարան հանգստեան, հնարք նիրհման, յարմա-
րիչ քնոյ, պարգեւիչ ննջման, շնչոյ յարակարգութիւն,
զգայութեան տեւողութիւն, ցրիչ ցնորից, յեղանա-
կիչ անրջոց, փոխարկութիւն զարհուրմանց, այլայլու-
թիւն սխրութեանց, խափանիչ խիթմանց, ընդարձա-
կիչ կարծեաց, համադրութիւն ծփմանց, ահագնու-
թիւն խարդախմանց, հարուածիչ դիւաց, փախուցիչ

ախտից, ընկղմիչ գայթագղուԹեանց։

Ե. Պաշտպանեա երկնաստեղծ ձեռամբդ, զօրացո քարձրացեալքո աջովդ, ամփոփեա ամենակալդ Թեւօք, ծածկեա աստուածեան խնամօքդ, ամրացո վերակացուԹեամբ վերնայնոցդ, շուրջանակի պարսպեա գուժարտակօքդ անմահից, ի յամենուստ պարփակեա կըզօրդուԹեամբ հրեշտակացդ, վանեա զընդդիմամարտն իմ զինուորուԹեամբ զուարԹնոցդ, պատսպարեա զսանեալս՝ աստուածնիդ մաղԹանօք, զբանակս անդրանկացդ բարեկարգեա ինձ պահապան։ Ւնայ ընդ աջոյս դիմաց և զմեռացս իմ տեսանելիս, զդաստ արա ընդ ոգւոցս և զծանրաբեռն կրից դանդաղուԹիւն, վերացո, տէր, ի զգայուԹեանցս զմածեալս յիմարուԹիւն. բարձ, միայն բարեգործ, զպատրուակիս ԹանձրուԹիւն։ Ընդ սկզբան բերմանս լուսոյ՝ զզղջմունս Թիւն քո ծագեա, ընդ ելից արեւուն՝ արդարուԹեան արեգակնդ ի յանձկուԹիւն սրտիս մտցէ. ճառագայԹ քո փառացդ ի յիմաստից խորհրդանոց ջահեսցի. խաչիդ տեառնագրուԹիւն ընդ շունչս և ընդ մարմինս համասիխս տարածեսցի։ Յանձն առնեմ քեզ յաւուրս զքո յարմարեալ տաղաւարս պահպանաւ ոգւոցս՝ որ ի սմին։ Օ՜ի դու ես աստուած անքնին, առ ամենեսին բաւական և յամենայնում բովանդակ, օրհնեալ յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ 26.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Իսկ արդ վասն զի արհեստականն մեր զուարթուԹիւն քեզ ննջումն իմն է համարեալ, իսկ ’ի խոր թըմբ բրուԹիւն լուեալն՝ վասն ուղիղ հաւատոյն ’ի քեզ՝ անԹարԹամ բացուԹիւն աչաց, ուղղեա հոգւոյդ քո իմաստուԹեամբ զյաջողուած ձեռինս գործոյ ընդ հեծուԹեան ձայնիս մաղԹանաց։ Օ՜ օրացո, տէր, ’ի հանդէս բարի ճգնաւորական արի վաստակոց, կցորդ լեր կարեացս տկարուԹեան, ԹեԹեւս կացս զաշխատուԹեանս այս սկիզբն. արագեա, միշտ կարող, զյաջողաբեալ ձեռակերտս, դիւրաւորս ընԹացս ’ի յաւարտումն լսմանն։ Ի վախճան իրին բերկրուԹեամբ զիս հաստ, ժամանակացուսցես ’ի հանդիպումն յուսոյն, կցորդ լեր ուղւոյն ճանապարհիս ընԹացիկ, ’ի Թռիչս ամբարձման վուԹացուսցես յօդտակարն, ընդ աջմէ իմ լինիս ’ի վանդիլ ծանրուԹեանն, զձայն քո լուս ’ի յանձկուԹեանն պահու, ձեռամբ քո կեցո ’ի կորստեանն ժամու, մատամբ քո աղդեա ’ի սահմանին անձկուԹեան, հարԹեա զկատրոց ամենաչար խափանմանն, հոգեղինին առաքմամբ ըստ Ամբակումայ ինձ հնարեա, քան ինձ շնորհեա ’ի յատեանի բազմուԹեան, իմաստուԹիւն յիս անկեա ’ի հանդիպման քննուԹեան։ Ամպով կամաց քոց հովանացիր հրաշապէս, հանդարտեցո փայփուդ կենաց զծովուս մրրիկ, սանձեա զաս տեաց կենցաղոյս պատկեր քոյին հրամանաւդ. քանզի Թէ աստ ողորմուԹիւն քո, տէր, կամեսցի, այս լուծուԹիւն կոհակաց կարծր է քան զվէմ. և Թէ ’ի ցա

Ճաքի անտես առնիցես, իբր զանկայուն՝ պնդութիւն յատակիս ի ներքոյ ասաի հոսեալ ասատնի:

Բ. Արդ ընկալ, Յիսուս, զպաղատանացս ձեռնարկութիւն քեզ ի հաճութիւն, և արա ինձ զամենազարծն գայթագղութիւն մեծ վստահութիւն: Որպէս ի ջահելիցդ ամենակործանն դարու, որք ի հարթ տարածման գետնի աւանդ երկիւղ յանհոգս կէին, յողորմութենէդ ամայի մնացեալ կորուսան. իսկ ընդ հովանաւոր մածուածով լաստիւն յոգնատատան հիմանն հայթայթանօք յանուն դիմածիդ յերեալ պահեցան. ընդ որս և զաղաչողս մշտատատան ի նաւահանգիստն խաղաղութեան մարդասիրապէս պրծեալ ապրեցո. վարձս ի քոյոցդ ընդ իս բերելով հոգեւոր շահից, զստորաբերս այս ստուարութիւն պարտուցս լքեալ բանիդ առակաւ, ի քեզ տէր անկայց միացեալ ի սպառ անբաժանելի, օրհնեալ յամենայնի: Եւ կը յորդելով այսմ մաղթանաց հոգեղէնքն ամենամաքուր ընդ հոգեղինացն մարտիրոսաց, որք ջուր և հրով փորձեցան, և յելից զերծմանն ընդ մեր խնդրեցին, և մեզ յիշատակ Թողին օգնութեան, ասասցեն ընդ մեզ համաբանաբար զուգամանութեամբ՝ եղիցի եղիցի:

ԲԱՆ Զ.Ջ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՌ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Ընդ այսր հառաչանաց Թախծութեան ողբոյ ի բաղմաց կերպից շարակարգելոյ, և ամենից հոգւոյ ողորմեա, գովեալ և երկայնամիտ Թագաւոր: Նա և այնոցիկ առաւել որոց հատեալ է ակնկալութիւն փրկութեան կենաց, որք ննջեցին անպատրաստաբար շնջ

եալ լսպտերօք իւղոյն պակասութեան : Ահա յիշեա, ոեր իմ գթութեան, և ՚ի յայս եւս պատճառ իրաւունս ինձ գրեա : Քանզի թէ և ՚ի փառս ահաւորութեան սքանչելեաց մեծիդ՝ հակառակօքն հանդերձեցեր զկամած մարդոյս, զոմն ծանր և զոմն թեթեւ, զմին զօվ և զմիւսն հրայնն զի դիմադրութիւնն ՚ի հակառակացն հարթ պահեցեալ՝ արդար կշեռօքդ հաւասարիմ հաւասարութեամբն. և ՚ի յայսմ ՚ի դատման առաքինութեան վերաբերեալ ընդ ամբարձելոյն, զնոնարհութիւնն առ կաւն դիտման անմոռաց պահեալ՝ պակ ընկալցուք ճգնաւորական : Այլ քանզի յայսմ կանոնէ ուխտի վրիպեցաք, և անճանաչաբար սահեցմամբ ըստ հողոյն զկնճման ընդ երկիր մածաք, այլ ոմն ախտիւ և այլ ոմն անգթութեամբ, միւս մանն մոլութեամբ ամենաբաղձ կերակրոց իբր դաշան մըշտաբոյծ յարակայ կապեալ ընդ բնութեանս : Իսկ ՚ի քառիցս ոմն անբմբռնելի և անողոքելի պատմամբ ՚ի բաց ոստոտեալ՝ վայրենապէս ամբարտաւանէ. եթէ ջեռնութեամբ տապով սիրոյն որ ՚ի քեզ՝ նշխարաւ բոցոյն որ ՚ի մեզ, յուրան առընթեր կենակից նմին զնոյն կասեցուցեալ բարւոյն ընդմիջէ. եթէ օդականաւն հրեշտակայնոյն յատկութեամբ ՚ի քեզ, ծանրութիւն թանձրութեան բռնանիկ նիւթոյս այս հողոյ ՚ի ստորեւ քարշեալ խափանէ :

Ը. Ընդ արդ յամենեսեան պարտեալ և ՚ի սպառ լքեալ՝ իբր զսպիկար հաշմեալ հերքեցեալ կորեալ վանեցեալ, վատնեալ ՚ի բաղմաց ՚ի մահ գրաւեցեալ. վասն որոյ ՚ի պարզեւականէն զկիեցեալ յողորմութեանն կողմ նայիմ, և պատկառեալ դիմօք համայնից ունողս զընաւից աղերսաբանեմ զմեռելոցն՝ քեզ կենդանեաց. քանզի կարող ես յաւէտ հնարիւք և կորստականացն ըստ իս մեռելոցն. ամենայն ինչ քեզ զօրելի է. նա՝ զի և ընդ անտրկալ կարելոյդ և կամելդ է ախորժելի :

Գ. Արդ այսց երկուց բարդաւաճ ընծրհաց նորոգեալ առ մխեանս եկեալ՝ կարելն ընդ կամելն, բարձ-

բեալ եղեցի և յաւսահատութեանն վհատութիւն ազգացս մեղաւորաց. և ժամանեալ հասցէ աւետեացդ լոյս հոգւոց բժշկութեան քումդ հրամանի, տէր ամենայնի, օրհնեալ յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ՃԻ.

ՎԵՐՍՏԻՆ ՑԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Եւ արդ քանզի՛ ի գլուխ կատարման հասեալ սակաւամանեայ կտակի այսր ողբերգութեան, արա, տէր, վախճան դադարման առնուլ ընդ այսց բանից մաղթանաց ինքնանախատս կշտամբութեան՝ և որ յիս կրին չար սովորութիւնք: Որ քեզէն կարգեցեր սահման աւետեաց ակնկալութեան դատապարտելոյս՝ ապաշխարել, ոչ են կամք առաջի հօր իմոյ՝ եթէ կորնչեցի մի ոք՛ ի փոքրկանցս. և դարձեալ, այս են կամք հօր իմոյ՝ զի զամենեսին ինձ յանձնարարեալսն ոչ կորուսից:

Բ. Ահա օրհնեալ ես՛ ի գթութեան, բարեբանեալ միշտ՛ ի քաղցրութեան, խոստովանեալ յերկայնմտութեան, ծանուցեալ՛ ի յայցելութեան, քարոզեալ տէր՛ ի փրկութեան, ներբողեալ դու յառաւօտութեան, պատուեցեալ՛ ի պաշտպանութեան, փառաւորեալ ես՛ ի փրկութեան, երկրպագեալ յանբաւ բարձրութեան, պաշտեցեալ՛ ի յանքննութեան, գովեցեալ միայն՛ ի յաղթութեան, վերաձայնեալ՛ ի մեծ զօրութեան, խնկաւորեալ յողորմածութեան, համբուրեցեալ յանճառ հեզութեան, ճաշակեցեալ՛ ի խոնարհութեան: Ընդ քեզ և ծնողդ քո երկնաւոր աստուածդ բոլորից միխիթարութեան. ըստ որում հոգիդ քո սուրբ բարութեան, որ զանկեալ զգրաստ թշնամւոյն և զգայ-

Թագէալ մարդն անբանութեամբ՝ կանոնեցեր ոչ առ
տես առնել։ Որոյ երախտիս հզօրիդ ՚ի յիս, և առա-
քինութիւն մեծիդ ՚ի բարձունս ածնեալ անդադար
յանվախճան փառաբանողաց. որովք զայս ձայն ազեր-
սական յարգեալ ընկալցիս մարտիրոսացն պաղատանօք
՚ի հոտ հաճութեան բուրման անուշից։ Եւ այսու
փրկանօք հաշտարար բանի՝ զնախնեացն պարտս և զա-
ներեւոյթ վէրս միջնովքն և վերջնովքն մահացու-ցա-
նողքն զանձն և զմարմին բժշկեա, ամենակարող, ըզ
ներքինս և զարտաքինս, զոխիքն և զդիծքն և զնա-
բանս հարուածոցն. բարձեալ և մաքրեալ դեղովք
ողորմութեանդ զկտեալ խածուածս բազմագունիս.
որք գարշելիս ընդ ախորժելեացն քեզ ցուցանեն զե-
ութիւն բնութեանս։

Գ. Եւ եթէ հասից յամս ծերութեան քեւ առաջ
նորդեալ արժանիս մահու, մի թողցես զտկարութիւնս,
մի անարգեր զալիսն, մի կորացուացես զկորճանեալն,
մի զնջուացես զկքեալն, մի վայրաբերեր զնոնարհեալն,
մի շնչման հողմոյ մատներ զառկայծեալն, մի ընդպահ-
կեացես զդեգեւեալն, մի անվերարկու առներ զսառու-
ցեալն, մի անդարման լեցի տապնապեալն, մի առանց
տածելոյ յարկն խարխալեալ, մի անպատիւ պատկերն
հնացեալ, մի պարարտութիւնն անհամեալ, մի շուք
շնորհին անարգեալ, մի հնութիւնն քամահեալ, մի նաւ
հոգւոյս ալեկոծեալ, մի երկարութիւն յուսոյն կտրե-
ցեալ, մի լար շաւիղին խզեալ, մի ուշ իմաստին բարձեալ,
մի գոյին կազմած զեղծեալ, մի ամբարձմանն թեւք
փետռեալ, մի զուարթութիւն գեղջն տգեղեալ, մի
ճաճանչ նշուլին քաղեալ, մի պատուհանք աչացս փա-
կեալ, մի լուսաւորութիւն նորին խափանեալ, մի պատ-
կերն խօսուն անկեալ։ Ահա ազաչեմ զքեզ, բարեգութ,
ամենայն սրբովք պաղատիմ, լուր սոցին ինձ կանխաւ,
զի զանագանն մի մոռասցիս։ Դու առաջնորդեցեր ինձ
ըստ սաղմոսողին և ապրեցուցեր, հան, տէր, ընդ
երգողին և ՚ի կարծեացն կասկածանաց, յորմէ երկնչիմ։

Իսկ ես չեմ արժանի ՚ի քէն և ոչ հասարակական կերա-
կրոյն վարձու, այլ դու կարող ես սովորաբար և առ-
ղացողս բարեգործել: Վասն են զարմանալիք անձառից
բարեաց. միայն հրաշագործ առ ամենայն երկայնմտու-
թիւն, ընդ հօր և հոգւոյդ սրբոյ օրհնեալ հանապազ
յաւիտեանս յաւիտենից. ամէն:

ԲԱՆ ՁԲ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Լի արդ ջուր կամաց և կաթ արտասուաց՝ բե-
կուԹեամբ հոգւոյս մտացս լքմամբ՝ խորտակմամբ սրտի
սիս հեղեալ առաջի, զմարգարէին յիշեցուցանեմ զա-
բամաԹացւոյն Սամուէլի, զոր առեալ եհեղ ՚ի սկա-
ւառակէ յանդիման քո, ամենատես, առ ժողովրդեանն
օրինակուԹիւն զանձն արկանելոց խոստովանուԹեամբ
և հնազանդուԹեամբ կենդանարարդ գաբշապարաց:

Բ. Լի արդ ընկալ զայս հիւսուած բանի ազիողորմ
հեծեծանաց, և հոտոտեսցիս յայս նուէր բանի անա-
բիւն զոհի, Թագաւոր երկնի. և օրհնեալ սրբեա զտառ
մատենի այսր ողբերգուԹեան, և գրեալ գրոշմեսցես
յարձան յաւիտեան ընդ հաճոյականացն ապաստաւորու-
Թիւնս: Կացցէ առաջի քո մշանջենաւոր, և յիշատա-
կեսցի ՚ի լսելիսդ քո հանապազ. բարբառեսցի շնԹամբք
ընտրելոց քոց, և խօսեսցի բերանովք հրեշտակաց քոց.
տարածեսցի հանդէպ աԹոռոյ քո, և ընծայեսցի ՚ի սրահ
սրբուԹեան քո. խնկեսցի ՚ի տաճար անուան քոյ, և
քուրեսցի ՚ի սեղան վառաց քոց. պահեսցի ՚ի գանձա-
նի քում, և համբուրեսցի ՚ի տաւցուածս քո: Պատ-
մեսցի ՚ի յականջս ազգաց, և քարոզեսցի ՚ի լուր ժողո-

վերդոց. նկարեցան ի դրունս խմաստից, և տպաւո-
րեցան ի սեամն զգայուԹեանց. իբր կենդանեօք զնմա
պատմեցեալ խոստովանեալ զանօրէնուԹիւն. և Թէ-
պէտ վախճան ընկալցեալ իբր զմահացու, այլ յարակայու-
Թեամբ բանիւ այսր սոփերի՝ գրեցեալ կենդանի: Այ-
նպէս սա անեղծ ի կամս քո, տէր, ինձ պատժապար-
տիս համբարձեալ միշտ անդուլ դասիչ, անաչառ կըշ-
տամբիչ, անպատկառ յանդիմանիչ, անանխայելի դատ-
ւիչ, անողոքելի պարսաւիչ, անհամբոյր ծանակիչ, ան-
մարդասիրելի մատնիչ, անփրկելի տանջիչ, անկաշառ
կառափիչ, անխնամելի յայտնիչ, ապառումի հրապա-
րակիչ, աշխարհալուր բողոքիչ: Փողով մեծուԹեան
աղման առանց լուռուԹեան և կամ դադարման զնմոյս
պարտեացս խոստովանեցայ:

Գ. Այն գիր իմովս ձայնիւ իբր զնս ընդ իմ ազազա-
կեցեալ, տարածեցեալ զծածկեալսն, հռչակեցեալ զդաղ-
նիսն, կանանեցեալ զկատարածն, հնչեցեալ զմոռացեալսն,
յայտնեցեալ զանելուԹիսն, բարբառեցեալ զբարուբան,
քարոզեցեալ զլսորոցն, պատմեցեալ զմեղացն, մերկա-
ցուսցեալ զանառակիցն, ցուցեալ զկերպարանս Թաքուց-
ելոցն: Շօշափեցելոյն սուաւ որսքն, գտելոյն գայԹակ-
ղուԹիւնքն, յանդիմանեցելոյն անճառքն, քամեցելոյն
չարեացն մնացուածքն: Նոյ ԹագաւորեցեալՆ կեանքդ
հնորհեալ ազորմուԹեան քո, Քրիստոս, ի գանձս պա-
հեսցի սակեզբացն ցամաքելոց. որով ի ժամանակս կեն-
դանականս սկզբնաւոր լուսոյ մտի գարնանոյն նորոգ-
ման աւուրն պայծառուԹեան՝ քոյովդ ցօղով յոգի ա-
ճեցեալ այսու փրկուԹեամբ անմահականաւ, և ան-
ցամաքելի վերամբարձուԹեամբ շառաւիղս ձգեալ ի
մանալեացն բարեաց՝ գարձեալ գալստեացդ և կրկին
ծաղկեցեալ ըստ քոյինաշունչ գրոցն յուսագրուԹեան:
Նոյ քեզ միայնոյ փրկողի և հոգւոյդ քում հօր խակալի,
միասնական սէրուԹեանդ և անճառ ԵրրորդուԹեանդ
խորհրդական գովեստիս վառք և երկրպագուԹիւն
յաւիտեանս. ամէն:

ԲԱՆ ՁԹ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Աստուած և տէր, կեանք և արարիչ, ողորմած, գթած, լոյս, երկայնամիտ, անոխակալ, մարդասէր, ամենագութ, պարգեւատու, փրկիչ, օրհնեալ, գո՛ վեալ, բարեբանեալ։ Դարան ամբարձեան, պատըսպարան վտահութեան, առանց նենգութեան բարի, առանց խաւարի ճառագայթ, քաւիչ մեղայ, ողջացուցիչ վիրաց, անհատանելեաց հնաբք, անմատչելեաց հպատուր, անյուսութեան ելք, անուն քո խոստովանեալ աստուածոյ որդի. և հօր քո ընդ քեզ հզօրի և ահաւորի, և հոգւոյդ ամենակալի և ընդ քեզ երկրը պագելոյ՝ փառք և պաշտօն գոհաբանութեան յաւիտեանս. ամէն։

ԲԱՆ Ղ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Ա. Բարեբանեալ աստուած երկնաւոր, միայն ա՛ րարիչ, տէր ամենակալ, մեծութիւն ահեղ, գթութիւն օրհնաբանելի, ողորմութիւն խոստովանելի, բարեբարութիւն երկրպագելի, խնամակալութիւն պաշտելի, մարդասիրութիւն տօնելի, պահպանու-

թիւն խնկելի, բարձրեալ անքնին, մերձաւոր կամաց բար, ապաւէն անկասկածելի, մխիթար սրտից, փառաբանիչ վշտաց, ապաքինիչ ցաւոց, ապառումն վհատութեանց, բարձումն պարտեաց, փոխարկիչ կարեաց, կարգաւորիչ կրից, յարմարիչ բանից, սանձարկու լեզուի, ջնջագրութիւն հնչից, կացուցիչ հագադի, ամփփիչ խորհրդոց, կրթարան կամաց, արձանացուցիչ յուզմանց, հանդարտութիւն մրրկաց, խաղաղութիւն ծփանաց, որ ունիս զթեւոց ամենընթաց իշխանական նիս, և խնամատութեամբ նուաճեալ առ քեզ դարձուցանես:

Բ. Պահաբանեալ միշտ երախտաւոր, որ հեզութեամբ անհպարտութեան երկայնամտեալ հանդիսիս աենչանօք անձառ հրաշիւք յանձինս սրբոց: Թագաւոր էից համայնից, ամենայնիս ծանուցեալ զթած. սկզբնահայր և նախաշաւիղ սիրոյն ընթացից. ճանապարհ կենաց, որ առաջնորդես քաղցրութեամբ դիմելոյս ի լոյսդ վերին: Չեռնկալոս մեծ վստահութեան, որ ոչ թողացուցանես գայթադղելոյս ի վայր կործանել. յուսոյ կերպարան, ճշմարիտ առհաւատչիս աղաչողաց մատանց յայտնի երեւեալ. ապաւինութիւն հանդերձեաց, որ ոչ երբեք մատնես վտանգի դատապարտութեան: Ազատութիւն հնորհաձիր, որ տաս լինապես առանց փոխատրութեան փրկանաց. առատութիւն անսահմանելի, որ քոյին փառաւորութեամբ զանարգ նիւթ հոգոյս ճոխացուցանես: Պայծառութիւն անստուեր, որ ճառագայթիւք ահեղ բարձրութեան պարածածկեալ զքշուառս՝ կրկին բարգաւաճ առնես: Բաւիչ մեղանաց բազմաց, որ զհերքեալս ի փրկութենէ առաջնումն պայծառութեամբ նորոգեալ՝ վերստին վայելչացուցանես: Ընարաւոր դիւրահաս առ ամենայն անբաւ գերամբարձութիւն յաւէտ յառաջեալ, եղեր վստահութեան առ խոստացելոյն վայելս. երանութիւն անձկալի, յոր զկենդանութիւն հնչոյս ըբանեցն ե ակնարժելի, զի զքեզ գտից՝ կենդանի: Կամք

անփոխադրելի առ ՚ի քաւութիւն գերբոյս զօրացեալ ամենագովելի. անախալելի գեղ կենաց, որ և մեռելոց բնաւին եղծելոց առնես զքանչելիս։ Ամենատեղծ աներկբայելի, որ զհուրբ կիզեալն և զհողմով հոսեալն և զժանեօք գազանաց ծախեալն ՚ի քթթել ական նուվին հիւթականութեամբ անպակաս յարուցանես։ Ո՛չ հաւասար համարձակութիւն, յորում աստուածօրէն պանծանօք պարծելն է իրաւացի։

Գ. Հայեաց, տէր, յերինից զուարթ քաղցրութեամբ յամենակործան վտանգ նեղելոյս, և արա անդորր հանգստական դիւրաւոր ՚ի բազմատագնապս հեծութենէ։ Իւ զյարուցեալ գուժարս սատակչացն, եթէ ըստպատուիրեալ սյսական դժնեայ հնարաւորութեան բուռն մարտակցաց պատկանեալ զինուք, եթէ մեղայ ոգեղ և քո ատելի կերպարանք, եթէ ցաւոց և ախտից վատնիչ և կորստական նշմարանք, մերժեսցես հանցես հատցես խափանեսցես և հալածեսցես հեռի սահմանաւ ՚ի սպառ տարագրեալ անդարձ որոշմամբ վերստին կուըլստեանն. և կառուսցես կացուսցես նպատակ կենաց և ամուր մահարձան զինչան խաչիդ ապաւինելոյս ՚ի քեզ վրկութիւն։ Իւ յայսմ անպարտ և անպատիր և անվանելի արուեստից ահաւորիդ մեծութեան լուծցին որոգայթքն գազանածածուկ սատանայականք, կապտեսցին մեքենայքն, վատնեսցին դաւթագղութիւնքն, խայտառակեսցին հաղիւին դրութիւնք, յայտնեսցին երեւոյթք որսոյն, գտցին նենգողին ծուղակք, վերասցին վարվին վերարկուք, տոչորեսցին որոմանցն բոյսք, նղովեսցին բռնաւորին չարաբանութիւնք, կորեսցի լար խաբէութեան ՚ի մահ որսողին, պարսեսցին պատրողին բանսարկութիւնք, պակասեսցին զէնք զրպարտողին, անկցին սուսերք մահաբերին, սուզեսցին սադրողին պատրաստութիւնք, արձակեսցին տուրուանք տագնապողին։ Ա՛յլայլեսցին սուտ կերպարանք կեղծաւորին, սատակեսցին խորհրդականացն խիստ յարձակմունք, ցրուեսցին կոչդութիւնք կերչացն, բաժա-

նեսցին աղինք աւազակացն, քայքայեսցին բոլք բարբարոսացն, քանդեսցին ամրոց ապստամբողացն, արգելցին ամպրոպք յանդգնելոցն, փարատեսցին փորձողին անձրեւք, հալեսցի և ցամաքեսցի եղեամն աղանդաւորին: Խորտակեսցի եղջիւր դատողին, մանրեսցին ամբառնալիք դրոշիցն կերպարանաց, փչեսցին ամբարհաւաճումբիւնք հպարտացելոցն, նահանջեսցին դիմեցմունք ճակատելոցն, քակտեսցին միաբանութիւնք զօրացն Բելիարայ՝ թէ անմարմինք և թէ մարմնաւորք, փախիցեն ընդ նոյն ճանապարհ՝ ի մի շաւղաց հետոց յեօթին ստորակոյս. ի դուբն ինձ փոքրագոյ ինքեանք ընկճեսցին: Յեղանակեսցին ձերբունք ձանձրացուցչին, հատցի կապն կորդուածեան մշտաջան աւազակին, նողկացի մտացս կայից համբոյր շողքորթին, ընդմիջեալ մեկնեսցին նեռատգութիւնք նեղչին, կացցէ ի սասանման նաև խարդախողին, խլեսցին յարմատոյ անտի ատամունք խածանողին:

Դ. Այսպէս փայտիդ օրհնութեան կենաց՝ յորում պղկեցար աստուածդ անըմբռնելի, յիշատակաւ բեւեռացդ՝ որով ի գործի մահուն մածուցար արարիչդ երկնի և երկրի, արեամբդ սերտուներականաւ՝ որով ըզ վիշապն մեծ կարթիւ ածեալ որսացար, լեզուին դառնութեամբ՝ զոր արբեալ, զդեղատուութիւն կորուսին արտաքս հեղեր, պատմաբանութեամբ ըղձական ճառիւք կրկին սարսափելեաց՝ որով զլքութիւն հակառակողին ըմբերանեալ ամաչեցուցեր, անուամբդ անհասականաւ ամենայնիւ անթարգմանելոյդ՝ յորմէ դողան և դառնապարսին սոսկացեալ սաստիկ սարսափմամբ բնութիւնք ամենայն երեւելիոց և աներեւելիոց, եղիցին այս ամենայն պարգեւք շնորհաց խոստովանելոյս ի պաշտպանութիւն, ի բժշկութիւն և ի քաւութիւն: Իւ մահաբեր դառնաթոյն օձին, և որ ի նմա ազդեաց սիեզերատաւ չարութիւնն, ի սատակումն եղիցի նորին. նոյն ինքն ի կորուստ և յանբժշկական հարուած տանջանացն սովաւ մատնեսցի,

կապեսցի և ըմբռնեսցի : Աղէկի ոզբմութիւն առեք ծոզիդ ընդ իս , և շունչ ոգւոյս իմ ընդ քեզ անբաժա նօրէն կապաւ միացեալ 'ի մի :

Ե. Աւ որ ոք ընթերցցի զայս աղերս ձայնի մաղթա նաց գոչման աղօթից հայցման ձերոյ և տալոյ, կուսի և երիտասարդի , և եթէ յաղախնաց ոք պաշատեսցի աստուածսիրաբար , հաւատարապէս անաչառութեամբ ընկալցին 'ի քէն մեռանելութեան պարտուց ազա տութեան , հաստեալ վերատին յանարատութիւն նո զոզ մաքրութեան , նկարեալ զարձեալ զքոյդ կերպա րան անփոխոխելի : Ահա սիրապէս հնարաւոր , զօրեղ անպատուհմ , անհաս , անիմանալի , տեսցես աստանօր 'ի հառաչանս կոչնոզանաց այսր հեծութեան , որ 'ի բոլորից շրթանց ընծայեալ քեզ մատուցանի , վասն հօր քո երկնաւորի և բարերարի , և հոգւոյդ սրբոյ փա ռակի և կենդանատուի , աստուածածնիդ բարեխո սութեամբ և խնդրուածովք ամենայն սրբոց : Օ՛ի դու ստեղծեր զամենայն . և 'ի քէն եղեն ամենայնք , և դու տիրես ամենայնի . և քեզ փառք յամենեցունց , միդ յիսկութենէ անժամանակ Երրորդութեանդ , զու գակցապէս փառաւորեալ յանբաւս , և յաւիտենից յաւիտեանս . ամէն :

ԲԱՆ Գ.Ը.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱՅ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա. Տէր տէր գթութեանց և աստուած ոզբմու թեանց , անուն մեծութեան , ձայն ահաւորութեան , կոչումն սաստկութեան , լուր անհասութեան , բար քոտ դողութեան , հնչումն հիացման , յուսադրու-

թիւն բարեբարուքեան ամէնողջմ քաղցրութեան ,
յորմէ երկուցեալ սասանին ամենայն բնութիւնք և
ղեղց ի քո սպառնալեաց ահիդ պակուցման , սաւառ-
նին սերոբէք , ամփոփին քերոբէք , պարսպրին պարք
լուսակերպիցն , երկնչին հիացմամբ բոլոր պետու-
թիւնք վերնոցն , նոյնք ցնծան դողութեամբ մեծաւ ի մի նա-
ւահատիս բերկրութեան , զարհուրին դեւք , ընկրկին
չարութեանցն գունդք , պակասին խաւարասիրացն հո-
գիք , անդնդոց մատնին հրեշատիք օտարին : Կապին
նշանաւ խաչին յարձակմունք դիմամարտին , փակին ի
ստորին բանտի քինաւոր ամաղեկացիքն , անխզելի հան-
գուցիք պաշարին խոժիք հակառակորդին , արգելին
անզերծ զընդանաւ՝ մահաւլինացն կաճառք , պնդին ի
մեռացս ահեղ հրամանիդ այսականացն գումարք , սա-
պանձին կարկեալ ընդդիմաբանիցն գաւակցութիւնք ,
պարսաւանդին հիւծմամբ կորստեան աներեւութիցն
ժողովք , անլոյծ շղթայիւք նեղին առաքելութիւնք
Դերաքրիստոսին :

Բ. Ահա կարկառեմ մատամբք ձեռինս զտեառնա-
գրութիւն նշանիդ ի ժամ գիշերիս , որ ոչ մեծանաս
խաւարաւ անգիտութեան , ամենեւին տեսականու-
թիւն , քան թէ ի լոյս անմատոյց հանգուցեալ բնա-
կես : Ընկալ զաղաչողս վտանգաւոր գոհաբան ընդ պահ-
պանութեամբ թեւոց հզօրիդ , փրկեա ի ցնորից և
համուստ պղտորութեանց , սուրբ աչա զզգայարան հա-
յելեաց սրտիս նկատմանց . ամրացս փայտիդ կենաց
ի տխրական անրջոց , արեամբ քո սրսկեա զչքնարկու-
թիւնս կայից , զհետս ելումտից կաթուածով կենա-
բար կողիդ գծագրեա , երդոյն պահպանարան քառա-
կերպիդ ձեւակերպութիւն եղիցի , հանդէպ տեսու-
թեան աչացս ամբարձման փրկականդ քո կրից խոր-
հուրդ առդիցի , ընդ բարաւոր յարկիս չարչարանաց
քոց գործի հաստիցի , զծառայդ օրհնութեան հաւատք
յուսոյ իմոյ կախեացի : Արգել , տէր , սուաւ զատա-
կիչն հոգւոց , մոցէ անխափան պաշտպանն լուսոյ , և

ընդ սաստիկ ծանրութեան ցաւոցս և զբեռն պարտեացս թեթեւացս, զոր ի լսարանի մտացս ամիսոփման մահճացս անկողնի ուշաբերեալ դյուսահատութեանցն դառն պղտոյն՝ խոստովանիմ ամենագիտիդ զանհամար մատունս գործոց չարաչար անօրէնութեանցս։

Գ. Ձանգս զվաստակեալս ի բազմածութիս աշխատութենէ, բարձ զտադնապ տարակուսանաց ոգւոյս կործանման, զդառնութիւնն ընդ վշտացն, զկեծութիւնն ընդ կարեացն, զանձկութիւնն ընդ թշուառութեանցն, զհառաչմունան ընդ խորտակմանցն, զբեկութիւնան ընդ ապշութեանցն, զմմբրութիւնան ընդ շրմանցն, զալբեղութիւնն ընդ յիմարութեանցն, զթերամտութիւնն ընդ խելագարութեանցն, զսառումն սիրոյն և զերկայն ջերմութիւն ազգականն ախտին։ Ժանդակ լեր տկարութեան բազմատխուրս տարտամութեան, բարեգործ աչխոյդ շնորհի, ձեռամբդ նորոգողի, մատամբդ կենսաբաշխի, փառօքդ մշտափայլի, յարակայութեամբդ անեղծի, երեսօքդ զուարթականի, խոկութեամբ էիդ պաշտելի, բարձրութեամբդ երկրպագելի։ Ձատոն զչարաչար հեծութիւն կորստականս խեղդման, զնոր դիւս չարին, զհին խարդախութիւն բանսարկուին, զօտար ազդեցմունս ի մահ կրթողին, զանչարմարական երեւոյթս հանապազ զորդեան եղեռնագործին, զառ աչս հնարադրութիւնն դժնդակ դիւին, զողբական բոցաշնչութիւն ձգող կախարդին։ Պահեա ի տեղոջ հանգստեան մեռօրիք նակ այսր դադարման յաներեւոյթ մտածութեանց, ի մանաւանդ սխալութեանց, ի մեծագոյն գայթագղութեանց, ի փոքրագոյն ոտնառութեանց, ի խաբեբայ չար ձանձրութեանց։ Ձեռացս զանհանդիպ մտածութիւնն ի ղպայութեանց ծառայիս յանցաւորի, զկիրս բառնելիս, զվարս թշնամանելիս, զդիպուածս պատահառելիս, զկետս վերիվերելիս, զպատիրս ձաղելիս, զխորհուրդս անգոնեելիս, զաւելաբանութիւնս նշկահելիս։ Ընդխառն հոգւով և անշաղախ մարմնով զապաւինեալս

'ի քեզ հանդերձեա , 'ի հնչմանէ հողմոց , 'ի զարկմանէ բռնութեանց , 'ի բախմանէ փոթորկաց , 'ի յոտմանէ մրրկաց , 'ի յարձակմանէ գաղանաց : Ի կափման աչացս հայեցուած սրտիս մի առնելոյ , այլ զուարթասցի պայծառասցի վայելչասցի՝ ընդ քեզ փայլեսցի , տէր Յիսուս Քրիստոս , լսաւորդ վառմամբ անշէջանել եաւ : Եանիւ քո սրբեա զպատսպարանս բազմականիս 'ի խորամանկութեանց , 'ի զգաղմանց , 'ի քո ատելի յիւ շառակաց , 'ի վերնամարտ մոռածմանց , 'ի քրէական մոռոսութեանց , 'ի տիրանենդ անշնորհութեանց , յաս առածընդդէմ հերձուածութեանց : Գնդիւք վերնայնոցդ վերակացու լինձ լեսիս , պետութեամբք , իշխանութեամբք զօրաւորքն անյաղթականաց մաքուր մատարարաց սուրբ աստուածութեանդ . առաքեալքն աւետեաց աւետարանաւն , մարգարէքն կատարանօքն , մաղթանք երջանկացն 'ի կատարած աւուրն ընծայեալ : Որովք նիրհեցիս երկիւղիւ քոյ քեզ տրամութեամբ , և զարթեայդ շնորհօք քո կրկին ուրախութեամբ , եթէ վհատութեամբ ննջեցիս , յարեայդ դարձեալ հոգեւոր բանի բերկրութեամբ . եթէ ընկողմնեցայդ մեղանօք , կանգնեցայդ վերստին զատեալ 'ի խղճէ անաղտ անբծութեամբ :

Դ· Լուր խնդրուածոց ամենահատաչ ձայնիս հեծութեան , միայն բազմագութ , բարեխօսութեամբ սրբոյ աստուածածնիդ և ամենայն արդարոց և նահատակաց ընտրելոց : Ու քեզ փառք յամենեցունց իմովս գոչ մամբ վերառաքեցեալ սրբովք զուարթնոցն անմահ կանաց դասուց , 'ի գովեստ հօր քոյ աստուածոյ մերոյ և հոգւոյդ սրբոյ բնաւից հաստոզի և նորոգողի , յա ւիտեանս յաւիտենից . ամէն :

ԲՆԱՆ Գ.Բ.

Ի ՓԱՑՑՆ ԵՐՋԱՆԻԿ ԲԱՐԵԲԱՍՏՈՒԹԵԱՆ ԺԱՄԱԿԱՐԻՆ

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԵԱՆ

ԱՂԱՉԱՆՍ ԵԴԵՒԼ ԸՆԴ ԿԵՐՊԱՐԱՆՍ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԵԱՆՆ

Ա. Պ ՈՒՀԱՆԱՄ զքէն, բարեգուԹ, միայն մարդասէր, արարիչ երկնի և երկրի, որդի աստուածոյ կենդանւոյ, այն ինչ զարԹուցեալ անձկուԹեամբ սիրոյ քո յիշատակի ի լուԹիւն հնչման փայտիւ հրաւիրման: Որով բախեալ զձայնարձակուԹեանդն զազգս ղարան, սԹափեցաք կանգնեցաք, ի վեր յարուցեալ ի մեռօրինակս Թմբըմանէ. ուստի իբր կոչմամբ սփոփանաց բանի բերեալ ձգեցաք ի ժամպաշտաման օրհնաբանուԹեան, յանդիման լինել քեզ ուրախուԹեամբ հանդէպ հատուցմանս բեմի:

Բ. Ահա փառք քեզ, անսահման անուն և անբռնական դակելի զօրուԹիւն, որ այսքանեօք հնարաւորուԹեամբք ընդ փրկուԹեան իմում հոգացար. գոհաբանեալ ահնեղձ իսկուԹիւն, որ կերպարանեցեր հրաշիւք առաքսին զհանդերձելոցն նմանուԹիւն, հանդարտ գործեաւ վայելչականաւ փայտի անօթոյ առ քուն անյարիր սաստիկս որոտացեր. որպէս Թէ ընդ ծուլուԹեանս դանդաղուԹիւն զյանդիմանուԹիւն խրատուդ խառնեցեր, ի հայրենի սիրոյդ հեզուԹիւն զուժգնուԹիւն ճայԹմանն յարեցեր. յընդոստ զարկուած երկուց միջնորդայ՝ մարդասիրապէս քաղցր անձրեւեցեր. ոչ մեղմուԹեամբ մեղմական վանդիւ նիրհմամբ ընկղմեցեր, և ոչ անխնամաբար ահաւորուԹեամբ զատապեալ հոգիս զարհուրեցուցեր: Ընդրադրական երկրը-

պագութիւն ստեղծչիդ քոլորից, որ այժմին ցուցեր համայն յայտնապէս զօրինակ ահեղ բարբառոյն մեծի աւուրն յարութեան, կենդանացուցեր ի դադարմանէ դժոխական անբանութենէ, ի խնդիր եղեալ կուեցեր զպակասամիտս ի գինիդ ուրախութեան. արարեր զոգ սոյն լինել հանդերձիչ անարատ հարսինն առ սէր փեսայիդ. երկուցեր փոքր այս խթանաւ զապարատանին զվնթխարութիւն, լուծ ստուար կրթութեան ստամ բակին ուսոյ զայս իր գործեցեր, վարապան վանիչ չարախօսին կզակաց եդեալ կազմեցեր: Փառաւորեալ յաւէտ անբաւ բարձրութիւն մեծիդ աստուծոյ, որ փոխարկեցեր զփայտին պարոխս յաղաստութիւն շնորհիդ կենաց, իմաստնացուցեր վերատին դարձեալ զոգ յիմարս ցնդեալ՝ հոգեւորական հանճարոյդ, կարկառ կռճմամբ զանբժշկութիւն հարուածոց օձին առանց մոռացման միշտ թարգմանեցեր, ընդ ներորդութեաց նոյդ գծագրութիւն զկապն երեքկին իմ միասակարին ի կատարածին սովիմբ կրկնեցեր:

Գ. Գովեստ ներբողից բուրմամբ խնկոց վերատաք քեմ քեզ, ամենահնամ, զի ի ստապատիր կռոցն բազմաստուածութենէ առաւել յաճախագունիւք որոյ ցար զանձն իմ պարտաւոր ի քո երկրպագութիւն, խրոխտ և ահարկու նուիրեալ փայտիւս զճշմարտութիւնն քարոզեցեր, մեծացուցեր այսր պատճառաւ պատշաճականաւ զնոր աւետարանութեանդ պատիւ: Սոյն ինքն աղաղակ բարձրութեան գոչման սպառազէն նուիրեանդ քո, արքայ պետութենից կայսերաց երկրի տէր Քրիստոս. նշան խրախութեան աւարտման հանդիսի մարտի քո, Յիսուս, յորում իմանալին փարաւօն կապեալ ըմբռնեցար, կռփիչ հանապազորդեան գլխոց դագաթան հպարտացեալ չարագործին՝ շերտս այս տաշեցեալ: Սոված գումարին ի պատերազմի որդիք Սիօնի ընդդէմ աշխարհակալին խաւարի. տուն իմն աստուածաւանդ կրթութեան կարգեալ ի հեռուստ այս դրօշուած իւղեալ՝ առանց հնանալոյ և կամ խա-

փանման, նշանակիչ ժամանակի ապագայիցն հատուցման՝ ի բացուստ անդր ծանուցմանըն, ազգակից հանգուցանման կենացն փայտի՝ որ՝ ի դրախտիդ աստուծոյ, կոչարան բարւոյ հաւաքման փոյթ ընթացիւք՝ ի յարկն օրհնութեան, պատկեր տեսակի տնկոյն գիտութեան՝ ի կարգ ընտրութեան բարւոյն և չարի, յիշատակ մեծ տեառնապրութեան յերեսս կերպիս հոգւովդ սրբով զնչան խաչիդ, նախաղեկոյց աւետամատոյց փառացդ գալստեան՝ ի դչնոյն պահեալ սուրբ Թագաւորիդ, յորդորիչ քաջալերական մաքրապարիսի խրախճանութեան, անախտական սիրարկու անձնահամբոյրն կցորդութեան չքեղաշուք քողընծայ ամենածին կուսին Թագուհւոյ, յարդարիչ ծածուկ պճնութեան՝ որ՝ ի հոգին է վայելչութիւն. նմանութիւն պատգամին Սիննայ, որ՝ ի սիրուն եաց արտաքս առաքիւր. միշտ օրիորդ պանծալի անշուշտ որդւոյ մայր անարատիկ՝ սուրբ փառաւորիդ։

Դ. Վերագոյն քան զնրիքովին փողոմն եղջերեայ ըզբանութիւնն Իելիարայ սուրբ հարթեալ տապալեցեր, քարինս արձակեցեր պարսիւս այս փայտեայ՝ ընդդէմ Գողիաթու, գայիսն նորոգ կառուցեր վկայ ահարկու կործանմանն սատանայի, գ՚ի խոր աձեցեալ արմատս մեղացն մեքենայիւս այսու խլեցեր, զմոռացեալ դորձոցս իմ պարտս՝ այսր երախտեօք ընդ իս կապեցեր։ Օ՜ որ եթէ այլ իմն ձայն բանիդ աստուծոյ անուանեմ նախապատուհմ եկաւորութեանն, ոչ սխալեմ քան թէ ճշմարտեմ. ՚ի տկար ամանս այս նիւթոյ հոգեկրի՝ մեծութիւն գործոցդ Յիսուսի առաւելապէս պատմեալ հռչակի. բիւրաւոր օգնականութիւնս վերնապարգեւս և քոյինատուրս ՚ի յայսմ անպատասպար ապաւինութենէ երկրականաց զարմանագրեցեր։

Ե. Խոստովանեալ անուանդ անքնին մարդասիրիդ բարեխնամութեան, խնկեալ խորհրդով սրբամատնութեան անգծագրելի կերպարան լուսոյ, որ կրնաձիր նշանաւս այսու նեռս արձակեցեր հեռաձիգս ձայնա-

տրականս օգաչուս և յարմարաթռիչս ունողս չինքեան հոգի կենդանի, որով անսխալ հանգիստմամբ գնալ տակն խաւարային աղեղնաւորին գաղտնութեան յա ւէտ կործանմամբ ի յետս ընկճեցեր: Իբր զայտանէշս ամրաբերձ բերդամարտուԹեան կանգնաւորս անվայ բարկելիս՝ աստուստ անդանօր զկտեալ դիպուածս այս փայտի զարկման հրեշտակ կամարար Թշնամւոյն ներ հակ վերստզարկեցեր: Բանիս հրամանի մեծիդ ակ նարկուԹեան, օծուԹեամբ շնորհիդ արեամբ քո խառ նեալ՝ զայս եղջիւր խեԹկիչ մոլի գուժոլին իբր գնասչիդ փրկանակ յեսանեալ ուրեցեր: Ի մեծ ազդմանէ այսր ա զաղակի գեր քան ի վերնոյն քանդեալ վերացա- դը բանդն ամրուԹեան կամաց անվայելուչ և ամենեցիչսս խեՆեշուԹեան կարճամտին, ընդ հրեական սրտին ի մտասից և ստուերական տանն կործանուԹեան:

Զ. ՓառաբանուԹիւն քեզ վերընծայեմ, անմահ Թա գաւոր, զոր արարեր և հաստատեցեր աջովդ քո հզօր, աղաչեմ զքեզ, կրկին ներդործեա: Ընդուցեր սուրբ հերքեալ առ ի մէնջ գնեԹ դժնդակ խորամանկուԹեան բանսարկուին, զտաժանական տասդ մեղաց, զհողմն գառնուԹեան շնչման խաբողին, զտարր արկածից մա հու երկիւղն, զառ ի յօդից ցնդմանէ միաստակաց բեր մունս սխրեցուցիչս, զայսախառն հեծեծուԹիւնս Թալկացուցիչս: Ցրուեա վերստին քոյինաղէն հեծա նաս՝ օժանդակեալ Թեւօք նշանիդ՝ զամպս հրաձինս, զորոտմունս կարկտաբերս, զպատռին ցողմունս հրա խառար կեղծաւորուԹեան փչման բաղմատանի վիշա պին, զսուր սատակման, զձակատամարտ դիմեցման, զպարուցելոցն ի վերայ վայրենական խորհրդոց զդի ւացըն կաքաւս: Ցորմէ զարհուրին յայսմ իրէ փոքուէ՝ տեղի տուեալ մեծաւ դողուԹեամբ, կիրթ լսին ծա նօթուԹեամբ յայտնի գիտացեալ, Թէ յայս ազգ ձայնի յառնէ տէր ի գատաստան: Այլ խրախուսին հոգի ա բուԹեամբ զքահեալ սնդապէս սուսերաւ հոգւոյն աս տուածարեալ մարտիկք ամենայն ի ձեւ կանոնի այսր

Սիշատակի, որ զամենափոքր հրոյն ընտրութենէ գոչ
մամբ անկերպագրելեաւ համօրէն ազանց քարոզէ ՚ի
յօրինաւոր ասպարէզ երջանկաբար նահատակութեան:

Ե. Չարաւ ահա փող աւագափող, համբարձաւ սո
վաւ աստուած օրհնութեամբ, պատմեցաւ սովիմբ
ամենայն երկրի, հնչեաց ՚ի լսելիս բաժանման հեթա
նոսաց, ձայն պահապանաց մեծին զօրացաւ, ըստ բա
նին Եսայեայ, և ՚ի նոյն բարբառ առ հասարակ ցընա
ծայցուք: Ցնդեցան ջրոյն առակաւ ՚ի ձեռն սորին
թշնամիք խաչին, անպատուեցաւ ճաշակին պտղոյ ա
ռաջին փայտին, ոտնեցաւ նիւթս այս խորհրդական
կենաց անուանեալ, անարգեցաւ երկաթ առ ՚ի պէտս
պատերազմի, իբր զորբութիւն տեառն ՚ի սանձս երե
վարին մեծին նշանի այս փայտ կենաձայն յարմարա
գրեցաւ, ամփոփեցաւ օծեալս ցպով հովուին երկնա
նոյ սուրբ իշխանութեան մարգելային ձեռին: Ոչ գըծ
եաց ՚ի քար տաճարին մաւրձ ինչ գործողի. խակ յաս
ուածակերտս խորան փայտս այս նուիրեալ ընդ խաչին
Թեւոց սլացեալ զօրէ: Ոչ ՚ի գլուխս ամոցն և կամ
յեօթնիցս եօթներորդս յոբելինին՝ յանկեան ուրեք
խափանմամբ փողէ, այլ ընդ ծագս սիեզերաց և ընդ
ծիրս եզերաց՝ ՚ի ծոցս ջուրց բազմութեան ծովուց և
կղզեաց նոցա յաճախ սատկութեամբ անարգել ձայն
մամբ իմն աստուածայնով հնչեցեալ աւետարանէ: Կո
տորեցան սուսերք սատակողին այս փայտի ցուցմամբ,
յանօգտակարէ անտի մեզ փոխաձեւեալ ՚ի խոփս և
՚ի մանգաղս:

Զ. Ոչ արձագանք արձանաց ՚ի խորոց լինչ գանչու
թենէ խիստ առաքեցեալ, և ոչ դժնդակապէս ըստ
խնամատարի՞ն մեծին օտարի զօդ վերաւորեալ, ոչ անա
խորժ սրութեամբ ընդ ունկն մտեալ և ոչ զաման ուղ
ղին անկամակութեամբ չար թնդեցուցեալ. ոչ ոս
կերցն փուշ խրատուցման յանձն բուսուցեալ և ոչ մը
տացն պղպղ ապշութիւն առաջի արկեալ, ոչ զանգակ
նիւթոյ պղնձոյ դանդաչեցուցեալ և ոչ քար ընդ վեր

զըս սալի առանց քաղցրութեան առ նոյն զարկուցեալ։ Պարփակարան անխորտակելի նորոյս Աիոնի, մի սա ի սպասուցն կազմուածոց արարչաւանդիցն գլխաւորաց, զոր եկեղեցականքս քրիստոնէից ընդ ղեւտացեանցն զգուշաւորապէս բարձեալ յանձանձեն. օրինակ ձայնի հրեշտակին, զոր առակողին քան՝ հաւուն կոչմամբ այսու տեսակաւ զայն տպաւորեաց. նոր գործ ի հնոցին նուագարանաց աւետարանին՝ զարթուցիչ հոգւոյն աստուծոյ առ մեզ, քան առ օրհնաբանութիւն սաղմոսարանին ի վերայ Եղիսէին։ Ակզբնապատ նախընթացութեան աղէկարմար ջանիցակաց բարեպատուիղ ողբերգարկուածոյ՝ բարեացուցական բամբռան բառացի բարառնութեանց. սրինկ նորոգ այլ իմն տեսակաւ առեալ մեզ ընդ հնոյն փոխանորդութեամբ, ոչ հեթանոսօրէն ուրուագծոյն հնչման և կամ հրէաբար խակախորհուրդութեան, զոր մարգարէն տէրամբ ապագեցոյց՝ ի բաց արա չինէն, այլ զսա սիրեաց և կրկին պատուեաց մաքրական տածմամբ՝ ահարկու դիւաց և ամենայն չար պատահարաց։

Թ. Նա ապրդ ընկալաց օրհնաբանութեամբ յարգեալ գովեսիս զայս տուր սրբութեան՝ ինձ պահպանութիւն և քո փառաւորութիւն, քո պաշտօն և իմ գոհութիւն, անաղանդ արուեստ բարձրութեան արարչական փառաւորութեանդ։ Ոտիկ ձայնդ այդ աստուածարեալ ընդ պատուաստ յօդիցս շաղկապութեան հանել ի հոգւոյս զպատիւս դիւաց և զմուտս անիծիցդ և մեզայ ապականութեան։ Ըրասցես լինել զայս իւր նշանակիչ ջնար ջահաւորական, անջրելի նամակ, ջնաւագով անխափանական տէրունական անօրինականացդ։ Ահա պարգեւեա սուքս, բարեգութ, աղաչեմ, հզօր կրկին մեզ հնոցեա պահպանութիւն ի դիմամարտից յաներեւոյթ և յերեւելի։ Ընձեռեա մեզ, ձեռն ա մենալի, որ բանաս և մնաուցանես պատրաստաբար բաշխմամբ ի մատունս բազմապիսիս, օդոց քաղցրութիւն, անձրեւաց շահեկանութիւն։ Պակասեսցին

քոյով հրամանաւ այսու բարբառով հողմ տապախաղն, ընդումն ցաւաբեր, յարձակմունք հինից չար խարդախութեան. սովաւ խոհանեսային ամենայն դիմամարտութիւնք զինուորութեանց դժնեայ մատնչին, հալեսցին հատցին և մեռցին յերջանիկ ձայնէ օձեալս այս փայտէ որպն և ուսիչ, և ամենայն նմանք սոցին, որ ի մերոց մեղաց զօրացեալ ընդ մեզ պատերազմին: Աբմատացս մեզ սովաւ տունկ երանութեան զյուսոյդ ի քեզ մեծ պաշտպանութիւն, ստեղծիչ բոլորից, տէր արարածոց, զայս ծառ Յաբեկայ, որ ունի կախեալ ի դիտակ ոստոյն զաւանդ սուրբ նորոգ այժմու փրկութեանս ծաղկեալ քեզ, Քրիստոս, ի պտուղ կենաց անմահականաց: Փախիցեն յանհուն հեռաստան խաղին խաւարի՝ այսր փայտի փառաւորելոյ բարեպէտից ձայնարձակութեամբ՝ նեռաբոյ ներհակք ստապատիրն ստորնականաց բազմաձեռնեան խարդաւանողաց: Աներժեսցին սովաւ ի յանդոյ պաղատահմական արօրադրութեանց մերոց սահմանաց և ի քո մշակեալ կենդանի երկրէ՝ վերք վատնիչք և հոյլք մորմոքեցուցիչք. կարեսցին սովաւ յաւելուածք կրկնատեղ և անվայելուչ պատահմանց՝ ի հնարից չարին ի մեզ յայտնելոց. խոհապէս վանեսցի սովաւ, որք յերկաքանչիւրոց բնութեանցս մերոց վերերեւին ինքնասահեղծութիւնք մերձաւոր դաւաճանողաց. յուսեցին օտարին վերկալ մտածմունս, և յայլուսին գարշ գոյութիւնք անմաքուր վերանոցն ապականողաց: Փրկեա, տէր Յիսուս, աղաչեմ զքեզ, փրկեա, բարերար. կարկառեա առ ի ս զաջդ ամենապով, և օգնեալ լինէ սովաւ՝ վերծո զնս յամենեցունց ընդդիմացողաց:

Ա. Խառնեսցի միասցի հրաման քո՝ ի սոյն՝ առ՝ ի փոխարկել զադամանդեայ սիրտս յիմարեալ՝ ի քոյին բանիդ արփիւնատուութիւն. հարցես միեսցես զայս նեցուկ հրաշից քումդ սքանչելեալ՝ ի սիրտս ծորեալս և յոգիս լքեալս, և հաստատեսցես կազմեալ պնդապես՝ ի կայուն ուղիղ անսասանելի. իսկ զանբնդոսան

կակղացուսցես զարմինուլ և զգաստ լինել յոգի հե
զուԹեան ատտուածաւանդ քո պատուիրանիդ. որպես
զՊօղոսն և զՍաւԹէոսն։ Յիշեցո՝ մարդասէր, պա
տուեալս այս փայտիս զերախտիս խաչիդ, որով զան
ճառան ներգործեցեր. բարձ յինէն կեցուցիչ, զվանդ
պարտեացս պանծալի լծակօք ամբառնալեաց նոր տա
պանակիդ։ Նացցին կամօք քո, հզօր, ի յայս ձայն կե
նաց՝ լսելիք սրտից յամառեցելոց, լուիցեն յայս մեծի
բարուԹեան ի քումդ ակնարկուԹիւն՝ ականջք խլից.
պարզեսցին ի ձեռն սորին լեզուք համրացելոց. լա
սաւորեսցին ի սոյն աեսարանք աչաց, հայել մաքրա
պէս ի քեզ պշուցեալ անայլայլաբար. ղղջասցին դարձ
ցին կազդուրեալ կամք յափրացելոց. ընձեռեալ տա
ցես, աէր, տագնապելոյս անձրեւ արտասուաց։ Ն
զկսի քեւ սա մեզ լսւր ցնծուԹեան, ձայն ուրախու
Թեան, բարբառ բերկրուԹեան, նուագ հանգստեան,
նիւԹ երանուԹեան, պատճառ փրկուԹեան, առիԹ
քաւուԹեան, մերժումն վշտաց, խոսումն խեղդմանց,
ընդարձակուԹիւն նեղուԹեանց, համառօտումն խեԹ
մանց, հալածումն հեծուԹեանց, ԹեԹեւուԹիւն
Թառաչմանց, յապահովուԹիւն կարեաց, կարդադրու
Թիւն կրից, ապուխուԹիւն վհատմանց, բժշկուԹիւն
ցաւոց, տեւականուԹիւն հեղգուԹեանց, ուշադրու
Թիւն անտեսից։

ԺԱ. Ի յայս կամուրջ ցանկալի անխոտոր և անխո
տրնակ, և ի վերնաշաւիղ բարձրաբերձ սրբահետ
անդուղ երկնաչուս, առ հայր քո օրհնաբան ահաւոր
անուն ձգեալ մատուսցես, բարեբար, հոգւոյդ ա
ռաքնորդուԹեամբ միանալ ի քեզ անընդմիջելի. որով
և սրբոց միոյ միայնոյ և միասնական տէրուԹեանդ և
անեղծ արարչուԹեանդ ի կենդանեսցես և յանշնչակա
նաց հաստեալոց վայելչական գոհուԹեամբ փառք և իշ
խանուԹիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ Զ.Գ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՅ

Աղօթք Թարգմանօրէնք վասն պրպտելոյ խղճի Միւռոնի։

Ա. Սուրբ ահաւոր անուն քարձրեալ անպատում, անձկութեան փափաք յարտասուժելի, ի սրբերդենիցն վառ ատրոպատ միշտ սրբաբանեալ բնակեալդ ի սրբում, լի և ամենազեղուն բարութեամբ առատաձեռն անշուշտելի, լոյս բարի և ծագումն գովելի, երկրպագեալ վառաւորութիւն. ահեղ և անշնչելի, ամէն և յամենայնում։ Ակսուս բանիս դաշամբք յուսոյ ուխտ ընդ քեզ միութեան, հզօր, այս, ամէն, ալէլուիայ. գովեալ թագաւոր հանուրց, աստուած բոլորից, ընտեղծիչ գոյից և տէր կամարար, միայն առիթ պատճառաւորաց, փրկիչ և օծեալ միառապաշտելի։

Բ. Ուսոի մեկնակից թարգմանեալ ի մեզ զայս գանձ անվաճառ և հարստութիւն անսիսկադրելի, Յիսուս Քրիստոս արքայ երկնաւոր. որում դողութեամբ մեծաւ սպասեն անմահականացն ահեղից լուսաբերան բոցաշնչութիւնք, կրկնեալ քեզ յօժարութեամբ ի հաճութենէ անխոտոր մտաց, ծունր գոհութեան ընտեղծող էութենից, որ են ի տեսման և ի ծածկութեան։ Որ եսդ և էիր միայն բովանդակ ամենեւին անպակասելի, առեր զմեզ խակապէս համայն, զի ի լրութենէ քումմէ լցուսցես. օրհնեալ և բարեբանեալ, ծանուցեալ յաւէտ միշտ անքննութեամբ ողորմութեամբ մեզ ի փրկութիւն, ի փառս և ի գովեստ անճառ բարձրութեան ահաւորիդ քարեբարութեան։

Սկզբնաձիր օծմանս չնորհի մեծախորհուրդ հրաշազարդութեան. քանզի լայս քո մեզ ծանուցեալ ճառագայթ անհաս, ծագումն անսահման, արեգակն անաչառաս փիս, աստղ առհմանիչ երկակիշիս տարրութեանց, ճրագ առից և լոյս հեռեւմանց, որով ի ցոյցս խնասից եկեալ տեսութեամբ բանիս այս յարմարութեան, տօնեմք պարերգութեամբ հրեշտակօրէն յառակամտաբար փրկչավայելուչ կնդրկաւ խնկեալ զպարգեւաբաշխս աստուածութիւն ամենիմաստիդ յիւղ զուարթ անբիծ դաւանման։ Քանզի ի սկզբան անդ կապտեցելոյ ողորմելի տխրականութեամբ ի փչմանէ բարձրադոյն չնորհին՝ հայրն իմ սկզբնատեղծ՝ և հնացեալ յաւէտ մեզ զպլըն գերմամբ ի մահ դրաւեցաս, կապեալ ընդ եղծման ապականութեան անղերծ հանգուցիս, ի ծառոյն պատճառաւորեալ յանկումն անչարիր ամենակործան գլըման, հերքեալ ի լուսոյ՝ այսր խաւարին վայրի մատնեցաս. իսկ դու, գիմած աէր ողորմութեան, քանզի յաւէտ քան զնոյն ծանեար զոր ստեղծեր, և զի չէիցն ակնկալութեամբ չեկաց յոր ինչ էրն, որով անկարողանայր իսկապէս տեսանել ի լոյն վերին անմատոյց գերակայութեան անսահմանելոյդ, ոչ մըշտափայլ յարակայ վառմամբ անաղօտելի տարածանեցեր, այլ գիշերայնոյն ոսնալալիրծ մթին արհաւրաց ձեռնկալութիւն ձիթոյ՝ շարամանութեամբ նիւթոյ պատրուգի ընդ նոյն զանգելոյ՝ յօրինակ քո անախտ միութեամբ ընդ մեզ խառնելոյ՝ մարդասիրապէս հիւսեալ կազմեցեր. զի որ ի ստուերս մահու տարագրեալ գոտաք՝ կանխակորուստ անկումն պարտեաց, ի պատճառ իրին ազգակցաւ պղծոյն ջահաւրեցեալ հատաւոյն վառմամբ ի նոյնն դարձցուք խնկաւորութիւն. որպէս և փայտիւն մահու՝ մանմամբ քո ի նա՝ ածեալ մանուցեր զմեզ, առակաւ մեծի խորհրդոյն միաւորեալ ի փայտն կենաց։

Գ. Լ։ Արդ որպէս ոչ է օր լմամբ առանց գիշերոյ, և ոչ անօրինութիւն յարկի առանց ձիթոյ պի-

ասէից խնդրոյ. քանզի իբր օրինակն հաստատակային ոչ նուիրատուր՝ զմարմնատուր աշաց տեսութիւն լուսատուր առնէ, նոյնպէս և մարքեան քրիստոնէից չնորհին ընտրութեամբ անխմանալեաւ զանեղեւոյթ հոգիս միութեամբ ի մեզ անտեսիդ հրաշափառապէս պայծառացուցանէ։ Ո՛ի որպէս յիջումն լուսատրանի սուրբ աւազանին լուացմամբ մարմնոյն զանձինն հաւատոմբ առնուլ սրբութիւն, այնպէս ի յօծումն իւղոյն պարթեալ յատուկ զհոգւոյն զօրութիւն տովիմբ և ի սոյն համարիմբ ունել ամենայնիւ անեղմնելի։ Իբ որպէս հրամանդ աերունական օրհնաբանելի զքաւութիւն մեզայ ախտացելոցն նախաւձեռիր, խակ ոչ հաւատ ունողացն առ այն՝ բժշկութիւն հրաշալի յանդիմանալ կայ անտուստ առ նմին մարմնոյն աեսական հաւատս բիմ վկայ անդարձիցն հաստատեիր, այնպէս իւղս այս փրկութեան լուսով կատարեալ՝ հեղեալ ի մեզ օծանէ զարտաքին խորանս. իսկ զներքինն մարդս անեղեւակ ծածկապէս մտեալ՝ նոր կենդանածնէ։

Դ. Պատկեր պանծալի այս զանգուած նիւթոյ արարչիդ երկնի. քանզի ոչք զկնի կրեցեալ օգտութիւն՝ որ յողորմութենէն շահլնծայութիւն, և դու ի գովեստ քեզ զայս բան սահմանեալ, թէ ողորմած եմ ես ասէր. քանզի որպէս սիրոյն անուան կոտրիս աստուած, նոյնպէս ի մանէ և այսու զկնեալ գծագրիս՝ ըստ սմին տեսութեանն որ առ մեզ։ Վ եհագոյն մեծութեան խորհրդոյ յարմարաւոր դիմակերպութիւն այս ճարտարապետութեան երկրի թանձրութեան հոգանիւթ գոյականութեան. զի որպէս սոյն մատն ի կենդանւոյն ոչ ի կերպակուր հրամայիւր անդ ըստ օրինին, այլ ապրեցութեանդ բոլորովին պատուդ որոշիւր, նոյն նմանութեամբ եւս և աստանօր իբր զղօրութիւն՝ տեառն մատչելի յայս աւանդ հաճութեան էիդ աստուծոյ վայելչապէս տուեալ նուիրի, հոգւոյս հարապատ զանգամանապարհ, արարողիդ պահեալ և ուխտեալ. քանզի ոչ չունչ արեան և ոչ ձեռնձեր ինչ զտարիմութեան

օրինակ հոգւոյս իմոյ և կարօտս ընդ անդամահիւս մարմնոյն ծախի, այլ արբայութեանդ վերնում վճակի տեղւոյն բաղմականին ձօնեցեալ ճաշակ՝ այս նիւթ քահանայական մշտաբարբառ անաղօտելի։

Ե. Ոչ էր մատչելի՝ ի նախադահութիւն սրուս անդրանիկ դասիչ քննողաց, եթէ ոչ օծմամբ լիչ նշանակէր. ոչ քահանայութիւն՝ ի յանկսկելին տեղի ձեռնարկէր, եթէ ոչ այսու կատարեալ լինէր։ Յակոբ զքարն պատկերէ Վիմին, ի խորհուրդ երկայ՝ խարանին քնարութեան, օծմամբն տպաւորեալ կերպացոյց. առ որ զկնի անձառ քարձրելոյդ տեսութեամբ սանդղոյն յարմարութեան, և զնս ի վեր տանելոյն անդուղկութեամբն, զարձանն իւղեալ կատարց նպատակ ի ցոյցս ապառնեացն յիշատակի։ Ընտրեանն քահանայութեանն պայծառութիւն հրամանաւ մեծիդ աստուծոյ օծմամբն ճոխանայր. որով՝ ի գլխոյ անմի՝ ի մօրուսն զեղեալ գերափառ իւղոյն զարմանագան կենդանագրութիւն, ըստ ասղմոսդին, զնիառաց նախնեացն առակեր զանդրադարձութիւն և զշնորհիդ կենդանագրութեան ընդ մեզ խառնութիւն։ Թագաւորութիւն ոչ էր պանծալի անդանօր պատկերաւն ստեղծագործիդ, եթէ ոչ եղիցէր իւղոյն օրհնութեան ձեռնադրեալ՝ պատկառ պճնութեան թագին յանուն քո, Քրիստոս, գլուխ ամենայնի։ Նա զնաիդ զնախնին վերհիս մուտացոյ, զծառայն մեծիդ և զկերպարանն անպարագրելոյդ. զի ահա Մելքիսեդեկ յօրինակ ճըշմարտիդ ահաւորութեան՝ ի ձիթատառնեայ լերինն, ուր յետոյ ասք մարմնացելոյդ աստուծոյ զետեղեալ կային, ի վերնոյ անտի հրեշտակաց՝ ի պաղոց տեղւոյն իւղեցաւ. ուստի չիրմի սկզբնահօրն պաշտպան եպիսկոպոսական արբայապատիւ ճոխութեամբ՝ ի քէն հանդերձեալ նաւաւ, միմչեւ յայտնեցար երեւեալ լրմամբ համայն խոհութիւն ադամային կենագործութեանդ։

Զ. Նա պրդ, քանզի քո են շնորհք և քեզ վայելեն

գոհաբանութիւնք, օրհնաբանեալ որդի աստուծոյ, դու ինքն յարմարեա բարեհաճմամբ տպաւորութեամբ ողորմածին իւղաւորականս խնկապատարս զմեռանելիս պատճառ քեզ փառացդ, և ինձ մեղապարտիս առիթ բժշկութեան. մատո, տէր Յիսուս, վերացս անեղեւութիւդ զայս ձէթ լուսանիւթ, և արկ ի սոյն խառնանս խոցոյ մահացուի զկաթուած օրհնութեան իւղոյդ փրկութեան անապակ գինեաւ սիրոյդ, միութեամբ արարչականաւ պատուպարեալ պատանեաք խնամոյդ. զի յիշատակարանս թաղումանօքին բանիս մաղթանաց՝ վայելչական լիմն յարմարութեամբ ի թեւս հոգւոյդ զկարգ իւր գացէ: Ի վերայ Դաւթի հոգի քո, բարձրեալ, յայնմ օրէ խառնոց, յորմէ օծութեամբն նուիրեցար. Սաւուղ յայր յայլ և ի մարգարէս ոմանս անտուստ իսկ գրեցաւ, յորժամ օծութիւն ժամանեցաւ գադաթան նորին. արքայութիւնն աստ բեւտանեայց օծմամբն գրաւեալ մատուցաւ ի կորզութիւն տանն Իսրայէլի. կայսերս ոմանս նշանաւորս վէհս և երեւելիս ի խժականաց բարբարոս ազգաց իւղս այս կենսացնուշդ յօդով անձրեւեալ՝ իբր կարթիս որսացաւ ի յընտանութիւն հպատակութեան մեծիդ աստուծոյ. բանն որ առ Կիւրոս երկնաւորին պատուասիրութեան՝ զօծեալն ձայն նմին մեծ վարկաւ. ձայն սաղմոսողին գեր քան զմարգարէութիւն զօծեալն անուն նախայարմարեաց, կանոնափակ ընդմիջարկութեամբ պատուէր աւանդեալ, մի մերձենայք և մի մեղանչէք. առ Ներսիսս առաքելութիւն աստուածատեսին հրամանատարութեանն, նշանակ լիմն հանելոյ ի պաշտամանէ անուն Բահաղու, զօծելութիւնն ի Քրիստոս ազգիս Յեհուայ և Իսրայէլի: Իւղ թափեալ ա նուն փեսայիդ ի հոգելից բանիդ լսաստանոյն վերաւոր կայեալ՝ կանխաւ իսկ գրեցաւ. որպէս զի հոգին, աստուածոյ յաւէտ պատկեր և նշանակիչ, զի փոքրուս ըզ մեծդ կերպագրութիւն քեւ նկարագրեալ՝ ընդ քեզ միասցուք առհամբ քո ընտրեիդ:

Ե. Այլ զի՞ ևս երկարս պատուաճօրէնս բացականա-
գոյնս գծագրականս և առակաւորս շարագրեցից ա-
ռաջի վերնոյդ և ահաւորիդ մաղթողական բանաստեղ-
ծութիւնս. աերդ և կենդանարարդ՝ արարչդ երկնի
և երկրի՝ ի յօծմանէ անտի սկսար քարոզել զաւետա-
րանն արքայութեան, վկայեալ անաուսա ի Յովհաննէ՝
օծեալ և գառն աստուծոյ բարձող մեղաց աշխարհի:
Ո՛ի թէպէտ ընդ օծմանն օրհնութեան հոգին եր քեզ
խնկաբար լսմամբ և աստուածութեանն խառնութիւն
բովանդակապէս, այլ անուշն պաշտի խորհրդեամբ շը-
նորհին հրաշափառապէս ազդելոյ ի սուրբսն. զի զըս-
արբութիւն ադամեան մարմնոյն մեծանալ յաւէտ
այսու յորջորջմամբ պատրաստ արասցես: Խացեալ զա-
ռածըս մարգարէութեանն Նոյեայ՝ դու ինքն աս-
տուածութիւնդ մարդացեալ ընթերցար, հաւաստա-
բիմ առնել զքան ծառայից քոց, աեր. և իբրեւ ծա-
նուցեալ եղեր օծութեամբն ի կարգ անդ բանին, թէ
հոգի տեառն ի վերայ իմ՝ որով և օծ իսկ զիս, ապա
փակեցեր ի հանդիսատեառն օծելութենէ զորքանու-
թիւն երկաքանչիւրոցն յայտ արարեալ խորոցաւ սահ-
մանի՝ ընդարձակ հեւաւորութեամբ մեծաւ կնքեցեր,
զմերս կաթուածով ինչ չնորհալարդեալ, և զքոյդ խա
կութեամբ ընդ հօր և ընդ հոգւոյդ հաւասարու-
թեամբ թարգմանեալ: Ի նախածանօթ մերակերպու-
թեանն պանծալի իմն գովեսիս՝ օծեալն կոչմամբ ի
հրեշտակապդ փառատրոնոյ արարածոց երկրի ծանու-
ցար: Ո՛ր մարգարէն կանխաւ գուշակեաց զի Յով-
հաննէս, և չընտրեալն լեառն Թաբօրական հայրենի
ձայնիդ եկաւորութիւն, թէ որ պատմէ ի մէջ մարդ-
կան զօծեալ իւր. զոր սաղմոսին ձայն կանխաւ պատմէ՝
հզօրիդ փառաց զայս պատիւ առ ի զառեալդ ձեռ-
նադրելոյ, օծ զքեզ աստուած՝ աստուած քո իւղով
ուրախութեան:

Ը. Հոգի երեսաց մերոց աեր Քրիստոս. որ է օծեալ
անուանդ խնկոյն, որով զփչումն կենդանութեան ի գէմ

մեր լայս բարեբարու Թեամբդ քո ազդեցեր. խմաստու-
Թեամբ ումեմն երջանկի՝ մարդասիրու Թիւն խոստո-
վանելի, ասելով առ ումն, Թէ եդ վկայու Թիւն առաջի
սեառն օձելոյն. զնոր առետեսցս վկայելով, Թէ կո-
շիկս անգամ ոչ առի յամենայն մահկանացս: Երդոցն երդ
իւղեփեփեցական գինի զաստուածով ծանուցեալ զսուր
հուրդն ի գոլեստ հարսին սուրբ եկեղեցւոյս՝ զմուռս
առաքինու Թեան հանդերձ ամենայն առաջին իւղովն,
և եւս զմուռս և կնդրուկ մաքրու Թեան վարուց ա-
մենայն փուշեաց անուշիկ իւղովքն զանգեալ՝ անդասին
և այսր յառաջաբերեցաց: Դանիէլ զկենատուռ մահու
քո, Քրիստոս Թագաւոր երկնի, ի վեր քան զօրինակ
կոչումն ձայնի զայս անուանագրեալ վկայեաց յայտնի,
Թէ գինի վաՀատուն և ինն եօԹներորդացն սպանցի օ-
ծեալն, և օծեալ առաջնորդ գբեզ յորջորջեաց: Ներա-
գակիր աշտանակն Զաքարիայ Աղդովայ՝ որ ի Խարեբեայ
իւղոյն բարեբաշխ բաժաորու Թեամբ ի մասունս եօ-
Թանց առաջադրու Թեանց գնդիցն վառելոյ՝ ի ջահէ
անտի զօրու Թեամբ անեկամուտաբար վիճակաւորեալ,
գի քայդ լոու Թենէ ի մեզ փրկու Թիւն և օծելու Թիւն
գերաբնակս նախաղեկուցեր: Որ ըստ օրինին ան-
տուստ գուշակմամբ ի խորանին որ ի տաճարին՝ ամեն-
ընդել լիս կրԹաւ Թեամբ սովորաբար մատուցեալ լի-
նէր. պանք բազարջնծայք և նաշհիք իւղովք խառ-
նեցեալք, և զուարակք եզանց իւղարկեալք, և տի-
րական անուամբ ձայնեցեալք, և հաւուց ոմանց Թա-
Թաւմամբ յազգակից ճարպին ի յարիւն, այսր խորհրդ-
դոյ առձեռն սեռակք և նշանակիչք յարմարականք քեզ
միածին ծնունդ օրհնաբանեալ մեծիդ աստուծոյ. միայն
գու օծեալ նորոգ և զարմանալի՝ ինքնու Թեամբ հա-
մայն էու Թեամբ խակապէս լրմամբ ամենայնիւ անպա-
կասեալ:

Թ. Այլ գի՞ եւս իցէ բազմապատիկս նշանակել առ
այս մեծ խորհուրդ անհասանելի, և ոչ ճաշակել զքեզ,
քաղցրու Թիւն. իմանալ քեզ զայս՝ Թէ գի՞նչ իցէ ի-

զըն, եթէ ոչ զսխրութիւնն ի փայտն պարտեաց առ-
վիմբ բժշկեալ, ըստ սաղմոսողին, զուարթ գործեսցես,
և զի՞նչ պարարտութիւնն, եթէ ոչ զկերակուրն մա-
հու սուաւ մուռացուք լցեալ ի ամանէ, և զի՞նչ օծու-
թիւնն, եթէ ոչ զմխրայն թշուառ տեսութիւնն ի
ձեռն սորին փոխարկեսցուք ի պայծառութիւն յաւէժ
ուրախութեան, անուամբ քո փրկեալ յոգի զօրու-
թեան՝ հօր անուանեսցուք. և զի՞նչ արդիօք մարգա-
րէին հոգեւոր ըղձականութիւն ամենատենչ բաղձա-
նացն իցէ իմանալ, որպ ծերութիւնն առակի ի ձէթ
պարարտութեան, և կամ օծանելն իւղով զգլխոյն վե-
րամբարձութիւն, եթէ ոչ զհին խարգախութիւն սը-
գոյն սատակութեան ի մահ կործանմանն կենագործեալ
դեղովս այս կենաց՝ պատսպարեալ օժանդակեսցես. և
զի՞նչ ճրագին լուսաւորելոյ շնորհակալութիւն, եթէ
ոչ ի մէջ իմն անյուսութեան մեղացն միգի և կա-
պաշտութեանն խաւարի՝ կերպակցապէս միութեամբ
ի յիս [illegible]մմանուել. և կամ զի՞նչ մարգարէն աստուա-
ծաբանեալ ի սփոփանս զուարթարարս օրհնութեան՝
նշանակ յայտնի վայելչապէս ումանց աւետ, օծեալն իւ-
ղով ի մըրոյ պարզելոյ. և կամ խմաստունն ի դիմաց
հարսինն ասէ օրիորդացն, հառաստաեցէք զնա իւղով և
դեղեցկազարդ խնդրով յարկեալ ծածկեցէք, և ի
պարտէզ իւղենեաց տածեալ գրգեցէք, եթէ ոչ այսր
ահա բնարական նիւթիւ հոգեւոր քո լցեալ՝ ի սոյն
լոյս տեսցուք զանխմանալիդ ի մեզ բարձրութիւն գո-
վեալ [illegible]ւ արդ քեզ, միայն խնամակալ, պատճառ բարի
բնաւից եղելոց, ձեռն համբառնամ տարածմամբ բաղ-
կացս, երիկամանցս գործակցութեամբ, սրտիս հե-
ծութեամբ, լեզուիս և շրթանցս ձայնարկութեամբ.
լուր ողորմութեամբ, աւր, պաղատանացս խնդրուա-
ծոց առ քեզ կարդալոցս. շնորհաւորեալ այսու պար-
գեւօք՝ գոհաբանութիւն քեզ վերընծայեմ, հզօր ա-
հաւոր բարձրեալ անքնին, անփակ փափաքմամբ միշտ
համբուրեցեալ, սուրբ սուրբ և միայն միշտ սուրբ,

օրհնեալ հանապազ յաւէժ անդադար երգաձայնու-
թեամբ : Ընձեռեա առաւել բարերարու[թ]իւն ի սպառ
վըխելոյս . առաւ յոյս քաղցրու[թ]եան՝ ոչ մասին միոյ
մատուցման լուսոյ արժանաւոր ինչ հանդիպելոյս, լոյ-
նել քեզ , բարի , ընդրու[թ]իւն ծածուկ խորհրդոյս ,
գրգռու[թ]իւն խառնեալ ընդ աղերս՝ ասել ընդ Դաւիթ ,
ընկալաք աստուած զողորմու[թ]իւն քո , և զծածուկս
գաղտնեացդ անտեսից՝ իմաստու[թ]եամբ քով յայտնի
արարեր :

Ա. Նա արդ մեծու[թ]իւն քեզ, ամենակալ առատա-
ձեռն աննուազելի , ամենակոյր առ ի գթու[թ]իւն ,
մշտայօժար ի բժշկու[թ]իւն , զի միացուցեր խառնեցեր
ընդ մերձաւոր դիւրագիւտ ընտանի նիւթոյս զհրաշս
անճառս քումդ սքանչելեաց ահաւորու[թ]եան : Կանգն
զոր երկին ամենայն բարձանց՝ երկրիս լայնու[թ]եամբ
և անդնդոց ներքինոց խորու[թ]եամբ՝ ծովուց բազմու-
[թ]եամբ ոչ զօրէ տանել , այլ իբր զդոյզն ի մեծ
բերի , ի փոքր գոյս տեսականեցեր զօրու[թ]եամբ՝
սահմանեալ ճշմարտապէս անհրապուրելի . զի մի նո-
րոգ իմն երեւելով յայլ էու[թ]ենէ՝ առ աչս հարե-
ւանցի երեւականու[թ]իւն ինչ վարկանիցի , վերաւո-
րել քան թէ բժշկել անընտրաբար զկարծիս մտայ :
Կանգն որպէս մարմին քեզ հաւատոյապէս , օրհնաբա-
նեալ որդի աստուծոյ , իակու[թ]իւն և ոչ օրինակ ի յար-
դեանցն ցորեկոյ արարչապէս միշտ հանդերձեցեր , և
կայլակ կողմն զարիւն խաղողոյ , և արգանդ կենդա-
գեւոր ծննդեանն զառաւտու[թ]իւն ջուրց յորովայնու[թ]եան ,
նոյնպէս և զհոգի անմահիդ փչման՝ սուրբ և ի սոյն
արդիւնաւորեցեր . երկունք կենդանի՝ որոյ կերպարան յա-
ռաջ եկելոյն և ոչ հեթանոսու[թ]եամբ է փոխարկու-
[թ]իւն , որպէս ոչ տեառնագրու[թ]եան խաչական փայտի
ինչ երկրորդու[թ]իւն , նաեւ յոյս յերկրի խաւարի ըստ
նմանու[թ]եան քո , տէր , ծագեցեր : Կանգն յոյս կեր-
պարան շնորհի զանազանս լուս[թ]իւն անհասիդ յայտ-
նեալ աշխարհի լուսաւորեցեր , զի մի անանկն կարօ-

տասցն և մի ընչեղն բարձրամտեսցէ, քան օդոյ հաւասար բաշխման և լուսոյ արեգական տարածման և ջրական վտակաց զեղման. զի հաւասարապէս բաշխեալ երկրածնաց մանանային զուգամասնութեամբ՝ փոքունն ըզն առաւել քան մեծամեծացն։

ԺԱ. Իսկ այս նիւթոյ տեսաւորութիւն խորին խորհըրդոյ և՝ ի բնուստ անտուստ հրաշապէս ունի զթարգմանութիւն. որպէս զի ոչ երկմիտ լինիչ շութափուշ թեամբ անհաստատապէս զտեղի փոխէ, և ոչ նենգաշաբար զբնակութիւն ինքեան լքանէ. քանզի ոչ վերջ նականօք աճառուվք հերքի, և ոչ յընդդիմակէ ուժեքն ողղեալ արտաքս ելանէ։ Այսպէս զի որպէս պատահումն գոնոյ չէութիւն մարմնոյ անփոփոխ իմն և անհրաժեշտ, որ գոլովն գոյացուցանէ և ոչ գոլովն ապականէ, այսպիսեաւ իմն յարմարութեամբ իւղոյս զօրութիւն անդամին՝ ի չիւրոց անոն կերպարան զառեալն ունողի միաձևական զուգութեամբ ընդ մեզ իսկ կցորդեցեր, տէր Յիսուս Քրիստոս, ընդ երին գոյն և զօրինակն լծակցեալ. քանզի զանխմանալին տեսութեան աչաց և մտաց ըղձից՝ ի դէմս բերեալ կերպաւորեցեր, ՝ի պըղտոյց երկրի ձնեալ մեզ զարմանալեօք հրաշագործութեամբ մատակարարիլ մեզ պատրաստեցեր։ Այնա նաւանդ զի ոչ յոլովից խառնից՝ ի մի եկելոց խմբակցութենէ զանազան ծաղկանց, ըստ հնոյն և ստուերին բազմաբուրեան այլայլութենէ, զայս իւղ օծութեան հրամանաւորեցեր, այլ իբր զօրինակ փոխեալ զայն առայս՝ դու ինքն խառնեցար՝ ի սոյն մաքրութիւն վերնոյս ձիթոյ։ Որ թէպէտ անճառ են համեղութիւնք քումդ անուշութեան, և ընդ օրինակաց իրիք ոչ համեմատի, այլ ծաղիկ դաշտի և շուշան հովտաց՝ և նարդոս ընտիր և եղեգնախոտնկ խառնեալ հալուեիս, յարմարութեամբ հոտոյ քրքմոյ՝ փթթեալ ողկուզոյ և աղնիւ գինւոյ, ոչ սոսկ քան թէ իւղոյ միութեամբ պատշաճապէս օրինակեցար վառաւորեալ անուշդ անքնին, որ զամենայն ընուս, և չիրի խմեքէ ամենեւին

ոչ կարօտանաս : Ուսոի ոչ չիսթելովք ՚ի հակառակաց բռնադատուԹեանց բաժանեալ կամաց մեկին առակի, այլ ՚ի սիրոյ հաւանուԹենէ աստուածապէս ՚ի մէնջ պարարիս, վասն մեր ըստ մեզ առ ամենայն վայելչապէս կան նմանուԹիւն օրինակեցեալ. առ որս լոյս քարի և հուր ջեռուցիչ, տապ սիրոյ առանց մասին ինչ չնչման անգԹական սառնացրտուԹեան այս զանգուած նիւԹոյ կաԹուածոյ ձիԹոյ մաքուր մտաց սեսեալ լմանիկ, որով յիրաւի սովաւ ՚ի յաստուած է միանալն : Ընդ Սաղմոսին օծելոյ որդեգրեցելոյ աստուծոյ երգեմ քե՛ բանով հարսինն երկնաւոր փեսայիդ բարեբան գոհաբանուԹիւն, համբուրեալ ՚ի յիղձս մտաց գՀոտ իւղոյ քոյ քան զամենայն խունկս, և իբր զբանս կենաց յաւիտենականաց ունուղի, ըստ հոգելից բանի խնամատնոյն և աստուածաբան աւետարանչին, գՀետ քո ՚ի հոտ իւղոյ քոյ ընԹացուք լուացեալ զերեսս ջուրբք կենաց, որ ՚ի վեր է քան զերկինն օդոյս այսորիկ, և օծեալ զգլուխս անախտական իւղովդ երկնայնով՝ յանդիման եղեց քեզ ուրախուԹեամբ, զուարԹապէս և ոչ տխրաբար :

ԺԲ. Այս իւղ ինկելի պաշտելի և երանելի, ոչ սոակ օծումն ուղղոյս սեռիկի, և կամ հերոց վարսից գաղաԹան նպաստս ինչ մատուցանի, եԹէ ոչ տէրունական կան կենաստու խաչիդ տեառնագրեացի : Այլ իւղ զարմանահրաշ օրհնուԹեան լուսոյ գՀրեայն և գխունձըն՝ գՀնդկին և զբարբարոն՝ զսկիւԹացին և գելլադացին՝ զդուժն դժնէաբար և զարհօրատեսակ չանագլուխն սոսկալիԹիաբ, զտէրն ազատ և զստրուկն ծառայածին՝ քրիստոսեան արարեալ, անուամբ քո կնքէ, և հոգւոյդ սրբոյ ընծայէ, և հօրդ երկնաւորի հարազատ որդի հաստատէ : Խազմօրինակ են սովաւ արուեստիդ տեսմունք յարմարեցեալք նախ նիւԹոյն, ապա զօրուԹեանն : Քանզի իբր անօթ փայտեղէն մինչչեւ օծեալ լիցի՝ դիւրաբար հերձի և անօգուտ եղեալ անպատուի, նոյնպէս և մարդ ոչ իւղեալ սովաւ՝ հեշ

տեաւ խորտակի, և մեկուսի եղեալ առ ի քէն՝ ոչ լուսաւորի։ Ասան սա քո, Յիսուս, որով զհրաշալիան զարմանագրես. քանզի իբր անգծելի կաղմուածեամբ կարծր պահպանակաւ՝ ամենապատրաստ ընդարկուածեամբ պաշտպանեալ ծածկէ յայլագունակ խրճիկի եկամտից. մինչ զի այսու մաքրութեամբ թաթաւեալն ի սմա ոչ ներկի արեամբ, և ոչ ախտաեակ երմնիւ պղծի։ Նա զի և թափանցանց լիմն խառնուածեամբ հոգեպէս ընդ թանձրութիւն մերոյս գոյութեան մըտեալ անցանէ. զի թէ անէծք սաղմոսին ձիթոյ աւակաւ ընդ ոսկերս չարին համայնից բաշխի, ոչ ջամբ եւս հոգիդ սոյն ձարպով լուսոյ զանեբեւոյթ ներքնոյն տեսակս կենագործեալ ողջացուցանէ, ազգումն սրբեալ ի խորոց անտի չնչման հոգւոյն՝ մինչեւ ի սպառուած ծայրիցն եղերայց զբնաւն ընկզմէ գիշատակ մարմնոյ մահուն արկածից. քանզի կենդանական զօրութիւն քո միշտ ահաւոր, ասէր Յիսուս Քրիստոս, ի սմին խառնեցեալ՝ ընդ սոյն խակ բնակէ։

ԺԳ. Ա՛յս օձուածն բարեեսիլ և առ բռնամարտիկ մերկամրցանակ ըմբիշս իբր զօրաւոր հնարիւք կերպարան ճգնաւորական անըմբռնելի ձեռաց ներհակին օձինօք պաշտի, դիւաց և ախտից հզօր ահարկու։ Քանզի յոգնատածայծ սքնութիւն բանին Աղեկիէլի առ իմանալին Փարաւոն, հենդնաւոր առակագրութեամբ ողբականօք շարայարմարեալ, յորժամ եղեր, ասէ, և հանդերձեցար ընդ օձելոյ քերովբէին, ուր արձանքն հրեղէնք հաստատեալ կառուցան։ Օրհնաբանեալ ա՛ հաւորութիւն ամենակալ ձեռընկալութեան, որ միշտ անճառ ես բանից և գերազանցեալ քննութեանց, որ աւետարանաւն կենաց խնկիս յարակայ իբր նորածին օծեալ ի քաղաքի Դաւթի, և ի քահանայապետին հարցմանէ, զո՞ւ ես օձեալն որդի օրհնելոյն, և յեբանաւորն զաւանութենէ Պետրոսի օծեալ միայն որդի աստուծոյ կենդանւոյ, և յապահաւատ քննողացն, եթէ զո՞ւ ես օձեալն, ասեն, ասա մեզ համարձակ.

և ՚ի կանոնականացն քոյ հաւատամք յօծեալդ ուսուցիչ և աեր ամենայնի. և Հերովդէս յառաջ քան զսուրբն զօծեալդ անուն յայտնապէս հարցեալ. և զիաջդ գրեն, զոր իսկ ասացեր, զօծեալն աստուծոյ զաէրն Դաւթի զանակիզքն սրդի՝ ժամանակաւ սրդի: Կանգնի այսպէս ընկալաք վայելչաբար զայս Թարգմանեցեալ, որ ՚ի մեզ բերի ծայրն կատարման խորհրդական կոչմանն՝ վճռակ քրիստոնէից նախապատուհասութեան:

ԺԲ. Այնքան ունի ահաւորութիւն միանգամայն և սրբութիւն իշխանաւորական խնկաւորութիւն սոսկալի անունս օծութեան, մինչ զի որպէս ոչ է համարձակ կենդանի յերկրայնոցս առաւաձ անուանիլ՝ այլ աստուածային, նոյնպէս ոչ բերէ մարմին ընդրիստոս անուն անձին համարել, այլ գերիստոնեային, անտանելի նախնւոյն մեծութեան միրաչին՝ ըստ որ զհոգին հրաւիրողին. քանզի չեմ ես, ասէ, օծեալն, այլ առաքեալ առաջի նորա: Սովաւ չղջէին, որպէս բանն ազդէ առեռատրանչին Պարկոսի, առաքելականացն լծակցութիւնք, երբ ազգակից հարազատ ձեռինդ աստուծոյ՝ այսու վարեցեալք. քանզի իշխող օծանէին և առանց մարդկային հնարից անուամբ քո բժշկէին: Պան զի որպէս խաւար ՚ի լուսոյ և ցաւ յառողջութենէ, գիշեր ՚ի տուընջենէ և մահ ՚ի կենաց, այսպէս և ՚ի սոյն իրէ սիրապարգեւ ամենայն չարին երեւոյթք մերժին խափանին և բնաւին ամփոփին: Կանգնի որպէս ձանձք զազնըք և փոքր զեռունք սարդից և ունկնամոլից երբ ՚ի դեղոյ մահու յայս նիւթոյ սպառեալ պակասին, սոյնպէս լուսութեամբ հնարին օրհնութեան սոյն իշխ զօրացեալ՝ և զայս վանէ և զմուրհակս չարեաց ջնջէ և զվճիռ մահու պատառէ: Պէ է աւազան կատարեալ՝ առանց օծման օժանդակութեան: Եթէ աւազանն մահու խոցման զմարդն առաջին, այս դեղ փրկութեան մատուցեալ տուաւ. եթէ անձարակ վերացն Յակոբայ և Իսրայէլի, սոյն իր պատուական յիշատակեցաւ. այս խշոյ փափաքեալ Դաւիթ երբ ձիթենի պաղալից ՚ի

առանն առաուածոյ յուսով յարակայի, լքեալ զքրիստոսութիւնն՝ անգամին զկրաւութեանս չնորհ գուշակէ։ Այլ զի է ինձ զայսմանէ ճառել, և համայնին կարծել հասանել, որ և ոչ վերինքն զօրեն ձեռնարկութեամբ ինչ բանի զսոյն խորհուրդ՝ ի մանաւորէ ինչ ճառելով նշանակել, թողում ասել՝ թէ յիակութենէ։

ԺԵ. Փառք քեզ միշտ և յաւիտեանի, անմահ թագաւոր, ի յայժմու երգեցեալ օրհնաբանութեանս, զոր արարեր և կատարեցեր առիս, բարեխնամ գթած և երկայնամիտ հարուստ և առատ ամենայաղթող. անգամին ի հարցն գծագրելով զօրինակն՝ մինչեւ ի լուսին ածեր զիակութիւնն Աշմարտապէս։ Դու լոյս իսկ բնութեամբ և արեգական մշտապայծառ, և զաշակերտացն գաս լոյս անուանեցեր. որով զարարածս ամենայն երկրի ճառագայթիւք երջանիկ չնորհի նոցին լուսցեր։ Ընկալար զնուաշնութեան յուսմունէ ի յոսս՝ յօրինակ ընդունելութեան մաղթանաց առ քեզ, և ի միամէ պառնկէ ի գլուխ՝ նշանակ սիրոյ գթութեանդ առ մեզ. մշտափափաք բաղձանօք անհամնելիդ ի սոյն հատուտեալ, մինչ զի ուխտիւ անփոխադրելեաւ օրէնս յարակայս օրհնաբանելիս՝ քոյինահրամանն պատուէրս կենաց ընդ համօրէն աշխարհ քարոզել զաւակաւաձեռն իւղոյն յարգաւորութիւն, զարմանս հրաշից լուցացն առ ապառնեացն յուսադրութիւն։ Դուք օծութիւն ունիք զարբոյն՝ ասաց երջանկին առաքելութեանց, մեկնեալ զխորհուրդն որ ի մեզ զեղեալ յառաւելութենէ կենդանարարիդ անպակաս բովանդակութեան։ Աւասի յաւէտ իմն յարմարաւոր և հանդուգնատիպ առ ի մանաւորն նմանութիւն լուսոյդ և հոգւոյդ սրբոյ՝ այս կաթուած օրհնութեան ի վերնոյդ բարեբաստութեանց անսպառաւաբար սրսկեցեալ ի մեզ, և ասի լոյս, իբր զնախահաթիւ գոլ սահմանածոց և արարչութեանդ պատկերակից, որով զհաւատ մկրտութեան մեզաց հալածես. իսկ հուր, զի յաւիտեան տարր արարածոց հաւատա-

թագէս ունի զաւդաւԹիւն ըստ էականին կշիռ բաշխաւԹեան, ծածուկ և յայտնի, լսեալ և ծանուցեալ. և եԹէ ոչ ընդհարցի ի հակառակէն, ոչ յինքնասաստ յօժարմաւԹենէ բաղձայ բորբոքիլ: Դարձեալ և օձ ծուման, զի արքայաբար որդեգրեալ ընդ քեզ ի ժառանգաւԹիւն հօրդ մատուսցես. ողբմաւԹեանդ ազգակցաւ նկարեալ ի մեզ անեղծանելի՝ ի հանդերձեալ փառան փայլեացուք. դարձեալ և հոգի, զի մաքրեալ զարհածս խաբէուԹեանն՝ որ ի բանաարկուԹին ներդործուԹենէ, նորոգ փոխհամամբ հոգւով և ճշմարտաւԹեամբ հօրդ երկնաւորի երկրպագեացուք, բեւեռեալ ընդ քեզ յուսոյն հաւատովք, ամենապարգեւ:

ԺԶ. Ահա արդարեւ յաւէտ իսկապէս խաղս այս լսաստատ ենկալիր՝ վերնականիդ սիրոյ սեռաւԹիւն: Ոչ ան որպ և Պօղոս իսկ պատշաճ վարկաւ ի ճառ դաւհաբանաւԹեանն՝ ասելով յայտնի, որ օծ զմեզ ձեօք հանդերձ ի Քրիստոս Յիսուս՝ ասուած է, որ և կնքեաց զմեզ և ետ զառհաւատչեայ հոգւոյն ի սիրտս մեր. և դարձեալ, մի, ասէ, արամեցուցանէք զՀոգին սուրբ աստուծոյ, որով կնքեցարուք յաւուրն փրկաւԹեան: Պատկառելի և անվանելի օծուԹեանս յորջորջաւԹիւն՝ եթէ ի նորուժն յաւէտ քան ի հնուժն. քանզի բանն դաւԹեան սաղմոսին զսիրական անօրէն նախանացդ սկզբնաւոր կրկդ խարհուրդ՝ ճշմարտաբար վերաստահանէ, ժողովեցան կուսեցան իշխանք ժողովրդոց վասն տեառն և վասն օծելոյ նորա: ԱրգաՔեւԹիւն մեծ ապաւորեալ զանարբելի արեանդ պարսիս հրէախառմբ չար մոլեգնուԹեանն՝ որ ի սէրդ յանդգնուԹիւն, ահ է որ ձգիցէ զձեռն իւր յօծեալն տեառն և քաւեսցի. քանզի ԼԹ և յապդայնոյն ապաշնաւ Սաւուղ, այլ ոչ ի սպառ մերժեցան յամօԹ և ի նախատինս ազգայ օտարոյ, մինչեւ արեանդ աստուծոյ հաղորդեալ գտան: Գրաւական մեծ յիշատակի ապագային ժառանգուԹեան աղօԹանուէր ա զերասրկուԹիւն ասել սաղմոսիւն, վասն ԴաւԹի սէ

ընկալայ քո մի դարձուցաներ զերեսս քո յօծելոյ քումմէ, և դարձեալ, նայեա և տես յերեսս օծելոյ քոյ, և արա ողորմութիւն ընդ օծելոյ քոյ։

ԺԵ. Զեռին քո, Քրիստոս, երկրպագեալ պարգեւատուութիւն այս հիւթ լուսակիր. քանզի ոչ այլ մեծ բարձրութիւն յաքթայութեանն ճոխութենէ ասէ մարգարէն ի դիմաց քոց, տէր, քան թէ գոհ գլուխ ելիցէ ծառայ իմ և իւղով սրբով իմով օծի զնա։ Ուսան կիրթ իմն յիշատակաւ զքոյդ համբուրեալ լուսոյ ծուութիւն, տէր Յիսուս Քրիստոս, ծանիցուք զքեզ անփոփոխ մշանջենաւորութիւն, թէ դու ես ամենայն՝ և յամենայնի միայն Թագաւոր Թագաւորութեանց, և ճշմարիտ օծեալ իւղելոյ, փառաբանեալ երկրպագութեամբ երէկ և այսօր։ Քանզի զոր օրինակ պատրոյգ Թացեալ ի ճարպոմ ոչ երեւեցուցանէ ինչ նշոյլ՝ մինչեւ հուրբ լուցեալ վառիցի, այնպէս և այս օծութիւն լուսոյ առ ի մեզ հեղեալ ի հանդերձեալն ջահաւորի։ Այս է կերպարանին մեկնաւոր բացերեւութիւն, ի նախնեացն և այսր բերեալ բարեշնորհ ինն յարմարութեամբ՝ հրաշալապատում երանի գաւ գունեալ։

ԺԶ. Երդ այսոցիկ պատճառ վերագոյն մասանց կեցուցչայ աստուածականաց արարչութեանդ հարազատ ասց, առանց որոյ ոչ է գրիչ Քրիստոսեան, և ոչ նա զովութեցի անուանիլ, և ոչ յիշատակիլ յորդիս Յուդայի, և կամ իրաւացս բառնալ յանուն աստուածոյ Յակոբայ, այս հիւթականութիւն օրհնութեան ձիթայս, յորում սուրբ Երրորդութիւնդ խառնեցեալ միաւորի, ճառագայթ շնորհայ, շուք մերոյ դիմաց, նկարագրութիւն երեսաց, բարեձեւութիւն պատահմանց, լուսաւորութիւն աչաց, տեառնագրութիւն բերանոյ, վայելչութիւն այտից, զարդ կերպարանաց, պահպանարան ընթանից, հանդերձիչ կրծից, յարմարիչ վարուց, շաղկապ հաւաքմանց, զօրութիւն անձանց, ուժգնութիւն դիմեցմանց, խափանիչ յուռթից, քակ

տիչ հմայեկաց, նահանջիչ ձեռնածուաց, խայտառակիչ կախարդաց, գտիչ աղանդից. բռնախոյեան դիւաց, փարատիչ ցաւոց, կատարիչ կնքեցեալց, տէնջանք երախայից, անշնին արտաքնոց, հիացումն հեթանոսաց, նախանձարկու անհաւատից, մերկացուցիչ գաղտնեաց, յարդանք յեանոց, փառք սուրկաց, պըճնումն կանանց, աճեցումն տղայոց, հրճուանք ծերոց, ձեռնադրիչ նուիրելոց, զգուշութիւն մաքրոց, պսակ թագաւորաց, ճոխութիւն արքայից, յառաջադրութիւն կայսերաց: Քանզի զոր օրինակ ամէն ինչ կընքեալ՝ նշանակիչ իմն է նեղքնայնոցն մեծագնութեան, նոյնպէս բարձրութիւն շնորհին ի մեզ սուրբ ծածկեցեալ յանուն քո, աստուած տէր Յիսուս Քրիստոս, վայելչական իմն տեսակաւ ծանուցեալ նշանակիւ: Իսկ անուանն իսկոյն անդամն ի նոյն յորջորջեալ կոչմամբ, ըստ հոգելից արանց խմաստնոց՝ որ յեզիպտացւոց անաւ սկսեալ, ի դէմս ածելով զերին կերպարան՝ ահաւոր խորհրդոյ պատկեր:

Սակս սրբալոյս իւղոյն Միւռոնի:

ԺԹ. Քանզի միւռոնս այս օրհնաբանեալ, զոր մարգարէն կանխաւ լոյս աչաց դրեթէ զոյն աղերսեալ ինդրեր, ըստ քերթուղեանն բառի որ ըստ խորութեանն Հոմերոնի, Թարգմանեալ իմանի, ինձ մայր. այսինքն է՝ առ ի յինքն ձգող զմերս բնութիւն զօրապէս, և կայուն հաստատել չքնաղ փոխոխամբ զնուրց լուծականութիւն առ աւազանին լուսաւորութիւն. և իբրեւ զդեզ մածուցիչ կաթին՝ ի նոյն ինքն յեզաւնակել զընդհատս իմ վայրագութիւն, և զաղբերոյ հեզեղեալ մշտահոսութիւն: Իսկ մանաւանդ՝ որ և այս միւռոն, ըստ այլում բառի ցուցանի. այս ինքն է՝ մեծին, որ և խաւարչուտ գոլ և ծածկեցեալ՝ կամ անտեսական. որ և այն կոչումն դիմաւորութեան չէ օտարացեալ. քանզի արդարեւ յիրէ անաւ անունն նշա-

նակի · վասն զի անքնին է այս խորութիւն յաւէտ քան զամենայն սրբութիւն սրբոց : Ո՛չ ոչ եթէ ըստ օրէնական զաղտ ինչ լսանայ , և կամ հայի բնութեամբ զսիրան հաստատէ , այլ նորոգ իմն յարմարութեամբ ի մասնաւն աղդողականացն անօրինապէս տեառնագրի · սակայն անհասութեամբն վերնականաւ և զանունն ունի անքնին : Վանզի որպէս ասացաւ խակ և խակ ի լոյս անմատոյց ասի , խակ անսահման փառաւորութեամբն յերազանական իմն անբաւութեան ի խաւար անգնին ծածկեալ իմանի , փակեալ արտաքուստ ի ձեռնարկութեանց մերոց իմասակից , նոյնպէս և այս ծորումն լուսոյ ի լերզուաց ոմանց Ճարտարապետ ի ճահ ճեմութեանց դրականապէս անուանադրութեամբ մտայլ առձայնի , վասն ոչ զօրելոյ երկրածին բնութեան զնոսին գիտելոյ : Իսկ զերկաքանչիւրս ասացուածականացն անգամին չինքեան հարցատաբար տիրապէս ունի · քանզի ի կաչումն անուան բարձրելոյն նմանակերպեալ՝ կրկին մեծանայ լուսոյ այս նուիրեալ ամենաբուրեան ազնիւ կնդրկաւ · վասն զի ասացուածք մեր հուր ծախիչ է ըստ մովսէսի , և զարձեալ լոյս է ըստ Յովհաննու · ուստի և Աստղի ճշմարտապէս զսոյն ակնարկէ , եղելոյն , ասէ , լոյս Իսրայէլի ի հուր :

Ժ· Դարձեալ այլ իմն կերպացուցանելով զբանս առ ի նոյն պատկեր յայտնութեան իրի · վասն զի ոչ մանամ զնմին նոպկութիւն՝ որ ի գիտութենէ մեծիդ քաղցրացաւ՝ վերստին գովեստիւ օրհնել · քանզի Աեռայ՝ որ է զառնութիւն , այսինքն՝ նշանակ իմն յարմարական չարչարաւոր կրից տաժանմանց , որ և միւռոն ստուգաբանեալ մեկնեսցէ ըստ մեզ՝ մեռելութեան ազգականութիւն : Վանզի այսու օծմամբ հոգեւորականաւ խզեալ կամ հատեալ ի անտիսաեր մահակերպարան տաղտկազգական հեշտութեանց հակառակողին , որ օգտակոնաւ մեղկութեամբ զքնարս ձայնատրական և կամ զարկուած վերածածկութեան մինարհեաս ուժգնաբարբառ խրոխտահնչական կազ

մանածոյ Թմբկիս գործականութեան ջրացիր լինի գիւ-
ղանութեամբ անվայելուչ Թուլադաշնակեալ՝ ի ստորեւ
կորատեան քարշէ զօրինակ մերս գոյութեան, կապիմք
յուսով վերսին դարձեալ ընդ անճառ խորհրդոյ
խաչի քո, Քրիստոս, սկզբանէալք ի մահ կենդանւոյդ՝
անվախճական կենացդ սուրբ հաղորդիմք, ի քեզ խակ
աստուած համայնից խրախուսեալ ի սպառ ամենեւին
անհատուածելի։

ԻԱ. Ա՛յս իւղ զթրջեալն քառակուսեան յանուն քո,
Յիսուս, նշանի բարձրելոյդ հաւատոյ հաստատ. ընդո-
ծնեալ զուգափառ և նմանատիպ արեան կեցուցչիդ նոյն անվանելի փառօք պսակեալ մեծացուցանէ։
Փայտ անուանի իւղոյ օրհնութեան, ըստ մարգարէին
կանխաձայնութեան, զի հաստարակաց կազմեցեալ բուսոց անտառաց զօրապէս ուղղեալ՝ ի խակութենէ չարչին արկածից և օտար կարծեաց ի տեղծողդ վերաբերեալ առ նոյն նիւթս կենաց հաստն ներգործէ։
Օ՛ի և որ ի մեզ մարդկան պատուհանաց մշտաբոյսիկ Թափանցութիւնք՝ յանուն մեծութեան ահաւորիդ
զօրութեան ի խոհական լինն համեստութիւն քեզ
սեռանապրեցեալ առ ի յըղձակերս օրհնեան հոգւոյդ
անազդելի պատրանաց չարին խաւարահողմ խարդախողին, պսուռ լուսով զպահել ամիսսիմք ի նուագ գո-
հութեան երեկորեան պաշտամանն ընդ երինայնոցն
զամբարաց՝ առ օրինակ վառման ընծորիդ որ ի մեզ։
ի սոյն յիշատակ փրկութեան բարեացն սուրբ անկեցեալ ծագի, և ծաղկաւէտ եղեալ պտղածնի, ի սպաս
ընծրեացն պատրաստութեան յետնում գիշերի ի մեծիդ գալստեան. ահա զայս լոյս ճրագի համարեալ ի
կիր արկանեմք։

ԻԲ. Վարձեալ ըստ գծագրացն գուսարութեան քըանան և չորիցն շարագրութեան՝ որ յայսմահեատաց անսի վերաթուի մինչեւ ի քսանեերորդ երկրորդն կարգի,
յորում զայս խորհուրդ խորութեան անաստատ Թարգմանեալ՝ ճաշակ հեշտալի որոց հաղորդին չամբել պատ-

քաստեմբ ամենակազմ յարմարութեամբ. քանզի յուժ-
սընեռորդէ անտի գրոյ՝ ի չորեքհարիւրն փոխաբեր-
եալ՝ ստուգաբանօրէն քննութեամբ ընդ ձիթոյն ան-
ուան նիւթ ճշմարտապէս. որ է կերպարան արդեան
խմորոյ յինքն բերողի զգանգուածն զօրեղապէս. որ
ոչ սակաւն՝ ի յոլովէն պարագային, քան թէ՝ ի նոյն իրն
դարձուցեալ, ըստ աւետարանական առակին, զամե-
նայն առ ինքն վերաբերեալ աճեցուն առնէ:

ԻԳ. Այլ իւղ հեզութեան միշտ համբաւձման և խա-
նարհութեան օրինակ՝ և նմանութիւն, առ որս կա-
րուղ պատառաւ մատուցեալ ջամբի, հարթակշիռ և
բարեյարմար բանի կերպարան. իսկ համայնից լուծա-
կանաց հոսանուտ և ստորածորելի նիւթից գերափառ
վերաշրջական հրաշափառ խորհրդոյ պատկեր. քանզի
և յամեն ինչ մերթոյ արկեալ՝ ոչ ըստ գինւոյ ձեւոյ
և կամ ջրոյ թացութեան մեզկէ, այլ՝ ի տհմման պատ-
շաճին պահէ: Այսպէս ընկալեալ զքոյոցդ բարեաց
անհատասար առատելութիւն, որդի ստուծոյ կեն-
դանւոյ, զերբանուէր այս օծելութիւն՝ ի ձակատ դի-
մայս արեամբ քո գրեմք, և՝ ի բնութիւն շնչոյս հո-
գւով քո տպաւորեմք, հաւատացեալ խորհրդով մե-
ռայս, եթէ յաւէտ յայսնեացի նորոգ փայլեցեալ
բազմաճաճանչ ծայրաբձակութեամբ՝ ի տարածումն
յոգնատեսիլ զարմանահրաշ ընդարձակութեան՝ պըր-
տուղ իւղոյ ընծայեալ զլաս՝ ի փառս ապատնեացն հան-
դերձելոցն: Այս ճարպ հոգեւոր երջանիկ և վերնա-
նըշոյլ՝ ի դէմս երեսաց իմ պատկերի՝ քումդ նշանաւ
ջահաւորեցի:

ԻԴ. Այլ քանզի իբր անհաս ոչ ըմբռնական այս մեծ
զօրութիւն արագ սլացմամբ՝ ի թեւս թեթեւս մատց
պայմանի, անդր քան զկարծիս ուշոյ խմաստից անհուն
հեռեւման անհետ փախստեան՝ լայն իմն միջոցաւ՝ ի
սպառ որոշեալ, փակեցաւ յինէն, ոչ օրինակեցաւ
կտրչաւ, ոչ նմանեցաւ զուգամասնութեամբ, ոչ սահ-
մանեցաւ ձեւակերպութեամբ, ոչ կշռեցաւ ընկերին

չափով. այլ ահա ընդ աստուածեան իւրիդ նշանի հաւատարմութեամբ արեան կեցուցչիդ հոգիապես գերազանցեցաւ։ Իւ արդ օրհնեա զմեզ, տէր, սովաւ և ի սոյն. եւս և անուանդ քո ահաւոր, լուսաւոր, երկնաւոր և զարմանաւոր, ի գովեստ փառացդ անճառիդ մաքրակրօնիդ քուրմաւաւ խնկեալ, սուրբ, սուրբ, անքնին, անպատում, բարձրեալ, ողորմած, վերերգեալ, ճշմարիտ, բարերար և սուրբ, արա սովաւ փրկութիւն, տուր և քաւութիւն, պարգեւեա բժշկութիւն, հանդերձաւորեա շնորհ, առատաձեռնեա երանութիւն։ Յօծումն այս ձիթոյ երկնանձրեւ լուսոյ անարատ գոտւոյդ յիւղեալս այս թեզան բանաւորական մի մոցէ և մի գրաւեսցէ սխրականութիւն աղտոց մեղանաց՝ շաղախել երբէք զոգւոյս կերպարան։ Ընկեցի սոյն ինքն որոց մատչին օծանիլ սովաւ հարանաւ պաճոյճ պանծանօք պճնել գեղայօրէն սուրբ վայելչութեամբ՝ երջանկապէս յոգի զարդարեալ։ Ընկեցի հուրս այս լուսափառ և աստուածաձիր՝ մերձեցելոցն ի սոյն ընտրութիւն՝ մուխ կրկնեռաց և բարեխափաք ջերմութեան այլ յօրինուածոյ, որով ամենայնիւ ամենապատրաստ պնդութեամբ՝ ի կարծրականութիւն անսասան վիմիդ յարակայեցեալ միշտ արձանացոյց ի քեզ հաստատեալ աներկմտելի։ Ընկեցի նշանակ վերնամրցանակ այսր պարգեւի սովաւ վառելոցն, ոչ ողողիլ ջուրբ, ոչ այրիլ հուրբ, ոչ ցրտանալ ի սառնութենէ, ոչ վնասակար հողմով հնձանիլ, ոչ աղտեղիլ յուրուականն ինչ պղծութենէ, ոչ զգահեալն՝ չարին մատնել, և ոչ ի ստորեւ ելիցն զմիերս գանձուն կենաց յիմանալ բարւոյ արատաքս հանել. ոչ անպատասպար ինալ ի թեւոց քոց օգնականութենէ, և ոչ զեացեալն ի մեզ օծութիւն անմաքրապէս ի քոց մերկանալ։ Այլ եղիցուք քեւ ի սոյն հրացեալ, սովիմբ պարարեալ, սովաւ լուսաւորեալ, այսու արդարացեալ աղաւացեալ պահեալ և թագաւորեալ։ Իւ քեզ միոյնոյ միայն օծելոյ յամենեցունց օրհնութիւնք երգոց, պսակք

լեզուաց, հնչմունք ձայնից, յաղթականութիւնք գո-
վեստից, բարեբաստութիւնք լսթանց, սրբաբանու-
թիւնք սաղմոսաց, ընդ հօր և հոգւոյդ սրբոյ յաւի-
տեանս յաւիտենից. ամէն։

Աչն իմ ձեռնարկութիւն ի սրբութիւն, և այս արձանագրութիւն
ի սրբութեանցն սրբութիւն։

ԲԱՆ ՂԴ·

ՎԵՐՍՏԻՆ ՑԱԻԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՑՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱՍՏՈՒԾՈՑ

Ա· Աստուած յաւիտենական, բարերար և ամենա-
կալ, ստեղծիչ լուսոյ և յօրինիչ գիշերոյ, կեանք ի
մահու և լոյս ի խաւարի, յոյս ակնառնողաց և եր-
կայնմտութիւն տարակուսելոց, որ ամենաբուեստ ի-
մաստութեամբ քո դարձուցանես յայդ զստուերս մա-
հու, աննուաղ ծագումն և անմուտ արեգակն. քանզի
դու ոչ զօրէ ծածկել զփառս տէրութեան քո խաւար
գիշերոյ. որում կրկնի ծանր երկրպագութեան ամե-
նայն եղելոց երկնաւորաց և երկրաւորաց և սանդա-
րամետականաց. որ լսես զհեծութիւն կապելոց և հա-
յիս յաղօթս խոնարհաց և ընդունիս զինդրուածս
նոցա, աստուած իմ և թագաւոր իմ, կեանք իմ և
ապաւէն իմ, յոյս իմ և վստահութիւն իմ, Յիսուս
Քրիստոս աստուածդ ամենայնի, սուրբդ հանգու-
ցեալ ի հոգիս սրբոց, մխիթարութիւն վշտաց և քա-
ւարան մեղուցելոց, որ գիտես զամենայն յառաջ քան
զլինել նոցա. առաքեա զպահպանողական զօրութիւն
ասլոյ քո և վրկեա զնս յերկիւղէ գիշերի և ի դիւէ
ջարէ։ Որպէս զի զհիշատակ սոսկալի և սուրբ քո անձ

ուանգ միշտ համբուրեալ զքեզ համբիք հոգւոյ բզճուԹեան չհչոյ, կեցից պահպանեալ ընդ այնոսիկ որ կարդան զքեզ ի բոլոր սրտէ։

Բ. Եւ ի դրոշմէ խաչի քոյոյ նշանիդ, զոր աստուածային արեամբ քո ներկեալ նորոգեցեր, և ի նոյն շնորհ սրդեգրուԹեան զմեզ միրաեցեր, և ի փառս պատկերի քո նկարեալ յօրինեցեր, այսու պարգեւօք աստուածականօք ամաչեսցէ սատանայ, քակտեսցին մեքենայքն, բարձցին որոգայԹքն, պարտեսցին մարտուցեալքն, պակասեսցին զէնքն սպրատուրք, մերժեսցի մէգն, փարատեսցի խաւարն, մեկնեսցի մռնախուշն։ Խաղուկ քո հովանացի, և աչ քո հնքեսցէ. վասն զի գԹած ես և ողորմած, և անուն քո կոչեցեալ է ի վերայ ծառայից քոց։ Եւ քեզ ընդ հօր հոգւովդ սրբով փառք և իշխանուԹիւն յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ԲԱՆ ՂԼ.

ՎԵՐՍՏԻՆ ՅԱՒԵԼՈՒԱԾ ԿՐԿԻՆ ՀԵԾՈՒԹԵԱՆ ՆՈՐԻՆ ՀՍԿՈՂԻ

ԱՒ ՆՈՅՆ ԱՂԵՐՍ ՄԱՂԹԱՆԱՑ ԲԱՆԻ

Ի ԽՈՐՈՑ ՍՐՏԻՑ ԽՕՍՔ ԸՆԴ ԱԱՏՈՒԾՈՑ

Ա. Երեգնան արդար, ճառագայԹ օրհնեալ, լուսոյ կերպարան, փափաք անձկուԹեան, բարձրեալ անքընին, զօրեղ անպատում, բարւոյ բերկրուԹիւն, յուսոյ աեսուԹիւն, գովեալ երկնաւոր, Թագաւոր փառաց, Քրիստոս արարիչ, խոստովանեալ կեանք։ Եւ արդ զմեր ուԹիւնն վերպանայ բազմասիալ ձայնի եղ կեցոյս ամենազօրդ բանիւ լցեալ մատուսցես յաղերս հաճուԹեան հօր քոմ բարձրելոյ։ Որ վասն իմ ի փորձ եկիր անիծից, կերպարանեալ զիմ նմանուԹիւն, ամենեւին կենաց օրհնուԹիւն, վերնոց և ներքնոց

քարեխնամաղ տեսուչ համայնից։ Օի Թէ յանձն առնէր մեռանիլ վասն իմ, աստուած և տէրդ բոլորեցուն, ոչչափ հաճեսցիս առաւել և այժմ վառանգաւորս կրկին կարեկցել, ընդ իմ պարտաւորիս միշտ աղօթելով ազգակցաւ մարմնոյդ առելոյ ՚ի մէնջ՝ առ հասմատուցդ քո հայր։

Ե· Նէ վասն արեանդ պատուականի միշտ մատուցեալ ՚ի հաճութիւն կամացդ առաքչիդ՝ բարձցին վրատանգք մեղուցեալ դատապարտելոյս, Թողցին պարտիքն, ապաքինեսցի ամօթն, մեռացին պատկառանքըն, բարեգործեսցին դատաւինիքն, սատակեսցին որդունքն, վերասցի լուն, հանդարտեսցէ կրճումն ատամանցն, ապառեսցին ողքն, հատցին արտասուքն, մերժեսցի սուգն, հալածեսցի խաւարն, վառնեսցի հուրն սատակութեան, հեռքեսցին տանջանարանքն բազմաբնակք։

Գ· Նկեսցեն գթութիւնք կամողիդ և պարգեւօղիդ կենաց ամենից, ծագեսցի լոյդ, արագեսցէ փրկութիւնդ, հասցէ օգնութիւնդ, ժամանեսցէ այցելութիւնդ, կանխեսցէ ցօղդ ողորմութեան, յառաջեսցէ արբուսցէ զանդաստանս սրսաքեալ՝ անկեալ ոսկերացս Թշուառութեամբ ՚ի վիհն մահու, ծաղկեցուսցէ սրտզաբերեսցէ բաժակդ երկնաւոր արեան կենարարիդ զերկիրս խնամեալ աւազն լուսոյ, որ անծախապէս միշտ պատարագի յիշատակ կենաց փրկութեան հոգւոց ննջեցելոց։ Օի ամենայնիւ մահացեալ հոգիս մարմնով մեզաց՝ ընդհօք քո, գթած, ՚ի քեզ զօրացեալքեւ նորոգեցայց, զնաեալ ՚ի մեզաց անմահ կենդանութեամբ ՚ի յարութեանն արդարոց, հօր քում օրհնեցեալ։ Ընդ որում քեզ փառք, և հոգւոյդ սրբոյ բարեբանութիւն վայելչական գոհութեամբ, այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից. ամէն։

ՎԱԽԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆ ՄԱՏԵՆԻՍ ԴՐՈՒԹԵԱՆ

ԼՈՍ հոլովման ընթացից ամանակաց յառաջ շարժուԹեան, որ ըստ լատատառն նշուլապէղն արփիաճաճանչ լուսակիրն օրակչիռն մղտափարատն ակնատարար ականն արեւուս՝ ստեղծականն արուսեակի, որ համբարե հոլովէ կուտէ ամաց յոլովուԹիւն ի չափս դարուց ընչաստաւս և կենդանաւորոգ առուղեկան յաւիտենից, ի յաւարտուն կատարման իւներեակ յաբեղևնին, ի սկիզբն պսակելոց մոլ տատեակին յաբեԹական տոհմիս տումարի, յետ երից ամաց անցելոց՝ որ զկնի գալատեան ի կայս և ի կայս կողմանց հիւսիսոյ դիմաց արեւելից՝ յաղԹող և մեծ կայսերն Հռոմոմոց Բասլի, յորժամ ընդարձակ և մակագաւԹ կանոնաւ սիխս տարածէը՝ լիատահման և անխատոց ի տուաւարակարկատ կոԹողս կարծր արձանաց՝ ի ձգումն ձեռին և յանխղելի լարս պարանոց երկարագունից՝ անԹարԹափ ի նոյն վերապատրաստել ի յաջ և յահեակ՝ սեպհականել յաւելուլ բաժինս մատանց վիճակաց խմբից աշխարհաց ի ծոց իւր. արդ ի յայնմ անդորուԹեան միջոցի, յորում եղերեալ ընդոստնեցաւ Թըշնամիք եկեղեցւոց, ստացեալ հիմնեցի, կառուցի, կարգեցի, կուտեցի, արձանացուցի, դիպի, բարդեցի, կացուցի, ցուցի, հաստատելով ի հրաշակերտուԹիւն միագոյ իւրմէ զաշխատեղնեան դրուագս դրուԹեան այսմ սոփերի արդասաւորի, ես Ղրիմոր կրօնաւոր քահանայ, յետին բանահիւսաց և կրօսեր վարժապետաց, գործակցուԹեամբ եղբօր իմոյ ընտրելոյ Յովհաննէս կոչեցելոյ՝ Նարեկայ մեծափառ և բարձրապատիւ ուխտի վանականի. որք իբրեւ զմի մարմին բանական ի յերկուց առ մի կերպարան չինելոյ դիմաց կենդաղաղարելով, ոչ միայն հարազատք, այլ և միաշունչք միակրօնք համապատիւք զուգահաւանք, ի քառից աչաց առ մի և նոյն շաւիղ խորհրդոյ տեսեալք

Ընդ հայցեմք ի ձաշակողացդ յայսմ սեղանոյ յոքնո-
րէն և ախորժահամ հանդերձելոյ՝ յիշատակել զմեզ ի
մաղթանս ուղիղս և ի պատկանաւոր խնդրուածս,
սեռն սիրով ի միաս բարիս. որով և գուք եղիջիք գը-
րեալ ի մատեանս կենացդ վերին դպրութեանն։

ՅԻՇԱՏԱԿ ՎԱՐՈՒՑ ՀՈԳԵԿԻՐ ՀՈՒԵՏՈՐԻ

ՍՐԲՈՑՆ ԳՐԻԳՈՐԻ

Ամենափայլ նշողիւք ճառագայթիւց հնորհայ հոգ-
ւոյն աստուածոյ՝ լուսատարած պայծառազարդեալ՝ հը-
րեշտակն ի մարմնի սուրբն Գրիգոր՝ էր յանձնեալ ցեղ
գաւառիս վասպուրականի աշխարհին. որդի տեառն
Խոսրովու անձնեալ եպիսկոպոսի. ի ժամանակս
կայսերութեան յուստնոյ Վասլի և կաթողիկոսու-
թեան Սենեքարիմայ հայոց աղքայի, և ի հայրապե-
տութեան տեառն Վահանայ կաթողիկոսի։ Որ սը-
նեալ ի կարգ կրօնաւորութեան ի վանս Նարեկայ, ո-
րում և եղեւ առաջնորդ, ուստի և հռչակեցաւ Նա-
րեկացի։ Այն սա երկնահանճար վարդապետութեամբ
գերափայլեալ՝ մեկնեաց զՇրդն երրոդ Սաղմոսին. գեղ
գեղեաց զՔնար խաչին, և զներբողեանս ի սուրբ
աստուածածնէն, ի համօրէն գունդս առաքելոց, և
ի սուրբն Յակոբ մծբնայ. և զԲարեզս գանձից։ Այս
բանաստաճայծ պերճամանութեամբ գրեաց զոյն զՂե
բանս աղօթից ի խնդրոյ հայցման հարց միանձանց.
զոր թողեալ մեզ վերջին ժառանգութիւն անսպառ
մթերից՝ փոխեցաւ յաստի կենաց՝ վախճանեալ յերկ-
նատարգական հասակի, ի թուականիս հայոց՝ ԴՃՃԲ.
և ամփոփեցաւ ի նոյն վանս Նարեկայ։ Իսկ յորժամ
Սենեքարիմ արքայ փոխեաց զկերութիւնն ի փոքրն
Հայաստան, ապա և միանձանցն Նարեկայ դիմեալ
մերձ ի կողմանս քաղաքին Ակնայ և Տիւրիկեայ, հինեցին
վանս յանուն Նարեկայ, ուր բերեալ հանգուցին զՂ

պատուական մարմինն, թէ և այժմէ աւերակ, և կոչի ուխտ Աբրահամ, յորմէ լինին նշանք բժշկութեան ի փառս աստուծոյ: Որոյ աստուածախօս մաղթանաց օժանդակութեամբ արժանացուք զմայլական տեսութեանն աստուծոյ. որում պատիւ փառաց ծնրադրական երկրպագութեամբ յաւիտեանս. ամէն:

ՍՐԲՈՅՆ ԳՐԻԳՈՐԻ ՆԱՐԵԿԱՑՒՈՅ ՆԵՐԲՈՂԵԱՆ

ԱՌ ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԱԾԱԾԻՆՆ

Ա. Պ ՈՒՄԱՐՔ համբից դասուց երջանկացն պատուականքն բիւրաբեղուն բանիւք գովեսան զսկզբնաղբեան կենաց գոյից ի կից բանից ըղձաձայնութեանց. և որպէս փոզովք տաւղօք և քնարիւք զգայական սրտի շարժեալ զգործն զգերազանցեսցեն ի լաւ անմատոյց ուրախութեամբ վերադրեսաեն: Այս զանճառ արարչութեան հրաշագործ ամենատեղծն տէրութիւն օրհնեալ՝ պատճառ փառաբանութեան իսկութեան հատչին զհատուածոցս առնուն գոյութիւն. որպէս և ճշմարիտն բան ցուցանէ, ի սահմանէն ինձ զայս ամենայն. բայց զօրաց դասուց երջանկացն օրհնեցին զիս մեծաձայն, և ամենայն հրեշտակք իմ գովեցին զիս: Այս արդ եթէ հրամայել և երագ ընթացն փառաբանչօք վերնաթռիչ պատգամաւորք հոգիանիւթ և անեղծական կենդանեօքն նա օրհնաբանի. որ թէպէտ և նոքա վեհք են բնակութեամբ կայից աստրիցս, և նշալ երկրորդ լուսոյ առաջնոյն, այլ սակայն յոյժ անտեսաբար տպաւորութեամբ առ բնութիւն բարի բանին բարձրելոյ բարեզարդաբար բերկրանօք բերին. և որ գոհաբանի առ ի նոցանէ սուրբ աստուածութիւնն լայնաձիգ հեռաւորութեամբ և ընդարձակ միջոցաւ յաւէտ անչափեալ նշուլիւքն ծածկի ի նոցունց:

Բ. Այս զայն որ զանհան հրեղինաց ի հողեղէն յարկին պարունակեաց, և զանճառն ի սերովբէից ըղ-

պալի մարմնոյ յօդիւն պատեայ, և զկերակրիչն դա-
սուց հրեշտակաց կաթնատուն ստեամբքն դիեցոյց, ո՞ր
երգ պատկանագիր ՚ի ճահ գովեստից օրհնեալ պա-
տուեսցէ: Ո՛մարմնարանն անտեսին և՝ զձեմարանն մե-
ծին, զտաղաւարն տիրական և զխորանն աստուածա-
կան, զխառնարանն ճաշակման անապական խրախճա-
նութեան. զսրբարանն մաքրութեան և զընդունակն
զգաստութեան, զնպատակն կուսութեան և զօրինակն
երանութեան, զհարսնարանն անլուծանելի՝ անժամա-
նակականն փեսայի, զընակարանն հաճութեան կամաց
անեղն աստուածութեան: Ո՛յսքան փառազարդ շը-
նորհայ ընդունակն և ոչ նոքին աստուածութեանն
օրհնաւաք հրեշտակացն պարք որպէս պարտն է պա-
տուել ժպրհին, Թող թէ մարդ երկրային ՚ի կշիռս
չափոյ բերանոյ հողաշինգուածս հիւթոյ մսեղիս մար-
մնոյ. քանզի անճառութեամբ անհասականաւ վեհա-
գոյն ամենեցուն փակեալ գտանի. և ոչ զօրեն երկ-
նայինք զարարչին անհաս անօրինութեանն զանքնին
ծնող արժանապէս վերաբարոզել: Քանզի թէ ըստ ա-
ռաքելական ձայնին Պօղոսի, մարդն անճնացեալ ոչ
յուժիւք պատմի, ապա որ զլուծութիւն բանին էու-
թեան աստուածութեանն յղացեալ կրեաց ՚ի մարմնի՝
զնաւրդ զննեսցէ շարժուածեամբ շրթանց լեզուս մար-
մնեղէն զնա ճանաչել: Ո՛չ թէ դասք պետութեանց
անմահից վեհից վերնոյ բնակութեանն՝ եկեղեցեաւս
յայս խորհուրդ խորին յառեցան, ապա յայտ է թէ
մեծ է առնոսա հիացումն սքանչելի գործոյս այսորիկ,
քան զհասուն երկրաւորացս բանիւք պատմութեան:

Գ. Իսպ սակայն երգեսցէ բանս որքան զօրեսցէ ՚ի
բաղձանաց սրտի փափաքման՝ նմին ընծայ օրհնաւաք
փառաց աեսչութեան, նա զի թէ երկինք փառացն
աստուածոյ լինին պատմաբանք, և յանդրէն դարձ տա-
րագրելոյ տհմին Յուդայի ժողովք ժողովրդոց տեսին
զփառս անեղին, ապա այժմ յերեւել բանին ՚ի մարմնի
և լինել մարմին ադամեան կերպիւ, հարկ է յայժ ձա-

հոգւապէս՝ ոչ միայն անմարմնոցն, այլ և զգայնոցս արժանաբար ըղձականութեամբ հնչել զձայն բերկրանաց բարբառոյ բանից օրհնութեանց։ Քանզի խոնարհ այս երկիր եղեալ տիրակիր, դառն լծակից ընդ աստուածածակիր երկինն վերին. վասն որոյ խրախուսեալ հոգեւորական հրճուանօք երկուցն դասուց՝ ի մի խառնեալ պարսս, ոճոս տարեկանս փրկչին փայլման կատարեն, զգայական սեռս եղականաց, և անմարմին դասք հրեշտակաց. յերեւելիս տեսականաց, և յիմանալիսն ծանկեցեալց։ Ընդ որս և մեք կցորդք այսօր եկեղեցի դասուց վերինն յարկի երկնայինն առաքեսցի, պարեմք հոգեպէս տարփմամբ՝ երգելով քեզ ընդ երկնայնոցդ ձայն սրբասաց։

Դ. Ով ամենասուրբ արարչինկալ տիրուհի և աստուածածնին, որ զանտառնելին երկնի բարձրութեան և երկրի լայնութեան, ծովու խորութեան և անդնդոց անհասութեան, զի քեզն մարմնացեալն խակութեամբ էութեան յորովայն անճառիկ տուրդ քում անեղիկ կրեալ զօրեցեր։ Ընդ որ հայեցեալ երջանկին Յովսէ՝ պատուաբանեաց ի ձեւ առակաց, զանբաւութիւն մեծին աքանչացայց, յուսացն դիմաց ասացեալ՝ եթէ չունիմ զնա, և զայրէ՝ թէ չէ ընդ ինեւ։ Որում երգակցեալ վեհին Յովհաննու ի բանն Յայտնութեան ասէ հիացմամբ. փախեաւ երկին և երկիր ի մի տաճարութիւն ի դիմաց էին, և տեղի ոչ գտաւ. քանզի արդարեւ յաւէտ անձկութեամբ ամփոփին ի բերրութիւն բովանդակութեան արարչական բանին հանդստեան։ Խակ դու ընտրեալ ի զարմէ և ի զանգուածէ մարդուս զաւակի սուրբ աստուածածնին, տարար զնա ի քեզ ախորժ հանգստեամբ կամացն հաճութեան, եղեալ երկիր անձնական բանական բուսոյն, և զգայական անդաստան կենացն հացի, և վառարան բորբոքման անշէջ կայծական, և վայր դալարաբեր հայրական ծոցաձին ծաղկին, և ծառ երկնաղէշ անթարշամ խնծորին, և գոծարան գոյութեան լուսատու մարգարտին, և

լեաւն արձանուեանակ երկրալիը վիմին, և այդ արիւնա-
սկիզբն առաւղն առաւօտին, և յարկ դիտապետին քա-
նական հօտին, և արքայարան լուսակերա անմահ Թա-
գաւորին, և մայր կամնամատոյց բնաւից ստեղծողին,
և հարան արքուհի հօրն Քրիստոսի:

Ե. Խնդա և ուրախ լեր ձայնիւ երգոցս օրհնու-
Թեան քումդ երանուԹեան բանադրուԹեան, խրա-
խացիր և ձայնիւ ողջունի գաբրիէլեան աւետեացն,
բերկրեալդ 'ի կանայս, բնակարան արժանաւոր բանին
խոնարհուԹեան, անկասաղարթ մարմնոյ առաուածնու-
Թեանն խառնարան, իւղարան օծելուԹեան քրիստո-
սական անուշադրուԹեան. որ նախ քան զծնանիլ քա-
նին առ 'ի քէն անԹերի լուսականուԹեամբ հրեշտակա-
կան Թեւոցն սքողմամբ ցանկարկեալ պահէիր անաղտ
անբծուԹեամբ: Ընդ որ հաճեալ հաւանուԹեամբ եր-
րորդական փառք առաուածնուԹեանն, ճանապարհ ա-
բար հանգստեան. քանզի հոգին սուրբ եկն 'ի քեզ
յօրինողն անախտ սրբուԹեան. և բարձրելոյն հօրն
զօրուԹիւն մօրդ հովանացաւ. որդւոյն պատրաստեալ
զքեզ ընդունակ: Նոյ որ բնակեցաւն էակիցն հօր բարձ-
րելոյ՝ էր անժամանակ. և որ յօդաւոր մարմնով 'ի քէն
ծնաւ՝ սկիզբն ունի էուԹեան նախ քան զարուսեակ.
ուստի և զյօդաւոր մարմինն միակ՝ խառնեաց ընդ
առաուածական բնուԹեանն իւր անքակ. և սեպհա-
կանեաց զաՀաուն հօր իւրոյ ՎարԹի յաւիտեան, Թա-
գաւորեալ տանս աշխարհի և երկրիս քաղաքի. արբ
կեալ սուգս ուղ ճանապարհի զհայտակերան գործի՝
հանել 'ի կամարն երկնից տաճարի. և կանգնեաց զնո-
բանն կործանեալ ադամեան մարմնոյն 'ի նորոգուԹիւն
շինուԹեան քրիստոսական ուխտին դաշնաւորուԹեան:
Ընդ այսպիսեաց բազմաԹիւ և բարձրագոյն բարեաց
ընդունակ և մտաւակարար միայն դու մաքուր կուսու-
Թեամբ էիր խնկարան ախուռն օրհնեալ սուրբ աս-
տուածածնին. քանզի երբեւ զծնեալն խառնուԹեան
խնկոյ հնդրկի և զմռոի ընդ տաշխին և կասիայի բոր-

քաքեալ հրով մաքրութեան, բարդեցեր զծուխ բուրման անուշահոտ սրբութեան ի հոտառելիս աստուծոյ և հօր հաճութեան. վարուք մաքրեալ, բարութեամբ լցեալ, հեզութեամբ արձանացեալ. առաքինութեամբ կատարեալ, քաղցրութեամբ աղբիւրացեալ սուրբ աստուածամայր:

Զ. Խնդա և ուրախ լեր յարիւ անձառ ծնեալդ ի քէն անեղդ աստուածդ, որ ի նմին յորդւոյն քո խնամոյ հրաշազարդ փառօք ամբարձար ի կատար աւարտման վերնային երկնի լաւագոյն, և թեւօք թեթեւութեան հոգւոյն սլացեալ՝ յիմանալիսն վերաչուեցեր ի կայանս հանդչել: Աւստի և զանհասանելին իշխանական խնամոյն՝ զանկապտելին զքոյս թեան սրտի նկատման վայելս անաւասիկն անձնապէս հոգիդ բերկեալ, զանեղ ծին փառաց ձոխութիւն քեզ սեպհականեցեր, սուրբ աստուածածին:

Է. Ներբողեալ ես մաքուրդ փայլումն կրող արարչին առաքինութեան, որ սքանչելարուեստ հրաշիւք ներգործեալ քեւ ի մեզ զփոփոխումն մեծ արդասեաց վաւասին ընդ փոքուն յեզանակեցեր. քանզի զանհայրն մանուկ մայրդ որդեպէս պերապգուեցեր. և ըմբռնեալ բարձոզաց ձեռացդ բաղկօք զանպարագիրն էակ մարդացեալ՝ ի համբոյր հալելոյ մատուցման շրթանցդ ոչ ջգուրեցեր, որում գոտաք մեք ժառանգակիցք սբբոյ հայր զաստուած առձայնել ի ձեռն քումդ միջնորդութեան, սուրբ աստուածամայր:

Ը. Յարեհամբաւեալ ես մաքրութեան շաւիղ նախընթացդ կուսից, որ զլրութեամբ ուղղն գոյից կարօտաբար կաթամբ լցուցեր, և աչաց մարդկութեան զանուեան ի մարմնի եաւր նկատել. վասն որոյ զամենայն բերան գոհութեամբ ստացար քեզ օրհնաբանս անձկով տարփման, սուրբ աստուածածին: Յրանեալ ես դու ի լեզուս անբիծս ընտրական շրթանց ծաղիկդ Յեսսեայ պտղոյն մեր կենաց. որ ի դրութենէ խաւնութեան քառից յեզանակեալ տարերաց՝ անկցորդ մե-

նայեր ՚ի մանկէ հոգածնելոյս հաստարակայ . ոչ բերոյ ծանրութեան բնակիւր համաստեղծս կարեաց , այլ քրովբէօրէն հրաբերան բղխող նշուլից : Լսասի երագ ընթացիւք հետոց հեռացեալ՝ ՚ի վայրն անմատոյց յարփին վերին ընծայեցար , սուրբ աստուածամայր :

Թ . Խրախայիր յաւետ հրճուանօք բերկրեալդ ՚ի կանայս , որ զժուարընդել դաստիարակաւն խաչի վարժեալ կրթեցար . որդւոյ քոյ կցորդակցութեամբ միաւեւանն ժուժկալութեամբ կրելով զերաշխէպ վշտաց ծնեալդ ՚ի քէն տեառն՝ մշտաչարչարն մեռելութեամբ անձնատուչոր տօթով խարուկեալ . իբրեւ զորոջ անառատ քահանայական նուիրմամբ ՚ի վերայ սիրոյ սեղանոյդ մատեար , ասրաբոյս և տեւադիտակ գեղմնա բարձ մաքուր պատարագ . ՚ի ճգնաւորական վարս ոչ ջակիսեալ , քան թէ ՚ի սրոյ հանդէս խոզխոզեալ : Ա՛ան այսորիկ ՚ի նուէր քոյ զենման հրեշտակացն պարք պաշտպանեալ , ընդ առաքելոցն դումար դասակցեալ . զմիայն արժանիդ պատուեալ գովէին , սուրբ աստուածածին :

Ժ . Խրախայիր համայն տարփանօք բերկրեալդ ՚ի կանայս , որ ՚ի կոյս և յանարօր արդանդէ բան բեղնաւոր բերեր՝ ցաւոյ անիծիլ արմատ օրհնութեան , հօրն Ա՛դամայ որդի բերկրութեան : Ա՛ան որոյ չնորհ ունեցուալ քեզ օրհնեալքս ՚ի յորդիդ քո փրկիչ աշխարհի , եւ բանեմք քեզ , սուրբ աստուածածին :

ԺԱ . Խրախայիր անբաւ բերկրանօք հարսն լուսոյ ոչկեղարդ զգեստուք պատճուճեալ , որ յօրհնս երկրայինս աղցաւոր կրկի՝ զերկնայինն ածեալ մատուցեր , և զանհնձնն նմանեալ մանկանդուած ազգի մարդկութեանս ՚ի չափ հասակի գեղոյ գեղեցիկ զատեղն վայելուչ ՚ի Ա՛իրանանէ մեզ պարգեւեցեր : Լսասի զպատակեր նահատակացն ՚ի քէն ստացեալ՝ նորոգ հաստատեալ , գոհանբանեմք զուրբ սիրամայրդ :

ԺԲ . Խրախայիր յողջոյն նախընծայ երկնային աւետաւորին , տաճար սրբափայլ . որ լուսով աստուածակա-

նաև ուռճացեալ լցար, և երկրաւոր մարմնով երկնայ-
նոյն աթոռ կազմեցար, և արեգակնապես հոլովմամբ
առ արուսեակն երագ ընթացար: Ո՛ման որոյ բացեալ
զբերան պատասխան ամլածին որդւոյն, օրհնէր զօրհ-
նեալդ ՚ի կանայս սուրբ աստուածածնին: Նա և դու
լցեր զառունն Ո՛աքարիայ բարբառովն գոհութեան,
յօրինակ հանրական եկեղեցւոյ, որ է քո միշտ օրհնա-
բան. զի երանեն ահա յայնմհետէ քեզ ամենայն ազգք
ըստ բանի աստուածաշունչ քում դասանութեան.
սկզբնատար կուսից անարատութեան, ՚ի բերկրեալ լե-
ռըս շրթանց զաւրութեանց միշտ բարեբանեալ սուրբ
աստուածածնին:

ՅԳ. Ջանզի արդ եկեղեցի դասուց անդրանկաց զ՚ի
քէն մարմնին ՚ի բանէն անանձնաց համապատիւ հօր
փառաւորէ յերից սրբասացս. առ որ հպատակ քո դո-
լով ահաւոր խորհրդոյդ տեսող՝ զանճառն ուրախու-
թիւն յաւէտ վայելես: Ո՛ի զոր նոքա թեւաւորելով
դիմաց ծանկութիւ ՚ի բացուստ ակնարկեն, դու յա-
ւէտ համարձակ նմին կամնաձիր մայր յուցեալ ծա-
նուցար, և ՚ի մէջ դասուակաց ձեռաց որպէս զմանուկ
զծերն հինաւուրց գգուանօք ընկալար, եղեալ կառք
անձնաւոր կայից բազմելոյն յաթոռ քրովբէից: Ո՛ման
զի ոչ ընդ քեզ միայն, այլ և ՚ի քեզ. ոչ միայն փառե-
ցաւ բազմեալ, այլ և բնակեցաւ տաղաւարեալ. ոչ
միայն միացաւ ՚ի զանգուած մարմնոյ, այլ և մարդա-
ցաւ՝ առեալ զկերպարան ՚ի քէն սկսելոյ. ոչ միայն մի
զօդեցաւ Քրիստոս յերկուց դպրութեանց, այլ և ըն-
կղմեցաւ յանապական անօսր էութիւնն մարմնոյն վեր-
բերութեան. ոչ միայն միջնորդաւ անձինն ընդ հոգւոյ միա-
ւորեցաւ դիմակ սեռակօք, այլ եռամանն խառնեալ
էութեամբք միաւորեցաւ անշփոթելի: Ա՛ի որդի մե-
ծոյն բնութեամբ յաթոռ հօրն իւր աջոյ յերկնաւորացն
միշտ պաշտպանեցաւ:

ՅԴ. Ցաղագս որոյ և մեք երկրաւորքս զմաստակա-
բարբդ և զպատասաւոր մեծս խորհրդոյ երանեմք ըղձա-

կան երգօք՝ զանժամանակն էութեան երջանիկդ ծը-
նող. որ զամենայնի և ամենեցուն պսակեալն հոգե-
շունչ երգօք՝ ի քեզ ընկալաւ, ոչ ի մանէ, այլ ի ը-
նութենէ. ոչ հատմամբ, այլ հաստատութեամբ. ոչ
բաժանաբար, այլ ամբողջապէս. ոչ փոփոխմամբ, այլ
փոխառութեամբ. ոչ ի ծիրս սահմանի տեղւոյ, այլ
ի սենեակ լայնատարած ոգւոյ: Քանզի ղերեզմն ի կշիռ
ձեռին զերկիր և զերկին տարաբ չարգանդի. և ոչ
միայն ի տես նկատման աչաց նայեցաւ ի նա, այլ և
շօշափմամբ ձեռացդ ծանեար. ոչ միայն ողջունեալ
զանհուսն չքնաց, այլ և ըմբռնեալ. ոչ միայն զընդ-
նեալ զհատարակաչէն խորան մարդացեալ բանին, այլ
և անուանեալ կոչմամբ Յիսուս՝ զԲրիստոսն աստուա-
ծոյ. ոչ միայն ստեամբքդ անուցեր զանժամանակն ըստ
աւուրց, այլ և աճման հասակի զնոյն ընծայեցեր:
Օրր խոստովանի հանրական եկեղեցի զծնեալդ ի քէն
աստուած ճշմարիտ՝ ընդ նախեղակ գոյակն միացեալ
ի տեսութենէ իմաստից քննութեան մեր փակեալ:
Որոյ տիպն ապացուցի խաբողն Յակոբ ըմբռնեաց
զմարտուցեալն ընդ իւր պնդապէս, և զանխուլ խոր-
հրդով զաստուածատեսն անուն ընկալաւ: Այսպէս և
որ՝ի քէն ծնեալդ մարմին ի չարգանդ սրբոյդ սենե-
կիւ ընդ աստուած խառնեցաւ. և խաբեալ զԱդամն
մարդկան թշնամին՝ մարմնով գերազանց նմին բարձրա-
ցաւ. վասն որոյ ոչ տեսող աստուածոյ՝ այլ ճշմարիտ
աստուած անուանեալ, զամենեսեան յԻսրայէլ անուն
փոխադրեաց: Սակս որոյ լի բերանով զպաշտպանդ
փրկութեան այսմ մեծս խորհրդոյ՝ երանեմք զտիրու-
հիդ սուրբ աստուածածնին:

ԺԵ. Որոյ տեսչութեամբն աստուածոյ նախագիծ ի
ծովէ քարն պատուական հրաշիւղ և սպիտակ մարգա-
րտին մաքուր կերպարան գոյացեալ ցուցաւ: Քանզի
արդարեւ դու ես ակն պատուական ի յաշխարհիս
ծովէ ընտրութեան, որ զաստուածային հրոյն տարաբ
կերպարան: Ով որքան մեծ է ի քեզդ աւարտեալ

խորհուրդ, սրբուհի. զի Թէ առաջք մարգարէիցն հոգեկիր յղացմամբ Իսրայէլի ծնողք ասացան, ապա դուստր զբանն աստուած անձնաւորն՝ հայրենի բնութեանն հպատուոր՝ ի սենեկի քումմ մաքրականի մարմնապէս բացածանուցեր, զորպիսի արժանապատիւ գովութիւնս ոչ ընդունիցիս։ Այլ շնորհաշնորք գեղով արփաւոր ծածկութիւ յանմատոյց գեղեցկութենէն պաճոյճ փաղփաղեալ. ամ համեստ հեզութեամբ, խոնարհ անբծութեամբ, կերպասիւք լուսոյ ի հոգւոյն պարասքօղեցեալ. ամ զարդուք երկնայնովք ոսկեզօծ սրբութեամբ արծաթափայլ մաքրութեամբ, ականակատ պսակ քեզ փառաց զբարձրելոյն՝ հովանի ի գլուխս ընկալեալ. ամ քառեակ մանեկաւ նշուլափայլ մաքուր ուլանոյն յեռմամբ, աստուածոյ հոգւոյ և մարմնոյ խառնմամբ, ի մի էութիւն երից հիւսմամբ ի յորդւոյն լանջք սուրբ քո շնորհօք առլցեալ։

ԺԶ. Օրհնեալդ միայն ի կանայս շրթամբք քահանայապետ մեր մարգարէին Յովհաննու, փառաւոր և ի դասուց համազարմ նմանացեղիցս ցանկալի երդօք ներբողականս տաղօք։ Օ՛ի Թէ բանականս մարդոյ դպրութիւն պատկեր աստուծոյ ի սկզբանն ստեղծաւ, և այսր աղագաւ ստեղծողին զշնորհս կալաւ, ապա եւս առաւել քեզ պարտական եմք երկրպագութեամբ ունել շնորհ, սիրամայր, որ աստուածոյ ի ծառայի կերպարան ստեղծման եղեր պատճառ. առ որ ի լրումն աւարտման մարգարէական կտակին հասանիւր, այն ըստ ասէ, եղեցի ի վերայ առն ձեռն քո, և ալ քո ի վերայ որդւոյ մարդոյ ի քեզ խրախուսելոյ։ Ալ և կարողութիւնն և բաղուկն հօր միածինն ի քեզ հանգուցեալ, և զամենայն որդիս մարդկան վկայս և երկրպագուս իւր զօրացուցեալ։ Այսն նկարագիր և կերպարանն հօր գոյութեան ի քեզ բնակելովն, սրբութիւն և արդարութիւն լման աշխարհի ընձեռեցայ։ Ապա յիրաւի և արժանապէս հոգեշարժ քնարիւք զքեզ բարեհամբաւեմք, ոտրբ աստուածածնին։

ԺԵ. Ի մարդկային զարմէ հրեշտակ երկնային, յեղբ ծականաց սեռիցս անմահ սերովբէ, ի հողային նիւթոյ ոսկի Սուերայ, ի ծովային բերմանց շնորհալոյս մարգարիտ, ի յեսսեանն բուսոյ քաղցրաստուղ ծաղկէ, ի յաւուրց նախնեացն ճիւռ օրհնութեան, յօղոյն հանդարտի ամպ անձրեւաճիր, արեւուն ծագման ակն արփիափայլ, մերկացելոյ այգոյն աստղ առաւօտի, գիշերային մթոյն խօնարհ բերկրանաց, օրինի ստուերին տառ ճշմարտաճառ։ Սակս որոյ երբ զնիւթ գործօնեայ այսքանեաց բարեաց օրհնեալ ես դու ի կանայս, նախաստեղծին մերկացելոյ փառք անկապտելի, վճռացելոյ անիծապարտ մօրն սփոփիչ քաւութեան, որդւոց նոցին խռովութեան՝ խաղաղութեան ձայնատու։ Եւ արդ ո՞ր բան բաղդատեալով՝ զանհամեմատ քո մեծութիւնդ լեզի կարող գերահռչակել, արարչին մայր, անհասին ծնող, անբաւին գրկարան, ամենակալին յանձանձիչ, փառազարդողին զգեցուցիչ, վերօրհնելոյն գրգիչ։ Ահա յաղագս այսոցիկ ըստ անսուտ քոյ բանի յիրաւի տացուք քեզ երանի, մայրդ Յիսուսի։

ԺԶ. Աննիւրհելի դիտմամբ տեսակ լուսալիր աչօք նը կատեալ, կատակ մակագիծ անեղծ պայմանաւ արձան հաստատեալ, սահման յարակայ մեծութեան կարգադութեանն, երկուց միութեանն անայլայլականի կապ պատկանակիր, վեհին պատկեր կերպիւ կշռորդեալ, թեթեւ պարզութիւն հիւթիւ բաղկացեալ, տառ տարբերական տողիւ ձեւացեալ, տումար տենչալի անսբնալ գրոշմեալ, մատեան մեծութեան շնորհիւ նը կարեալ, նամակ ընտրութեան բանիւք բարդեցեալ, արձան անձնական իմաստիւք զօդեալ, կնիք մատանւոյ տերամբ կերպագրեալ։ Օ գեսա լուսանիւթ երկնից աղբեայրն, օձոյ սրբութեան անմահ բնակողին, յարկ վայելչութեան անեղ շինողին, առիթ մարդկութեան, բանի անեղին, գործի մարմնութեան վեհին բնութեան, պատճառ պատշաճից անպատկառ ճգնութեանց, օրինակ ուղղութեան անայլայլակ վերպութեան, անպաշ

կաս աՀելուԹիւն լման ԹերուԹեան, խակուհի երկնային կենդանեաց գաւառին, մանակից ընորհելեալ հայրական գԹուԹեանն, անպարտակիցն աղգակցուԹեան երկնից վերստին, անամանակն արդանտի ծանուցող ծննդեան։

ԺԹ. Ի ու գՀօրն լուսոյ զորդի հարազատ՝ ի ստորինս կոյս աշխարհի մայրենի կաԹամբ ջամբեալ դիեցուցեր, և որպէս Թեւովք խնայական պահպանուԹեամբ զպարունակողն պարփակեցեր։ Նա զկենցաղոյս ընԹացք ընդ լուսազարդ կենացն շաւիղ ձգեցեր, և ըստ նմանուԹեան արադման օդային Թռչնոյ ի յանցաւորաց աստի փոխեցար, և ի մէջ գաստից հրեշտակաց ուռնող աստուածոյ յայտնեալ ծանուցար։ Նա լուսարփի ամպով առ ի նոցանէ պատուեալ համբարձար, և հողեղէն հաստուած ի քրովբէից աղի հանգուցար, և ի կանանց աղանցն կերպից արուսեկին տեսակաւ տեսար, և զննելի բնուԹեամբ մարդկայնոյ յանճառաչնորհ խորհուրդ ծածկեցար, և ի սահմանէդ քո և համայնից հպատակօրէն ձեռով պաշտեցար, և հաստողին ծագաց աշխարհի մայրօրինակ անուամբ ձայնեցար, և մեղուցելոյ կնոջն առաջնոյ առանց յանցանաց զաւակ գովեցար, և ամենայն անբծաց ընտրուԹեան պսակ սրբուԹեան դու դաւանեցար, և իբրեւ զհանդարտ երինջ անարատ արարչաւանդ լծոյն մատուցար, և իբր յաւանակ կամաց անբաւելին աստուածուԹեան հետեւեցար, և ի խորոց ծովէ աշխարհի շուշանական շաւղօք ամբարձար, և իբր ի դժնեայ փշոց խստուԹեանց յաշխարհիս զբաղմանց ծաղկեցար, և իբր ի դառն արմատոց երկրի քաղցրաճաշակ պտուղ յայտնեցար, և ՆշրորդուԹեանն անտես ԹաքնուԹեան խորհրդակից սիրոյ կոչեցար, և ծածուկ հաւաքման բանին իբր լուսատու ձորձով պատեցար, և անքակ էին տէրուԹեան սահման սկսման վերակարգեցար, և ի սրբանեալ միջոց քո ստեանց զանկէան ի տաշխին ծրար Թագուցեր, և ի կուսական քումմ բարուն ակէ զանմահարարն ողջ

կոչ հասուցեր, և միջնորդ կենաց երկոցունց սքան-
չելապէս համարձակեցար, և համոզիչ ի խաղաղու-
թիւն մրրկածուփ շարժմանց կացուցար, և խրախա-
կից վերնոյն բարձրութեան անկապտելի անուամբ
պատուեցար։

Ժ. Արդ յայսքանս և ի սոյնպիսիս, և յեւս ընտրե-
լական երգս բանահիւսից գերահռչակեալ ես վեմա-
կան վարուց նախընթաց և յառաջաշաւիղ սուրբ աս-
տուածածնին։ Վասն որպէս երեւեալն ի քէն միա-
ծին անդրանիկ բնութեանն հօր՝ սկիզբն առի հետե-
ման խաչնանակ մահակիր ճգանց, այսպէս երանեալդ
և բարեբանեալդ գերօրինակ ցուցման տեսակի աս-
տուածակրօն կարդաց ծագեցար։ Քեւ զանմատոյց
հուրն կիսանող անապական ծաւքմամբ ծախեցաք, քեւ
զարագեալն ի թեւս օդային ի քաւընթաց կենդա-
նիս տեսաք, քեւ զանկցորդն տեսականաց ի մարդկա-
յին կերպ նկատեցաք, քեւ զգոլեալ բարձողն մեղաց
իբր զգառն ճաշակ ընկալաք, քեւ դատելոյն ի չարա-
գործաց որպէս աստուծոյ ճշմարտի երկրպագեցաք,
քեւ զանձանօթն հօր սերուն թիւն ազգակցապէս օրհ-
նաբանեցաք, քեւ զմուրհակ պարտուց անիծիցն ի յա-
ւաղանին ջուր ընկղմեցաք, քեւ զանտեսն աչաց հրեշ-
տակաց տղայական սիրտ գգուեցաք, քեւ զանսահման
բանին բնութիւն ի հասարակածին տիպ համբուրե-
ցաք, քեւ զԱդամն նոր հոգեղէն ի չափ հասակի ա-
ռաքնոյն տեսաք, քեւ զարեգակն արդարութեան կեն-
ցաղակից մեր կոչդ ստացաք, քեւ զանժամանակ բա-
նին էութիւն՝ սկսեալ ի Յաւետից պատմեցաք, քեւ
զանհամեմատ մարդոյ պատկերի մեզ նմանատիպ գոր-
ծով գրեցաք։ Արդ այսքանեաց սրբազնական մատանեաց
ձառեցելոց դու միայնակ պատճառ, անարատ կուսից
նպատակ կրօնից, սիրամայր սուրբ աստուածածնին։

ԺԱ. Վասզի թէ չէր ի քէն ածեալ ուղէշն երկնային,
ոչ էր պողպատերեալ զանճաշակելին ի չրթանցն մեր
հաղորդութիւն. և թէ չէր երեւեալ հօրն արդարու-

Թիւն ՚ի յերկինից, չեւ էր սկսեալ ճշմարտութիւնն ՚ի յերկրէ. և թէ չէր յղացեալ յանխորճականդ քուէ արգանդի, ոչ էր մարմնացեալ. և թէ չէր յայտնեալ մերով բնութեամբս, ոչ էր շօշափեալ և ըմբռնեալ անհան իմաստից. և թէ չէր կրեալ ՚ի գիրկ բարձր ղաց հողեղէն բաղկաց, ոչ էր ծանուցեալ. և թէ չէր համբուրեալ երկրաւոր ղթամբք, ոչ էր ճառեցեալ. և թէ չէր հետեւեալ ՚ի մարդկան ընթացս, ոչ էր քաւ ղոզեալ էանն ՚ի յէից. և թէ չէր թափեալ իւղն անապական ՚ի վերհագուստն, ոչ էր զմեղ օծեալ. և թէ չէր խառնեալ զմերս ընդ իւրումն, ոչ էր մկրտեալ. և թէ չէր խրախուսեալ մարդն ՚ի յերկնայնումն, ոչ ևս էր սրբեալ. և թէ չէր խոնարհեալ բարձրն ՚ի յընտանի փառացն, ոչ էր վերացեալ ՚ի ստորնայնոցս առեցեալն։

ԻԹ. Բայց մարմնացաւ, որքան մարդացաւ. նոյն և յայտնեցաւ, ըստ որում ծանուցաւ. աւետարանեցաւ, ուստի փառատրեցաւ. իսկ մաքրեցաւ, որպէս երգեցաւ. իսկ մկրտեցաւ, որ և վկայեցաւ. նոյն իսկ պատմեցաւ, որպէս ճառեցաւ. իսկ տանկացաւ, որով ճախացաւ. իսկ հնազանդեցաւ, որով պաշտեցաւ. իսկ երկրպագեցաւ, որով խոցեցաւ. իսկ կենդանացաւ, որով թաղեցաւ. իսկ պատուեցաւ, որով պատժեցաւ. իսկ ամաչեցոյց, որով պատկառեաց. իսկ բերկրեցոյց, որով տրտմեցաւ. իսկ զգեցոյց, որով մերկացաւ. իսկ ողջացոյց, որով բեւեռեցաւ. իսկ կանգնեցաւ, որով վտանգեցաւ. և սլացաւ որպէս վերնային, թռեաւ որպէս հրեղէն, ծածկեցաւ որպէս զանքնին, փախեաւ որպէս զանհաս, ՚ի յամսոց երկնից եդ զգնացս, գովեցաւ որպէս միածին, բոսորաբուխ կայլակօք ներկեաւ, անկից վերացն բոցով հարցաքննեցաւ, ՚ի վերհից անմահ հրեշտակացն հաւատացաւ. յաղթող մրցման և մարտի փառաւորեցաւ, դատաւոր արդարակշիռ յաւիտենից ազգաց վերապատմեցաւ։ Քանզի ՚ի քէն հիմ նագրեաց զակիզբն մարդեզուն Թեան անեզն խոկու Թիւն.

և յընտրեալ անպատում շնորհէ զայս ամենայն անփո-
խանորդելի պարգեւական ձիրս ընկալաք. և քեւ ամե-
նայն այս պատրաստուԹիւն բարեբաստուԹեան բաղ-
մերանեան յուսոյ հրճուանաց մեզ հանդերձեցաւ: Եւ
զամենայն փառս երանական լուսոյ նշուլից վերնոց և
ներքնոց ծածուկ խորհրդոյ բաղմադուէստ պայծառ
յօրինման նոր արարածոց անճառ շինուածոյ սուրբ
եկեղեցւոյ, ի քէն ծնեալ կերպիս մերոյ և բարձրա-
ցեալ անուանն Յիսուսի ծնկովք կրկնելովք մատու-
ցանեմք: Աստի և քեզ բերկրեցելոյդ զաւրօրականն
օրհնաբանուԹիւն բանիս երկրորդեմք:

ԻԹ. Օրհնեալ ես դու ի կանայս, գլուխ նոցին պան-
ծանոյ, և պայծառ պսակ: Պսակ կուսուԹեան մա-
քուր հարսնուԹեան, պսակ ընտրուԹեան անփոխ
գովուԹեան, պսակ անեղծուԹեան, լուսոյ նմանու-
Թեան, պսակ ընտրհանորոյդ էին ծնելուԹեան, պսակ
երանական բանին հօր մայրուԹեան, պսակ սուրբ
պանծանաց կենացն բարձրուԹեան, պսակ պայծառա-
փառ վարուց խոստուԹեան, պսակ տիրապատուստ
երկնահանճարն գիտուԹեան, պսակ պիտանական եկե-
ղեցւոյ գեղեցկուԹեան, պսակ պաշտելուԹեան Յիսնի
նորոյ զարդարման, պսակ յոքնանկար յարփիչ եօԹանց
փայլատակման, պսակ առաջնորդական վերնոյն աղ-
ւակցուԹեան, պսակ անբծուԹեան շաւղացն արդա-
րուԹեան:

ԻԹ. Արդ ամենեցուն վերակարգելոյ Թուոցս այսո-
ցիկ բնակարան բաղձալի, և երանելի, և ընդունարան
ընտրական կամաց անբաւին զքեզ խոստովանիմք երկ-
բաւոր ծնունդքս աստրաստեղծականն Ադամայ. որոյ
անհամար և անթիւ աղանց ամրական և պահպանական
պարիսպ կառուցար: Քանզի յարժանահայց և յամե-
նազոր քոյ բարեխօսուԹիւնդ միշտ ապաւինեալ ծնամբ
ի հաստատուԹեան, խնամեալք և հանդուցեալք
ընդ հովանեաւ պաշտպանուԹեան ամուր պատուարի
սուրբ աստուածածնիդ: Պատուար պճնայօրէն ի զա-

նաշան մաքրաշարդ ականց յարմարեալ. պատուար հրապարփակ անմատոյց ընդդիմողացն հինից. պատուար բոցանշոյլ անհուպ և անհաս մատուցման դժնեայ դրժողաց. պատուար ամենահրաշ ըստ Իզեկիէլի, որ աղևեալ զմուտս քո ճչգրտապատում գրեաց. պատուար շրջապարիսպ ըստ Դաւթայ, որոյ հիմն անշարժութեան ի բարձրելոյն հաստատեցաւ. պատուար ամրակառոյց քաղաքին վերնոյ ըստ Պօղոսի, որում ըզ հանուրս բնակիչս արարեր: Քանզի զաստուած ծնար ի մարմնի, և զծնունդս մարմնաւոր Սիովնի որդիս արարեր վերնումն Հոգեւորի: Որոյ աղագաւ օրհնեցաւ արդարդ քո կուսութիւն ի շրթունս նոցին, և խոստովանեցար յամենեցունց մարմնաւորաց և տաճար հօր լսակալին:

Իե. Որով արդարապէս ի քեզ ընծայեալ զբան պատմողին, եղեր մեր օգնական և տուն ապաւինի յուղևից հեղեղաց յաւուր անձկութեան. մաքրութիւն կուսից և սկզբնաշաւիղ դասուց երջանկաց, մայր հիմնադրութեան հաստատութեան եկեղեցւոյ, և ծնող անապատ բանին աստուծոյ: Ո՛վ քեզ յաւէտ օրհնութեամբ միշտ պահեմք ի նուիրեալ տեղիս սրբութեան քումդ տաճարի, և ի թեւս պահպանութեան լայնատարած քումդ մաղթանաց ապաւինեալք, զձեռս մեր ի սմա տարածեմք. և աներկբայ յուսով հաւատամք ապրիլ: Ընդ աղաչեմք ընկալ զերդաբան օրհնութիւն մերում լեզուի. և հաճեալ տացես սմա զձիրս հնորհաց Սիոնի և Երեզհեմի: Ուսոյ արժանասցուք ընդունել մասն փրկութեան յաւուր գալստեան մեծի յայտնութեան փառաց անեղծի, փրկչին անմահի, քումդ միածնի, միոյն աստուծոյ, աեառն Յիսուսի: Նա երբ ըզ պատճառ սկզբնաշաւիղ այսքանեաց բարեաց՝ ի սոյն կամարի գեղապճնելոյ զքեզ պատուեսցուք, անժամանակ էին բարձրացեալ ծնող:

ՊՐԱՀԱՆՑ չափոյ կշռման երկրային բնութեան, և քրովբէականն նախադասութեան եղեալ վեհական. որբուհի պայծառ առագաստ Փրկչին Քրիստոսի, և նորուն իսկ տեսաւորիչ վասն մեր. ծուներ կրկնեսցի արժանապատիւ քումդ պատկերի. հայցեա վասն մեր առ ծնեալդ ՚ի քէն աստուած ՚ի մարմնի։

Ոսպէից յոգնաթիւ մասանց բերկրութիւն, աղքատ և աղանց արմատ օրհնութեան. ՚ի ծագմանէ փառացն երկնայնոց անսասուեր նշոյլ տարփալի շողեալ ՚ի ստորինս տեղի. անորիշ հպմամբ մերձաւոր անմահոյդ լուսոյ, անճառ խոստմամբ ապառնեացն յուսոյ ՚ի մահու պարտեացն զերծո զառ քեզ ապաստան ծառայքս քումդ որդւոյ։

Իյերկրաւոր նիւթոյ մարմնաւոր վարուցն՝ երկնայնոցն կրօնից եղեր հպաւոր, Աարիամ առիթ տեսութեան նոցին զանղնին որդւոյն կերպարան։ Ուստի տեսին զանկեան սկսեալ, և երանեցին զարմատդ և ըզպատճառ. յորմէ և մեք հայցեմք զնորոգութիւն կենացդ, և պաշտպան զտիրամօրդ ձեռնտուութիւն։

Գլխաւորեալ այսօր ՚ի քեզ զնմանալին փարթամ մեծութիւն. որ սլացեալ հասեր ՚ի բարձունս երկնից, իբր անընդունակ ապականութեան և մահու լուծման մարմին, յորմէ պատկառեաց ամօթով պարտիքն մահու. և ցուցար բնակիչ արժանապատիւ կենդանեաց երկրին՝ տեառնդ կենակից սուրբդ տիրամայր. արգահատեա միշտ զողորմութիւն որոց պանդխտիմք ՚ի վիհս նեղքին։

Ուննդ հրճուանաց անթիւ խրախութեանց աստուածային անկեան խոստմանց ՚ի բուբաստանս անդաստանդ տիրական անկոյն, որոյ ստեղունք շառաւիղացն երկրային հնարից գերազանց. անդր մուծցես զքո դաւանողքս, սուրբ տիրուհի մայրդ Յիսուսի։

Ոտեմք ՚ի քէն աղերսիւ բանի, որ ես քաղցրալուր

գրաւ աչխարհի . միայն երանեալ և քարեբանեալ, հօրն հաճութեամբ հովանաւորեալ. որդւոյն ծնող, հոգւոյն վերընդունող, Երրորդութեան փառացն տա րող. վերանկարեա զառ յաւաղանէն անախտ արգանդէ զկարդացեալս անուն ի դիր մատենի վերնում դպրո ցիդ : Նա զերդագրութիւն սակաւամանեայ այսր գո վեստի՝ արձան հաստատեա միշտ անկործան սրբոյդ ա ռաջի . ընծայեալ մարմնոյս զմրաշարս գիծ . և զգայա կան ընդոյս զպատկեր բանիս : Օ՛ի իբր ի գրից երկուց զուգելոց ի մի խառնութիւն միոյ կենդանւոյ , միշտ փառաւորեցիս դու սուիւն օրհնութեամբ , որպէս ա նեղծ պաշտօնէիցդ օրհնաբանութեամբ : Թերեւս ի ձեռն զօրեղ քոյին հայցուածոց լինի մեզ անդատա պարտ համարձակութիւն յաստենի մեծ և ահաւոր սուրբ դատաւորին : Նա գոցուք արժանի անբիծ վա րուք , և ուղիղ դաւանութեամբ՝ հաւատոցն հաստա տութեամբ հանդիպիլ և անդանօր ընծայիւք բանից քումդ երանութեան . փառաւորել ընդ քեզ և ընդ քոյն յանդիման դիմաց պաշտելի և պատկելի քում աստուածափայլ և լուսանչյալ մեծ պայծառութեանդ ղէութիւն անքակ և անքննելի սուրբ Երրորդութեանն ի միում տէրութեան և արարչութեան : Որում վա յելչական պատիւ , և գովեստ անդադար երդոց այժմ և միշտ և յաւիտեանս յաւիտենից . ամէն :

Համառօտութիւն ազօթից եռամեծի և քաջ վարդապետի Մխիթարայ գաղի խոտակրօն Ճգնաւորի և բանիբուն հռետորի՝ ասացեալ ի սուրբ Պատարագին :

Տէր աստուած իմ Յիսուս Քրիստոս բան հօր և կերպարան , կենդանի և կենդանարար , յոյս և փրկու թիւն ամենեցուն որ կարդան առ քեզ : Որ չնորհես առաւել քան զարժանն , և տաս խնդրուղացն զպիտոյս կարեաց : Օ՛ի ոչ միայն արարեր և ստացար ի վերատին յանցանելն մեր՝ չարչարանօք խաչի քո , այլեւ միշտ ըզ քեզ ետուր փրկանս կենաց մարդկան : Ո՛ան որոյ մեծ

եղեալ մինչեւ յերկինս ողորմութիւն քո, և յամենայն երկրի ցուցաւ փառք քո: Նա այնքան գերազանցեալ պարգեւաց քոց նշանակ, մինչ զի ոչ միայն մարդկայինս հիանան ազգք, այլ և երկնային զօրքն և առաւել մերձակայքն. ընդ որս սոսկացեալ փառաւորեն անձն ռելի ձայնիւ ասելով, սուրբ՝ սուրբ՝ սուրբ՝ տէր զօրութեանց, զորս և ուսեալ մեր՝ երգեմք ի ժամ անմահից զենման՝ կարգելով անմարմնոցն երջանկաց:

Ո՛վ զառ մեզ զանճառն տեսանելով զկորհուրդ՝ զոր բնակ մահուն ճշմարտի, ընդ մեր եղեալ՝ մարդկապէս ընդ մեզ եղանակեն զերգս օրհնութեան: Ո՛վ եթէ զօրինակն անպիտանան գովասանութեան՝ միայն զսուրբ բըն կարդան զանուն, ուստի զերեսան ծածկեն և զոտն. մեք զի՞ ասացուք զօրհնութիւն և զգովութիւն, բայց միայն զքեզ օրհնեցուք սարսափմամբ, և հաւատովք մերձեցուք յանտեսանելիդ և ի տեսանելիդ անճառութիւն:

Օրհնեմք զհայր՝ զառաքող փրկողիդ:

Օրհնեմք և զհոգիդ սուրբ՝ զկատարիչ և զըրբիչ զգալոյն օրինակի:

Օրհնեմք զանխմանալի զքո խոնարհութիւնդ:

Օրհնեմք և զմեծ քո քաղցրութեան կամդ:

Օրհնեմք՝ որ զկենդանարար մարմին և զարիւն քո սուրբ ընտրեցեր մեզ ի քաւութիւն:

Օրհնեմք՝ որ հուր աստուածութեան քոյ՝ ոչ կիզոյ զընութիւնս հողեղէն:

Օրհնեմք՝ զոր ոչ տանին երկինք ամենայն, այլ տանին նիւթական և նուաստական եկեղեցիք:

Օրհնեմք՝ որ նստիս ի քերովբէս, և բազմիս ի սեղան սրբութեան:

Օրհնեմք՝ զոր ոչ ունին երկինք վերին՝ և իննեակ դասք անմարմնոցն, բառնան մատուռնք քահանայից:

Օրհնեմք՝ զոր և սերովբէն ունելոջ մատուցանէր ի բերան մարգարէին. իսկ աստ ձեռամբ բաշխիս հողեզինաց և մատամբ մատչիս Ճաշակողաց:

Օրհնեմք՝ որ ոչ գարշիս յաղտեղութենէ մարմնական կրից, այլ մաքրես սրբութեամբ քով։

Օրհնեմք՝ որ զպեսպես յանցանսն անտես առնես զաղգի մարդկան՝ որք հաւատով ապաւինին ի քեզ։

Օրհնեմք՝ որ միջնորդութեամբ կենարար մարմնոյ և արեան քոյ՝ հաշտեցուցանես զհայր քո ընդ օտարացեալս մեղօք, տալով վճիռ անսասելի, ոչ ուտողացն և ոչ ըմպողացն ոչ ունել կեանս, և ուտողացն և ըմպողացն զբնակիչն ի քեզ, և զքեզ ի նոսա։

Քանզի տիրապէս մարմին և արիւն քո սուրբ կատարեալ արձակուածն է և ազատութիւն ի կապանաց մեղաց։

Օ՜ի եթէ սուրբք ամենայն առ հասարակ չիշխին, և քոյոդ բարեաց կարօտին, զիա՞րդ և ոչ ես անկեալս ի չնորհաց և ունայնս ի բարեզարդութենց։

Օ՜ի եթէ այժմ ոչ ողորմիս, յորում բացեալ ես զդուռն ըն անճառ ձրից, երբ տայցես յայլում ժամու, քանզի անվրէպ յայսմ ժամու է առնուլ ի քէն զնդիրս, որպէս և սուրբք ի քաղցրութեան ժամանակի։

Օ՜ի եթէ յորժամ ընդհանուր երկինք և երկիր առհասարակ բարեխօսեն՝ ոչ լսես, այլ յորո՞մ ժամու զամենեսեան ժողովեցիր։

Օ՜ի եթէ մինչ հիանան անմարմնոյն դասք ընդ առատութիւն պարգեւաց քոց, և զօրհնութիւնս մատուցանեն, ոչ առնում. յորժամ ի կշիռ դնես՝ զիա՞րդ ընկալայց։

Օ՜ի եթէ յորժամ դասք հրանիւթիցն գոչեն ասելով՝ ողորմեա քո արարածոց, մանն ինձ ոչ տացի. ընդ որո՞ց այլոց առիցս։

Աղաչեմ զքեզ տէր, մի ունայն դարձուցաներ զիս յամենասուրբ երեսաց քոց, անչափ պարգեւացդ իշխան։

Յորժամ յարգեալ է իբրեւ զգեստս ի լուսինէ ծովու մեծիդ պարգեւք, ուստի և ինձ կալիլ մի բաւական է. զի սակաւն քո անչափ ունի մեծութիւն, և առաւելեալ է քան զևորս ծովու։

Օ՜ի եթէ ի ծագիլ լուսոյ արեգականդ ոչ լուսաւորիմ, ի գիշերի՞պէս պայծառացայց։

Նա եթէ ձրի բժիշկդ մերձ ես՝ և զդեղդ կենաց ոչ տացես, այլ՞ւր գոյց բժիշկ ոլ բժշկեցայց։
Եթէ յարուցչիդ պատահեալ մեռանիմ, և ո՞ զիս յա-րուցէ։
Եթէ բնութեամբ ճոխացուցիչդ զաղքատութիւնս ոչ բարձցես, առ այլ՞ւ երթայց՝ ի փարթամաց։
Ընդ խաղաղութեան աշխարհիս զոր շնորհես, տուր և ինձ խաղաղութիւն յամբոխից կրից, ընդ հաստա-տութեան եկեղեցւոյ՝ հաստատեա և զարժեալ անձինս։
Ընդ քահանայապետաց և քահանայից՝ սարկաւագաց և դպրաց՝ և ամենայն ուխտի մանկանց եկեղեցւոյ պահպանութեան, զօրութեամբ քո և զիս ընդ հովա-նեաւ քով ամրացո։
Ընդ թագաւորաց և իշխանաց՝ զօրավարաց և զօրականաց յաղթող և զիս՝ ի վերայաներևոյթ թշնամւոյն արասցես։
Ընդ ննջեցելոցն հաւատացելոց յիշեա և զիս տէր ըզ-մեռեալս մեղաւք, զորս՝ ի խորոցն հաներ անդնդոց, ընդ նոսին հան և զիս՝ ի չարէն բանդէ՝ միջնորդութեամբ կենարար մարմնոյ քոյ և արեան, արժանապէս գոհա-նալ զողորմութենէ քումմէ։
Գոհանամ զքէն տէր՝ որ արժանի արարեր զիս տես-լեան սուրբ խորհրդոյ քոյ։
Գոհանամ՝ զի զոսկալէն և զհաւուրն լուայց զձրհ-նութեան։
Գոհանամ՝ զի զաստուածախօսութիւն քո լսել ար-ժանացայ։
Գոհանամ՝ որ զհոգիս յոսկով լցեր, և զսիրտս ու-րախութեամբ։
Ո՛չ օրհնութիւն կամ զգոհութիւն քեզ մատուցա-նեմ՝ աստուած իմ Յիսուս, զի արժանի եղէ կենաց հացիդ և անմահարար բաժակիդ։
Գիտեմ՝ զի չար է ինձ մերձենալն չարեօք, և տարա-կուսանք հեռանալն, մանաւանդ զի անտուտ սահմա-նեցեր, եթէ որ ոչ ուտէ զմարմին իմ և ըմպէ զարիւն իմ, կեանս ոչ ունիցի յանձին իւրում։

Ահա յայտնապէս խոստովանիմ, զի ես մեռեալ եմ, և քեզ է յարուցանելն. զի փառաւորեցից զքեզ ընդ հօր քում ամենաշնորհ, և ընդ ամենասուրբ հոգւոյդ ճշմարտի, այժմ և միշտ և յաւիտեանս. ամէն:

Ամենակալ ամենահանճար աստուած՝ յամենայնի օրհնեալ. որ յամենայնի ես և ամենեցուն անհաս՝ և բռնվանդակեալ պահես զամենայն արարածս՝ զհոգեղէնս և զհողեղէնս, զանիւթս և զնիւթեղէնս. զի մահկանացուաց կեանք ես և անմահութեան յարամնացուելիւն: Նայ զդուռն ողորմութեան քոյ՝ գթած, և ծագեա լոյս խաւարելոյս: Օ՜ծանրացեալս բեռամբք մեղաց՝ թեթեւացո. զսեւացեալս ազտեղեալ կրիւք՝ սպիտակացո. զսառուցեալս յատուածայինն սիրոյդ՝ ջերմացո. զմթացեալս անտանական սահեցմամբ՝ զգաստացո: Օ՜մբռնեալս ի ծուղակ որսողին՝ փրկեա և ազատեա. զմանրեալս ի ժանեաց կերչին՝ կորզեա և կենդանարծեա. և զհոգիս խաւարեալ մեղօք՝ անճառ լուսով քով լուսաւորեա, և միշտ առ քեզ հայեցո: Օ՜գերեալ խորհուրդս ի գերողէն՝ առ քեզ դարձո. զմբռնեալ կամս ի խարդախողէն՝ վերծո. զյօժարութիւնս՝ քաղցրութեամբ ի քեզ միացո. զանական մասն հոգւոյս՝ խոհեմացո. զսրտմտականն արիացո. զցանկականն ողջախոհացո, և առ քեզ դարձո. վերիս մասունս՝ արդարութեամբ ամրացո. զնսեմացեալ միաբս՝ պայծառացո:

Օ՜ներսորամադրեալ բնութիւն բանիս՝ հոգւով քո խաւնեա. զարտաբերեալս յօգուստ լսողաց՝ շնորհօք քո ներկեա. զզգայարանս կարկառման մտացս՝ առ քեզ հայեցո. զզգայութիւն պատուհանացս՝ ազդմամբ քո լցո: Տեսանելեացս՝ ցոյց զղղորմութիւն քո. լսելեացս՝ լսելի արա զձայն քո. ճաշակելեացս՝ քաղցրասցին բանք քո. հոտոտելեացս՝ բուրեցուի հոտ կենաց քոց, միշտ առ քեզ պաղատիլ և աղաչել և երկիր պագանել՝ բաղխմամբ կրծից, տարածմամբ ձեռաց, տատանմամբ մատանց, կականմամբ ձայնից, հառաչ

մամբ սրտից, հեծումբեամբ ողբոց, արտասուօք աչ
ջաց, յայտնութեամբ դաղտնեաց, խոստովանութեամբ
մեղանաց, և ի քէն ընդունիլ թողութիւն սխալանաց,
քաւութիւն յանցանաց, հանդիստ փառաց, և զու
արձանալ տեսութեամբ աչաց, և վայելել ի փառս
երբեակ անձնաւորութեանդ յաւիտենից ։ յաւիտեա
նս. ամէն ։

Տէր Աստուած վարդապետի ասացեալ ներբողեան
ի սուրբ Գրիգոր Նարեկացին ։

Արթնական լաս երկնային, Յիսուս Քրիստոս հօր
միածին, լեր ընդհիւ քո անքնին, զսուրբ Գրիգոր
Նարեկացին ։
Բղխեալ աղբիւր անհիւթական, անճառ հոգւովդ
աստուածական, մեղուցելոց յոյս փրկութեան, յան
ցաւորաց ազդի մարդկան ։
Գանձ անսպառ անապական, աննիւթ նիւթով շա
րադրական, զի որք առնուն փարթամանան, շահով
երկնից արքայութեան ։
Դեղ խոցելոց ի բանսարկուէն, և անջատումն ի չար
ախտէն, մեզ օգնական լինի և ազէն, ընդդէմ այսոց
նեռատգողէն ։
Երանելի աեր սուրբ Գրիգոր, դուռըն բացեր մեզ
հոգեւոր, ահաբս յուսեր մտայ բոլոր, բանիւ քոյին
արդիւնաւոր ։
Օ՜աբքայն երկնից աչօք տեսար, զհոգին աստուած
սուրբ ընկալար, հօրըն լուսոյ ուռ կաղմեցար, յորմէն
Քրիստոս պատուաստեցար ։
Լ՜ին հրաւիրն մաքրեցար, անտես բոցովըն վառեցար,
ընդ աստուածոյ խօսակցեցար, մեղուցելոց յուցեր
դուռ ճար ։
Ընտրեալ ծաղիկս ի սուրբ գրոց, հաւաքեցեր ի մի

Շարոց, դեղ կաղմեցեր հիւանդ հոգւոց, պարգեւեցեր ձիր մարդկանց։

Թախանձանաց բանս լալագին, բարբառեցար դու ’ի խորին, խորատակեցեր զժանիս չարին, զդիւսայ գընդին ի կիզեանին։

Յամանակաւ յետին ցուցար, քան զառաքինսըն պատուեցար, յերեկոյիս լոյս ծագեցար, քան զվիջօրեայ պայծառացար։

Իմաստութեամբ քո անքնին, անբիծ վարուքդ իակ ’ի մարմին, եղեր պարծանք տանս Աբրահամին, ասքանաչ զեան Հայկ արմենին։

Յուսաւորչին համանըման, Գրիգորիոս արթուն աչնուան, զի որք նուաւ ’ի լոյս դարձան, և առաւել քեւ ցնծացան։

Խաչեալ մարմնով ընդ Քրիստոսի, զօրհանապազ միշտ յաղօթի, Գրիգորիոս լոյս գերարփի, լուսաւորիչ մեզ ’ի հոգի։

Օաղիկ յաշնան ժամ յայանեցար, անմահութեան հոտ բուրեցար, Գրիգորիոս ծառ ծաղկեցար, պըտուղ կենաց պարգեւեցար։

Կեանք մեղուցեալ մարդկան ցուցեր, յուսահատից յոյս կանգնեցեր, Գրիգորիոս բանս երգեցեր, յանցաւորաց կանոնս եդեր։

Հաղբըն չարին անխըզելի, որ ընդ մարդկան պատուհասցի, Գրիգորիոս սուր երկայրի, սուրբ աղօթիւքըդ խորտակի։

Զայնիւ քոյին հըսկողական, սանդարամետքն ահիւ դողան, Գրիգորիոս դու աննման, հոգևնիւթեայ բնութեանս մարդկան։

Ղամբարափայլ ճաճանչ վառաց, ’ի գաւառին ըռընտունեաց, քան զարեգակն ընդ աստեղաց, նոյնպէս բան քո ընդ այլ կտակաց։

Ընդրագ եղեալ յաշտանակի, ըստ հրամանի տեառն Յիսուսի, Գրիգորիոս մարմնով յերկրի, հոգւով ’ի դասս հրեղէն գընդի։

Աչառհոսան հոգւոյին անճառ, յարմարեցեր բանիւ մեզ ճառ, Աբիգորիոս մըտօք պայծառ, փարատեցեր զմեղսց մըսայլ։

Ցանեղ լուսոյդ լոյս կոչեցար, յաշտանակի մարմնոյդ եգար, եկեղեցւոյ Քահ վառեցար, խաւար հոգւոց դու լուսարար։

Նախանձաւոր հարանց վարուց, ճգնաւորաց նախնի գաստուց, Աբիգորիոս ցանկ խրատուց, բանս խօսեցար վասն նոցունց։

Շառաւիղք բարեառնական, առեր ընդհս և գաւազան, քարոզ լինիլ որդւոց մարդկան, կոխելով զօձն անդընդական։

Աբրահամեան յաւէժական, ազգըս Հայոց Թորգոմական, յորժամ լսեն զքո խօսեալ բան, որ դեղ կենաց է փրկութեան։

Զարին յաղթեմք քոյին երգով, և զնա ուժգին խոցոտեալով, զըսպիս մեղաց մեր մաքրելով, քաղցրանուագ այսու դեղով։

Պարուց վերնոցըն հրակերպեան, եղեր մարմնով հա մանըման, Աբիգորիոս կանգնեալ արձան, բռնբռնեալ ծովին յանդիման։

Ջ'ինքեալ 'ի մէնջ զաղարս մեղաց, սուրբ աղօթիւք քո յոտընկաց, Աբիգորիոս տէր պանծանաց, ակըն լուսոյ հայաստանեայց։

Աեամին կենաց մեզ կազմեցեր, առատապէս մեզ բաշխեցեր, Աբիգորիոս կոչ արարեր, զքաղչեալս հոգւով կերակրեցեր։

Սուրբ և մաքուր բանից քոյին, այլասեռից ազգ ցանկալին, եռափափաք սիրով եկին, և գծագրեալ առեալ գնացին։

Ա՛յ ըստացելոց դու մխիթար, և նեղելոց անդորրարար, ո՛ր ոչ Աբիգոր հայր բարերար, այսահարից դեղ և հընար։ Տաղանդ ընդհայ զոր ընկալար, բազմապատիկ զայն շահեցար, Աբիգորիոս կատարեալ այր, առաւաւածու լիեանըն կամարար։

Համից սահեցջէին դու խօսակից, ճգնաւորաց աղօթակից, վարդապետաց հանուրց վարժից, Յրիգորիոս պետ բազձալից։

Ջնծան մանկունք սուրբ հաւատոյ, ընդ լուսակիր աղօթըս քո, Յրիգորիոս դու սիրն լուսոյ, հայաստան նեայց եկեղեցւոյ։

Իւանդ հոգւոցս մարդկային, բարեխօսեա տեառն Յիսուսին, սուրբ աղօթից քոց կարդին, քանք ախրամօր աստուածածնին։

Փայտըն կենաց սրբոյ խաչին, և ձայն սրբոյ Կարապետին, Սահմանոսին՝ սուրբ Յրիգորին, յորդիս լուսոյ զմեզ ծնողին։

Ռեւ ըզՅրիատոս փառաբանեմք, ընդ հօր հոգւովն երկրպագեմք, Երրորդութեանն փառս վերբերեմք, աստուածութեամբ մի դաւանեմք։



ԸՆՏԸՐԸՆՔ ԲԱՐԿՈՒԹԵՆ

Սբբոյ առեւտրանին Յիսուսի Քրիստոսի ըստ Մատթէոսի

ՏԵՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ ելլէր Յիսուս ընդ ամենայն կողմն գալիլեացւոց, ուսուցանէր ի ժողովուրդս նոցա՝ և քարոզէր զաւետարանն արքայութեան, և բժշկէր զամենայն հիւանդութիւնս՝ և զամենայն ախտս ի ժողովրդեանն։ Եւ ել լուր նորա ընդ ամենայն երկիրն ասորւոց, և մատուցին առ նա զամենայն հիւանդս՝ որ նեղեալ էին ի պէս պէս ցաւս և ի տանջանս, և զդիւահարս և զլուսնոտս և զանդամալոյծս, և բժշկեաց զնոսա։ Եւ երթային զհետ նորա ժողովուրդք բազումք ի Գալիլեէ և ի Դեկապօլեաց և Երուսաղեմէ և ի Հրեաստանէ, և յայնկոյս Յորդանանու, և բժշկեաց զնոսա։

Այլ երբեւ էջ ի լեռնէ անտի, գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք։ Եւ ահա մատուցեալ բորոտ մի, երկրպագանէր նմա, և ասէր. տէր, եթէ կամիս՝ կարող ես զիս սրբել։ Զգեաց զձեռն իւր և հասոյց ի նա Յիսուս՝ և ասէ. կամիմ, սրբեաց. և վաղվաղակի սրբեցաւ ի նմանէ բորոտութիւնն։ Եւ ասէ ցնա Յիսուս, զգոյշ լեր՝ մի ումեք ասիցես. այլ երթ ցոյց զանձն քո քահանային, և մատո զպատարագն, զոր հրամայեաց Մովսէս, ի վկայութիւն նոցա։

Եւ մտեալ ի Կափառնաում, մատեաւ առ նա հարիւրապետ մի, աղաչէր զնա, և ասէր. տէր, մանուկ իմ անկեալ կայ ի տան անդամալոյծ՝ չարաչար տանջեալ։ Ասէ ցնա Յիսուս. ես եկից՝ և բժշկեցից զնա։ Պատասխանի եւ հարիւրապետն և ասէ. տէր, չեմ բաւական՝ եթէ ընդ յարկաւ իմով մտցես, այլ ասա

քանիւ, և բժշկեսցի մանուկն իմ: Քանզի և ես այր մի եմ ընդ իշխանութեամբ, ունիմ ընդ ինեւ զինուորս, ասեմ սմա երթ՝ և երթայ, և այլում թէ եկ՝ և գայ, և ծառայի իմում թէ արա զայս՝ և առնէ: Իբրեւ լուաւ Յիսուս՝ զարմացաւ, և ասէ գոհանալիկ՝ որ ընդ հետեան երթային. ամէն ասեմ ձեզ՝ և ոչ Իսրայէլի այսպիսի հաւատս գտի երբէք: Բայց ասեմ ձեզ, զի բազումք յարեւելից և յարեւմտից եկեսցեն՝ և բազմեսցին ընդ Աբրահամու և ընդ Սահակայ՝ և ընդ Յակոբու յարքայութեան երկնից: Իսկ որդիքն արքայութեան ելցեն՝ ի խաւարն արտաքին. անդ եղիցի լալ և կրճել ատամանց: Իսկ ասէ Յիսուս ցհարիւրապետեան. երթ, և որպէս հաւատացերդ եղիցի քեզ. և ողջացաւ մանուկն նորա յաւուր յայնմիկ: Իսկ եկեալ Յիսուս ի տուն Պետրոսի, եաես զի զքաղչ նորա անկեալ դնէր տապացեալ. կալաւ զձեռանէ նորա՝ և եթող զնա ջերմն. յոտն եկաց՝ և պաշտեր զնոսա: Իբրեւ եղեւ երեկոյ՝ մատուցին առ նա դիւահարս բազումս, և եհան զոգիսն բանիւ. և զամենայն հիւանդսն բժշկեաց: Ոլի լցցի բանն, որ ասացաւ ի ձեռն Իսայեայ մարգարէի. նա զհիւանդութիւնս մեր վերացոյց, և զցաւս մեր եբարձ: Իսկ իբրեւ անց յայնկոյս յերկիրն գերգեսացւոց, պատահեցին նմա դիւահարք երիս՝ ելեալք ի գերեզմանացն, չարաչարք յոյժ. որ պէս զի չէր հնար անցանել ումեք ընդ այն ճանապարհ: Իսկ ահա աղաղակեցին և ասեն. զի կայ մեր և քո Յիսուս որդի աստուծոյ, եկիր տարաժամ տանջել զմեզ: Իսկ էր հեռագոյն ի նոցանէ երամակ մի խոզից արօտական: Իսկ դեւքն աղաչէին զնա և ասէին. եթէ հանես զմեզ ասէ, հրամայեա տուր մեզ երթալ յերամակ խոզին: Իսկ ասէ ցնոսա. երթայք, և նորա եկեալ գնացին յերամակն խոզից. և դիմեաց ամենայն երամակն ի գարէ անտի ի ծով, և մեռան ի ջուրսն: Իսկ խոզարածքն փախեան, և երթեալ ի քաղաքն պատմեցին զամենայն, և զիւրս դիւահարացն: Իսկ ահա ամե-

նայն քաղաքն եւ ընդ առաջ Յիսուսի. եւ երբեւ տեսին զնա՝ աղաչէին զի գնասցէ ի սահմանաց նոցա։

Եւ մինչ նաւ անց յայնկոյս, և եկն ի քաղաք իւր։ Եւ ահա մատուցին առ նա անդամալոյծ մի, որ դնէր ի մահիճս. և տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա՝ ասէ ցանդամալոյծն. Թողեալ լիցին քեզ մեղք քո։ Եւ ահա ոմանք ի դպրացն ասեն ընդ միտս. Հայհոյէ դա։ Եւ ծանուցեալ Յիսուսի զխորհուրդս նոցա՝ ասէ ցնոսա. ընդէր խորհիք դուք չարիս ի սիրտս ձեր։ Զի՞նչ դիւրին է. ասել՝ Թողեալ լիցին քեզ մեղք քո, թէ ասել արի և զքնեաց։ Այլ զի գիտասջիք՝ եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ երկրի թողուլ զմեղս. յայնժամ ասէ ցանդամալոյծն. արի՝ առ զմահիճս քո՝ և երթ ի տուն քո։ Եւ յարուցեալ գնաց ի տուն իւր։ Իբրեւ տեսին ժողովուրդքն, զարմացան. և փառաւորէ առնէին զաստուած զտուեալն այնպիսի իշխանութեան՝ մարդկան։

Մինչդեռ նա զայս խօսէր ընդ նոսա, ահա իշխան մի մատուցեալ երկիրպագանէր նմա՝ և ասէր. դուստր իմ արդ եւս վախճանեցաւ. այլ եկեալ դիպես զձեռն քո ի վերայ նորա՝ և կեցցէ։ Յարեաւ Յիսուս՝ և գնաց զկնի նորա աշակերտաքն հանդերձ։ Եւ ահա կին մի տեառատես երկոտասանամեայ՝ մատուցեալ յետոյ մերձեցաւ ի դրօշակ հանդերձի նորա։ Քանզի ասէր ի մտի իւրում, Թէ միայն մերձենամ ի հանդերձս նորա՝ փրկիմ։ Իսկ Յիսուս իբրեւ դարձաւ և եաես ընդ նա՝ ասէ. քաջալերեաց դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ. և փրկեցաւ կինն ի ժամուն յայնմանէ։ Իբրեւ եկն Յիսուս ի տուն իշխանին, և եաես զփող զարան և ամբոխ յոյժ, ասէ ցնոսա. ի բաց գնայք. զի ոչ եթէ մեռեալ է աղջիկդ՝ այլ ննջէ։ Եւ ծաղր առնէին զնա։ Եւ իբրեւ եղ ամբոխն ի բաց, եմուտ՝ կալաւ զձեռանէ նորա, և յարեաւ աղջիկն։ Եւ եղ համբաւս այս ընդ ամենայն երկիրն ընդ այն։

Եւ մինչդեռ անցանէր ընդ այն Յիսուս, զհետ եւ

ղեն նորա կոյրք երկու , աղաղակէին՝ և ասէին . ողոր
մեաց մեզ որդի Դաւթի : Եւ իբրեւ եկն ի տուն ,
մատեան առ նա կոյրքն . և ասէ ցնոսա Յիսուս . Հա
ւատայք՝ եթէ կարող եմ առնել ձեզ զայդ . ասեն ցը
նա՝ այո , տէր : Յայնժամ մերձեցաւ յաչս նոցա՝ և
ասէ . ըստ հաւատոց ձերոց եղիցի ձեզ : Եւ բացան
աչք նոցա . և սպառեաց նոցա Յիսուս՝ և ասէ . զգոյշ
կացէք՝ մի ոք գիտասցէ : Եւ նոքա ելեալ համբաւե
ցին զնա ընդ ամենայն երկիրն ընդ այն : Եւ յելանելն
նոցա արտաքս , ահա մատուցին առ նա այր մի՝ համր
դիւահար : Եւ յելանել դիւին՝ խօսեցաւ համրն . և
զարմացան ժողովուրդքն՝ և ասեն . Թէ և ոչ երբեք
երեւեցաւ այսպիսի ինչ Իսրայէլի : Իսկ փարիսեցիքն
ասէին , Թէ իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս :

Եւ շրջէր Յիսուս ընդ ամենայն քաղաքս և ընդ դիւ
ղըս . ուսուցանէր ի ժողովուրդս նոցա , և քարոզէր
զաւետարանն արքայութեան . և բժշկէր զամենայն
ախտս և զամենայն հիւանդութիւնս ի ժողովրդեանն :
Եւ տեսեալ զժողովուրդսն՝ գթացաւ ի նոսա . զի էին
աշխատեալք և ցրուեալք իբրեւ զոչխարս , որոց ոչ
իցէ հովիւ : Յայնժամ ասէ ցաշակերտսն իւր . հունձք
բազում են՝ և մշակք սակաւ : Աղաչեցէք զտէր
հնձոյ՝ զի հանցէ մշակս ի հունձս իւր : Եւ կոչե
ցեալ առ ինքն զերկոտասանեսին աշակերտսն իւր , եա
նոցա իշխանութիւն այսոց պղծոց հանել զնոսա , և
բժշկել զամենայն ցաւս և զամենայն հիւանդութիւնս :

Եւ զնացեալ անտի Յիսուս եկն ի ժողովուրդն նո
ցա : Եւ անդ էր այր մի՝ որոյ ձեռն իւր դօսացեալ
էր . հարցին զնա՝ և ասեն , եթէ պաւրա իցէ ի շաբա
թու բժշկել . զի չարախօսեսցեն զնմանէ : Եւ նա ասէ
ցնոսա . ո՞վ է ի ձէնջ մարդ՝ որոյ իցէ ոչխար մի , և ան
կանիցի այն ի խորխորատ ի շաբաթու . միթէ ոչ ու
նիցի և յարուցանիցէ զնա : Իսկ արդ՝ որչափ եւս ա
ւաւել է մարդ քան զոչխար . ապա ուրեմն պարտ է
ի շաբաթու բարիս գործել : Յայնժամ ասէ ցայրն .

ձգեա զձեռն քո, և նա ձգեաց՝ և եղեւ ողջ իբրեւ զմիւսն: Իսկ փարիսեցիքն ելեալ արտաքս խորհուրդ առին զնմանէ՝ թէ ոպիսի կորուսցեն զնա:

Յայնժամ մատուցաւ առ նա դիւահար մի կոյր և համր, և բժշկեաց զնա. որպէս զի համրն և կոյրն խօսիցի և տեսանիցէ: Յարմացան ամենայն ժողովուրդքն՝ և ասէին. միթէ սա՞ իցէ Քրիստոսն որդի Դաւթի: Բայց փարիսեցիքն իբրեւ լսեան՝ ասեն. ոչ իւիք հանէ դա զդեւս՝ եթէ ոչ Բէեղզեբուղաւ իշխանաւն դիւաց:

Նա ելեալ անտի Յիսուս գնաց ի կողմանս Տիւրոսի և Սիդոնի: Նա ահա կին մի քանանացի ի սահմանաց անտի նոցա ելեալ, աղաղակեր և ասէր. ողորմեաց ինձ, տէր, որդի Դաւթի, դուստր իմ չարաչար պաշարի: Նա նա ոչ եաս նմա պատասխանի. և մատուցեալ աշակերտքն նորա՝ աղաչէին զնա և ասէին. արձակեա զնա զի աղաղակէ զհետ մեր: Նա պատասխանի եաս և ասէ. ոչ ուրեք առաքեցայ՝ եթէ ոչ առ ոչխարս կորուսեալս տանն Իսրայէլի: Նա նա մատուցեալ երկրպագանէր նմա և ասէր, տէր, օգնեա ինձ: Պատասխանի եաս նմա և ասէ. ոչ է բարւոք առնուլ զուղ հաց մանկանց՝ և արկանել շանց: Նա նա ասէ. այո, տէր, քանզի և շունք կերակրին ի փշրանաց անկելոց ի սեղանոյ տեառն իւրեանց: Յայնժամ պատասխանի եաս նմա Յիսուս և ասէ. ով կին դու՝ մեծ են հաւատք քո, եղիցի քեզ որպէս և կամիս: Նա բժշկեցաւ դուստր նորա ի նմին ժամու:

Նա գնացեալ անտի Յիսուս, եկն ի ծովեզրն գալիլեացւոց. և ելեալ ի լեառն նստէր անդ: Մատեան առ նա ժողովուրդք բազումք որ ունէին ընդ իւրեանս՝ կաղս կոյրս համերս մկակոզմանիս, և այլ բազումս. և ընկեցին զնոսա առ ոտս նորա՝ և բժշկեաց զնոսա: Մինչեւ զարմանալ ժողովրդոցն՝ որ տեսանէին, զի համերքն խօսէին, կաղք գնային, մկակոզմանիք բժշկէին, կոյրք տեսանէին, և փառաւորս առնէին զաստուած Իսրայէլի:

Եւ իբրեւ եկին ի Ժողովուրդն, մատեաւ այր մի ի ծունր ի լանէր և ասէր. տէր, ողորմեաց որդւոյ իմոմ, զի լուսնոտի՝ և չարաչար հիւանդանայ. բազում անգամ անկանի ի հուր՝ և երբեմն ի ջուր: Եւ մատուցի զնա աշակերտացն քոց՝ և ոչ կարացին բժշկել: Պատասխանի ետ Յիսուս՝ և ասէ. ով ազգ անհաւատ և թիւր, մինչեւ ցերբ կացեմ ընդ ձեզ՝ մինչեւ ցերբ անասցեմ ձեզ. ած զնա առ իս. և ածին զնա առ Յիսուս: Եւ սաստեաց զնա Յիսուս՝ և ել ի նմանէ դեւն, և բժշկեցաւ մանուկն ի ժամէն յայնմանէ: Այնժամ մատեան աշակերտքն առանձինն՝ և ասեն ցՅիսուս. մեք ընդէր ոչ կարացաք հանել զնա: Եւ նա ասէ ցնոսա. վասն թերահաւատութեան ձերոյ: Ամէն ասեմ ձեզ՝ եթէ ունիցիք հաւատս քան զհատն մանանխոյ, ասասջիք լերինս այսմիկ՝ փոխեաց ասի անդր, և փոխեսցի. և ոչ ինչ անհնարին լինիցի ձեզ: Բայց այս ազգ ոչ ելանէ՝ եթէ ոչ աղօթիւք և պահովք:

Եւ յելանելն նոցա յԳերիքովէ, գնացին զհետ նորա ժողովուրդք բազումք: Եւ ահա կոյր երկու նստէին առ ճանապարհաւն. իբրեւ լուան թէ Յիսուս անցանէ՝ աղաղակեցին և ասեն. ողորմեաց մեզ, Յիսուս, որդի Դաւթի: Եւ ամբոխն սաստեաց նոցա՝ զի լռեսցեն. և նոքա եւս առաւել աղաղակէին և ասէին, տէր, ողորմեաց մեզ, որդի Դաւթի: Օ տեղի առ Յիսուս, կոչեաց զնոսա և ասէ. զի՞նչ կամիք՝ զի արարից ձեզ: Ասեն ցնա. տէր, զի բացցին աչք մեր: Եւ գթացեալ Յիսուս մերձեցաւ յաչս նոցա, և վաղվաղակի տեսին. և գնացին զհետ նորա:

Սբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Մարկոսի։

ՏԵՐԱՄԲ ՄԵՐՈՎ ՅԻՍՈՒՍԻՒ ՔՐԻՍՏՈՍԻՒ

Եւ մանկեն ի Կափառնաում, և իսկ և իսկ ի շաբաթուն մտեալ ի ժողովուրդն, ուսուցանէր զնոսա։ Եւ զարմանային ընդ վարդապետութիւն նորա, զի ուսուցանէր զնոսա իբրեւ իշխանութեամբ՝ և ոչ որպէս դպիրքն։ Եւ էր ի ժողովրդեանն նոցա այր մի, յորում՝ այս պիղծ դայր ի նմա. որ աղաղակեաց՝ և ասէ։ Թոյլ տուր, զի՞ կայ մեր և քո՝ Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմ զքեզ՝ ով ես սուրբդ աստուծոյ։ Սաստեաց ի նա Յիսուս և ասէ, կարկեաց և եել ի դմանէ։ Եւ զարկեալ զնա այն պիղծ և աղաղակեաց ի ձայն մեծ, և եել ի նմանէ։ Եւ զարհմացան ամենեքեան, մինչեւ հցծել ընդ միմեանս՝ և ասել. զի՞նչ է այս նոր վարդապետութիւն, զի իշխանութեամբ և այսոց պղծոց սաստէ՝ և հնազանդին սմա։ Եւ ելաւ նորա ընդ ամենայն կողմն գալիլեացւոց։

Եւ վաղվաղակի ելեալ ի ժողովրդենէն, եկին ի տուն Սիմոնի և Անդրեայ՝ Յակոբու և Յովհաննու հանդերձ։ Եւ զաքանչ Սիմոնի դնէր ջերմացեալ, և վաղվաղակի ասեն ցնա վասն նորա։ Աստուցեալ յարոյց զնա՝ կալեալ զձեռանէ նորա, և եթող զնա տենդն՝ և պաշտէր զնոսա։

Եւ իբրեւ երեկոյ եղեւ՝ ի մտանել արեգականն, բերէին առ նա զամենայն հիւանդս և զդիւահարս. և էր ամենայն քաղաքն ժողովեալ առ դրունն։ Եւ բժշկեաց բազում հիւանդս՝ ի պէս պէս ախտից, և դեւս բազումս եհան, և ոչ ետայր խօսել դիւացն, զի գիտէին զնա թէ Քրիստոս է։

Եւ ընդ այգն ընդ առաւօտն յարուցեալ ել և գնաց յանապատ տեղի, և անդ կայր յաղօթս։ Եւ գնաց զհետ նորա Սիմոն՝ և որ ընդ նմայն էին։ Եւ իբրեւ գտին զնա՝ ասեն ցնա, թէ ամենեքեան խնդրեն

ղքեզ։ Եւ ասէ ցնոսա. եկայք երթիցուք և յայլ մօտաւոր գիւղաքաղաքան, զի և անդ քարոզեցից. զի յայս իսկ եկեալ եմ։ Եւ քարոզէր ի ժողովուրդս նոցա ընդ ամենայն գալիլեացիս, և դեւս հանէր։ Ոյ առ նա բորոտ մի, աղաչէր՝ ի ծունր իջանէր՝ և ասէր. տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել։ Իսկ Յիսուս գթացեալ ձգեաց զձեռն, մերձեցաւ ի նա՝ և ասէ ցնա, կամիմ, սրբեաց։ Եւ իբրեւ ասացն ցնա, վաղվաղակի գնաց ի նմանէ բորոտութիւնն՝ և սրբեցաւ։ Եւ սաստեալ նմա՝ եհան զնա արտաքս վաղվաղակի, և ասէ։ Ոգոչ՝ մի ումեք ինչ ասիցես. այլ երթ ցոյց ղքեզ քահանային. և մատո վասն սրբութեան քո պատարագ՝ զոր հրամայեաց Մովսէս, ի վկայութիւն նոցա։ Եւ նա ելեալ սկսաւ քարոզել յոյժ՝ և հռչակ հարկանել զբանն, մինչ ոչ եւս կարող լինել նմա յայտնապէս ի քաղաք մտանել, այլ արտաքոյ յանապատ տեղիս էր. և գային առ նա յամենայն կողմանց։

Եւ մտեալ դարձեալ ի Կափառնաում յետ աւուրց, լուր եղեւ եթէ ի տան է։ Եւ ժողովեցան բազումք՝ մինչեւ տեղի եւս ոչ լինել՝ և ոչ առ դրանն. և խօսէր նոցա զբանն։ Եւ գային առ նա՝ բերէին անդամալոյծ մի բարձեալ ի չորից։ Եւ իբրեւ ոչ կարէին մերձենալ առ նա յամբոխ անտի, քակեցին զյարկն՝ ուր էր Յիսուս, և բացեալ զառաստաղն իջուցին զմահիճն որ յորում կայր անդամալոյծն։ Եւ տեսեալ Յիսուսի զհաւատս նոցա, ասէ ցանդամալոյծն. որդեակ, թողեալ լինին քեզ մեղք քո։ Եւ էին ոմանք ի դպրաց անտի՝ որ անդ նստէին. և խորհէին ի սիրտս իւրեանց. զինչ է այս՝ որ խօսի սա զհայհոյութիւնս. ո՞վ կարէ թողուլ զմեղս, եթէ ոչ՝ մի աստուած։ Եւ գիտաց Յիսուս յոգի իւր՝ թէ այնպէս խորհին ի սիրտս իւրեանց, և ասէ. զի՞ խորհիք զայդ ի սիրտս ձեր։ Ո՞րինչ դիւրին է. ասել ցանդամալոյծն՝ թողեալ լինին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի, առ զմահիճս քո և երթ ի տուն քո։ Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն

ունի որդի մարդոյ ՚ի վերայ երկրի թողուլ զմեղս. ա-
սէ ցանդամալոյծն. քեզ ասեմ, արի, առ զմահիճս քո՝
և երթ ՚ի տուն քո: Եւ յարեաւ վաղվաղակի առեալ
զմահիճն, եւ առաջի ամենեցուն. մինչդեռ զարմա-
նալ ամենեցունն՝ և փառաւորէ առնել զաստուած՝ և
ասել, թէ այսպիսի ինչ երբէք ոչ տեսաք:

Եւ եմուտ միւսանգամ ՚ի ժողովարդն, և էր անդ
այր մի՝ որոյ ձեռն իւր գօսացեալ էր: Եւ սպասէին
նմա՝ եթէ բժշկիցէ զնա ՚ի շաբաթուն՝ զի չարախօսե-
ցեն զնմանէ: Եւ ասէ ցայրն՝ որոյ ձեռն գօսացեալ
էր. արի, անց ՚ի մէնջ: Եւ ասէ ցնոսա. զի՞նչ արժան
է ՚ի շաբաթու, բարի՞ ինչ գործել՝ եթէ չար առնել,
ոգի մի ապրեցուցանե՞լ՝ եթէ կորուսանել. և նոքա լռ-
եցին: Եւ հայեցեալ Յիսուսի զնոքօք լի ցասմամբ,
տրտմեալ վասն կուրութեան սրտից նոցա՝ ասէ ցայրն.
ձգեա զձեռն քո. և նա ձգեաց, և ողջացաւ ձեռն
նորա: Եւ ելեալ արտաքս վաղվաղակի փարիսեցիքն հե-
րովդիանոսօքն հանդերձ, խորհուրդ առնէին վասն նո-
ա՝ թէ զիա՞րդ կորուսցեն զնա:

Իսկ Յիսուս աշակերտօքն իւրովք գնաց ՚ի ծովեզրն.
և բազում ժողովուրդ ՚ի գալիլեացւոց երթային զհետ
նորա. և ՚ի Հրէաստանէ, և Երուսաղէմէ, և յայն-
կոյս Յորդանանու, և որք ՚ի Տիւրոսէ և ՚ի Սիդովնէ.
բազում ժողովուրդ իբրեւ լսէին՝ որչափ ինչ առնէր,
գային առ նա, Եւ ասէ ցաշակերտսն իւր, զի նաւակ
մի պատրաստական կացցէ նմա վասն ամբոխին՝ զի մի
նեղեսցեն զնա: Քանզի զբազումս բժշկեաց. մինչ գալ
խառնել զնովաւ՝ զի մերձենային առ նա, որք ունէին ախ-
տս ինչ: Եւ որպէս պիղծք յորժամ տեսանէին զնա,
անկանէին առաջի նորա, աղաղակէին և ասէին. Թէ
դու ես որդին աստուծոյ. և նա յայժ սաստէր նոցա,
զի մի յայտնի առնիցեն զնա:

Եւ եկն յայնկոյս ծովեզն յաշխարհն գերգեսացւոց
Եւ ընդ ելանելն նորա ՚ի նաւէ անտի, պատահեաց
նմա այր մի ՚ի գերեզմանացն՝ զոր ունէր ոգի պիղծ. ո-

ըզ և բնակութիւն իւր իսկ ի գերեզմանս էր. և ոչ
հղթայիւք ոք եւս կարէր կապել զնա. վասն բազում
անգամ ոտնակապօք և հղթայիւք կապելոյ, և խզելոյ
ի նմանէ հղթայսն, և զոտնակապսն խորտակելոյ. և
ոչ ոք կարէր պարտել զնա. քանզի հանապազ ղօշդ և
ցերեկ ի գերեզմանս և ի լերինս աղաղակէր, և կո-
ծէր զանձն իւր քարամբք: Իբրեւ եահս զՅիսուս ի
հեռաստանէ, ընթացաւ և երկրպագ նմա: Ընդ-
դակեաց ի ձայն մեծ՝ և ասէ, զի՞ կայ իմ և քո՝ Յի-
սուս որդի աստուածոյ բարձրելոյ. երդմնեցուսանեմ
զքեզ յաստուած, մի տանջեր զիս: Քանզի ասէր ցը-
նա. ել այգ պիղծ ի մարդոյ այսի: Նա հարցանէր
ցնա՝ թէ զի՞նչ անուն է քո. և ասէ ցնա. Լեգէոնի
անուն է իմ, քանզի բազումք եմք: Նա աղաչէին զնա
յոյժ, զի մի առաքեսցէ զնոսա արտաքս քան զաշխար-
հըն: Նա անդ էր առ լերամբն երամակ մի խոզաց ա-
բօտական մեծ: Աղաչեցին զնա ամենայն դեւքն և ա-
սեն. առաքեա զմեզ ի խոզսն, զի մտցուք ի նոսա:
Նա հրամայեաց նոցա. և իբրեւ ելին այսքն պիղծք՝
մտին ի խոզսն, և դիմեաց երամակն ի դարձ անտի ի
ծովն. էին իբրեւ երկու հազարք, և հեղձնուին ի ծո-
վուն: Նա խոզարածքն փախեան, և պատմեցին ի քա-
ղաքին և յագարակս, և ելին տեսանել զի՞նչ էր՝ որ
գործեցաւն: Գան առ Յիսուս, և տեսանեն զդիւա-
հարն զի նստեր զգեցեալ և զգաստացեալ, որ ունէր
զլեգէոնին, և զահի հարան: Նա պատմեցին նոցա՝
որոց տեսեալն էր, թէ զի՞նչ եղեւ այսահարին, և
զի՞նչ վասն խոզիցն: Նա սկսան աղաչել զնա գնալ ի
սահմանաց նոցա: Նա իբրեւ եմուտ նա ի նաւն, ա-
ղաչէր զնա դիւահարն՝ զի ընդ նմա էիցէ. և Յիսուս
ոչ եթո նմա թոյլ, այլ ասէ ցնա. երթ ի տուն քո առ
ընտանիս քո, և պատմեա նոցա, որ ինչ միանգամ տէր
արար քեզ՝ և ողորմեցաւ քեզ: Նա չոքաւ՝ և սկսաւ
քարոզել ի Դեկապօլիս, զոր ինչ արար նմա Յիսուս,
և ամենեքեան զարմանային:

Եւ իբրեւ անց Յիսուս միւսանգամ յայն կողմն՝ ժողովեցաւ առ նա ժողովուրդ բազում, և էր առ ծո-վեղերբն : Եւ ահա մի ՚ի ժողովրդապետացն գայր, ո-րում անուն էր Յայրոս. և իբրեւ եհաս զնա՝ անկաւ առ ոտս նորա. աղաչէր զնա յոյժ և ասէր, Թէ դուս-տը նորա մերձ է ՚ի մահ, զի եկեալ դնիցէ նմա ձե-ռըն, որպէս զի ապրեսցի և կեցցէ : Եւ գնաց ընդ նը-մա. երթայր և ժողովուրդ բազում զհետ նորա, և նեղէին զնա : Եւ կին մի էր ՚ի տեառատեսութեան ա-ւետան զերկոտասան ամ. և յոյժ վշտացեալ ՚ի բազում բժշկաց, և ծախեալ զինչս իւր զամենայն՝ և չէր լինչ օգտեալ, այլ եւս առաւել զայրացեալ : Իբրեւ լուաւ զՅիսուսէ՝ եկն ՚ի մէջ ամբոխին յետոյ՝ և բուռն ե-հար զհանդերձն նորա. քանզի խորհէր ՚ի մտի, Թէ միայն մերձեցայց ՚ի հանդերձս նորա, փրկեցայց : Եւ վաղվաղակի ցամաքեցաւ աղբիւր արեան նորա. և գի-տաց ՚ի մարմնի իւր Թէ բժշկեցաւ ՚ի տանջանացն : Եւ անդէն վաղվաղակի գիտաց Յիսուս յանձն իւր զզօ-րութիւնն որ եւ ՚ի նմանէ, դարձաւ յամբոխն և ա-սէ. ո՞վ մերձեցաւ ՚ի հանդերձս իմ : Եւ ասեն ցնա աշակերտքն, տեսանե՞ս՝ զի ամբոխք նեղէ զքեզ, և ասես՝ Թէ ո՞վ մերձեցաւ ՚ի հանդերձս իմ : Եւ շուրջ հայէր տեսանել՝ Թէ ո՞վ զայն արար : Եւ կինն զար-հուրեալ և դողացեալ վասն որոյ գաղտն արար. քան-զի գիտէր զինչ եղեւ նմա, եկն անկաւ առաջի նորա, և ասաց զամենայն ըստն ստուգութեամբ : Եւ Յիսուս ասէ ցնա. դուստր, հաւատք քո կեցուցին զքեզ. երթ ՚ի խաղաղութիւն, և եղիջիր ողջ ՚ի տանջանաց քոց :

Մինչդեռ նա զայն խօսէր, գան ոմանք ՚ի տանէ ժո-ղովրդապետին, և ասեն՝ Թէ դուստրն քո մեռաւ, զի՞ և զս աշխատ առնես զվարդապետդ : Իսկ Յիսուս իբրեւ լուաւ զբանն ասացեալ, ասէ ցժողովրդապետն մի երկնչիր, բայց միայն հաւատա : Եւ ոչ զոք եթող ընդ իւր երթալ, բայց միայն զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս՝ զեղբայրն Յակոբայ : Գայ ՚ի տունն

Ժողովրդապետին, և տեսանէ ամբոխ յոյժ և լալականս, և աղաղակ յոյժ: Նէ մտեալ ՚ի նեըքս՝ ասէ ցնոսա. զի՞ խռովեալ էք և լայք, մանուկն աչ է մեռեալ, այլ ննջէ: Նէ ծաղր առնէին զնա. և նորա հանեալ արտաքս զամենեսեան, առնու ընդ իւր զհայր մանկանն և զմայր, և զնոսա որ ընդ նմայն էին, և մտանէ ուր դնէր մանուկն: Նէ կալեալ զձեռանէ մանկանն, ասէ ցնա. տալիթա կումի, որ Թարգմանի, աղջիկ դու՝ քեզ ասեմ, արի: Նէ վաղվաղակի յարեաւ աղջիկն և գնայր, քանզի էր ամաց իբրեւ երկոտասանից. և զարմացան մեծաւ զարմանալեօք: Նէ պատուիրէր տալոյ նմա ցայ յոյժ, զի մի ոք գիտասցէ զայն. և ասաց տալնմա ուտել:

Նէ իբրեւ անցին յայնկոյս, եկին յերկիրն Գեննեսարէթ: Նէ իբրեւ ելին ՚ի նաւէ անտի՝ խակ և խակ ճանեան զնա արք տեղւոյն այնորիկ. և ընթացեալ այսր անդր ընդ ամենայն գաւառն, սկսան մահճօք բերել զհիւանդս, ուր լսէին՝ թէ անդ էր: Նէ ուր և մտանէր ՚ի գեօղս կամ ՚ի քաղաքս կամ յագարակս, ՚ի հրապարակս դնէին զախտաժէտս, և աղաչէին զնա՝ զի գոնէ ՚ի քղանցս հանդերձից նորա մերձենայցեն. և որ միանգամ մերձեցանն՝ փրկեցան:

Նէ անտի յարուցեալ՝ եկն ՚ի սահմանս Տիւրոսի և Սիդովնի. և մտեալ ՚ի տուն՝ ոչ ումեք կամէր յայտնել, և ոչ կարաց ծածկել: Լուաւ կին մի զնմանէ, որոյ դուստր իւր նեղեալ էր յայսպ պղծոյ. եկն անկաւ առաջի նորա: Նէ կինն էր հեթանոս՝ փիւնիկ Ազգի յաղգէ. և աղաչէր զնա՝ զի զդեւն հանցէ ՚ի դստերէ նորա: Նէ Յիսուս ասէ ցնա. Թոյլ տուր՝ նախ յա գեացին մանկունք. զի ոչ է բարւոք առնուլ զհաց մանկանց և արկանել շանց: Նա պատասխանի եւ ասէ. տէր, և շունք ՚ի փշրանաց սեղանոյ մանկանցն կերակրին: Նէ ասէ ցնա. վասն այդր բանի երթ, ել դեւն ՚ի դստերէ քումմէ: Գնաց ՚ի տուն իւր, և եգիտ ելեալ զդեւն, և զդուստրն, զի անկեալ դնէր ՚ի մահիճս:

Ես եղեալ միւսանգամ ի սահմանսն Տիւրոսի և Սիդոնի, և եկն ի ծովեզրն գալիլեացւոց ի մէջ սահմանացն ի Դեկապօլիս: Եւ բերին առաջի նորա խուլ մի և համր. և աղաչէին՝ զի ձեռն դիցէ ի վերայ նորա: Եւ առեալ զնա ի մեկուսի յամբոխէ անտի, արկ զմատունս իւր ընդ ականջս նորա՝ և եթուքն անդր. և կատարեալ զնազուէ նորա. հայեցաւ յերկինս՝ յոգւոց եհան՝ և ասէ. Եփփաթայ՝ որ է բացիր: Եւ նոյնժամայն բացան լսելիք նորա, և լուծան կապանք լեզուի նորա. և խօսէր ուղիղ: Եւ պատուիրեաց նոցա՝ զի մի ումեք ասիցեն. և որչափ նա պատուիրէր նոցա, նոքա եւս առաւել քարոզէին. և եւս քան զեւս զարմանային և ասէին. զամենայն ինչ բարւոք գործեաց սա, զի խլից լսել տայ՝ և համրոց խօսել:

Գան ի Բեթսայիդա. և ածեն առաջի նորա կոյր մի, և աղաչէին զնա՝ զի մերձեսցի ի նա: Եւ առեալ զձեռանէ կուրին՝ եհան արտաքոյ շինին, եթուքն յաչս նորա, և ձեռն եդ ի վերայ նորա. և հարցանէր ցնա՝ թէ տեսանիցէ՞ ինչ: Նացաւ՝ և ասէր. տեսանեմ զմարդիկս՝ զի շրջին իբրեւ զծառս: Դարձեալ եդ ձեռս ի վերայ աչաց նորա՝ եբաց, և տեսանէր. ողջացաւ՝ և տեսանէր համարձակ զամենայն: Ընդակեաց զնա ի տուն իւր՝ և ասէ. ի շէնդ մի մտանիցես, այլ երթ ի տուն քո. և յորժամ ի շէնն մտանիցես՝ մի ումեք ասիցես ի շինին:

Եւ եկեալ առ աշակերտսն, տեսին ամբոխս շուրջ զնոքօք, և զդպիրսն՝ զի վիճէին ընդ նոսա: Եւ վաղվաղակի ամենայն ժողովուրդն իբրեւ տեսին զնա՝ զարմացան, և ընդ առաջ ընթացեալ ողջոյն տային նմա: Եւ եհարց ցնոսա՝ թէ զինչ վիճէիք ընդ նոսա: Պատասխանի ետ մի ումն ի ժողովրդենէն և ասէ. վարդապետ՝ ածի զորդի իմ առ քեզ, զոր ունի այս համր, և ուր հասանէ՝ զարկուցանէ զնա. և փրփրէ՝ և կրճտէ զատամունս իւր և ցամաքի. և ասացի ցաշակերտսն քո զի հանցեն, և ոչ կարացին հանել զնա:

Պատասխանի՝ ետ նոցա և ասէ. Ով աղգ անհաւատ՝ մինչեւ յե՞րբ լցեմ առ ձեզ. մինչեւ ցե՞րբ անասցեմ ձեզ. ածէք զնա առ իս: Եւ ածին զնա առ նա. իբրեւ եառնս զնա այն, վաղվաղակի շարժեաց զնա, և անկեալ յերկիր թաւալէր և փրփրայր. Եհարց ցհայր նորա և ասէ. քանի՞ ժամանակք են՝ յորմէհետէ այդ եղեւ դմա: Եւ նա ասէ. Ի մանկութենէ. բազում անգամ՝ ի հուր արկանէ զդա և ի ջուր՝ զի կորուսցէ. արդ՝ եթէ կարող ինչ ես, օգնեա մեզ առ՝ գթալ ցեալ ի վերայ մեր. Եւ Յիսուս ասէ ցնա. ասացեր թէ կարող ես. ամենայն ինչ հնարաւոր է այնմ, որ հաւատայն: Եւ վաղվաղակի աղաղակեաց հայր մանկանն՝ և ասէ. Հաւատամ, ած՝ օգնեա անհաւատութեանս իմում: Իբրեւ եառնս Յիսուս՝ եթէ կուտի ժողովուրդն ի վերայ, սաստեաց այսպէս զդեմս և ասէ. Համրդ և խուլ այս՝ ես տամ քեզ հրամայեմ, եւ ի դմանէ, և այլ եւս մի մտանիցես ի դա: Եւ աղաղակեաց՝ և յոյժ ըմբռնեաց զնա, և եկ. և եղեւ պատանեակն իբրեւ զմեռեալ, մինչեւ բազմայ իսկ ասել թէ մեռաւ: Եւ Յիսուս կալաւ զձեռանէ նորա՝ յարոյց զնա, և կանգնեցաւ: Եւ իբրեւ եմուտ նա ի տունն, աշակերտքն առանձինն հարցին ցնա. մեք ընդէ՞ր ոչ կարաց ցաք հանել զնա: Եւ ասէ ցնոսա. այդ աղգ ոչ իւիք ելանել, եթէ ոչ պահովք և աղօթիւք:

Եւ գան Յերիքով. և ընդ ելանելն նորա Յերիքովէ աշակերտաւքն՝ և բազում ժողովրդով, որդի Տիմէի Բարտիմէոս կոյր նստէր մուրացիկ յանցս ճանապարհի: Իբրեւ լուաւ՝ թէ Յիսուս Նազովրեցի է, սկսաւ աղաղակել և ասել, որդի Դաւթի Յիսուս՝ ողորմեացի ինձ: Եւ սաստէին նմա բազումք՝ զի լռեսցէ. և նա առաւել եւս աղաղակէր. որդի Դաւթի ողորմեացի ինձ: Օթեղի առ Յիսուս՝ և հրամայեաց կոչել զնա, կոչեն զկոյրն՝ և ասեն ցնա. քաջալերեաց, արի՝ կոչէ զքեզ: Եւ նորա ընկեցեալ զձորձս իւր, յարեաւ և եկն առ Յիսուս: Պատասխանի ետ նմա Յիսուս և

ասէ. զինչ կամիս՝ Թէ արարիցէ քեզ. ասէ ցնա կոյրն. բաբբունի՝ ասէ բացայց։ Եւ Յիսուս ասէ ցնա, երթ՝ հաւատաք քո կեցուցին զքեզ. և վաղվաղակի բացաւ, և երթայր զհետ նորա ի ճանապարհին։

Սրբոյ Աւետարանիս Յիսուսի Քրիստոսի՝ որ ըստ Ղուկասու։

ՅԵՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ էլ ի կափառնաում՝ ի քաղաքն գալիլեացւոց, և ուսուցանէր զնոսա ի շաբաթին։ Եւ զարմանային ընդ վարդապետութիւնն նորա, զի իշխանութեամբ էր բան նորա։ Եւ էր ի ժողովրդեանն այր մի, զոր ունէր այս դիւի պղծոյ, և աղաղակեաց ի ձայն մեծ, ասէ. Թո՛ւլացո, զի՞ կայ մեր և քո, Յիսուս Նազովրեցի, եկիր կորուսանել զմեզ. գիտեմք զքեզ՝ ո՞վ ես սուրբդ աստուծոյ։ Սաստեաց ի նա Յիսուս և ասէ. պապանձեաց և ել ի դմանէ. զգեանեաց զնա դեւն ի միջի անդ՝ և ել ի նմանէ, և ինչ ոչ վնասեաց նմա։ Եւ եղեն զարմանալիք ի վերայ ամենեցուն, խօսէին ընդ միմեանս և ասէին. զի՞նչ է բանս այս, զի իշխանութեամբ և զօրութեամբ սաստէ պղծոց՝ և ելանեն։ Եւ երթայր հռչակ զնմանէ ընդ ամենայն տեղիս շուրջ զգաւառաւն։

Եւ յարուցեալ ի ժողովրդենէ անտի, եմուտ ի տուն Սիմովնի։ Ծնքանչ Սիմովնի տագնապեր ջերմամբ մեծաւ, և աղաչեցին զնա վասն նորա։ Եկաց առ նմա՝ սաստեաց ջերմանն, և եթող զնա. և վաղվաղակի յարեաւ՝ և պաշտէր զնոսա։ Եւ ընդ արեւուն մտանել՝ ամենեքեան որոց էին հիւանդք ի պէս պէս ցաւս՝ բերէին զնոսա առ նա։ Եւ նա իւրաքանչիւր ումեք ի նոցանէ դնէր ձեռս՝ և բժշկէր զնոսա։ Ելանէին դեւք ի բազմաց, աղաղակէին և ասէին. Եթէ դու ես որ դի աստուծոյ. և նա սաստէր՝ և ոչ տայր նոցա թոյլ խօսել, զի գիտէին զնա Թէ Քրիստոս է։

Եւ եղեւ ի հասանելն նորա ի մի քաղաքացն, ահա այր մի լի բորոտութեամբ էրբեւ եռեաս զՅիսուս՝ անկեալ ի վերայ երեսաց աղաչեաց զնա՝ և ասէ. տէր, եթէ կամիս, կարող ես զիս սրբել: Զգեաց զձեռն իւր՝ հասոյց ի նա՝ և ասէ. կամիմ՝ սրբեաց. և վաղվաղակի գնաց ի նմանէ բորոտութիւնն: Եւ նա պատուիրեաց նմա մի ումեք ասել, այլ թէ երթ, ցոյց զանձն քո քահանային, և մատո պատարագ վասն սրբութեան քո՝ որպէս և հրամայեաց Մովսէս, ի վկայութիւն նոցա: Եւ յորդէր առաւել բանն գնմանէ. և ժողովէին ժողովուրդք բազումք լսել՝ և բժշկել ի հիւանդութենէ իւրեանց: Եւ նա խոյս ատյր յանապատ տեղիս, և կայր յաղօթս:

Եւ եղեւ ի միում աւուրց՝ և ինքն ուսուցանէր, և փարիսեցիքն և օրինացն վարդապետք նստէին, որ ժողովեալ էին յամենայն քաղաքաց գալիլեացւոց՝ և Երուսաղէմի. և զօրութիւն տեառն էր ի բժշկել զնոսա: Եւ ահա արք բերէին մահճօք զայր մի՝ որ էր անդամալոյծ, և խնդրէին զնա մուծանել ի ներքս՝ և դնել առաջի նորա: Եւ իբրեւ ոչ գտանէին թէ ընդ որ մուծանիցեն զնա ի ներքս վասն ամբոխին, ելին ի տանիս և ի ցուցն կախեցին զնա, և իջուցին մահճօքն հանդերձ ի մէջ առաջի Յիսուսի: Եւ տեսեալ զհաւատսն նոցա՝ ասէ ցնա. այր դու՝ թողեալ լինին քեզ մեղք քո: Սկսան խորհել դպիրքն և փարիսեցիքն, և ասեն. ո՞ է սա՝ որ խօսի զհայհոյութիւնս, ո՞վ կարէ թողուլ զմեղս՝ բայց միայն աստուած: Իբրեւ գիտաց Յիսուս զխորհուրդս նոցա, պատասխանի ետ և ասէ ցնոսա. զի՞նչ դիւրագոյն է. ասել՝ թողեալ լինին քեզ մեղք քո, եթէ ասել՝ արի և գնա: Այլ զի գիտասջիք եթէ իշխանութիւն ունի որդի մարդոյ յերկրի թողուլ զմեղս. ասէ ցանդամալոյծն, քեզ ասեմ՝ արի առ զմահիճս քո՝ և երթ ի տունդ քո: Եւ առժամայն յարուցեալ առաջի ամենեցուն՝ էառ զիւրեւ յորոյ վերայ անկեալ դնէր, գնաց ի տուն

իւր, և փառաւոր առնէր զաստուած։ Զարմանք կա-
լան զամենեսեան, և փառաւոր առնէին զաստուած.
լի եղեն ահիւ, և ասեն, եթէ տեսաք այսօր նոր նշան։

Եւ եղեւ ի միւսում շաբաթուն մտանել նմա ի ժո-
ղովուրդն և ուսուցանել. և էր անդ այր մի և ձե-
ռըն իւր աջ գօսացեալ էր։ Եւ սպասէին նմա դպիր-
քըն և փարիսեցիք՝ թէ ի շաբաթուն բժշկիցէ, զի գը-
առնիցեն չարախօսութիւն ընդառնէ։ Եւ նա գիտէր
զխորհուրդս նոցա, ասէ ցայրն՝ որոյ ձեռնն գօսացեալ
էր. արի անց ի մէնջ. և նա յարուցեալ եկաց։ Ընդ
ցնոսա Յիսուս. հարցից ինչ զձեզ. ընդ ինչ արժան է ի
շաբաթու, բարի՞ ինչ առնել՝ եթէ չար գործել, օգն
մի ապրեցուցանել՝ թէ կորուսանել։ Եւ հայեցեալ
շուրջ զամենեքումբք զայրագին՝ ասէ ցնա. ձգեա զը-
ձեռն քո. և նա ձգեաց, և հաստատեցաւ ձեռն նո-
ցա իբրեւ զմիսն։ Եւ նոքա լցան չիմարութեամբ,
և խօսէին ընդ միմեանս՝ թէ զինչ առնիցեն Յիսուսի։

Եւ ի ժամանակ հանդերձ ի տեղի մի տափարակ. և
ժողով աշակերտացն նորա՝ և բազմութիւն յոյժ ժողո-
վրդեան, յամենայն Հրէաստանէ և Երուսաղէմէ և
յայնմկողմանէ՝ և ի ծովէ ափերէն Տիւրոսի և Սիդոնի.
որ եկին լսել ի նմանէ՝ և բժշկել ի հիւանդութիւնէ իւ-
րեանց. և նեղեալքն չարոց պղծոց բժշկէին։ Եւ ա-
մենայն ժողովուրդն խնդրէր մերձենալ ի նա, զի զօրու-
թիւն բազում ելանէր ի նմանէ՝ և բժշկէր զամենեսին։

Եւ իբրեւ կատարեաց զամենայն զբանս իւր ի լսե-
լիս ժողովրդեանն, եմուտ ի Կափառնաում։ Հարիւ-
րապետի ուրումն ծառայ չարաչար հիւանդացեալ՝ մերձ
էր ի վախճանել, որ էր նմա պատուական։ Եւ իբ-
րեւ լուաւ զՅիսուսէ, առաքեաց զծերսն ի հրեից,
աղաչէր զնա՝ զի եկեալ ապրեցուսցէ զծառայն նո-
ցա։ Եւ նոքա եկեալ առ Յիսուս՝ աղաչէին զնա ըս-
տէպ՝ և ասէին, թէ արժանի է՝ որում՝ զնորհս զայս
առնես։ Զի սիրէ զազգս մեր, և զժողովրդականսն նա
շինեաց մեզ։ Եւ Յիսուս գնայր ընդ նոսա. իբրեւ ո-

ընչ կարի հեռի էր ի տանէն, յղեաց առ նա Հարիւրապետն բարեկամս, և ասէ ցնա. տէր մի ինչ աշխատ լինիր, զի չեմ բաւական եթէ ընդ յարկաւ իմով մտանիցես: Վասն որոյ և ոչ զանձն համարեցայ արժանի՝ առ քեզ գալոյ. այլ ասա բանիւ՝ և բժշկեսցի մանուկս իմ. քանզի և ես այր մի եմ կարգեալ ընդ իշխանութեամբ. ունիմ ընդ ինեւ զինուորս, և ասեմ սմա՝ երթ, և երթայ. և այլում թէ եկ, և գայ. և ծառայի իմում թէ արա զայս, և առնէ: Յր իբրեւ լուաւ զայս Յիսուս՝ զարմացաւ, դարձաւ առ ժողովուրդն որ երթային զհետ նորա՝ և ասէ. ամէն ասեմ ձեզ՝ թէ և ոչ Իսրայէլի այսչափ հաւատս գտի: Յր դարձան անդրէն պատգամաւորքն ի տուն, և գտին զծառայն հիւանդ՝ բժշկեալ:

Յր եղեւ ի վաղիւն երթայր ի քաղաք մի, որում անուն էր Նային. երթային ընդ նմա և աշակերտք նորա և ժողովուրդք բազում: Իբրեւ մերձ եղեւ ի դուռն քաղաքին, և ահա ելանէր մեռեալ մի՝ որդի միամօր մօր իւրոյ, և նա էր այրի. և ժողովուրդ բազում քաղաքին էր ընդ նմա: Իբրեւ եսաս զնա տէր՝ գթացաւ ի նա և ասէ. մի լար: Յր մատուցեալ մերձեցաւ ի դագաղն. և որք բարձեալն սանէին՝ զտեղի առին. և ասէ, պատանի դու՝ քեզ ասեմ՝ արի: Կանգնեցաւ և նստաւ մեռեալն, և սկսաւ խօսել. և ետ զնա ցմայր իւր: Յր ահ կալաւ զամենեսին, և փառաւորէին զաստուած՝ և ասէին, թէ մարգարէ ոմն մեծ յարուցեալ է ի մէջ մեր, և եթէ այց արար առաւած ժողովրդեան իւրում ի բարութիւն: Յր ել ձայնս այս ընդ ամենայն Հրէաստան վասն նորա. և ընդ ամենայն կողմանս աշխարհին:

Յր պատմէին Յովհաննու աշակերտքն իւր վասն ամենայնի այսորիկ: Յր կոչեաց առ ինքն երկուս ոմս նոցա յաշակերտացն իւրոց՝ Յովհաննէս, առաքեաց առ տէր և ասէ. դուն ես որ գալոցն ես, եթէ այլոմ ակն կալցուք: Յր եկեալ արքն առ նա՝ ասեն, Յովհաննէս

Անդրէ առաքեաց զմեզ առ քեզ՝ և ասէ դմա՛ ես որ գալոցն ես՝ եթէ այլոմ ակն կալցուք։ Նա՛ ի նմին ժամ մու բժշկեաց զբազումս ի հիւանդութեանց և ի հարուածոց և յայոց չարաց, և կուրաց բազմաց շնորհեաց տեսանել։ Պատասխանի ետ նոցա և ասէ. երթայք պատմեցէք Յովհաննու՝ զոր տեսէքդ և լսայք. զի կոյրք տեսանեն, և կաղք գնան, բորոտք սրբին, խուլք լսեն, մեռեալք յառնեն, աղքատք աւետարանին. և երանի ինչ՝ որ ոչ գայթագղեսցի յիս։

Նա՛ նաւեցին ի կին յաշխարհն գերգեսացւոց. որ է յայնկոյս հանդէպ Գալիլեայ։ Նա՛ ընդ ելանելն նորա ի ցամաք, պատահեաց այր մի ի քաղաքէն՝ յորում էին դեւք. և բազում ժամանակս չէր հանդերձ զգեցեալ՝ և ոչ ի տան քնակեալ, այլ ի գերեզմանս։ Նա՛ տեսեալ զՅիսուս, աղաղակեաց և անկաւ առաջի նորա, և ասէ մեծաձայն. զի՞ կայ իմ և քո Յիսուս որդի աստուծոյ բարձրելոյ, աղաչեմ զքեզ մի տանջեր զիս։ Քանզի հրամայն ասէր այսոյն պղծոյ ելանել ի մարդոյ անտի. քանզի բազում ժամանակս յափշտակեալ էր զնա, և կապէր ի շղթայս, և պահէր յերկաթս, և խզէր զկապանսն, և վարէր ի դիւէին յանապատս։ Նա՛ հարց զնա Յիսուս և ասէ. զի՞նչ անուն է քեզ. և նա ասէ, Լեգէովն. զի դեւք բազումք մտեալ էին ի նա։ Նա՛ աղաչէին զնա՝ զի մի հրամայն ասացէ նոցա երթալ յանդունդս։ Նա՛ էր անդ երամակ մի խոզից բազմաց արօտական ի լերինն, և աղաչեցին զնա զի հրամայն ասացէ նոցա մտանել ի նոսա. և հրամայեաց նոցա։ Նա՛ ելեալ դեւքն յառնէն՝ մտին ի խոզեանն. և դիմեաց երամակն ի գահէ անտի ի ծովակն՝ և հեղձաւ։ Իբրեւ տեսին խոզաբածքն զկրան որ եղեն՝ փախեան, և պատմեցին ի քաղաքին և յագարակն։ Նա՛ իբրեւ ելին տեսանել զգործն, և եկին առ Յիսուս, և գտին զայրն՝ ուստի դեւքն ելեալ էին, զգեցեալ և զգաստացեալ նստեր առ ոտն Յիսուսի, և երկեան։ Պատմեցին նոցա որոց տեսեալն էր՝ թէ զիա՞րդ

փրկեցաւ գիւահարն։ Եւ աղաչէր զնա ամենայն բազմութիւնն շուրջ զկողմամբքն գերգեսացւոց՝ գնալ ի սահմանաց նոցա, քանզի ահիւ մեծաւ տագնապէին. և նա մտեալ ի նաւ՝ դարձաւ անդրէն։ Աղաչէր զնա այրն՝ ուստի դեւքն ելեալ էին՝ լինել ընդ նմա, արձակեաց զնա՝ և ասէ. դարձ ի տուն քո, և պատմեա՝ զոր միանգամ արար քեզ աստուած. գնաց ի քաղաքն և քարոզէր զոր ինչ արար նմա Յիսուս։

Եւ երբեւ դարձաւ անդրէն Յիսուս, ընկալաւ զնա ժողովուրդն. քանզի ամենեքեան ակն ունէին նմա։ Եւ ահա եկն այր մի՝ որում անուանն էր Յայրոս, և նա էր իշխան ժողովրդեանն. անկեալ առ ոտն Յիսուսի՝ աղաչէր զնա մտանել ի տուն նորա. զի դուստր միամօր էր նորա՝ ամաց իբրեւ երկոտասանից, և էր մերձ ի մահ. և ընդ երթալն նորա՝ ժողովուրդքն նեղէին զնա։ Եւ կին մի էր ի տեառատեսութեան արեան ամաց երկոտասանից, որ ի բժիշկս ծախեալ էր զամենայն ինչս իւր. որում ոչ էր լեալ հնար յումեքէ բժշկել։ Մատուցեալ յետոյ մերձեցաւ ի քղանցս հանդերձի նորա. և նոյնժամայն եկաց բղխումն արեան նորա։ Եւ ասէ Յիսուս. ո՞վ է՝ որ մերձեցաւն յիս։ Իբրեւ ամենեքեան ուրանային, ասէ Պետրոս՝ և որ ընդ նմայն էին. վարդապետ, ժողովուրդք սղոչեն և նեղեն զքեզ։ Եւ ասէ Յիսուս. ոմն մերձեցաւ յիս, քանզի գիտացի՝ եթէ զօրութիւն ել յինէն։ Իբրեւ եաես կինն՝ եթէ ոչ ծածկեցաւ ի նմանէ, եկն դողալով՝ և անկաւ առաջի նորա, թէ վասն որոյ իրաց մերձեցաւ ի նա՝ պատմեաց առաջի ամենայն ժողովրդեանն. և թէ որպէս բժշկեցաւ առժամայն։ Եւ ասէ. քաջալերեաց, դուստր. հաւատք քո կեցուցին զքեզ, երթ ի խաղաղութիւն։

Եւ մինչդեռ նա խօսէր, գայ ոմն ի տանէ ժողովրդապետին՝ և ասէ ցնա. մեռաւ դուստրն քո, մի՛ ինչ աշխատ առներ զդա։ Իսկ Յիսուս իբրեւ լուաւ, պատասխանի ետ նմա՝ և ասէ. մի՛ երկնչիր, միայն հաւատա՝ և կեցցէ։ Եւ մտեալ ի տունն՝ ոչ զոք եթող

մանել, բայց միայն զՊետրոս և զՅակոբոս և զՅովհաննէս, և զհայր մանկանն և զմայր նորա։ Այլոյն ամենեքեան՝ և կոծէին զնա։ Իսկ նա ասէ. մի լայք՝ զի չէ մեռեալ՝ այլ ննջէ։ Իսկ նոքա ծաղր առնէին ըզնա, զի գիտէին թէ մեռաւ։ Իսկ նորա հանեալ զամենեսին արտաքս, կալաւ զձեռանէ նորա՝ բարբառեցաւ և ասէ. արի, կայ մանուկ դու։ Իսկ դարձաւ ոգի նորա, և կանգնեցաւ վաղվաղակի, և հրամայեաց տալ նմա ուտել. և զարմացան ծնողքն նորա։ Իսկ նա պատուիրեր մի ումեք ասել՝ որ ինչ եղեւն։

Իսկ եղեւ ի վաղիւն մինչ իջանէին նոքա ի լեռնէ անտի, ընդ առաջ եղեւ նմա ժողովուրդ բազում։ Իսկ ահա այր մի ի ժողովրդենէ անտի աղաղակեաց և ասէ. վարդապետ, աղաչեմ զքեզ հայեեաց յորդի իմ, զի միամօր է ինձ։ Իսկ ահա այս հարկանի ի նմա, և յանկարծ գոչէ՝ և զարկուցանէ և թաւալեցուցանէ զնա և փրփրեցուցանէ, և հազիւ մեկնի ի նմանէ խորտակեալ զնա. և աղաչեցի զաշակերտան քո զի հանցեն զնա, և ոչ կարացին։ Պատասխանի եւ Յիսուս և ասէ. ՚ով ազգ անհաւատ և թիւր, մինչեւ յե՞րբ եղէց ընդ ձեզ՝ և անասցեմ ձեզ. մատո այսր զորդին քո։ Իսկ մինչդեռ մատչէր, զարկոյց զնա դեւն՝ և չարժլեաց։ Սաստեաց Յիսուս այսոյն պղծոյ, և բժշկեաց զմանուկն. և եւ զնա ցհայր իւր։ Իսկ զարմանային ամենեքեան ի վերայ մեծամեծացն աստուածոյ. և ի զարմանալ ամենեցուն ի վերայ ամենայնի զոր առնէր, ասէ ցաշակերտան իւր. դիք դուք ի լսելիս ձեր զբանս զայսոսիկ. զի որդի մարդոյ մատնելոց է ի ձեռս մարդկան։

Իսկ հանէր դեւ մի համն. և եղեւ յեղանել գիւրին՝ խօսեցաւ համրն, և զարմացան ամենայն ժողովուրդքն։ Իսկ ոմանք ի նոցանէ ասեն. Ի հեղինէբուղաւ իշխաւ նաւն դիւացն հանէ դա զդեւս։ Իսկ այլք փորձէին՝ և նշան յերկնից խնդրէին ի նմանէ։ Իսկ նորա գիտացեալ զխորհուրդս նոցա, ասէ ցնոսա. ամենայն թագաւորութիւն բաժանեալ յանձն՝ աւերի, և տուն

բաժանեալ յանձն՝ կործանի : Այսպա եթէ և սատանայ բաժանեցաւ յանձնէ, զիա՞րդ կայցէ թագաւորութիւն նորա . զի ասէք զնոսին եթէ Ի Բեեղզեբուղաս իշխանաւն դիւաց հանէ դա զդեւս : Ընթէ ես Ի Բեեղզեբուղաս հանեմ զդեւս , որդիքն ձեր ի՞ հանիցեն . վասն այդորիկ նոքին եղիցին ձեր դատաւորք : Իսկ եթէ մատամբ աստուծոյ հանեմ զդեւս , ապա հասեալ է ի վերայ ձեր արքայութիւն աստուծոյ : Յորժամ հզօր վառեալ՝ պահիցէ զտուն իւր , ի խաղաղութեան են ինչք նորա : Այլ եթէ հզօրագոյն քան զնա ի վերայ եկեալ յաղթեսցէ նմա , զսպառազինութիւնն հանէ՝ յոր յուսացեալ էր , և զաւար նորա բաշխեսցէ : Որ ոչ է ընդ իս՝ հակառակ իմ է , և որ ոչ ժողովէ ընդ իս , ցրուէ : Յորժամ այսն ելանիցէ ի մարդոյ՝ շրջի ընդ անջրդին տեղիս , խնդրէ հանգիստ . և իբրեւ ոչ գտանէ , ասէ . դարձայց անդրէն ի տուն իմ ուստի ելի : Եւ գայ գտանէ մաքրեալ և յարդարեալ : Յայնժամ երթայ և առնու եօթն այլ ոգիս չար ևս քան զինքն՝ և մտանէ բնակէ անդ , և լինի յետինն մարդոյն այնորիկ չար քան զառաջինն : Եւ եղեւ մինչդեռ խօսէր զայս , ձայն երբարձ կին մի ի ժողովրդենէ անտի և ասէ . երանի՛ է որովայնին՝ որ կրեացն զքեզ , և ստեանցն՝ որ դիեցուցին զքեզ : Եւ նա ասէ . նա երանի այնոցիկ է , որ լսեն զբանն աստուծոյ , և առնեն :

Եւ ուսուցանէր ի միում ժողովրդանոցացն ի շաբաթս : Եւ ահա կին մի՝ զոր ունէր այս հիւանդութեան ամս ութետասան . և էր կարկամեալ , և ոչ կարէր ամենեւին ի վեր հայել : Եւ տեսեալ զնա Յիսուս՝ կոչեաց առ ինքն՝ և ասէ ցնա . կին դու՝ արձակեալ ես ի հիւանդութենէ քումմէ : Եւ եդ ի վերայ նորա ձեռն , և առժամայն ուղղեցաւ , և փառաւորէր առնէր զաստուած : Պատասխանի ետ ժողովրդապետն յասուցեալ՝ թէ ընդ՞ի շաբաթու բժշկեաց Յիսուս , և ասէ ցժողովուրդն . վեց օր է՝ յորս արժան է գործել , յայնս եկայք բժշկեցարուք , և մի յաւուր

շաբաթու ։ Պատասխանի Եսու նմա ասէ . կեղծաւորք , խրատանչիւրոք ի ձէնջ ի շաբաթու ոչ արձակէ զեզն իւր կամ զէշ ի մսրայ՝ և տանի տայ ջուր ։ Իսկ այս՝ դուստր Աբրահամու էր . զոր կապեաց սատանայ ահաւադիկ ութուտասն ամ , ոչ էր արժան արձակել ի կապանաց անտի ի շաբաթու ։ Ու զայս իբրեւ ասէր , յամօթ լինէին ամենեքին որ հակառակն կային նմա . և ամենայն ժողովուրդն ուրախ լինէր ի վերայ ամենայն փառաւորութեանցն որ գործէին ի նմանէ ։

Ու եղեւ ի մտանելն նորա ի տուն ուրումն իշխապետացն փարիսեցւոց ի շաբաթու ուտել հաց , և նոքա ապատէին նմա ։ Ու ահա այր ումն էր անդ ջլպողեալ առաջի նորա ։ Պատասխանի Եսու Յիսուս՝ և ասէ ցօրէնսուսոն և ցփարիսեցիս . եթէ արժան իցէ ի շաբաթու բժշկել ։ Ու նոքա լուռ եղեն . և բռնեն հարեալ ընդ ձեռն՝ բժշկեաց զնա , և արձակեաց ։ Ու ասէ ցնոսա ով ուրուք ի ձէնջ էշ կամ եզն՝ անկանիցի ի ջրհոր , և ոչ վաղվաղակի հանիցէ զնա յաւուր շաբաթու ։ Ու ոչ կարացին ասել նմա պատասխանի առ այն ։

Ու եղեւ մինչ երթայր Եսու Երուսաղէմ , և ինքն անցանէր ընդ մէջ Սամարիայ և գալիլեացւոց ։ Ու մինչդեռ մտանէր ի գեօղ ուրեմն , պատահեցին նմա տասն այր բորոտ՝ որք կացին ի հեռաստանէ , բարձին զձայնս՝ և ասեն . Յիսուս վարդապետ , ողորմեաց մեզ ։ Ու իբրեւ եսես զնոսա , ասէ ցնոսա . երթայք ցուցէք զանձինս քահանայիցն . և եղեւ իբրեւ գնացին , սո ժամայն սրբեցան ։ Ալ ումն ի նոցանէ իբրեւ եսես՝ թէ բժշկեցաւ , դարձաւ անդրէն՝ ի ձայն մեծ փառաւոր առնէր զաստուած . անկաւ ի վերայ երեսաց իւրոց առ ոտս նորա , և գոհանայր զնմանէ . և ինքն էր սամարացի ։ Պատասխանի Եսու Յիսուս և ասէ . ոչ տասն սոքա սրբեցան , իսկ արդ՝ ինուանքն ո՞ւր են ։ Ոչ ի ոչ գտան դառնալ տալ փառս աստուծոյ , բայց միայն այլազգիս այս ։ Ու ասէ ցնա . արի՝ գնա . զի հաւատք քո կեցուցին զքեզ

Եւ եղեւ ի մօտենալն նորա Յերիքով, կոյր ոմն նստէր առ ճանապարհաւն մուրացիկ։ Իբրեւ լսաւ զանցա նել ժողովրդեանն, հարցանէր՝ թէ զի՞նչ իցէ այն։ Եւ պատմեցին նմա, թէ Յիսուս Նազովրեցի անցանէ։ Աղաղակեաց և ասէ. Յիսուս, որդի Դաւթի՝ ողոր մեաց ինձ։ Եւ որ առաջին երթային՝ սաստէին նմա զի լռեսցէ. և նա եւս առաւել աղաղակէր, որդի Դաւթի. ողորմեաց ինձ։ Օթեզի հաւ Յիսուս, և հրամայեաց ածել զնա առ իւր. և իբրեւ մերձ եղեւ առ նա, եհարց զնա և ասէ, զի՞նչ կամիս դու՝ զի ա բարիցց քեզ. և նա ասէ. տէր, զի բացցին աչք իմ՝ և տեսից։ Եւ Յիսուս ասէ ցնա. Հայեաց, հաւատք քո կեցուցին զքեզ։ Եւ առաժամայն ետես, երթայր գՀետ նորա՝ և փառաւորէր առնէր զաստուած. և ամենայն ժողովրդեանն տեսեալ, տայր օրհնութիւն աստուծոյ։

Սրբոյ աւետարանիս Յիսուսի Քրիստոսի որ ըստ Յովհաննու։

ՏԻՐՆ ՄԵՐ ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍ

Եւ յետ երկուց աւուրց ել անտի և գնաց ի Գա լիլեայ։ Օ.ի ինքն իսկ Յիսուս վկայեաց՝ եթէ մար գարէ չիւրում գաւառի պատիւ ոչ ունի։ Այլ յոր ժամ եկն նա ի Գալիլեայ, ընկալան զնա գալիլեացիքն. զի տեսեալ եւս էր զամենայն նշանսն, զոր արար Ա երուսաղէմ՝ ի տօնին. քանզի և նոքա եկեալ էին ի տօնն։ Եկն գարձեալ ի կանա գալիլեացւոց՝ ուր արար ըզ ջուրն գինի. և անդ էր Թագաւորազն մի, որոյ որդի նորա հիւանդ կայր ի Կափառնաում։ Նա իբրեւ լսաւ եթէ Յիսուս եկեալ է ի հրէաստանէ ի Գալիլեայ, եկն առ նա՝ և աղաչէր, զի իջցէ և բժշկեսցէ զորդի նորա. քանզի մերձ էր ի մեռանել։ Ասէ ցնա. եթէ ոչ նշանս ինչ և արուեստս տեսանիք՝ ոչ հաւատայք։

Ասէ ցնա Թադաւորաղն. տէր, էլ մինչեւ մեռեալ
իցէ մանուկն իմ: Ասէ ցնա Յիսուս. երթ՝ որդին քո
կենդանի է. և հաւատաց այրն բանին՝ զոր ասաց նմա
Յիսուս, և գնաց: Իւ մինչդեռ իջանէր, ընդ առաջ
եղեն նմա ծառայքն նորա. աւետիս ետուն և ասեն,
Թէ մանուկն նորա կենդանի է: Հարցանէր ցնոսա
վասն ժամուն՝ յորում ապաքինեաց. և ասեն ցնա. ե-
րէկ յեօթնեերորդ ժամուն եթող զնա ջերմն: Գիտաց
հայրն նորա՝ եթէ յայնմ ժամու՝ յորում ասացն ցնա
Յիսուս՝ Թէ որդին քո կենդանի է. և հաւատաց ինքն
և ամենայն տուն իւր: Օ այս դարձեալ երկրորդ նըշա-
նըս արար Յիսուս եկեալ՝ի Հրեաստանէ՝ի Գալիլեայ:

Յետ այսորիկ ոմն էր հրեից, և ել Յիսուս Երու-
սաղէմ: Իւ էր Երուսաղէմ՝ի Պրօպատիկէ աւազա-
նին, որ կոչէր եբրայեցերէն Բեթհեզդայ՝ հինգ սը-
բահ: Յորս անկեալ դնէր բազմութիւն յոյժ հիւան-
դաց՝ կուրաց կաղաց գօսացելոց, որ ակն ունէին ջը-
րոյն յուզելոյ: Իւ հրեշտակ տեառն իջանէր ըստ ժա-
մանակի յաւազանն՝ և յուզէր զջուրսն. և որ նախ
՝ի շարժումն ջուրցն իջանէր յաւազանն՝ բժշկէր, ո-
ւնելով նշան հիւանդութեան: Իւ անդ էր այր մի,
որոյ երեսուն և ութ ամ էր՝ի հիւանդութեան իւ-
րում: Օ նա իբրեւ տեաս Յիսուս զի անկեալ դնէր,
և գիտաց եթէ բազում ժամանակք են այնուհետեւ,
ասէ ցնա. կամիս ողջ լինել: Պատասխանի ետ նմա հի-
ւանդն. տէր, ոչ զոք ունիմ, Թէ յորժամ ջուրքն յու-
զեցին՝ արկցէ զիս յաւազանն. և մինչ ես դանդա-
ղիմ, այլ ոք քան զիս յառաջագոյն իջանէ: Ասէ ցնա
Յիսուս. արի, առ զմահիճս քո՝ և գնա: Իւ ողջա-
ցաւ այրն, և յարեաւ՝ էառ զմահիճս իւր՝ և շրջէր.
և էր շաբաթ յաւուրն յայնմիկ: Ասեն հրեայքն ցը-
բժշկեալն. շաբաթ է՝ և ոչ է արժան քեզ առնուլ զմա-
հիճս քո: Պատասխանի ետ նոցա և ասէ. որ բժշկեա-
ցըն զիս, նա ասաց ցիս, առ զմահիճս քո՝ և գնա:
Հարցին ցնա և ասեն. ո՞վ է այրն՝ որ ասաց ցքեզ,

առ զմահիճս քո՝ և չոլհաց։ Եւ բժշկեալն ոչ գիտէր թէ ո՞վ էցէ. քանզի Յիսուս խոյս ետ վասն ամբոխին՝ ի տեղւոջէ անտի։ Եւ այսորիկ գտանէ զնա Յիսուս ի տաճարին, և ասէ ցնա. ահաւադիկ ողջացար, մի եւս մեղանչեր՝ զի մի չար եւս ինչ լինիցի քեզ։ Գնաց այրն՝ և պատմեաց հրեից, եթէ Յիսուս էր՝ որ բժշկեացն զնա։ Եւ վասն այնորիկ հալածէին զՅիսուս հրեայքն, զի զայն առնէր ի շաբաթու։ Եւ Յիսուս պատասխանի ետ նոցա. Հայր իմ մինչեւ ցայժմ գործէ, և ես գործեմ։ Վասն այնորիկ առաւել խնդրէին հրեայքն սպանանել զնա. զի ոչ միայն լուծանէր զշաբաթս, այլեւ հայր իւր կոչէր զաստուած, և հաւասար առնէր զանձն աստուծոյ։

Եւ մինչդեռ անցանէր՝ ետես այր մի կոյր ի ծնե. և հարցին ցնա աշակերտքն նորա՝ և ասեն. ռաբբի, ո՞վ գնաս է, սորա՞ թէ հօր և մօր իւրոց, զի կոյր ծնեցեալ։ Պատասխանի ետ Յիսուս. ոչ դորա գնաս է, և ոչ հօր և մօր իւրոց. այլ զի յայտնի լիցին գործքն աստուծոյ ի դմա։ Եւ ինձ պարտ է գործել զգործս այնորիկ՝ որ առաքեացն զնա, մինչ օր կայ. գայ գիշեր՝ յորժամ ոչ ոք կարէ գործել։ Մինչդեռ յաշխարհի եմ, լոյս եմ աշխարհի։ Զայս իբրեւ ասաց, եթուք ի գետին՝ և արար կաւ ի թքոյն, և ծեփեաց զկաւն ի վերայ աչաց կուրին։ Եւ ասէ ցնա. երթ, լուա յաւազանին Սելովմայ. որ թարգմանի առաքեալ. չոքաւ լուացաւ. եկն և տեսանէր։ Իսկ դրացիքն՝ և որոց տեսեալ էր զնա յառաջագոյն՝ թէ մուրացիկ էր, ասէին. ո՞չ սա էր՝ որ նստէրն և մուրանայր. կէսքն ասէին. նա է։ Այլքն ասէին. ոչ՝ այլ նման է նմա. և ինքն ասէր՝ թէ ես եմ։ Ասեն ցնա. իսկ զիա՞րդ բացան աչք քո։ Նա ետ պատասխանի. այր մի՝ որում Յիսուսն ասեն, կաւ արար՝ և ծեփեաց զաչս իմ, և ասէ ցիս. երթ ի Սելովամ, և լուա. չոքաւ լուացայ՝ և տեսանեմ։ Ասեն ցնա. ո՞ւր է նա. ասէ ցնոսա. ոչ գիտեմ։ Ածին առ փարիսեցիսն զնա, որ երբեմն կոյրն էր։ Եւ էր շաբաթ՝ յորժամ զկաւն արար Յիսուս.

և եբայց զաչս կուբրին : Դարձեալ Հարցանէին զնա փա-
րիսեցիքն , Թէ զիա՞րդ տեսանէս . և նա ասէ ցնոսա .
կաւ եդ ՚ի վերայ աչաց իմոց , և լուացայ՝ և տեսա-
նեմ : Ոմանք ՚ի փարիսեցւոցն . ոչ է այրն այն
յաստուծոյ , զի զշաբաթս ոչ պահէ : Այլք ասէին . իսկ
զիա՞րդ կարէ մարդ մեղաւոր այսպիսի նշանս առնել :
Եւ էին հերձուածք ՚ի մէջ նոցա : Ասեն դարձեալ կու-
րին . դու զի՞ ասես վասն նորա՝ զի եբայց զաչս քո :
Եւ նա ասէ՝ Թէ մարգարէ է : Եւ ոչ հաւատային հր-
բեայքն զնմանէ՝ եԹէ կոյր էր՝ և բացաւ . մինչեւ կո-
չեցին զծնողս բացելոյն . հարցին ցնոսա և ասեն՝ սո՞
է որդին ձեր , զորմէ դուքն ասէիք , եԹէ կոյր ծնաւ .
արդ՝ զիա՞րդ տեսանէ : Պատասխանի ետուն նոցա ծն-
նողքն նորա՝ և ասեն . գիտեմք զի սա է որդին մեր ,
և զի կոյր ծնաւ . բայց զիա՞րդ այժմ տեսանէ՝ ոչ գի-
տեմք . կամ Թէ՝ ո՞ եբայց զաչս դորա՝ մեք ոչ գիտեմք .
ցդա իսկ հարցէք , լինքնին ՚ի չափ հասեալ է . լինքն իսկ
խօսեսցի վասն իւր : Զայս ասացին ծնողքն նորա , զի
երկնչէին ՚ի հրէից . քանզի ուխտ եդեալ էր հրէից ,
եԹէ ոք խոստովանեսցի զնա Քրիստոս՝ ՚ի բաց կացցէ
՚ի ժողովրդենէն : Վասն այնորիկ ասացին ծնողքն նորա
Թէ լինքնին ՚ի չափ հասեալ է , ցնա իսկ հարցէք : Դար-
ձեալ կրկին անգամ կոչեցին զայրն՝ որ կոյր էր . և
ասեն ցնա . տուր փառս աստուծոյ , մեք գիտեմք՝ զի
այրն այն մեղաւոր է : Եւ նա ասէ . Թէ մեղաւոր իցէ
ես ոչ գիտեմ . բայց զայս գիտեմ , զի կոյր էի՝ և արդ
տեսանեմ : Դարձեալ ասեն ցնա . զի՞նչ արար քեզ ,
զիա՞րդ եբայց զաչս քո : Պատասխանի ետ նոցա . այժմ
ասացի ձեզ՝ և ոչ լուայք . զի՞ կամիք միւսանգամ լսել .
միթէ և դո՞ւք կամիք աշակերտիլ նմա : Նոքա հայհո-
յէին զնա՝ և ասէին . դու լիջիր նորա աշակերտ . մեք
Մովսէսի աշակերտք եմք : Մեք գիտեմք՝ զի ընդ Մով-
սէսի խօսեցաւ աստուած . զսա ոչ գիտեմք ուստի
իցէ : Պատասխանի ետ այրն և ասէ ցնոսա . այդ իսկ
են սքանչելիքք . զի դուք ոչ գիտէք՝ ուստի իցէ , և զիմ

զաչս եբաց ։ Վիսեմք զի աստուած մեղաւորաց ոչ լսէ, քայց եթէ աստուածապաշտ ոք իցէ՝ և զկամն նորա առնիցէ, նմա լսէ ։ Ի յաւիտենից ոք ոչ լսաւ՝ եթէ եբաց ոք զաչս կուրի ՚ի ծնէ կոյր ծնելոյ ։ Ընթէ ոչ յաստուածոյ էր այրն այն՝ ոչ կարէր առնել ինչ ։ Պա տասխանի եւտուն և ասեն ցնա, ՚ի մեզս իսկ ծնեալ ես ամենեւին, և դու վարդապետ լինիս մեր ։ Ընդ հանին զնա արտաքս ։ Լուաւ Յիսուս՝ եթէ հանին զնա արտաքս, և իբրեւ եգիտ զնա՝ ասէ ցնա. դու հաւատաս յորդի աստուածոյ ։ Նա պատասխանի եւ ասէ. տէր, ով է՝ զի հաւատացից ՚ի նա ։ Ասէ ցնա Յիսուս. և տեսեր զնա, և որ խօսիդ ընդ քեզ՝ նա է ։ Ընդ նա ասէ. հաւատամ, տէր, և երկիրպագ նմա ։

Ս.Ե.Ֆ.Հ. ՀԱՅԿԱԶՅԱՆ Ա. ՀԱՅ
Ս.С.Р.Ա. Публичная Библиотека
7/XI. 1922
Армения, Ереван

ԴՐՈՒԹԻՒՆՔ ԳԼԽՈՑ ԱՂՕԹԻՑ

Աղօթք առաւօտու ։ ԲԱՆ · Խ · ԶԴ · ԶԵ · ՂԲ ։
Աղօթք գիշերայնոյ ։ ԺԲ · ԽԱ · ՂԱ · ՂԴ ։
Աղօթք զղջման ։ Է · Ը · ԻԲ · ԻԶ · ԻԸ · ՀԱ ։
Աղօթք ինդրելոյ զընծորս և զթողութիւն մեղաց · Դ · ԺԵ · Ի · ԻԴ · Լ · ԼԲ · Խ · Խէ · Խթ · Ծ · ԾՀ ։
Մաղթանք հաւատոյ ։ Ժ · ԺԱ · ԺԳ · ԼԴ · ԽԴ · Հե ։
Մաղթանք յուսոյ և սիրոյ ։ Բ · ԺԲ · ԼԴ · ԼԷ · ԽԲ · Խթ · Կե · ԶԸ ։
Աղօթք յառաջ քան զպատարագն կամ զնաղորդելն ։ Դ · Ե · ԻԴ · ԼԴ · Խէ · ԾԲ · ԾԴ ։
Աղօթք զկնի պատարագին կամ հաղորդելոյն ։ Ա · Ե · ԻԴ · Կէ · ՂԵ ։
Աղօթք ՚ի սուրբ չարչարանս Քրիստոսի ։ Հէ · ԻԸ · ԼԶ · ԼԷ · ԽԴ · ԾԲ · ԾԸ · ԿԶ · Կէ · ՀԶ · ՀԸ · Ղ ։
Աղօթք առ սուրբ Աստուածամայրն ։ ԻԶ · Զ ։
Աղօթք բարեխօսութեամբ սրբոցն ։ ԼԱ · Հ · ՀԱ · ԶԲ · ԶԶ · ԶԷ · ՂԱ ։
Աղօթք առ հրեշտակս և առ պահապան հրեշտակն ։ ԶԱ ։
Աղօթք վասն բարի մահուան ։ Բ · ԿԶ · ՀԴ · Զ · ԶԵ ։
Աղօթք վասն բժշկութեան ։ Գ · ԺԴ · ԺԷ · ԺԸ · Իե · ԼԷ · ԽԲ · ԽԳ · ԽԸ · ԿԴ · ԿԶ ։
Աղօթք վասն հոգեվարաց · յիշատակաւ մահու, գերեզմանի, յարութեան և դատաստանի ։ Ա · Բ · Է · Ը · Ի · ԻԳ · ԼԲ · ԼԷ · ԼԹ · Խ · Կե · ԿԶ · Կէ · ՀԴ · ՀԸ · Հթ · Զ · ԶԱ · ԶԸ · ՂԱ · ՂԵ ։
Աղօթք վասն ՆՀԼեցելոց ։ ԶԶ ։
Աղօթք վասն հաբուանաց արտօրհից ։ Գ · ԿԳ · ԶԸ · Զթ · ՂԲ ։

ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆՔ ԽՐԹԻՆ ԲԱՌԻՑ ԻՆՉ ՄԱՏԵՆԻՍ

Ագդավ՝ Ջաքարիայ մարգարէի պապուն անունն է՝ ՂԳ. 8։
Ագռնայի տէր՝ Որ աստուծոյ կըսուի. Թանզըը՝ ԼԻ. 8։
Ազատամնեայ՝ Փիլիզատէ՝ ՉԱ. 3։
Ազդարան՝ Խոպոպ տրուած տեղ. ԾԹ. 2։ կամ Խոպոպ տալու գործ, որ է՝ բերան. կամ լեզու՝ ՀԳ. 2։
Ակլուք՝ Օրհնութիւնք, գովասանք. մեհ՝ ՂԳ. 24։
Ալէտանջ հողմ՝ Տալղա հանող հով՝ ԾԳ. 5։
Ալփափեաք՝ Այբբենին շարքը՝ ՂԳ. 22։
Ախտարծարծ՝ Ախտ շարժող. մարագ թէփրէհիճի՝ Կ. 4։
Ածանցական՝ Ընդաւոր. թէզ մը անցնող՝ ՀԳ. 5։
Ակատ՝ Դաւս թէքնէ, կամ փիտէ խայխ՝ ԿԳ. 2։
Ակնայայրատ՝ Աչքը մրսրսող՝ ԽՀ. 4։
Ակումբ՝ Ճիմհիւս, սիրիս՝ ԻՉ. 1։
Աղարտեալ՝ Ափրած, խարտեալ եղած՝ Ե. 1. և ԻԵ. 2։
Աղաւաղել՝ Ափրել, փճացընել, եօխ ընել՝ Բ. 5. և ԿԻ. 2։
Աղէյարմար՝ Փիրիշով տիւղինկնմիշ եղած՝ ՂԲ. 8։
Աղնւաբարուեթիւն՝ Քէրեմճիութիւն, Թուզաճիութիւն՝ ՀԵ. 12։
Աղնեալ ազդարան՝ Կղպած գոցուած բերան, կամ լեզու՝ ՀԳ. 2։
Աղօրի ըմբռնելիւ՝ Ցհիրմէն՝ էղմիշ ընելու, որ է ծամելու ակռաներ՝ ԿԳ. 2։
Ադու ազատնի՝ Մաղլմ կէօվէրձին՝ Բ. 1։
Ազատական՝ Ընուշիկ. միլայիմ՝ ԿՉ. 4։
Ազատական ախտ՝ Թաթլը մարագ, որ է ցանկութիւնն՝ ՂԱ. 5։
Ազնւութիւն՝ Մեծութիւն. քարա տուման՝ Չ. 5։
Ազտաղտին՝ Աղի լեղի. ածը ղհիր՝ ԼԹ. 2։
Ազօթկեր՝ Ազօթող, աղօթաւոր՝ ԾԱ. 5։
Ազօտանալ՝ Մեծնալ, ի լուսոյ պակասիլ՝ Է. 5։
Ազատ՝ Սապօն՝ ՂԳ. 11։
Ախիւն՝ Մոխիր. քիւլ՝ Ի. 1։ և ԻԳ. 2։
Ամանակ՝ Ժամանակ, աւեն. վագթ՝ Ի ՅԻԼՈՊԱՔԱՆՆ։
Ամբարձու ղէշ՝ Բարձր ճուղ ունող. իւճէ տալը՝ Թ. 2։
Ամենագրաւ՝ Ամենը զսպող ընող՝ Բ. 2։ կամ խիստ սաստիկ զսպող ընող՝ Ը. 1։
Ամենապիկար՝ Խիստ տկար. զայիֆ՝ ԼԸ. 2։
Ամպրոպ՝ Վէլվէլէ՝ Չ. 3։ և Գ. 3։
Ա յա՝ Եանաք՝ ԿԳ. 2։
Անագան՝ Կէճահն կէճ՝ ԼԹ. 3։ կամ վերջինը. ոզլաքի՝ ԿԸ. 2։
Անախտակիր՝ Ախլոց չաւակից չըլլաղ՝ Ծ. 1։ և ԾՉ. 2։ կամ խոբէլ չըլլահաղ՝ Բ. 2։
Անողելի՝ խակակութ՝ Չի աղուած՝ նոր ձնած բիճ՝ ԾԳ. 2։
Անարծարծելի՝ Ափ չի վառվելու՝ Ի. 3։ և ՀԱ. 2։ կամ ափ չ՚ըլլվելու՝ Ի. 2։
Անբոյժ՝ Չի բժշկելու. ծնզուլմազ՝ ԾԸ. 2։

Անդամմանք ։ խոչունկ մանուք ։ ԻԷ · 5 ։

Անդամանդեայ ։ Էլմաս պէս պինդ ։ ՂԲ · 10 ։

Անդանձաւք ։ Անդ , այսինքն ՝ի հնուէն անձաւելիք ։ որպիսի էր ՝ի հին օրէնն՝ սրբութիւն սրբութեանցն , որ անձաւելի և անմատչելի էր նոցա ։ վասնորոյ ասացուածս՝ Սրբոյ-Սրբոցն անդանձաւէյ , լմնցեալ լինի՝ Սրբոյ-Սրբոցն սրբոյ-սրբոցն ։

Անդասելի ։ կարգէ դուրս , նիզամ չի մտած ։ ԼԳ · 7 ։

Անդուլ ։ Ժիր · տայմայ ։ ՉԸ · 2 ։

Անդուղկամութիւն ։ Ա յն տեղը երթալու ճամբորդութիւն և ելաստաշութիւն ։ ՂԴ · 5 ։

Անեբեւակի ։ Անեբեւոյթ · կէօրիւնմէդ ։ ԻԳ · 5 ։ և ՃԵ · 5 ։

Անելիւան ։ Անվախ · շիւ պէհսիզ ։ Գ · 1 ։ և կԵ · 5 ։

Անընդել գազան ։ Եաղանի եաւուզ ձանաւար ։ Թ · 5 ։

Անհանել ։ Տօգումագ ։ կԳ · 2 ։

Անհեզակարծ ։ Անհասած · շիւ պէհսիզ ։ ՉԳ · 5 ։

Անհունչ ։ Շունչը կտրած · նէֆէսի քէսիլմիշ ։ ԺԳ · 2 ։

Անհոգաւք ։ Շունչ չունող · հոգի չունող · ձանսըզ ։ ԼԳ · 7 ։

Անհամբոյր ։ Թէրպիխայի չէկող · հէրկիզ ։ ԻՐ · 2 ։ կամ բերանը չի գայդող , շատախօս ։ ԻԳ · 2 ։ կամ գարշելի · պէճ ։ ԾՉ · 2 ։ կամ խաթր կէօնիւլ չի նայող ։ ՉԸ · 2 ։

Անհամոզելի ։ Խօսք մտիկ չընդող · ինաձը ։ ԾՉ · 2 ։

Անհատուածելի ։ Անբաժանելի , չի զատուելու ։ ՀԵ · 5 ։

Անհրաժեշտ ։ Անգատնալի · միւհէյմ ։ կԱ · 2 ։ կամ անխախտ , անպատուելի ։ ՂԳ · 11 ։

Անճաւ ։ Մաղարայ ։ Խ · 2 ։

Անճնամաան ։ Ինքիր անձը մատնող ։ ԽԸ · 2 ։

Անճուկ ։ Նեղկուկ ։ Ա · 2 ։ և ԿԴ · 2 ։ կամ քչիկ մը , պիր ազաձըդ ։ ԺԱ · 2 ։

Անյարիր չաուկ ։ Վէր չէլլելու նէնգաւոր և յաւագաբ ։ ԾԸ · 2 ։

Անշամանգաղ ։ Չի մէնալու պայծառ · տու մանըզը ։ Գ · 2 ։

Անշուշտ ։ Անփոխս , անխառնակ ։ կԷ · 1 ։

Անոպայ ։ Էյլիկ պիլմէզ · նախս ։ ԽԸ · 4 ։

Անպատուար ։ Պատ չունող · հիւսարսըզ ։ ԼԹ · 2 ։

Անջղեփ ։ Բաժանող · զատող · պէօլմէ ։ ԻԷ · 2 ։

Անպատժելի ։ Եա չիձգուելու , կ՚ամալ չըլլուելու ։ ԼԹ · 2 ։

Անտգիւտ ։ Անպակաս · էքսիքմիզ · մահանասըզ ։ ԻԸ · 3 ։

Անվթար · Անսխալ · Քուսուրսուզ ։ Ժ · 2 ։

Անտարրաբակ ։ Տարբերքի տակ չընկնող · նիւթէզլէն բանէրէն գուրս ։ ԺԶ · 1 ։ և ԼԴ · 3 ։

Անքաւ ։ Տկար , փոքրիկ · զայիֆ ։ կԹ · 2 ։

Աշխատ ։ Ոզբ , լաց , սուգ ։ ԻԷ · 3 ։ ԼԹ · 3 ։ ԽԸ · 2 ։ ԾԶ · 2 ։ և այլն ։

Աշտանակ ։ Շամտան ։ ԽԶ · 2 ։

Աշտէ ։ Խըշտ · մըզրախ ։ ՀԱ · 2 ։

Ապաքան ։ Պապանձած , անձրկիած ։ ԽԷ · 5 ։

Ապալէն ։ Ջինք չունող · սիլահսըզ ։ Է · 1 ։ և կԸ · 3 ։

Ապաթոյն ։ Թոյն չունող · զէհիրսիզ ։ կԳ · 1 ։

Ապահատուար ։ Անշահ · հալկ պիլմէզ ։ Զ · 2 ։ և ՀԴ · 1 ։

Ագռաւահ՝ Ամնական հայրը քառնած՝ Ի· 2։
Ագռաճեռն՝ Օգնական չուռնող, խեղճ՝ ԻԴ· 3։ և ԼԷ· 5։
Ագռաշուք՝ Ընդառիմ. իմիսպատրդ՝ ԼԴ· 7։
Ագռաչան՝ Ջանք չուռնող. խայբեմիսլ՝ Բ· 2։
Ագռաւուս՝ Լիրք. առուրդ՝ ԺԱ· 3։ և ԻԱ· 2։ և ԿԴ· 2։ կամ խոմբր կէօնիւլ չինայող, անգութ՝ ՁԸ· 2։
Ագռարանչան՝ Պիլէ ալիկ՝ ԼԳ· 1։
Ագռաւանգակ՝ Ձուան նաւուս. բալամար՝ Իե· 2։
Ագռաւինութիւն խաղսխի՝ Նաւուն մեծ երկաթը. ձան գութրաման՝ Իե· 2։
Ագռաքինել՝ փարաուել. գադրեցընել, կամ ըռընցընել՝ ՁԳ· 2։ և ՂԷ·2։
Ագէնիազ՝ Ընկարօտ. միւհմաճ չըլլող՝ Ծթ· 2։
Ագիկար՝ Տկար, խաղիր չըլլող՝ Ժ· 1։ և ԻՋ· 2։
Առակայք՝ Առաջիկայք, առջեր, կամ ճօտը եղածներըը, կամ քիչ մի հեռու ըլլալիքները՝ ԺԳ· 3։
Առանցեալ՝ Դադարեալ՝ ի ծնելոյ, վախտը անցած՝ ԼԱ· 1։
Առիգած՝ Գոգնոց. փէշամալ՝ Ի· 2։
Առկայծեալ՝ Ճրագն որ մարելու ճօտեցած, վերջին կայծակը հասած՝ ՁԻ· 3։
Առհաւատչեայ՝ Ձհշին, նուճունէ, կամ փէշ՝ Իե· 1։ կե· 2։ և կէ· 1։
Առաւղեան յաւիտեան՝ Անցաւոր ժամանակ՝ Դ ՑԻՂՊՓԱՒՐԱՆ՝
Առօրիակեալ՝ Բազդատեալ, նմանեցուցեալ՝ Ա· 2։
Աոուի՝ Բրդեղէն, չուխայ՝ և այլք նմանք՝ ԻԱ· 5։
Աոպականասպան՝ Շան կերակրի իւմիտ ընող՝ ԼԷ· 3։
Աոպասուակ՝ Քէլէ փիրճի, փուսու խըրըջը՝ կԹ· 2։
Աոպաբէս, կամ Աոպաբէղ՝ Մեծ մէյտան. աթ մէյտաները՝ Ա· 2։ և ԽԸ· 4։
Դարձեալ՝ երկաթ չափ է, որ է մէկ միւ աւելի ուրը փայիս մէկը՝ Թ· 1։
Աոտաբաե՝ Կնկան կերպարանքով կուռքի մի անուն է՝ կ· 4։
Աոտիկէպի՝ Ամենայն, որ ի հնումն այս քաղաքացւոց վաւ մարդն խիստ նամուսր, և ղվանն խիստ պէտնամ համարէին՝ կե· 1։
Արահետ՝ Լան ճամբայ. քէօռ եօլու՝ Թ· 2։ կամ շիտակ ճամբայ. ճատակ՝ ԽՋ· 3։
Արամաթացի՝ Արիմաթացի, ուստի էր Յովսէփ մարգարէն՝ ՁԸ· 1։
Արբուն՝ կատարեալ հասակ. քեամիլ-իք չաղը՝ Գ· 2։
Արգահատել՝ Ցաւակցելով միխիթարել, սիրտ տալ՝ ԺԲ· 1։ կամ աղաչել, բէճա ընել՝ ԺԵ· 1։ և ԾԵ· 2։
Արգասաւոր՝ Արդիւնաւոր. մէյվէտար՝ Դ ՑԻՂՊՓԱՒՐԱՆ՝
Արդարալուկ՝ Հաս տեղը տանջուող՝ Իթ· 2։
Արդեան՝ Հիմակուան. հիմիկի՝ Հե· 8։
Արդիմանական՝ Հիմակուց թէկէֆ եղած՝ ԻՒ· 2։
Արկածք՝ փորձանք. պէլայ՝ Զ· 5։ և կ· 2։ և կԷ· 2։
Արձագանք՝ Էս գարձող ձայն, որ մաղարանէրուն մէջ, կամ խորունկ տեղուանք՝ կանչուն ինչ որ կանչէ, գայն կը լսէ՝ ՂԲ· 8։
Արտարձան՝ Քարէ փորած էրկի մարդուս պատկերք, կուռք՝ կ· 4։
Արտեխուն՝ Արիւնեխուն, կարիճտեխուն՝ Իթ· 3։
Արտսեակ՝ Սատան էրեսորդը, չէօհլէ. կամ արեգակին. կամասադայէլ՝ Լ· 2։
Արշնամայր՝ Սեռ գոյն ունող՝ կԹ· 2։
Արշնատես՝ Սիեան կէօրիւնիւշլիս՝ ԼԱ· 5։
Արտաւած՝ Ճամբէ գալս եղած. եօլսուզ. կամ սիւրկիւն եղած՝ Ծ· 2։
Արտաքնայարդար՝ Դրսի գլխէն թէմիզ՝ Իէ· 5։
Արտուղի՝ Ճամբէ գալս. ծուռ. եանղլըշ՝ Հ· 5։
Արփիացնացուղ՝ Լոյս տալածող. շաթխ ծագող՝ Գ· 1։
Աւօտ՝ Արծուիլս տեղ. չորրորդս՝ Իե· 5։ կ· 2։
Աւօր՝ Շիթիմ քշելու գործիք. սապան՝ ԾԴ· 2։
Աւազական՝ Ափսոսական, ողբալու՝ Իջ· 1։
Աւանգ՝ Իմանկէմ՝ Դ· 1։ կամ տուրք. վերկի՝ Թ· 2։ կամ թէմպիհ՝

վախճէթ ։ ԻԲ · 4 ։
Աւազական ։ Բեւռի պէս չիչ չեզած · աճամի · հերիւնէ ։ ԻԲ · 2 ։
Աքար ։ Պատժուած մարդոյ մի անուն է ։ (Ցեռոայ · Ե · 1 ։) ԻԲ · 2 ։ և ՀԱ · 3 ։
Աքիա սիլնացի ։ Մարգարէի մը անուն է, որ՝ ի Սիլով քաղաքէն էր ։ (Գ · Թագ ·) ԺԱ · 29 ։ ԽԸ · 4 ։
Բաբէլոն ։ Պաղտատ քաղաքն է ։ Ա · 1 ։ և կԲ · 2 ։
Բագին ։ Կուռքի սեղան, կուռք ։ ԻԲ · 3 ։ և ՀԲ · 13 ։
Բազմակ ։ Բազմելու տեղ · մէքեան ։ կ · 3 ։
Բազմական ։ Սկճռլիս նստող ։ ԽՀ · 1 ։ և ՂԳ · 4 ։ կամ բազմելու, նստելու տեղ ։ ՂԱ · 3 ։
Բազմաձեռնեան խաբդաւանողք ։ Շատվոր հնչեպաղներ · կամ փիճտիկ ։ ՂԲ · 9 ։
Բազմայաճեան ։ Բարբարական պրոբոտող ։ կ · 3 ։
Բազմատրնեան ։ Շատ ճիւղ ունող, տալը պուտախալը ։ Խե · 2 ։ և Դ ՅԻ-ղոպոխրանն ։ ՀԳ · 2 ։
Բազմարկածեան ։ Շատ փորձանքոտ, թէհլիքելի ։ ԿԳ · 2 ։ և ՂԳ · 6 ։
Բահաղ ։ Կուռքի անուն է ։ ՂԲ · 8 ։
Բամբիռն ։ Զալրիտայ, վիլ ։ ԺԸ · 2 ։
Բանդագուշէտ ։ Խէլացնող, չըղըճն ։ Խե · 2 ։
Բանին սերմնակաճուխին ։ Խօսքին հօդը զայ ընելը, խենթ ու ժնիկ եօլսուզ խօսիլը ։ ԺԸ · 2 ։
Բառաչ ։ Ի՛ւխաւրնեբուն և նմանեաց պօռալը ։ ՂԲ · 8 ։
Բառացի ։ Փառաւոր · շէօհրեթլի ։ Դ ՅԻ՛սպա՛՛ ։
Բառիլ · Վառիլ · Էր կայսր Ցուներայ ։ ՂԱ · 3 ։
Բառնիլ ։ Մէղադրելի · այբպլանմաղա լայրգ ։ ՂԲ · 8 ։
Բարառնուելիւն ։ Խօսիլ չի կրցողի բերնով խօսիլ ։ ՂԲ · 8 ։
Բարացուցական ։ Բարբը ցրցընող, թարպխէթը յայտնող ։ ՂԱ · 2 ։
Բարառար ։ Դրան վէրի շեմը ։ ՂԲ · 8 ։
Բարեառելիլ ։ Ընուշիկ խայտելի, տիւզկնելի ։ ՂԳ · 8 ։
Բարթեամ ։ Ջաքարիա մարգարէի հօրն անունն է ։ Է · 2 ։
Բարուենակ մանդոկուզեան ։ Ըսմայի ճիւղ՝ որ զէհիրլի սալնըմ ուենի ։ Զ · 4 ։
Բաւանդակապէս ։ Բովանդակապէս · կամ բառականապէս ։ Խ · 2 ։
Բաւիղ ։ Սաչան, որ մաղարայի, կամ գրան վրայ կ'ըլլայ ։ կԶ · 4 ։
Բժժանք ։ Պիւրնձիի կամ պախըձիի չըմրուն ։ կԹ · 2 ։
Բիծք բոցակիծք ։ Կրակի պէս կճռուած ուռեցնեբ, ինչպէս՝ Թախտաւպէ-Թիէն, կամ սիլիսիհնկէն խածուած աեղուանքը ։ Ա · 1 ։
Բոլբատուս ղ ։ Յղձակէզ · Թամամ փէշկէշ ։ կԸ · 3 ։
Բոսորայ դեակունք ։ Կարմրագոյն արիւնաթաթախ լեշեր ։ կԳ · 1 ։
Բոսորային ։ Կարմրագոյն, կարմրած · գըղըլ ։ ԻԲ · 3 ։
Բռեալ · Սըլայած, կամ պատանայ եղած ։ ՂԳ · 18 ։
Բռնախոյեան ։ Դէմ ելլող կռիւ ճչնկէի ։ ՂԳ · 15 ։
Բռնամարտիկ ։ Կռիւ ճչնկ ընող ։ կԶ · 2 ։ կամ ուժով կիւլէշիւ ըլլող ։ ԻԲ · 2 ։
Գահաւորակ ։ Թահտրաւան · քէօչկ ։ ԾԶ · 2 ։
Գաղձնաւոր ։ Ընչահ խառեբով, (կամ այրըն խառով) լցուած ։ կԹ · 2 ։
Գաղանակուբ ։ Գաղանի ուտող, ինչպէս պաղըրսախց միջն ոզդերը ։ ՂԲ · 4 ։
Գայիան ։ Երկան մըղրախ ։ ՂԲ · 8 ։
Գանչուելիւն ։ Հնչուելն, կանչուածք ։ ՂԳ · 24 ։
Գարնանազոյզ գեղ ։ Գարնան աաեղը ազիւշ ըլլող չայ · Թաչխըն ըմանն ։ ԾԲ · 1 ։
Գեղայօրէն ։ Գեղեցիկ յօրինուած · հիւ սիւնելիս ։ ՂԳ · 8 ։
Գեղջին ։ Ճէրմակ բուրդ · եափաղը ։ ԻԲ · 3 ։
Գերբնապէս ։ Բնութեան աաեքէն վեր, հրաշապէս ։
Գերանակիր ։ Տիւեկ կրող, կամ տիրեկ ուղող ։

Գերաշխարան։ Խիստ ապաշխարող, շատ լացող ողբացող։ ԽԸ. 5։
Գերաշխարհիկ։ Յմէնէն պատուաւոր, խիստ իմիտալը։ Գ. 3։
Գերաւետնակ։ Ամէն գերազանցութիւն և կատարելութիւն ունող։ ԻԷ. 2։ և Էե. 7։ կամ ամէնէն հմլը ունող։ ԽԹ. 2։
Գթել։ Գլըմիլ, սխալիլ, չի գիտնալով զակատութիւն ընել՝ ընկիլ։ ԼԱ. 2։ Ե. 4։ Ե. 3։ և ՀԲ. 2։
Գժգիտութիւն։ Սրդողելով երեսը ծռելը. խղճալ։ ԽԵ. 2։
Գժտութիւն։ Կռիւ. նիզա։ ԽԵ. 2։
Գինի։ Օղ. քիս փէ։ ԼԳ. 1։
Գիշերաթաթաւ։ Սատանայ. հէյթան։ ԼԻ. 1։
Գլխաշուք կաւ։ Գլուխը ծածկող՝ զարգարող լաշակ։ ԼՂ. 1։
Գլխատրել։ Գլուխ հանել, լըմնցնել։ ՀԱ. 2։
Գոգչիք։ Ասպիք։ ՀԲ. 1։
Գողտրական, կակուղիկ, փափուք. նազիք։ ԽՉ. 2։
Գոմար։ Սոդոմայ մէկ քաղաքն է։ ԾԴ. 2։
Գոյարան։ Գոյացնող, ստեղծող. վար էաիձի։ ԾՐ. 1։
Գործականաթիւն։ Գործելը. իձրա ընելը։ ՂՅ. 20։
Գործնականաց գործի։ Գործելու ալեաթ, որ կ՝ ձեռքն։ ԻԳ. 2։
Գործօնեայ։ Գործող, փեյտահ ընող։ ՉԲ. 1։
Գումարատակ։ Գումարեալ բազմութիւն. ՀԷմկէթ. ՀԻմժոտ։ Չ. 5։ ԻԴ. 1։ ԼԲ. 1։ և Էե. 42։
Գունձել։ Գայն տալ. նէրկէլ։ ԼՉ. 2։ և ՂԳ. 47։
Գուպար։ Պատերազմի զօրք. ՀՀնկ ասկէրի։ Կ. 4։
Գուհէ։ Գուհէ. ասիաթ։ ԿՀ. 2։
Գրաբանական։ Գրով խօսուած՝ զրուցած։ ԼՂ. 1։
Գրաւական։ Չհնի. նուհունէ։ Ժ. 2։ ՂԳ. 46։
Գրգեալ։ Չհնքի սէիթայի մէջ ըլլող։ ԽԸ. 2։
Գրկանք։ Սիրով և գիտով գրկելը. գաւաձագ։ ԻԷ. 2։
Գրպան։ Շինիկ, ցորենի հօլէկի։ ԼԷ. 5։
Գօշել։ Կանգնցընել, խըշխըշցընել, սիրտը ցաւցընել։ ԺԷ. 1։
Դաւդան։ Աբիրօն։ Երկու եղբայրք հէն, որ Մովսէսի գէմ կռւցան ու գետինը անցան։ (Թուոց. ԺԶ. 1)։ ԿԸ. 4։
Դանդաչել։ Գուրգուրալ. քէօրի պէս շարժիլ։ ԺԹ. 5։
Դանդաչեցուցանել։ Երերցընելով չընկերը չընկերը ձայնը հանել։ ՂԲ. 8։
Դասակ։ Սիւրիւ, պէօլիւկ։ ԿՒ. 2։
Դատակնիք։ Վհնո. սիճիլ։ Գ. 1։ և ԺԷ. 5։
Դարաւառան։ Խրախտ. պահնձա։ ԽՉ. 5։
Դէգերեալ ողբայ։ Ալայրպ եաթըզը։ ԻԵ. 2։
Դէրբբերատու։ Ղեռն. թիկճճալ։ ՂԱ. 1։
Դժոխիկ։ փուշ. քարա չալը։ ԿԹ. 2
Դժուարամարելի։ Դժար անուշնալու. զէհիր թաապիէթլի։ ԻՀ. 5։
Դրժել։ Խօսքէն գառնալ, խաւլը աւրել։ ԾԵ. 4։
Դիզի։ այսինքն՝ գիզելի։ Եղբիշ ըրի։ ԻՀ. 3։ կամ նիզամը չարելի։ Դ ցիպտոսէրանն։
Դիմագրաւութիւն։ Գլուխը օրհան դնելով աչքակտութիւն. աչքահնկճութիւն։ Կ. 4։ և ՀԱ. 1։
Դիմակ։ Դէմք, կէրպարանք. քիմկէթ։ Գ. 1։
Դիմակերպութիւն։ Ընդունութիւն. մմնաֆիպկէթ։ ՂԳ. 4։
Դիմակս գիմակս։ Թիւրլիւ թիւրլիւ։ ԼԹ. 5։
Դիտակ։ Տեսնելու բարձր առղ, ինչպէս՝ կ՚ումի հանախքիը։ ԻԵ. 2։ կամ առնելու առղ, ինչպէս՝ մարդոյ երեսը։ ԿԵ. 2։
Դիտակ աստոց։ Ծառի ճիւղերուն ծայրը։ ՂԲ. 9։
Դիւահանձնձէր զտարան։ Սատանայի համար զբաղած եփելու առղ։ ԾԱ. 4։
Դիւրաբիսբիլ։ Խօսայ փչրուելու, փսրվելու։ ՀԳ. 3։
Դուժ։ Եաղանի միլկէթ. խորեաթ։ ՂԳ. 42։

Դահիկան։ Տանը խաղը, կամ վերի խաղը։ ԿԹ. 2։
Դարվիլ։ Քամահրել, սիրեմ տալ։ Լ. 3։
Դբախտապես անուշադրութիւն։ Ուշադրութեամբ լաղտալ գնելը։ ՂԳ. 19։
Դրանդ։ Դրան վերի շէմը։ ՂԲ. 5։
Դրուագ, կամ դրուագ։ Դրուած, օրինած շինուածք։ ԼԴ. 8։ և Ի՛ՅՀաՀաՊա՛՛։
Դրօշ, թուղ, սանձախ, խաչալեամ։ ԼԷ. 1։
Դրօշակ։ Փորուած կուռքի պատկերը։ Բ. 1։ և ՀԵ. 12։
Եգիպտացիք։ Եասւոյ այլազգին բնակիչները։ Ա. 2։
Եզող։ Եզ վարող, շինիր քշող։ ԾԴ. 2։
Եհովպացի։ Արապիստանցի, արապ։ ԾԴ. 2։
Ելեհնացի։ Հելենացի, Հռոմ։ ՂԳ. 12։
Եղեամն։ Խրքաղը։ ԿԸ. 3։ և Ղ. 3։
Եղեռնագործ։ Զարդագործ, զինագործ։ Դ. 3։ և ՂԱ. 3։
Եղերական ձայն։ Լալկանիներու թախծին ձայնը։ ԿԸ. 1։
Եղեւնի։ Բարձր սերմիկ, կամ չամի ծառ։ ԿԱ. 3։
Եղեգնախուռնկ։ Պահուր գամբռը։ ՂԳ. 11։
Եղեգնախուխ։ Խամրչի կատարուք՝ եօնկա։ Է. 5։
Եղէձ։ Ընբռնական օթևանը։ ՀԱ. 2։
Եմակ։ Ձոր. առերկ։ Խ. 2։
Եպերիլ։ Քամահրիլ. խոժռիլ օրմագ։ ՁԲ. 5։
Երախայրի։ Ընտանեն պտուղ. Թուրքմանցայ։ ԼԱ. 2։
Երախան։ Լալկանիներու սիւրիւ։ ԻՁ. 1։
Երամակ։ Սիւրիւ, սիւրեկ։ ԽՁ. 1։
Երասանակալ։ Տիղինը բռնող, զայրի ընդ։ ԼԲ. 2։
Երբեք, երբեքի։ Ժամանակ, զաման։ ԼԴ. 5։
Երգիծանութիւն։ Սիրտ կսկծցնելու խօսք, սրեմ։ ԽԸ. 2։
Երեւակայութիւն։ Երեւոյթ. խելայ կէսօրւնիւշ։ ՂԳ. 10։
Երեւիլ։ Ծառոց և խոտոց կիւվէն է։ ԿԸ. 5։
Երիպսակեալ։ Երկան կառավ սրնը փաթթած։ ԾԸ. 5։
Երիվացեալ։ Ձամբած, չորցած։ ԻԹ. 2։
Երինջ։ Մատղաշ կով։ կէնձ ինէք։ ԽԵ. 2։
Երկամ։ Սուրբ Եղուսաղէմի սէմրը քաղաք մի է։ ԿԳ. 1։ և ՂԲ.
Երկակրնդութիւն։ Երկու նեբէկակ բան, ինչպէս՝ տաքն ու պաղը, ցօղն ու գիշերը։ ՂԳ. 2։
Երկեւանութիւն։ Կասկած, չեւպէհ։ ԺԱ. 1։
Երկնաձեմ։ Երկինքը հանող, կէօյէ չըգաբան։ ԼԲ. 2։
Երկնել։ Տղաբերքի ցաւ քաշել։ Ա. 2։ և Բ. 2։
Երկոտրեակք։ Լուծք եզանց՝ որով շինիր կը քշէն։ ԾԳ. 2։
Երկրակենցաղ հէնք։ Երկրիս վրայ կեցած մասնաւորութիւններ, աշխարքիս միաձուլիս խախտութիւնք։ ՀԱ. 4։
Երկրորդութիւն։ Թէքբրլամիշ ընելը։ ՀԵ. 1։ և ՂԳ. 10։
Երմին։ Գոյն. ըռէնկ։ ՀԱ. 2։
Երկիք։ Աշխատանք. զահմէթ, մէշագէթ։ Է. 1։
Զակատիլ։ Քէօրի պէս՝ շաշընի պէս ըռէնդիլ ըլլալ։ Ի. 2։
Զանգուած։ Քանի մը բաներէ խառնուած՝ մէկ խմոր եղած, ինչպէս՝ մարդոյ մարմինը։ ԻԳ. 2։ և ՀԱ. 1։
Զառածեալ։ Մորթած, ճամբէ ելած։ Ը. 1։ և ԿԴ. 2։
Զարհօրատակ։ Զարհուրելի տեսք ունող. ապկըն չէհրելի։ ՂԳ. 12։
Զարմանութիւն։ Զարմանալիք. Թաաճիւպ ընելու։ ԽԹ. 1։
Զեղծանիլ։ Սոխ, խոցը փուճ ըլլալ։ ԾԲ. 1։
Զըլացող։ Երախատուց, հախը ինքեաբ ընդ։ ՁԲ. 5։
Զըմբաղ։ Ընբախութիւն. ղէվգ՝ ակֆա։ ԾԵ. 5։
Զընգամ զընգանաւ։ Զարչարուխմ զընգանոմ։ ԺՁ. 1։
Զկծեցուցիչ։ Սիրտ կսկծցնող, աղիքը կարտող։ ԼԹ. 5։
Զկծիլ։ Հալմ չընելով սիրտը երթլ։ ԻԹ. 2։ և ԿԴ. 2։

Ջհաւաքիր ։ Փաղցրահատ , ասիդզինտով լցուած ։ ՂԳ · 6 ։
Ջոխանակ ։ Ցրտին գողալ . Թիթրիկմիք ։ ԻԹ · 2 ։
Ջրահեռական ։ Պօշ պարապ , անպտուղ . մկվկոիզ ։ Խե · 2 ։
Ջօրէն ։ Նման . այնի ։ ԿԹ · 2 ։
Ըզձաւթիւն ։ Խղճ , փափաք . աշգ ։ ՂԴ · 1 ։
Ըմբերանեալ ։ Աբիբեան եղած , հախ չունելով պապրնծած ։ Բ · 1 ։
Ըմբոշխնել ։ Ծամել . չխնկմիք ։ Ե · 2 ։
Ըմպահկանք ։ Արհամարհանք . բկզալէթ , մկզագ ։ ԽԸ · 4 ։
Ընկուզեալ ։ Ջրի մէջ պաթմիչ եղած ։ Գ · 5 ։
Ընդակից ։ Հետը ուղուն . այախառաշ ։ ԿԱ · 1 ։
Ընդարմացուցիչ ։ Թմբեցնող , սէրսկնղող ։ ՁԳ · 5 ։
Ընդգոգեալ ։ Գոգին մէջ ժողված պահած ։ ԾԱ · 4 ։
Ընդելբ ։ Փոքրաթիք , փորու մէջն աղիք . պախըրսախ ։ ԼՋ · 2 ։
Ընդ կրունկն գառնալ ։ Ետ ետ գնալ ։ ՀԱ · 2 ։
Ընդհատ ։ Պակաս , հեռու . փարգլը ։ ՀԲ · 2 ։
Ընդմիմարկութիւն ։ Օրթայէն իբրու պատ քաշելը . մէօհքեմ թէնպիհ ։ ՂԳ · 6 ։
Ընդմիմիկել ։ Փէրսէ քաշել ։ Լէ · 3 ։ կամ հնկէլ ըլլալ՝ զատել ։ ՁՁ · 1 ։
Ընդոստանալ ։ Վեր ցամքիլ . սրէբրամագ ։ Ե · 3 ։
Ընդունայնաբոսպ քիրան ։ Սըսլէթի տուող պօշ քրանիք , որ է ասել նաֆիլէ զահմէթի ։ Խե · 4 ։
Ընդպահկել ։ Երեսէ ձգել , ձեռքէ թող տալ ։ Չե · 5 ։
Ընկճիլ ։ Սըռքիլ , տակ ընկնիլ , սինմէք ։ Լ · 5 ։
Ընկրկիլ ։ Ետ ընկնիլ , ետ փախչիլ . կերսէ գափանմագ ։ ՂԱ · 1 ։
Ըսատանձնեալ ։ Շալակն առած . իւքլէնմիշ ։ ԾԵ · 5 ։ և ՀԵ · 5 ։
Ըսո բան քո ։ Քու խօսքիդ գուբս . սէնին սէօղիւնտէն արշարը ։ Հջ · 1 ։
Թաւանձ ։ Հաւաչանք . կէօյիւս կէչիրմէք ։ ԻԳ · 2 ։ Լ · 1 ։ և ԽԸ · 2 ։
Թատր ։ Մկտան ջրանուռ ։ ԼԱ · 2 ։
Թարահատ ։ Կուռքի անուն է , զոր Թարա հայրն Աբրահամու չնեաը էր ։ Կ · 4 ։
Թարթափուն ։ Աչք գոցել բանալը ։ Լէ · 5 ։
Թարմատար ։ Փուճ , պօշ բան մը չարժող ։ Կ · 4 ։ և ԾՋ · 2 ։
Թափանցանց ։ Մտնող անցնող , թէհնիր ընող ։ ՂԳ · 12 ։
Թէզան ։ Մանած , երկան թէլ ։ ՂԳ · 24 ։
Թէլադիր ։ Ցորդորող , թահրիք էտնէի ։ ԽԸ · 2 ։
Թէրափ ։ Կառապաշխ գործիք . համայիլ ։ ԽԸ · 5 ։
Թինգս առնուլ ։ Ցաճկանել , լողալ ։ ՀԱ · 5 ։
Թխատախ ։ Սեւագոյն , մուխ գոյն . ղնֆիլի ։ Խ · 5 ։
Թշուառաբիրան Թոշակ ։ Մահուան քրանիքով վաստակ . մէշագ գէթվի խ-բատ ։ Խե · 5 ։
Թոպալ ։ Չարչարուած , պէրպատ եղած ։ ՀԲ · 5 ։
Թուլագաշնակեալ ։ Տիւղինը Թուլցած , տիւղինը աւրած ։ ՂԳ · 20 ։
Ժայթքել ։ Փսխել , գուսմագ ։ ԿԵ · 1 ։
Ժանիք ։ Գազանի ակռաներ ։ Դ · 1 ։ կջ · 4 ։ և ՀԹ · 4 ։
Ժխտող ։ Ինքեաը ընող , հիլէ ընող ։ Բ · 1 ։
Ժողեհալ ։ Մարաղեբով լցուած , հոտած . լիսկած ։ ՀԳ · 2 ։
Ի գիծն Թուլանալ ։ Շիտակ ճամբան չի կրնալ երթալ , Թուլնալ ու ճամբան մնալ ։ ՀԱ · 2 ։
Ի ձիւղս մատանց Թուել ։ Պատնեշուն վրայ մկկիվ մկկիվ համրել ։ ՀԸ · 5 ։
Ինեբեակ յօբելինի ։ Ինն անգամ յիսուն , որ է չորս հարիւր յիսուն ։ Ի Յիւպիլաբանն ։
Ինքնարգոյ բարձրայոյն ։ Ինք զինք չարգող մեծարող հպարտ ։ Գ · 2 ։
Ինքնոգոր ։ Ինք իր հետ կռուող ։ ԾԹ · 1 ։
Ինքնօրէն ։ Ինք իրմէ . կէնտի քէֆինէ ։ ԿԱ · 1 ։
Իշանգամ ։ Իշու անգամի պէս ամօթ ունող ։ Կ · 4 ։
Իսկ անունն իսկոյն ։ Բուն իսկական անունն իսկուն Թևանն . զանհինին խամ

զաթի ։ ՂԳ՝ 18։
Իբաւամբժ ։ Իրաւունքով մերժուած , միաբեռ ահախտվը վըռընտուած ։ ԻԹ · 2։
Իբաղնդիւղ փայտ ։ Եղ տուող ծառ , ինչպէս՝ ձիթենին ։ ԼԹ · 3։
Լաշնատարը հետք ։ Լան ու արձակ ձամբայ ։ Ե · 3։
Լանջք ։ Կուրծք , կէզիւս ։ ԼԳ · 1։
Լատտ ։ Նաւուն տակը , կէմիի թէքնէ ։ ԻԵ · 2 ։ և ՃԵ · 2։
Լաստին գադարը ։ Կէմիին հանգչելու տեղը . իլնման ։ ԻԳ · 2։
Լափլըղը ։ Լափէլով լիզողը , արիւնը ծըծօղ ։ Ժ · 1։
Լկինել ։ Անամօթ լինիլ , հեպպսիդ օլմագ ։ ԿՃ · 4։
Լուծ ։ Թէբաղնի թաթ ։ Թ · 1 ։ կամ պօյունտուրաթա ։ ԻԵ · 2։
Լուծք տուտարք ամօլից ։ Կէմիի կէօվէրմէին հատա գօտիները ։ ԻԵ · 2։
Լուղակ ։ Լղացող , ինչպէս՝ ձկներըը ։ ՀԱ · 5։
Լուս ։ Լսեցո . իշնիմպը ։ ՃԵ · 1։
Լուսանցոյց երդ ։ Երդիքէն լոյս մտնելու տեղ , պաճա ։ ԺՖ · 5։
Լուսնական դիպուած ։ Թուեմպըրլիս ։ ՃՔ · 6։
Լուտացող ։ Քամահրող . պէթ սէօյլէմէմ ։ ԺԱ · 5։
Լպրշեալ ։ Անամօթ՝ հեպսպսիդ եղած ։ ԾՃ · 2։
Լսնայեալ ։ Ձէրմլկած , ինչպէս՝ լաւցած եարպային տեղը ։ ԻԴ · 2։
Լրապատար ։ Լման լեցուն . միւնէվվիր ։ Ի ՅԻԼԴԱԽԱԲՆՆ ։
Լրիճագոյն ։ Մինչագոյն . փէք գօրամմը ։ Լ · 2։
Լքանել ։ Դուրս ձգել . բետտ էյմէք ։ Բ · 3 ։ և ԻԵ · 2։
Խամճաբեալ ։ Աբրած , խարտեղ եղած , փճուացած ։ ԻԵ · 5։
Խակախոհութիւն ։ Խամ իմացմունք , ձահիլութիւն ։ ՂԲ · 8։
Խաղաւարտ հրապարակ ։ Կճած ուռեցք՝ կրակի պէս երող՝ կակծցող ։ ԿԹ · 2։
Խաղք ։ Իբրեւ թէ՝ խիղճ . որ է՝ կապ , կամ կապանք . քան այլոց՝ հաղք . որ է՝ որոգայթ ։ ԼԲ · 3։
Խայրիք ։ Փառղներ . մէմլէքը ։ ԼԳ · 1։
Խառնիճ , կամ ջրեակ ։ Խանաւսրդ չէքիրդէ ։ ԿԸ · 5։
Խարան ։ Եարա սաղլամիշ ընելու երկաթ ։ Ջ · 1 ։ կամ տաղտանմիշ եղած խոց ։ ՃԻ · 2 ։ և ՂԳ · 6։
Խարդաւանք ։ Խաբերայութիւնք . ֆէնտ ։ Կ · 2։
Խարխաբանք ։ Վէճօի քալաւածք , գաւդաւբալ ։ ԺԸ · 2։
Խափսանել ։ Խափանել . մէն էթմէք ։ ԿԳ · 2։
Խելք ։ Նաւաս խրչ ։ Խելք չրճանց ։ Խրչին Թարաճի քիւփէշտէներ ։ ԻԵ · 2։
Խենէշանալ ։ Էհէպսիդնէ հագուիլ կապաւիլ ։ ՀԲ · 2։
Խժական բարբաջուռ ։ Կոպիտ , խորեամի եարամալ ։ ՂԳ · 6։
Խիզախել ։ Համարձակիլ , ճիւրահամի ընել ։ ԿԸ · 5։
Խիճ ։ Խոստուհ , ռամնը ։ Ջ · 1 ։ և ԻՋ · 5։
Խլտուան ։ Ցեղացը ժաժիլ , Թէփրէնմէք ։ Ջ · 3 ։ և Է · 1։
Խծբիծ ։ Խառնելը փնտռելը . արաչարըմասը ։ ԽԸ · 4։
Խխայիճ . խղխայիճ ։ Պէօհէկ , Թըռնէրը ։ Է · 1։
Խնծիղք ։ Խնտաճ . զէվգ , շատլը ք ։ Դ · 1։
Խնկաւորութիւն ։ Օրհնէնք , գովասանք ։ ՂԳ · 14։
Խոհեր ։ Գաւշելի գործք , մաբտաւ բան ։ ԽԵ · 2։
Խոպանացեալ ։ Ձորցած , աւրած ։ խարեալ եղած ։ ՀԳ · 2։
Խորշակ ։ Տաք հով . սամ ելլլ ։ ԿՋ · 4։
Խուել ։ Ձաշշարել . էզնկէթ էթմէք ։ ԿՋ · 4։
Խուզել ։ Փնտռըտել ։ Թ · 2 ։ և ԾԵ · 4։
Խուժադուժ ։ Եապանի , ապռուռճասպուռ ։ Կ · 4։
Խուճապել ։ Խիստ անհնչեով սխրեթ ընել ։ ՀԹ · 4։
Խուն ։ Սակաւիկ . ազաձքը ։ ԿԳ · 2 ։ Հ · 2 ։ և ՀԳ · 5։
Խոփ ։ Աբօրի երկաթ . սապան ոէմիրի ։ ՂԲ · 7։
Խորոց ։ Ջատող միջոց . պէօլիւճիւ սընդրը ։ Բ · 1 ։ և ՂԲ · 7։
Խրճռանալ ։ Խոժռուիլ . մճռնալ զղուիլ ։ ՀԵ · 11։
Խրճնի ։ Սեւցած , աղտոտ . չիրքին ։ ՂԳ · 12։

Խօշական ցնօրք ։ Խենթ ու մենթ երազներ ։ ԺԲ· 3։
Խօշականաց շարժուձևական գործի ։ Լեզու · տիլ ։ ԼԵ· 3։
Ծայրակատար ։ Ծայրագոյն կատարող, խիստ ջարդող ։ ԻԸ· 1։
Ծէրպ ։ Քարերու և ծառերու ծակ · գօվաք ։ Խ· 2։
Ծնգեցեալ ։ Հալած մաշած, խիստ վատուժ ։ ԾՐ· 2։
Ծոլիլ ։ Մաշիլ, եօխ ըլլալ ։ ԿՆ· 2։ ԷԳ· 2։ և ՂԲ· 10։
Ծոծոր ։ Լեռներու մէջ տէրէ, ձոր ։ Խ· 2։
Ծորումն ։ Կամեղը · վազելը, բրխալը ։ ԼԵ· 1։ և ՂԳ· 19։
Ծուէնք ։ Պատառոտած · պէղ երեթքլաբը ։ ԻԵ· 2։
Ծուղակ ։ Որոգայթ · առղաս, խափանճա ։ ԽՋ· 3։
Ծուբ և ծայթան ։ Սուբ, Սայտա · են քաղաքք փիւնիկեցւոց (ԵՂԷ՛· ՛ԼԸ·) ։ Բ· 1։
Ծրդեալ ։ Ազատեղեալ, պլըշկած՝ մրտառած ։ Բ· 1։
Կաղդուբել ։ Նորոգել, բժշկել, խալըսել ։ Զ· 3։ և ՁԳ· 2։
Կախանիլ ։ Հեկեկալով լալ · Էօքիւբ էօքիւբ աղլամագ ։ ԺԲ· 1։
Կաղակարծ ։ կամ կեղակարծ ։ Շիւպհելի ։ Լ· 2։ և ԽԸ· 2։
Կաղկանձողական ։ Վնկիլիկալով, եալճախանմիշ ըլլալով ։ ԼԵ· 3։
Կայլ ։ Ցամքկըտելով խաղ, պար ։ ԻԱ· 2։ և ԼԱ· 2։
Կայտառ ։ Վնասակար կենդանի, պէօճէկ ։ ԽԵ· 3։
Կայմ ։ Նաւուն եէլքէն բանալու սէրէն տիրէկի ։ ԻԵ· 2։
Կապարան ձգողական ։ Ջուան քաշելու, իւլար ։ ԽԵ· 1։
Կապարանք ղեստի ։ Նաւու թէքնեի երկու կողմի կապերը · խապուբղանները ։ ԻԵ· 2։
Կապարձ ։ Ղէտ գնելու աման · թէրքէշ ։ ԿՋ· 4։
Կապուտ ։ Եաղմա եղած մալ · թալան ։ ԺՋ· 1։ և ՀԵ· 7։
Կառափիճ ։ Գլուխ կտրող, սպանող · ՃելլատՀ ։ ՁԸ· 2։
Կարակուժ մօր ։ Մուրտառ չամուռ · պալչըխ ։ ՁԳ· 3։
Կարեկցել ։ Ցուահկից ըլլալ ։ ՂԵ· 1։
Կարճ ։ Որոգայթ · քէմէնա, օլթա ։ ԽՋ, 3։ և ԿՋ· 4։
Կարծրերախ ։ Տիկինի չէկող, զալթի ջընջուող, ինչպէս գլուխը սէրթ ձին ։ ԻԲ· 2։
Կարկառ ։ Քարերու երդին · թաշլըխ ։ ԿԳ· 1։
Կարկառել ։ Մատուցանել, երկնցնել · ուսնմագ ։ ԺԸ· 2։ ԼՂ· 2։ և ՂԲ· 9։
Կարկառ կուճումն ։ Վէր վէրցնելով զարնելը ։ ՂԲ· 2։
Կարկեհան ։ ՃեվահիրՀ քար · որ գիշերը լոյս կուտայ · չամչըրագ ։ ՀԵ· 12։
Կարուէիւն ։ Կարողութիւն · քառրըլըք ։ ԺԹ· 4։
Կափառնաւամ ։ Ցորդանան գետի բէրանը մեծ քաղաք մի է ։ Բ· 1։
Կաքաւ ։ Ցամքկելով խաղալը ։ ԼԱ· 2։ և ՂԲ· 6։
Կեղեքել ։ Պատառել, բրզբզքաել ։ ԺԵ· 1։ և ԿԸ· 3։
Կենդանախարսիկ կայծակն ։ Երեւելով մաքրող՝ ողջընչնաղ կուակ ։ ԼԳ· 5։
Կենսախտասոյս ։ Կեանքի ուժմուտ տուող ։ ԽԴ· 2։
Կիսայաւ ։ Կիսակատար տայանմիշ եղած՝ կանգնած ։ ԼԲ· 2։
Կիսի կսրիւն ։ Մեծ ձուկի եաղրու ։ Խե· 1։
Կիւբոս ։ Պարսից թագաւորի մի անուն է (Ե՛՛· Ջ· 31) ։ ՂԳ· 6։
Կմախք ։ Մեռելի ոսկորներ ։ ԷԳ· 2։
Կնգբուռ ։ Ընուշիկ հոտով ծխանելի պուհար ։ Ի· 2։ ԷԵ· 4։ ՂԳ· 8, և 19։
Կնիւն ։ Սալ · որ ջրոտ կէօլ տեղ կը բուսնի ։ ԼԹ· 2։
Կշտամբեալ ։ Ցանդիմանած, չխուսած ։ Բ· 1։
Կռփող ։ Իւմրուխով գլխու գարնող՝ ծեծող ։ ԼՋ· 2։
Կոխող ։ Բարձր տնկած քար · տիբլիլ թաշ ։ ԼԵ· 2։ և Դ ՅԼաւթաղարանն ։
Կոհակ ։ Ալիք ծովու · տէնիզ տալկասը ։ ԻԵ· 2։ և ՁԵ· 1։
Կողկողանք ։ Խղճալի կերպիւ լալը՝ աղաչելը ։ ՀԱ· 3։
Կոշկռձել ։ Խիստ չարշարել · տանջել ։ ՀԱ· 5։
Կոշտ ։ Պինդ հողի կտոր · եիւմրուռ հող ։ ՀԴ· 3։
Կորակոր գնացք ։ Ծռումրուկելով քալուածք ։ ԿԹ· 2։

կառավ ։ Զարնուած՝ եւ արեալ անմիջ եղած ։ ՁԷ · 2 ։
կառավ դիպուած ։ Զարնելու դիպուած · վնասուածք ։ ՂԲ · 5 ։
կրճականութիւն ։ Թակելի մասիկներ · հիւսիք ։ ԽԳ · 4 ։
կրկնադատ անեծափել ։ Թէքթար սիրել եղած՝ որ ալ չի ազատուիր ։ ԻՁ · 2 ։
կրկնակապէն ։ Երկու անգամ տրուած կաշառք · որ անգամ մի Յունդային տրուելուց , անգամ մի ալ վերնուագներուն ։ ԼՁ · 2 ։
կրկնապարոյր կամածագ ։ Չհնկելի պէս ծարը ծուռ , ինչպէս փիրկին կառուցնել ։ ԿԹ · 2 ։
կ քուսի ։ Սրճքիլը , երկու խաթ ըլլալը , խառխաթի մնալը ։ ԺՀ · 2 ։
Հագագ ։ Ձայն , շունչ · սէտա , նէֆէս ։ ԻԳ · 2 ։ Խե · 2 ։ Ղ · 1 ։ Եւ ՂԳ · 12 ։
Հալուէ ։ Անուշահոտ եղ մի է , կամ էօտ աղաձիին էօղը ։ ՂԳ · 11 ։
Հաղը ։ Որոգայթ · տուզակ ։ Գ · 1 ։ ԺԳ · 1 ։ Եւ ԺԵ · 2 ։
Համաբանաբար զուգամանութեամբ ։ Միաբերան ամէնը մէկէն ։ ՁԵ · 2 ։
Համաձեւութեան օրէնք ։ Ըրածը գանելու օրէնք · գըտասաս գըտասաս չէ բահաթը · ինչպէս մասխասկան օրէնքն էր՝ այն ընդ այսն , եւ այլն ։ ՀԸ · 2 ։
Համառօտ երբ ։ Կարճ ժամանակ · քրտա վադէ ։ ՁՒ · 6 ։
Համամեալ յանձգպետ միականութիւն ։ Միասնական անբաժանելի միաւորութեամբ ։ ՀԵ · 7 ։
Համասփիւռ ։ Ամէն կողմ հայրսիմիշ եղած ։ ԼԳ · 1 ։
Համբարտակ վտահութեան ։ Սրղընմիշ ըլլալուս խուլէ ։ Գ · 3 ։
Հայհայթանաց կրկուտ ։ Կէչինմէյի համար չալը չըվիը , հօնղա ։ Հ · 2 ։
Հայհայթուած ։ Աչքին անդին ընկնիլը՝ ճար ընելը ։ ԺԳ · 2 ։ Եւ ՁԵ · 2 ։
Հանգիտափառ ։ Նման փայտէ ուղեղ · ագրան ։ ՂԳ · 7 ։
Հանգոյց ։ Կապանք · քայտաւպէնտ ։ ԾԸ · 5 ։ Եւ ՂԱ · 1 ։
Հանգերձանք ։ Ցարմար խառնուածք հինուածք ։ ԻԳ · 2 ։
կամ սալթանաթ , թախըմ , ԼԸ · 2 ։
Հանգերձաւորիլ ։ Զարդ արուիլ , պատրաստուիլ ։ Դ · 2 ։
Հանի ։ Մամ , մեծ նէնէ · Հանի Մովաբուս ։ Մովաբին մեծ մայրը , որ է Դավթայ կինն ։ ԼՁ · 2 ։
Հաշմեալ ։ Սխալուած , խառխաթի եղած ։ ՁՁ · 2 ։
Հակ ։ Ցորենի՝ կամ գարիի գլուխ ։ ԼԸ · 4 ։
Հաստարան ։ Հաստատուելու կանգնելու տեղ , գաւազան · տէյնէկ ։ Գ · 3 ։
Հաստուածք ։ Հաստատուածք · վինճուտ , կէօվահ ։ Ձ · 3 ։
Հաստուածեալ ։ Կտրուած , պատուած ։ Ը · 2 ։ Եւ Հե · 2 ։
Հարեւանցի երեւակայութիւն ։ Լոկ հեղած երեւոյթ · խէյալէթ ։ ՂԳ · 10 ։
Հարեւանցիկ ։ Երեւցող ու թէղ մը անցնող ։ ՀԴ · 3 ։
Հարմուցեալ ։ Լեղուով ծեծած , թաղիր եղած ։ ԺՀ · 1 ։ Եւ Ձ · 3 ։
Հեծան ։ Բիր · ասիայ ։ Ա · 2 ։ Եւ ԺՒ · 1 ։ կամ սուրբ խաչին պօշաճ փայտն , որ է Քրիստոսի պէնքը ։ ՂԲ · 6 ։
Հեծանող , հարմանձիներուն մատ մատ քիւրէկին , որով յարդը՝ ցորենէն կը զատեն · եաֆա ։ ՀԱ · 3 ։
Հեղեղատ կեդրոնի ։ Երես ասղէմի սէմթ գետ մի է ։ Ա · 2 ։
Հեղեղավայր ։ Ջուր կոխած տէղ · կէօլ ։ ԼԹ · 2 ։
Հեղիատ ։ Եղիա մարգարէն ։ ՂԳ · 6 ։
Հեղոյս ։ Բեւեռ · էքսէր , չիվի ։ ԻԵ · 2 ։ Եւ ԻԲ · 6 ։
Հենգնել ։ Ծաղր ընել · մէզագ էթմէք ։ Կ · 4 ։ Եւ ԿՁ · 4 ։
Հենուլ ։ Հինել , հուսել ։ ԿԳ · 2 ։
Հէստակ ։ Օրինաբ գուբս էլլըղ՝ գէմ կեցող ։ ԼԳ · 4 ։
Հերաւանձ տունկ ։ Տերեւներով ճիւղերով զարդարուած ծառ ։ Թ · 2 ։
Հէն ։ Ձէթէֆէճ · խուրտան ։ ՂԲ · 9 ։
Հիւղ ։ Մանրիկ փոշի , հիւլէ ։ Խե · 2 ։
Համայիկ ։ Համայիլ ։ ՂԳ · 18 ։
Համայք ։ Պախշուէթիւն , տաւկէթ ։ ԽԸ · 5 ։
Հնոտագիր ։ Տուզան խուռմիշ ընող ։ ԾԵ · 5 ։
Հոգենկար ։ Հոգւով սրբոյ բեմ եղած , կամ հոգեւոր գրուած ։ Հե · 5 ։

Հոմանի ։ Պառնիկի սիրահար ։ ՉԳ · 5 ։

Հոմերոս ։ Հոմերոս , բանաստեղծ մարդոյ մի անուն է ։ ՂԳ · 19 ։

Հոմիլիա ։ Ճոր · տէրէ ։ Ա · 2 ։ Խ · 2 ։ և ՂԳ · 11 ։

Հրաշակերտութիւն ։ Գեղեցիկ և զարմանալի շինուածք ։ Ի Յիշատակարանն ։

Հրաշէկ ։ Կրակի պէս կարմրած ։ Բ · 2 ։

Հրատապ արբուցանել ։ Թմրեցնող ու խելագնող դեղ խմցընել ։ ԿՉ · 4 ։

Հրատապ ։ Կրակի պէս տաքցնող ։ Խ · 5 ։

Հօրան ուլուց ։ Սիւրիւ՝ այծու ձագերու · օղլագլար սիւրիւսիւ ։ ԽԸ · 1 ։

Ձեղուն ։ Տանը ծածքը , առիք ։ ԿԸ · 2 ։

Ձեռնադնին ։ Ձեռքով բռնուելու ։ ՀԵ · 12 ։

Ձեռնէբէց լինել ։ Ցանդգնութեամբ ձեռք ձգել · հօն այագ օլմագ ։ ԾԸ · 2 ։

Ձուլածոյ ։ Տէօքմէ կուռքի պատկերք ։ ԽԸ · 5 ։

Լծղիլ ։ Պահուիլ · կիպչենմէք · սագլանմագ ։ Դ · 1 ։

Ճակատիկ ։ Պատերազմիլ , ձեռնկ ընել ։ Կ · 4 ։

Ճայ ։ Ճայեկ , սեւագոյն թռչուն մի է ։ ՀԱ · 2 ։

Ճայթումն ։ Սաստիկ հնչումն , չաթըրտը ։ ՂԲ · 2 · և 7 ։

Ճապուկ բռատ ։ Կակուղիկ բարակուկ՝ փորու սօղուլճան ։ ԿԹ · 2 ։

Ճարպ ։ Փորու եղ · իչ եաղը ։ Ա · 1 ։ ՂԳ · 8 , 17 , և 25 ։

Ճենճեր ։ Քլպապային փրփուրը՝ քֆֆը ։ Ա · 1 ։

Ճիրան ։ Սուր ըղունկով ճանկ · փէնչէ ։ Զ · 3 ։ և ԿԸ · 3 ։

Ճնշաւ մզել ։ Սխմելով քաշել ։ ՂԳ · 11 ։

Ճշդով ։ Էշկեաբէ այբրա ընելով ։ Խե · 1 ։ կամ՝ նէքէսութիւնով ։ ՀԹ · 3 ։

Մագնետաիս վէմ ։ Մըղնատրզ թաշը ։ Խե · 1 ։

Մածուած լոյծ ։ Ջրեղէն երկինքն է ։ ԼԳ · 4 ։

Մածուած լաստի ։ Կէմիի թէքնէ ։ Զե · 2 ։

Մակագաւիթ ։ Լայն և արձակ տեղ ։ Ի Յիշատակարանն ։

Մանրաբմաստ ։ Բոլոր քէօքէն մանուտ , գորտըներդատ · եօսունլու ։ ԾԳ · 3 ։

Մանկաղ ։ Մանգաղ · օրագ · թռւփան ։ Լե · 3 ։ և ՂԲ · 7 ։

Մառնամուտ ։ Մութ տուէմնով ծածկած , չի տեսնուելու ։ ՂԳ · 19 ։

Մարգելոյղ ։ Շողքորթ , միւտահանէ ընող ։ Կ · 4 ։

Մարմանջուն ։ Ցանկութեան հարագէթ ։ Խե · 2 ։

Մեծգիտակական ։ Մեծապէս գիտցող · իճթիհատ վուխուֆ ։ Գ · 2 ։

Մեհենապէն ։ Շէմէճի · վուսատ խըրսըզը ։ կԹ · 2 ։

Մեկին ։ Ցայտնի · էշկիաբէ ։ ՂԳ · 11 ։

Մեղկել ։ Թուլլնել , կէվշէթմէք ։ ՂԳ · 25 ։

Մեղսամակարդ ։ Մեղքով պղաշկած ։ Ծե · 5 ։

Մեղքոմ ։ Կուռքի անուն է ։ (Գ · Թագ" ԺԱ · 5) ։ Կ · 4 ։

Մեռայ ։ Դառնութիւն , լէզվուութիւն · և ի անուն տեղւոյ ։ (Եւէյ · ԺԸ · 25) ։ ԿԳ · 1 ։ և ՂԳ · 20 ։

Մերասէր ։ Մէր , այսինքն՝ մարդոյ սոյն ծնած ։ ԼԳ · 9 ։ և Հե · 7 ։

Մերկամիջանակ ։ Ձպլաս ձէնկ ընող՝ կիւլէշ բռնող ։ ՂԳ · 15 ։

Մերկատարանոց ։ Ցայտնի , էշկիաբէ · պէյան ։ Ը · 1 ։

Մէքենայ ։ խափանճա · տուզախ ։ ԾԵ · 2 ։ Ը · 5 ։ և ՂԳ · 2 ։

Մշնարհեաս ։ Կաշխի զարի պէս բարակ կալմած ։ ՂԳ · 20 ։

Մժեր ։ Գանձարան · խազնա ։ Դ · 1 ։

Մժիկ ։ Մռճակ · սիվըխինէկ ։ ԿԸ · 5 ։

Մժղուկ ։ Գինիի , կամ ձիպրէի մանրիկ ճանճ ։ ԿԸ · 5 ։

Միագոյ իր ։ Շատ մասուձքէ ձեմ եղած մէկ բան ։ Ի Յիշատակարանն ։

Միամտարբ ։ Ջուտ · սոյգ · զաթը , էօղ ։ ՀԱ · 1 ։

Միեղջերու ։ Ճակատը մէկ պողնկուղ ունող՝ քաչ կէնդանի մի է · քէճկէքսան ։ ԿԸ · 5 ։

Մղձիկ ։ Լալը գալ · տօրւքսուսմաք ։ Խ · 5 ։ և ԿՔ · 2 ։

Մղտափարատ ։ Մութը հալածող՝ աէֆ ընող ։ Ի Յիշատակարանն ։

Մոզաք ։ Կուռքի անուն է ։ (Ամոս իե · 6) ։ Ի · 2 ։

Մորմաքեցուցիչ ։ Սիրտ կսկծցնող , խշխշցնող ։ ՂԲ · 9 ։

Մաւխ՝ ջուր առուոյ՝ զաղջամիշ ընդ՝ ՂԳ. 24։
Մաւրհակ՝ վճռոյ գիր. իւամ՝ ԽԸ. 2։
Մաւթ՝ թաշճեկի չէքիճ. քիւլիւնակ՝ ՂԲ. 7։
Մառել՝ Մոանալ՝ մտանել. կիրմէք՝ ՀԱ. 2։
Մբռնչել՝ թրմնչալով և հզկիալ լալ՝ ողբալ՝ ԼԹ. 3։
Մըցանակ՝ կարիճաւթեան ձէնկ՝ ժ. 2՝ կամ կարիճաւթեան համար պահիշ չէլենկ՝ ԿԱ. 2։
Յաբեթական առհմ՝ Նոյ նահապետի որդւոյն սինսիլէն է, որ է ազգն մեր՝ Հայոց՝ Ի ՅԼպոպիարան։
Յամայր յարմաւթիւն՝ Շատ ժամանակ նշանալը՝ ՁԱ. 2։
Յամբային՝ Ուշ մտացող, օյապանիլ ըլլալ՝ ԽԸ. 2։
Յայրատ՝ Ամանթ. առսըզ, էհէպսիզ՝ ԼՃ. 4։
Յայրատասէս՝ Էհէպսիզձէ նայող՝ տեսնող՝ ԾՋ. 2։
Յանգաւորաւթիւն՝ Լմնալը. թամամլըք՝ Թ. 3։
Յանգիլ՝ վէրջը հասնիլ, լմննալ՝ ԿԱ. 4։
Յանկաւոր՝ Ուղղան, եահըչըխլը՝ ԾԳ. 2։
Յանձանձել՝ պէտ ընել. իմամ ընել՝ ԽԺ. 2 և Չ. 3։
Յառաջատեաց՝ Յառաջ ընկնող. իւէրի սէրճիչն՝ ԾԳ. 4։
Յարագօղ՝ Աբեւին դէմ կանող՝ մեռցնող՝ ՀԱ. 3։
Յարգահատել՝ Յաւակցիլ ազաչել, եալվարնալ՝ ՀԳ. 2։
Յարկել՝ Օտայի պէս տեղ շինել՝ մէջը պահել՝ ՂԳ. 9։
Յաւանիլ՝ Անէրեսաւթեամբ լըքաւթիւն ընել՝ ԼՂ. 7։
Յաւանական՝ Յօնական՝ Ամբարտաւանական. էհէպսիզ տիւզիլի՝ Կ. 4։
Յափրացեալ՝ Տաղտկացեալ, պըխմիշ եղած՝ Բ. 10։
Յեղլազակ՝ Աւազակ. հարամի՝ Ջ. 3։
Յեղանակել՝ Դարձընել, պաշխայ կէրպ ընել՝ Բ. 3՝ ԿԳ. 1՝ և ՂԳ. 19՝ կամ եըգել՝ ՀԳ. 3։
Յեղլեղել՝ փախարկել, թէպսիլ ընել՝ Թ. 2՝ կամշատ կրկնել՝ յիշել՝ ԿԱ. 2։
Յեսանել՝ Սրել. սիլէմիշ ընել՝ ՂԲ. 3։
Յերիւրանիլ՝ Ջարդարիլը՝ եահըշըխ բէրելը՝ Խ. 3։
Յեռ և Աղայել՝ Երկու թագաւորաց անուանք են՝ (Գ. Խագ". ԺԹ. 15)՝ ՂԳ. 6։
Յղփացեալ՝ Խիտ կշտացած. իֆրաթ տօյմուշ՝ ԾԹ. 2։
Յոբելեան՝ Յիսնեըորդ տարի, թողուաւթեան տարի՝ (Ղէւպա". իէ. 8)՝ ՂԲ. 7։
Յոլտամուզ ծուխ՝ Շատ խոշոր մէկ յոտն ընդ ծուխ. իսկ Թիւթիւն՝ ԽԸ. 4։
Յողնք դէգերիլ՝ Գներենալ. բէճայա մէշղուլ օլմաք՝ ԺՒ. 1։
Յոյզ մտաց՝ Խոմսուք, մտքի ալավերա՝ Թ. 5։
Յոխանակ՝ Աւանակ, իշու քաւաք. սըփա՝ ԻՒ. 2։
Յորդորիլաւն՝ կոչումն, անուանը տալը՝ ԼԳ. 3՝ և ՂԳ. 7։
Յորտայուել՝ կռնըկին վրայ գետինը ձգել՝ ԼՉ. 2։
Յուսալի քրտունք՝ Աւտա քրտինք. գան թէռ՝ ԿՉ. 4։
Յուսուսէ՝ Համայիլ, կամ կռապաշտական հնաոք՝ ԿՉ. 4՝ և ՀԵ. 12։
Յուտց ձգարան՝ Յայսին թելը. ումմանին չուանը՝ Գ. 3։
Յօնիլն յաւակնաւթիւն՝ Ընդհանրաւթեան հպարտաւթիւնը՝ լըքաւթիւնը. մտղուլըլըք էհէպսիզլիղի՝ ԽԵ. 2։
Նախայանց՝ Աւաջկաց մեզանչոզք. ընկերդիլն ժամանակի մեզաւորնըը՝ ՀԹ. 3։
Նախայք՝ Աւաջին՝ այլք՝ հվելքիլեր՝ Գ. 3։
Նահանգ՝ Մէմլէքէթ. պայլեթ՝ ԼԲ. 1։
Նահանջեր՝ Նահանջեցեր, արգիլեցիր. խաւխաթի՝ ըրիր՝ ԿԲ. 1։
Նաշիհ՝ Շարմաղուն՝ խիտ քաթակ ալաբ՝ ՂԳ. 8։
Նարգոս՝ Աշուշահոտ ծաղիկ է, նէռնօֆար՝ ՂԳ. 11։
Նարեկ՝ Էր վանք կրօնաւորաց՝ ի գաւառին անձեւացեաց, ուր վանահայր էր վերահաս այս մեր Գրիգոր Նարեկացի՝ Ի ՅԼպոպիարան։
Նաւակատիք՝ Տօն, ուրախութիւն. տօնանմա՝ ՂԱ. 1։

Ընթգեւեւալ ։ Խեղճ՝ ակֆիլ եղած . տէրտիմինա ։ ԻԱ· 2։
Ներաւթիւն ։ Ներողութիւն . սուչը պախչելը , ափք ։ ԺԸ· 1 ։ և ՃԲ· 5։
Նեցուկ ։ Յենարան . տայատ ։ կԷ· 2 ։ և ՂԲ· 10։
Նեսաւ ։ Ա՛յս պիղծ . չար գեւ , սատանայ , ճին ։ ՂԲ· 9։
Նժար ։ Թէրազուի թաս , թաշի ։ Թ· 1։
Նիստ եղանիլ ։ Կիստեր , տեմնող ըլալ ։ կԸ· 2։
Նկարագրեր ։ Նկարագրչեր , միւսեվէտէն գրչեցիք , իմացուցիր ։ ԴՒ· 1։
Նշանչել , կամ նահանչել ։ Ափսիլել , եաս գարճնել ։ Բ· 3 ։ և ԽԱ· 1։
Նշաւակել ։ Ցոյց տալ . իպլեթ էթմէք ։ Գ· 2։
Նշխահեալ ։ անարգուած , մէզագ եղած ։ ԽՒ· 1։
Նողկալ ։ Գարշելի՝ զզուելի ըլալ ։ ՂԲ· 5։
Նուիրան ։ Նուէրցան , փէշկէշ ընծայելու տեղ ։ Էհ· 9։
Նպատակ ։ Նշան առնուած տեղ . նշանկեան ։ ՂԲ· 5։
Շաղակրատ ։ Ադուռճապուռ խօսող , լաֆազան , պօշպօղազ ։ ԴՉ· 2։
Շամբ ։ Անտառ եղէգանց . գամիշլըղ ։ Թ· 1։
Շամբին ։ Սամարիա , որ Նրուսաղէմի մօտ գտաւտ մի է ։ (Եղէ՛ · Ժզ· 46)։ ԺԻ· 2։
Շանթ ։ կայծակ . երկարբոմ ։ Չ· 3։
Շէրտ ։ փայտ . ասփա , օտուն եառմաղ ։ ՂԲ· 5։
Շշուկ ։ Սատանայական աղմուկ՝ վէլվէլէ ։ Խ· 5։
Շուայտաւթիւն ։ Յանկական ձիւնաւեաթիւն ։ ԽՀ· 5։
Շութախաւթիւն ։ Խիստ արտարալը , աճէլէ ։ ՂԳ· 11։
Շուշան ։ Ծաղիկ է , զամպախ ։ կ· 1 ։ և ՂԳ· 11։
Շուք ։ Գաոիս , փառք . իզզէթ ։ ՉԳ· 4 ։ և ՂԳ· 18։
Շտեմարան ։ Ներսէ ներս օտայ . որը օտաղը ։ Խ· 2։
Շրջագրաւթիւն ։ Էթրաֆը ածանմիշ ընէլը , կամ պահպանելը ։ կԲ· 1 ։ և Ղ· 1։
Շրտուճն ։ Շուարուճն , անձրկիկը . շաշմիշ ըլալ՝ ծալը ։ ՂԱ· 5։
Ոգորիլ ։ կռուիլ , ճէնկ ընել ։ Թ· 5։
Ոգնիլ ։ Մարգոյ անուն է ։ (Ր · Թագ՛՛ · Ի· 7)։ Էհ· 12։
Ոզնափայտ ։ Նաւուն գլխէն մինչեւ ի խրչէն՝ տակի երկան տիրէկին է , ս րոյ վրայ կողերն շարած է ։ ԻԵ· 2։
Ոզոզիլ ։ Լուացուիլ , աճառելով յօդլըվիլ ։ ՂԳ· 11 ։ և 24։
Ոզոզակ մժային ոչ ընդելական ։ Լողացող քէօր աճասի ։ ԴԵ· 2։
Ոսկայ , ոսկեայ ։ Էին անուանք երկուց թագաւորութեանցն՝ Սամարիայ և Երուսաղէմի . զորս եղ մայրապետն ։ (Եղէ՛՛ · Ի գ · 4)։ ԺԴ· 2։
Ոսոխել ։ Չարել , ինչպէս պահանջն , ծառը ։ ԼԵ· 2։
Ոստայն կնկէ ։ Կառ , կամ էօրիւմճէկ գործել ։ Ի· 5։
Ոստիկան ։ Վերակացու . քեահեայ ։ Ծ·Չ· 2 ։ և ՀԹ· 5։
Ոտքի ։ Գառն . գուզու ։ Լ Ա· 5։
Ուղեբեաւ ։ Ծալած ծալկած , փիլիսէնմիշ եղած ։ ԺԵ· 4 ։ և ԽԹ· 2։
Ուղէշ ։ Ճառի ձիւղ . տալ պուտաղ ։ ԻԳ· 2 ։ և ԿԱ· 5։
Ունելիք ։ Կրակի մաշա . խրսաճ ։ ԼԳ· 5։
Ունկ , աւնկի ։ Ցարդի մանրութ , սաման թօզու ։ ԻՉ· 2։
Ուսխախից ։ Ականջը խրցած՝ գոցած , խուլ ։ Ծ· 4։
Ուշ ։ Միաք . փիքիր , փէրասէթ ։ ԻՉ· 3 ։ ԼԳ· 2 ։ ԾԹ· 1 ։ ՀՐ· 2 ։ և ՂԳ· 24։
Ուտիչ ։ Ցեց . կիւվէ ։ ՂԲ· 9։
Ուռճահալ ։ Ցեղէն կէրտած . փոտած ։ ԾՉ· 2։
Ուրոյնաւթիւն եւ Չաուաւթիւն ըլալ , վատ վատ ըլալ ։ ԼԳ· 7։
Ուրտական ։ Գարշելի , փուճ , գիւական ։ Էև · 4 ։ Էհ · 12 ։ և ՂԳ· 24։
Չարաչուք ։ Չարութիւն երեւցնող , զզուելի . պէթ ։ ԴԵ· 2 ։ և ԾՐ· 2։
Չորեքվտակեան առաչ ։ Չորս մեծ գետ ունող լըմանի . որ էր յԵդեմայ բղխած գետն ։ (Ծնն՛՛ . Բ· 10)։ կՐ· 1։
Չու ։ Քալուածք , յառաչ քալել գնալը ։ Բ· 2 ։ և ԻԵ· 2։

Ձքնազ. խիտ ադիկ գեղեցիկ։ ԺԱ. 1։ և Հե. 15։ կամ փառաւոր։ հր-
բաշալի ։ Հա. 4։ և ՂԳ. 19։
Ձքոտի ։ Նուաստ , փոքրիկ , փուճ . զսիկ ։ կԹ. 2։
Պակուցեալ ։ խիտ վախցած ։ սիրտը փրթած ։ Ծ. 2։
Պահակ ։ Ընկերքիայի բռնուած , որ էր Սիմոն կիւրենացին ։ (Մաթ". իզ. 32)
ԾԸ. 5։
Պահպանակ ։ Պահող, պահպանող։ Դ. 3։ և կե. 2։ կամ զբօս ։ ՂԳ. 12։
Պաղպաջունք ։ Գեղեցիկ պայծառ քէօշկ ։ ԻԵ. 2։
Պաճար ։ կովս սիւրիւ ։ Ծե. 5։
Պայթիլ ։ փաթլամիշ ըլլալ, ճաթիլ։ ՀԴ. 5։
Պայման ։ Չափ . սինօռ։ Բ. 3։ ԻՁ. 2։ և ՂԳ. 24։ կամ ուխտ . խոսք ։
ԾԳ. 5։
Պան ։ Հայց , սօմաւն , էքմէք ։ ՂՑ. 8։
Պաշտօնատեր ։ Խրզակէթ ընող ։ ԻԱ. 2։ ԻԲ. 2։ և ԾԳ. 4։
Պաշտօնատեղ ։ Ընթէքի տեղ ։ ԾԱ. 4։
Պատանդիլ ցանցարկ ։ Խավատամիշ ընող զապթ ընով՝ խուռուլմիշ եղած
տուզախ ։ Ծե. 2։
Պատասխան ։ Լէցուն սիմմ՝ տօլու ։ ԽԸ. 3։ ԿԳ. 2։
Պատգամ ։ Խապար , խօսք . քէլամ ։ ՂԲ. 3։
Պատնէշ ։ Թաղխի . պէտէն . մէթէրիզ ։ կ. 2։ և ՂԲ. 5։
Պատուածօրէն ։ Պըտրտուք՝ տօլաշը քելը ։ ՂԳ. 7։
Պատուաստուճ ։ Կցուիլը , էքլէնմիշ ըլլալը ։ Լ. 4։
Պատսպարան ։ Սըղընմիշ ըլլալու տեղ. սիփէը ։ Խ. 2։ ՁԲ. 1։ ՁԹ. 1։ և
ՂԱ. 3։ կամ տայախ , իբր՝ թէմէլ ։ Խե. 2։
Պատրոյկ ։ Ճրագի ֆիթիլ ։ ՂԳ. 2։
Պաւս ։ Սաիան , որով քար կը նետեն ։ ԼԴ. 7։ և ՂԲ. 4։
Պաւսել ։ Իբր սաիանով քարաուել, տանջել։ Ի. 2։ կամ հալածել, գաւ-
րել ։ ԼԲ. 5։ և ՂՂ. 5։
Պիծակ ։ Իշուհղուս . հէյէկ առլըը ։ կԸ. 3։
Պիտակ ։ Լոկ . սալի , սամէ ։ ԻԸ. 6։
Պղպջակ ։ Ուռեցք , որ ջրին երեսը բուշա բուշա կ'ըլլայ . առ գապարձըը-
ղը։ ՀԴ. 3։
Պղտորարբուխիւն ։ Պուլանըխ խլմելը ։ ԾԳ. 3։
Պճնելի ։ Չարդարելու , սաղլամ ։ Բ. 2։
Պնդիլ ։ Եաուէն ընկնիլ՝ վաղիլ ։ Բ. 2։
Պուէտիկա ։ Բանաստեղծ . շայիր , աշըգ ։ ԽԸ. 6։
Պուբակ ։ Օձման , կամ ծառերու էրըզն . ախմէթ ։ Թ. 4։
Պչրութիւն ։ Էհէպիով ոտգուիլը , ինչպէս՝ լիսի կանանց տիւզինը ։ ԽԸ. 4։
Չ
Չախել ։ Չաղխել , չարդել . կոտրել ։ ԽԸ. 4։
Չահաւորիկ ։ Մուշալայի պէս վառիլ , փայլիլ ։ ՂԳ. 17, և 23։
Չահել ։ Ծագել , լուսաւորել ։ ՁԳ. 2։
Չամբել ։ Կերցնել , տալ ։ ԺԳ. 3։ և ՂԳ. 22, և 23։
Չինար ։ Սանդուռ ։ ՂԲ. 9։
Չնել ։ Չարնել , ծեծել ։ կ. 2։
Չուխակ ։ Սանթաւռ , կամ քէհան ։ ՂԲ. 8։
Չրակարծ ։ Չրէն կարծրացած՝ սառած , ինչպէս՝ կարկուտը ։ կԸ. 3։
Չքել ։ Չնչել , աւրել . պօղմագ ։ ԼԲ. 3։ ԽԸ. 1։ կԷ. 2։ և ՂԳ. 14։
Չքուղաղ ։ Չրհեղեղով ապականած՝ թէլէֆ եղած ։ կ. 5։
Ֆեհմէն ։ Թիւրեմէհմէն , որ եաթայի գեղ՝ մէշհէմ լինի ։ կԲ. 1։
Սաբեկ ։ Ի անուն ծառոյն , յորմէ կախեալ աեսաւ Աբրահամ՝ զոյն ։
(ծննդ" իբ. 13)։ ՂԲ. 9։
Սագբել ։ Մատնել , խամնել . էլէ վերմէք ։ կԷ. 1։ կամ չար ֆիթի տալ ։ Ղ. 5։
Սակ ։ Հարկ . վերիկ , խարաճ ։ Խե. 1։ կամ չափ . հիսապ ։ ԺԲ. 3։ ԽԲ. 2։
և Հ. 3։
Սակաւաճեռն ։ Տկար , զսիկ . նուաղ ։ Գ. 2։ ՂԳ. 15։

Սահանք ծովու : Ծովու ափունքը : ԿԳ. 1:
Սահանք յորձանաց : Տկրճ , սեղ ափրիքի : Խ. 2:
Սաղարթ սեւ ուռենւոյ վարսից : Տկրճ՝ սեւ հասիրահնութիւն , որ է ասէլ սեւ մօրուք : ԿԳ. 2:
Սամի : Տիւմիկնը գարձընող փայտ , եզքէ : ԻԵ. 2:
Սառնասէր : Պուղի սոյ , պուղի պէս փառացած : ՁԱ. 3:
Սասեր : Սիկղ. ղօղաձա , որպ կ՚ինն էր 88 ասակ : (Մաթ". ԺԶ. 26): ԽԵ. 1:
Սարգ : Սանուկ : ՂԳ. 14:
Սարսռագեալ : Հաճանուած , երևակ ձգած : ԽՐ. 2: ԾԵ. 2: և ԿԲ. 3:
Սաւառնիլ : Թռչտիլով խանտանելը վրայ բերել ծածկըլիլ : ՂԱ. 1:
Սափիրա : Գատժեալ հինգեր մի անուն է : (Գոյծ. Է. 9): ՀԱ. 3:
Սելով : Խաղաղոսիկն . քաղաք մի է . Ա. 1:
Սեղանանենգ : Սեղանը , կամ տաճարը թալղող : ԽՐ. 2:
Սեպուհ : Գեղացատես քիշիւատես : Գ. 2:
Սեռն : Մարքուր , ուղիղ . հնչեսիլ : Ժ. 2: և Դ ՃԻՂՊԱՖՈՐԱՆ:
Սեւեռք : Գամանածք . մըխլանմիշ ըլլալը : ԿՋ. 4:
Սիմափիլ : Ա՚յբնանալ , խելքը գլուխը գալ , արթնանալ : Գ. 3: և ՂԲ. 1:
Սիգացող : Փոսուլուխեամբ ուռեցող , սալընմիշ ըլլող : ՀԳ. 2:
Սիգնայիք : Սայսայիք , որք ինամսար կուռք մի ունէին , զոր պատուհաց Սաղամն : (Դ. Թագ". ԺԱ. 5): ԽՐ. 3:
Սիկ : Ակուռնիկ հով . խոշ բուզկեար : ԼԲ. 3:
Սին : Գատարկ , պօշ , փուճ : ԻԵ. 3: և ՁԱ. 2:
Սլաք : Օք ափիրի , խըշտ : ԻՋ. 3:
Սկահառն : Մուրտատ պուլանըվա , չիրքէֆ : ԾԳ. 3:
Սկաւառակ : Քեասէ , թաս , աման : Լ. 2: և ՁԸ. 1:
Սկիւթացի : Թաթարաց ազգն է : ՂԳ. 12:
Սնոտիապատաս : Ընչաց չինուած , նիղամըղ ախ ղէնմիշ եղած : Գ. 1:
Սնոտիաբէր : Պօշ փուճ սէր ունող : ՂԳ. 20:
Սոսկական : Եայան : Գ. 3: կամ Ռամիկ . ֆախիր : ՀԱ. 2:
Սոսկալիմեծար : Սքարկու . չէնուհա , պետտավի : ՂԳ. 12:
Սար : Խորունկ աչի ճամբայ . ոտքի : Խ. 2:
Սուզել : Տակը իջնցնել . պաթըրմագ : ԼՋ. 2:
Սուհանգակ : Սայի , մէնղիլ : ԾՋ. 2:
Սափեր : Մաստեան , գիրք . քիմեայ : ՁԸ. 2: և Դ ՃԻՂՊԱՖՈՐԱՆ:
Սպանդ : Ջոհ . զուբպան : ԽԴ. 2:
Սպանդարան : Ղուբպան մարթելու տեղ : ԽԵ. 5:
Սպառազէն : Սիլահլը , փիւբ սիլահ : ԾՋ. 2:
Սպեղանի : Դեղ . մէհլեմ : Բ. 3: և ԽԸ. 1:
Տաճկաց : Ղախա , զալմ , եարամազ : ԽՐ. 3: և ՂԲ. 2:
Տոգտանիք : Քեղաղանք . սիմէմ : Թ. 3:
Տոտրեւելք : Վարչեն վեր եկող , կամ ելած : ՂԳ. 24:
Տուար : Թանձր , հաստ : ԽՋ. 2: և ԿՋ. 4:
Տուրաստեղն : Ճիւղը հաստ . գալըն տալը պուտագլը : Թ. 2
Տուգաբանեալ : Ուղղուն գալով խոպաճ եղած : ՂԳ. 20:
Տորուկ : Խեղճ՝ ծառայ . բայե : Գ. 3: ՂԳ. 12: և 18:
Տարբանալ : Ախտասալ , զղջալ , փիւշման ըլլալ : ԻԹ. 2:
Տրահի առագաստ : Բակի փէրտէն , որ է դուռն : ԽՐ. 1:
Տրանալ : Թռչիլ . փախչիլ : Ի. 2: Լ. 4: ԽՐ. 3: ՀԱ. 2: և ՀԴ. 2: կամ Սիվրիլմիշ եղած քէսկինցած : ԻՐ. 3:
Տրացեալ վարատական : Փախչող հեռացող . տէտրկին : ԺԱ. 3:
Տրբեգեան : Տուրբ Տուրբ երգող , ինչպէս՝ Սէրոբէքն : ՂԳ. 1:
Տրինկ : Նէյ , կիրիճ : ՂԲ. 8:
Տրսուծն : Ցրցքնելը , սէրփմիշ ընելը : ԾԱ. 4:
Տփափանք : Սփոփութիւն , մխիթարանք . Թէսէլի : Գ. 1: ԼԳ. 3: և ՂԳ. 9:
Տքանչելահրաշ : Հրաշալի միւճիւզլեը : ՀԵ. 10:

Ա՛քանչելատես ։ Զարմանալի գէղեցիկ տեսիլ ունող ։ ԾԱ. 4 ։
Ա՛քանչելարմատ ։ Զարմանալի գերազանց քաջութ ունող ։ ՀԴ. 2 ։
Վա՛յրագ աւազն ։ Լերը մեծցած . եապանի ։ ԽՋ. 1 ։
Վա՛յրագ ութիւն ։ Եապանի կապիտութիւն . եաւելղլուք ։ ԺԱ. 3 ։ Լ. 4 ։
ՀԱ. 4 ։ և ՂԴ. 19 ։
Վանգակապատ ։ Պարսպելքիս շարած գէղեցիկ քեօշկ ։ ԻԲ. 2 ։
Վա՛տնիչ ։ Չայ ընող, թէլէֆ ընող ։ ԻՋ. 2 ։ կամ փճացնող, չնաչխարհիկ ընող ։ Ք. 9 ։
Վարակեալ ։ Գաշարեալ , մահահարբ եղած ։ ԼԱ. 5 ։
Վարանիլ ։ վախուն թաասիլ՝ անձրկիլ ։ ԻՋ. 3 ։ և ԻԸ. 2 ։
Վարագան ։ կէմ, հալաս , որ գազանի բերան կը կապուն ։ ՂԲ. 2 ։
Վարատիլ ։ Չատալ՝ տեսիլին ըլալ ։ ԻԲ. 3 ։
Վարմ ։ Տուզախ , խափանչա ։ Խ. 3 ։
Վարոք ։ Մազեր , որ թէ մարդոյ իցէ՝ փէրչէմն է ։ կԳ. 2 ։ և ՂԴ. 12 ։ և եթէ ծաւոց իցէ՝ եափրախներն է ։ Թ. 2 ։
Վերակացուհի ։ Չապիտուխամբ ձեռք վերցնելը ։ Ա. 2 ։
Վերակենցաղել ։ Արկին ողջնալ , յարուցիչն առնել ։ ԼԴ. 5 ։
Վերկնարկել ։ վեր նայիլ , գէպ ի վեր ուռուցք ընել ։ ԻՋ. 3 ։
Վերնամատուցիչն ։ Վերինին հետ ձէնք , որ է ասուածոյ գէմ զընելը ։ ԾԱ. 4 ։
Վերնամրցանակ ։ Երկինքէն տրուած յաղթութեան համար՝ վարձք , չէլէնկ ։ ՂԳ. 24 ։
Վերջին դատաստիկք ։ Ի կորուստն յաւիտենական վճռիլ , որք են դատապարտելոցն դասք ։ ԻԲ. 3 ։
Վերջնական ։ Եաքինը . կամ խիստ պէթէրը ։ Ծ. 3 ։
Վերջնական ածառ ։ Քէսկին լէքէ ասպծնու ։ ՂԳ. 11 ։
Վէս ։ Հպարտ , ինքնահաւան ։ Ծ. 2 ։
Վիժած անգրելի կռման ։ Ընդունցած տղայ , որ մարդ չի կշուխը ։ Ի. 2 ։
Վիհ վիհոյ ։ խորանկնեբուն խորանկը ։ Խ. 2 ։
Վիրգ մահու ։ Մեռցնող ճէնկի քար . կիւլէ ։ Կ. 2 ։
Վիրգ ոսպի ։ Ցեօշէմչի քար , գայկան ։ ՂԲ. 8 ։
Վոսկ ։ Ախընոը , կամ սեղ . ըռմախ ։ ԾԳ. 3 ։ և ՂԲ. 10 ։
Վրաել ։ Վառաժցնել , չերքնցնել ։ Ի. 2 ։
Վրիժակ ։ Վճիռ . իրամ , սիճիլ ։ ԻԲ. 2 ։
Վրիպակ ։ Մոլար , ծուռ ։ ԺԸ. 2 ։ ԽՀ. 4 ։ և ՂԲ. 9 ։
Վրնջական ։ Բղջախոհ ցանկութեամբ կառղելը , ազմիշ ըլլալը ։ Խե. 2 ։
Տակաւ տակաւ ։ Կամցուկ կամցուկ , քշիկ քշիկ ։ ԾՀ. 5 ։
Տաղնդ կամ քանքար ։ Քէսէ մը ստակ . բիւր քանքար , տասը հազար քէսէ ստակ , կամ այլ աւելի ։ Ի. 2 ։
Տաղաւարեալ ։ Բնակելոյս տեղ ըլալ ։ Չ. 1 ։
Տաղաւարիլ ։ Գօնագ կճռիլք ։ ՀԵ. 15 ։
Տաղտկազգեցական ։ Խբքահ ընելու՝ մնբտառ ։ ՂԳ. 20 ։
Տաշտ ։ Քեասէ , թաս ։ Լ. 2 ։
Տատամելի ։ Տրամելի , խասավկեթ ընելու ։ ԼԱ. 2 ։
Տարաղ ։ Կէրպ . Թարզ ։ ԺՀ. 2 ։ և ԾԳ. 5 ։
Տարացոյց ։ Նման էօրնէկ , ուշրան ։ ԺԵ. 2 ։ և ԽԵ. 5 ։
Տարժանելի կամ տաժանելի ։ Խիստ աշխատելի մէշաղ գէղելի ։ Ը. 1 ։ ԿՋ. 5 ։
Տարմ ։ խանաղընեբու քիւմէ երդնալս ։ ԿԸ. 5 ։
Տարր ։ Բոլոր նիւթաւոր մարմիններուն թէմելը , և է չորս . Հսւթ . Օդ . Ջուր . Հող ։ ՉԲ. 3 ։ և ՂԳ. 15 ։ և զայս բառս պէս պէս նշանակութեամբ գործածէ առաքս , զոր օրինակ ։ Տարրք գոյի ։ Տարերքն եղանելոցն մէջ , կամ կայ եղանելոցն էօղին մէջ ։ ԽԱ. 2 ։
Տարր ժամանակի ։ Ժամանակին կայութիւնը , կամ չափը , որ հինչի մօտ՝ քիչ է ։ ԾԵ. 3 ։
Տարր ժամանակաց ։ Չորս եղանակն է . Գարուն . Ամառն . Աշուն . Ձմեռն .

ոչք իբր տարիին տարիքն են։ ԽՋ. 2։

Տարր մահու։ Մահուան քէօքը՝ ակռիկալը։ Բ. 6։

Տարեբոս սատանել։ Բոլոր աշխարհս շարժել՝ գոռչնել։ ԼՋ. 2։

Տարր փոքր։ Փոքրիկ աշինչ իր. չէ՞նիվզէդ։ կԹ. 1։

Տեսուհագրել։ Կնքել, խաչակնքել։ ԺԲ. 3։ և ՂԳ. 12։

Տէնդ։ Ջերմ. սրթմա։ ԻՀ. 5։

Տեսական։ Տեսանող. կէօրիւճիւ։ ԼԳ. 3։ *կամ երևևլի. կէօզէ կէօրիւնէն։* ԼԳ. 3։ և ՀԳ. 1։

Տեսականել։ Ասլը էօզը խլըխալ մը մէյտան հանել։ ՂԳ. 10։

Տէգ։ Մըզրախ, խըշտ։ Խե. 5։

Տիրագաւ։ Իր տէրը խաբող՝ մատնող։ ԺՋ. 2։

Տիրադրաժ պաշտօնեայ։ Իր տէրը ֆէնտով խաբող խոմկիքեար։ Է. 2։

Տիւրան։ *կամ Ճուր, քաղաք մի է Սպանիոյ սէմմ։* (Եսայ՞. իթ. 15)։ ԼԹ. 3։

Տիւրաստակ Ֆոր, *կամ* էրֆն։ Մեռի գոյն սեռ ըսէնկ։ ԼԳ. 8։ և ՂԳ. 12։

Տղմոտիգ գուբ։ Ջամուռով լեցուն հոր։ ԺՋ. 1։

Տնտեսել։ Գէտ ընել. քէրէմ ելիմէք։ ԺԵ. 2։ *կամ յայտնել, ցուցանել։* ԽՀ. 6։

Տոյժ տանջանաց. *կամ* լկանաց։ Վնաս պատժոյ. գաղէպ ձէրիմէտի. սխակեր։ Բ. 2։ և ՀԱ. 5։

Տուն։ Ջուանի կապ. իւլար։ ԻՀ. 1։

Տուայտել։ Ջարչարուիլ. ձէֆայէն մաշիլ։ կՋ. 5։

Տպաւորագոյն։ Էշխէարև ուշլուն. Թըլպգը։ ԺԺ. 3։

Տրտնել։ Ոլորիլ, բաժանել, զատել, պրըմադ։ ԽՀ. 1։ և կԲ. 2։

Ցանց։ Ալէճիով հունուած թոռ. ազ, տուզլու։ Խ. 5։

Ցիւռ։ Վայրի հէշ. եապան հէշկի։ ԽՋ. 2։

Ցնցուղ։ Ցաթկատաք. սէրսիներէն ջուշ. *կամ հրոյ։* Ջ. 3։ և ԿՀ. 5։

Ցոլքնշուղից։ Շողշողուն Ճառագայթից, շուխին փայլելով *կամ* ելք։ ՁԱ. 5։

Ցոփութիւն։ Ախտ ախտութիւն, անեծքի սութիւն. հաճպոփութիւն։ ՀԲ. 2։

Ցրիչ ցնորից։ Խնդրի ու մէկդի երազները տատղեթիչ ընող։ ՁԴ. 1։

Փագովը։ Բէլբեգովը. կուռքի անուն է։ (Թուոյ. իէ. 3)։ ԽՀ. 5։

Փաղանգ։ Ճիւմհուռ. թաղուռ, օռտու։ կԵ. 1։

Փաղաքշել։ Երեսապուռ թիւն ընել, խօշամէտի խօսիլ։ ԺՀ. 1։

Փապար։ Ծակ, խօվուխ, չուխուր։ Խ. 2։

Փարաքուռ։ Բռնչխոհ ցանկութիւն. հաճպոխութիւն։ Խե. 2։

Փեթեռալ։ Փիլիսէնիչ եղած, ծաղկած։ ՂԳ. 11։

Փղշտացիք։ Բարբարոսաց և ամենայն այլազգաց կըսուի։ Ա. 2։

Փոկ։ Կաշեի կապ։ Խե. 2։

Փրկանակ։ Փրկութեան տեղ։ ԻՋ. 2։ *կամ ումանութեան։* ԾԱ. 4։ *կամ ազատելոյ գործիք։* ԿԳ. 3։ և ՂԲ. 5։

Քաղցկեղ։ Մարմինը շնբրիթիշ ընող եարա մի է, կերցաւ։ շիլիփկինէ։ ԺԼ. 3։

Քամօվա։ Կուռքի անուն է։ (Գ. Թագ՞. Ժա. 7)։ Կ. 4։

Քայտ։ Կէրտանելիք, *կամ* լէօփ։ ԼԳ. 1։

Քանան։ Ղոյ Նահապետի թոռն է, Քամայ որդին։ Բ. 1։

Քանանուհի։ Կին մի էր քանանացի, որոյ զաղջիկն Քրիստոս բժշկեաց։ (Մատ՞. Ժե. 22)։ ԼԵ. 3։

Քանասար։ Կատաղի, եավուզ, զալըմ։ կԹ. 2։

Քանդել։ Ճիւղերը կատրաելով փըցնել։ ԼԳ. 1։ և կԿ. 2։

Քառագիմակի։ Ի մէկումէն քառասին քեաւանայ, որ երեւի ելլալ *ի յուշ* նահան քառասին կ՚ըլլան, որ Թագուհանի քառակուսի. ուստի քեաւան՝ քառասդիմակի պատկեր, ասել է՝ չորս երեսով, *կամ* չորս Թարաքիը կուռք, զորպիսի շինեաց Ասանասէ։ (Գ. Թագ՞. իա. 5)։ ԾԱ. 4։

Քառասան։ Քառաղ. մեղքը Թողող։ ՂԳ. 1։

Քեղի։ Օրհնա տիրակ, Թէմիզ տիրակի։ ԼԲ. 3։

Քիմք։ Տանմա, կէյղ։ ԼԳ. 1։

Քինաւոր։ Քէն ընող. զարկղ ունող։ ՂԱ. 1։

Քազանչ ։ Հանգէսթի փէշ. ԿԹԿ ։ ԺԸ· 2 ։

Քայինանիւթ ։ Քու նիւթդ ։ Քայինանիւթ զանգուած. քու նիւթիդ խմորը, որ է իսկ մարմին խորհրդոյ ։ Ծգ· 4 ։

Քարեբ ։ Արապիստան լեռ մի է, ուր խօսեցաւ աստուած Եղիայի հետ ։ (գ. թագ՚՚. ԺԹ. 8) ։ ԼԴ· 9 ։ և ՂԳ· 6 ։

Քառնիւախուշ ։ Վախցնող՝ մարմինը փուշ փուշ ընող ։ ԻԸ· 6 ։

Քառնիւլի ։ Զարհուրելի, խիստ վախցնող ։ Ը· 1 ։ ԺԸ· 2 ։ ԻԸ· 2 ։ ԽԸ· 4 ։ և ՀԹ· 5 ։

Քբայ ։ Խոշտիի օճախ ։ ԺԹ· 1 ։ ԻՋ· 3 ։ և ԿԺ· 1 ։

Քրէական ։ Խիստ մեծ մեղք, որ է աստուծոյ դէմ ։ ԾԱ· 4 ։ և ՂԱ· 5 ։

Քծաղգած լինիլ ։ Ջուլ հագնիլ ։ ԻԹ· 2 ։

Քլքաւմ ։ Ջաֆրան չիչեկի. կամ զաֆրան ։ ՂԳ· 11 ։

Օդք, օդէց ։ Ասից աման, ինչպէս՝ չիզմէ. փապուճ ։ ԽԷ· 5 ։

Օթոց ։ Հանգէսթ. հօտաղ ։ Գ· 1 ։

Օժանգակիլ ։ Եարամ ընել, ուժ տալ ։ Ե· 1 ։ Ժ· 2 ։ ԺԱ· 1 ։ ԼԴ· 6 ։ Չ· 2 ։ և ՂԳ· 9 ։

Օճառ ։ Ճէնկի թախըմ, սիլահ ։ ԿՋ· 3 ։

Օն և օն ։ Սանկ ու նանկ. չէօյլէ պէօյլէ ։ ԻԹ· 5 ։

Օշինդր ։ Լեզվի խոտ մի է. փէլին ։ Ջ· 3 ։

Օտաւոյ ։ Ձօբ երանելին է, վի երկօտաւոր գառառէ. որ է ի կողին Աբրահամու ։ ԽԸ· 6 ։

Օտարաղն ։ Օտար ազգէ, այլազգի ։ ԿԳ· 1 ։

Օտարութիւն ։ Անընտանութիւն, մինասիպէթսիզլիք ։ ՀԵ· 12 ։

Օրակիւռ ։ Օր հախտ, որ է արեգակն ։ Ի ՅԻԼԱՊՈՒԹՈՒՆ ։

Օր ի յօրէ կերկաձգել ։ Օրէ օր ձգել ։ ԾԸ· 3 ։

Օրհնէնգ ։ Երգող օրհնութեան. կամ օրհնութիւն ։ ԿԱ· 2 ։ Գովութիւն, բարեբանութիւն, որ միայն աստուծոյ վայելէ, որ է անակընթաբար ըսկիզբն ամենայն սկսելոյ և անեղական վախճան ։

7 Sn.

ՀՀ Ազգային գրադարան
NL0237243

2356